Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Լեո
2111

353

1999

ՏԱՐԵՒՈՐ

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԸՍՏ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

ԵՒ ԱՅԼՈՑ ՀԱՐՑ ՄԵՐՈՑ

Ի ՇԱԲԱԹԷ ՂԱԶԱՐՈՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՆՉԵՒ Ի ՇԱԲԱԹ
ԶԿՆԻ ՍՐԲՈՅ ԶԱՏԿԻՆ

1099

ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1891 ԹՒԻՆ

42111-60

3/8 2117

Stahlstich von G. Seybold

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՈՐ ԿԱՏԱՐԻ

Ի ՄԷՋԳԻՇԵՐԻ

Ի ԴԻՄՍ ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՅ

Օրհնեալ Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր, որ յերկինս ես. սբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութի քո. եղիցին կամք քո որպ յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր, որպ և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի տանիր զմեզ ի փորձութիւն այլ փրկեա զմեզ ի չարէ: Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիս քո: Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիս քո: Օրհնեալ համագոյ և միասնական անբաժանելի սբ Երրորդութիւնն՝ Հայր և Որդի և Հոգի սուրբ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սաղմոս Գ:

Տէր, զի՞ բազում եղեն նեղիչք իմ, և բազումք յարեան ի վր իմ: Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ չիք փրկութիւն սորա առ Աստուած իւր:

Այլ դու Տէր օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ: Զայնիւ իմով ես առ Տէր կարդացի. և լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ:

Ես ննջեցի և ի քուն եղէ. զարթեայ, և Տէր ընդունող իմ է: Ոչ երկեայց ես ի բիւրուց ժղ. որք շուրջանակի պատեալ պաշարեալ պահէին զիս:

Արի Տէր և փրկեա՛ զիս Ած՟ իմ. զի դու հարեր զամենեսեան՝ ոյք էին ընդ իս թշնամութք՟ ի տարապարտուց. եւ զատամունս մեղաւորաց փշրեսցես: Տեառնդ է փրկութ՟ի. ի վերայ ժողովրդեան քո օրհնութ՟ի քո:

Սաղմոս ՁԷ:

Տէր Ած՟ փրկութ՟ե իմոյ, ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո: Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր. խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս իմ:

Զի լցաւ չարչարանօք անձն իմ. և կեանք իմ ի դժոխս մերձեցան, և համարեցայ ես ընդ այնոսիկ՝ որք իջանեն ի գուբ: Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի. և ի մեռեալս ազատ:

Որպէս վիրաւորս որք ննջեն ի գերեզմանի: Զորս դու ոչ յիշեցեր, նոքա ի ձեռանէ քումմէ մերժեցան:

Եդին զիս ի գբի ներքնումն ի խաւարի, և ի ստուերս մահու: Ցիս հաստատեցաւ սրտմտութ՟ի քո. զամենայն զբօսանս քո ածեր ի վերայ իմ:

Հեռի արարեր յինէն զծանօթս իմ. և եդին զիս նշաւակ իւրեանց: Մատնեցայ և ոչ ելանէի, աչք իմ տկարացան յաղքատութենէ:

Աղաղակեցի առ Տէր զօրհանապազ. և համբարձի առ քեզ զձեռս իմ: Մի՛ թէ մեռելո՞ց առնիցես զսքանչելիս քո կամ բժիշկք յարուցանիցեն և խոստովան առնիցեն առ քեզ:

Մի՛ թէ պատմեսցէ՞ ոք երբէք ի գերեզմանի զողորմութ՟իս քո. կամ զճշմարտութիւնս քո ի կորստեան: Մի՛ թէ ճանաչիցի՞ն ի խաւարի սքանչելիք քո. կամ արդարութ՟ի քո յերկիր մոռացեալ:

Ես առ քեզ Տէր աղաղակեցի. առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ: Ընդէ՞ր Տէր մերժես զանձն իմ. կամ դարձուցանես զերեսս քո յինէն:

Տնանկ և վաստակաւոր եմ ես ի մանկութենէ իմմէ. ի բարձրութենէ խոնարհեցայ և ապշեցայ: Ցիս հաս-

տատեցաւ բարկութիւն քո. արհաւիրք քո խռովեցուցին զիս:

Շրջեցան զինև որ՟ ջուր. զօր ամ՟ պաշարեցին զիս ի միասին: Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ. և ըզծանօթս իմ վասն թշուառութեան իմոյ:

Սաղմոս ՃԲ:

Օրհնեա անձն իմ զՏէր, և ամ՟ ոսկերք իմ զանուն սբ՟ նորա: Օրհնեա՛ անձն իմ զՏր՟, և մի՛ մոռանար զամ՟ տուրս նորա:

Ո քաւէ զմեղս քո. բժշկէ զամ՟ հիւանդութ՟իս քո: Ո փրկէ յապականութ՟է զկեանս քո. պսակէ զքեզ ողորմութք՟ և գթութք՟:

Ո լնու ի բարութ՟է զցանկութ՟ի քո, նորոգեսցի որ՟ արծուոյ մանկութ՟ի քո: Առնէ ողորմութ՟իս Տր՟. և իրաւունս ամ՟ զրկելոց:

Եցոյց Տէր զճանապարհս իւր Մովսէսի. և որդւոյն Իսրայէլի զկամս իւր: Գթած ողորմած է Տէր. երկայնամիտ և բազումողորմ:

Ոչ իսպառ բարկանայ մեզ Տր՟. և ոչ յաւիտեան պահէ ոխս: Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր. և ոչ ըստ անօրէնութ՟ե մերում հատոյց մեզ:

Այլ որ՟ բարձր են երկինք յերկրէ՝ այնպէս զօրացոյց Տր՟ զողորմութ՟ի իւր ի վր՟ երկիւղածաց իւրոց: Որչափ հեռի են արեւելք յարեւմտից, այնչափ հեռի արար ի մէնջ զանօրէնութիւնս մեր:

Որպէս գթայ հայր ի վր՟ որդւոց իւրոց, այնպէս գթասցի Տէր յերկիւղածս իւր: Զի նա գիտաց զստեղծուածս մեր, և յիշեաց թէ հող եմք:

Մարդոյ որ՟ խոտոյ են աւուրք իւր. որ՟ ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկի: Շնչէ ի նմա հողմ, և ոչ է, և ոչ ևս երևի տեղի նորա:

Բայց ողորմութ՟ի Տեառն յաւիտենանս յաւիտենից ի վր՟ երկիւղածաց իւրոց. և արդարութ՟ի նորա յորդւոց

մինչև յորդիս: Ոյք պահեն զուխտս նր՟ յիշեն զպա-
տուիրանս նր՟ և առնեն զնա:

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր. արքայու-
թի՟ նր՟ ամենեցուն տիրէ: Օրհնեցէք զՏր՟ ամ՟ հրեշտակք
նր՟. հզօրք զօրութբ՟, որք առնէք զբան նր՟ ի լսել ձայ-
նի պատգամաց նր՟:

Օրհնեցէք զՏր՟ ամ՟ զօրութիւնք նր՟. պաշտօնեայք նր՟,
և արարողք կամաց նր՟: Օրհնեցէք զՏր՟ ամ՟ գործք
նր՟. ընդ ամ՟ տեղիս է տէրութի՟ նր՟. օրհնեա՛ անձն իմ
զՏէր:

Սաղմոս ՃԽ:

Տէր լո՛ւր աղօթից իմոց. ո՛ւնկն դիր խնդրուածոց իմոց
ճշմարտութբ՟ քով: Լո՛ւր ինձ արդարութբ՟ քով. և մի
մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում. զի ոչ ար-
դարանայ առաջի քո ամ՟ կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ արար յեր-
կիր զկեանս իմ, և նստոյց զիս ի խաւարի որպ՟ մեռեալ
յաւիտենից: Ձանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ իմ
խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս. խորհեցայ յամ՟ գործս
քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի
առ քեզ զձեռս իմ: Անձն իմ որպ՟ երկիր ծարաւի է
առ քեզ. վաղվաղակի լո՛ւր ինձ Տր՟, զի նուաղեցաւ յի-
նէն հոգի իմ:

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. նմանիցիմ այ-
նոցիկ՝ ոյք իջանեն ի գուբ: Լսելի՛ արա ինձ առաւօ-
տուց զողորմութիւնս քո. զի ես ի քեզ Տէր յուսացայ:

Ցոյց ինձ ճանապարհ յոր գնացից. զի առ քեզ Տր՟
համբարձի զանձն իմ: Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց
Տր՟, զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Ած՟ իմ: Հոգի
քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ:

Վասն անուան քո Տէր կեցուսցես զիս, արդարութբ՟

քով հանցես ի նեղութէ զանձն իմ: Ողորմութբ՟ քով
սատակեսցես զթշնամիս իմ. և կորուսցես զամ՟ նեղիչս
անձին իմոյ. զի ես ծառայ քո եմ:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Երգ Տեառն Ներսէսի Հայոց Կաթողիկոսի:

Յիշեսցուք ի գիշերի զանուն քո Տէր:

Բղխեսցեն սիրտք մեր զբան բարի. և լեզուք մեր
պատմեսցեն զգործս երկնաւոր թագաւորին:

Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք ըզ-
քեզ Տէր:

Զաղօթս մեր տացուք քեզ Տէր ի գալուստ քո ի
մէջ նոր Երուսաղէմի:

Ի գիշերի համբարձցուք ըզձեռս մեր սրբու-
թեամբ առ քեզ Տէր:

Ի ձայն գոհութեան ամենայն հոգիք օրհնեցէք
զՏէր:

Փ. Զարթիք փառք իմ զարթիք
Ես զարթեայց առաւօտուց. ալէլուիա:
Զարթիք ընդ զուարթունս
Մանկունք վերինն Սիովնի. ալէլուիա:
Զարթիք որդիք լուսոյ
Ի յօրհնութիւն Հօրն լուսոյ. ալէլուիա:
Զարթիք փրկեալք արեամբ
Եւ տուք ըզփառս փրկողին. ալէլուիա:
Զարթիք նոր ժողովուրդք
Նոր երգս առեալ նորոգողին. ալէլուիա:
Զարթիք հարսունք հոգւով
Սպասեալք գալոյ սուրբ փեսային. ալէլուիա:
Զարթիք վառեալք լուսով

Ըստ իմաստուն սուրբ կուսանաց. ալէլուիա:
Զարթիք պատրաստեցէք
Իւղ լապտերաց ջերմ արտասուս. ալէլուիա:
Զարթիք եւ մի ննջէք
Նման յիմար կուսից նիրհէք. ալէլուիա:
Զարթիք երկիր պագցուք
Եւ արտասուօք զայս ասասցուք. ալէլուիա:

Փ. Զարթիր ընդէր ննջես. Տէր մի մերժեր ըզմեզ ի սպառ:

Արի Տէր օգնեա մեզ. տացուք անուանդ քում ըզփառս:

Այժմ եւ յաւէտ Հօր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն. ամէն:

Փ. Զարթուցեալքս ի զբաղմանէ. գիշերային հանգըստենէ:

Շնորհեսցէ մեզ մարդասէր Տէր. մխիթարութիւն եւ ի սփոփանս եկեղեցւոյ:

Ահիւ եւ դողութեամբ կացցուք ի յաղօթս:

Ընկեալ խոստովանեսցուք ըզյանցանս:

Եւ գտցուք ի Քրիստոսէ զքաւութիւն եւ ըզմեծ զողորմութիւն:

Կց. Անբաժանելի եւ համագոյ Երրորդութեանդ. համաձայնեալ ընդ զօրս երկնից փառս մատուցանեմք:

Փառք քեզ: Որ յանմարուեստ յաթոռ բարձրացեալ հանգչիս. սուրբ Աստուած հզօր եւ սքանչելագործ:

Փառք քեզ: Որ յանէից գոյացուցեր զամենայն արարածս. սուրբ Աստուած անճառ Հօր անեղ Որդի:

Փառք քեզ: Որ տեսչութեամբ խնամես

զամենայն արարածս. սուրբ Աստուած բըղխումն անըսպառ աղբեր:

Տէր. ժողովրդապետք եկեղեցւոյ ի քէն հայցեն ասելով. հովիւ բարի ողորմեա բանաւոր հօտի:

Ամէն. ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:
Ամէն. ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Քարոզ:

Զարթուցեալքս ամենեքեան ի հանգըստենէ քընոյ. զոր շնորհեաց մեզ մարդասէրն Ած ի մխիթարութի և ի սփոփանըս տկարութեան մերում: Եւ եկեալքըս միաբան հոգևոր երգով ի փառաբանութի և ի պատիւ ամենասուրբ անուան Տեառն մերոյ և փրկչին Յսի Քսի: Ահիւ և դողութբ կացցուք յաղօթս առաջի նորա. և գոհացարուք զնմանէ ի գիշերային ժամուս յայսմիկ վասն իրաւանց և արդարութե նորա: Որ ընտրեաց զմեզ ողորմութբն իւրով. և շնորհեաց մեզ բերել զնմանութի երկնային հրեշտակացն փառաբանիչս Տեառն Այ ամենեցուն և մեզ լինել: Եւ մեք այսուհետև սրբելով զանձինս մեր ի խղճէ և ի չար գործոց: Համբարձցուք զձեռս մեր ի սրբութի առանց բարկութե և երկմտութե: Հաւատով խնդրեսցուք ի նմանէ զքաւութի և զթողութի յանցանաց մերոց: Խոստովան լինելով զգաղտնիս սրտից մերոց ծածկագիտին Այ: Որպ զի ընդունելով զպաղատանս մեր աղօթիւք և բարեխօսութբ ամենայն սրբոց: Շնորհեսցէ մեզ մարդասէրն Ած կեալ առաքինութբ և անարատ վարուք ըստ կամաց նր յայսմ աշխարհիս: Եւ արժանաւոր լինելով յաւիտենական և երկնային խորանացն: Զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն Ած Յս Քս Տր մեր. կեցո և ողորմեա: Կեցո Տէր:

Զմնացուած գիշերիս խաղաղութբ անցուցանել հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք: Շնորհեա Տէր:

Զհրեշտա՛կ խաղաղութեան պահապան անձանց մերոց ի Տեառնէ՛ խնդրեսցուք: Շնո՛րհեա Տէ՛ր:

Զքաւութի՛ւն և զթողութի՛ւն յանցանաց մերոց ի Տեառնէ՛ խնդրեսցուք: Շնո՛րհեա Տէ՛ր:

Զսրբոյ խաչին մեծ և կարող զօրութիւն յօգնութիւն անձանց մերոց ի Տեառնէ՛ խնդր: Շնո՛րհեա Տէ՛ր:

Եւ ևս և վասն միաբանութեան ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ զՏէ՛ր աղաչեսցո՛ւք: Տէ՛ր ողո՛րմեա:

Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցո՛ւք: Քե՛զ Տեառնդ յանձն եղիցո՛ւք:

Ողորմեա՛ց մեզ Տէր Աստուած մեր՝ ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Եւ ասի երիցս Տէր ողորմեա:

Նորին Տեառն Ներսէսի Հայոց Կաթողիկոսի Երգ աղօթական ի դէմս որդւոյ Երրորդութեան. նախ խոստովանելով զնմին Երրորդութեան առանձնակի:

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա՛:

Բղխումն ի Հօրէ և յՈրդւոյ.
Բղխեա՛ ի հոգւոյս
Բան քեզ ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գըտող զիս արա՛:

Դուռն ողորմութեան,
Դաւանողիս բա՛ց.
Դասեցո՛ վերնոցն:

Երրեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա՛:

Զարթի՛ր Տէր յօգնել.
Զարթո՛ ըզթըմըրեալս,
Զուարթնոց նըմանել:

Էդ Հայր անըսկիզբն.
Էակից Որդի,
Է միշտ սուրբ Հոգի.

Ընկա՛լ զիս դըթած,
Ընկա՛լ ողորմած.
Ընկա՛լ մարդասէր:

Թագաւոր փառաց,
Թողութեանց տըւող,
Թո՛ղ ինձ ըզյանցանս:

Ժողովող բարեաց,
Ժողովեա՛ և զիս
Ժողովս անդրանկաց:

Ի քէն Տէր հայցեմ
Ի մարդասիրէդ
Ինձ բըժըշկութիւն:

Լե՛ր կեանք մեռելոյս,

Լոյս խաւարելոյս,
Լուծանող ցաւոյս:

Խորհըրդոց գիտող,
Խաւարիս շնորհեա՛
Խորհուրդ լուսաւոր:

Ծընունդ Հօր ծոցոյ,
Ծածկելոյս ստուերաւ
Ծագեա՛ լոյս փառաց:

Կենարար փըրկիչ,
Կեցո՛ ըզմեռեալս,
Կանգնեա՛ զգըլորեալս:

Հաստեա՛ հաւատով,
Հաստատեա՛ յուսով,
Հիմնեցո՛ սիրով:

Ձայնիւս աղաչեմ,
Ձեռօքս պաղատիմ,
Ձի՛ր բարեաց շնորհեա՛:

Ղամբարամբ լուսոյ,
Ղեկավար ճարտար,
Ղօղեալս ամրացո՛:

Ճառագայթ փառաց,
Ճանապարհ ինձ ցո՛յց
Ճեպել ի յերկինս:

Միածինդ Հօր,
Մո՛յծ զիս յառագաստ
Մաքուր հարսանեացդ:

Յորժամ գաս փառօք
Յահագին աւուրն,
Յիշեա՛ զիս Քրիստոս:

Նորոգող հնութեանց,
Նորոգեա՛ և զիս,
Նորոգ զարդարեա՛:

Շնորհատու բարեաց,
Շնորհեա՛ զքաւութիւն.
Շնորհեա՛ զթողութիւն:

Ուրախացո՛ Տէր,
Ոգւոյս փրկութեամբ,
Ոյր վասն եմ ի սուգ:

Չար մըշակողին
Չար սերմանց նորին
Չորացո՛ զպըտուղն:

Պագեւիչ բարեաց,
Պարգեւեա՛ իմոց
Պարտեացս թողութիւն:

Ջուր շնորհեա՛ աչացս,
Ջերմ հեղուլ զարտօսր,
Ջընջել ըզյանցանս:

Ռետինըդ քաղցու,
Ռամ հոգւոյս արբո՛,
Ռահ ցո՛յց ինձ լուսոյ:

Սէր անուն Յիսուս,
Սիրով քով ճմլեա՛:
Սիրտ իմ քարեղէն:

Վայրն գըթութեան,
Վասն ողորմութեան,
Վերըստին կեցո՛:

Տենչալի տեսլեամբ
Տո՛ւր ինձ յագենալ,
Տէր Յիսուս Քրիստոս:

Րաբունդ երկնաւոր,
Րոտեա՛ զաշակերտս
Րամից երկնայնոց:

Ցօղ արեան քոյ Տէր,
Ցօղեա՛ ի հոգիս.

Ցնծասցէ անձն իմ:
Իւծեալըս մեղօք
Իւծեալ աղաչեմ
Իւսել ի բարիս:
Փրկիչ բոլորից,
Փութա զիս փրկել
Փորձութեանց մեղաց:
Քաւիչ յանցանաց,
Քաւեա զօրհնաբանս
Քեզ երգել ըզփառս:

Ածածնին բարեխօսութբ, յիշեա՛ Տէր և ողորմեա՛:

Զկնի սոյ Աղօթս:

Զքէն գոհանամք Տէր Աճ մեր, որ շնորհեցեր մեզ հանգիստ քնոյ խաղաղութբ: Եւ զարթուցեալ ժամանեցուցեր զմեզ կանխել յերկրպագութի ահաւոր և փառաւորեալ անուանդ քում սրբոյ: Տո՛ւր մեզ Տէր աղաչեմք զքեզ զմնացուած գիշերիս խաղաղութբ անցուցանել. և զամենայն ժամանակս կենաց պանդխտութե մերոյ երկիւղիւդ քո ամրացո՛ և պահեա՛: Ոչ զի զգուշութբ և անարատ վարուք կրօնաւորեալք յայսմ աշխարհիս՝ ժամանեսցուք յանքոյթ և ի խաղաղ նաւահանգիստ յաւիտենական ի կեանսդ, շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յսի Քսի. ընդ որում քեզ Հօր, և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս:

Խաղաղութիւն ամենեցուն:

Աստուծոյ երկրպագեսցուք:

Նայեա՛ց Տէր բարերար ողորմութբ քով յերկրպագուս և ի փառաբանիչս անուանդ քում սրբոյ: Տէր զօրութեց, խաղաղացո՛ զանձինս մեր յամ սատանայական խռովութեց և յաշխարհական զբօսանաց: Զհրեշտակ խաղաղութեան քո առաքեա՛ առ մեզ, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռով ի տուէ և ի գիշերի, յարթնութե և ի հանգստեան մերում: Ոչ զի բարեպաշտութբ և արժանաւորապէս քեզ Տեառնդ ծառայելով ի կեանս յայսոսիկ, ժամանեսցուք յաւիտենական երկնից արքայութե քո՝ զոր պատրաստեցեր ի սկըզ-

բանէ աշխարհի սրբոց քոց: Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Աստ ասի սաղմոս ըստ յաւուրն, եւ զկնի սաղմոսին ասի ըստ յաւուրն կանոնագլուխ:

Կանոնագլուխ կիրակէ:

ԱՉ

Ալէլուիա. ալէլուիա:

Դատեա՛ Տէր զայնոսիկ որք դատեն զիս. ալէլուիա. մարտի՛ր ընդ այնոսիկ՝ որք մարտնչին ընդ իս. ալէլուիա:

Ա՛ռ զզէն և զասպար քո և արի՛ յօգնել ինձ. հա՛ն զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց. արգե՛լ զնոսա և ասա՛ դու ցանձն իմ թէ փրկութի քո ես եմ. ալէլուիա:

Ամաչեսցեն և յամօթ լիցին որք խնդրեն զանձն իմ. դարձցին յետս և ամաչեսցեն որք խորհէին ինձ չար:

Եղիցին նոքա որպէս փոշի առաջի հողմոյ. և հրեշտակ Տեառն նեղեսցէ զնոսա:

Եղիցին ճանապարհք նոցա ի խաւար և ի գայթագղութիւն. և հրեշտակ Աստուծոյ հալածեսցէ զնոսա:

Ի նանիր թագուցին ինձ զորոգայթ յապականութե իւրեանց. և ի նանիր նախատեցին զանձն իմ:

Փ. Տէր յերկինս է ողորմութի քո. ճշմարտութի քո մինչև յամպս. ալէլուիա. ալէլուիա:

Արդարութի քո որպէս լերինք Աստուած. իրաւունք քո որպէս խորք բազումք. զմարդիկ և զանասուն կեցուցանես դու Տէր:

Որպէս զի բազում արարեր զողորմութի քո Աճ. այլ որդիք մարդկան ի հովանի թևոց քոց յուսասցին:

Արբեսցին նոքա ի պարարտութե տան քո. և զուղխս փափկութեան քո տացես ըմպել նոցա:

Ի քէն է Տէր աղբիւր կենաց. և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս:

Ծագեա՛ զողորմութիւնս քո՝ ոյք ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո՝ ոյք ուղիղ են սրտիւք:

Մի՛ եկեսցեն ի վերայ մեր ոտք ամբարտաւանից. և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ:

Անդ անկցին ամենեքեան՝ ոյք գործեն զանօրէնութիւն. մերժեսցին՝ և այլ մի՛ կարասցեն հաստատել:

Փառք Հօր: Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն. ալէլուիա. ալէլուիա:

ԱԿ

Ասա՛ց անզգամն ի սրտի իւրում թէ՛ ոչ գո՛յ Աստուած. ալէլուիա. ապականեցան և պղծեցան յանօրէնութեան իւրեանց. և ոչ ոք է որ առնէ զքաղցրութիւն. ալէլուիա:

Ած յերկնից նայեցաւ յամ որդիս մարդկան. տեսանել թէ իցէ՞ ոք իմաստուն որ խնդրիցէ զԱծ. ալէլուիա:

Ամենեքեան խոտորեցան ի միասին և անպիտանացան:

Ոչ ոք է՝ որ առնէ զբարի. և չէ ոք մինչև ի մի:

Որպէս ոչ ծանիցեն ամէն. որք գործեն զանօրէնութի:

Ոյք ուտեն զժողովուրդ իմ ոպ կերակուր հացի. և առ Աստուած ոչ կարդացին. ալէլուիա:

Փ. Ո՛ւ տա՛ց դո՛յր նոցա փոխանակ. և ո՛չ երկեա՛ն յԱստուծո՛յ. ալէլուիա. ալէլուիա:

Ցրեաց զձեռն իւր ի հատուցանել նոցա. և նոքա պղծեցին զօրէնս նորա. ալէլուիա:

Բաժանեցան ի սրտմտութենէ երեսաց նորա. և եհաս ի սիրտս նոցա:

Կակուղ էին բանք նոցա քան զձէթ. և նոքեանք որպէս սլաք:

Ընկեա՛ ի Տէր զհոգս քո. և նա կերակրէ զքեզ. և ոչ տայ յաւիտեան զսասանութիւն արդարոյ:

Դու Ած իջուցանես զնոս ի գուբ ապականութե. արք

արիւնահեղք և նենգաւորք մի՛ հասարակեսցեն զաւուրս իւրեանց. այլ ես ի քեզ Տէր յուսացայ. ալէլուիա:

Փառք. ալէլուիա. ալէլուիա:

ԲՁ

Ի՛ քե՛զ Տէր յուսացայ մի՛ ամաչեցից յաւի՛տեան. ալէլուիա. յարդարութեան քում փրկեա՛ և ապրեցո՛ զիս. ալէլուիա:

Խոնարհեցո՛ առ իս զունկն քո. և կեցո՛ զիս:

Լե՛ր իմ Ած ապաւէն՝ և տեղի ամուր կեցուցանել զիս. զի հաստատութի իմ և ապաւէն իմ դու ես:

Աստուած իմ փրկեա՛ զիս ի ձեռաց մեղաւորի. ի ձեռաց անօրինի և անիրաւի:

Դու ես համբերութիւն իմ Տէր: Տէր յոյս իմ ի մանկութենէ իմմէ:

Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ. յորովայնէ մօր իմոյ՝ դու ես ապաւէն իմ. և առ ի քէն է օգնութիւն իմ յամենայն ժամ:

Փ. Ե՛րկի՛ր պագցեն նմա ամենայն թագաւորք երկրի. և ամենայն ազգք ծառայեսցեն նմա. ալէլուիա. ալէլուիա:

Զի փրկեաց զաղքատն ի ձեռաց հզօրի. զաղքատն և զտնանկն՝ որոյ ոչ է օգնական:

Անխայեսցէ նա յաղքատն և ի տնանկն. և զանձինս տնանկաց կեցուսցէ. ի վաշխից չարաց փրկեսցէ զանձինս նոցա:

Պատուական է անուն նորա առաջի նոցա. կեցցէ և տացի նմա յոսկւոյն Արաբացւոց:

Յաղօթս կացցեն առ նա յամենայն ժամ. և զօրհանապազ օրհնեսցեն զնա:

Եղիցի հաստատութիւն ընդ ամենայն երկիր. և ի վերայ գլխոց լերանց:

Բարձրասցի քան զԼիբանան պտուղ նորա. ծաղկեսցի ի քաղաքի Տեառն որպէս խոտ երկրի:

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան. զի յառաջ քան զարեւ է անուն Նորա:

Ի նա օրհնեսցին ամենայն ազգք երկրի. և ամենայն ազինք երանեսցեն նմա:

Օրհնեալ Տէր Աձ Իսրայէլի որ առնէ զսքանչելիս միայն. և օրհնեալ է անուն սուրբ Նորա յաւիտեան. լցցի փառօք Նորա ամենայն երկիր. եղիցի. եղիցի:

Փառք Հօր. ալէ լուիա. ալէլուիա:

ԲԿ

Զողորմութիւնս քո Տէր յաւիտեան օրհնեցից. ալէլուիա. յազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնս քո բերանով իմով. ալէլուիա:

Ասացեր թէ աշխարհս ողորմութեամբ շինեսցի. յերկինս պատրաստ եղիցի ճշմարտութիւն քո:

Եդի ուխտ ընտրելոց իմոց. երդուայ Դաւթի ծառայի իմոյ:

Յաւիտեան հաստատեցից զզաւակ քո. և շինեցից յազգէ յազգ զաթոռ քո:

Խոստովան եղիցին երկինք սքանչելեաց քոց Տէր. և ճշմարտութիւն քո յեկեղեցիս սրբոց:

Ո՞վ է յամպս որ հաւասարեսցի քեզ. կամ ո՞վ նմանիցի Տեառն յորդիս Աստուծոյ:

Փ. Դարձուցեր զօգնութիւն ի սրոյ Նորա. և ոչ ընկալար զնա ի պատերազմի. ալէ լուիա. ալէ լուիա:

Անարգեցեր զսրբութիւն Նորա. և զաթոռ Նորա յերկիր կործանեցեր:

Նուազ արարեր զաւուրս ժամանակաց Նորա. և հեղեր զնովաւ զամօթ:

Մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս քո ի սպառ. բորբոքեսցի որպէս հուր բարկութիւն քո:

Իսկ արդ՝ յիշեա և տես թէ ո՞վ է իմ հանդիստ. միթէ ի զո՞ւր ինչ ստեղծեր զամենայն որդիս մարդկան:

Ո՞վ է մարդ՝ որ կեցցէ, և ոչ տեսցէ զմահ. կամ փրկեսցէ զանձն իւր ի ձեռաց դժոխոց:

Ո՞ւր են ողորմութիւնք քո Տէր առաջինք. զոր երդուար Դաւթի ճշմարտութեամբ քով:

Յիշեա զնախատինս ծառայի քո. զոր ընկալայ ի ծոց իմ յազգաց բազմաց:

Զոր նախատեցին թշնամիք քո Տէր. նախատեցին փոխանակ օծելոյ քո:

Օրհնեալ Տր Աձ յաւիտեանս յաւիտ. եղիցի. եղիցի:

Փառք Հօր. ալէ լուիա. ալէ լուիա:

ԳՁ

Խոստովան եղերուք Տեառն, զի քաղցր է. ալէլուիա. զի յաւիտեան է ողորմութի Նորա. ալէլուիա:

Ո՞ խօսեսցի զզօրութիւնս Տեառն. լսելի արասցէ զամենայն օրհնութիւնս Նորա:

Երանի՜ ոյք պահեն զիրաւունս. և առնեն զարդարութիւն յամենայն ժամ:

Յիշեա զմեզ Տէր ընդ հաճոյս ժողովրդեան քոյ. և այց արա մեզ ի փրկութեան քում:

Տեսցուք մեք զքաղցրութիւն ընտրելոց քոց. ուրախ եղիցուք մեք յուրախութիւն ազգի քոյ. և գովեսցուք մեք ի ժառանգութեան քում:

Մեղաք մեք ընդ հարս մեր. անօրինեցաք և յանցեաք:

Փ. Մատնեաց զնոսա ի ձեռս հեթանոսաց. տիրեցին նոցա ատելիք իւրեանց. և թշնամիք իւրեանց նեղեցին զնոսա. և խոնարհ եղեն ի ներքոյ ձեռաց նոցա. ալէլուիա. ալէլուիա:

Բազում անգամ փրկեաց զնոսա. և նոքա դառնացուցին զնա ի խորհուրդս իւրեանց. և կորացան յանօրէնութեան իւրեանց:

Հայեցաւ Տր ի նեղութիս նց. ի լսել ձայնի աղօթից նց:

Յիշեաց զուխտ իւր. և զղջացաւ ըստ բզմ ողորմութե իւրում, և ետ զնս ի գթութիս առաջի ամ գերչաց նց:

Փրկեա զմեզ Տէր Աստուած մեր, և ժողովեա զմեզ ի հեթանոսաց:

Խոստովան եղիցուք անուան քում սրբոյ. և պարծեսցուք յօրհնութիւնս քո:

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի յաւիտեանս յաւիտենից:

Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն. եղիցի եղիցի:

Փառք Հօր. ալէլուիա. ալէլուիա:

ԳԿ

Ըմբռնեա զզէն և զվահան. ալէլուիա. մի մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց. ալէլուիա:

Ընկալ զծառայս քո ի բարի. զի մի ամբարտաւանք զրկեսցեն զիս:

Սպասեցին աչք իմ փրկութեան քում Տէր. և բանից արդարութեան քո:

Արա ընդ ծառայի քում Տէր ըստ ողորմութեն քում. զարդարութիւնս քո ուսո ինձ:

Ծառայ քո եմ ես, իմաստուն արա զիս. և ծանեայց զվկայութիւնս քո:

Ժամ է պաշտել զՏէր. խափանեցին զօրէնս քո:

Փ. Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր. ըստ բանի քում իմաստուն արա զիս. ալէլուիա. ալէլուիա:

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր. և բանիւ քով փրկեա զիս:

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո. յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո:

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են:

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի:

Ցանկացայ փրկութեն քում Տէր. և օրէնք քո խօսք իմ էին:

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ:

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա զծառայս քո. զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ:

Փառք Հօր. ալէլուիա. ալէլուիա:

ԴՁ

Օրհնեա անձն իմ զՏէր. օրհնեցից զՏէր ի կեանս իմ. ալէլուիա. սաղմոս ասացից Աստուծոյ իմոյ մինչեւ եմ ես. ալէլուիա:

Մի յուսայք յիշխանս, և մի յորդիս մարդկան. զի ոչ գոյ փրկութիւն ի նոսա:

Ելցէ հոգի ի նոցանէ, և դարձցին անդրէն ի հող. և յայնմ աւուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա:

Երանի ազգի՝ որոյ Տէր Աստուած Յակոբայ օգնական է նմա. և յոյս նորա ի Տէր Աստուած է:

Ո արար զերկինս և զերկիր. զծով և զամենայն որ է ի նոսա:

Ո պահէ զճշմարտութիւն յաւիտեան. և առնէ իրաւունս զրկելոց:

Փ. Գովեա Երուսաղէմ զՏէր. ալէլուիա: Եւ օրհնեա զԱստուած քո Սիոն:

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց. և օրհնեաց զորդիս քո ի քեզ:

Ո եդ զսահմանս քո ի խաղաղութիւն. պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ:

Առաքէ զբան իւր յերկիր. վաղվաղ ընթանան պատգամք նորա:

Տնէ զձիւն որպէս զասր, և զմէգ որպէս փոշի ցանեաց:

Արկանէ զսառն որպէս պատառս. առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ:

Առաքէ զբան իւր՝ և հալէ զնոսա. շնչեսցեն հողմք՝ և գնասցեն ջուրք:

Պատմէ զբան իւր Յակոբայ. զարդարութիւն և զիրաւունս Իսրայէլի:

Ոչ այսպէս արար ամենայն ազգաց Տէր. և զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա:

Փառք Հօր. ալէլուիա:

Գկ

Սիրեցից զքեզ Տէր զօրութիւն իմ. ալէլուիա. Տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ և փրկիչ իմ. ալէլուիա:

Աստուած օգնական իմ. և ես յուսամ ի նա. ապաւէն իմ, եղջիւր փրկութեան իմոյ ընդունելի իմ է:

Օրհնելով կարդացից առ Տէր. և ի թշնամեաց իմոց ապրեցայց:

Շուրջ եղեն զինեւ երկունք մահու. և ուղխք անօրէնութեան խռովեցուցին զիս:

Վիշտք դժոխոց պաշարեցին զիս. և ժամանեցին ինձ որոգայթք մահու:

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի. և առ Աստուած իմ աղաղակեցի:

Փ. Օգնեցուցեր ինձ զզօրութիւն ի պատերազմի. զյարուցեալսն ի վերայ իմ ներքոյ իմ արարեր. ալէլուիա. ալէլուիա:

Զթշնամիսն իմ հալածականս արարեր. և զատելիսն իմ սատակեցեր:

Աղաղակեցին, և ոչ ոք էր որ փրկէր զնոսա. կարդացին առ Տէր, և ոչ լուաւ նոցա:

Մանրեցից զնոսա որպէս փոշի առաջի հողմոյ. և որպէս կաւ գնեհաց կոխեցից զնոսա:

Փրկեսցէ զիս Տէր ի հակառակութենէ ժողովրդոց. և կացուսցէ զիս գլուխ հեթանոսաց:

Ժողովուրդ զոր ոչ գիտէի ծառայեաց ինձ. և ի լուր ականջաց լուաւ ինձ:

Որդիք օտարաց ստեցին ինձ. որդիք օտարաց մաշեցան և կաղացան ի շաւղաց իւրեանց:

Կենդանի է Տէր, և օրհնեալ է Աստուած. և բարձր եղիցի Աստուած փրկութեան իմոյ:

Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ. և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ:

Փրկիչ իմ ի թշնամեաց իմոց բարկացողաց. յայնցանէ որք յարուցեալ են ի վերայ իմ՝ բարձր արարեր զիս. և յառնէ անիրաւէ փրկեցեր զիս:

Վասն այսորիկ խոստովան եղէց քեզ ի հեթանոսս. և անուան քում սաղմոս ասացից:

Մեծ արարեր զփրկութիւն թագաւորի նորա. առնել ողորմութիւն ընդ օծելոյ նորա Դաւթի. և ընդ զաւակի նորա յազգէ մինչեւ յազգ:

Փառք Հօր և. ալէլուիա. ալէլ.:

Եթէ կանոնագլուխն ընդ սաղմոսին ասի՝ յետին գունդն որ է այլոց մարգարէից՝ եւս ասի: Իսկ եթէ ոչ ասի ընդ սաղմոսին որպէս է սովորութիւն ոմանց, զկնի կանոնագլխոյն ասի՝ Եւ եւս խաղաղութեան: Օրհնութիւն և փառք: Եւ ապա պաշտօն առնի ըստ յաւուրն:

Բայց յորժամ զպաշտաման շարականն հանգստեան ասեն, զկնի շարականացն ասի սաղմոս ըստ յաւուրն, եւ ընթերցեալ լինի աւետարան ըստ յաւուրն, եւ զկնի աւետարանին ասի յԱծ անեղին փոխ մի: Ոմանք ընդ Ած անեղին կցուրդն զոր տուն է յԱրարիչ և մարդասէրն. եւ կամ է Ես ասացին. կամ Քո է: Եւ ապա Հոգւոց հանգ: Քն որդի. Եւ Հայր մեր:

Սաղմոսք ըստ յաւուրն նախ քան զաւետարանն հանգստեան:

ԱԶ. Սաղմոս Զ:

Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. և մի բարկութբ քով խրատեր զիս: Ողորմեա ինձ Տէր. զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ. զի խռովեցան ոսկերք իմ:

Անձն իմ յոյժ խռովեցաւ. և դու Տէր մինչեւ յերբ: Դարձ Տէր և փրկեա զանձն իմ. կեցո զիս Տէր ըստ ողորմութեան քում:

Զի ոչ ոք է, որ ի մահու յիշէ զքեզ. կամ ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ: Վաստակեցայ ես ի հե-

ծութեան իմում· լուացի զա̃մ գիշեր զմահիճս իմ և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։

Խռովեցաւ ի սրտմտութենէ ակն իմ· և մաշեցայ ես ի վերայ ամենայն թշնամեաց իմոց։ Ի բաց կացէք յինէն ամենեքեան, որք գործէք զանօրէնութիւն։

Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ· լուաւ Տէր աղօթից իմոց· և Տէր զխնդրուածս իմ ընկալաւ։ Ամաչեսցեն, և խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ· դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին։

ԱԿ· Սաղմոս ԻԹ։

Բարձր առնեմ զքեզ Տէր· զի ընկալար զիս, և ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս։ Տէր Աստուած իմ կարդացի առ քեզ, և բժշկեցեր զիս· Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ· և փրկեցեր զիս յայնցանէ որք իջանեն ի գուբ։

Սաղմոս ասացէք Տեառն սուրբք նորա· խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա։ Սրտմտութի̃ է ի բարկութեան նորա· և կեանք են ի կամաց նորա։

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք· առաւօտուց եղիցի ուրախութիւն։ Ես ասացի ի բարեկենդանութեան իմում, թէ ոչ սասանեցայց յաւիտեան։

Տէր ի կամս քո ետուր գեղոյ իմոյ զօրութիւն· դարձուցեր զերեսս քո յինէն՝ և ես եղէ խռովեալ։ Առ քեզ Տէր կարդացի· և առ Ա̃ծ իմ աղաղակեցի· զինչ օգուտ է քեզ յարենէ իմմէ· թէ իջանեմ ես յապականութիւն։

Մի՛ թէ հո̃ղ խոստովան առնիցի առ քեզ· կամ պատմեսցէ զճշմարտութիւնս քո։ Լուաւ ինձ Տէր, և ողորմեցաւ· և Տէր եղեւ ինձ օգնական։

Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն· եհերձ յինէն զքուրձ, և ինձ զգեցոյց զուրախութի̃։ Որպէս սաղմոս ասասցեն քեզ փառք իմ· և այլ մի՛ եւս զղջացայց, Տ̃ր Ա̃ծ իմ· յաւիտեան խոստովան եղէց քեզ։

ԲՁ· Սաղմոս ԾԳ։

Աստուած յանուան քում կեցո՛ զիս· և ի զօրութեան քում իրաւ արա ինձ։ Աստուած լո՛ւր աղօթից իմոց· ո՛ւնկն դիր բանից բերանոյ իմոյ։

Օտարք յարեան ի վ̃ր իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ· և ոչ համարեցան զքեզ Ա̃ծ առաջի իւրեանց։ Ահա Ա̃ծ օգնական իմ, և Տէր ընդունող հոգւոյ իմոյ։

Ի դարձուցանել զչարն ի թշնամիս իմ, ճշմարտութեամբ քով սատակեա՛ զնոսա։ Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ· և խոստովան եղէց անուան քում Տէր, զի բարի է։

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս· և ի թշնամիս իմ ետես ակն իմ։

ԲԿ· Սաղմոս ԿԶ։

Աստուած ողորմեա՛ մեզ՝ և օրհնեա՛ զմեզ· երեւեցո՛ զերեսս քո ի մեզ, և ողորմեա՛ մեզ։ Ճանաչել յերկրի զճանապարհս քո· յազինս ա̃մ զփրկութի̃ս քո։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Ա̃ծ· խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ա̃մ։ Ուրախ եղիցին և ցնծասցեն ազինք· զի դու դատես զժողովուրդս յուղղութե̃· և ազգաց երկրի դու առաջնորդես։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Ա̃ծ· գոհասցին զքէն ժողովուրդք ամենայն։ Երկիր ետ ըզպտուղ իւր· և օրհնեաց զմեզ Ա̃ծ Ա̃ծ մեր։

Աստուած մեր օրհնեսցէ զմեզ· և ի նմանէ երկիցեն ամենայն ծագք երկրի։

ԳՁ· Սաղմոս ՁԴ։

Հաճեցար Տէր ընդ երկիր քո· և դարձուցեր զգերութիւն Յակոբայ։ Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո· և ծածկեցեր զամենայն մեղս նոցա։

Լռեցուցեր զա̃մ սրտմտութի̃ս քո· դարձար ի բարկութէ̃ սրտմտութե̃ քոյ։ Դարձ առ մեզ Ա̃ծ փրկիչ մեր· և դարձո՛ զսրտմտութի̃ս քո ի մէնջ։

Մի՛ յաւիտեան բարկանար մեզ Տէր. և մի՛ ձգեր զբարկութի քո յազգէ մինչև յազգ: Ած դու դարձեալ կեցուսցես զմեզ. և ժողովուրդ քո ուրախ եղիցի ի քեզ:

Ցո՛յց մեզ Տէր զողորմութի՜ս քո. և զփրկութի՜ս քո տո՛ւր մեզ: Լուայց զինչ խօսի Տէր Ած մեր. խօսեսցի զխաղաղութի ժողովրդեան իւրոյ առ սուրբս իւր, և առ այնոսիկ, որք դարձեալ են առ նա սրտիւք:

Սակայն մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա. բնակել փառաց նորա յերկրի մերում: Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին. արդարութի և խաղաղութիւն համբուրեսցին:

Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ. արդարութիւն յերկնից երևեցաւ: Տէր տացէ զքաղցրութիւն. եւ երկիր մեր տացէ զպտուղ իւր. արդարութիւն առաջի նորա գնասցէ. դիցէ ի ճանապարհի զգնացս իւր:

Գկ. Սաղմոս ՃԱ:

Տէր լո՛ւր աղօթից իմոց. և աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն: Յաւուր նեղութե իմոյ խոնարհեցո՛ առ իս զունկն քո. յորում աւուր կարդամ առ քեզ վաղվաղակի՛ լուր ինձ:

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խուիւ չորացան: Հարայ ես որպէս խոտ. և ցամաքեցաւ սիրտ իմ. մոռացայ ուտել զհաց իմ ի ձայնէ հեծութեան իմոյ:

Կցեցաւ ոսկր իմ ի մարմին իմ. Նմանեցայ ես հաւալան անապատի: Եղէ ես որպէս բու յաւերակի. տքնեցայ, և եղէ որպէս ես ճնճղուկ միայն ի տանիս:

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ. և գովիչք իմ ինև երդնուին: Զմոխիր որպէս զհաց կերայ. և զըմպելին իմ արտասուօք խառնեցի:

Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո. զի դու բարձրացուցեր և խոնարհեցուցեր զիս: Աւուրք իմ որպէս հովանի անցին. և ես ոպ խոտ ցամաքեցայ:

Դու Տէր յաւիտեան կաս. և յիշատակ քո յազգէ մինչև յազգ: Դու յարուցեալ գթասցիս ի վերայ Սիովնի. ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ:

Դջ. Սաղմոս ՃԺԸ:

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր, ըստ բանի քում իմաստո՛ւն արա զիս: Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր. և բանիւ քո փրկեա՛ զիս:

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո. յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո: Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամ պատուիրանք քո արդարութե են:

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի: Ցանկացայ փրկութեան քում Տէր. և օրէնք քո խօսք իմ էին:

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ: Մոլորեցայ ես ոպ զոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայս քո. զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ:

Դկ. Սաղմոս ՃԽԲ:

Տէր, լո՛ւր աղօթից իմոց. ո՛ւնկն դիր խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով: Լո՛ւր ինձ արդարութբ քով. և մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում. զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ. և նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից: Ձանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրս զառաջինս. խորհեցայ յամենայն գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ: Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ. վաղվաղակի՛ լուր ինձ Տէր, զի նուաղեցաւ յինէն հոգի իմ:

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցիմ այնոցիկ, որք իջանեն ի գուբ: Լսելի՛ արա ինձ առաւօտուց զողորմութիւնս քո. զի ես ի քեզ Տէր յուսացայ:

Ցո՛յց ինձ ճանապարհ՝ յոր գնացից. զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ: Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց Տէր. զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո՛ ինձ առնել զկամս քո. զի դու ես Ած իմ: Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ:

Վասն անուան քո Տէր կեցուսցես զիս. արդարութբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ: Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ. և կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ. զի ես ծառայ քո եմ:

Զկնի սաղմոսացս ընթերցեալ լինի աւետարան ըստ յաւուրն:

ԱՒԵՏԱՐԱՆՔ ՀԱՆԳՍՏԵԱՆ

ԴԿ ԲԿ

Աւետարան ըստ Մատթէոսի: ԺԳ. 36:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Յայնժամ թողեալ զժողովուրդսն՝ եկն ի տուն. մատեան առ նա աշակերտքն նորա և ասեն. մեկնեա՛ մեզ զառակ որոմանցն ագարակին: Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. որ սերմանէ զսերմն բարի՝ է որդի մարդոյ. և ագարակն աշխարհս է: Սերմն բարի նոքա են, որ որդիքն արքայութեան են. իսկ որոմն որդիք չարին են. և թշնամին որ վարեաց զայն՝ սատանայ է. և հունձքն կատարած աշխարհիս է. և հնձօղքն հրեշտակք են: Որպէս ժողովի որոմն և ի հուր այրի, այնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս: Առաքեսցէ որդի մարդոյ զհրեշտակս իւր. և ժողովեսցեն յարքայութէ նորա զամ գայթագղութիս, և զայնոսիկ ոյք գործեն զանօրէնութի. և արկցեն զնոսա ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ և կրճել ատամանց: Յայնժամ արդարքն ծագեսցին իբրև զարեգակն յարքայութե երկնից. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: Դարձեալ՝ նման է արքայութի երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ՝ թագոյց. և ի խնդութէ անտի երթայ վաճառէ զամ ինչ զոր ունի, և գնէ զագարակն զայն:

Դարձեալ՝ նման է արքայութի երկնից առն վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս. և գտեա՛լ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամ զոր ինչ ունէր, և գնեաց զայն մարգարիտ: Դարձեալ՝ նման է արքայութի երկնից ուռկանի արկելոյ ի ծով. և յամ ազգաց ժողովելոյ: Որ իբրև լցաւ, հանեալ ի ցամաք՝ և նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս, և զխոտանն ի բաց ընկեցին: Այնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք՝ և մեկնեսցեն զչարս ի միջոյ արդարոց, և արկցեն զնոսա ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ և կրճել ատամանց: Ասէ ցնոսա Յս. իմացարո՞ւք զայս ամ. ասեն ցնա, այո՛ Տէր: Եւ նա ասէ ցնս. վասն այսորիկ ամ դպիր աշակերտեալ արքայութե երկնից՝ նման է առն տանուտեառն որ հանէ ի գանձէ իւրմէ զնոր և զհին: 52:

ԲՁ ԴՁ

Աւետարան ըստ Մարկոսի: Դ. 26:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ

Այսպէս է արքայութի Աստուծոյ, որպէս զի այր մի արկանիցէ զսերմանիս յերկիր, և ննջիցէ և յառնիցէ զցայգ և զցերեկ. և սերմանիքն բուսանիցին և աճիցեն. և նա ոչ գիտէ՝ թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ զխոտն և ապա զհասկն, ապա զցորեանն ատոք ի հասկին: Եւ յորժամ տայցէ զպտուղն՝ վաղվաղակի առաքի մանգաղ, զի հասեալ են հունձք: Եւ ասէր. ո՞ւմ նմանեցուսցուք զարքայութիւնն Աստուծոյ, կամ որո՞վ առակաւ առակեսցուք զնա: Որպէս հատն մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան զամ սերմանիս, որք են յերկրի. և յորժամ սերմանիցի, բուսանի և լինի մեծ քան զամ բանջար, և արձակէ ոստս մեծամեծս, մինչև բաւական լինել ընդ հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակել: Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն՝ որպէս կարող լինէին

լսել: Եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա, բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն: 34:

ԱԿ ԳԿ

Աւետարան ըստ Ղուկասու: ԺԲ. 32:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ

Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն: Վաճառեցէք զինչս ձեր, և տո՛ւք ողորմութիւն. և արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող մերձենայ, և ոչ ցեց ապականէ: Զի ուր գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին: Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս. և ճրագունք լուցեալք: Եւ դուք նմանողք մարդկան, որք ակն ունիցին տեառն իւրեանց, թէ երբ դառնայցէ ի հարսանեաց. զի յորժամ գայցէ և բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա: Երանի՜ իցէ ծառայիցն այնոցիկ, զորս եկեալ տէրն գտցէ արթունս: Ամէն ասեմ ձեզ. զի գօտի ընդ մէջ ածցէ՝ և բազմեցուսցէ զնոսա, և անցեալ պաշտեսցէ զնոսա: Եւ եթէ յերկրորդ կամ յերրորդ պահու եկեսցէ՝ և գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ: Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ, հսկէր և չտայր թոյլ ական հատանել ի տան իւրում: Եւ դուք եղերո՛ւք պատրաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք՝ գայ որդի մարդոյ: Ասէ Պետրոս. Տէր, առ մե՞զ ասացեր զառակդ զայդ՝ եթէ առ ամենեսեան: Եւ ասէ Տէր. ո՞վ իցէ հաւատարիմ տնտես և իմաստուն, զոր կացոյց տէր իւր ի վերայ գերդաստանի իւրոյ՝ տալ ի ժամու զկերակուրս: Երանի՜ իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս: Արդարեւ ասեմ ձեզ՝ զի ի վերայ ա՟մ ընչից իւրոց կացուսցէ զնա: Ապա եթէ ասիցէ ծառայն այն ի սրտի իւրում. յամէ տէր իմ ի գալ. և սկսանիցի հարկանել զծառայս և զաղախնայս, ուտել և ըմպել և

արբենալ: Եկեսցէ տէր ծառային այնորիկ յաւուր յորում ակն ոչ ունիցի, և ի ժամու՝ յորում ոչ գիտիցէ. ընդ մէջ կտրեսցէ զնա, և զմասն նորա ընդ անհաւատս դիցէ: Եւ ծառայ՝ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ՝ և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա, արբցէ գան բազում: Եւ որ ոչն գիտիցէ՝ և արժանի գանի ինչ գործեսցէ, արբցէ գան սակաւ: Ամենայնի՝ որում շատ տուաւ, շատ խնդրեսցի ի նմանէ. և որում բազում աւանդեցաւ, առաւել ևս պահանջեսցեն ի նմանէ: 48:

ԱՁ ԳՁ

Աւետարան ըստ Յովհաննու: Ե. 19:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Պատասխանի ետ և ասէ ցնոսա: Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ կարէ որդի մարդոյ առնել յանձնէ ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ: Զի զոր նայն առնէ, զնոյն և Որդին նմին նման գործէ. զի Հայր սիրէ զՈրդի, և զա՟մ ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն առնէ, և մեծամեծս ևս քան զսոյնս ցուցանէ նմա զգործս, ընդ որս դուքդ զարմանայք: Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և Որդի՝ զորս կամի կենդանի առնէ: Եւ ոչ եթէ Հայր դատի զոք. այլ զա՟մ դատաստան ետ Որդւոյ իւրոյ, զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի՝ որպէս պատուեն զՀայր: Որ ոչ պատուէ զՈրդին՝ ոչ պատուէ զՀայր զառաքիչն նորա: Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ և հաւատայ այնմ որ առաքեացն զիս, ընդունի զկեանս յաւիտենականս. և ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս: Ամէն ամէն ասեմ ձեզ, զի գայ ժամանակ, և արդէն իսկ է, յորժամ մեռեալք լուիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ. և որք լսիցենն՝ կեցցեն: Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս ետ և Որդւոյ ունել կեանս յանձին իւրում: Եւ իշխանութի՟ ետ նմա դատաստան առնել. և զի որ-

դի մարդոյ է՝ ընդ այն զի՞ զարմանայք: Զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքեան որ ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա, և եկեսցեն արտաքս: Որոց բարիս գործեալ իցէ՝ ի յարութ՟ի կենաց. և որոց զչար արարեալ՝ ի յարութ՟ի դատաստանաց: Ոչ կարեմ ես առնել յանձնէ և ոչ ինչ. այլ ո՟պ լսեմ՝ դատիմ. և դատաստանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեաց զիս: 30:

Ապա Ա՟ծ անեղ, եւ այլն, որպէս ի վերոյ, երես 21:

Մաղթանք:

Հոգւոյն հանգուցելոյ Ք՟ն Ա՟ծ արա՛ հանգիստ և ողորմութ՟ի, և մեզ մեղաւորացս շնորհեա՛ զթողութ՟ի յանցանաց:

Քարոզ:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Վասն հոգւոյն հանգուցելոյ աղաչեսցուք զփրկիչն մեր Ք՟ն. զի զն՟ն ընդ արդարսն դասեսցէ. և զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութ՟ե իւրոյ: Ամենակալ Տէր Ա՟ծ մեր կեցո՛ և ողորմեա: Տէր ողորմեա՛: Երիցս:

Աղօթք:

Ք՟ն Որդի Ա՟յ անոխակալ և բարեգութ՝ գթա՛ քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց: Յիշեա՛ յաւուր մեծի գալստեան արքայութ՟ե քո. արա՛ արժանի ողորմութ՟ե, քաւութ՟ե և թողութ՟ե մեղաց: Դասաւորեալ պայծառացո՛ ընդ ս՟բս քո յաջակողմեան դասուն: Զի դու ես Տէր և արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց և մեռելոց: Եւ քեզ վայելէ փառք իշխանութ՟ի և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քրիստոս Աստուած մեր, ողորմեա՛ համօրէն հաւատացեալ ննջեցելոց հոգւոյն:

Եւ ապա ասէ Օրհնութիւն ըստ պատշաճի աւուրն, կամ ի յայնէն, եւ զկնի մաղթանքն, եւ քարոզն եւ աղօթքն:

Մաղթանք տէրունական տօնից:

Փառք հրաշափառ (յարութ՟ե) քոյ Տէր. զօրհնեալ և զփառաւորե՟լ զհրաշալի և զյաղթող (զյարութ՟ի) քո օրհնեմք և փառաւորեմք: Մարդասէր Տէր, վասն սրբուհւոյ անարատ մօր քոյ և կուսի, և վասն խաչի քոյ պատուականի՝ ընկալ զաղաչանս մեր և կեցո՛ զմեզ:

Քարոզ Երանեալ եւ Իբրեւ ժամանայն:

Դկ Բկ

Վասն ի վերուստ խաղաղութ՟ե և փրկութ՟ե անձանց մերոց. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա՛:

Վասն լսելի լինելոյ Տեառն Ա՟յ ձայնի աղաչանաց մերոց. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա՛:

Վասն քաւիչ և ներող լինելոյ Ա՟յ ի վերայ մեղաց մերոց. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա՛:

Վասն թողլոյ մեզ զա՟մ յանցանս մեր զկամայ և զակամայ. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա՛:

Վասն զի մի՛ ընդ խոտանս գտանիցիմք յաւուրն պատասխանատուութեան. զՏէր աղաչ: Տէր ողորմեա՛:

Վ՟ն հոգւոյն հանգուցելոյ որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի Ք՟ն ննջեցին. զՏէր աղաչ: Յիշեա Տ՟ր և:

Եւ ևս և վասն միաբանութ՟ե ճշմարիտ և ս՟բ հաւատոյս մերոյ. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա՛:

Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Ա՟յ ամենակալին յանձն արասցուք: Քեզ Տ՟րնդ յն:

Ողորմեա՛ց մեզ Տէր Ա՟ծ մեր՝ ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա՛:

Աղօթք:

Տէր տուընջեան և գոյացուցիչ գիշերոյ, որ արարեր զտիւ ի զբօսանս բարեգործութ՟ե ի փրկութ՟ի անձանց մերոց. և զգիշեր ի հանգիստ քնոյ տկարացեալ բնութ՟ես մերոյ: Իսկ այժմ զարթուցեալ բացեր զբերանս

մեր յօրհնաբանութի ահաւոր և փառաւորեալ անուանդ քում սրբոյ: Ընկա՛լ և այժմ զաղաչանս մեր. և յաջողեա՛ մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք ի նոյն պաշտօն քո կանխել միշտ: Եւ նովին կանոնիւս անդադար փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ. այժմ և միշտ և:

Խաղաղութիւն ամենեցուն:

Զքեզ, որ յամի գթած և մարդասէր Տէրդ ես, աղաչեմք հանապազ. զի զօրացուսցես զմեզ օր ըստ օրէ կալ ի կարգի կրօնաւորութե մերում: Թեթեւացո՛ Տէր զքաղցր լուծ քո՝ զոր եդեր ի վր մեր. զի կարասցուք կալ ի պատուիրանի քում, և զհաճոյսն առնել առաջի քո յամենայն ժամ: Ի տուէ և ի գիշերի հրեշտակային երգակցութեամբ զքեզ օրհնել, զքեզ գովել և քեզ գոհութիս և փառս մատուցանել ամենազօր տէրութեդ. այժմ:

Սաղմոսիւք և օրհնութբ և երգօք հոգեւորօք անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զսբ Հոգին. այժմ:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր որ:

Քարոզ Երկինք պատմեն է— Տէր ապաւէն կանոնացն:

ԱՁ ԳՁ

Վասն ի գիշերի և ի տուընջեան և յամ ժամու խօսել մեզ զբան Տեառն. զՏէր աղաչես: Տէր ողորմեա՛:

Վասն չանկանելոյ մեզ ի փորձութի, որում ոչ կարեմք հանդուրժել. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա՛:

Վասն անբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին Քրի. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա՛:

Վասն առաջնորդելոյ մեզ ի նաւահանգիստն կենաց անվախճանից. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա՛:

Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն և երկնից արքայութե. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա՛:

Վասն հոգւոցն: Եւ եւս և վս միաբ: Զանձինս մեր:

Ողորմեա՛ց:

Աղօթ.:

Ի գիշերի և ի տուընջեան և յամ ժամու զքեզ աղաչեմք և ի քէն խնդրեմք մարդասէր Տէր: Լո՛ւր մեզ Ած փրկիչ մեր. խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս մեր. զի մի՛ ունայն լիցին վաստակք ծառայից քոց: Այլ համարեա՛ զաշխատութիս մեր ի գործ արդարութե, և ի պտուղ ածպաշտութե: Ընկա՛լ Տէր զաղօթս և զերկրպագութիս մեր. և հատո՛ մեզ զողորմութի քո առատապէս: Ծածկեա՛ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյ քո: Զօրացո՛ զմեզ Տր զօրութբ սբ Հոգւոյդ: Պահեա՛ զմեզ որպէս բիբ ական. և արա՛ առ մեզ նշան բարի ի գովեստ և ի փառաբանութի անուանդ քում սրբոյ: Զի ի քո փառս կատարի ամ արարածոց մշտընջենաւոր փառաբանութի ի բարձունս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Հովիւ քաջ, հովիւ բարի և յաւիտենական, նայեա՛ց և ա՛յց արա բանաւոր հօտի քո, զոր ժողովեցեր առ քեզ գթութբ քով: Զի քո առաջի կամք Տէր, և առ ի քէն ողորմութեցդ և գթութեցդ ակն ունիմք: Զամենեսեան օրհնեա՛. զամենեսեան իմաստնացո՛. զամենեսեան լուսաւորեա՛. և ամենեցուն պարգեւեա՛ զերկնից արքայութիդ: Վասն զի դու ես Տէր կենաց, և Ած ողորմութեց. և քեզ վայելէ փառք, իշխանութի և պատիւ. այժմ և միշտ և:

Ի գիշերի և ի տուընջեան, և յամ ժամու անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զսբ Հոգին. այժմ և:

Քարոզ Մի՛ նախանձիր է— Խոստովան կանոնացն:

ԱԿ ԳԿ

Վասն ուղղելոյ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութե. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն ցրելոյ ի մէնջ զամ խորհուրդս չարին. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա՛:

Վասն պարգեւելոյ մեզ առողջ խորհուրդս եւ առաքինի վարս. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն խորտակելոյ զհակառակորդն փաղփաղակի ընդ ոտիւք մերովք. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն հոգւոցն: Եւ եւս եւ մն: Զանձինս: Ողորմեայ:

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Աղօթք:

Տէր երկնի եւ երկրի՝ արարիչ ամ արարածոց՝ երեւելեաց եւ աներեւութից: Առ քեզ կարդամք յամ ժամ, զի ընդ ամ տեղիս է տէրութի քո. եւ արքայութի քո ամենեցուն տիրէ: Շնորհեա մեզ երկիւղիւ ի պաշտօն քո կանխել հանապազ. սիրել զքեզ ի բոլոր սրտէ, եւ ի բովանդակ մտաց, եւ յամ զօրութե մերմէ պահել զպատուիրանս քո. համբառնալ առ քեզ զձեռս մեր ի սրբութի առանց բարկութեան եւ երկմտութեան, եւ գտանել ի քէն զշնորհս եւ զողորմութի, եւ զառաքինասէր գործոցն յաջողութի: Վասն զի դու ես Տէր կենաց եւ Ած ողորմութեց. եւ քեզ վայելէն փառք, իշխանութի եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Քում ամենազօր եւ յաղթող տէրութեդ կրկնի ամ ծունր յերկրպագութի. եւ փառաւորի յամենեցունց թագաւորութի քո: Նայեա յերկրպագութիս մեր. եւ ուսո մեզ առնել զարդարութի ճշմարտութե: Վասն զի դու ես Ած խաղաղութե, որ բարձեր զթշնամութի ի միջոյ, եւ արարեր խաղաղութի յերկինս եւ յերկրի: Հեռաւորաց եւ մերձաւորաց աւետարանեցեր զնոր պարգեւս քոյին բարեացդ: Որում եւ զմեզ մեծի շնորհացդ արժանաւորս արասցես՝ դասելով ընդ ճշմարիտ երկրպագուս քո, Ած մեր եւ Տէր եւ փրկիչ Յս Քս: Որ ես օրհնեալ ընդ Հօր եւ ընդ սբյ Հոգւոյն, այժմ:

Յերգս օրհնութեան եւ ի ձայն սաղմոսաց անդադար փառաւորեմք զՀայր եւ զՈրդի եւ զսբ Հոգին. այժմ:

Քարոզ Ողորմեա ես– ի Նեղութեան կանոնացն:

ԲՁ ԳՁ

Վասն գտանելոյ մեզ զշնորհս եւ զողորմութի ի բարերար Տեառնէ մերմէ. զՏէր աղաչ: Տէր ողորմեա:

Վասն փրկելոյ զմեզ ի զրպարտութե մարդկան եւ յորոգայթից սատանայի զՏէր աղաչ: Տէր ողորմեա:

Վասն ամ անձանց քրիստոնէից եւ տանց հաւատացելոց. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն որք ի լերինս, յայրս եւ ի փապարս բնակեալ են սբ հարքն մեր. զՏէր աղաչ: Տէր ողորմեա:

Վասն որք սաղմոսիւք եւ օրհնութբ կատարեն զամ ժամանակս կենաց իւրեանց. զՏէր աղ: Տէր ողորմեա:

Վասն հոգւոցն: Եւ եւս եւ մն: Զանձինս: Ողորմեաց:

Աղօթք:

Գոհանամք զքէն Տէր Ած մեր, որ զարթուցեր զմեզ ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութե քոյ: Զարթո զմիտս մեր արդարութբ առ քեզ Տէր Ած մեր. զի տեսցեն աչք մեր զփրկութի քո: Եկեսցէ եւ բնակեսցի առ մեզ ածութի քոյ. եւ ողորմութի քո հովանի եւ պահապան լիցի ի վերայ պաշտօնէից քոց: Եւ զմեզ զծառայս քո արժանի արա ի տուէ եւ ի գիշերի, եւ յամենայն համու միշտ խորհել ի սէր պատուիրանաց քոց. եւ գոհանալով փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգիդ. այժմ եւ միշտ եւ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Կենդանարար զօրութի եւ աղբիւր անմահութե դու ես Քս Ած փրկիչ մեր, որ շնորհեցեր մեզ ի մէջ գիշերի յառնել եւ խոստովան լինել առ քեզ վասն իրաւանց եւ արդարութե քոյ: Եւ այժմ աղաչեմք զքեզ Տէր Ած մեր. արա զմեզ արթունս եւ պատրաստս ի ժամ առաւօ-

տու ընդ մեզ քո: Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ:

Գոհութեամբ և ճշմարիտ խոստովանութեամբ անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին. այժմ:

Ալէլուիա Յարութեանն Քրիստոսի:

Ա2

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր. և բանիւ Տեառն երկինք հաստատեցան: Եւ հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա:

փ. Յարեաւ Ած. և ցրուեցան ամ թշնամիք նորա: փախեան ատելիք նորա յերեսաց նորա:

փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն: Դասք հրեշտակաց օրհնեն զքեզ քն. ալէլուիա. մարդկան ազգ սաղմոսեն քեզ. ալէլուիա:

Զկնի ամենայն տէրունական տօնի որ Ա2 լինի՝ շարականս այս:

ԱԿ

Զմեծս հարկէք ամ հեթանոսք. աղաղակեցէք առ Ած ի ձայն ցնծութեան: Տէր բարձրեալ և ահարկու. թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի:

փ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո. և դարձուցեր զգերութիւն Յակոբայ: Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո. և ծածկեցեր զամ մեղս նոցա:

փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ. ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Բ2

Յարեաւ Ած, և ցրուեցան ամ թշնամիք նորա: փախեան ատելիք նորա յերեսաց նորա:

փ. Տէր թագաւորեաց. վայելչութիւն զգեցաւ: Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ:

փառք և. այժմ և. ալէլուիա:

ԲԿ

Հաճեցար Տէր ընդ երկիր քո. և դարձուցեր զգերութիւն Յակոբայ: Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո. և ծածկեցեր զամ մեղս նոցա:

փ. Օրհնեցէք մանկունք զՏէր. և օրհնեցէք զանուն Տեառն: Եղիցի անուն Տեառն օրհնեալ. յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

փառք և. այժմ և. ալէլուիա:

Գ2

Տէր թագաւորեաց. վայելչութիւն զգեցաւ: Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ:

փ. Գովեա Երուսաղէմ զՏր. և օրհնեա զԱստուած քո Սիովն: Զօրացոյց զնիգս դրանց քոց. և օրհնեաց զորդիս քո ի քեզ:

փառք և. այժմ և. ալէլուիա:

ԳԿ

Օրհնեցէք մանկունք զՏէր. և օրհնեցէք զանունն Տեառն: Եղիցի անուն Տեառն օրհնեալ. յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

փ. Կենդանի է Տէր, և օրհնեալ է Ած. և բարձր եղիցի Ած փրկութեան իմոյ: Ած է, որ խնդրէ զվրէժ իմ. և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ:

փառք և. այժմ և. ալէլուիա:

Դ2

Գովեա Երուսաղէմ զՏէր. և օրհնեա զԱստուած քո Սիովն: Զօրացոյց զնիգս դրանց քոց. և օրհնեաց զորդիս քո ի քեզ:

փ. Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր. և բանիւ Տեառն երկինք հաստատեցան: Եւ հոգւով բերանոյ նր ամ զօրութիւնք նց:

փառք և. այժմ և. ալէլուիա:

ԴԿ

Կենդանի է Տէր, և օրհնեալ է Ած. և բարձր եղիցի

Ա՟ծ փրկութեա՟ն իմոյ։ Ա՟ծ է որ խնդրէ զվրէժ իմ. և հնազանդ առնէ զժողովուրդս ը՟նդ ինև։

Փ. Ծա՛փս հարէք ա՟մ հեթանոսք. աղաղակեցէք առ Ա՟ծ ի ձայն ցը՟ծութե՟։ Տէ՛ր բարձրեալ և ահարկու. Թագաւոր մեծ ի վ՟ր ամենայ՟ն երկրի։

Փա՛ռք և. ա՛յժմ և. ալէ՛լուիա։

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ

ԱՌԱՒՕՏՈՒ ԺԱՄՈՒՆ

ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ԴԷՄՍ ՈՐԴՒՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐ ԵՐԵՒԵՑԱՒ ԻՒՂԱԲԵՐՒՑՆ

Լցաք առաւօտու ողորմութ՟ք քով. ցնծացաք և ուրախ եղաք զա՟մ աւուրս կենաց մերոց։

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն, յորս խոնարհ արարեր զմեզ. և ամացն յորս տեսաք զչարչարանս։

Հայեա՛ց Տէր ի ծառայս քո և ի գործս ձեռաց քոց. և առաջնորդեա՛ որդւոց նոցա. եղիցի լոյս Տեառն Ա՟ծ ի վերայ մեր։ Զգործս ձեռաց մերոց ուղի՛ղ արա ի մեզ Տէր. և զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Այժմ և միշտ։ Եւ ես խաղաղութե՟ զՏէր աղաչ։

Օրհնութի՟ և փառք Հօր և Որդւոյ և Հոգւ։

Օրհնութիւն Երից մանկանցն։ Դան. գ. 26։

Օրհնեալ ես Տէր Ա՟ծ հարցն մերոց. օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան։

Յիրաւունս անցուցեր զայս ա՟մ ընդ մեզ. արդար ես դու Տէր, և ա՟մ գործք քո ճշմարիտ են։

Ճանապարհք քո ուղիղ են. և ա՟մ դատաստանք քո արդար են։

Դատաստան արդարութե՟ ածեր ի վերայ մեր ըստ ա՟մի. և զոր ինչ ածեր ի վերայ մեր և քաղաքի ս՟րյ հարցն մերոց Երուսաղէմի։

Արդարութ՟ք և յիրաւի ածեր զայս ա՟մ ի վերայ մեր վ՟ն մեղաց մերոց։

Անօրինեցաք և յանցեաք ապստամբ լինել ի քէն. մեղաք յա՟մի և պատուիրանաց քոց մեք ոչ անսացաք։

Ոչ պահեցաք և ոչ արարաք՝ որպէս պատուիրեցեր դու մեզ. զի բարիս գտցուք մեք ի քէն։

Արդ զա՟մ զոր արարեր և զոր ինչ ածեր ի վերայ մեր արդար դատաստանաւ արարեր։

Մատնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց մերոց անօրինաց, խստաց և ապստամբողաց։

Ի ձեռս թագաւորի անօրինի և չարի քան զամենայն երկիր՝ մատնեցեր զմեզ։

Եւ արդ ոչ գոյ մեզ ժամ բանալ զբերանս մեր. զի յամօթ և նախատինք եղաք ծ՟ռյից քոց և պաշտօնէից։

Այլ մի՛ մատներ զմեզ ի սպառ վ՟ն անուան քո. մի՛ ցրեր զուխտս քո. և մի՛ ի բացեայ առներ զողորմութի՟ս քո ի մէնջ։

Վասն Աբրահամու սիրելւոյ քո, Իսահակայ ծառայի քո, և Իսրայէլի սրբոյ քո։

Խոստացար նոցա և ասացեր, բազմացուցից զզաւակ ձեր որպէս զաստեղս երկնից բազմութ՟ք. և որպէս զաւազ առ եզր ծովու։

Եւ արդ Տէր նուազեցաք մեք քան զա՟մ ազգս, և եմք տառապեալք յա՟մ երկրի այսօր վ՟ն մեղաց մերոց։

Ոչ գոյ ի ժամանակիս յայսմիկ իշխան, մարգարէ և առաջնորդ. ոչ ողջակէզք պատարագաց, և ոչ խունկք օրհնաց, և ոչ տեղի պատարագս մատուցանելոյ առաջի քո և ողորմութիւն գտանել ի քէն։

Այլ անձամբք խոնարհեալ, և հոգւով տառապանաց ընդունելի լիցուք մեք որպէս զողջակէզս խոյոց և

զուարակաց. և որպէս բիւրաւորս գառանց պարարտաց:

Այնպէս ընդունելի լիցին պատարագք մեր այսօր առաջի քո, զի կատարեալ գտցուք զկնի քո. և չիք ամօթ յուսացելոցս ի քեզ:

Եւ արդ գամք զհետ քո ամ սրտիւք մերովք. երկրպագեմք ի քեզ, և խնդրեմք զերեսս քո Տէր. մի՛ յամօթ առներ զմեզ:

Այլ արա՛ ընդ մեզ ըստ հեզութե̃ քում. և ըստ բազում ողորմութե̃ քում. փրկեա՛ զմեզ վն̃ սքանչելեաց քոց Տէր, և փառաւորեսցի անուն քո յաւիտեան:

Յամօթ լիցին ամենեքեան որք չարչարեն զծառայս քո. ամաչեցեալ լիցին բռնութի̃ք նոցա, և ամ զօրութի̃ք նոցա խորտակեսցին:

Եւ ծանիցեն, զի դու ես Տր̃ Ած̃ միայն՝ որ փառաւորեալդ ես ի վերայ ամ տիեզերաց:

Փ. Օրհնեալ ես դու Տէր Աստ̃ հարցն մերոց. * գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան:

Եւ օրհնեալ է անուն սբ փառաց քոց. գովեալ և:

Օրհնեալ ես ի տաճարի փառաց սրբութե̃ քո. գով:

Օրհնեալ ես ի վր̃ աթոռոյ արքայութե̃ քո. գով:

Օրհնեալ ես որ նստիս ի քրովբէս, և հայիս յանդունդս. գովեալ և:

Օրհնեալ ես ի վր̃ հաստատութե̃ երկնից. գով:

Փ. Օրհնեցէք ամ գործք Տեառն զՏր̃. * օրհնեցէք բա՛րձր արարէք զնա յաւիտեան:

Օրհնեցէք երկինք զՏր̃. օրհնեցէք և բարձր արար:

Օրհնեցէք հրեշտակք Տեառն, և ջուրք՝ որ ի վերոյ երկնից զՏէր. օրհնեց:

Օրհնեցէք զօրութի̃ք Տռ̃ն՝ արեգակն և լուսին զՏր̃. օրհ:

Օրհնեցէք աստեղք երկնից, անձրևք և ցօղք զՏէր. օրհնեցէք և:

Օրհնեցէք ամ հողմք, հուր և ջեր զՏէր. օրհնեց:

Օրհնեցէք ցուրտ և տօթ, ցօղ և ձիւնաբեր զՏր̃. օրհ:

Օրհնեցէք սառն և պարզ, եղեամն և ձիւն զՏէր. օրհնեցէք և:

Օրհնեցէք տիւք և գիշերք, լոյս և խաւար զՏէր. օրհնեցէք և:

Օրհնեցէք ամպք և փայլատակունք և երկիր զՏէր. օրհնեցէք և:

Օրհնեցէք լերինք, բլուրք և ամ բոյսք երկրի զՏէր. օրհնեցէք և:

Օրհնեցէք աղբիւրք, ծովք և գետք զՏէր. օրհնեց:

Օրհնեցէք կէտք և ամ կայտառք որք ի ջուրս, և թռչունք երկնից զՏէր. օրհնեցէք և:

Օրհնեցէք գազանք և անասունք և որդիք մարդկան զՏէր. օրհնեցէք և:

Օրհնեսցէ՛ Իսրայէլ զՏէր. օրհնեսցէ և բարձր արասցէ զնա յաւիտեան:

Օրհնեցէք քահանայք զՏէր. օրհնեցէք և:

Օրհնեցէք ծառայք Տեառն զՏէր. օրհնեցէք և:

Օրհնեցէք անձինք և շունչք արդարոց զՏէր. օրհն:

Օրհնեցէք սրբք և խոնարհք սրտիւք զՏէր. օրհնեց:

Օրհնեցէք Անանիա, Ազարիա և Միսայէլ զՏր̃. օրհ:

Փառք Հօր: Այժմ և միշտ:

Մաղթանք:

Օրհնեցէք զարարիչն արարածոց, զՏէրն տերանց, զԹագաւորն թագաւորաց, զԱծ̃ն աստուծոց: Օրհնեցէք, գովեցէք, բարեբանեցէք. զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Եւ ապա ասեն զՀայրսն ըստ պատշաճին:

Քարոզ զկնի Հայրին:

Եկեալքս ամենեքեան ի սբ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի, աղաչեսցուք զմիածին Որդին Աստուծոյ, զՏէրն մեր և զփրկիչն Յս̃ Քս̃: Որ էջ փառօք Հօր ի մէջ հնոցին, և փրկեաց զերիս մանկունս ի

Քաղդէացւոց անտի։ Լուսաւոր և սբ պահեսցէ զմիտս մեր. զի մի՛ երբէք խաբեսցուք մեք ի մեղաց և ի ցանկութէ աշխարհի։ Այլ արժանի եղիցուք պահել զպատուիրանս նր. առնուլ զպսակն լուսոյ և կենաց ի յանձինս մեր։ Զոր խոստացաւ սիրելեաց իւրոց Ճշմարիտն Աճ Յն Քն Տէր մեր։ Կեցո՛ և ողորմեա՛։

Տէր ողորմեա՛։ Երիցս։

Մաղթանք։

Հզօր, յաղթող, սքանչելագործ, սբ, մեծի (յարութն) Քնի Աստուծոյ մերոյ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և։

Երգ Մարիամու Աստուածածնին։ Ղուկ. Ա. 47։

Մեծացուսցէ անձն իմ զՏէր. և ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով։

Այց արար ի վերայ խոնարհութե աղախնոյ իւրոյ. այսուհետև երանեսցեն ինձ ամենայն ազգք։

Արար ընդ իս մեծամեծս հզօրն. և սբ է անուն նր։

Ողորմութի արար յազգաց յազգս երկիւղածաց իւրոց. և արար զօրութի բազկաւ իւրով։

Ցրուեաց զամբարտաւանս ի մտաց սրտից. և քակեաց զհզօրս յաթոռոց։

Զխոնարհս բարձրացոյց, զկարօտս ելից բարութբ. և զմեծատունս արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ յիշելով զողորմութի իւր։

Որպէս խօսեցաւ առ հարս մեր. ընդ Աբրահամու և զաւակի նորա յաւիտեան։

Օրհնութիւն Զաքարիայ հօրն Յովհ. Մկրտչին։

Օրհնեալ Տէր Աճ Իսրայէլի, որ յայց ել, և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ։

Յարոյց մեզ եղջիւր փրկութե ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ. որպէս խօսեցաւ բերանովք սբցն որք յաւիտենից մարգարէքն էին։

փրկութի ի թշնամեաց մերոց. և ի ձեռաց ամ ատելեաց մերոց։

Առնել ողորմութի առ հարսն մեր. և յիշել զկտակարանս սրբութեան իւրոյ։

Զերդումն զոր երդուաւ Աբրահամու հօր մերոյ. տալ մեզ առանց երկիւղի զփրկութի ի թշնամեաց մերոց։

Պաշտել զնա սրբութբ և արդարութբ առաջի նորա զամ աւուրս կենաց մերոց։

Եւ դու մանուկ, մարգարէ բարձրելոյն կոչեսցիր. գնասցես առաջի Տն պատրաստել զճանապարհս նր։

Տալ զգիտութի փրկութե ժողովրդեան իւրոյ, ի թողութի ամ մեղաց մերոց։

Վն գթոյ ողորմութեան Տեառն Աստուծոյ մերոյ, որով երևեցաւ մեզ արեգակն ի բարձանց լուսաւոր առնել զխաւար մեր։

Ծագել զլոյս ի վերայ այսոցիկ՝ որք նստէաք ի խաւարի և ի ստուերս մահու. ուղղել զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան։

Աղօթք Ծերունւոյն Սիմէոնի։

Արդ արձակես զծառայս քո Տէր ըստ բանի քում ի խաղաղութի. զի տեսին աչք իմ զփրկութի քո. զոր պատրաստեցեր առաջի ամ ժողովրդոց։

Լոյս ի յայտնութի հեթանոսաց. և փառք ժողովրդեան քում Իսրայէլի։

Փառք Հօր։ Այժմ և միշտ։

Եւ ապա ասի Մեծացուսցէն ըստ պատշաճի։

Քարոզ զկնի Մեծացուսցէին։

Սուրբ զԱծածինն և զամ սբս բարեխօս արասցուք առ Հայր յերկինս. զի կամեցեալ ողորմեսցի, և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր։ Ամենակալ Տէր Աճ մեր, կեցո՛ և ողորմեա՛։

Աղօթք։

Ընկա՛լ Տէր զաղաչանս մեր բարեխօսութբ սբ Ածա-

ծնին՝ անարատ ծնողի միածնի Որդւոյ քո, և աղաչանօք ամ սբց քոց: Լուր մեզ Տէր և ողորմեա. ներեա, քաւեա և թող զմեղս մեր: Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ Հոգւոյդ. այժմ:

Քարոզ չինի Մեծացուսցէն կերակեց ասուրց:

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Տր ողորմ:

Վասն սուրբ տեղւոյս շինութեան և բարեկարգութեան. զՏէր աղաչեսցուք: Տր ողորմ:

Վասն ժողովրդեանս որք մտանեն ընդ դրունս սրբոյ եկեղեցւոյ. զՏէր աղաչեսցուք: Տր ողորմ:

Վասն ընդունելոյ զպաղատանս սոցա ըստ մեծի ողորմութեան իւրում. զՏէր աղաչեսցուք: Տր ողորմ:

Եւ եւս և վասն միաբանութեան: Տր ողորմ:

Զանձինս մեր և զմիմեանս: Ողորմեա մեզ: Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Աղօթք:

Դու ես Թագաւոր յաւիտեանս յաւիտենից Քս Աց մեր: Եւ քեզ ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք, իշխանութի և պատիւ. այժմ և միշտ և:

Երգ Յուղաբերից Աւետարանին:

Եղիցի անուն Տեառն օրհնեալ. ի յայսմհետէ մինչև ի յաւիտեան:

Օրհնեցէք մանկունք զՏէր. և օրհնեցէք զանուն Տեառն: Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև ի յաւիտեան: Յարևելից մինչ ի մուտս արևու օրհնեալ է անուն Տեառն. Ի յայսմհետէ մինչև ի յաւիտեան:

Փառք եւ երկրպագութիւն Հօր եւ Որդւոյ եւ սրբոյ Հոգւոյն. և այժմ եւ միշտ և յաւի-

տեանս յաւիտենից. ամէն. ի յայսմհետէ մինչև ի յաւիտեան:

Որ Տէր օգնեա մեզ. եւ փրկեա զմեզ. վասն անուան քում:

Որ եւ մի մերժեր զմեզ ի սպառ. վս անուան քում:

Թագաւորեսցէ Տէր յաւիտեան. Աստուած քո Սիոն ազգէ յազգ:

Օրհնեա անձն իմ զՏէր. օրհնեցից զՏէր կենդանութեան իմում:

Որթի: Խաղաղութի ամե: Եւ ընդ Հոգւոյդ քում: Երկիրպագութի լուարուք: Սբյ աւետարանիս որ ըստ (Մատթէոսի): Փառք քեզ Տէր Աստուած մեր: Պռօսխումէ: Ասէ Աստուած:

ԱԿ (Տաղկաշարքին:)

Աւետարան ըստ Ղուկասու: ԻԳ. 50:

Վս Թաղման և յարութեան Տռն մերոյ Յսի Քսի:

Եւ ահա այր մի, անուն Յովսէփ. որ էր նախարար, այր բարեգործ և արդար: Սա չէր միաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նց. յԱրիմաթեայ քաղաքէ Հրէից, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեն Այ: Սա մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յսի: Եւ իջուցեալ զնա՝ պատեաց պատատակալաւ. և եդ ի կռածոյ գերեզմանին, ուր չէր բնաւ զոք եդեալ: Եւ օրն էր ուրբաթ, և շաբաթ լուսանայր. և երթային զհետ նր կանայք՝ որք եկեալ էին ընդ նմա ի Գալիլեէ. տեսին զգերեզմանն, և որպէս եդաւ մարմին նր: Դարձան և պատրաստեցին խունկս և իւղս. և ի շաբաթուն հանգարտեցին վս պատուիրանին:

Բայց ի միաշաբաթուն վաղ քաջ ընդ առաւօտն եկին ի գերեզմանն, բերին զխունկսն զոր պատրաստե-

ցին. և այլ կանայք ընդ նմ։ Եւ գտին զվէմն թաւալեցուցեալ ի գերեզմանէ անտի. և մտեալ ի ներքս՝ ոչ գտին զմարմինն Տեառն Յսի։ Եւ եղև ընդ հիանալն նց վն այնորիկ, և ահա արք երկու հասին առ նս ի հանդերձս լուսաւորս։ Եւ իբրև զահի հարան՝ և խոնարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր, ասեն ցնս. զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. չէ աստ, այլ յարեաւ։ Յիշեցէք որպ խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն ի Գալիլեա. և ասէր, թէ պարտ է որդւոյ մարդոյ մատնել ի ձեռս մարդոց մեղաւորաց և ի խաչ ելանել և յերրորդ աւուր յառնել։ Եւ յիշեցին զբանս նր. և դարձան պատմեցին զայս ամ մետասանիցն և այլոցն ամենեցուն։ Եւ էին Մարիամ Մագդաղենացի, և Յովհաննա, և Մարիամ Յակովբայ, և այլք ընդ նս, որ պատմեցին զայս առաքելոցն։ Եւ երևեցան առաջի նց շաղփաղփութի բանք նց, և չհաւատային նց։ Բայց Պետրոս յարուցեալ ընթացաւ ի գերեզմանն. և հայեցեալ տեսանէ զկտաւսն լոկ, զի կային. և գնաց՝ ընդ միտս զարմացեալ թէ զինչ եղև։ Ի Դ. 12։

ԱԶ (Զատկին։)

Աւետարան ըստ Յովհաննու։ Ժ Թ. 38։

Վասն յարութեան Տեառն մերոյ Յսի Քսի։

Եւ ի միաշաբաթւոջն Մարիամ Մագդաղենացի գայ առաւօտուն ընդ արշալուսն ի գերեզման անդր. և տեսանէ զվէմն բարձեալ ի դրանց գերեզմանին։ Ապա ընթանայ և գայ առ Սիմովն Պետրոս և առ միւս աշակերտն՝ զոր սիրէրն Յս. և ասէ ցնս. բարձին զՏէր ի գերեզմանէ անտի, և ոչ գիտեմ, ուր եդին զնա։ Ել Պետրոս և միւս աշակերտն, և գային ի գերեզմանն. ընթանային երկոքեանն ի միասին. և միւս աշակերտն յառաջեաց ընթացաւ վաղագոյն քան զՊետրոս, և եկն նախ ի գերեզմանն։ Եւ խոնարհեալ տեսանէ զի կային անդ կտաւքն. բայց ի ներքս ոչ եմուտ։

Եկն և Սիմոն Պետրոս՝ որ գայրն զկնի նորա, և եմուտ ի գերեզմանն և տեսանէ զկտաւսն, զի կային անդ. և վարշամակն՝ որ էր ի գլուխ նր՝ ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ ի մի կողմն։ Յայնժամ եմուտ և միւս աշակերտն, որ եկեալ էր յառաջագոյն ի գերեզմանն. ետես և հաւատաց. զի չև ևս գիտէին զգիրս, թէ պարտ է նմա ի մեռելոց յառնել։ Չոգան դարձեալ առ միմեանս աշակերտքն։ Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին և լայր։ Եւ մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ ի գերեզմանն, և տեսանէ երկուս հրեշտակս ի սպիտակս զի նստէին՝ մի ի սնարից և մի յանոտից, ուր կայր մարմինն Յսի։ Եւ նոքա ասեն ցնա. կին դու՝ զի՞ լաս։ Ասէ ցնս. զի բարձին զՏէրն իմ ի գերեզմանէ աստի, և ոչ գիտեմ ուր եդին զնա։ Զայս իբրև ասաց՝ դարձաւ ի թիկունս կոյս, և տեսանէ զՅս զի կայր. և ոչ գիտէր թէ Յս իցէ։ Ասէ ցնա Յս. կին դու՝ զի՞ լաս, զո՞ խնդրես. Նմա այսպէս թուեցաւ թէ պարտիզպանն իցէ. ասէ ցնա, տէր՝ եթէ դու բարձեր զնա, ասա ինձ ուր եդիր զնա, զի ես առից զնա։ Ասէ ցնա Յս. Մարիամ. և նա դարձաւ և ասէ ցնա եբրայեցերէն, Ռաբունի, որ թարգմանի՝ վարդապետ։ Ասէ ցնա Յս. մի՛ մերձենար յիս. զի չև ևս ելեալ եմ առ Հայր իմ. այլ երթ դու առ եղբարս իմ, և ասա ցնս. ելանեմ ես առ Հայրն իմ և առ Հայր ձեր, և Այն իմ և Այ ձեր։ Գայ Մարիամ Մագդաղենացի, և պատմէ աշակերտացն՝ եթէ ետես նա զՏէր, և զայս ինչ ասաց ցնա։ Ի. 18։

Երգ զկնի Խաչբերից աւետարանին։

Փառք յարութեն քո Տէր. ոչ դադարեցայց Քրիստոս
օրհնել ըղքեզ զամ աւուրս կենդանութե իմոյ։
Փառք յարութե քո Տէր. ոչ դադարեցայց Յիսուս
գովել ըղքեզ զամ աւուրս կենդանութե իմոյ։
Ես ոչ դադարեցայց փրկիչ փառաւորել ըղքեզ
զամ աւուրս կենդանութեան իմոյ։

Ի՛ գիշերի՛ համբարձէ՛ք. ըզձե՛ռս ձե՛ր ի՛ սրբութի՛ւն. և՛ օրհնեցէ՛ք ըզՏէ՛ր:

Ա՛յստ օրհնեսցէ՛ք ամե՛նայն ծառայք Տեառն ըզՏէ՛ր ի՛ սրբութի. և՛ օրհնեցէ՛ք ըզՏէ՛ր: Ապա շարական պատշաճ գիշերին ասա:

Քարոզ զկնի Խաղաղաբերից աւետարանին եւ երգոյն:

Զուարճացեալքս մեծաւ ուրախութբ աւետեօք յարութեն Տրն մերոյ և փրկչին Յսի Քսի: Որ եղև պատուղ և անդրանիկ ամ ննջեցելոց: Խորտակեաց զդրունս դժոխոց. և եղյծ զբռնութի մահու: Եւ ետ յոյս հաստատութեն վերստին նորոգման կենդանութեն ամ մարդկան: Խնդրեսցուք հաւատով ի փրկչէն մերմէ Յսէ Քսէ: Զի զմեզ արժանի արասցէ յարութեն իւրոյ, կերպարանակից առնել զմարմին խոնարհութեն մերոյ՝ ըստ նմանութեն մարմնոյ փառաց իւրոց: Ած զի զայս խոստացաւ՝ զմեծ և զանճառելի շնորհս պարգևել սիրելեաց իւրոց ճշմարիտն Ած Յս Քս Տր մեր: Կեցո և ող:

Աղօթք:

Ամենակեցոյց, ճշմարիտ, որ, մեծի յարութեն Քսի Աճ մերոյ վայելէ փառք իշխանութի և պատիւ. այժմ և:

Եւ ապա փոխ՝ Սաղմոս Ծ:

Ողորմեա ինձ Ած՝ ըստ մեծի ողորմութեն քում. ըստ բազում գթութեն քում քաւեա զանօրէնութիս իմ:

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. և ի մեղաց իմոց սուրբ արա զիս:

Զանօրէնութիս իմ ես ինձէն գիտեմ. և մեղք իմ առաջի իմ են յամ ժամ:

Քեզ միայն մեղայ Տէր. և զչար առաջի քո արարի:

Որպ արդար եղիցիս ի բանս քո. և յաղթեսցես ի դատել քո:

Անօրէնութբ յղացաւ. և ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու Տէր զճշմարտութի սիրեցեր. զանյայտս և զծածկեալս իմաստութբ քով յայտնեցեր ինձ:

Ցօղեա յիս մշտկաւ, և սբ եղէց. լուա, և քան զձիւն սպիտակ եղէց:

Լսելի արա ինձ Տէր զցնծութի և զուրախութի. և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:

Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց. և զամ անօրէնութիւնս իմ քաւեա յինէն:

Սիրտ սբ հաստատեա յիս Ած. և զհոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում:

Մի ընկենուր զիս Տէր յերեսաց քոց. և զհոգի քո սբ մի հաներ յինէն:

Տուր ինձ զցնծութի փրկութեն. և հոգւով պետութեն քո հաստատեա զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամպարիշտք առ քեզ դարձցին:

Փրկեա զիս յարենէ Ած. Ած փրկութեն իմոյ. և ցնծասցէ լեզու իմ յարդարութեն քում:

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիս քո:

Թէ կամեցեալ էիր պատարագս՝ մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

Պատարագ Աճ հոգի խոնարհ. զսիրտ սբ և զհոգի խոնարհ Ած ոչ արհամարհէ:

Բարի արա Տէր կամօք քովք Սիովնի, և շինեսցին պարիսպքն Երուսաղէմի:

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեն. ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս:

Փառք Հօր: Այժմ և միշտ:

Եւ ապա ասէ Ողորմեայն ըստ պատշաճին:

Քարոզ զկնի Ողորմեայն:

Երկրպագեմք քեզ Տր Ած մեր անցեալքս ընդ երկարութի գիշերիս, և կանխեալքս ի տեղւոջ խոստո-

վանութն մատուցանեմք զառաւօտու աղօթս մեր: Զքեզ Տէր օրհնեմք և փառաւորեմք, և զքեն Տէր գոհանամք. որ արժանի արարեր զգիշերս խաղաղութբ անցուցանել և հասանել ի ժամ առաւօտուս: Արժանաւորեա՛ զմեզ Տէր անձառ խոստմանց քոց, զոր խոստացար սիրելեաց քոց. Ճշմարիտդ Ած Յն Քն Տէր մեր, կեցո՛ և ողորմեա՛: Կեցո Տէր:

Ողորմեա՛ց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութն քում: Ասասցուք ամենքեան միաբանութբ:

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Մաղթանք:

Ողորմած, գթած, ճշմարիտ, նբ մեծի (յարութեն) Քնի Այ մերոյ վայելէ փառք իշխանութի և պատիւ. այժմ և միշտ:

Սաղմոս ՃԽԸ:

Ալէլուիա. ալէլուիա:

Օրհնեցէք զՏր յերկինս. օրհնեցէք զնա ի բարձունս:

Օրհնեցէք զնա ամ հրեշտակք նր. օրհնեցէք զնա ամենայն զօրութիք նորա:

Օրհնեցէք զնա արեգակն և լուսին. օրհնեցէք զնա ամենայն աստեղք և լոյս:

Օրհնեցէք զնա երկինք երկնից. և ջուրք որ ի վերոյ քան զերկինս՝ օրհնեցէք զանուն Տեառն:

Զի նա ասաց և եղեն. հրամայեաց և հաստատեցան:

Կացոյց զնս յաւիտեանս յաւիտենից. սահման եդ, և ոչ անցանեն:

Օրհնեցէք զՏէր յերկրէ վիշապք և ամ խորք:

Հուր և կարկուտ, ձիւն և սառն, հողմ և մրրիկ՝ որք առնէք զբան նորա:

Լերինք և ամենայն բարձունք, ծառք պտղաբերք և ամենայն մայրք:

Գազանք և ամ անասունք, սողունք և ամ թռչունք թեւաւորք:

Թագաւորք երկրի, և զօրք իւրեանց. իշխանք, և ամ դատաւորք երկրի:

Երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք օրհնեցէք զանուն Տեառն:

Բարձրացաւ անուն նր միայն. խոստովանութի նմա յերկինս և յերկրի:

Բարձր առնէ Տէր զեղջիւր ժողովրդեան իւրոյ. օրհնութիւն նմա յամենայն սրբոց նորա՝ յորդւոցն Իսրայէլի. ժողովրդն՝ որ մերձ է առ Տէր:

Սաղմոս ՃԽԹ:

Օրհնեցէք զՏէր յօրհնութի նոր. օրհնութի նմա յեկեղեցիս սրբոց:

Ուրախասցի Իսրայէլ յարարիչ իւր. որդիք Սիովնի ցնծասցեն ի թագաւորն իւրեանց:

Օրհնեսցեն զանուն նր օրհնութբ. սաղմոսիւք և օրհնութբ սաղմոս ասասցեն նմա:

Հաճի Տէր ընդ ժողովուրդս իւր նբ. և բարձր առնէ զհեզս ի փրկութն:

Պարծեսցին նբքն փառօք. և ցնծասցեն ի հանգիստս իւրեանց. և բարձր արասցեն զԱստուած բերանովք իւրեանց:

Սուր երկսայրի եւ ի ձեռս նոցա, առնուլ զհատուցումն ի հեթանոսաց, յանդիմանութիւն ամենայն ժողովրդոց:

Կապել զթագաւորս նց կապանօք, և զզօրավարս նց ձեռնակապօք երկաթեօք:

Առնել նց դատաստան ըստ գրոց. և փառք այս են ամենայն սրբոց նորա:

Սաղմոս ՃԾ:

Օրհնեցէք զԱծ ի սրբութն նորա. օրհնեցէք զնա ի հաստատութն զօրութն նր:

Օրհնեցէք զնա ի զօրութն նր. օրհնեցէք զնա ի բազում մեծութն նր:

Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեան. օրհնեցէք զնա սաղմոսիւք եւ օրհնութեամբ:

Օրհնեցէք զնա ցնծութեամբ. գովեցէք զնա ուրախութեամբ:

Օրհնեցէք զնա ի բանս քաղցր. գովեցէք զնա ի բարբառ լսելի:

Օրհնեցէք զնա ի ձայն գոհութեան. ամենայն հոգիք օրհնեցէք զՏէր:

Փառք Հօր: Այժմ եւ միշտ:

Եւ ապա ասէ Տէրունականն ըստ պատշաճին:

Զկնի Տէրունականին ասի Օրհնութիւն առաւօտու, ասացեալ յանմարմնոց այլեւ ի Կոստանդնուպօլսոյ սրբոյ ժողովոյն ՃԾ հայրապետաց:

Փառք ի բարձունս Աստուծոյ. եւ յերկիր խաղաղութիւն. ի մարդիկ հաճութիւն: Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս. օրհնեալ ես Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ եւ գովեմք զքեզ: Խոստովանիմք Տէր զքեզ. եւ երկիր պագանեմք քեզ. փառաւորեմք զքեզ. գոհանամք Տէր զքէն վասն մեծի փառաց քոց: Տէր թագաւոր. սուրբդ երկնային. Աստուած եւ Հայր ամենակալ: Տէր եւ Որդի Հօր միածին Յիսուս Քրիստոս եւ սուրբ Որդի: Տէր Աստուած գառն Աստուծոյ. եւ Որդի Հօր. որ առեր զմեղս ի կուսէն. ողորմեաց մեզ. բարձեր զմեղս աշխարհի: Եւ արդ ընկալ զաղաչանս մեր. սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր ողորմեաց մեզ: Զի դու միայն սուրբ. դու միայն բարձրեալ ես. դու միայն Տէր մեր. Յիսուս Քրիստոս: Տէր եւ Հոգիդ սուրբ որ ի փառս Աստուած ընդ Հօր. ամէն:

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ. Տէր եւ գովեմք զանուն սուրբ քո յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից: Արժանի արա Տէր զօրս զայս խաղա-

ղութեամբ եւ առանց մեղաց պահել զմեզ: Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց. գովեալ եւ փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս ամէն: * Օրհնեալ Տէր. ուսո ինձ զարդարութիւնս քո. Երիցս: Տէր ապաւէն եղեր մեր յազգէ յազգ: Ես ասացի Տէր ողորմեա ինձ եւ բժշկեա զանձն իմ. ես մեղայ քեզ: Յոյց մեզ Տէր զողորմութիւնս քո. եւ զփրկութիւնս քո տուր մեզ: Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի անտես առներ: Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի. ուսո ինձ առնել զկամս քո զի դու ես Աստուած իմ: Ի քէն է Տէր աղբիւր կենդանութեան. եւ լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս: Ծագեա զողորմութիւնս քո որք ճանաչեն զքեզ Տէր:

Մաղթանք:

Փառք, պատիւ եւ երկրպագութիւն ի բարձունս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ:

Առաւօտուն երգի զկնի Փառք ի բարձունսն:

Յարութեան:

ԱՁ ԱԿ. * Զյարութիւն զփրկչին օրհնեսցուք. զփրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւնն:

Յարեաւ Աստուած. ցրուեցան թշնամիք նորա:

ԲՁ ԲԿ. Զյարութիւն զփրկչին օրհնես:

Զյարուցեալն զՔրիստոս օրհնեսցուք. եւ զյարութիւն նորա փառաւորեսցուք:

ԳՁ ԳԿ. Զյարութիւն զփրկչին օրհնես:

Որ ելն ի բարձունս եւ գերեաց զգերութիւն. էառ աւար. բաշխեաց պարգեւս եւ ետ որդւոց մարդկան:

ԴՁ ԴԿ. Զյարութիւն զփրկչին օրհնես:

Որ համբերեաց խաչի. եւ եդաւ ի նորափոր վիմի.

և աստուածային յարութեամբն ընդմահացեալսն վերամբերեաց ի կեանս:

Քարոզ Կիւրակէից եւ ամենայն տօնից տէրունեաց:

Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ. Տէր ողորմեա:
Տէր ողորմեա:

Վ՟ն խաղաղութ՟ն ամ՟ աշխարհի, և հաստատութ՟ն սբ՟յ եկեղեցւոյ. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն ամենայն սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց. զՏէր աղաչ: Տէր ողորմեա:

Վ՟ն սրբազան Պապին մերոյ Տ՟ն այս անուն. կենաց և փրկութ՟ն հոգւոյ նորին. զՏ՟ր աղաչ: Տէր ողորմեա:

Վ՟ն Հայրապետին մերոյ Տեառն այս անուն. կենաց և փրկութ՟ն հոգւոյ նորին. զՏէր աղա: Տէր ողորմեա:

Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, դպրաց և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ. զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վ՟ն բարեպաշտ թագաւորաց, և ամ՟ծասէր իշխանաց, զօրավարաց և զօրաց նոցին. զՏ՟ր աղա: Տէր ողորմեա:

Վ՟ն զի Տ՟ր ն ամենակալ հնազանդեցուսցէ առաջի նց՟ զամ՟ պատերազմունս թշնամեաց. զՏ՟ր աղ: Տէր ողորմեա:

Յաղագս հարց և եղբարց մերոց, որք ի գերութեան են և ի չար ծառայութ՟ն. զՏէր աղա: Տէր ողորմեա:

Յաղագս ճանապարհորդաց և նաւորդաց՝ խաղաղութեամբ հասանել ի նաւահանգիստն բարութեան. զՏ՟ր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Յաղագս հիւանդաց և ամենայն վշտացելոց փութապէս առողջութ՟ն. զՏէր աղա: Տէր ողորմեա:

Յաղագս բարեխառնութ՟ն օդոց, անձրեւաց քաղցրութ՟ն և պտղոց առատութ՟ն. զՏէր աղա: Տէր ողորմեա:

Յաղագս ուխտաւորաց և պտղաբերից ի սուրբ եկեղեցի Աստուծոյ. զՏէր աղա: Տէր ողորմեա:

Եւ յաղագս այնոցիկ, որք մատնեալ են ի ձեռս անօրինաց վ՟ն անուանն քո՟ի. զՏէր աղա: Տէր ողորմեա:

Յաղագս հոգւոցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի ք՟ն ննջեցին. զՏէր աղա: Յիշեա Տ՟ր և:

Յաղագս փրկելոյ զմեզ Տեառն Աստուծոյ յերեւելի և յաներեւոյթ թշնամւոյն. զՏէր աղա: Տէր ողորմեա:

Ա՟ք զՄարիամ զԱ՟ծածինն, զփառաւորեալ և օրհնեալ միշտ ս՟բ կոյսն, ս՟բ զՅովհաննէս մկրտիչն, ս՟բ զՍտեփանոս նախավկայն, սուրբ զառաքեալսն և զմարգարէսն, զարի և զյաղթող ս՟բ զվկայսն, և զմեծ խոստովանողն ք՟նի զհայրապետն մեր զս՟բն Գրիգորիոս լուսաւորիչն Հայաստանեայց աշխարհի:

Յիշեսջիք և զամ՟ սբ՟ս, և նոքօք զՏէր աղաչեսց: Յիշ:

Զառաւօտս լուսոյ, և զառաջակայ օրս խաղաղութ՟բ անցուցանել հաւատով ի Տ՟նէ խնդր: Շնորհեա Տ՟ր:

Զհրեշտակ: Զ.քաւութի: Զսբ՟յ խաչ: Շնորհեա Տ՟ր:

Եւ եւս և վ՟ն միաբանութ՟ն ճշմարիտ: Տէր ողորմեա:

Զանձինս մեր և զմիմեանս Տեառն: Քեզ Տ՟նդ յ:

Ողորմեա՛ց մեզ Տէր Ա՟ծ մեր ըստ մեծի ողորմութ՟ն:
Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Քարոզ պահոց:

Փառաւորեսցուք զամենակալն Ա՟ծ զՀայր Տեառն մերոյ Յ՟սի Ք՟սի՝ գոհանալով զնմանէ, որ պահեաց զմեզ խաղաղութ՟բ ի գիշերիս յայսմիկ. և առաջնորդեաց մեզ ի խաւարէ ի լոյս, ի մահուանէ ի կեանս, յապականութ՟է յանապականութ՟ի, յանգիտութ՟է ի գիտութ՟ի ճշմարտութ՟ն իւրոյ: Աղաչեսցուք և խնդրեսցուք ի նմանէ, զի զերկարութ՟ի տուընջեանս խաղաղութ՟բ և ամ՟ մտադիւր զուարթութ՟բ արասցէ անցուցանել ի մէնջ: Եւ պարսպեալ պահեսցէ զժողովուրդս իւր աստուածային զօրութ՟բն, որ ի վ՟ր ամ՟ի բարերարութ՟բն իւրով իշխանութիւն ունի: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ և ողորմեա՛: Կեցո՛ Տէր:

Զառաւօտս լուսոյ և զառաջակայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով ի Տ՟նէ խնդր: Շնորհեա Տ՟ր:

Զհրեշտակ: Զ.քաւութի: Զսեղ խաչ: Շնորհեա Տր̃:
Եւ ես և վն̃ միաբանութն̃ ճշմար: Տէր ողորմեա:
Զանձինս մեր և զմիմեանս Տն̃ Աճ̃: Քեզ Տն̃դ յ:
Ողորմեաց մեզ Տէր Ած̃ մեր ըստ մեծի ողորմութն̃:
Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Աղօթք:

Գոհանամք զքէն Տէր Ած̃ մեր, որ երեւելի լուսով .քո զուարճացուցեր զմն̃ արարածս .քո. իսկ իմանալի լուսով պատուիրանաց .քոց զամենեսեան լուսաւորեցեր զհաւատացեալս ի .քեզ: Զօրացո և զմեզ Տէր ի պահպանութի պատուիրանաց .քոց ի տուընջեանս յայսմիկ, և յմն̃ ժամանակի: Որպ̃ զի լուսաւորեալ միտք միշտ զհաճոյս .քո արասցուք. և հանդերձեալ բարեացդ հասցուք ընդ ամ̃ նբս .քո: Շնորհօք և մարդասիրութբ̃ Տեառնդ մերոյ և փրկչիդ Յս̃ի Քն̃ի. որում վայելէ փառք, իշխանութի և պատիւ. այժմ և միշտ և:

Խաղաղութիւն ամենեցուն:

Խաղաղութի մեր և կեանք, որ ի Հօրէ առաքեցար՝ միածին Որդի Ած̃ Տէր մեր և փրկիչ Յս̃ Քս̃: Տուր մեզ զխաղաղութի .քո, զոր շնորհեցեր սրբոց .քոց առաքելոցն. փչմամբ .քո ի նն̃ զկենդանացուցիչ և զամենազօր Հոգիդ .քո նբ. որպ̃ զի և մեք խաղաղացեալ.ք յմն̃ աշխարհական սահեցմանց, լիցուք տաճար և բնակարան ամ̃ծային շնորհացդ: Եւ գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր և նբ Հոգւոյդ, Քս̃ Ած̃ մեր. այժմ:

Եւ ապա ասէ Սուրբ Աստուած:

Սուրբ Աստուած. Սուրբ և հզօր. Սուրբ և անմահ ողորմեաց մեզ: Երիցս կրկնել:

Երգ:

Փառաւորեալ և օրհնեալ միշտ նբ կոյս Ածածին Մարիամ մայր Քս̃ի. մատո զաղաչանս մեր որդւոյ քոյ և Աստուծոյ մերոյ:

Մաղթանք:

Փրկեա զմեզ ի փորձութէ և յմն̃ վտանգից մերոց:

Քարոզ:

Եւ ևս խաղաղութն̃ զՏէր աղաչեսցուք:

Վն̃ լսելի լինելոյ Տեառն Ած̃ ձայնի աղաչանաց մերոց բարեխօսութբ̃ նբ Ածածնին. և իջանելոյ ի վր̃ մեր ողորմութն̃ և գթութն̃ Տեառն Ած̃: Ամենակալ Տէր Ած̃ մեր, կեցո և ողորմեա:

Քհն. Օրհնութի և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն նբյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Ի դիմաց դպրապետին ապա ասէ սաղմոս և զերգ և աւետարան ըստ պատշաճին:

Քարոզ յորժամ է նախատօնակ:

Սրկ. Եւ ևս խաղաղութն̃ զՏէր աղաչեսցուք:
Դպ. Տէր ողորմեա:
Սրկ. Վասն ի վերուստ խաղաղութն̃ և փրկութն̃ անձանց մերոց զՏէր աղաչեսցուք:
Դպ. Տէր ողորմեա:
Սրկ. Ողորմեաց մեզ Տէր Ած̃ մեր ըստ մեծի ողորմութն̃ քում. ասասցուք ամենեքեան միաբանութբ̃:
Դպ. Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:
Քհն. Օրհնութի և փառք Հօր և Որդւոյն և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:
Դպ. Ամէն. ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:
Քհն. Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի արևելեան կողմն աշխարհիս. և հայրապետութի Հայոց. * այս նշանաւ սուրբ խաչիս և նբ աւետարանաւս և աւուրբս շնորհիւ. անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Եւ դպրաց երգել յարեւմտաս:
Ամէն. ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի արևմտեան կողմն աշխարհիս. և թագաւորութիւն քրիստոնէից. այս նշա: Եւ շրջելով դառնայ ի հարաւ:

Ամէն. ամէն. ամէն. ալէլուիա:

Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի հարաւային կողմն աշխարհիս. երկիրս, անդաստանս և պտղաբերութիւն տարւոյս. այս նշանաւ նը խաչիւս և սուրբ աւետար: Եւ դառնայ դէպ ի հիւսիս:

Ամէն. ամէն. ամէն. ալէլուիա:

Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի հիւսիսային կողմն աշխարհիս. քաղաքս և գիւղս. վանքս անապատս և բնակեալ ժողովուրդս ի սմա. այս նշանաւ նը խաչիւս և նը աւետարանաւս և: Ամէն:

Եւ դառնայ ի բեմն, եւ ասէ դարձեալ.

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւ. որպէս ի վերոյ:

Քարոզ Նախորդն եւ խաղաղ:

Սբ խաչիւս աղաչեսցուք զՏէր. զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աճ մեր, կեցո և ողորմեա:

Աղօթք:

Պահպանեա զմեզ, Քս Աճ մեր, ընդ հովանեաւ նը և պատուական խաչիդ քով ի խաղաղութեան. փրկեա յերևելի և յաներևոյթ թշնամւոյն: Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ նըս Հոգ:

ԿԻՐ. Երգ Տեառն Ներսէսի վասն առաւօտոյ առաւօտ միաշաբաթին, եւ է խորհուրդ արարչութեան: Եւ է յարութեանն Քսի:

Նախաստեղծեալ Բանն յանէից ի սկզբանէ զերկինս երկնից. Եւ զերկնային զօրս անմարմնոց իմանալեացն զուարթնոց. Եւ ըզգալի տարերց քառից հակառակաց միաբանից. Որով յաւէտ փառաբանի Երրորդութիւն անճառելի:

Որ երեքսրբեան մի տէրութիւն միով բնութեամբ աստուածութեան. լոյսն որ անեղ արարչական ասաց լինել լոյս եղական. զոր և ծագեաց յօրն առաջին միաշաբաթ կիւրակէին. Որով յաւէտ փառաբանի Երրորդութիւն անճառելի:

Բարբունորէն բացատրեսցուք զծածկեալ խորհուրդն ծանիցուք. զի լոյսն անտես իմանալի մաքուր հոգւոց տեսանելի. ի սոյն ծագեաց միաշաբաթ մեզ յարութեան նոր ճառագայթ. * Եկայք փրկեալք ընդ զուարթնոցն տուք օրհնութիւն յարուցելոյն:

Սէրըդ սիրով խոնարհեցար ի փրկութիւն մեր մարմնացար. նովին մարմնովըն խաչեցար ի գերեզման մահու եդար. այսօր յարեար աստուածաբար ի հրեշտակաց քարոզեցար. Եկայք փրկեալք ընդ զուա:

Երևեցար խընկաբերիցն յուղղոյն կենաց ուրախալից. Եւ ի լերինըն Գալիլեա առաքելոց մետասանից. արժանացո զմեզ ընդ նոսին զքեզ տեսանել յօրըն վերջին. Եկայք փրկեալք ընդ զուա:

Սիովնի որդիք զարթիք հարսին լուսոյ տուք աւետիք. Եթէ փեսայն քո յարուցեալ յաղթեաց մահու իշխանութեան. գայ պըսակէ ըզքեզ փառօք եւ ընդ առաջ պըճնեալ զարդուք. Երգեա երգ նոր յարուցելոյն ննջեցելոց կենաց պտղոյն.

Քարոզ կիւրակէից եւ այլոց Տէրունական տօնից:

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ի Տեառնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ի վերայ մեր: Տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի: Կեցո Տէր:

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Աղօթք:

Քում ամենազօր և հրաշալի (յարութեանդ), Քս Աճ մեր, երկիր պագանեն զօրք հրեշտակաց. զի դու միայն

ունիս զանմահութի բնակեալդ ի լոյս անմատոյց: Եւ մեք հողեղէն արարածքս խոնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք. զնբ և զհրաշալի և զյաղթող (զյարութիւդ) քո օրհնեմք և փառաւորեմք. Եւ քեզ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութի և զփառս՝ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

Իսկ ի Մեծի շաբաթու առաւօտ յետ Սուրբ Ածյն եւ քարոզին ասէ ի Նէւ՝

Սաղմոս ՃԺԲ:

Օրհնեցէք մանկունք զՏր. և օրհնեցէք զանուն Տռն:

Եղիցի անուն Տեառն օրհնեալ. յայսմհետէ մինչև յաւիտեան:

Յարևելից մինչև ի մուտս արևու օրհնեալ է անուն Տռն:

Բարձր է ի վերայ ամենայն ազգաց Տէր. և յերկինս են փառք նորա:

Ո՞վ է որպէս Տէր Ած մեր ի բարձունս բնակեալ. և զխոնարհս տեսանէ յերկինս և յերկրի:

Յարուցանէ զաղքատ յերկրէ. և բարձր առնէ զտառապեալս յաղբեւաց:

Նստուցանէ զնա իշխանս ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ:

Բնակեցուցանէ զամուլն ի տան ուրախամիտ. որպէս մայր որդւովք բերկրեալ:

Փառք Հօր և: Այժմ և միշտ:

Եւ ասէ շարական Մանկանց ըստ պատշաճին:

Քարոզ զկնի Մանկանցն:

Վա խաղաղութե ամ աշխարհի, և հաստատութե նբյ եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք: Ասասցուք ամենեքեան միաբանութբ: Տէր ողորմեա: Երիցս:

Աղօթք:

Ամէ ես Տէր Ած մեր հզօր և փառաւորեալ, որ նստիս ի կառս քերովբէականս, և լոյս ծագես յարարածս

քո: Լուսաւորեա զմեզ Տէր ի ժամ առաւօտուս, որպէս զի ի ծագել լուսոյ տուընջեանս ծագեսցի մեզ դութ մարդասիրութեան քո: Հեռացո ի մէնջ Տէր զխաբէութի սատանայի. և զբռնութի նր խորտակեա աղօթիւք և բարեխօսութեամբ ամ սրբոց: Արա և զերկիրս պտղաբեր ի սնունդս ծառայից քոց, յորոց հանապազ փառաւորեալ գովի ամենասբ Երրորդութիւնդ. այժմ և:

Եւ ապա Արշալուսոյ սաղմոս, աւետարան եւայլն. ըստ աւուր պատշաճին:

ԲՇԻ. Երգ Տեառն Ներսէսի վասն Երկրորդ աւուր արարչութեան եւ վասն Երկնային զօրացն:

Արարչական բանին հրաման ի յերկրորդումն աւուր սկզբեան. ըզջուրսն ի ջուրցն բաժանեաց հաստատութ պարունակեաց. որով զաշխարհս հողեղինաց անջրպետեաց ի հրեղինաց. * ընդ նոսին որդիք լուսոյ տուք օրհնութի երրեակ լուսոյն:

Բազմաչեայ հոյլք քրովբէից երեքսրբեանըդ սրովբէից. ամթոռք անեղ Աստուածութեանըն համագոյ Երրորդութեն. բարեխօս լերուք առ Տէր վասըն մանկանց եկեղեցւոյ. ընդ նոսին որդիք:

Գերագոյն իշխանութիւնք և անփոփոխ միշտ տէրութիւնք. անյաղթելի նբ զօրութիւնք ի յարարչին փառաւորութի. աղաչեցէք զՏէրն ողորմած անտես չառնել զգործըս ձեռաց. ընդ նոսին որդ:

Դասք անմարմնոցըն պետութեանց հրեշտակապետութք բարձրութեց. հոգիք հրեղէնք և սպասաւորութք հրեշտակաց զինուորութիք. մաղթեցէք զՏէրըն տերանց վասըն մարդկան երկրաւորաց. ընդ նոսին որդիք:

Երկնաւորաց դասուց վերնոց օրհնաբանից քոց զըւարթնոց. քաղցրացւն առ քեզ գըթած որ վասըն մեր ձայն մաղթանաց. զորս և տացես մեզ պահապան յայսըմհետէ մինչ ի վախճան. ընդ նոսին որդիք:

Զօրութեանց և տէրութեանց իշխանութեանց և պետութեանց. և ամ անուանելոց որ ի յերկինս պաշտամանօք. ընկալ քն ուրախութբ զմեզ յօր մահու և յարութե. ընդ նոսին օրհնել Հոգւով ըզքեզ ընդ Հօր փառաւորելով:

ԳՇԻ. Երգ վասն երրորդ աւուր արարչութեանն, եւ երրորդ դարուն. եւ ի Յովհաննէս Մկրտիչն:

Անսկիզբն բանն որ ընդ Հօր արարչակից և համագոյ. յերրորդ աւուր զջուրսն զատոյց. զբոյսս եւ ըզտունկս բըղխեցոյց. Իսկ ի յերրորդ դարուն դարձեալ զջուրցն հեղեղ ցամաքեցոյց. զնոյ տապանաւն իւր ապրեցոյց. ըզկենդանեաց սերս ածեցոյց. * տուք օրհնութիւն անձառ լուսոյն Հօր եւ Որդւոյ և սուրբ Հոգւոյն:

Ընդ ծառոց երկրի զգալեաց տընկեաց և զտունկս իմանալեաց. զհեղեղ մեղացն ցածուցեալ, զդասս արդարոց բազմացուցեալ. յորոց և մեծն ի ծնունդս կանանց միջնորդ շնորհաց և օրհնաց. տուք օրհն:

Թագաւորին երկնից զինուոր. արքայութեանն աւետաւոր. խընդրեա դընել ելս ի սրտի առ ի հովտէս տրտմականէ. յուխտեալ տեղին տէրունական ի խոստացեալն որդւոց մարդկան. տուք օրհնութիւն:

Ժառանգին Հօր սպասաւոր և յարդանդէ երկրպագող. կարապետ և մըկըրտիչ այնմ որ մեղաց մերոց քաւիչ. լեր բարեխօս առ նոյն գըթած ջընջել ըզգիր մեր յանցանաց. տուք օրհնութիւն:

Ի Հօրէ լոյս ծագեցար մեռեալ բնութեանս կենդանարար. առաքեցեր յառաջընթաց նր զՅովհաննէս քարոզ կենաց. սորին հայցմամբ ամենակալ ըզպաղատանըս մեր ընկալ. տուք օրհնութիւն:

Լուսաշաւիղ յերկինս ելին հողանիւթեայ սբ հրեշտակին. արժանացո ըզմեզ նորին նեղ և անձուկ ճանապարհին. զի հետեւող գոլով նորին Հօր քո վերին

օթեւանին. եւ երգեսցուք ընդ երջանկացն որդւոց լուսոյ քեզ երգ փառաց:

ԴՇԻ. Երգ վասն չորրորդ աւուր արարչութեանն, եւ չորրորդ դարուն. եւ վասն աւետեաց Աստուածածնին:

Խաւարն անդոյ և սկզբնածին հալածեցաւ յօրն առաջին. լոյսն այն պայծառ յօր չորրորդին յարեգական նիւթ հաւաքեալ. լուսինն ի տիպ լուսոյ ստեղծեալ և աստեղաց պարք յօրինեալ. որով օրհնի ստեղծողն էից ի բանաւոր պաշտօնէից:

Ծածկեալ խորհուրդն ծանուցաւ չորրորդ դարուն Իսահակաւ. ի չորրորդ օր դարձեալ հրեշտակն ետ զաւետիսն կուսական. թէ լոյսն որ ոչ բովանդակի ի քէն մարմնով պարունակի. * յոր օրհնեսցուք ազգք երկրածինք տուք օրհնութիւն պըտղոյ կուսին:

Կուսին նախնոյ մօրն Եւայի յորմէ Ադամըն հին պարտի. դարձան անէծքըն տըրտմական քո սուրբ ծնընդեամբ կոյս Մարիամ. աղաչեա զքո միածինն թողուլ ըզմեղս որդւոց նոցին. յոր օրհնեսցուք:

Հարսն ընծայեալ յերկրէ յերկինս յոր համբառնամք առ քեզ զհոգիս. յօր լսելոյ քոյ զաւետիս խնդրեա լինել մեզ լսելիս. զձայն աւետեաց քոյ միածնին եթէ եկայք օրհնեալք Հօր իմ. յոր օրհնեսցուք ազգք երկրածինք:

Զայնիւ առ քեզ Տէր պաղատիմք և առաջի քո անկանիմք. աղաչանօք Աստուածածնին շիջո ի մէնջ ըզբոց հնոցին. տուր արտասուօք զմեղս ջընջել և վերստին զմեզ նորոգել. յոր օրհնեսցուք:

Ղեկավար ճարտարապետ անցեր ընդ ծով կենցաղս անհետ. վերաբերեա ընդ Պետրոսի զմեզ ի յալեաց մեղաց ծովէս. պաղատանօք գերագունին անապական քում ծընողին. յոր օրհնեսցուք ազգք երկրածինք տուք օրհնութիւն պըտղոյ կուսին:

ԵՇԻ. Երգ վասն հինգերորդ աւուր արարչութեանն, եւ վասն հինգ դարուն. եւ է սուրբ աստուածային Գրիգորիսի:

Ճառագայթեալ Բանն ի Հօրէ յօր հինգերորդին հրամայէ. բղխեալ ի ջրոց սեռք կայտառաց և թեւաւորս օդականաց. իսկ ի դարուն հինգ մկրտէին յամին եւ ի ծովն խորասուզէր հին. * տացուք հրաշից ներգործողին պատիւ եւ փառք անեղ Բանին:

Մաքրապէս օրինակի առաքելոցն քնի. որք ի ծովէն տիբերական ի յերկնայինսն կոչեցան. անցին ընդ ծով աշխարհական և ի Հոգին մկրտեցան. տացուք հրաշ:

Յուրախութիւն անզրաւական ի հարսանիսն անապական. զձեզ առաքեաց Հայրն փառաց հրաւիրատուք տրոմականաց. ևր հարսանեացն այն հայցեցէք ընդ ձեզ լինել մեզ պարակից. տացուք հրաշից:

Նորոգողք տիեզերաց ի Նախահօրն յանցանաց. նաւաւորք զարդարեցիք զեկեղեցիս հեթանոսաց. պաղատեցէք առ Նոյն գթած զմեզ նորոգել ի հնոյ մեղաց. տացուք հրաշից:

Շինող էիցս համայնից արարածոց ի յանգոյից. Նոյն շինեցեր զեկեղեցի վէմդ ի վերայ վիմին բանի. Նդ եդեալ հիմունս ի Նոր Սիովն ըզմեզ յօդեա շինմամբ ի Նոյն. տացուք հրաշից:

Ուրախացաւ գնացիւք գեղոց քաղաք ի քէն շինեալ Յն. յորմէ վտակք շնորհաց հոսեն զոգիս մարդկան ոռոգանեն. արբո և մեզ ի ջրոյն կենաց հայցմամբ Հոգւոյն մատուցակաց. զի բանաւոր երկիրըս քո պտղաբերեսցի ի փառս քո:

ՈԻՐ. Երգ վեցերորդ աւուր արարչութեան. եւ վասն վեց դարուն. եւ է խաչելութեան Քրիստոսի:

Զըհանդուրժեալ բնութեամբ բարւոյն ունել միայն զանճառ բարին. այլ ստեղծեալ մարդ յիւր պատկերին ի վեցերորդն աւուրն. եւ ի յերրորդ ժամ

զկողածինն ի յծնունդն եւ հողածնին. զորս ի դրախտին եդ վայելել բայց ի պտղոյն մահու արգելեալ:

Պապանձեալ առ դատողին յետ յանցանացն Ադամըն հին. զկինըն պատճառ եդեալ խաբմանն և կինըն զօձըն դաւաճան. որով երկիրս այս անիծաւ փուշ և տատասկ ի սմա բուսաւ. վըճիռ մահու մարդոյն տըւաւ դառնալ ի հող ուստի ստեղծաւ:

Ջընջել փութայր Հայրըն փառաց ըզգիր պարտեաց մեր յանցանաց. որով զգեցաւ Որդին գըթած ի վեց դարուն զմարմին մեղաց. Հօր հաճութեամբ ի մահ խաչին եկըն կամաւ ի յուրբաթին. գառըն զենաւ ի հին զատկին փոխան դառանցն օրինակին:

Ռահիւ լուսոյ պատուիրանին արդարութեան ճանապարհին. բարձրանալով քո ի խաչին բարձրացուցեր զմեզ ի յերկինս. քո անպատում խոնարհութեամբդ և կամաւոր խաչելութեամբն. հաշտեա ընդ մեզ Տէր գըթութեամբ և թող ըզմեզս ողորմութեամբ:

Սոսկալիդ սերովբէից և ահաւորըդ քրովբէից. խոնարհեցար ի չարչարանս չարչարելի բնութեամբ մարդկան. ի խաչին զմեղըս սպաներ և զդատակնիք մահու լուծեր. հաշտեա ընդ մեզ Տէր գըթութեամբ և թող ըզմեզս ողորմութեամբ:

Վեհագոյն բնութեանց էից և արարիչըդ բոլորից. յորժամ ծագես զխաչիդ նըշան ի գալըստեան քոյ միւսանգամ. զերկրպագուս այժմ հաւատով լուսաւորեա նորին լուսով. զի համաձայն խաչանզգեցիցն ըզքեզ օրհնեսցուք յաւիտեանս:

ՇԲ. Երգ եօթներորդ աւուր արարչութեանն, եւ եօթն դարուն, եւ է խորհուրդ հանգստեանն Աստուծոյ:

Տէրն յետ ստեղծման արարածոց հանգեաւ յեօթն օրն ի գործոց. այն որ հանգիստ աշխատելոց և կամքըն գործ է եղելոց. ուստի և մեզ յոյս հաստատուն

ետ հանգըստեամբըն շաբաթուն. թէ՞ աստ գործել զգործս Աստուծոյ անդ է հանգչել ընդ Աստուծոյ:

Բաբունաբար վարդապետիմք յօրինակէ Տեառն խրատիմք. որ ի յերկրորդ արարչութեան յետ կատարման տնօրէնութեան. յեօթներորդ օր հանգըստեան իջեալ մարմնով ի գերեզման զկապեալ հոգիսն վերածեաց զանանց հանգիստըն պարգեւեաց:

Ցօղդ որ ի քոյդ կողէ ցօղեալ բըժըշկեսցէ ըզհանգուցեալսն. իջցէ ի հող մահու նոցին եւ բուսուսցէ յօրըն վերջին. կենդանարար ձայնիւդ քո կոչեա զնոսա ի կեանըս քո. եւ դասեցո ընդ արդարոցն երգել քեզ փառս ընդ զըւարթնոցն:

Խիւծեալ զընութիւս կենաց ունող դարձոյց յանցանքն ի մահու հող. իսկ անմահիդ մեռելութիւն շնորհեաց դարձեալ զանմահութիւն. զորս են ընդ քեզ թաղեալ մահուամբ աւազանին մըկըրտութեամբ. յարո ընդ քեզ քոյին փառօք արեգական նըման լուսով:

Փայլեն արդարքն յարքայութեան եւ ճըգնաւորքն ի հանգըստեանն. մարտիրոսքըն պըսակին եւ կուսանաց լապտերք վառին. դասեցո Տէր ընդ նոսին որ զքեզ Աստուած խոստովանին. արդարութեամբ մի դատեսցին այլ գըթութեամբ քո քաւեսցին:

Քո անպատում խոնարհութեամբդ որ թաղեցար մեռելութեամբ. եւ յարուցեր յորդւոց մարդկան որք հաւատով ի քեզ անկան. յարո եւ զմեզ արդարութեամբ եւ զննջեցեալսն ողորմութեամբ. զի՞ կենդանեացըս բերանով տացեն քեզ փառք ընդ Հօր Հոգւով:

Քրզ. Խնդրեսցուք: Աղ. Քում ամենազօր. էր. 59:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր որ յերկինս:

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ

ԵՐՐՈՐԴ ԺԱՄՈՒՆ

ՈՐ ԿԱՏԱՐԻ

Ի ԴԷՄՍ ԻՋՄԱՆ ՀՈԳՒՈՅՆ ՍՐԲՈՅ ԵՒ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՆԱԽԱՄՕՐՆ ՃԱՇԱԿՄԱՆ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Օրհնեալ Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ. ամէն:

Սաղմոս Ծ:

Ողորմեա ինձ Աստուած՝ ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւս իմ:

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. եւ ի մեղաց իմոց սուրբ արա զիս:

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. եւ մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ:

Քեզ միայն մեղայ Տէր. եւ զչար առաջի քո արարի:

Որպէս արդար եղիցես ի բանս քո. եւ յաղթեսցես ի դատելն քո:

Անօրէնութեամբ յղացաւ. եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս եւ զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ:

Ցօղեա զիս մշտկաւ, եւ սուրբ եղէց. լուա, եւ քան զձիւն սպիտակ եղէց:

Լսելի արա ինձ Տէր զցնծութիւն եւ զուրախութիւն. եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:

Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց. եւ զամենայն անօրէնութիւս իմ քաւեա յինէն:

Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած, եւ հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում:

Մի ընկեներ զիս Տէր յերեսաց քոց. եւ զՀոգի քո սուրբ մի հաներ յինէն:

Տո՛ւր ինձ զցնծութի՟ն փրկութե՟ն. և հոգւով պետութե՟ն քո հաստատեա՛ զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամպարիշտք առ քեզ դարձցին:

Փրկեա՛ զիս յարենէ Ա՟ծ. Ա՟ծ փրկութե՟ն իմոյ. և ցնծասցէ լեզու իմ յարդարութե՟ն քում:

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Թէ կամեցեալ էիր պատարագս՝ մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

Պատարագ Ա՟յ հոգի խոնարհ, զսիրտ ս՟բ և զհոգի խոնարհ Ա՟ծ ոչ արհամարհէ:

Բարի՛ արա Տէր կամօք քովք Սիովնի. և շինեսցին պարիսպքն Երուսաղէմի:

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութե՟ն. ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս:

Փառք Հօր և: Այժմ և միշտ:

Եւ Երրորդ Ժամու աւուրն զկնի Ողորմեայն:

Օ՛րհնեմք զՔե՛զ Հայր ա՛նըսկիզբն էի՛ց էա՛կ ի յանգոյի՛ց. Բա՛րձեր ձեռօք նի՛ւթ ի՛ հողոյ և ստե՛ղծեր մարդ ի պատկեր քո՛. Գլո՛ւխն ո՛տից խոնա՛րհեցաւ զի զպա՛տուի՛րան քո մոռացա՛ւ. Դա՛րձեալ ասեմք՝ ըստ ա՛նառակին թէ հա՛յր մեղայ քեզ ի՛ յերկի՛նս:

Ե՛րկնաւորացն անքննե՛լի եղե՛ր մա՛րդկան տեսանելի՛. Զգե՛ցար պատկեր հո՛ղե՛ղինի պատկե՛րըդ Հօր անփոխելի՛. Ե՛լե՛ր յերրո՛րդ ժամ ի խա՛չին վ՟ն Ա՛դամայ նախաստեղծի՛ն. Ը՛նդ ա՛ւազակին քո՛ւմ խա՛չակցին արժա՛նացո՛ ըզմե՛զ դրախտի՛ն:

Թա՛գաւո՛ր Թագա՛ւորաց առա՛տա՛բուղխ Հոգի շնորհա՛ց. Ժո՛ղովելոցն ի վե՛րնատանն առա՛քե՛լոցն երկոտասա՛ն. Ի՛ հրո՛յ լեզո՛ւս երե՛ւե՛ցար յոգի՛ս նո՛ցա վերա-

նըստա՛ր. Լո՛ւր յանուն քո ժողո՛վելոցս էջ և՛ւ առ մեզ յերրո՛րդ ժամո՛ւս:

Մաղթանք:

Յա՟մ ժամու աղաչանք իմ այս են, ի մեղաց իմոց ս՟բ արա զիս Տէր, և յօտարէն պահեա՛ զծառայս քո մարդասէր Տէր:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսց:

Օրհնութի՟ն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւ:

Քարոզ մեծ պահոցն ի Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ:

Միաբան ամենեքեան գոհացարո՛ւք զմարդասիրէն Ա՟յ և զփրկչէն մերմէ Յ՟ի Ք՟է. որ ազատեաց զազգս մարդկան ի դատապարտութե՟է անիծիցն և եբարձ զմեղս աշխարհի ի ժամուս յայսմիկ խաչիւն իւրով սրբով, և շնորհեաց առատապէս զպարգեւս Հոգւոյն սրբոյ երանելի առաքելոցն: Խնդրեսցուք հաւատով, զի զմեզ զամենեսեան արասցէ հաղորդս մեծամեծաց և ա՟ծային բարեացն այնոցիկ. աղօթիւք և բարեխօսութեամբ ա՟մ սրբոց, որք աստ և ընդ ա՟մ տիեզերս: Ո՟պ զի անարատ վարուք և ճշմարիտ առաքինութե՟բ կացեալք ըստ կամաց նորա յայսմ աշխարհիս, մասն և վիճակ ժառանգութե՟ն ընկալցուք ընդ ա՟մ ս՟բս ն՟ր զընակութի՟ն յաւիտենական և երկնային խորանացն: Զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս Տէր մեր. կեցո՛ և ողորմեա՛: Կեցո Տէր:

Զժամս և զառաջակայ օրս խաղաղութե՟բ անցուցանել հաւատով ի Տ՟նէ խնդրեսցուք: Շնորհեա Տ՟ր:

Զհրեշտակ: Զքաւութի՟ն: Զս՟բ խաչ: Շնորհեա Տ՟ր:

Եւ ևս և վ՟ն միաբանութե ճշմար: Տէր ողորմեա:

Զանձինս մեր և զմիմեանս Տ՟ն Ա՟յ: Քեզ Տ՟նդ յ:

Ողորմեաց մեզ Տէր Ա՟ծ մեր ըստ մեծի ողորմութե՟ն:

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Աղօթք:

Որ ի քրովբէական և յանպատում հանգուցեալ ես յաթոռ, և այցելու ես միշտ արարածոց քոց. որ և ի ժամուս յայսմիկ հեղեր յերանելի առաքեալսն զշնորհս Հոգւոյդ սրբոյ: Դու Տէր յառաջակայ ժամուս. եւ յաւէտ մինչեւ ի կենցաղոյս աւարտումն տպաւորեալ միացո զմեզ ընդ քում բարեգործութե՟ն յորդորմունս. և խոստացելոց բարեացդ հաղորդս լինել զմեզ արժանի արա, Տէր մեր և փրկիչ Յս՟ Քս՟: Որ ես օրհնեալ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Որ էիր յառաջ քան զյաւիտեանս Բանդ Ած՟, էակից Հօր և արարչակից սբ՟ Հոգւոյդ, որ և զնախաստեղծին պատուիրանազանցութիւն պտղոյն ճաշակման նշանաւ ամենայաղթ խաչիւ քով ի ժամուս յայսմիկ ենթադրեալ՝ ի կենդանութիւն փոխեցեր, և զանօրէնութիւս մեր ի նմա բեւեռեալ, կեանք անապական և նորոգումն կենաց յուսացելոց ի քեզ խոստացար: Որոց մասնաւորել և զմեզ արժանի արա Տէր մեր և փրկիչ Յս՟ Քս՟, որ ես օրհնեալ ընդ Հօր և ընդ սբ՟ Հոգւոյդ. այժմ և:

Սաղմոս:

Տէր Ած՟ օրհնեալ, օրհնեալ է Տէր զօրհանապազ: Ած՟ մեր. Ած՟ կենարար. և նա փրկեսցէ զմեզ:
Տէր Ած՟ օրհնեալ, օրհնեալ է Տէր զօրհանապազ. առաջնորդեսցէ մեզ Ած՟ փրկիչ մեր:

Քարոզ:

Խնդրեսցուք հաւատով ի Տեառնէ վն՟ ճանապարհորդաց հարց և եղբարց մերոց, որք ընդ ծով և ընդ ցամաք գնասցեն. ոպ՟ զի առաջնորդեսցէ նոցա, խաղաղութբ՟ պահեսցէ, և տարեալ հասուսցէ յիւրաքանչիւր տեղիս Տէր Աստուած մեր: Վասն զի նա ինքն է առաջնորդ կենաց և յոյս փրկութեան. որ յաջողէ ծառայից իւրոց խաղաղութեամբ հասանել ի նաւահանգիստն կենաց և փրկութեան: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա:

Աղօթք:

Առաջնորդեա մեզ Տէր Ած՟ մեր, և ուսո մեզ գնալ ի ճանապարհս քո արդարութբ՟. պահեա ի խաղաղութե՟ զկեանս մեր և զգնացս ի հաճոյս քո. ժամանեցո զհոգեւոր և զմարմնաւոր ընթացս ծառայից քոց անարատ ճանապարհաւդ յաւիտենական ի կեանսդ: Շնորհօք միածնի քոյ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ եղեւ մեզ առաջնորդ կենաց և յոյս փրկութե՟. ընդ որում օրհնեալ ես Հայր ամենակալ հանդերձ կենդանարար և ազատիչ սբ՟ Հոգւովդ. այժմ և միշտ և յաւիտեանս:

Դպ. Յիշեա Տէր զպաշտօնեայս քո, զծնողսն մեր, զվարդապետս, զեղբարս, զընկերս, զկերակրիչս, զուխտաւորս, զճանապարհորդս, զհանգուցիչս, զվաստակաւորս, զխոստովանողս, զապաշխարողս, զգերիս, զհիւանդս, զնեղեալս, զիշխանս, զչարարարս, զբարերարս, զթշնամիս, զատելիս և որք պատուիրեցին մեզ հաւատով:

Քհն. Յիշեա Տէր և ողորմեա: Բարերար և բազումողորմ Ած՟, քո անմոռաց գթութբ՟դ և անբաւ մարդասիրութբ՟դ յիշեա զամ՟ հաւատացեալս ի քեզ. և ողորմեա ամենեցուն: Օգնեա և փրկեա յիւրաքանչիւր վտանգից և ի փորձութե՟ց: Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զՀայր և զՈրդի և զսբ՟ Հոգիդ. այժմ և միշտ և յաւիտ:

Սաղմոս ԻԲ:

Տէր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ոչ պակասեսցի:
Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս. և առ ջուրս հանգստեան սնոյց զիս:

Դարձոյց զանձն իմ առ իս. և առաջնորդեաց ինձ ի ճանապարհս արդարութե վն անուան իւրոյ:

Թէպէտ և գնացից ես ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց ի չարէ. զի դու Տէր ընդ իս ես:

Ցուպ քո և գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս:

Պատրաստ արարեր առաջի իմ սեղան. ակն յանդիման նեղչաց իմոց:

Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս:

Ողորմութի քո Տէր զհետ իմ եկեսցէ զամ աւուրս կենաց իմոց, բնակել ինձ ի տան Տեառն ընդ երկայն աւուրս:

ՃԽԲ. Ցոյց ինձ ճանապարհ, յոր գնացից. զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Փրկեա զիս ի թշնամեաց իմոց Տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո ինձ առնել զկամս քո զի դու ես Ած իմ:

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ:

Վն անուան քո Տէր, կեցուսցես զիս. արդարութբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ:

Ողորմութբ քով սատակեսցես զթշնամիս իմ, և կորուսցես զամ նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ:

Փառք Հօր: Այժմ և միշտ:

Քարոզ:

Եւ եւս խաղաղութե զՏէր աղաչեսցուք:

Գոհաբանելով աղաչեսցուք զբարերար Հոգին Ած և խնդրեսցուք զողորմութի ի նմանէ. զի անցուսցէ ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբ իւրով: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա:

Աղօթք:

Խաղաղութբ քով, Հոգիդ սբ Ած ճշմարիտ, որ ի վեր ես քան զամ միտս և զխորհուրդս, մխիթարեա

զանձինս ծառայից քոց ընդունելով զաղաչանս մեր. անցո ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութբ քով: Ներեա և լուր մեզ, քաւեա և թող զմեղս մեր արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Որդւոյդ միածնի. այժմ և միշտ և յաւիտ:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր որ:

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ

ՎԵՑԵՐՈՐԴ ԺԱՄՈՒՆ

ՈՐ ԿԱՏԱՐԻ

Ի ԴԷՄՍ ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՅԼ ԵՒ Ի ԴԷՄՍ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ԵՒ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ՈՐԴՒՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Օրհնեալ Հայր սբ Ած ճշմարիտ. ամէն:

Սաղմոս Ծ:

Ողորմեա ինձ Ած ըստ մեծի ողորմութեան. 67:

Երգ վեցերորդ ժամուն:

Խաւարեցաւ լոյսն արեւուն ի վեցերորդ ժամ ուրբաթուն. Ծանոյց թէ լոյսն արարչական նրսեմացոյց զլոյսն եղական. Կախեալ ըզքեզ մերկ ի խաչին քոզով ստուերաւըն ծածկէին. Հերքեա ի մէնջ ըզծանրութիւն շըջող դիւին միջօրէի:

Զանձրութե մարտ այսուն չարի որ յայս ժամուս պատերազմի. Ղօղեալ յոգւոց մեր հերքեսցի քո նըշանաւ նըյ խաչի. Ճըշմարտութե քո ճառագայթ զառ ի յերկնից անկեալ զփայլակն. Մերժեալ ի մէնջ հալածեսցէ և զմեզ լուսով քո վառեսցէ:

Ցաւս միջօրեայ տուընջեան ժամուս վայելչական աչաց մարմնոյս. Ներուք գաղտնեաց մի խոցեսցուք ի

խաւարէն որ ի ծածուկ. Շուրջանակի՞ բանակեսցին զմեօք բանակք հրեշտակաց. Ո՛րք պարակից մեզ լինելով ըղձեն ընդ Հօր փառաւորելով:

Մաղթանք:

Յա՟մ ժամու աղաչանք իմ այս են, ի մեղաց: 69:
Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ:
Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւ:

Քարոզ մեծ պահոցն:

Արթուն մտօք և անզբօս խորհրդով կացցուք միաբան յաղօթս առաջի Տեառն մերոյ և փրկչին Յ՟ի Ք՟ի: Հաւատով խնդրեսցուք ի Նմանէ զհրեշտակ խաղաղութ՟ն պահապան անձանց մերոց, որ եկեալ բանակեսցէ շուրջ զմեօք, և աներկիւղ պահեսցէ զմեզ յա՟մ հրեղէն նետից սատանայի, որ թռչի ի տուէ, յիրաց խաւարային գնացից ի գայթագղութենէ դիւին ի հասարակ աւուր: Յորմէ զգուշութ՟բ պահելով աղօթիւք և բարեխօսութ՟բ ա՟մ սրբոց, շնորհեսցէ մեզ մարդասէրն Ա՟ծ կեալ առաքինութ՟բ ի փրկութ՟ի անձանց մերոց՝ ի պատիւ և ի փառս կենդանացուցիչ անուան իւրոյ: Յոյս հաղորդութ՟ն ընկալցուք ի յայտնութ՟ն միածնի Որդւոյն Ա՟յ. կերպարանակից առնել զմարմին խոնարհութ՟ն մերոյ ըստ Նմանութ՟ն մարմնոյ փառաց իւրոց: Վ՟ն զի զայս խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն Ա՟ծ Յ՟ս Ք՟ս: Տ՟ր մեր կեցո՛ և: Կեցո Տէր:
Զժամս և զառաջակայ օրս խաղաղութ՟բ անցուցանել հաւատով ի Տեառնէ խնդր: Շնորհեա Տ՟ր:
Զհրեշտակ: Զքաւութ՟ի: Զա՟յ խաչ: Շնորհեա Տ՟ր:
Եւ ևս և վ՟ն միաբանութ՟ն ճշմարիտ: Տէր ողորմեա:
Զանձինս մեր և զմիմեանս Տեառն: Քեզ Տ՟ննդ յ:
Ողորմեա՛ց մեզ Տէր Ա՟ծ մեր ըստ մեծի ողորմութ՟ն:
Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Աղօթք:

Օգնեցո՛ մեզ Տէր Ա՟ծ մեր զէն արդարութ՟ն զօրաւոր և յաղթող լինել ընդդէմ սատանայական պատերազմաց, և զա՟մ հրեղէն նետս նո՟ր շիջուցանելով անկասկած լիցուք յիրաց խաւարային գնացից ի գայթագղութ՟է դիւին ի հասարակ աւուր: Եւ զգաստացեալք վայելչական տուընջեամբս առաքինութեամբ կացցուք ի փրկութ՟ի անձանց մերոց ի պատիւ և ի փառս սրբոյ Երրորդութ՟ն. այժմ և միշտ:

Խաղաղութ՟ի ամենեցուն:

Երկնաւոր խաղաղութ՟բդ քով պարսպեալ պահեա՛ զանձինս մեր, Տէր զօրութ՟եց: Վ՟ն զի դու ես Ա՟ծ խաղաղութ՟ն, և բաց ի քէն զայլ ոք ոչ գիտեմք, և զանուն քո ամենազօր կարդամք յօգնականութիւն անձանց մերոց: Նայեա՛ յերկրպագութիւնս մեր, և ուսո՛ մեզ առնել զարդարութ՟ի ճշմարտութ՟ն: Եւ գոհութեամբ փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ:

Սաղմոս:

Տէր, մի՛ յիշեր զմեղս մեր զառաջինս. վաղվաղեսցէ առ մեզ ողորմութ՟ի քո Տէր, զի աղքատացաք յոյժ:
Օգնեա մեզ Աստուած փրկիչ մեր, վ՟ն մեծի փառաց անուան քո:
Տ՟ր փրկեա՛ զմեզ. և քաւեա՛ զմեղս մեր վ՟ն անուան քոյ:

Քարոզ:

Վ՟ն հիւանդաց և ա՟մ վշտացելոց աղաչեսցուք զփրկիչն մեր Ք՟ս, զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում. և բժշկեսցէ զախտս և զհիւանդութ՟իս հոգւոց և մարմնոց ծառայից իւրոց, և կատարեալ առողջութ՟բ հասուսցէ զամենեսեան ի մշտնջենաւոր և յանախտ կեանս. որ առաքեցաւ ի Հօրէ ի բժշկութ՟ի ազգի մարդկան, միածին Որդին Աստուծոյ: Տէր մեր և փրկիչ Յ՟ս Ք՟ս, կեցո՛ և ողորմեա՛:

Աղօթք:

Փառատեալ զցաւս և բժշկեալ զհիւանդութիւնս ի ժողովրդենէ քումմէ Տէր Ա՟Ծ մեր, և շնորհեալ ամենեցուն զկատարեալ առողջութի՟ նշանաւ ամենայաղթ խաչիւ քով, որով բարձեր զտկարութի՟ ազգի մարդկան, և դատապարտեցեր զթշնամին կենաց և փրկութեան մերոյ: Դու ես կեանք մեր և փրկութիւն, բարերար և բազումողորմ Ա՟Ծ, որ միայն կարող ես թողուլ զմեղս և մերժել զախտս և զհիւանդութի՟ս ի մէնջ. որում յայտնի են պէտք կարեաց մերոց. պարգեւիչդ բարեաց, պարգեւեա զառատ ողորմութիւն քո արարածոց քոց ըստ իւրաքանչիւր պիտոյից, յորոց հանապազ փառաւորեալ գովի ամենասուրբ Երրորդութիւնդ. այժմ և միշտ:

Յիշեա Տէր զպաշտօնեայս քո. 71:

Յիշեա Տէր և ողորմեա: Բարերար և բազումողորմ:

Սաղմոս Խ:

Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն. յաւուր չարի փրկեա զնա Տէր:

Տէր փրկէ զնա և կեցուցանէ. երանելի առնէ զնա ի վ՟ր երկրի, և ոչ մատնէ զնա ի ձեռս թշնամեաց իւրոց:

Տէր օգնական է նմա ի մահիճս ցաւոց իւրոց, և զա՟մ անկողինս նորա դարձուցանէ ի հիւանդութե՟ նորա:

Ես ասացի Տէր ողորմեա ինձ. և բժշկեա զանձն իմ. ես մեղայ քեզ:

Սաղմոս Ղ:

Որ բնակեալն է յօգնութի՟ բարձրելոյն, ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանգիցէ:

Ասասցէ Տեառն. ընդունելի իմ ես դու, ապաւէն իմ Աստուած, և ես յուսամ ի նա:

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին, և ի բանիցն խռովութենէ:

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. ի հովանի թեւոց նորա յուսասցիս:

Որպէս զէն շուրջ եղիցի զքեւ ճշմարտութի՟ նորա:

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի. և ոչ ի նետէ՝ որ թռչի ի տուէ:

Յիրէ՝ որ շրջի ի խաւարի. ի գայթագղութե՟ դիւին ի հասարակ աւուր:

Անկցին ի կողմանէ քումմէ հազարք, և բիւրք ընդ աջմէ քումմէ. և առ քեզ ինչ ոչ մերձեսցին:

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու. և զհատուցումն մեղաւորաց տեսցես. զի դու Տէր յոյս իմ ես:

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն. ոչ հասցեն առ քեզ չարք, և տանջանք մի՛ մերձեսցին ի յարկս քո:

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վ՟ս քո, ի պահել զքեզ յա՟մ ճանապարհս քո:

Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ, զի մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո:

Ի վ՟ր իժից և քարբից գնասցես դու. և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն:

Քանզի յիս յուսացաւ, և փրկեցից զնա. հովանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ:

Կարդասցէ առ իս, և ես լուայց նմա. և առ նմա եղէց ի նեղութեան:

Փրկեցից և փառաւոր արարից զնա. երկայն աւուրբք լցուցից, և ցուցից նմա զփրկութիւն իմ:

Փառք Հօր և: Այժմ և:

Քարոզ:

Եւ եւս խաղաղութե՟ զՏէր աղաչեսցուք:

Խնդրեսցուք հաւատով ի Հօրէ վ՟ս քաւութե՟ մեղաց և թողութե՟ յանցանաց, փրկելոյ զմեզ ի վշտաց և ի նեղութե՟ց. իջանելոյ ի վ՟ր մեր ողորմութե՟ և գթութե՟ Տ՟ն Ա՟Յ ամենակալին: Կեցո՛ և ողորմեա:

Աղօթք:

Հայր գթութեանց և Ած ամ մխիթարութեանց, որ մխիթարես զմեզ յամ նեղութեն մերում, լուր և այժմ ձայնի պաղատանաց ծառայից քոց ընդունելով զաղաչանս մեր. անցո ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեբդ քով: Ներեա և լուր մեզ. քաւեա և թող զմեղս մեր. արժանաւորեա գոհութբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ սբ Հոգւոյդ. այժմ և միշտ և:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր որ:

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ

ԻՆՆԵՐՈՐԴ ԺԱՄՈՒՆ

ՈՐ ԿԱՏԱՐԻ

Ի ԴԷՄՍ ՈՐԴՒՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՅԼ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ԵՒ ԲԱՆԱԿԱՆ ՀՈԳՒՈՅՆ ԱՒԱՆԴՄԱՆՆ

Օրհնեալ Որդիդ ոբ Ած ճշմարիտ. ամէն:

Սաղմոս Ծ:

Ողորմեա ինձ Ած ըստ մեծի ողորմութեան. 68:

Երգ իններորդ ժամուն:

Զորչարակցեալ քեզ տիւ լուսոյ երեք ժամու խաւարելոյ. Պայծառացեալ յիններորդին ի տիպ լերման մահու սուրբին. Ջահերդ լուսոյ մեծապայծառ աւանդեցեր զհոգիդ առ Հայր. Ռահիւ կցորդ քեզ ի յերկինս ըզմեզ ուղղեա հոգւով քոյին:

Սանդարամետք սարսեցին զկապեալ հոգիսն արձակեցին. Վէմք ի վիմէդ պատառեցան ի տապանաց մեռեալք յարեան. Տարերք երկրի տատանէին և աշ-

խարհի սիւնք դողային. Բամեալքս առ քեզ պաղատեսցուք զի ընդ արդարսըն դասեսցուք:

Ցուցեր յայնժամ ըսքանչելիս և այժմ մեզ ողորմեսցիս. Խնածեալ բնութիս քեւ որջացաւ շնորհեա եւ մեզ լինել անցաւ. Փոխան մահու քո կենարար կեցո ըզմեզ Տէր բարերար. Քեզ պաղատիմք 'ստ աւազակին յիշեա ըզմեզ յօրն յահագին:

Մաղթանք:

Յամ ժամու աղաչանք իմ այս են, ի մեղաց. 69:

Եւ եւս խաղաղութեն զՏէր աղաչեսցուք. ընկալ:

Օրհնութի և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ:

Քարոզ Մեծ պահոցն:

Մեծ սրտիւ և հաստատուն հաւատով կացցուք միաբան յաղօթս առաջի Տեառն մերոյ և փրկչին Յսի Քսի. յիշելով զմեծամեծս նորա, զանչափ շնորհսն, զհամբերութի կենսատու խաչին և զհեղումն ազատեցուցիչ արեան նր, և զսոցին նմանս որ յայսմ ժամու վն մեր մեղաւորացս կրեաց նա: Եւ մեք զայս ամ զմտաւ ածելով, սրբեսցուք ի մեղաց զխորհուրդս, զբանս և զգործս մեր. կատարեսցուք զսրբութի անձանց մերոց աշխին Այ: Մի յապաղեսցուք խոստովան լինել նմա զմեղս մեր, և խնդրել զթողութի մեղաց մերոց. զի մի կորիցուք անապաշխար զյաւիտենական կորուստն: Այլ մինչդեռ ժամանակս ի ձեռս է, գործեսցուք զբարիս ի կեանս յայսոսիկ, օրինակ վարուց մերոց ունելով զամ սբս և զյաղթող նահատակսն, որք միանգամ ի սկզբանէ հաճոյ եղեն Տեառն և փրկչին բոլորեցունց, որոց աղօթիւք և բարեխօսութեամբն շնորհեսցէ մեզ մարդասէրն Ած զհաճոյսն իւր և զօգուտն մեր խորհել միշտ և առնել, և անպատում պարգեւացն հաղորդս գտանել: Զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն Ած Յս Քս: Տէր մեր կեցո և ողորմեա: Կեցո Տէր:

Զժամս և զառաջակայ օրս խաղաղութե̃ անցուցանել հաւատով ի Տե̃նէ խնդր: Շնորհեա Տր̃:

Զհրեշտակ: Զ.քաւութի: Զսէ̃յ խաչ: Շնորհեա Տր̃:

Եւ եւս և վս̃ միաբանութե̃ ճշմարիտ: Տէր ողորմեա:

Զանձինս մեր և զմիմեանս Տեառն: Քեզ Տե̃նդ յ:

Ողորմեա՛ց մեզ Տէր Աձ̃ մեր ըստ մեծի ողորմութե:

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Աղօթ.:

Տէր զօրութե̃ց, որ կամաւոր մահուամբ քով ի ժամուս յայսմիկ կենդանացուցեր զմեզ ի մեռելութե̃ մեղաց մերոց, և բեւեռեցեր զնիք դատապարտութե̃ մերոյ ի խաչին, և շնորհեցեր ազատութի ազգի մարդկան ի ծառայութե̃ ապականութե̃ յազատութի փառաց հեղմամբ արեամբդ քով սրբով: Ընկա՛լ և այժմ զաղաչանս մեր, և յաջողեա՛ մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք կալ յայսմ աշխարհիս, և արժանաւոր լինել յաւիտենական և երկնային ուրախութե̃ցն ընդ ա̃մ. ն̃բս քո: Եւ գոհանալով փառաւորել զ.քեզ ընդ Հօր և ն̃բ Հոգւոյդ. այժմ և:

Խաղաղութիւն ամենեցուն:

Բազումողորմ Աձ̃ և հաստիչ խաղաղութե̃, հաստատեա՛ զանձինս մեր քոյով խաղաղութե̃դ, որով ունիս յիւրաքանչիւր կարգի զա̃մ արարածս քո, ուղիղ հրամանաւդ մատակարարելով. վս̃ զի այդ իսկ է կամք քո՝ խաղաղական և հոգեւոր սիրով կալ մեզ առ միմեանս. և սպասել արթուն մտօք յայտնութե̃ միածնիդ Աստուծոյ և փրկչիդ մերոյ Յս̃ի Քս̃ի: Որում արժանաւորք եղիցուք հանդիպել ամպովք ընդ առաջ Տեառն յօդս. զուարթերես կացցուք յաջմէ քումմէ ընդ ն̃բս և ընդ սիրելիս անուանդ քում սրբոյ. և ժառանգեսցուք զպատրաստեալն ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց զարքայութի̃դ. և ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զ.քեզ ընդ Հօր և ամենա̃բ Հոգւոյդ. այժմ:

Սաղմոս:

Տէր մի՛ մատներ զմեզ ի սպառ վս̃ անուանդ քում սրբոյ. մի՛ ցրեր զուխտս քո. և մի՛ ի բացեայ առներ զողորմութիւնս քո ի մէնջ:

Վասն Աբրահամու սիրելւոյ քոյ, Իսահակայ ծառայի քոյ և Իսրայէլի սրբոյ քոյ:

Տէր մի՛ մատներ զմեզ ի սպառ վս̃ անուանդ քում սէ̃յ. մի՛ ցրեր զուխտս քո. և մի՛ ի բացեայ առներ զողորմութիւնս քո ի մէնջ:

Երգ:

Նա՛հա՛պետին Աբրա՛հա՛մու հա՛յցմամբ ընկա՛լ Տէր զաղաչա՛նս. Ե՛ւ ծառա՛յի՛ն քում Սա՛հա՛կայ խնդրելածո՛վքն ի՛ մեզ գըթա՛: Բե՛նա՛տե՛սին Իսրա՛յէ՛լի Սի՛րով սըրբո՛յն ի մեզ խնայեա՛. Ե՛րեքսըրբեան երի՛ւք սո՛ցի՛ն Սըրբեա զհոգի՛ զմի՛տս և զմարմի՛ն:

Քարոզ:

Աղաչեսցուք զկենսատու փրկիչն մեր Քս̃, որ կամաւոր խաչելութե̃ն իւրով զարարածս փրկեաց, և հեղմամբ արեան իւրոյ զթողութի շնորհեաց յուսացելոց իւրոց: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա՛:

Աղօթ.:

Ընկեալ առաջի քո, բարերար և բազումողորմ Աձ̃ աղաչեմք ա̃մ սրտիւք մերովք, և խնդրեմք զգթութի ի քէն. որպէս խոստացար ծառայից քոց և ասացեր. զա̃մ զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն Որդւոյ ի Հօրէ, տացի ձեզ: Շնորհեա՛ և այժմ հաւատացելոցս ի քեզ, և կատարեա՛ ի բարի զխնդրուածս մեր. զի ի քեզ եմք ապաւինեալ. և քո առատ ողորմութե̃դ մխիթարեա՛ զմեզ ի կեանս յայսմիկ. և առաջնորդեալ հասո՛ յանճառ երկնից արքայութե̃դ ի փառաբանութի և ի պատիւ ամենա̃բ Երրորդութե̃. այժմ և:

Յիշեա՛ Տէր զպաշտօնեայս քո. Երգ. 71:

Յիշեա՛ Տէր և ողորմեա: Բարերար և բազումողորմ:

Սաղմոս ՃԺԴ։

Սիրեցի, զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ կարդացի առ նա։

Շրջեցան զինեւ երկունք մահու. և վիշտք դժոխոց գտին զիս։

Զնեղութի՟ և զանձկութի՟ գտի. և զանուն Տ՟ն կարդացի։

Ո՛ Տէր, փրկեա՛ զանձն իմ. ողորմած Ա՟ծ մեր ողորմի, և պահէ զտղայս Տէր։

Ես խոնարհ եղէ, և Տէր կեցոյց զիս. դարձ անձն իմ ի հանգիստ քո. զի Տէր օգնեաց քեզ։

Փրկեաց զանձն իմ ի մահուանէ. զաչս իմ յարտասուաց. և զոտս իմ ի գայթագղութենէ. հաճոյ եղէց առաջի Տեառն յերկրին կենդանեաց։

Սաղմոս ՃԺԵ։

Հաւատացի զոր և խօսեցայ, և ես խոնարհ եղէ յոյժ։

Ես ասացի ի զարմանալ իմում. թէ ա՟մ մարդ սուտ է։

Զի՞նչ տաց տրիտուր Տեառն. ընդ ա՟մի զոր և ետ ինձ։

Զբաժակ փրկութեան ընկալայց. և զանուն Տեառն կարդացից։

Զաղօթս իմ Տ՟ն տաց. առաջի ա՟մ ժողովրդեան ն՟ր։

Պատուական է առաջի Տեառն մահ սրբ՟ց իւրոց. ո՛ Տ՟ր, ես ծառայ քո եմ. ծառայ, և որդի աղախնոյ քոյ։

Հատեր զկապանս իմ, քեզ մատուցից պատարագս օրհնութե՟. և զանուն Տեառն կարդացից։

Զաղօթս իմ Տեառն տաց առաջի ա՟մ ժողովրդեան նորա. ի գաւիթս տան Տեառն, և ի մէջ քո Եղ՟էմ։

Սաղմոս ՃԺԶ։

Օրհնեցէք զՏէր ամենայն ազինք. գովեցէք զնա ամենայն ժողովուրդք։

Զօրասցի ողորմութիւն նորա ի վերայ մեր. և ճշմարտութիւն Տեառն մնասցէ յաւիտեան։

Փառք Հօր։ Այժմ և միշտ։

Շարական հանգստեան ըստ ձայնին։

ԱՁ

Որ ստեղծմամբ ըստ պատկերի քո Տէր պատուեցեր ըզմեզ. ընկալ եւ այժմ ըզնընջեցեալսն ի քեզ ուղիղ հաւատով. ըստ մեծի քում ողորմութեանն։ Որ շնորհօք սբ Հոգւոյն լուսաւորեցեր. յիշատակի իւրեանց զհոգիս նոցա ընկալ մարդասէր. ըստ մեծի քում ողորմութեանն։ Որք հաղորդեցան մարմնոյ եւ արեան քոյ Տէր. հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս քո Քրիստոս Աստուած. քանզի գինք սուրբ արեան քոյ են։ — Միայն օրհնեալդ ի կանայս՝ մայր եւ միշտ կոյս եւ իմանալի լոյս. ծնողդ արարչին մերոյ անդադար բարեբանեսցուք։

ԱԿ

Արարիչ Աստուած և ստեղծիչ ազգի մարդկան. * մի անտես ըզնընջեցեալսըն մեր. այլ հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս քո։ Որդիդ միածին յարութիւն տիեզերաց. մի անտես առներ ըզնընջեցեալս։ Հոգիդ ճշմարիտ մխիթարիչ սըգաւորաց. մի անտես առներ ըզնընջեցեալս։ — Հոգւոյն ըզքեւ հովանացեալ միայն սուրբ կոյս. ծնար ըզԲանն Աստուած զանճառելւոյ Հօր ծնունդ. եւ յայտնեցաւ միութիւն Երրորդութեանն։

ԲՁ

Որ կոչեցեր առ քեզ Տէր ըզտիեզերս ամենայն. ընկալ ըզմեր ըզնընջեցեալսն. ի գոգ նահապետին Աբրահամու. ողորմած Տէր փրկիչ և բարերար։ Որ թողութեանց ես տուող Աստուած. թող ըզմեղս մեր ննջեցելոցըն. կարող յամենայնի և հըզօր. ողորմած Տէր փրկիչ և բարերար։ Որ լուսատու ես տիեզերաց Քրիստոս Աստուած. լուսաւորեա եւ ըզմեր ըզ-

նընջեցեալսն լուսով երանաւէտ զուարթնոցն. ողորմած Տէր փրկիչ և բարերար։ — Յոյս մեր և ապաւէն մայր Տեառն եւ կոյս սուրբ. որ հուր ածութեանն ոչ բոցակիզեաց զքո սուրբ զորովայնդ. բարեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան։

ԲԿ

Որ Որդիդ ես և Բանդ Աստուած. հաւասարակից ընդ Հօր յէութեան. առ քեզ կարդամք մարդասէր. հանգո զհոգիս ննջեցելոց մեր ընդ սուրբս քո։ Որ իջեր յերկնից վասն մեր. զառաջինն առեր զյանցանսն Ադամայ. մերով բնութեամբ բարձեր ի վերայ խաչին անարատ ձեռօք. հանգո զհոգիս ննջեցելոց մեր ընդ սբս քո։ Որ լուծեր զիշխանութիւն մահու. կամաւորական մահուամբ քո Քրիստոս. բանաւորաց զաղաչանս առաջի քո հեղեալ մաղթեմք. հանգո զհոգիս ննջեցելոց մեր ընդ սբս քո։ — Տիրուհի անարատ մայր Տեառն եւ կոյս Մարիամ. քրովբէական աթոռ ըզքեզ տեսաք ի յերկրի. բարեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան։

ԳԶ

Հայր բարեգութ որ գթացար ի յազգս որդւոց մարդկան. առաքեցեր զմիածինդ ի փրկութիւն. * յիշեա զհոգիս ննջեցելոց մերոց. և հանգո ընդ սուրբս քո։ Որդի միածին որ յարեարդ ի մեռելոց. ի միւսանգամ գալստեանն քո յարութիւն մեզ խոստացար. յիշեա։ Հոգիդ ճշմարիտ մխիթարիչ սգաւորաց. աղաչանօք նբ Ածածնին և ամենայն քոց սրբոց. յիշեա զհոգիս։ — Ի բարեխօսութիւն փութացիր մեզ սուրբ Ածածին. առ ի փրկել զժողովուրդս ի մեղաց եւ յապականութենէ։

ԳԿ

Յանըսկըզբնական ծոցոյ Հօր խոնարհեալ Բանդ մարմնացար ի կուսէն վասն փրկութեան մերոյ. * աղաչեմք ըզքեզ զննջեցեալսն մեր ի քեզ ուղիղ հաւատով. յիշեա Տէր յորժամ գաս թագաւորութեամբդ քո։ Անճառական քաղցրութեամբ Որդի Այ. համբերեցար բառնալ զմեղս աշխարհի քո խաչելութեամբն. աղաչեմք ըզքեզ։ Կամաւորական մահուամբ քո լուծեր զերկունս մահու. եւ արժանի արարեր թողութեան յանցանաց քաւիչ քո արեամբ. աղաչեմք ըզքեզ։ Որ փոխանակ մեղաւորաց ըզմեռանել յանձն առեր. իջանելով ի դժոխս փրկեցեր ի մեղասէր բանտէն ըզգերեալսն. աղաչեմք ըզքեզ։ Բարեբանեմք զանչափ քո զմարդասիրութիւնդ. որ երեքօրեայ յարուցեալ զկենդանութիւն պարգեւեցեր աշխարհի. աղաչեմք ըզքեզ։ — Մաքուր եւ անբիծ կոյս յետ ծննդեան. որ մարմնով ծնար զարձակողն ի կապից մահու. բարեխօս լեր վասն անձանց մերոց փրկել ի սպառնալեաց գեհենոյն։

ԴԶ

Յորժամ հարկանի փող գալստեան քո Տէր. յայնժամ զարհուրեալ դողան արարածք ի յահէ քումմէ. * աղաչեմք ըզքեզ փրկիչ. հանգո և ըզմեր ըզննջեցեալսն ընդ սուրբս քո. որ միայն ես բազումողորմ։ Յահաբենկ լուսոյ ծագման քո Տէր. ցնծան դասք առաքինեացն ի վերայ լուսեղէն ամպոյն. աղաչ։ Անճառական բազմագութ ողորմած Տէր. մի անտես առներ ըզմեղուցեալքս յահագին աւուրն. որ միայն ես բազումողորմ։ — Որ իջեր ի յերկնից և մարմնացար ի սուրբ կուսէն. անճառելի

քոյին ծնընդեամբդ. եւ զիս մի անտես առներ. այլ պահեա պատուական եւ սուրբ խաչիւ քո:

ԴԿ

Ո՞վ թագաւորդ ես յաւիտենից Քրիստոս Աստուած. ընկալ ըզծառայս քո ի բարի. եւ շնորհեա ի յաջակողմն քում դասիլ: Ո՞ր ունիս իշխանութիւն մահու եւ կենաց. հանգո զհոգիս քոց ծառայից. եւ շնորհեա ի յաջակողմն քում դասիլ: Յորժամ կարգես աթոռ տէրութեանդ քո եւ հաստատես ատեան դատաստանին. յայնժամ խնայեա ի ծառայս քո. եւ շնորհեա ի յաջակողմն քում դասիլ: — Ամենօրհնեալ Աստուածամայր Մարիամ. քերովբէական աթոռ արարչին մերոյ տնօրէնութեան. զոր երանեմք ամենայն ազինք հանապազ:

Մաղթանք:

Հոգւոցն հանգուցելոց, Քս Ած, արա հանգիստ եւ ողորմութիւն. եւ մեզ մեղաւորացս շնորհեա զթողութիւն յանցանաց:

Քարոզ:

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Վն հոգւոցն հանգուցելոց աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիստոս, զի զնոսա ընդ արդարսն դասեսցէ, եւ զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր:

Աղօթք:

Քս Որդի Այ անոխակալ եւ բարերար, գթա քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց: Յիշեա յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ. արա արժանի ողորմութեան, քաւութեան եւ թողութեան մեղաց: Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողման դասուն: Զի դու ես Տէր եւ արարիչ ամենե-

ցուն, դատաւոր կենդանեաց եւ մեռելոց: Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր որ:

Մաղթանք:

Զսաղմոսերգութիւնս եւ զաղաչանս ընկալցի մարդասէրն Ած. մեր մեղաց եւ յանցանացն թողութիւն շնորհեսցէ. ի չարեաց փրկեսցէ. ի մեղաց պահեսցէ. եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

Եւ աստէն սկսանի պատարագն:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՍԵՂԱՆՈՅ

ՎԱՍՆ ՄԱՐՄՆԱՒՈՐ ԿԵՐԱԿՐՈՑ ԵՒ ԸՄՊԵԼԵԱՑ

Պատրաստեն զսեղանն հացիւ, եւ զարդարեն կերակրովք, եւ կանգնին իւրաքանչիւր ոք ի տեղիս իւրեանց: Եւ գայ եկեղեցականորն կամ քահանայն, եւ ասէ.

Սաղմոս ՃԽԴ:

ԿՑ. Ակն ամենեցուն ի քեզ յուսան, եւ դու տաս կերակուր նոցա ի ժամու:

Դպիրքն:

Փխ. Բարձր առնեմ զքեզ, Աստուած իմ եւ թագաւոր իմ. եւ օրհնեմ զանուն քո յաւիտեան, եւ յաւիտեանս յաւիտենից:

Զօրհանապազ օրհնեցից զքեզ, եւ գովեցից զանուն քո յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից:

Մեծ է Տէր, եւ օրհնեալ է յոյժ. եւ մեծութեան նորա ոչ գոյ չափ:

Ազգ եւ ազգ գովեսցեն զգործս քո, եւ զզօրութիւնս քո պատմեսցեն:

Զմեծվայելչութիւն փառաց սրբութեան քոյ խօսեսցին, եւ զսքանչելիս քո պատմեսցեն:

Զզօրութիւն ահի քո ասասցեն, և զմեծութիւնս քո պատմեսցեն:

Զյիշատակ բազում քաղցրութեան քո բղխեսցեն, և արդարութեամբ քով ցնծասցեն:

Գթած ողորմած է Տր, երկայնամիտ և բազումողորմ:

Քաղցր է Տէր առ ամենեսեան. և գթութիւն Նորա ի վերայ ամենայն արարածոց իւրոց:

Խոստովան եղիցին առ քեզ Տէր ամենայն գործք քո, և սուրբք քո օրհնեսցեն զքեզ:

Զփառս արքայութեան քո ասասցեն, և զզօրութիւնս քո պատմեսցեն:

Ճանաչել որդւոց մարդկան զզօրութիս քո, և զփառս մեծվայելչութեան արքայութեան քո:

Արքայութիւն քո արքայութիւն ամենայն յաւիտենից, և տէրութիւն քո յազգէ մինչև յազգ:

Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր, և արդար է յամենայն գործս իւր:

Հաստատէ Տէր զամենայն գայթագղեալս, և կանգնէ զամենայն գլորեալս:

Աչք ամենեցուն ի քեզ յուսան. և դու տաս կերակուր նոցա ի ժամու:

Բանաս զձեռն քո, և լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ կամօք քո:

Արդար է Տր յամ ճնպրհս իւր, և սրբ է յամ գործս իւր:

Մերձ է Տէր առ ամենեսեան, որք կարդան առ Նա.

առ ամենեսեան, ոյք կարդան առ նա ճշմարտութբ:

Զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր. աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա:

Պահէ Տէր զամենեսեան, ոյք սիրեն զնա. և զամենայն մեղաւորս սատակէ Տէր:

Զօրհնութիս Տռն խօսեսցի բերան իմ. օրհնեսցէ ամ մարմին զանուն սբ Նր յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից:

Փառք Հօր և: Այժմ և միշտ:

Մաղթանք:

Քհն. Ողորմած գթած է Տէր, կերակուր տայ երկիւղածաց իւրոց:

Քարոզ:

Սրկ. Եւ եւս խաղաղութն զՏէր աղաչ:

Աղաչեսցուք զամենակալն Այ, զի պարգեւեսցէ մեզ կերակուր ուրախութեան, և լցուսցէ զսիրտս մեր ի լիութե արարածոց իւրոց: Ամենակալ Տէր Այ մեր:

Աղօթք:

Քհն: Օրհնեա՛ Քս Այ մեր հոգեւոր օրհնութբ զկերակուրս և զըմպելիս ծառայից քոց, և շնորհեա՛ յառողջութի հոգւոյ և մարմնոյ: Որպէս զի կրօնաւորական պարկեշտութբ վայելելով ի մարմնաւոր պիտոյիցս՝ անանց բարեացդ և երկնից արքայութեդ հաղորդս լիցուք ընդ ամ սրբս քո: Եւ գոհութբ փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր և ամենասբ Հոգւոյդ. այժմ և:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր որ:

Եւ օրհնող սեղանոյն կալով կանգուն, եւ առեալ զհացն բեկանէ ընդ պատուաւորացն որք առընթեր կան, կամ ընդ տանորէն որ պատրաստող է ճաշոյն, եւ նոքա առ ամենեքեան: Եւ ասէ. Ճաշակեցէք խաղաղութբ. Եւ նստին ի ճաշն:

Իսկ եթէ վանականք իցեն, կամ անապատաւորք, նստցի մինն յեղբարց ի բարձրագոյն տեղւոջ, եւ առեալ ընթեռնուցու զգիրս աստուածայինս. Եւ ամենեքեան ունկն դիցեն ընթերցմանն անմռունչ ճաշակմամբ: Եւ եթէ ոք խնդրեսցէ զլուծումն ինչ տարակուսանաց, լուծցեն որք կարողն իցեն. Եւ դարձեալ ճաշեսցեն լռելեայն, եւ ոչ աղաղակաւ:

Եւ յետ յառնելոյ ի սեղանոյ՝ դարձեալ կայցեն ի տեղիս իւրեանց: Եւ ասասցէ.

Քհն. Տէր Յիսուս, լցաք ի բարութեանց քոց:

Դպ. Տացուք գոհութիւն Տեառն Աստուծոյ մերոյ:

Սաղմոս ԼԲ:

Աչք Տեառն ի վերայ երկիւղածաց իւրոց. և ոյք յուսան յողորմութիւն նորա:

Փրկել ի մահուանէ զանձինս նոցա, և կերակրել զնոսա ի սովու:

Անձինք մեր համբերեսցեն Տեառն. զի օգնական և պաշտպան մեր է:

Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր. և յանուն սուրբ նորա յուսասցուք:

Եղիցի ողորմու՟թ քո Տ՟ր ի վ՟ր մեր ո՟պ յուսացաք ի քեզ:

Փառք Հօր և: Այժմ և միշտ:

Մաղթանք:

Քհ՟: Կերակրիչ և ուրախարար Տէր, փառք քեզ. լցուցանող Քրիստոս, գոհանամք զքէն:

Քարոզ:

Սրկ: Եւ ևս խաղաղութ՟ե զՏէր աղաչեսցուք:

Գոհացարուք ի վերայ լիութ՟ե պարգևաց Տեառն Աստուծոյ մերոյ. որ կերակրէ զմեզ օր ըստ օրէ առատապէս քաղցրութ՟բ կամօք իւրովք: Զի հոգևոր բարութ՟ն և երկնից արքայութ՟ն հաղորդս արասցէ զծառայս իւր ըստ ակնկալութ՟ե յուսոյն մերոյ: Ամենակալ Տէր Ա՟ծ մեր, կեցո և ողորմեա:

Աղօթք:

Քհ՟: Օրհնեալ ես Տէր Ա՟ծ մեր, որ կերակրես զմեզ ի մանկութ՟է. և տաս կերակուր ա՟մ մսեղեաց. լցո ուրախութ՟բ և բերկրութ՟բ զսիրտս մեր: Որպէս զի զա՟մ բաւականութ՟ի ունիցիմք՝ առաւելեալք ի գործս բարութ՟ե ի Ք՟ն Յ՟ն ի Տ՟ր մեր. որում վայելէ փառք, իշխ:

Խաղաղութ՟ի ամենեցուն:

Փառք քեզ Տէր, փառք քեզ Թագաւոր փառաց. որ ետուր մեզ կերակուր ուրախութեան, և լցուցեր զսիրտս մեր ի լիութ՟է ամենաբաւական ողորմութ՟ե քո՟յ. լցո և զմեզ Հոգւովդ քով սրբով. որպէս զի գտցուք

առաջի քո հաճոյք և մի ամաչեցեալք: Զի դու գաս և հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր. և քեզ վայելէ փառք իշխանութ՟ի և պատիւ. այժմ և:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

Մաղթանք:

Զկերոցս Ա՟ծ օրհնեսցէ. սպասաւորացդ և երախտաւորացդ վարձս բարեաց պարգևեսցէ. և օրհնեսցէ զամենեսեան: Ք՟ն Ա՟ծ մեր, որ զմեզ կերակրեաց և լիացոյց՝ նմա փառք յաւիտեանս. ամէն:

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ

ԵՐԵԿՈՅԻ ԺԱՄՈՒՆ

ՈՐ ԿԱՏԱՐԻ

Ի ԴԻՄՍ ՈՐԴԻՈՑՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐ ԷՋ Ի ԽԱՉԷՆ ԵՒ ՊԱՏԵԱԼ ՊԱՍՏԱՌԱԿԱԼԱՒ ԵԴԱՒ Ի ԳԵՐԵԶՄԱՆԻ

Ձայն առ Ա՟ծ կարդացի. և Տէր լուաւ ինձ յերեկոյս, ի վաղորդայն և ի հասարակ աւուր:

Սպասէի Աստուծոյ իմոյ, և ակն ունէի կենարարին. որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Այժմ և միշտ: Եւ ևս խաղաղութ՟ե զՏէր աղաչ:

Օրհնութ՟ի և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն ս՟բ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Սաղմոս ՁԵ:

Խոնարհեցո Տէր զունկն քո և լուր ինձ. զի աղքատ և տնանկ եմ ես:

Պահեա զանձն իմ սուրբ, Տէր. փրկեա զծառայս քո Ա՟ծ իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհա-

նապաղ. ուրախ արա զանձն ծառայի քո, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։

Զի դու Տէր քաղցր և ուղիղ ես. բազումողորմ առ ամենեսեան որք կարդան առ քեզ։

Ունկն դիր Տէր, աղօթից իմոց. և նայեաց ի ձայն խնդրուածաց իմոց։

Յաւուր նեղութե՟ իմոյ կարդացի առ քեզ, և լուար ինձ։

Ոչ ոք է նման քեզ յաստուածս, Տէր. և ոչ ոք է որպէս զգործս քո։

Զամենայն ազգս զոր արարեր՝ եկեսցեն և երկիր պագցեն առաջի քո Տէր. և փառաւոր արասցեն զանուն քո յաւիտեան։

Մեծ ես դու Տէր, և առնես սքանչելիս. և դու միայն ես Աստուած։

Առաջնորդեա ինձ ի ճանապարհի քում, և գնացից ի ճշմարտութեան քում. և ուրախ եղիցի սիրտ իմ երկնչել յանուանէ քումմէ։

Խոստովան եղէց առ քեզ Տէր Աստուած իմ. բոլորով սրտիւ իմով փառաւոր արարից զանուն քո յաւիտեան։

Մեծ եղեւ ի վերայ իմ ողորմութ՟ի քո. և փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց։

Աստուած, անօրէնք յարեան ի վերայ իմ, և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ. և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։

Այլ դու Տէր Աստուած իմ, գթած ես եւ ողորմած. երկայնամիտ բազումողորմ և ճշմարիտ. նայեաց առ իս, և ողորմեա ինձ։

Տո՛ւր զօրութիւն ծառայի քո. կեցո՛ զորդի աղախնոյ քո, և արա՛ առ իս նշան բարութեան։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն. զի դու Տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս։

Փառք Հօր և Որդւոյ։ Այժմ և միշտ։

Մաղթանք։

Փառք քեզ Աստուած, փառք քեզ. յաղագս ամենայնի Տէր, փառք քեզ։

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւ։

Խաղաղականին ամենեցուն։

Սաղմոս ՃԼԹ։

Ապրեցո՛ զիս Տէր ի մարդոյ չարէ. յառնէ անիրաւէ փրկեա՛ զիս։

Խորհեցան զանօրէնութիւն ի սիրտս իւրեանց. զօր ամենայն պատրաստեցան ի պատերազմ։

Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի. և թոյնք իժից ի ներքոյ շրթանց նոցա։

Պահեա՛ զիս Տէր ի ձեռաց մեղաւորի. և ի մարդոյ չարէ փրկեա՛ զիս։

Խորհեցան խափանել զգնացս իմ. թաքուցին ամբարտաւանք որոգայթ ինձ։

Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց. շուրջ զշաւղօք իմովք եդին ինձ գայթագղութիւն։

Ասացի Տէր Աստուած իմ ես դու. ո՛ւնկն դիր Տէր ձայնի աղօթից իմոց։

Տէր Տէր զօրութիւն փրկութեան իմոյ. հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի։

Մի՛ մատներ զիս Տէր ի ցանկութիւն մեղաւորաց. զք խորհեցան վասն իմ ընդ վայր հարկանել զիս։

Զի մի՛ երբէք բարձրասցին, և խորհուրդք նոցա մի՛ կատարեսցին. վախճան կատարածի նոցա վաստակ շրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա։

Արկցես ի վերայ նոցա կայծակունս հրոյ, և կործանեսցես զն՟ս. ի տառապանաց մի՛ կարասցեն կեալ։

Մարդոյ լեզուանւոյ մի՛ յաջողեսցի ի վ՟ր երկրի. զայր մեղաւոր չարիք իւր որսասցեն ի կորուստ։

Ծանեայ, զի առնես Տէր դատաստանս աղքատի, և իրաւունս տնանկի։

Արդարք գոհասցին զանուանէ քումմէ. և բնակեսցեն ուղիղք առաջի երեսաց քոց։

Սաղմոս ՃԽ։

Տէր կարդացի առ քեզ, և լո՛ւր ինձ. նայեա՛ց ի ձայն աղօթից իմոց ի կարդալ իմում առ քեզ։

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո Տէր. համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի։

Դի՛ր Տէր պահապան բերանոյ իմոյ, և դուռն ամուր շրթանց իմոց, զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան։

Ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս՝ որք գործեն զանօրէնութիւն. և ոչ եղէց կցորդ ընտրելեաց նոցա։

Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ, և յանդիման արասցէ. իւղ մեղաւորի մի՛ օծցէ զգլուխ իմ, այլ աղօթք իմ ի կամս նորա։

Արգելան մերձ առ վիմին դատաւորք նոցա. լուիցեն բանից իմոց և քաղցրասցին։

Որպէս թանձրութիւն հողոյ զի սփռեալ է ի վերայ երկրի՝ ցրուեսցին ոսկերք նոցա մերձ ի դժոխս։

Առ քեզ Տէր Տէր են աչք իմ, ի քեզ յուսացայ. մի՛ հաներ զհոգի յինէն։

Պահեա՛ զիս յորոգայթէ որ թագուցաւ ինձ. ի գայթագղութենէ գործողին զանօրէնութիւն։

Անկցին ի ցանցս նորա մեղաւորք. միայն եմ ես՝ մինչեւ անցից։

Սաղմոս ՃԽԱ։

Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի. ձայնիւ իմով զՏէր աղաչեցի։

Սփռեցից առաջի Տեառն զաղօթս իմ. և զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից։

Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ՝ դու Տէր ծանեար զշաւ-

իղս իմ. ի ճանապարհ յոր և գնայի՝ թագուցաւ ինձ որոգայթ։

Հայէի յաջմէ՝ տեսանէի, և ոչ ոք ճանաչէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ, և ոչ գտաւ խնդրող անձին իմոյ։

Աղաղակեցի առ քեզ Տէր, և ասացի. դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։

Նայեա՛ Տէր յաղօթս իմ, զի ես խոնարհ եղէ յոյժ. ապրեցո՛ զիս ի հալածչաց իմոց, զի հզօր եղեն քան զիս։

Տէր հա՛ն ի բանտէ զանձն իմ. գոհանամ զանուանէ քումմէ։

Եւ քեզ սպասեն արդարք մինչեւ հատուսցես ինձ։

Փառք Հօր և Որդ։ Այժմ և միշտ։

Երգ երեկոյամտից։

Ալէլուիա. ալէլուիա։

Լոյս զուարթ սուրբ փառաց. անմահի Հօրն երկնաւորի սրբոյ կենարարի Յիսուս Քրիստոս։

Եկեալքս ի մտանել արեգական. տեսաք զլոյս երեկոյիս։ Օրհնեմք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին Աստուածութեան. և ամենեքեան ասեմք ամէն։ Արժանաւորեա զմեզ յամենայն ժամ օրհնել ձայնիւ երգով զանուն փառաց ամենամբ Երրորդութեանդ։

Որ տաս զկենդանութիւն. վասն որոյ և աշխարհս զքեզ փառաւորէ։ Ապա Քրզ. Հասեալքս ի ժամ։

Իսկ յայլ աւուրս՝ Մաղթանք։

Օրհնեալ Տէր, որ բնակեալդ ես ի բարձունս, և օրհնեալ են փառք մեծութեան քոյ. որ հաստատեցեր զլուսաւորս ի բարձունս. յերկնից լոյս ծագեցեր ընդ ամենայն տիեզերս։ Արարեր զարեգակն լուսատու տուընջեան. զլուսինն և զաստեղս՝ լուսատու գիշերոյ, և զլոյս ճրագի։ Դու ես լոյս գովելի. սուրբ և առաջին լոյսն. ի քէն փախնու խաւարն. և զլոյս քո կենդանի Տէր ծա-

դեա՛ ի սիրտս մեր: Եւ մեք միաբան ասասցուք. օրհ-
նեալ է անուն սուրբ փառաց քոց. և քեզ երգեմք
զօրհնութի և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբ-
բոյ. այժմ և միշտ և:

Քարոզ:

Զասեալքս ի ժամ երեկոյիս ամենեքեան համբառ-
նալով զձեռս մեր փառաւորեմք զքեզ Տէր Ած մեր,
ամ շնորհեցեր մեզ զտիւս խաղաղութբ անցուցանել և
հասանել ի ժամ երեկոյիս: Արժանաւորեա՛ զմեզ Տէր
սուրբ սրտիւ, հրեշտակային երգով գոհաբանութիւն
մատուցանել Տեառն Աստուծոյ ամենակալիդ. կեցո և
ողորմեա՛: Կեցո Տէր:

Ողորմեա՛ց մեզ Տր Ած մեր ըստ մեծի ողորմուե քում:
Ասասցուք ամենեքեան միաբ: Գ. Տէր ողորմեա՛:

Մաղթանք:

Զասեալքս ի ժամ երեկոյիս ամենեքեան անդադար
փառաւորեմք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ. այժմ
և միշտ և յաւիտ:

Մեսեդի ձայնեան:

Օրհնեալ որ գաս յանուն Տեառն. օրհնեալ որ
գալոց ես:

Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ. արարէք տօնս
ուրախութե կանխաւ մինչեւ յանկիւնս սեղանոյ:

Ապա ասեն զՈւղղեսցի:

Ուղիղ եղիցին աղօթք իմ.
Որպէս խունկ առաջի քո Տէր:
Համբարձումն ձեռաց իմոց.
Պատարագ երեկոյի:

Քարոզ կիրակամտից եւ ամենայն աւուրց տէրունեաց:

Ասասցուք ամենեքեան միաբանութբ. Երես 54:

Զերեկս մերձեալ և զառաջակայ գիշերս խաղաղութբ
անցուցանել հաւատով. Եւ այլն ըստ կարգի:

Քարոզ պահոց:

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Աղաչեսցուք զամենակալն Ած, զՀայր Տեառն մերոյ
Յսի Քսի, զԹագաւորն խաղաղութե յաղագս խաղա-
ղութե, և վասն միայնոյ նբ կաթուղիկէ և առաքելա-
կան եկեղեցւոյ. զի զբաղում ամս խաղաղութբ տացէ
մեզ Տէր Ած մեր. և զԹագաւորս խաղաղարարս առա-
քեսցէ առ մեզ վն մեծի, նբ և ահաւոր անուան իւրոյ.
զպետս գաւառաց, զզօրավարս, զզօրագլուխս, զժողո-
վուրդս, զմուտս և զելս մեր խաղաղութբ պահեսցէ. և
զամ պատերազմունս թշնամւոյն խորտակեսցէ ի մէնջ:
Տրն ամենակալն կեցուսցէ և ողորմեսցի: Կեցո Տէր:

Զերեկս մերձեալ և զառաջակայ գիշերս խաղաղութբ
անցուցանել հաւատով ի Տռնէ խնդր: Շնորհեա Տր:
Զհրեշտակ: Զքաւութի: Զսբյ խաչ: Շնորհեա Տր:
Եւ ես և վն միաբանութե ճշմար: Տէր ողորմեա:
Զանձինս մեր և զմիմեանս Տռն Ած: Քեզ Տռնդ յ:
Ողորմեաց մեզ Տէր Ած մեր: Գ. Տէր ողորմեա:

Աղօթք:

Լուր ձայնից մերոց Տէր Ած մեր. ընկա՛լ զաղաչանս
մեր, զհամբարձումն ձեռաց մերոց և զբանս աղօթից,
սրբելով զերեկոյի պատարագս մեր ի հոտ անուշից՝ ի
հաճոյս քեզ պատրաստել: Յաւե՛լ ի մեզ Տէր ամե-
նակալ զհաւատ, զյոյս, զսէր և զամ գործս առաքի-
նութե. ով զի ըստ կամաց քոց բարեխիրաց միշտ կրօ-
նաւորեալք բարեպաշտութբ ի տուէ և ի գիշերի. և
արժանաւորք եղիցուք յաղագս անձանց մերոց փր-
կութե և վն հոգեւոր կենացդ աղաչել զքեզ Տէր.
և գտանել ի քէն զշնորհս և զողորմութի. և գոհանա-
լով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և:

Խաղաղութիւն ամենեցուն:

Քեզ երկիր պագանելով Տէր Ած մեր, գոհանամք
զքէն յաղագս խաղաղութեամբ անցուցանելոյ ի մէնջ

զերկարութիւ տուընջեանս: Տո՛ւր մեզ Տէր, աղաչեմք զքեզ, զերեկս և զառաջակայ գիշերս առանց մեղաց և առանց գայթագղութեան անցուցանել. հաստատուն կալ և մնալ ի հաւատ, ի յոյս, ի սէր և ի պատուիրանապահութեան քո: Խնդրելով զխաղաղութիւն ամ աշխարհի, եկեղեցւոյ քում սբյ զհաստատութիւ, և անձանց մերոց զփրկութիւ: Որ զի ընդունելով ի քէն զհայցուածս մեր, և զմեծվայելչական փառաբանութի միշտ ի բարձունս առաքեսցուք ամենազօր Տէրութեդ, ՔՍ ԱԾ մեր. այժմ և:

Եւ ապա ասէ Սուրբ Աստուած:

Սո՛ւրբ Աստուած. Սո՛ւրբ և հզօ՛ր. Սո՛ւրբ և անմահ ողորմեա՛ց մեզ: Երիցս կրկնեա:

Երգ:

Փառաւո՛րեա՛լ և օրհնեալ միշտ սբ կոյս Ածածի՛ն Մարիամ մա՛յր ՔՍի. մատո՛ զաղաչա՛նըս մեր որդւոյ քո՛յ և Աստուծո՛յ մերո՛յ:

Մաղթանք:

Փրկեա՛ զմեզ ի փորձութեէ և յամ վտանգից մերոց:

Քարոզ:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Վ սբ լսելի լինելոյ Տեառն ԱԾ ձայնի աղաչանաց մերոց բարեխօսութբ սբ Ածածնին. և ի ջնջելոյ ի վս մեր ողորմութեան և գթութեան ՏՆ ԱԾ: Ամենակալ Տր:

ՔՆ. Օրհնութիւ և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտ:

Խաղաղութեան ամենեցուն:

Սաղմոս ՃԻ:

Համբարձի զաչս իմ ի լերինս. ուստի՞ եկեսցէ ինձ օգնութիւն:

Օգնութիւն ինձ ի Տեառնէ եկեսցէ. որ արար զերկինս և զերկիր:

Մի՛ տար ի սասանութիւն զոտն քո. և մի՛ նիրհեսցէ պահապան քո:

Ո՞ ոչ նիրհէ, և ոչ ի քուն երթայ պահապանն Իսրայէլի:

Տէր պահեսցէ զքեզ, և Տէր ընկալցի աջոյ ձեռամբն իւրով:

Արեգակն ի տուէ քեզ մի՛ մեղիցէ. և մի՛ լուսինն ի գիշերի:

Տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ. պահեսցէ Տէր զանձն քո:

Տէր պահեսցէ զմուտ և զել քո. յայսմ հետէ մինչև յաւիտեան:

Փառք Հօր և: Այժմ և միշտ:

Եւ ապա ասէ Համբարձին ըստ պատշաճին:

Զկնի Համբարձիոյն՝ Քարոզ:

Վ սբ խաղաղութեան ամ աշխարհի, և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք: Ասասցուք ամենեքեան միաբանութբ: Տէր ողորմեա՛. Երիցս:

Աղօթք:

Հայր գթած, բարերարմող, արարիչ ամ արարածոց. ընկա՛լ զպաղատանս ծառայից քոց ի ժամ երեկոյիս, որ առատ ես առ ամենեսեան պարգևօք բարերարութեան քոյ. ողորմեա՛ Տէր ամ աշխարհի, և եկեղեցւոյ քում սրբոյ, հիւանդաց, վշտացելոց, ճանապարհորդաց, նաւորդաց, խոստովանողաց, ապաշխարողաց և հոգւոցն հանգուցելոց: Զի դու Տէր ամենակալ, գիտես զպէտս մեր և զկարիս առաւել քան զոր խնդրեմք և իմանամք. և քեզ ընդ Որդւոյ և ամենասբ Հոգւոյդ վայելէ փառք իշխանութիւ և պատիւ. այժմ և միշտ:

Ապա Արհաւրան սաղմոս եւ Աւետարան ըստ պատշաճին:

Քարոզ:

Խնդրեսցուք հաւատով միաբանութբ ի Տեառնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ի վերայ մեր: Տէրն ամենակալն կեցուսցէ և ողորմեսցի: Կեցո՛ Տէ՛ր:

Տէր ո՛ղորմեա՛. Տէ՛ր ողորմեա՛. Տէ՛ր ողո՛րմեա՛:

Աղօթք։

Թագաւոր խաղաղութե՛, օգնական և փրկիչ անձանց մերոց, Ք՛ն Ա՛ծ մեր, պարսպեալ պահեա զժողովուրդս քո ընդ հովանեաւ ս՛բ և պատուական խաչիւդ քո ի խաղաղութե՛։ Փրկեա յերևելի և յաներևոյթ թշնամւոյն. արժանաւորեա գոհութե՛ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտ։

Օրհնեալ Տէր մեր։ Հայր մեր։

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ

ՀԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄՈՒՆ

ՈՐ ԿԱՏԱՐԻ

Ի ԴԷՄՍ ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՅ ԶԻ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԱԶՈՎ ՄԻԱԾՆԻՆ ՊԱՀԵՍՑԷ ԶՄԵԶ Ի ԽԱՒԱՐԱՑԻՆ ԳԻՇԵՐԻՍ

Առաքեա Տէր զլոյս քո և զճշմարտութի՛ քո, զի առաջնորդեսցեն ինձ, և հանցեն զիս ի լեառն սուրբ և ի յարկս քո։

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ. առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։ Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ Աստուած Աստուած իմ։ Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա առ Աստուած. խոստովանեա նմա. փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն ս՛բյ։

Այժմ և միշտ։ Եւ եւս խաղաղութե՛ զՏէր աղաչ։

Օրհնութի՛ և փառք Հօր և Որդ։

Սաղմոս ՃԺԸ։

Եկեսցէ ի վ՛ր իմ ողորմութի՛ քո Տէր, և փրկութի՛ քո ըստ բանի քում։

Տաց պատասխանի ոյք նախատեն զիս բանիւք, զի ես ի բանս քո յուսացայ։

Մի՛ ի բացեայ առներ ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչեւ յոյժ, զի յիրաւունս քո յուսացայ։

Պահեցի զօրէնս քո յա՛մ ժամ. յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։

Գնայի ես յանդորրու, զի զպատուիրանս քո խնդրեցի։

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի։

Խորհէի ի պատուիրանս քո, զոր սիրեցի։

Համբարձի զձեռս իմ ի պատուիրանս քո, զոր սիրեցի. և խորհէի յարդարութեան քում։

Յիշեա զբան ծառայի քո, յոր և յուսացուցեր զիս։

Սա մխիթարեսցէ զիս ի խոնարհութեան իմում, զի բան քո կեցոյց զիս։

Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ. այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ։

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից Տ՛ր, և մխիթարեցայ։

Տրտմութիւն կալաւ զիս ի մեղաւորաց, և ոյք թողին զօրէնս քո։

Գովելի են ինձ իրաւունք քո ի տեղւոջ պանդխտութեան իմոյ։

Յիշեցի ի գիշերի զանուն քո Տէր. և պահեցի զօրէնս քո։

Սա եղև ինձ ճանապարհ ի կեանս. զի զարդարութիւնս քո խնդրեցի։ —

Զանօրէնս ատեցի և զօրէնս քո սիրեցի։

Օգնական և փրկիչ իմ ես դու, և ես ի բանս քո յուսացայ։

Ի բաց եղերուք յինէն չարք, եւ քննեցից զպատուիրանս Աստուծոյ իմոյ։

Օգնեա՛ ինձ ըստ բանի քում, եւ կեցո՛ զիս. եւ մի՛ յամօթ առներ զիս ի յուսոյ իմմէ։

Օգնեա՛ ինձ եւ ապրեցո՛ զիս, եւ խորհեցայց զիրաւունս քո յամենայն ժամ։

Անարգեցեր զամենեսեան, որք ապստամբ եղեն յարդարութեանց քոց. զի անիրաւութեամբ էին խորհուրդք նոցա։

Յանցաւորս համարեցայ զամ մեղաւորս երկրի. վն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։

Բեւեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։ —

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր. ըստ բանի քում իմաստո՛ւն արա զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր, եւ բանիւ քով փրկեա՛ զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամ պատուիրանք քո արդարութեամբ են։

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութե քում Տէր, եւ օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. եւ իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայս քո զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Լե։ Մի՛ եկեսցեն ի վերայ մեր ոտք ամբարտաւանից, եւ ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ։

Ընդ անկցին ամենեքեան, ոյք գործեն զանօրէնութի. մերժեսցին, եւ այլ մի՛ կարասցեն հաստատել։

Ես ի Տէր յուսացայ. ցնծացայց եւ ուրախ եղէց յԱծ փրկիչ իմ։

Տէր Տէր ետ ինձ զօրութի, եւ կացոյց զոտս իմ ի հաստատութե. ի վր պարանոցի թշնամւոյն կացոյց զիս, եւ հանգոյց զիս երագ երագ։

Սաղմոս Ղ։

Որ բնակեալն է յօգնութի բարձրելոյն, ընդ հովանեաւ Աստուծոյ յերկնից հանգիցէ։

Ասասցէ Տեառն. ընդունելի իմ ես դու, ապաւէն իմ Աստուած, եւ ես յուսամ ի նա։

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին, եւ ի բանիցն խռովութենէ։

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. ի հովանի թեւոց նորա յուսասցիս։

Որպէս զէն շուրջ եղիցի զքեւ ճշմարտութի նորա։

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի. եւ ոչ ի նետէ՝ որ թռչի ի տուէ։

Յիրէ՝ որ շրջի ի խաւարի. ի գայթագղութէ դիւին ի հասարակ աւուր։

Անկցին ի կողմանէ քումմէ հազարք, եւ բիւրք ընդ աջմէ քումմէ. եւ առ քեզ ինչ ոչ մերձեսցին։

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու. եւ զհատուցումն մեղաւորաց տեսցես. զի դու Տէր յոյս իմ ես։

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն. ոչ հասցեն առ քեզ չարք, եւ տանջանք մի՛ մերձեսցին ի յարկս քո։

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վն քո, ի պահել զքեզ յամ ճանապարհս քո։

Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ, զի մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո։

Ի վր իժից եւ քարբից գնասցես դու. եւ առ ոտն կոխեսցես զառիւծն եւ զվիշապն։

Քանզի յիս յուսացաւ, եւ փրկեցից զնա. հովանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ։

Կարդասցէ առ իս, և ես լուայց նմա. և առ նմա եղէց ի նեղութեան:

Փրկեցից և փառաւոր արարից զնա. երկայն աւուրբք լցուցից, և ցուցից նմա զփրկութիւն իմ:

Սաղմոս ՃԻԲ:

Առ քեզ Տէր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես յերկինս:

Որպէս աչք ծառայի ի ձեռն տեառն իւրոյ. և որպէս աչք աղախնոյ ի ձեռն տիկնոջ իւրոյ:

Այնպէս են աչք մեր առ քեզ Տէր Աստուած մեր. մինչև ողորմեսցիս ի վերայ մեր:

Ողորմեա՛ց մեզ Տէր, ողորմեա՛ց մեզ. զի բազում լցաք արհամարհանօք:

Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ. և արհամարհանօք ամբարտաւանից:

Սաղմոս ԾԳ:

Աստուած յանուան քում կեցո՛ զիս. և ի զօրութեան քում իրաւ արա ինձ:

Աստուած լո՛ւր աղօթից իմոց. ո՛ւնկն դիր բանից բերանոյ իմոյ:

Օտարք յարեան ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ. և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց:

Ահա Ա՟ծ օգնական իմ. և Տ՟ր ընդունող հոգւոյ իմոյ:

Ի դարձուցանել զչարն ի թշնամիսն իմ, ճշմարտութ՟բ քով սատակեա՛ զնոսա:

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում Տէր, զի բարի է:

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս, և ի թշնամիս իմ ետես ակն իմ:

Օրհնութիւն երից մանկանցն: Դան. Գ:

Օրհնեալ ես դու Տէր Ա՟ծ հարցն մերոց. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան:

Եւ օրհնեալ է անուն ո՛ր փառաց քոց. * գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես ի տաճարի փառաց սրբութ՟ քո. գով:

Օրհնեալ ես ի վ՟ր աթոռոյ արքայութ՟ քո. գով:

Օրհնեալ ես որ նստիս ի քրովբէս. և հայիս յանդունդս. գովեալ:

Օրհնեալ ես ի վ՟ր հաստատութ՟ երկնից. գով:

Սաղմոս ՃԾ:

Օրհնեցէք զԱ՟ծ ի սրբութ՟ ն՟ր. օրհնեցէք զնա ի հաստատութեան զօրութեան նորա:

Օրհնեցէք զնա ի զօրութ՟ նորա. օրհնեցէք զնա ի բազում մեծութեան նորա:

Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեան. օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնութեամբ:

Օրհնեցէք զնա ցնծութեամբ. գովեցէք զնա ուրախութեամբ:

Օրհնեցէք զնա ի բանս քաղցր. գովեցէք զնա ի բարբառ լսելի:

Օրհնեցէք զնա ի ձայն գոհութ՟. ամենայն հոգիք օրհնեցէք զՏէր:

Աղօթք Ծերունւոյն Սիմէոնի: Ղուկ. Բ:

Արդ՝ արձակես զծառայս քո Տէր ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ա՟մ ժողովրդոց:

Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց, և փառք ժողովրդեան քում Իսրայէլի:

ՃԼԵ: Զգեցեր զձեռն քո, և փրկեաց զիս աջ քո. և Տէր հատուսցէ ընդ իմ:

Տէր ողորմութ՟ի քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ:

Տէր հա՛ն ի բանտէ զանձն իմ. գոհանամ զանուանէ քումմէ:

Եւ քեզ սպասեն արդարք, մինչև հատուսցես ինձ:

Երգ Մարիամու Աստուածածնին։ Գլուխ. Ա։

Մեծացուսցէ անձն իմ զՏէր. և ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով։

Այց արար ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ. այսուհետեւ երանեսցեն ինձ ամենայն ազգք։

Արար ընդ իս մեծամեծս հզօրն. և սուրբ է անուն նորա։

Ողորմութի արար յազգաց յազգս երկիւղածաց իւրոց. և արար զզօրութիւն բազկաւ իւրով։

Ցրուեաց զամբարտաւանս ի մտաց սրտից. և քակեաց զհզօրս յաթոռոց։

Զխոնարհս բարձրացոյց. զկարօտս ելից բարութբ. և զմեծատունս արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ յիշելով զողորմութիւն իւր։

Որպէս խօսեցաւ առ հարս մեր. ընդ Աբրահամու, և զաւակի նորա յաւիտեան։

Զե. Տուր զօրութիւն ծառայի քոյ. կեցո զորդի աղախնոյ քոյ, և արա առ իս նշան բարութեան։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու Տէր օգներ ինձ և մխիթարեցեր զիս։

Փառք Հօր։ Այժմ և միշտ։

Մաղթանք։

Զանձն իմ ի ձեռս քո է յամ ժամ, և ի սուրբ խաչ քո յուսացեալ եմ թագաւոր երկնաւոր. զբազմութի սրց քոց բարեխօս ունիմք առ քեզ։ Որ երկայնամիտ ես առ ամենեսեան, մի անտես առներ զապաւինեալս ի քեզ։ Այլ պահեա պատուական և սբ խաչիւ քո ի խաղաղութեան։

Քարոզ։

Աղաչեսցուք զամենակալն Ած և խնդրեսցուք ի նմանէ, զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութն որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս ի դիւական

խռովութէ, ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր. մինչեւ ի կատարումն ժամանակի ամաց մերոց։ Ամենակալ Տէր Ած մեր, կեցո և ողորմեա։ Կեցո Տէր։

Զհանգիստ գիշերիս խաղաղութեամբ անցուցանել հաւատով ի Տեառնէ խնդր։ Շնորհեա Տր։

Զհրեշտակ։ Զքաւութի։ Զսբ խաչ։ Շնորհեա Տր։

Եւ եւս և վն միաբանութն ճշմարիտ։ Տէր ողորմեա։

Զանձինս մեր և զմիմեանս Տեառն։ Քեզ Տռնդ յ։

Ողորմեա՛ց մեզ Տէր Ած մեր ըստ մեծի ողորմութն։

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա։

Աղօթք։

Տէր Ած մեր, դու պահեա զմեզ խաղաղութբ ի գիշերիս յայսմիկ և յամ ժամանակի։ Ընդ սբ երկիւղ քո բեւեռեալ պահեա զմիտս և զխորհուրդս մեր։ Որպէս զի յամ ժամ քեւ պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն։ Եւ քեզ հանցուք զօրհնութի և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Հրեշտակի խաղաղութն յանձն արա զանձինս մեր Տէր զօրութեց, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ի տուէ և ի գիշերի. յարթնութն և ի հանգստեան մերում։ Զի դու ես արարիչ լուսոյ և հաստիչ գիշերի։ Եւ այժմ աղաչեմք զքեզ Տէր Ած մեր. զհանգիստ գիշերիս շնորհեա խաղաղութբ անցուցանել։ Եւ հասանել ի պաշտօն առաւօտու յերկրպագութի և ի փառաբանութի ամենասբ Երրորդութեդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտ։

Սաղմոս Դ։

ԿԳ. Խաղաղութբ յայս և ի սոյն ննջեսցուք և զարթիցուք. զի դու Տէր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ։

Փխ. Ի կարդալ իմում լուաւ ինձ Ա՟ծ ըստ արդարութեան. ի նեղութե՟ ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ, և լուր աղօթից իմոց:

Որդիք մարդկան, մինչև յե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութի՟ և խնդրէք զստութի՟:

Ծանիրո՛ւք, զի սքանչելիս արար Տէր սրբոյ իւրում. և Տէր լուիցէ ինձ ի կարդալ իմում առ նա:

Բարկանայք, և մի՛ մեղանչէք. զոր ինչ ասէք ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարո՛ւք:

Մատուցէք պատարագս արդարութեան, և յուսացարո՛ւք ի Տէր:

Բազումք ասէին, թէ ո՞ ցուցցէ մեզ զբարութիւն Տեառն. Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից մերոց:

Ի պտղոյ ցորենոյ, գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա:

Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեսցուք և զարթիցուք. զի դու Տէր միայն առանձինն յուսով քով բնակեցուցեր զմեզ:

Ալէլուիա որթիւ:

Աւետարան ըստ Յովհաննու: ԺԲ. 24:

Տէրն մեր Յ՟ս Ք՟ս ասէ.

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ: Որ սիրէ զանձն իւր արձակէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ի կեանս յաւիտենականս պահեսցէ զնա թէ: Եթէ ոք զիս պաշտեսցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի: Եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ: 26:

Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Քարոզ:

Ս՟բ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութե՟ իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր:

Աղօթք:

Պահպանեա զմեզ Ք՟ն Ա՟ծ մեր, ընդ հովանեաւ ս՟բ և պատուական խաչիւդ քո ի խաղաղութե՟. փրկեա յերևելի և յաներևոյթ թշնամեացն: Արժանաւորեա գոհութե՟ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր որ:

Մաղթանք:

Ընկանիմք առաջի քո Ա՟ծածին, և աղաչեմք զանարատ զկոյսդ. բարեխօսեա վ՟ն անձանց մերոց, և աղաչեա զմիածին Որդիդ, փրկել զմեզ ի փորձութե՟ և յա՟մ վտանգից մերոց:

Որ արձակիչդ ես կապելոց, պարգևատու ամենեցուն, այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա և զիս զբազմամեղս ի կապանաց մահու ի կեանսդ յաւիտենից:

Մաղթանք աղօթարար ընթերցեմ արհաւրաց փերշերայնոյ. արքայն

Գրիգորի Նարեկացւոյն. ԺԲ:

Ընկա՛լ քաղցրութե՟, Տէր Ա՟ծ հզօր, զդառնացողիս զաղաչանս: Մատի՛ր գթութե՟ առ պատկառեալս դիմօք: Փարատեա ամենապարգև, զամօթական տխրութի՟ս: Բարձ յինէն ողորմած, զանբերելի ծանրութի՟ս: Անջրպետեա հնարաւոր, զմահացու կրթութի՟ս: Աւարեա միշտ յաղթող, զխաբողին հաճութի՟ս: Բացադրեա վերնային, զմոլեւոյն մառախուղ: Կնքեա կեցուցիչ, զկորուսչին ընթացմունս: Ցրուեա ծածկատես, զմթնողին չար գտմունս: Խորտակեա անքնին, զմարտողին դիմեցմունս: Տեառնագրեա քո անուամբդ զլուսանցոյց երդ յարկիս: Պարփակեա քո ձեռամբդ զա-

ռաստաղ տաճարիս: Գծագրեա՛ քո արեամբդ զմուտ սեմոց սենեկիս: Կերպացո՛ զքո նշանդ ի հետս ելից մաղթողիս: Ամրացո՛ քո աջովդ զհանգստեանս խշտի: Մաքրեսցե՛ս ի հաղբից զծածկարան անկողնոյս: Պահեսցե՛ս քո կամօքդ զտառապեալ անձն հոգւոյս: Անխարդա՛խ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս: Կացուսցե՛ս շրջափակ զպար զօրուդ երկնայնոյ: Կարգեսցե՛ս ի դիմի ընդդէմ դիւացն դասու: Տո՛ւր հանգիստ բերկրութե՟ մահահանգոյնս ննջման ի խորուե՟ գիշերիս: Բարեխօսութ՟բ հայցուածոց սրբոյ Ա՟ծածնիդ և ա՟մ ընտրելոց: Ամփոփեալ պարուրեա՛ զպատուհան տեսութեանց զգայարանացս իմաստից անզարհուրելի զետեղմամբ ի ծփական խռովութեց՟ կենցաղական զբաղմանց, անրջական երազոց, խօլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ անվնասելի պաշտպանեալ: Եւ սթափեալ վերստին ի ննջմանէ ծանրութե՟ ամենազգաստ արթնութ՟բ, հոգենորոգ զուարթութ՟բ ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց քեզ, ամէնօրհնեալ Թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ, յերկինս առաքել: Զի դու փառաւորեալ ես յա՟մ արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք զօրաւոր սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ. ԽԱ:

Որդի Աստուծոյ կենդանւոյ, օրհնեալ յա՟մի, Հօրդ ահաւորի անքնին ծնունդ, որ տկարանայ առ ի քէն և ոչ ինչ: Որ ի ծագել անստուեր նշուլից ողորմութե՟ քո փառաց, հալին մեղք, հալածին դեւք, ջնջին յանցանք, խզին կապանք, խորտակին շղթայք, կենդանածնին մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութի՟ք, տեղի տան տխրութի՟ք, նահանջին հեծութի՟ք, փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մուայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարագրի

տագնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն և Թագաւորէ ձեռն քո ամենակար, քաւիչդ ամենայնի: Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. Թո՛ղ ինձ զանթիւ չարիսն իմ, բազում ողորմութ՟բդ. զի դու միայն ես յերկնի անճառ և յերկրի անզնին, ի տարր գոյի և յեզր ծագաց աշխարհի, սկիզբն ամենայնի և յամենայնի ամենայն լրմամբ, օրհնեալ ի բարձունս, և քեզ ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամէն:

Աղօթք խոստովանութեան անձին հաւատացելոյ ի Քրիստոս, զոր արարեալ է Տեառն Ներսէսի Հայոց Կաթողիկոսի:

Հաւատով խոստովանիմ և երկիր պագանեմ քեզ, Հայր և Որդի և սուրբ Հոգի. անեղ և անմահ բնութիւն. արարիչ հրեշտակաց և մարդկան և ա՟մ եղելոց. և ողորմեա՛ քո արարածոցս:

Հաւատով խոստովանիմ և երկիր պագանեմ քեզ անբաժանելի լոյս, միասնական ս՟բ Երրորդութի՟ և մի ա՟ծութի՟. արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա՛ ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութե՟, և լուսաւորեա՛ զմիտս իմ ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս, և ընդունել ի քէն զխնդրուածս իմ, և ողորմեա՛ ինձ բազմամեղիս:

Հայր երկնաւոր, Ա՟ծ ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առաջի քո. ընկա՛լ զիս ո՟պ զանառակ որդին, և զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջին, զոր մերկացայ մեղօք, և ողորմեա՛ քո արարածոցս և ինձ բազմամեղիս:

Որդի Ա՟յ, Ա՟ծ ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ, և առեր մարմին ի մ՟ջ կուսէն Մարիամայ վ՟ն մերոյ փրկութե՟. խաչեցար և թաղեցար և յարեար ի մեռելոց, և համբարձար առ Հայր. մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա՛ զիս որպէս զաւազակն յորժամ

զաս արքայութեամբ քով. * և ողորմեա՛ քո արարածոցս և ինձ բազմամեղիս:

Հոգի Ա՟Յ, Ա՟Ծ ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան և ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութ՟բ ս՟բ աւազանին, մեղայ յերկինս և առաջի քո, մաքրեա՛ զիս վերստին ա՟ծային հրով քով որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն. և ողորմեա՛:

Անեղ բնութ՟ի, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վ՟ն անուանդ քում սրբոյ. և ողորմեա՛:

Տեսող ա՟մ, մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով. ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա՛ զանուն իմ ի դպրութեան կենաց. և ողորմեա՛:

Քննող գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութ՟բ և անգիտութ՟բ. թողութ՟ի շնորհեա՛ մեղաւորիս. զի ի ծննդենէ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի ա՟ծութ՟եդ քո զգայարանօք իմովք և ա՟մ անդամօք մարմնոյս. և ողորմեա՛

Ամենախնամ Տէր, դի՛ր պահապան աչաց իմոց զերկիւղ քո ս՟բ, ոչ ևս հայել յարատ. և ականջաց իմոց, ոչ ախորժել լսել զբանս չարութ՟ն. և բերանոյ իմոյ, ոչ խօսել զստութիւն. և սրտի իմոյ, ոչ խորհել զչարութ՟ի. և ձեռաց իմոց, ոչ գործել զանիրաւութ՟ի. և ոտից իմոց, ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութ՟ն, այլ ուղղեա՛ զշարժումն սոցա լինել ըստ պատուիրանաց քոց յա՟մի. և ողորմեա՛:

Հուր կենդանի Ք՟ս, զհուր սիրոյ քո, զոր արկեր յերկիր, բորբոքեա՛ յանձն իմ, զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քո ի սրտի իմում. և ողորմեա՛:

Իմաստութ՟ի Հօր Յ՟ս, տո՛ւր ինձ իմաստութ՟ի զբարիս խորհել և խօսել և գործել առաջի քո յա՟մ ժամ, և

ի չար խորհրդոց և ի բանից և ի գործոց փրկեա՛ զիս. և ողորմեա՛:

Կամեցող բարեաց Տէր կամարար, մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողորմեա՛:

Արքայ երկնաւոր, տո՛ւր ինձ զարքայութ՟ի քո զոր խոստացար սիրելեաց քոց, և զօրացո՛ զսիրտ իմ ատել զմեղս և սիրել զքեզ միայն և առնել զկամս քո. և ողորմեա՛:

Խնամող արարածոց, պահեա՛ նշանաւ խաչի քոյ զհոգի և զմարմին իմ ի պատրանաց մեղաց և ի փորձութեանց դիւաց և ի մարդոց անիրաւաց և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողորմեա՛:

Պահապան ա՟մ Ք՟ս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ և ի գիշերի, ի նստել ի տան և ի գնալ ի ճանապարհի, ի ննջել և յառնել, զի մի՛ երբէք սասանեցայց. և ողորմեա՛:

Ա՟Ծ իմ, որ բանաս զձեռն քո, և լնուս զամենայն արարածս ողորմութ՟բ քով. քեզ յանձն առնեմ զանձն իմ. դո՛ւ հոգա և պատրաստեա՛ զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան. և ողորմ:

Դարձուցիչ մոլորելոց, դարձո՛ զիս ի չար սովորութ՟ց իմոց ի բարի սովորութիւն, և բևեռեա՛ ի հոգի իմ զսոսկալի օր մահուն և զերկիւղ գեհենին և զսէր արքայութ՟ն, զի զղջացայց ի մեղաց և գործեցից զարդարութ՟ի. և ողորմեա՛:

Աղբիւր անմահութ՟ն, աղբերացո՛ ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութ՟ն որպէս պոռնկին, զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և ողորմեա՛:

Պարգևիչ ողորմութ՟ն, պարգևեա՛ ինձ ուղղափառ հաւատով և բարի գործով և ս՟բ մարմնոյ և արեան քո հաղորդութ՟բ գալ առ քեզ. և ողորմեա՛:

Բարերար Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս քաղցրութ՟բ աւանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութ՟ի այսոցն, որ են ի ներքոյ երկնից. * և ողորմեա՛ քո արարածոցս և ինձ բազմամեղիս։

Լոյս ճշմարիտ Քն՟. արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութ՟բ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման աւուրն, և հանգչել լուսով բարեաց յօթեվանս արդարոց մինչեւ յօր մեծի գալստեան քոյ. և ող՟։

Դատաւոր արդար, յորժամ գաս փառօք Հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայիս քոյ. այլ փրկեա՛ զիս ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութ՟իդ. և ող՟։

Ամենողորմ Տէր, ողորմեա՛ ամ՟ հաւատացելոց ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա՛ և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութ՟ի որ առ իս յանցանաց. և դարձո՛ զնոսա ի չարեացն զոր ունին վ՟ն իմ զի ողորմութ՟ե քում արժանի եղիցին. և ողորմեա՛։

Փառաւորեալ Տէր, ընկա՛լ զաղաչանս ծառայիս քոյ, և կատարեա՛ ի բարի զխնդրուածս իմ բարեխօսութ՟բ սրբուհւոյ Ած՟ածնին և Յովհաննու մկրտչին և սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, և սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, և սրբոց առաքելոց, և մարգարէից, և վարդապետաց, և մարտիրոսաց, և սրբոց հայրապետաց, և ճգնաւորաց, և կուսանաց, և ամ՟ սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց։ Եւ քեզ փառք և երկրպագութ՟ի անբաժանելի սուրբ Երրորդութ՟եդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Մաղթանք։

Վ՟ն սրբուհւոյ անարատ մօր քո և կուսի, Տէր ընկա՛լ զաղաչանս մեր, և կեցո՛ զմեզ։

Քարոզ։

Սբ՟ զԱծ՟ածինն և զամ՟ նբ՟ս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա։

Աղօթք։

Ընկա՛լ Տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին անարատ ծնողի միածնի Որդւոյ քո, և աղաչանօք ամենայն սրբոց քոց։ Լո՛ւր մեզ Տէր և ողորմեա, ներեա՛, քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր։ Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ Տէր մեր։ Հայր մեր որ։

Մաղթանք։

Զհանգստեան զաղօթս և զաղաչանս ընկա՛լ, մարդասէր Ած՟, ի հաճոյս բարերար կամաց քոց։ Եւ մեր մեղաց և բազում յանցանացն թողութ՟ի շնորհեա՛։ Եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Փառք քեզ Տէր Ած՟, որ պարգեւեցեր զօրս բարեաւ և խաղաղութ՟բ անցուցանել։ Մարդասէր Ած՟, զառաջակայ գիշերս՝ որ ի վերայ մեր գալոց է, ի մեղաց փրկեա՛, ի չարեաց ազատեա՛, ի գործս բարիս առաջնորդեա՛։ Առաւօտու օրհնութեանցն և փառաբանութեանցն արժանի արա զամ՟ հաւատացեալս անուանդ քում սրբոյ, և պահեա ի խաղաղութ՟ե։

Տէր Ած՟ մեր, տո՛ւր զքո խաղաղութ՟իդ ամ՟ աշխարհի. բա՛րձ զցասումն և զպատուհասն ի յարարածոց։ Ողորմեա՛ հարց և եղբարց մերոց, կենդանեաց և հանգուցելոց։ Ողորմեա՛ զեկեղեցի շինողաց, երախտաւորաց, պտղատուից, սպասաւորաց, և այնոցիկ՝ որք ընդ հովանեաւ սբ՟ տաճարիս են հանգուցեալ։

Տէր Ած, օգնեա՛ թագաւորաց քրիստոնէից, և իշխանացն բարեպաշտից. զօրաց և զաւակաց նոցին պահելով ի խաղաղութեան:

Տէր Ած մեր, պահեա՛ զառաջնորդս և զեղբայրութիւնս մեր ամբողջ և անխռով ի կամս ողորմութե քո: Նշանաւ սբ և պատուական խաչիւ քո հալածեա՛ զերեւելի և զաներեւոյթ թշնամին ի սահմանաց մերոց և ի բնակութենէս մերմէ: Փրկեա՛ զմեզ ի հրոյն յաւիտենից: Եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն:

Օրհնեա՛լ եղերուք ի շնորհաց սբ Հոգւոյն. հանգերուք խաղաղութեամբ, և Տէր եղիցի ընդ ամենեսեանդ. ամէն:

ՔԱՂՈՒԱԾ
ՀԱՆԳՍՏԵԱՆ ՇԱՐԱԿԱՆԱՑ

ԱՁ

Քեզ վայելէ Ած օրհնութի. որ յարութիւնդ ես ձայնիւ յաւիտենից նընջեցելոց. թագաւոր և իշխան վերօրհնեմք զքեզ: Ի միւսանգամ գալստեանն քո Քն փառաց թագաւոր. ի ձայն փողոյ նորոգին հոգիք նընջեցելոցն. և յառնեն ի մեռելոց անապական մարմնով: Վասն որոյ և մեք զքեզ աղաչեմք Հայր երկնաւոր. դասաւորեա զնընջեցեալսն մեր ի վերինն քո Երուսաղէմ. ի ժողովս անդրանկաց գրելոց ի յերկինս:

Զայն արկեալ կենարարին աստուածային բարբառոյն. ասէ եկայք օրհնեալք Հօր իմոյ. ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զկեանսն ի հանդերձեալ երկրին: Ընդ առաջ ելանել քեզ հաւատով ի յօդս վերինս. աստուածազգեաց լուսով պայծառացեալ ի դասս անմարմնոցն. ի լսել զձայն երանաւէտ կոչմանն: Ընդ աջմէ քումմէ կացո ընդ իմաստունս սբ կուսանս. ի լուսեղէն առագաստին պայծառացեալ ի դասս անմարմնոցն. ի ժողովս անդրանկաց գրելոց ի յերկինս:

Զհոգիս ծառայից քոց Քրիստոս. ընկալ ի դասս անդրանկաց գրելոց ի յերկինս: Ընկալ վասն նոցա ըզբանաւոր պատարագս ի մէնջ. և շնորհեա նոցա ըզթողութիւն գտանել յաւուրըն յետնում:

Կեր: Ողորմեա ինձ Աստուած: Որ զառաջինն ոչ պահելով ըզպատուիրանն մեռաք. շնորհեցեր քեւ օրինակ մեզ պատուիրան կենաց. զի պահելով

կենդանացուցիչք. ողորմեա ինձ Աստուած: Որ ի խորհուրդ քո կամաւոր մահուամբն եկեղեցի քո Քրիստոս. մեռանելով օրինաց մեղաց. զի յարուցեալ ընդ քեզ նորոգեսցի ի փառս. ողորմեա ինձ Աստուած:

Աղբ: Զայր բազումողորմ. խոստովանիմ առ քեզ որպէս զանառակ որդին. թող ինձ զմեղս իմ եւ ողորմեա: Տէր որ գթացար ի կինն քանանացի. գթա եւ յիս ի մեղաւորս եւ ողորմեա: Տէր որ դարձուցեր զմաքսաւորն ի գիտութիւն ճշմարտութեան. դարձո և զիս զմոլորեալս եւ ողորմեա:

Ղբր: Այսօր գալով ի Բեթանիա քո ամենազօր հրամանաւդ. ձայնեցեր Ղազարու և դողացաւ մահ. դժոխք պարտեցաւ ապականութիւն լուծաւ. կենդանարար Քս կեցո զմեզ: Այսօր գալով ի Բեթանիա զքո զաշխարհակեցոյց ցուցեր զյարութիւն. յառաջագոյն ծանուցեր անապականաբար կոչմամբ զչորեքօրեայն ի թաղմանէ. կենդանարար Քս կեցո զմեզ: Այսօր գալով ի Բեթանիա Եբրայեցւոց մանկունքն ըսքանչացեալ ասէին. զՄարիամու զեղբայրն ի թաղմանէ յարուցեալ որդւոյն Մարիամու. կենդանարար Քս կեցո զմեզ:

Յոր: Ընծաւելի Հօր էակից. ի խաչ ելեր կամաւ Հօր ողորմեա: Անմահութեանց տուող Քս ի գերեզման իջեր որպէս մարդ. ողորմեա: Եւ յերրորդ աւուր յարեար. յոյս յարութեան ցուցար մեզ ողորմեա:

ՀՈԳ. Որ յամի ես ածութի. եւ ի ձայն հընչման իջեր յերկնից սբ Հոգի. ողորմեա մեզ: Որ զամ լընուս զօրութբ քո. եւ ի դասս առաքելոցն իջեր բընակել սբ Հոգի. ողորմեա մեզ: Որ անբաժանելի ես յածութենէ. եւ ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառաքելսն սբ Հոգի. ողորմեա մեզ:

ԱՁՆ: Որ զաւետիս հոգւոյն ի հրեղէն ի հրեշտակէն ընկալար ուրախ լեր. բերկրեալդ Տէր ընդ քեզ Մարիամ ամենօրհնեալ: Անըսկիզբըն Բանըն համեցաւ առնուլ մարդեղութեամբն ըսկիզբն ի կուսէդ. Քրիստոս Աստուած թագաւորն յաւիտենից: Աղաչեմք ըզքեզ սբ Աստուածածին առ Քս բարեխօսեա փրկել ըզժողովուրդս իւր զոր գնեաց արեամբն իւրով:

Խչ: Հրաշակերտ և զօրեղ փայտ խաչի քո Քրիստոս. գաւազան զօրութեան ի յերկրի երեւեալ. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Զոր Հրէիցն ծածկեալ զանթաքչելի ըզգանձըն. փափագմամբ թագուհւոյն փայտ կենաց յայտնեցաւ. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Փառք Հօր: Սա է զէն յաղթութեան հաւատացելոց. ախոյեան և կնիք յաղթող ընդդէմ թշնամւոյն. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք:

Այժմ և միշտ: Հաշտեա ի ձեռըն սբ մարմնոյ և արեան քո Տր. եւ պարգեւեա նոցա դասիլ յաջակողմանըն քո:

ԱԿ

Ձեռքդ քո արարին եւ ըստեղծին զիս ի հողոյ. ի յօրհնել ըզքեզ Աստուած յաւիտեան: Իսկ պատրանօք բանսարկուին խափանեցայ յանճառ լուսոյն և դարձայ անդրէն ի հող յորմէ ստեղծայ: Մխիթարիչ սուրբ Հոգի լուսաւորեա զմեր ննջեցեալսն. եւ հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս քո:

Զայր անոխակալ եւ բարեգութ. մաղթելով հայցեմք ի քէն վասըն մեր ննջեցելոցն. արժանաւորել հանգըստեան օթեվանի սրբոցն: Անճառ ծընունդ Հօր Որդի. որ մահկանացուացս կեանքդ ես. զհոգիս

նընջեցելոց մեր ընկալ. եւ արժանաւորեա հանգըստեան օթեվանի սրբոցն: Եւ նորոգող սուրբ Հոգի յորժամ նորոգես զապականեալսն. յայնժամ շնորհեա եւ մեր ննջեցելոցն արժանաւորել հանգըստեան օթեվանի սրբոցն:

Յորժամ յերկնից գոչէ փողն ազդեցութի անձե-լով տիեզերաց ի դատաստան ահաւոր. յայնժամ աւուր յահեղին մինչեւ Տէր Քր եւ զմեր զննջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբս քո: Յորժամ ճառագայթք ածու-թեանդ փայլեն ի յարեւելից. եւ դըպրութիւնք հրաշիցն բանին. յայնժամ աւուր յահեղին մինչեւ Տէր Քր եւ զմեր զննջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբս քո:

Կէր: Որ առաքեցար ի հայրական ծոցոյ ծածկեալ խորհուրդ ընդ Հօր յաւիտեան. եւ առեր մարմին զմեղուցելոյ նախաստեղծին յանապական կուսէն ան-ճառ միութբ. վասն մերոյ փրկութեան ողորմեա: Որ փոխանակ ճաշակացն դառնութե մահաբեր պըտ-ղոյն. անճաշակ լինելով քո քառասնօրեայ. քաղցրա-ցուցեր յուսով ըղձուած նոր քո օրինաց. վասն մերոյ փրկութե ողորմեա: Որ աջակողմ աւազակին բա-ցեր ըզդուռն դրախտին կենաց. բաց եւ մեզ մե-ղաւորացս ողորմութբ. որք ընդ նմին զքեզ դաւա-նեմք տէր եւ թագաւոր. աղաչեմք զքեզ ողորմեա:

Աղչ: Ծովս կենցաղոյս. հանապազ զիս ալեկոծէ: Մրրրկեալ ալիք. թշնամին ինձ յարուցանէ: Նաւ-ապետ բարի. լեր անձին իմոյ ապաւէն:

Դլ: Այսօր կարգեցաւ օրինակ խոնարհութեան ի յուղղութի վարուց մերոց: Այսօր Տէրն մեր լուա-նայր զոտս աշակերտացն եւ պատուիրէր զայս առնել:

Մի ոմն ի ձէնջ եղբարք մատնելոց է զիս ի մահ. եւ որոշի յաշակերտացդ: Զայն լուեալ Պետրոսի ակնար-կէր առ Յովհաննէս հարցանել թէ ով իցէ: Բանն զոր ասաց Յիսուս տրտմեցոյց զիւր զաշակերտսն եւ խռովեցան ամենեքեան:

Ցուր: Իջեր յերկնից Որդի Աստուծոյ. եւ մարմնացար ի սրբոյ կուսէն. որ անմեկնելի ես ի Հօրէ. ողոր-մեա: Եկիր ի չարչարանս կամաւորապէս Աստուած. եւ խաչեցար վասն ազգի մարդկան. եւ ի գերեզման իջեր անապական. ողորմեա: Զմահ լուծեր եւ զդժո-խարհս ազատեցեր կարողապէս Տէր. եւ ի մեռելոց յարեար իշխանութեամբ. ողորմեա:

ՀՈԳ. Որ առաքեցար ի Հօրէ Հոգիդ անեղ եւ հա-մագոյ. աղաչանօք տնօրինաբար քում էակցին. լի-նել մխիթարիչ սուրբ առաքելոցն. աղաչեմք զքեզ ողորմեա: Որ իջեր տիրաբար յերկնից սաստիկ հող-մոյ նման Ած յայտնապէս. եւ ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար ի դասս առաքելոցն. աղաչեմք զքեզ ողորմեա: Որ արբուցեր երկնաւոր գինեաւն իմաստութեան զհոգիս սրբոց քոց առաքելոցն. որք արբուցին տրտմեցելոց որդւոց Ադամայ զզուարճական ուրախարար յայգւոյն Եդեմայ. աղաչեմք զքեզ ո-ղորմեա:

Ալչ: Ով գերահրաշ ծաղիկ բուրեալ յԵդեմայ. հոտ անմահութե ծնընդոցս Եւայի յորմէ սփռեցաւ մահ ընդ տիեզերս. օրհնութբ զքեզ մեծացուցա-նեմք: Դու լուծիչ երկանց բարձող անիծից. ծագումն արեւու լուսոյն ճշմարտի. որով հերքեաւ խաւարն առաջին. օրհնութբ զքեզ մեծացուցանեմք: Զքեզ ունիմք բարեխօս կոյս ամենօրհնեալ. մայր անարատ

Էմմանուէլի. տաճար Բանին Հօրն երկնաւորի. օրհնութեամբ ընդ քեզ մեծացուցանեմք:

Խղ: Սեղան քո Տէր զօրութեանց հաւատով կանգնեցաւ ի խորանի քում. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Վէմ պատուական ի խորանի քում հիմնեցաւ այսօր. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Փառք Հօր: Ի սմա մատուցանէ ճշմարիտ պատարագ և զենումն անապական. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք:

Այժմ և միշտ: Զարհուրեալ դողան արարածք ի ձայնէ սրովբէական փողոյն. յորժամ հարկանէ հրեշտակապետն եւ կոչէ ի դատաստան զազգս որդւոց մարդկան. յայնմ աւուր յահեղին յիշեա Տէր եւ ըզմեր ըզննջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբս քո:

ԲՁ

Հրեշտակային ձայնիւ օրհնեսցուք զամենասուրբ զԵրրորդութիւնն. փառաւորելով ըզՀայր. որ վերակոչեաց զամենեսեան ի մահուանէ յանմահութիւն: Երգեցէք Տեառն երգ նոր եկեղեցիք սրբեցելոց. Քրիստոսի երկրպագելով. որ վերակոչեաց զամենեսեան ի մահուանէ յանմահութիւն: Սրբասաց ձայնիւ օրհնեսցուք. հոգեւորական հրնչմամբ գովեսցուք. սուրբ զՀոգին փառաւորելով. որ վերահանգոյց զամենեսեան ի մահուանէ յանմահութիւն:

Ի ձայն փողոյ գալստեան քո Տէր ամ՟ հոգիք զարթիցեն կալ ի դատաստանի քում Քրիստոս Աստուած մեր: Յորժամ հնչէ բարբառն ահագին. և հարկանի փող յարութեան մերոյ. եւ մեք գոչելով ասեմք փառք գալստեան քո Տէր: Յորժամ առ-

նես հատուցումն Տէր և սուրբք քո պարծեսցին ի քեզ. եւ մեզ շնորհեսցես փրկիչ կալ ի յաջմէ քումմէ:

Թագաւոր անմահ արարիչ յաւիտենից. մարդասիրութեամբ քո խնայեա յանձինս մեր. ստեղծիչ կենդանեաց և հանգուցիչ ննջեցելոց: Ի խաչին բեւեռեցար. զմահու լուծեր զիշխանութիւն. յաւիտենից ըզննջեցեալսն վերածեր յանմահ ի կեանս. ստեղծիչ կենդանեաց և հանգուցիչ ննջեցելոց:

Կէր: Ըստ աւետեաց մարգարէին որ առ փրկեալքս արեամբ գառինդ. ցընծամք եւ մեք ծառք անտառի ընդ գալուստ Տեառնդ կրկնակի. շնորհեա մեզ Տէր ընդ արդարոցն ընդ առ ի քէն տնկեալ ծառոցն. այժմ յուսով զուարճանալ եւ յերկրորդին ընդ քեզ ցընծալ: Սրբին նման տայ աւետիս Զաքարիաս նոր Սիովնի. եթէ ուրախ լեր ահա գայ առ քեզ խոնարհ եւ հեզ արքայ. նստեալ ի յէշ և յաւանակ կրկին ազանց գոլ օրինակ. նստեալդ յաթոռ քերովբէից նիստ գթութեամբ ի մեր հոգիս: Զահեղ փառաց քոց երեւումն որ լինելոց է յերկրորդումն. ետես Դաւիթ յառաջագոյն ծանոյց կանխաւ ազդմամբ Հոգւոյն. թէ յայտնապէս Աստուած գայցէ հուր առաջի իւր բորբոքէ. յայնժամ Յիսուս ի մեզ խնայեա գթած Քրիստոս եւ ողորմեա: Աստուածածին ամենօրհնեալ յերկրէ երկնից հարսն ընծայեալ. յորժամ բազմիս լուսոյ նման քո միածնիդ յաջակողման. յայնժամ մաղթեա ընդ մեր ըզնոյն փրկել ըզմեզ յահեղ բոցոյն. համադասիլ ընդ արդարոցն երգել ըզփառս ընդ երկնայնոցն:

Աղչ: Դարձո զցասումն քո ի մէնջ յաղաղակել հողեղինացս. բազմագութ Տէր խնայեա և մի կո-

րուսանէր։ կանգնեա զանկեալս ի գլորմանէ զվերաւորեալս ի թշնամւոյն. որ բժիշկդ ես հիւանդաց բժշկեա զիմ զհիւանդութիւնս։ Ի յանցանաց իմոց թախծեալ անձն իմ գոչեմ որպէս զմաքսաւորն. Աստուած քաւեա զիս զմեղաւորս։

Ղզր։ Յաստուածային ձայնէ գոչմանն սարսեցին դողալով կարապետուք դժոխոց. եւ մեռեալն եկն արտաքս անապական։ Կացեալ ի դուրս այրին եւ ձայնէր ազդարարող բարբառովն ի գերեզմանն. Ղազարէ եկ արտաքս անապական։ Ելեալ ի գերեզմանէն երիզապինդ պատանօքն մեռեալն. հրամայեաց լուծանել ի կեանսն յաւիտենից։

Յոր։ Իջեր յերկնից Որդի Այ ազատեցեր զարարածս. անկանիմ առաջի քո ողորմեա ինձ Աստուած։ Ի խաչին բեւեռեցար Աստուած եւ զմարդն ի կապանաց մահու արձակեցեր. եւ զիս մի անտես առներ որ մեղօք եմ մեռեալ։ Ծագումն հօր յանմատոյց լուսոյն որ իջեր ի գերեզման. կենդանացուցեր զարարածս քո. եւ զիս մի անտես առներ քանզի քեզ միայնոյ մեղայ։

ՀՈԳ. Սարսափելի հողմոյ նման ահեղագոչ սաստիկ հնչմամբ. երեւեցար ի վերնատանն Հոգիդ դասուն երկոտասանն. որք առ ի քէն մկրտեցան որպէս զոսկի հրով մաքրեցան. մաքրեա ի մէնջ զմէգ մեղաց եւ զգեցո զլոյս փառաց։ Եկիր յերկիր աստուածաբար դատել զաշխարհս իշխանաբար. Ընդ արդարութեան եւ ընդ մեղաց եւ ընդ չարին դատաստանաց. բացեր զգանձդ անհնութական պարգեւս ետուր որդւոց մարդկան. մաքրեա ի մէնջ զմէգ մեղաց եւ զգեցո զլոյս փառաց։ Սէրն ի սիրոյ զսէրդ առաքեաց յինքն

զանդամս իւր քեւ յօդեաց. զեկեղեցի իւր զոր շինեաց եօթն սեամբ քո հաստատեաց. տունս ի նմա եդ զառաքեալսն եօթնեակ շնորհօք քո զարդարեաց. մաքրեա ի մէնջ զմէգ մեղաց եւ զգեցո զլոյս փառաց։

Ածն։ Խոնարհեցար ի բարձանց եւ մարմնացար ի կուսէն. որ նստէիրդ ի քրովբէս արարիչդ արարածոց։ Երկինք չէին բաւական փառաց անմահ անեղիդ արգանդ կուսին ժուժկալեալ ընդունել զգանձդ երկնային։ Յորմէ սարսեալ սերովբէքն ոչ իշխէին մերձենալ. ի խանձարուրս պատեցար եւ եդար ի մսուր յանբանից։

Խչ։ Այսօր խնդրի պատուական փայտ խաչին աւանդեալն ի Գողգոթա ի ձեռն աստուածասէր դշխոյին. Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային սբ նշանիս։ Այսօր ընծայէ Գողգոթա զծածկեալն ի յերկրի. վերաբերեալ անուշահոտ խնկովք. ի ձեռն երանելւոյն Յուդայի. Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային սբ նշանիս։ Փառք Հօր։ Այսօր ի ձեռըն փրկական սբ խաչին կենսագործի պատանին մեռեալ. եւ ողբայ սատանայ զկործանումն իւր. Իսկ մեք Քնի հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային սբ նշանիս։

Այժմ եւ միշտ։ Արժանաւորաց քոց աղօթիւք. յիշեա զմեր զննջեցեալսն յորժամ գայցես անճառ փառօք հատուցանել մարդկան ըստ գործս. եւ մեր ննջեցելոցն շնորհեա դասիլ ընդ սբս քո։

ԲԿ

Քեզ վայելէ Աստուած օրհնութի որ յանմատոյց աթոռ անմահից փառաբանիս ի բարձունս. զննջե-

ցեալըն յանուն քո ընկալ. յերկնային քո ծբ յառագաստ. որ միայնդ ես մարդասէր: Որ ունիս իշխանութիւն մահու և կենաց. յիշեա զհոգիս ննջեցելոց մերոց. և հանգո ընդ սուրբս քո ի խորան քում սիրողաց. որ միայնդ ես մարդասէր: Որ յամի ես օրհնեալ Տէր. արժանի արա ըզծառայս քո վերըստին նորոգման. ի լնուլ ըզձայն ածային փողոյն. ընդ առաջ ելանել քոց փառացդ. որ միայնդ ես մարդասէր:

Թագաւոր խաղաղութեան որ քաղցրութեամբ խնամես զքո զարարածս. յիշեա Տէր զհոգիս ննջեցելոցն ընդ ծբըս քո. և դասաւորեա ի յաւուրն այցելութեան: Որ կոչեցեր ի դրան մահու ըզսիրելին քո զՂազարոս. և ծանուցեր զածութիւնդ ընդհանուր տիեզերաց. լուսաւորեա Տէր զհոգիս ննջեցելոցն ընդ ծբըս քո. և դասաւորեա ի յաւուրն այցելութեան: Ի տաճարի քում սրբութեան մատուցանեմք քեզ պաղատանս արտասուալից. պայծառացո Տէր զհոգիս ննջեցելոցն ընդ ծբըս քո. և դասաւորեա ի յաւուրն այցելութեան:

Ի գիշերաց կանխեալ սաղմոսիւք և արտասուօք հայցեմք ի քէն. Քրիստոս յիշեա զննջեցեալսն ի ծբ անուանդ քո. և հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս քո: Որ յանմարմնոց վերօրհնիս. առ քեզ կարդամք և պաղատիմք. Քրիստոս յիշեա զննջեցեալսն ի ծբ անուանդ քո. և հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս քո:

Կեր: Որ պատուիրան ճշմարտութեան աւանդեցեր եկեղեցւոյ քո Քրիստոս. անսահման ժամանակաւ աղօթել միշտ առ Աստուած հոգւով և մտօք: Որ ըզբան քո օրհնաց հաստատեցեր գործով մեզ

օրհնակ. հանելով ըզգիշերն ի գլուխ յաղօթսն Աստուածոյ. բնութեամբ մերով տնօրինաբար որում կրկնի ծունր ամենայն: Վասն որոյ և մեք պաղատեսցուք առ քեզ Քրիստոս. շնորհեա մեզ յամենայն ժամ լինել քեզ յանդիման մաքուր աղօթիւք ըստ անմարմնոցն որ յերկինս: Աղաչանօք Աստուածածնին անապական քում ծնողին. զիմանալի աչս սրտից մերոց. բացցես ողորմութեամբ հայել ի լոյս քո Քրիստոս:

Աղ: Յամենայն ժամ աղաչանք իմ այս ես:մն. ի մեղաց իմոց սուրբ արա զիս Տէր: Յանցանաց իմոց զարհուրի սիրտ իմ:մ աղաչեմ ըզքեզ թող ինձ Տէր: Արտասուաց իմոց մի լռեր Տէր:մր. զի պանդուխտ եմ ես յանցաւոր երկրի:

Գշր. Իմաստուն կուսանքըն պատրաստեալ էին լապտերօք. ելին ընդ առաջ երկնաւոր փեսային վառեալ լապտերօք: Իսկ յիմարաց կուսիցն ունայնացեալք ի յիւղոյն. անպատրաստ գտան գալըստեան փեսային շիջեալ լապտերօք: Վասն որոյ և մեք պատրաստեսցուք իւղ հոգեւոր. զի մտցուք ի յառագաստ անմահ փեսային վառեալ լապտերօք:

Յուր: Ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա: Որ ի յերկնից իջեր Բանդ Աստուած. և վասն մեր մարմնացար ի սրբոյ կուսէն. ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա: Որ ի խաչին տարածեցեր զանարատ բազուկս քո. և վասն մեր հեղեր զարիւն քո սուրբ. ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա: Որ ի գերեզմանի եդար անապական. և յարուցեալ նորոգեցեր զաշխարհս. ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա: Որ ի յերկինս համբարձար ամենակա-

րող. և ընդ աջմէ Հօր նըստար յաթոռ փառաց. ո-ղորմեա ինձ Աստուած իմ ողորմեա:

ՀՈԳ. Իջեր Տէր ողորմութբ քո յաշխարհ. եւ ըզ-մեռեալ բնութիւս ի կեանս վերափոխեցեր: Նըստեր Տէր առ Հայր փառօք ի յերկինս. և մըխիթարիչ ա-ռաքելոցն առաքեցեր սբ զՀոգիդ: Բացեր Տէր այսօր ըզդրանդ երկնային. և բաշխեցեր առատապէս պար-գեւս աղքատ բնութեանս:

ԱՁՆ. Որ ողորմեցար ի մեղս ծնեալ մարդկան Հայր երկնաւոր ըստ մարգարէին. եւ ետուր բնութեանս այսօր պարգեւ ըզկոյսըն սուրբ ըզծնող Որդւոյդ մի-ածնի. * մաղթանօք սորա Տէր մեզ ողորմեա: Որ ցօ-ղեցեր ի մեզ յամպոյ ծրինաց Որդիդ այսօր զկոյսըն Մարիամ. յորմէ ծընար մարմնով և բարձեր նովաւ ըզմեղս նախաստեղծին Ադամայ. մաղթանօք: Որ մա-քրեցեր Հոգիդ սբ ըզսիրտ և զարգանդ մօր քո փա-ռակցին. այսօր ամուլ ծնողաց նորին ետուր ըզմայր Բանին զօրհնիչն Եւայի. մաղթանօք:

ԽՆ. Ճառագայթ փառաց Հօր Որդիդ միածին. որ ըզլոյսդ անվայրափակ մարմնով պարագրեալ. * այսօր ի Թաբօր փառօք փայլեցեր: Որ աննիւթ սրովբէից անհաս ես վեր քան ըզբան. ծառայի կերպիւ պարա-ծածկեալ ըզլոյսդ անըստուեր. այսօր: Փառք Հօր: Որ հրեղինացն անմերձենալի հուր ածութեդ. ի հողե-ղէնս խոնարհեալ լոյսդ արփիական. այսօր ի:

Այժմ և միշտ: Որ մարմնացար վասն մեր. աղաչա-նօք Ածածնին. Քրիստոս յիշեա զննջեցեալսն ի նը անունըդ քո. և հանգո զհոգիս նոցա ընդ սուրբըս քո:

ԳԶ

Ի ձայն մեծի զուարթնոյն և ի հնչումն հրաշալի փողոյն. ուր հողացեալ մարմինք մարդկան նորոգին. * յայնժամ աւուր յահեղին յիշեա Տէր և ըզմեր ըզննջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբըս քո: Յոր-ժամ նշան տէրունեան ճառագայթիւք փայլէ. և թագաւորըդ թագաւորաց փառօք տեսանիս. յայնժամ աւուր: Յորժամ ատեան դատաստանին դընի. և դըպրութիւնք հրաշիցըն բանին. յայնժամ աւուր:

Որ երկայնամիտդ ես Տէր. քաղցր և անոխակալ. հանգո զհոգիս քոց ծառայից. * զի մի դարձցի տնանկ ամաչեցեալ յաւուրն ահեղ ատենին: Զյիշատակ հրաժարելոցն ի հաճոյս քեզ ընկալցիս. եւ զխոստըս մեր ընկալ որպէս զԱբէլին զնուէրն և զԱբրահամուն. զի մի դարձցի: Ի խորան քում սիրողաց հանգուսցես ըզծառայս քո. եւ զհոգիս նոցա դասեսցես ընդ սուրբըս քո. զի մի դարձցի:

Որ խոնարհեցար յերկնից Բանդ Աստուած. և առեր մարմին ի սրբոյ կուսէն. * յիշեա ըզննջե-ցեալըսն մեր յորժամ գայցես անճառ փառօք. զի դու ես Տէր ամենայն երկրի: Որ ունիս իշխա-նութիւն մահու եւ կենաց. եւ խաչիւդ քո լուծեր զերկունըս մահու. յիշեա ըզննջ:

ԱԷր: Որ արարեր զօրութբ զիմանալեացն աշխարհ վերին. եւ ի նմա հաստատեցեր տընտես ըզպետըս հրեղինաց. * օրհնեմք զանհասանելի զօրութիդ: Որ տիրապէս մեծատուրդ ստեղծեր երկրորդ աշխարհ զգալի. եւ ի դրախտն որ յԱդենի տընտես եդեալ զմարդն առաջին. օրհնեմք: Որ շինեցեր բարձրա-գոյն զեկեղեցի քո խորհրդեամբ. եւ ի սմա կար-

գեալ տընտես զքարոզս բանին ճըշմարտութեան. օրհնեմք զանհասանելի զօրութիւն: Անտանելոյն տաղաւար բարձրոց էիցըս բարձրոյն. որ ծընար զԱծ մարմնով զանմարմնաբար ծընունդըն Հօր. բարեխօսեա վասըն մեր Աստուածածին Մարիամ:

Աղէ: Զերծո զիս յորոգայթէ որսողին. եւ յամենայն վտանգից ապրեցո. եւ ողորմեա: Յաներեւոյթ թըշնամւոյն եւ ի գաղտնինետից բանսարկուին պահեա. եւ ողորմեա: Փըրկեա զիս ի յանցանաց մեղաց իմոց. եւ նորոգեա զիս հոգւով գիտութեան. եւ ողորմեա:

Գզր: Երկոդդ ըղւոյս որպէս զօթոց. այսօր անճառ խոնարհութբ ի վերնատունըն խորհըրդոյ. ըզգեստ ծառայի ըսփածանել յանձն առեր. օրհնեմք զեկեալդ ի կամաւոր չարչարանս: Որում երկըրպագեն դասք հրեշտակաց. խոնարհեցար ի լուանալ զոտըս հօղեղէնս. բըժըշկել սուրբ ըզգարշապարս նախահօրն. բըժըշկեա զհոգւոյ իմոյ զհիւանդութի: Որ ի խորհուրդըս փըրկականս եկեղեցւոյ. բաշխեցեր աշակերտացն զմարմինըդ քո նորոգելով ըզմահացեալսն ի ճաշակմանէ. հաղորդս այսմ ընկալ ըզմեզ միայն մարդասէր:

Յ-ր: Յամենայնի բազումողորմ Աստուած. նայեա յիս գըթութեամբ եւ խնայեա. * ող դու միայն ես մարդասէր: Եւ խաչիւըդ քո. կենարարաւ պահեա. եւ յարութբըդ քո փրկեա եւ ապրեցո. ող դու: Եւ ի միւսանգամ ի գալըստեան քո Տէր. վերըստին զիս նորոգեա եւ ապրեցո. ող դու:

ՀՈԳ. Որ համագոյդ ես Հօր եւ Որդւոյ. անճառաբար բըղխումն ի միշտ Էէն. այսօր. բըղխեցեր ջուր

կենդանի յերուսաղէմ. * Հոգի Աստուծոյ ողորմեա: Որ արարչակից ես Հօր եւ Որդւոյ. որով կենդանածնեալք ի ջուրս արարածք. այսօր. որդիս Աստուծոյ ծնանիս ի ջուրց. Հոգի: Որ փառակից ես Հօր եւ Որդւոյ. եւ քըննես ըզխորս Աստուծոյ. այսօր. խորագէտս իմաստից զյիմարս աշխարհի արարեր. Հոգի:

Աձն: Դասք անմարմնականք երկնաւոր զօրացն ի մէջ հովուացն օրհնէին ըզծնունդըն լուսոյ. ծնելն ի Հօրէ մեզ ի փըրկութիւն: Եւ մոգքըն աստեղը նըշանաւ եկին ի Բեթղեհէմ երկիր պագին Տեառն. եւ ի յայրին մատուցին զընծայս խորհըրդոյ: Եւ հովիւքըն երգեն ընդ հրեշտակս փառք ի բարձունս մեծին Աստուծոյ. որ եկիր եւ փըրկեցեր ըզտիեզերս քոյով յայտնութեամբդ:

Խչ: Վէմ Քրիստոսի կաթողիկէ եկեղեցւոյ շնորհօղի. զյաղթական ըզպատուական զաստուածընկալ սուրբ նըշանս. մատուցանեմք զօրհներգութիւն միշտ ի բարձունս: Սա կամաւ քո Քրիստոս եւ թեւօք ամենազօր սուրբ Հոգւոյն. եւ դասուք հրեշտակաց Թռուցեալ եկաւորի. ի լեառըն Վարագայ բընակել ի նմա: Փառք Հօր: Եկայք ժողովուրդք երկրպագեսցուք աստուածային սուրբ նըշանիս. համբարձէք միաբան ըզձեռըս ձեր ի սըրբութի. եւ ըզընակեալն ի սմա միշտ փառաւորեսցուք:

Այժմ եւ միշտ: Ի նըստել քո յատենի դատաւոր ահեղ. աղաչանօք սրբ Աստուածածնին յիշեա ըզննջեցեալըսն մեր յորժամ գայցես անճառ փառօք. քանզի քո են փառք յաւիտեանս ամէն:

Գ կ

Լոյս ի լուսոյ զմեզ լուսաւորեա. որ փառօք Հօր հանդերձեալ ես գալ ի դատել զերկիր. * արժանաւորեա եւ զմեր զննջեցեալսն անճառ խոստմանց քոց ընդ սրբս քո: Հօր եւ Հոգւոյ համագոյակից. ի տիեզերական ահեղ ատենին. արժանաւորեա: Երկնի եւ երկրի արդար դատաւոր յորժամ հատուցանես ըստ գործոց իւրաքանչիւրոց. արժանաւորեա:

Որ արարիչդ ես հրեղինաց եւ հողեղինաց. եւ մշտընջենաւոր փառաբանիս ի բանաւոր պաշտօնէից. * ի քէն հայցեմք թողութիւն շնորհեա ննջեցելոց մերոց: Որ ի յերկրի երեւեցար եւ ընդ մարդկան բնակեցար. և անմահութիւն պարգեւեցեր մեզ մահացելոցս. ի քէն հայց: Յորժամ նստիս յաթոռ փառաց դատողական իշխանութեամբ. և փառաւորես առ ի քէն փառօք ըզգենս արեան քո Տէր. ի քէն:

Որ անբաւ քո մարդասիրութեամբդ. գթացար յազգըս մարդկան. ծնար ի կուսէն. ըզծնեալըս մէ աւազանաւն * զննջեցեալսն մեր ընդ սուրբս քո հանգո թագաւոր յաւիտենից: Որ ի վերայ խաչին զենար որպէս գառն. եւ զմարմին և զարիւնդ քո բաշխեցեր ի փրկութիւն աշխարհի. զհաղորդեալս մարմնոյ քո և արեան. զննջեց:

Կէր: Օրհնեմք զքեզ անսկիզբըն Հայր Որդւոյդ միածնի. զոր առաքեցեր ի դարձումըն մոլորեալ ոչխարին. դարձո եւ զմեզ ի մեղաց Որդւոյ քո չարչարանօք: Գովեմք զքեզ Բան եւ լոյս որ զտէրական քո պատկեր. լուսով ծրագի քո գտեալ վերականգնեցեր. կանգնեա զանկեալքս մեղօք քոյին սուրբ չարչարանօք: Բարեբանեմք զփառակիցդ

Հօր զՀոգիդ ճշմարիտ. որ նորոգեցեր զհնացեալքս մեղօք հնոյն Ադամայ. նորոգեա եւ զմեզ ի մեղաց նորոգութեամբ քո շնորհաց: Ուրախացիր բարձրելոյն հովանացեալ զօրութեամբ. եւ բնակարան սուրբ Հոգւոյն որով ծնար զԲանն Աստուած. բարեխօսեա վասըն մեր Աստուածածին Մարիամ:

Աղւ: Քրիստոս Աստուած աստուածոց. ողորմեա: Անօրէնութեամբ ի մեղս երկնեաց զիս մայր իմ. աղաչեմ փրկիչ. ողորմեա: Վիրաւորեալ մեղօք անկանիմ առ քեզ փրկիչ. մի անտես առներ. ողորմեա:

Աղւ: Շնորհեա մեզ Տէր ընդ աղքատաց օրինակին Ղազարու ժուժկալութիւն. զի կամաւոր աղքատութեամբ արքայութեանդ երկնից ընդ նմին լիցուք արժանի. * Լուր մեզ և ողորմեա Քրիստոս Աստուած: Որ փոխանակ հացին կարօտութեան զհացն անմահութեան նըմա շնորհեցեր. եւ ընդ մեծատանն անգթութեան ի գոգն Աբրահամու զնա ընկալար. լուր մեզ և: Լուսաւորեա զաչըս սրտից ստանալ մեզ ողորմութեամբ ի քէն Տէր զողորմութիւն. զի մի ընդ մեծատանըն հայցեսցուք ի բոց հնոցին ծագիւ մատին ջուր ի զովացումն. լուր մեզ և:

Յօր: Որ տրտմահաղորդ քո չարչարանօք խաչին. ազատեցեր զմարդն ի տրտմագգեաց փայտէն և ի մեղսաճաշակ պտղոյն. * Քրիստոս Աստուած եւ մեզ ողորմեա: Որ մահուամբ քո կենդանի և մեռելութեամբըն յերկրի. նորոգեցեր դարձեալ զաշխարհս եւ զհողացեալ բնութիւնս. Քրիստոս: Որ երեքօրեայ յարութեամբ քո և համբարձմամբըդ յերկինս. վերածեր զմարդն առ կենաց փայտն եւ անմահական ճաշակն. Քրիստոս:

ՀՈԳ. Զանսկզբնաբար բղխումն ի Հօրէ և յՈրդւոյ զՀոգին ճշմարիտ. որ հնչմամբ ձայնի էջ ի վերնատունն այսօր նման սաստիկ հողմոյ. * զոր փառաւորեմք հոգեւոր երգով: Զհամագոյակիցն Հօր եւ Որդւոյ զբաշխողն շնորհաց. որ ի հրեղէն լեզուս բաժանեալ զբանն ընտրութեան լեզուաց շնորհեաց սուրբ առաքելոցն. զոր փառաւ: Զաղբերն իմաստութեան զկատարեալն անձնաւորութեամբ. որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս. զոր փառ:

Ածն: Աստուածածին խորան լուսոյ անվայրափակ արփւոյն կենաց. որ եղեր արեւելք արեգականն արդարութեան. եւ նստելոցս ի խաւարի լոյս ծագեցեր. * վասն որոյ ամենքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք: Անապական տաճար եւ մօրենի անկիզելի. որ զանէջ հուր աստուածութեան ի քեզ տարեալ կրեցեր. որով բնութեանս կիզեալ շիջաւ կրից բոց. վասն որոյ: Կենդանի տապանակ կտակարանաց նորոյ ուխտիս. որով եմուտք յերկիր աւետեաց հոգեւորեալ. Հոգւով ի քեզ տպաւորեալ Բանին. վասն որոյ:

Խչ: Ով պահապան որ ծագեցար յԵդեմայ. նշան յաղթութեան ընդդէմ աներեւոյթ թշնամւոյն: Դու փակելոյ դրախտին բացող եւ առաջնորդ աւազակին. որ զբոցեղէն սուրն կապտեցեալ անեղին հրամանաւ: Փառք Հօր: Քեւ ցնծան ըստորայինքս ամ ի միասանգամ քո գալստեանն. եւ յաւէժ զուարճանան դասք անմարմնոցն առէխս:

Այժմ և միշտ: Որ ըստ նմանութեան մահու քո տնկակիցս արարեր. եւ երկնից արքայութեանդ ժառանգորդ լինել խոստացար. զհաւատացեալս գալստեան քո Տէր. ըզննջեցեալսն մեր ընդ սուրբս քո հանգո Թագաւոր յաւիտենից:

ԴՁ

Բանդի զքեզ օրհնեն իշխանութիւնք երկնից Թագաւոր փառաց. ամենակալ ամենակարող թող ըզմեղս մեր ննջեցելոցն. * և հանգո ի խորանի քում ի յարքայական ի հանգստեան: Որ ի նախնումն ըզմարգարէն Մովսէս լուսաւորեցեր աստուածային փառօք տեսլեամբ աստուածութեանդ քո. լուսաւորեա և ըզմեր ըզննջեցեալսն. և հանգո: Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի ծնողի և մօր քո յիշեա զգինս արեան քո Տէր. և դասաւորեա յերանաւէտ յանթառամ և յանտրտում ի կեանս. ի յարքայական ի հանգստեան:

Փառք քեզ Հայր. որ կենարար ես մարմնոյ եւ գոյացուցիչ հոգւոյ. * ընկալ զօրհնաբանող հոգիս յանմահական քո հանգիստ: Մարդասիրի Հօր Որդի. որ պատկերակից եղեր հողեղինացս եւ խաչեցար. ընկալ: Ամենազօր սուրբ Հոգի որ անդորրիչ ես նեղելոց եւ մխիթարիչ հոգւոց. ընկալ:

Ի հանգիստ քո Տէր ուր ամենայն սուրբք քո հանգչին. հանգո զհոգիս ծառայից քոց * ընդ սուրբս քո մարդասէր: Դու Աստուած. որ իջեր ի դժոխս. զերկունս մահու լուծեր ըզկապեալսն արձակեցեր. և զհոգիս ծառայից քոց հանգո ընդ սուրբս:

Կեր: Որ զօրէնս սրբութեան պահոց նախ ի դրախտին աւանդեցեր. զոր ոչ պահելով նախաստեղծիցն ճաշակմամբ պտղոյն ճաշակեցին ըզդառնութիւն մեղաց եւ մահու. վասն որոյ շնորհեա մեզ Տէր ճաշակել ըզքաղցրութիւն քոյ պատուիրանաց: Որ զանազան վիրօք մեղաց հարաք յոգիս ի թշնամւոյն. եւ ի բազմապատիկ հիւանդութիւնս. կարօտացաք Մարդասիրիդ բառնալոյ ըզցաւս մեր. վասն որոյ

բըժըշկեա ըզմեզ Քրիստոս որպէս մարդասէր: Որ եկիր ի փրկութիւն մարդկան ծնընդեամբ կուսին Մարիամու. եւ կենդանարար քո յարութեամբ. հրաւիրեցեր ըզմահացեալքս ի յարութիւն անմահութեան. վասն որոյ աղաչանօք մօր քո կեցո զմեզ փրկիչ:

Աղւ: Համբառնամ առ քեզ Տէր զանձն իմ. նայեա յիս գըթութեամբ քո. եւ ողորմեա: Զի ես յոյս եւ ապաւէն իմ. զերծո զիս յորոգայթէ մեղաց. եւ ողորմեա: Ապրեցուցիչ իմ եւ փրկիչ իմ. ապրեցո զիս յորոգայթէ մեղաց. եւ ողորմեա:

Դշբ: Զգալուստ քո Քս այսօր յերուսաղէմ նոր եկեղեցի սուրբ. յաղթական երգով բարեբանեմք. * Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն: Որ վասն մերոյ փրկութեան յաւանակի նստեալ յանձն առեր. ընդ մանկունսն բարեբանեմք. Օրհնեալ: Թագաւոր երկնաւոր. զեկեղեցի քո անշարժ պահեա. եւ զերկրպագուս անուան քում պահեա ի խաղաղութեան:

Յոբ: Զյարութիւն Աստուծոյն հրեշտակապետն այսօր աւետէր կանանցն ասելով. * յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն: Ընթացեալ կանանցն խնդութեամբ պատմէին աշակերտացն ասելով. յարոյց: Վասն որոյ եւ մեք ընդ հրեշտակին գոչեսցուք զյարութիւն քոյ. որ փրկեացն ըզմեզ ի ձեռաց մահու:

ՀՈԳ. Կենդանարար Աստուած մարդասէր Հոգի. ըզժողովեալսըն միաբանական սիրով լուսաւորեցեր հրեղինօք լեզուօք. * վասն որոյ եւ մեք այսօր տօնեմք ըզգալուստ քո սուրբ: Զուարճացան քո գալստեամբըն սուրբ առաքեալքն. կոչելով ի միասին ըզցրուեալսն ի միմեանց բազմաձայն լեզուօք. վասն որոյ: Հոգեւորական սէր միաբանութեան զար-

դարեցեր նոքօք ըզտիեզերս. ի զգեստս լուսափայլս եւ նորափետուրս. վասն որոյ:

Աճն: Ծագումըն հրաշալի որ անյայտ էր ի մէնջ. եւ բանըն հայրական անըմբռնելի. հուր փայլակնացեալ եւ ի մարմնի բնակեցաւ. անվնաս պահելով զարարածս ամենայն: Ծագումըն հրաշագործ որ ի կուսէն ծագեցաւ. ճառագայթելով զարարածս ամենայն. երկինք ցընծային եւ երկիր ուրախանայր. եւ Քրիստոս Աստուած ընդ մարդկան շրջեցաւ: Առ քեզ ապաւինիմք ամենասուրբ Հոգի. գերագոյն եւ հրաշալի եւ բաշխող բարութեանց. աղբիւր ես ծարաւեաց եւ հանգիստ աշխատելոց. եւ եղեր վերընկալ աստուածային բանին:

Խղ: Զօրութիւն մեծ խաչի քոյ Քս որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի. * սա պահեսցէ ըզմեզ յամ փորձութենէ: Քանզի ի սմա բարձրացար Աստուած. եւ ի սմա հեղեր ըզպատուական մեծ զարիւնըդ. Սա պահեսցէ: Փառք Հօր: Եւ ըզքո միւսանգամ ըզգալուստըդ. նըշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի. սա պահես:

Այժմ եւ միշտ: Ընդ հոգւոցն արդարոց կատարելոց եւ զհոգիս ծառայից քոց հանգո ընդ սուրբս քո մարդասէր:

ԳԿ

Հայր անըսկիզբըն բարեխնամ մարդասէր. որ ստեղծիչդ ես հոգւոց եւ մարմնոց. յիշեա զննջեցեալսըն մեր. * եւ հանգո ընդ սուրբս քո: Որդիդ միածին. որ գթածդ ես առ ամենեսեան. եւ խաչիւ եւ արեամբ գնեցեր ըզքո ժողովուրդս. յիշեա զգինս արեան քո Տէր. եւ հանգո: Հոգիդ ճըշմարիտ. որ աղբիւրդ ես

անըսպառելի. եւ լըցուցիչ ամ բարութեց. յիշեա զնընջեցեալսըն մեր. եւ հանգո ընդ սըբս քո:

Խընդրեմք ի քէն թագաւոր փառաց փառաւորեալդ ի զուարթնոց. * զննջեցեալսըն մեր ընկալ մարդասէր Տէր. եւ հանգո ընդ սուրբս քո: Յորժամ գաս փառօք Հօր դատել զերկիր արդարութեամբ արեգակն. զննջեցեալսըն: Ի՞ նստել քո յաթոռն դատաւոր ահեղ Քս փրկիչ մեր եւ յոյս. զննջեցեալսըն:

Ո՞վ արարիչդ ես արարածոց հանգուցեալդ ի հրեղէն կառս. * յիշեա զհոգիս ննջեցելոց մերոց. եւ հանգո ընդ սուրբս քո: Ո՞վ երկայնամիտդ ես առ ամենեսեան. և ներող յանցանաց մերոց. յիշեա:

Ներ: Բանն որ ընդ Հօր յէութեան եւ համագոյ ընդ Հոգւոյն. ըզպատկերն հրական խառնեալ ընդ հողանիւթ բնութեանս. զոր զարդարեալ փառօք եդ ի դրախտին փափկութեան: Յորում ցնծայր զուարճացեալ անտրտրական խնդութեամբ. քանզի զԱծ տեսանէր միշտ խոնարհեալ ի դրախտին. յորմէ զլուսոյն ճառագայթ տըպաւորէր ի յինքեան: Վասն որոյ աղաչեա մայր Աստուծոյ Մարիամ զմիածին քո զՈրդին զի շնորհեսցէ 'ստ աւազակին. ժառանգել վերստին մեզ ըզդրախտին վայելչութիւն:

Աղչ: Քրիստոս Աստուած յոյս ապաշխարողաց. շնորհեա զթողութիւն բազում յանցանաց իմոց: Առ քեզ բազմագութ ապաւինեալ կարդամք մի մերժեր ըզմեզ յողորմութենէ քումմէ: Որպէս զաւազակն աղաղակեմ առ քեզ. յիշեա եւ զիս Տէր ի քում արքայութեանդ:

Ղչ: Յիսուս միածինն անմահութեանց պարգեւատուն երեւեցաւ մեզ. խափանեաց զզօրութի

մահու: Բըղխմամբ արտասուաց Մարիամու և Մարթայի անկեալ առ ոտսն Տեառն. խնդրէին զնորոգումն եղբօրն: Բանիւ Բանն Աստուծ կենագործեաց ըզՂազարոս ի թաղմանէն. և եկեալ արտաքս անապական:

Յոր: Յորժամ եկին ի գերեզմանն իւղաբեր կանայքն. եւ բերին ըզխունկս ի խնկել զանապական մարմինն: Յայնժամ հրեշտակն աւետարանէր յարեաւ Քրիստոս. պատմեցէք աշակերտացն զյարութիւն Տեառն: Իսկ նոքա զարհուրեալ վս ահագին տեսլեանն. պատմէին աշակերտացն զահագին տեսիլն:

ՀՈԳ.. Ի՞ համբառնալ Բանին յերկինս եւ ի նստել ընդ աջմէ Հօր. զուարճացեալ առաքելոցն երկրպագէին. օրհնելով * ըզՀայր զառաքող Հոգւոյն: Համահաւաքեալ գունդք սրբոցն ի վերնատունըն խորհըրդոյ. համբարձմամբ աչաց սպասէին Հոգւոյն. օրհնելով ըզՀայր: Յանկարծահաս հնչմամբ հեղեալ կենդանարար աղբեր լուսոյ. անմահական կենաց լուսով զարդարեալ. որք օրհնէին ըզՀայր:

Ածն: Ամենածածին մայր եւ կոյս. ծագող արեգականն արդարութեան. որ լուսաւորեաց ըզմեզ. * հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք. եւ փառաւորեմք ըզմիածին քո զՈրդին: Ելոյծ զօրէնըս բնութեան մարդկան. հրաշափառ քո ծընունդ. եւ զէութիւն բնութեանն ամբողջ պահեալ. եւ կուսութեանդ քո ոչ խախտեցան կընիք. հոգեւոր: Զքեզ մորենի անկէզ. լեառն վիմածին. դուռն փակեալ եւ աղբեր կնքեալ. նախատեսացն գուշակեալ մայր եւ կոյս. հոգեւոր:

Խչ: Խաչի քո Քս երկրպագեն արարածք ամենայն. որ ի փրկութիւն մեզ կանգնեցաւ. սա եղեւ մեզ

պահպան յաղթող. * ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց բանսարկուին: Ի սմա բարձրացար բարձողդ անիծից. որ փառաւորեալդ ես ընդ Հօր. ժողովել ըզհեռացեալսըն կենսաբեր փայտիւն. ապրեցուցանել: Փառք Հօր: Սովաւ լուսաւորեցան արարածք ամենայն. սմա սպասէին արդարեալքն ի մեղսասէր բանտին. որ ազատեաց ըզմեզ ի պատրանաց բանսարկուին:

Այժմ և միշտ: Ո՞ր միւսանգամ գալոց ես հայրենի փառօք նորոգել զնախաստեղծին ծընունդ. յիշեա զհոգիս ննջեցելոց մերոց. եւ հանգո ընդ սուրբս քո:

Ի Հանգստեան պաշտաման յետ շարականացս Սաղմոս ե– Աւետարան, եւ այլ՝

Տեառն Ներսէսի երգ տաղեալ վասն ի Քրիստոս ննջեցելոց:

ԲԿ ԴԿ

Աստուած անեղ անժամանակ, Հայր անըսկիզբն և անքանակ. Որդւոյ ըսկիզբն ծնընդեամբ անճառ, Հոգւոյ բըղխման աղբերաբար. ապաւինիմք ըզքեզ գըթած, երկայնամիտ և ողորմած. * ողորմեա քո ստեղծուածոյս ի քեզ յուսով ննջեցելոյս:

Բանդ որ ի ծոց Հօր միածին, և կերպարան սկըզբնատըպին. որով երկինք գոյացան, աշխարհս լըրիւ հաստատեցան. հայցեմք ի քէն Տէր և փըրկիչ, ամենողորմ և կեցուցիչ. ողորմեա քո:

Գերագոյն շնորհաց բաշխող, երկնաւորաց և երկրայնոցս. կեանք և կենաց տըւող Հոգի, Հօր և Որդւոյ արարչակից. խընդրեմք ի քէն աղբեր բարեաց, արբուցանողըդ ծարաւեաց. ողորմեա քո:

Դաւանեմք ընդ սրովբէից զկենդանարարըդ համայնից. երեքսըրբեան մի Տէրութիւն, Հայր և Որդի և սուրբ Հոգի. յոր հանգուցեալըս մըկըրտեալ և հաւատով խոստովանեալ. ողորմեա քո:

Նորակի թիւ կատարեալ, յերիս անձինըս բաժանեալ. ածութբ միաւորեալ, միով բնութեամբ հաւասարեալ. յորմէ կապեալք և արձակիմք և վերըստին անլոյծ կապիմք. ողորմեա քո:

Զէակիցըդ Հօր զՈրդի փառաւորեմք անլըռելի. որ իջեր յարգանդ կուսին, զագամային առեր մարմին. աղաչանօք Աստուածածնին անապական քում ծընողին. ողորմեա քո:

Երեւեցար մարմնով յերկրի, որ ի Հօրէ անմեկնելի. ընդ հողեղէնըս բնակեցար՝ ի հրեղինաց երկըրպագեալդ. պաղատանօք երկնաւորաց՝ փառաբանիչ քոց հրեշտակաց. ողորմեա քո:

Ըստ օրինացըն Մովսէսի ընծայեցար ի տաճարին, զի ըզընութիւնըս մարդկային ընծայեսցես Հօր ի յերկինս. խընդրուածովք նր ծերունւոյն քեւ ի կապից արձակելոյն. ողորմեա քո:

Թագաւորըդ հրեղինաց, որ ընդ մարդկան հողեղինաց. շըրջեցար տնօրինաբար, կրեցեր ըզկիրըս մարդկաբար. որ վասըն մեր զայս ամենայն ի յանձն առեր խոնարհութեամբ. ողորմեա քո:

ԲՁ ԴՁ

Ժողովեալքս ի հրաժարումըն ծառայի քո յաշխարհէ. հայցեմք ի քէն արտասուելով և պաղատիմք զայս ասելով. ճանապարհ ընդ քեզ եկից, հանգուցելոյս լեր ուղեկից, * ի յօթեւանս Հօր քո լուսոյ ըզննջեցեալըս մեր հանգո:

Ի փրկութեան մերոյ սկըզբան մըկըրտեցար ի Յորդանան. զոր շնորհեցեր նոր աւազան ի մաքրութիւն մեղաց մարդկան. հայցմամբ կըրկին կարապետին, մեծին ի ծնունդըս մըկըրտչին. ի յօթեւանս:

Լուսաւոր ձայնիւ յերկնից զքեզ դաւանեաց Հայր էակից. աղաւնակերպ Հոգին իջեալ, առ համագոյ-

իւր հանգուցեալ. ըզմըկըրտեալս նովին Հոգւով յոր-դէգրութիւն Հօր հաւատով. * ի յօթեւանս Հօր քո լուսոյ ըզնընջեցեալըս մեր հանգո:

Խաւար մեղաց հալածեցաւ, լոյս գիտութեան քեւ ծագեցաւ. խայթուած օձին բըժշկեցաւ, հիւանդու-թիւն մեր ողջացաւ. կենդանարարըդ մեռելոց եւ լու-սատուդ խաւարելոց. ի յօթեւանս:

Ծագումն անուն առ ի Հօրէ, որ ընտրեցեր ի յաշ-խարհէ. լուսաւորիչ տիեզերաց ըզդասս ընտրեալ ա-շակերտաց. աղաչանօք առաքելոցն, փող յարութեան մեր եղելոց. ի յօթեւանս:

Կեանք ի կենաց լոյս ի լուսոյ, որ ըստեղծեր զմեզ ի հողոյ. նորոգեցեր դարձեալ կըրկին ծնընդեամբ սըրբոյ աւազանին. զոր կեցուցեր շնորհիւ քոյին ի մա-հուանէն այն առաջին. ի յօթեւանս:

Հոգւով լըցեր զմարդն առաջին, զոր կորուսեալ խաբմամբ չարին. ըզնոյն Հոգի բանիւ քոյին հեղեր յոգիս մեր վերըստին. նովին Հոգւով սուրբ եւ բարի, առաջնորդեա հոգւոյ սորին. ի յօթեւանս:

Ձայնեցեր առ Ղազարոս, որով ետուր մեռելոց յոյս. կենդանութեամբ չորեքօրեայն կենդանացան որք յԱ-դամայն. կենաց ձայնիւ վերջին փողոյ կոչեա ըզսա յայսըմ հողոյ. ի յօթեւանս:

Ղօղեալ սարսեաց պահակ մահու, ի կենարար ձայ-նին լըրոյ. արագապէս զոյգ ընդ բանին, ետ ըզմեռեալն ըստ հրամանին. իշխանք օդոյս այս սարսեսցեն, զհո-գիս սորա մի՛ արգելցեն. ի յօթեւանս:

ԱԿ ԳԿ

Ճանապարհ մոլորելոց և ճառագայթ խաւարելոց. հրաւիրեցեր զորդիս լուսոյ ի յերկնային հարսանիս քո. ընդ զուարճալից անդ ժողովոց արժանացո ըզսա դասուց. * լի լապտերօք մոյծ յառագաստ ընդ իմաս-տուն նը կուսանաց:

Մերով բնութեամբ զոր ըզգեցար ի փայտ խաչին բեւեռեցար. լուծանելով զմեզ ի մեղաց, ի Նախա-հօրըն կապանաց. լոյծ և ըզսա ի յանցանաց վասըն քո սուրբ չարչարանաց. լի լապտերօք:

Յետ կամաւոր մահու խաչի եդար ի նոր գերեզմանի. երեքօրեայ թաղմամբ յերկրի նոր ըստեղծեր զմեզ կենդանի. զիջեալս ընդ քեզ ի հող մահու՝ վերակո-չեա ձայնիւ փողոյ. լի լապտերօք:

Նըստեալ կանանցն իւղաբերից և ողբային արտասուա-լից. իբր ըզմեռեալ անյուսալից, ըզկենդանիդ յաւ-իտենից. վասըն նոցին նը արտասուաց մաքրեա ըզսա ի յանցանաց. լի լապտերօք:

Շարժեալ հիմանցըն դըժոխոցն ի տեսանել ըզքեզ ներքնոցն. հաներ ըզհոգիսն որ ի բանդին, կապեալ զիշ-խանըն մահածին. ընդ հանգուցեալ հոգիս սըրբոց հանգո ըզհոգիս նընջեցելոյս. լի լապտերօք:

Ուրախութեամբ զօրք երկնային յերկնից յերկիր ի-ջանէին. յորժամ յարեար ի մեռելոց, լոյս ծագեցար արարածոց. սուրբ յարութեամբ քո կենարար՝ յարո ըզսա ի կեանս անմահ. լի լապտերօք:

Զըհանդուրժեալ պահապանացն ի յերկիւղէ եր-կնաւորացն. որք աւետիս տային կանանց, թէ մահ լու-ծաւ մահկանացուաց. սա որ մահու քո տընկակից՝ լիցի կենացդ հաղորդակից. լի լապտերօք:

Պարակցեալ անմարմնականքն առ կենսատու սուրբ գերեզմանն, տան աւետիս ազգի մարդկան վասըն կե-նացն յաւէժական. դասաւորեա պարուց նոցին ըզնըն-ջեցեալս յօրըն վերջին. լի լապտերօք:

Ջահաւորեալ նըշան խաչին, յարեւելից փայլեալ ծագի. հաւատացեալքըն ի քեզ բերկրին. և ուրա-ցողքըն կոծեսցին. զերկըրպագուս սըրբոյ խաչին, պայ-ծառացո լուսով նորին. լի լապտերօք:

ԱՁ ԳՁ

Ո՞ւ գործեալ երկնաւորաց գան առաջի քո նախընթաց. զընտրեալըս քո ժողովելով քեզ ընդ առաջ բերեն ամպով. ընդ ողանեացն օդապարից խառնեալ ըզսա ոք երամից. * դասաւորեա ըզսա վերնոցն երգել ըզփառս ընդ զուարթնոցն:

Սարսափի՛ն տարերք երկրի, յորժամ փառօք գաս հայրենի. արեգական լոյս խաւարի, լուսինն աստեղքըն նուաղին. ըզսա յաւուրն աներեկի լուսաւորեա լուսով քոյին. դասաւորեա:

Վերնակա՛ն զօրացըն պետ փողէ բարբառ աւետաբեր. արիք մեռեալք որք յԱդամայ, քանզի ահա եկըն փեսայ. ընդ հարսնացեալ մաքուր հոգւոց կարգեա ըզսա ի թիւ սըրբոց. դասաւորեա:

Տիրակա՛ն յաթոռ նըստիս, յարարածոց երկրպագիս. արդարութե̃ զաշխարհ դատես, վարձս ըստ գործոց հատուցանես. յայնժամ շնորհեա ողորմութի̃, ննջեցելոյս մեր թողութի̃. դասաւորեա:

Բամեալ մարդկան ազգ ժողովին, որք յԱդամայ ծընեալ լինին. և հրեղինաց դասք երկնային համանգամայն վայրաբերին. ի յայնմ ահեղ հրապարակին յիշեա ըզսա յօրն ահագին. դասաւորեա:

Ցուցանի՛ն գաղտնիք մարդկան խորաքննչիւր որ գործեցան. բարեաց գործողքըն պըսակին, չարեացն ի հուրն անշէջ մատնին. յայնժամ յիշեա զսորա բարին. գործքք մեղացըն ջընջեսցին. դասաւորեա:

Ի խուսին պըսակք զանազանեալք, և պատմուճանք լուսափայլեալք. սուրբ վըկայիցն ի գլուխ եդեալ և արդարոցըն զարդարեալ. հաղորդս արա հայցմամբ նոցին ըզսա լուսոյ փառաց նոցին. դասաւորեա:

Փառաց ի փառըս բարձրանան, աջակողմեանքըն վերանան. յորժամ լըսեն զերանական ձայն օրհնութե̃ ի քէն կոչման. ննջեցելոյս մեր լըսեցո զաստուածային

բարբառըդ քո. դասաւորեա ըզսա վերնոցն երգել ըզփառս ընդ զուարթնոցն:

Քահանայք և ժողովուրդք հայցեմք ի քէն Տէր բարեգութ. ընդ ննջեցեալըսն հաւատով ընկալ ըզմեզ նովին յուսով. յԵրուսաղէմ քաղաք վերին յորում արդարքըն ժողովին. փառս վերերգել միշտ ընդ նոսին Երրորդութեանդ երրեակ անձին:

ԳՁ

Արարի՛չ և մա՛րդասէր. անոխակա՛լ և բա՛րեգութ. ո՞ր գովի՛ս ի սրո՛վբէից. Տէր դատաւոր արդա՛րութեան. ընդ սըրբո՛ց առա՛քելոց. Տէր պըսակեա՛ զմեր ննջեցեալըսն. * ողորմա՛ծ Տէր ո՛ղորմեա. հոգւոցըն մեր ննջեցելոց:

Յորժամ գրեալքըն կատարին. որ զայնմ աւուր մեզ պատմեցին. մարգարէից բանքըն յարգին. առաքելոցըն վըճարին. ողորմած:

Ի վերի՛նն Եդեմ ի բընակարանըս հրեշտակաց. ուր Ենովք և Եղիաս կան ծերացեալ աղաւնակերպ. ի դրախտի՛ն եդեմական. պայծառացեալ արժանապէս. ողորմած:

Թագաւո՛ր փառաց Քրիստոս, որ ժամանեալ գաս ի յերկնից. ի վերա՛յ թեւոց հողմոց. քո հայրենի կերպարանօք. և առնես հրափորձութեամբ. ըզքննութի̃ որդւոց մարդկան. ողորմած:

Ի գնել բեմին բազմի փեսայն. և առագաստըն զարդարի. գաբրիէլեան փողըն գոչէ. սուրբք ամենայն անդ հաւաքին. արդարո՛ց դասքըն բերկրին. իսկ մեղաւորքըն թախանձին. ողորմած:

Յորժամ հնչիւն փողոյն լինի. և ղեւտական գիրըն յայտնի. ճառագայթ սըրբոյ խաչին. յարեւելից փայլեալ ծագի. հրեշտակա՛ց գունդք ծաւալին. հրեշտակապետք պարունակին. ողորմած:

Ահեղ խորհուրդ քահանային. բազկատարած կայ ի բեմին. առաջի սուրբ սեղանոյն. հուր շիջանի խաւար մերժի. տրտմեալ հոգիքն ուրախանան. զի թողութիւն մեղաց լինի. ※ ողորմած Տէր ողորմեա. հոգւոցն մեր ննջեցելոց:

Մովսէս աստուածախօս. և Ահարոնն ղեւտացին. մարգարէքն Իսրայէլի. և քահանայք հին օրինին. յառաջագոյն մեզ ծանուցին. ըզգալուստ սուրբ միածնիդ. ի փրկութիւն մեզ յայտնեցին. յանապատի կերակրեցին. ողորմած:

Տրտմահաղորդ չարչարանօք. ի յանձն առեր ըզմահ խաչին. և փայտին բարձող եղեր. վասն Ադամայ նախաստեղծին. ողորմած:

Զարհուրեցան զօրք երկնայինք. յորժամ տեսին զՏէրդ ի խաչին. արեգական լոյս քօղարկեալ. և լոյս լուսնին նուաղեցաւ. յահեղ փառաց Ածոյդ. խաւար եղեւ ընդ տիեզերս. ողորմած:

Ուրախացան ազգք մարդկան. յորժամ լուան զքո յարութիւնդ. նորափետուր զարդարեցան. ի յարութեան մէջ միածնիդ. ողորմած:

Աղաչանօք սրբոյ խաչին. և անբարբառ բարեխօսին. և սրբոյ Աստուածածնին և Յովհաննու կարապետին. և սրբոյն Ստեփանոսին. և առաջին մարտիրոսին. և սրբոյ Լուսաւորչին. Հայաստանեայց հայրապետին. և սրբոց առաքելոց. և համօրէն մարտիրոսաց. ողորմած Տէր ողորմեա հոգւոցն մեր ննջեցելոց:

Ես մնացի ի վերանալ յինէն աւուրց իմոց. յորվ երթայցեմ և ես այսօր. յառաջին օթեւանին զոր ոչ գիտէի. օգնեա և ինձ քո այսօր. յառաջին ճանապարհին. և ի միւսանգամ գալստեանն քո օգնեա ինձ:

Եկն եհաս օր վախճանի իմոյ. լալումն ող-

բումն եւ աշխարումն. սիրտ իմ խռովեցաւ յիս. եւ ոսկերք իմ ցամաքեցան. ※ օգնեա և ինձ քո այսօր. յառաջին ճանապարհին. և ի միւսանգամ գալստեանն քո օգնեա ինձ:

Ի մահիճս իմ զարթուցին զիս. պահանջողք հոգւոյ իմոյ. տանէին զիս ճանապարհ հեռաւոր զոր ոչ գիտէի. օգնեա:

Նայեցայ եւ ոչ ոք էր որ օգնէր ինձ. ապաւինեցայ յԱծ փրկութեան իմոյ. ցնծասցէ հոգի իմ յարքայութեան քում. օգնեա և ինձ քո այսօր յառաջին ճանապարհին. և ի միւսանգամ գալստեանն քո օգնեա ինձ:

Գրեցայ ես ի գիր կենդանութեան. եւ մեկնեցայ երթալ առ արարիչն երկնի եւ երկրի. օգնեա:

Յանստուեր եւ յանեղ լուսոյն. հեռացայ խաւարմամբ խաւարային. ճաշակեցի ըզմահաբեր պտղոյն. հողանայ պատկեր բարերար ստեղծողիդ. օգնեա:

Յանջատման հոգւոյս ի մարմնոյս. ի քակտել գեղեցիկ շինուածոյս. զարհուրիմ ի սպառնալեաց թագաւորին. թէ պահանջէ յինէն զտաղանդ պատուիրանին. օգնեա:

Կուսածին մարդացեալ Ած իմ Յիսուս. յայնմ աւուր ահեղ ատենին. ըզգինս արեան քո մի դատապարտեր. օգնեա:

Սոսկալի է օր վախճանին. եւ ահեղ է օր դատաստանին. յայնմ աւուր ահեղ ատենին. ըզգինս արեան քո մի անտես առներ. զի պատկեր եմ բարերար ստեղծողիդ. օգնեա:

Զահաւոր դատաստան դատաւորին տեսի. եւ զարհուրեցայ. զի անպատրաստ եգիտ զիս. ի հրամանացն քոց թագաւոր յաւիտենից. օգնեա եւ ինձ քս այսօր. յառաջին ճանապարհին. եւ ի միւսանգամ գալստեանն քո օգնեա ինձ:

Ածածին անարատ մայր Տեառն եւ կոյս ո՛ր. բարեխօսեա առ Որդին քո միածին. զի փրկեսցէ ըզմեզ ի սպառնալեաց գեհենոյն. եւ պարգեւեսցէ մեզ զերկնից զարքայութիւնն. եւ հանգուսցէ զհոգիս մեր ննջեցելոցն. օգնեա եւ ինձ քս այսօր. յառաջին ճանապարհին եւ ի միւսանգամ գալստեանն քո օգնեա ինձ:

Զ. ՇԱԲԱԹ ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ, ԱԶ.

Յիշատակ է Ղազարու յարութեան:

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն ԱԶ:

Այսօր գոլով ի Բեթանիա քո ամենազօր հրամանաւըդ. ձայնեցեր Ղազարու եւ գոչեցաւ մահ. դըժոխք պարտեցաւ ապականութիւն լուծաւ. * կենդանարար քս կեցո ըզմեզ: Այսօր գոլով ի Բեթանիա զքո զաշխարհակեցոյց ոբ զյարութիւնդ. յառաջագոյն ծանուցեր անապականաբար կոչմամբ զչորեքօրեայն ի թաղմանէ. կենդանարար: Այսօր գոլով ի Բեթանիա Եբրայեցւոց մանկունքն ըսքանչացեալ ասէին. զՄարիամու զեղբայրն ի թաղմանէ յարուցեալ որդւոյն Մարիամու. կենդանարար:

† Կենդանութեանց բաշխող Քրիստոս ի Բեթանիա եկաւորեալ այսօր. բարեկամին Ղազարու պարգեւէ զկենդանութիւն: Տնօրինաբար արտասուելով ընդ Մարթայի եւ ընդ Մարիամու. ողբանկցէր եւ որպէս մարդ հարցանէր ուր եդիք ըզՂազարոս: Եւ որպէս զԱծ բարբառովն յարուցանէ ի մեռելոց ըզչորեքօրեայն. եւ զուգընթաց ձայնին մեռեալն եկն արտաքս անապական:

Կցրդ ԲԶ: Յածային ձայնէ գոչմանն սարսեցին դողալով կարապետք դըժոխոցն. եւ մեռեալն եկն արտաքս անապական: Կացեալ ի դուրս այրին եւ ձայնէր ազդարարող բարբառովն ի գերեզմանն. Ղազարէ եկ արտաքս անապական:

Ղչր: Եկայք որդիք մարդկան այսօր ողբասցուք ըզհօրն ըզվտարանդ. որ մերկացաւ մեղօք ըզփառս արարչին. եւ զգեցաւ զթզենւոյն ծածկոյթ փոխանակ անճառ լուսոյն: Գովեսցէք զՈրդին Այ այսօր ցնծութեամբ որդիք Ադամայ. որ եկն ի խնդիր եղծեալ պատկերին. եւ գտեալ նորոգեաց ի փառս առաջին պատմուճանին: Նոր նորոգող բնութեան մերոյ Յս. որ ի խորհուրդ հնութեան մարդոյն. զանպտուղն այսօր չորացուցեր զթզենին. եւ ըզմեզ ի հնացեալ մեղաց նորոգեա ի կեանս անմահ:

Կէր: Որ ըզխորհուրդ քո գալստեանդ յառաջագոյն գուշակեցեր. մարգարէիւքն Իսրայէլի զօրս ընտրեցեր յետ Մովսեսի. որք խօսեցան հոգւով սրբով բազմապատիկ օրինակօք. տուր մեզ փրկիչ ողորմութիւն եւ ըզմեղաց ըզթողութիւն: Ի մերձենալ ամաց վերջին զօր տեսանողքըն ծանուցին. ըզհասանել մեր փրկողին առ ի վախճան ժամանակին. երեւեցար ի մէջ մարդկան զգեցեալ ըզկերպ ծառայական. տուր մեզ փրկիչ ողորմութիւն եւ ըզմեղաց ըզթողութիւն: Ի վեցերորդ աւուր զԱդամ. ստեղծեր ի տիպ քո տիրական. որ ոչ պահեալ ըզպատուիրանըն մերկացաւ ըզպատմուճանն. իսկ նոր Ադամդ ի վեց դարուն այց արարեր կորուսելոյն. տուր մեզ փրկիչ ողորմութիւն եւ ըզմեղաց ըզթողութիւն: Տաճար լուսոյ անըստուերին եւ առագաստ անճառ բանին. որ ըզնախնոյ մօրն Եւայի բարձեր զանէծսըն տրտմալի. հայցեա յՈրդւոյ քո միածնի հօր հաշտութեան միջնորդի. բառնալ ի մէնջ ըզխռովութի եւ տալ զոգւոց խաղաղութիւն:

Յ~ր: Որ ի վերդ ես քան զամ ըզմիտս եւ զխորհուրդս. * փառաց թագաւոր խոնարհեա ի մեզ: Որ միայն ունիս զանմահութիւն եւ զանեղութիւն. փառաց թագ: Որ նստիս ի քրովբէս Երրորդութի անբաժանելի. փառաց: Որ երկրպագեալդ ես ի հրեշտակաց եւ ի մարդկանէ. փառաց:

ՀՈԳ. Ամրսափելի հողմոյ նման ահեղագոչ սաստիկ հնչմամբ. երեւեցար ի վերնատանն Հոգիդ դասուն երկոտասան. որք առ ի քէն մկրտեցան որպէս զոսկի հրով մաքրեցան. մաքրեա ի մէնջ ըզմէգ մեղաց եւ ըզգեցո ըզլոյս փառաց: Եկիր յերկիր աստուածաբար դատել զաշխարհս իշխանաբար. ընդ արդարութեան եւ ընդ մեղաց եւ ընդ չարին դատաստանաց. բացեր ըզգանձդ անհիւթական պարգեւս տուր որդւոց մարդկան. մաքրեա ի մէնջ ըզմէգ մեղաց եւ ըզգեցո ըզլոյս փառաց: Սէրն ի սիրոյ զքեզ առաքեաց յինքըն զանդամս իւր քեւ յօդեաց. զեկեղեցի իւր զոր շինեաց եօթն սեամբ քո հաստատեաց. տնտեսս ինմա եդ զառաքեալսն եօթնեակ շնորհօք քո զարդարեաց. մաքրեա ի մէնջ ըզմէգ մեղաց եւ ըզգեցո ըզլոյս փառաց:

ՆՆՉ: Ի ձայն փողոյ գալստեան քո Տէր ամ՟ հոգիք զարթիցեն կալ ի դատաստանի քում Քս Ած մեր: Յորժամ հնչէ բարբառն ահագին. եւ հարկանի փող յարութեան մերոյ. եւ մեք գոչելով ասեմք փառք գալստեան քո Տէր: Յորժամ առնես հատուցումըն Տր եւ սուրբք քո պարծեսցին ի քեզ. եւ մեզ շնորհեսցես փրկիչ կալ ի յաջմէ քումմէ:

ԱՅՆ: Բանն առաքեալ ի Հօրէ որ վասն մեր մարմնացաւ. եւ ցնծութի աշխարհի յայտնեցաւ. * ըզքեզ բարեբանեմք Աստուածին կոյս: Զի որում ոչըն հանդուրժէին բոցանըշոյլ սերովբէքն. նա բնակեցաւ ի քում յորովայնի. ըզքեզ: Յորմէ սարսեալ դողային փայլակնացայտ ի լուսոյն. ի գիրկըս

քո ըզնա ընկալար. ըզքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս:

Խն: Այսօր խնդրի պատուական փայտ խաչին ամենագեալն ի Գողգոթա. ի ձեռն աստուածասէր դշխոյին. * Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային նշանիս: Այսօր ընծայէ Գողգոթա ըզծածկեալն ի յերկրի. վերաբերեալ անուշահոտ խնկովք. ի ձեռն երանելոյն Յուդայի. Եկայք: Փառք Հօր: Այսօր ի ձեռըն փրկական նշան խաչին կենդանարարի պատանին մեռեալ. եւ ողբայ սատանայ ըզկործանումն իւր. Իսկ մեք քնի հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային նշանիս:

Այժմ և միշտ: Ելեալ ի գերեզմանէն երիզապինդ պատանօքըն մեռեալն. հրամայեաց լուծանել ի կեանսըն յաւիտենից:

Մաղթանք. Փառք հրաշափառ գալստեան:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Բարձր առնեմ զքեզ Տր, զի ընկալար զիս. և ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս: Տէր Ած իմ կարդացի առ քեզ. և բժշկեցեր զիս. Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ որք իջանեն ի գուբ:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Փ. Եհան զիս ի գբոյ տառապանաց. ի կաւոյ և ի տըղմոյ: Հաստատեաց ի վերայ վիմի զոտս իմ. և ուղղեաց ըզգնացս իմ:

Փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն: Դասք հրեշտակաց օրհնեն ըզքեզ Քս. ալէլուիա. մարդկան ազգ սաղմոսեն քեզ. ալէլուիա:

———

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԲՁ:

Աստուածային գոչմամբ ձայն արկեալ առ Ղազարոս. կոչեցեր ի թաղմանէ. Աստուած հարցըն մերոց: Որ զարտասուս Մարիամու և Մարթայի ոչ անտես արարեր բարերար. Աստուած հարցըն մերոց: Զչորեքօրեայ զմեռեալն իշխանութեամբ անապական կոչեցեր ի թաղմանէ. Աստուած հարցըն մերոց:

Գ. Գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք. Եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Գիշերք ըզՏէր օրհնեցէք: Որ Հօրն է փառակից. ի Բեթանիա եկն այսօր. յարութիւն առնելով Ղազարու. * օրհնեցէք և գովեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և: Իսրայէլ ըզՏէր օրհնեսցէ: Եւ լուծեալ ըզզօրութիւնս դժոխոց. ածաբար կոչեաց ըզմեռեալ չորեքօրեայն ի թաղմանէ. օրհնեցէք:

Մեծացուցէ ԲՁ: Ըզկուսութիւնդ քո Ածածին անարատ զոր ոչ բոցակիզեաց հուր ածութեանըն. մեծացուցանեմք: Փառք Հօր: Որ յարգանդի քում անապականաբար բնակեցաւ. Քս Ած. եւ փրկիչ անձանց մերոց. մեծացուցանեմք: Այժմ և: Անհասանելի տէրունական յայտնութիւնն աշխարհի ծագեցաւ. անմատոյց լուսոյն երկրպագեսցուք:

Ողորմեա ԴՁ: Որ ի չորեքկերպեան կենդանեաց փառաբանիս ի բարձունս. այսօր մարդասիրապէս փրկիչ. ի Բեթանիա երթալ յանձն առեր. * աղբիւր կենաց մեր եւ յոյս ողորմեա մեզ: Փառք Հօր: Որ յարտասուս Մարիամանց գթացեալ արտասուեցեր և ասացեր ցնո. ուր եդիք. ես յարուցից ըզսիրելին իմ զՂազար. աղբիւր: Այժմ և. Ածային արար-

չամգործ ձայնիւրդ քո Քն. ի թաղմանէ կոչեցեր զՂա-զարոս. ցուցեր կենդանեաց եւ մեռելոց Աստուած. աղբիւր կենաց մեր եւ յոյս ողորմեա մեզ:

Տէր յերկնից ԴԶ. Աղբիւր անմահութեան բղխեալ ի Բեթանիա. կենագործեաց զՂազարոս ի թաղմանէ: Փառք Հօր և: Կանխեալ Մարիամանցն արտասուալից հառաչմամբ. գտին կենդանացեալ զչորեքօրեայ զմե-ռեալն: Այժմ և միշտ և: Յաստուածային ձայնէ գոչ-մանըն սարսեցին դողալով դժոխք. եւ երիզապինդ-մեռեալն ըզգեցաւ զանմահութիւն:

Առաւ. երգ: Տէր հանէր ի դժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ որք իջանեն ի գուբ:

Բարձր առնեմ ըզքեզ Տր զի ընկալար զիս. և ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս:

Քարոզ. փառաւորեսցուք. հաս գանձ:

Մանկունք ԴԿ. ՍՏ: Յիսուս միածին անմահ-ութեանց պարգեւատուն երեւեցաւ մեզ. խափա-նեաց զզօրութիւն մահու: Փառք Հօր: Բղխման արտա-սուաց Մարիամու և Մարթայի անկեալ առ ոտսն Տեառն. խնդրէին զնորոգումն եղբօրն: Այժմ և: Բանիւ Բանն Աստուած կենագործեաց ըզՂազարոս ի թաղմանէ. և եկեալ արտաքս անապական:

Քարոզ. Վս խաղաղութեան: Աղ. Սուրբ ես Տէր:

Զկնի աղօթիցն սկսանին ի Նն- Սաղմոս ԻԹ:

ԿՑ. Տր հաներ ի դժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ, որք իջանեն ի գուբ:

Փխ. Բարձր առնեմ զքեզ Տր, զի ընկալար զիս. և ոչ ուրախ զթշնամիս իմ յիս:

Տէր Աստուած իմ կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս. Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս յայն-ցանէ, որք իջանեն ի գուբ:

Սաղմոս ասացէք Տեառն սուրբք նորա. խոստովան ե-ղերուք յիշատակի սրբութն նր:

Սրտմտութիւն է ի բարկութեան նորա. և կեանք են ի կամաց նորա:

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք. առաւօտուց եղիցի ու-րախութի:

Ես ասացի ի բարեկենդանութեան իմում, թէ ոչ սասանեցայց յաւիտեան:

Տէր ի կամս քո ետուր գեղոյ իմոյ զօրութիւն. դար-ձուցեր զերեսս քո յինէն, և ես եղէ խռովեալ:

Ես առ քեզ Տր կարդացի, առ Ածդ իմ աղաղակեցի. զի՞նչ օգուտ է քեզ յարենէ իմմէ, թէ իջանեմ ես յապականութիւն:

Մի թէ հո՞ղ խոստովան առնիցի առ քեզ. կամ պատմեսցէ զճշմարտութիս քո:

Լուաւ ինձ Տր և ողորմեցաւ. և Տր եղև ինձ օգնական:

Դարձոյց զսուգ իմ յուրախութի. զերծ յինէն զքուրձ. և ինձ զգեցոյց զուրախութի:

Որպէս սաղմոս ասասցեն քեզ փառք իմ. և այլ մի ևս զղջացայց. Տէր Աստուած իմ, յաւիտեան խոստովան եղէց քեզ:

Ընթերցուածս յԱռակաց: (Իմաստ.) Ժ. 9:

Իմաստութիւն զողջքիչս իւր փրկեաց ի ցաւոց: Նա փախուցելոյ ի բարկութէ եղբօր՝ առաջնորդեաց ար-դարոյն ի շաւիղս ուղիղս: Ետոյց նմա զարքայութիւն Այ, և ետ զգիտութի սրբց: Յաջողեաց նմա ի վաստա-կոց իւրոց. և բազմացոյց զպտուղ նր: Յագահութեան բռնաւորաց նր պաշտպանեաց նմա, և մեծացոյց: Եւ պահեաց զնա ի թշնամեաց. և ի դարանակալաց նր զգուշացաւ: Եւ ի զօրաւոր պատերազմի արար զնա յաղթող. զի գիտասցէ թէ քան զամ ինչ զօրաւոր է ածպաշտութի: Նա զարդարն վաճառեալ ոչ եթող ի

ձեռանէ. այլ ի մեղաց փրկեաց զնա. ընդ նմա էջ ի գուբ: Եւ ի կապանս ոչ եթող զնա ի ձեռանէ. մինչեւ եբեր նմա զգաւազան թագաւորութեան, և իշխանութիւն ի վ՟ր բռնաւորաց ն՟ր: Սուտ եցոյց զբամբասողս նորա, և ետ նմա զփառս յաւիտենական: Նա զժողովուրդն ն՟բ և զզաւակն անարատ փրկեաց յազգէ նեղչաց: Եւ եմուտ յոգի ծառայի Տ՟ն. և ընդդէմ դարձաւ թագաւորաց ահաւորաց՝ արուեստիւք և նշանօք: Հատոյց ս՟բց զվարձս վաստակոց ն՟ց. առաջնորդեաց ն՟ց ընդ ճանապարհ սքանչելի. եղև ն՟ց հովանի ի տուէ, և բոց աստեղաց ի գիշերի: Անցոյց զնոսա ընդ ծով կարմիր. և տարաւ զն՟ս ընդ ջուրս բազումս: Զթշնամիս նոցա ընկղմեաց. և ի խորոց անդնդոց ած զն՟ս ի վեր: Վասն այնորիկ արդարք կողոպտեցին զամբարիշտս. և օրհնեցին Տէր զանուն քո սուրբ. և զձեռն քո՝ որ մարտնչէր ի վերայ նոցա՝ օրհնեցին միանգամայն: 20:

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուածս: Դ. 12:

Ոչ կամիմ, եղբարք, եթէ տգէտք իցէք վ՟ն ննջեցելոցն. զի մ՟ տրտմիցիք ո՟ր և այլքն՝ որոց ոչ գոյ յոյս: Եթէ հաւատամք՝ եթէ Յ՟ս մեռաւ և յարեաւ. նոյնպէս և Ա՟ծ զննջեցեալսն ի ձեռն Յ՟սի ածցէ ընդ նմա: Բայց զայս ասեմ Տ՟ն բանիւ, եթէ մեք՝ որ կենդանիքս եմք մնացեալք՝ ի գալստեանն Տ՟ն ոչ ժամանեմք ննջեցելոցն: Զի ինքն Տ՟ր հրամանաւ, ի ձայն հրեշտակապետի և ի փող Ա՟Յ իջանէ յերկնից. և մեռեալք ի Ք՟ն յարիցեն յառաջագոյն: Ապա և մեք որ կենդանիսն մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ Տ՟ն յօդս. և այնպէս յ՟մ ժամ ընդ Տ՟ն լինիցիմք: Այսուհետեւ մխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսոքիւք: 17:

Ալ՟էլ. ալ՟էլ. ալ՟էլ:

Եհա՛ն զիս ի գբոյ տառապանաց. ի կաւոյ և ի տղմոյ:

Զկն՟ի Ո՟րթիւ:

Աւետարան ըստ Յովհաննու: ԺԱ. 1:

Վասն փառաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի Բեթանիայ, ի գեղջէ Մարեմայ և Մարթայի քեռ ն՟ր: Այս այն Մարիամ էր որ օծ զՏ՟ր իւղով, և ջնջեաց զոտս ն՟ր հերով իւրով. որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր: Առաքեցին առ նա քորք ն՟ր և ասեն. Տէր՝ ահաւասիկ զոր դուն սիրէիր՝ հիւանդացեալ է: Իբրև լուաւ Յ՟ս, ասէ. այն հիւանդութի չէ ի մահ, այլ վ՟ն փառացն Ա՟Յ. զի փառաւոր լիցի որդի Ա՟Յ այնուիկ: Եւ սիրէր Յ՟ս զՄարթա և զքոյր ն՟ր զՄարիամ և զՂազար: Իբրև լուաւ թէ հիւանդացեալ է, զտեղի կալաւ անդէն ուր էրն՝ աւուրս երկուս: Ապա յետ այնորիկ ասէ ց՟ն. եկա՛յք երթիցո՛ւք միւսանգամ ի Հրէաստան: Ասեն ցնա աշակերտքն. Ռա՛բբի, այժմ եւս խնդրէին զքեզ Հրեայքն քարկոծ առնել. և դարձեա՞լ երթաս անդրէն: Պատասխանի ետ Յ՟ս. ո՞չ երկոտասան ժամ է յաւուր. եթէ ոք գնայ ի տուընջեան՝ ոչ գայթագղի, զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ. ապա թէ ոք գնայ ի գիշերի՝ գայթագղի, զի լոյս ոչ գոյ ընդ նմա: Զայս իբրեւ ասաց, յետ այսորիկ ասէ ց՟ն. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ զի զարթուցից զնա: Ասեն ցնա աշակերտքն. Տէր՝ եթէ ննջեաց՝ ապա ապրի: Այլ Յ՟ս վ՟ն մահուն ն՟ր ասէր. ն՟ց այսպէս թուեցաւ՝ թէ վ՟ն ննջելոյ քնոյն ասէ: Յայնժամ ասէ ց՟ն Յ՟ս յայտնապէս: Ղազարոս մեռաւ. և ես ուրախ եմ վ՟ն ձեր, զի դուք հաւատասջիք ինձ, զի ես չէի անդ. բայց արդ եկա՛յք երթիցուք առ նա: Ասէ Թովմաս անուանեալն երկուորեակ՝ ցաշակերտակիցսն. ե՛ն եկա՛յք և մեք՝ զի ընդ նմա մեռցուք: Եկն Յ՟ս՝ եգիտ զնա չորեք-

քօրեայ ի գերեզմանի: Եւ էր Բեթանիա մերձ յԵրուսաղէմ, իբրեւ ասպարիսօք հնգետասան: Բազումք ի ի Հրէից անտի եկեալ էին առ Մարթա և Մարիամ, զի մխիթարեսցեն զնս՟ վս՟ եղբօրն: Մարթա իբրև լուաւ՝ թէ Յս՟ գայ, ընդ առաջ գնաց նր՟. բայց Մարիամ նստէր անդէն ի տան: Ասէ Մարթա ցՅս՟. Տէր՝ եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ. այլ և արդ գիտեմ, եթէ զոր ինչ խնդրեսցես յԱՅ՟՝ տացէ քեզ Ած՟: Ասէ ցնա Յս՟. յարիցէ եղբայրն քո: Ասէ ցնա Մարթա. գիտեմ զի յարիցէ ի յարութեան՝ յաւուրն յետնում: Ասէ ցնա Յիսուս. ես իսկ եմ յարութի՟ և կեանք. որ հաւատոյ յիս, թէպէտ և մեռանի՝ կեցցէ. և ա՟մ որ կենդանի է և հաւատայ յիս, մի՛ մեռցի ի յաւիտեան. հաւատա՞ս այսմիկ: Ասէ ցնա. այո՛ Տէր, ես հաւատացի՝ եթէ դու ես Քս՟ Որդի ԱՅ՟, որ յաշխարհ գալոց էիր: Եւ զայս իբրեւ ասաց, գնաց կոչեաց զՄարիամ զքոյր իւր լռելեայն և ասէ. վարդապետն եկեալ է և կոչէ զքեզ: Նա իբրեւ լուաւ՝ յարեաւ վաղվաղակի, և եկն առ նա: Չեւ եւս էր եկեալ Յս՟ ի գեօղն, այլ էր անդէն ի տեղւոջն՝ ուր ընդ առաջ եղեւ նմա Մարթա: Իսկ Հրեայքն՝ որ էին ընդ նմա ի տան անդ և մխիթարէին զնա, իբրեւ տեսին զՄարիամ՝ թէ յարեաւ վաղվաղակի և գնաց, գնացին և նոքա զհետ նր՟. համարէին թէ ի գերեզմանն երթայ՝ զի լացցէ անդ: Իսկ Մարիամ իբրեւ եկն ուր էրն Յս՟, և ետես զնա, անկաւ առ ոտս նր՟ և ասէ. Տէր, եթէ աստ էիր դիպեալ՝ ոչ էր մեռեալ եղբայրն իմ: Յս՟ իբրեւ ետես զնա զի լայր, և որ ընդ նմա էին Հրեայքն՝ լային, խռովեցաւ յոգի իւր իբրեւ զայրացեալ, և ասէ. ո՞ւր եդիք զնա: Ասեն ցնա. Տէր՝ եկ և տես: Եւ արտասուեաց Յս՟: Ասէին Հրեայքն. տեսէք՝ որչափ սիրէր զնա: Կէսքն ի նոցանէ ասէին. ո՞չ կարէր սա՝ որ եբաց զաչս կուրին, առնել՝ զի և սա մի մեռցի: Յս՟ դարձեալ զայ-

րացեալ ընդ միտս իւր, գայ ի գերեզմանն. և էր այր մի, և վէմ մի եդեալ ի վր՟ նր՟: Եւ ասէ Յս՟. ի բա՛ց արարէք զվէմդ: Ասէ ցնա Մարթա՝ քոյր մեռելոյն. Տէր՝ արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է: Ասէ ցնա Յս՟. ո՞չ ասացի քեզ՝ եթէ հաւատասցես, տեսցես զփառսն ԱՅ՟: Եւ իբրեւ ի վեր առին զվէմն, Յս՟ ամբարձ զաչս իւր ի վեր, և ասէ. Հա՛յր՝ գոհանամ զքէն, զի լուար ինձ, և ես գիտէի՝ զի յա՟մ ժամ լսես ինձ. այլ վս՟ ժողովրդեանս որ շուրջ կան՝ առնեմ, զի հաւատասցեն թէ դու առաքեցեր զիս: Զայս իբրեւ ասաց, ի ձայն մեծ աղաղակեաց և ասէ. Ղա՛զարէ՝ արի՛ եկ արտաքս: Եւ ել մեռեալն ոտիւք կապելովք, և ձեռօքն երիզապնդօք, և երեսօքն վարշամակապատօք: Եւ ասէ ցնս՟ Յս՟. լուծէք զդա և թողէք երթալ: Բազումք ի Հրէիցն՝ որ եկեալ էին առ Մարեմանս, իբրեւ տեսին զոր արարն՝ հաւատացին ի նա: Եւ ոմանք ի նոցանէ գնացին առ փարիսեցիս, և պատմեցին նց՟՝ զոր արարն Յս՟: Ժողովեցին քահանայապետքն և փարիսեցիքն ատեան, և ասեն. զի՞նչ արասցուք զի այրն այն բազում նշանս առնէ: Եթէ թողումք զնա այնպէս, ամենեքին հաւատան ի նա. և գայցեն Հռոմք և բառնայցեն զազգս մեր և զտեղի: Մի ոմն ի նոցանէ՝ անուն Կայիափա, որ քահանայապետ էր տարւոյն այնորիկ, ասէ ցնոսա. դուք ոչինչ գիտէք, և ոչ բնաւ խորհել իսկ, թէ լաւ է մեզ, զի այր մի մեռանիցի ի վր՟ ժողովրդեանս, և մի՛ ա՟մ ազգս կորիցէ: Զայս ոչ յանձնէ ինչ ասաց. այլ զի քահանայապետ էր տարւոյն այնորիկ, մարգարէացաւ՝ եթէ մեռանելոց էր Յս՟ ի վր՟ ազգին. և ոչ ի վերայ ազգին միայն, այլ զի և զորդիսն ԱՅ՟ զցրուեալսն ժողովեսցէ ի մի: Ապա յայնմ օրէ խորհուրդ արարին՝ զի սպանցեն զնա: Եւ Յս՟ այնուհետեւ ոչ եթէ համարձակ շրջէր ի մէջ Հրէիցն, այլ գնաց անտի յերկիր մի որ մերձ էր յանապատ, ի

քաղաք մի՝ որում անուն էր Եփրայիմ. եւ անդ լինէր աշակերտօքն հանդերձ: 54:

Երգ. Տէրն յետ ստեղծման:

Քարոզ. Խնդրեսցուք: Կեցո Տէր՝ է Նե–: Աղ. Քում ամենազօր եւ հրաշալի գալստեանդ:

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Խոնարհեցո Եւ Ապրեցո:

Կիրակամուտ փառք:

Բարեբանեալ որ եկիր եւ գալոց ես ի յերկնէ աստուածային քո փառօք. շնորհեա ամենեցուն զյարութիւն Քրիստոս, որպէս մարդասէր: Եւ ի վերջ փառքն ասեն Լոյս զուարթ:

Մեղեդի Գալստեան: Օրհնեալ որ գաս:

Քարոզ յայնժամ. Ասասցուք, կամ Գանձ:

Եւ զգենուն միաբան քահանայքն, եւ ելանեն յատեան խաչիւ եւ աւետարանաւ, խնկովք եւ մոմեղինօք եւ ամենայն զարդուք: Եւ ասեն Համբարձին, յորում ի ձայնելն քարշեն զվարագոյրն, եւ բանան զխորանն:

Համբարձի Ա Ձ. Որ վերօրհնիս յաթոռս քերովբէից. ի վերայ նստել յաւանակի հաճեցար. * բարեբանեալ որ եկիր ի կեցուցանել: Ուստի եւ մեք զյաղթական օրհնութեանցն ըղձայն. մատուցանեմք քեզ թագաւոր փառաց ընդ տղայսն օրհնաբանելով. բարեբան: Ովսաննա ի բարձունս ալէլուիա. բարեբանեալ եկեալ անուամբ Տեառն ալէլուիա. եւ օրհնութիւն որ գալոցդ ես անուամբ Տեառն ալէլուիա:

Այսօր զանըսկիզբըն Բանն որ յաթոռ փառաց ընդ Հօր յերկրի երեւեալ տեսաք. քրովբէական ձայնիւ օրհնեսցուք. * օրհնեալ եկեալ անուամբ Տեառն: Փառք Հօր: Այսօր յաւանակ քերովբէ եւ տղայք

Եբրայեցւոց բարեբանեն. օրհնութիւն որդւոյ Դաւթի օրհնեալ եկ: Այժմ եւ: Այսօր զուարճացան տիեզերք գալստեամբ Ածորդւոյն յԵղէմ. եւ գոչէին հնչմամբ երգով. օրհնեալ եկ:

Քրզ. Խնդրեսցուք: Կեցո յայնժ–: Աղ. Թագաւոր խաղ: Եւ արձակեն:

ԿԻՐԱԿԷ ԾԱՂԿԱԶԱՐԴ, ԱԿ.

Ի ԳԻՇԵՐԻ

Հսկումն է. Եւ դնի արմաւենին ի վերայ բազմոցի յատեանն:

Հետեւեալ շարականն ԳՁ:

Թագաւոր գոլով քո յաշխարհս. մտեր ի քաղաքն Երուսաղէմ. նստեալ ի վերայ հողեղէն նոր յաւանակին. կոչել զհեթանոսս յերկրպագութիւն: Ծերքն ոստովք ձիթենեօք. եւ տղայքն ոստովք արմաւենեօք. եւ երամ երամ դասուքն աղաղակէին. ովսաննա օրհնեալ եկեալ ի յանուն Տեառն: Ցնծացաւ ն̃բ Սիովն. բերկրեցան ն̃բ եկեղեցիք. եւ խնդութեամբ բազմաւ ելին ընդ առաջ. օրհնէին զգալուստ քո փրկչիդ յաշխարհ:

Յորժամ եկն Յս՝ յԵղէմ ի քաղաքն. ընդ առաջ ելին ծերքն ոստովք ձիթենեաց. եւ զԱծորդին փառաւորէին: Ի լեռնէ ձիթենեաց տարածանէին մանկունքն ըզհանդերձս իւրեանց. եւ ոստս ի ծառոց բերեալ մատուցանէին. Ածորդւոյն ն̃բ՝ թագաւորին: Ոստովք եւ տերեւօք ձիթենեօք. Եբրայեցւոց մանկունք օրհնէին. ուրախ լեր Երուսաղէմ քաղաք. եւ ցնծա Սիովն մայր եկեղեցի:

Զգալուստ քո Քս այսօր յԵրուսաղէմ նոր եկեղեցի նր. յաղթական երգով բարեբանեմք. * օրհնեալ եկեալ անուամբ Տռն: Որ վասն մերոյ փրկութեան յաւանակի նստեալ յանձն առեր. ընդ մանկունսըն բարեբանեմք. օրհնեալ ես: Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեա. և զերկրպագուս անուանըդ քո պահեա ի խաղաղութեան:

Ի յարութե յաւուր գալստեան փրկչին. տաճածանէին մանկունքն ըղհանդերձս. * և անդադար ձայնիւ օրհնէին. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն: Ոստս ի ծառոց բերեալ մատուցանէին. Ածորդւոյն առ ճանապարհաւն. և անդադար ձայնիւ: Ի ծերոց բըղխեալ օրհնութի. եւ ի տղայոց փառաբանութի. և անդադար ձայնիւ:

Զկնի Սրբ. տէրողջ. Եւ եւս խաղաղ: Օրհնութիւն և փառք Հօր: Եւ ապա ասեն յաւելեանն

Օրհնութիւն ԱԶ:

Որ վերօրհնիս յաթոռըս քերովբէից. ի վերայ նստեալ յաւանակի հաճեցար. * բարեբանեալ որ եկիր ի կեցուցանել: Ուստի և մեք զյաղթական օրհնութեանցն ըզձայն. մատուցանեմք քեզ Թագաւոր փառաց ընդ տղայսն օրհնաբանելով. բարեբան: Ովսաննա ի բարձունս ալէլուիա. բարեբանեալ եկեալ անուամբ Տեառն ալէլուիա. և օրհնութի որ գալոցդ ես անուամբ Տեառն ալէլուիա:

† Այսօր զանըսկիզբըն Բանն որ յաթոռ փառաց ընդ Հօր յերկրի երեւեալ տեսաք. քրովբէական ձայնիւ օրհնեսցուք. * օրհնեալ եկեալ անուամբ Տեառն: Այսօր յաւանակ քերովբէ և տըղայք Եբրայեցւոց բարեբանեն. օրհնութի որդւոյ Դաւթի. օրհնեալ:

Ղչր: Այսօր գոլով ի Բեթանիա քո ամենազօր հրամանաւըդ. ձայնեցեր Ղազարու և դողացաւ մահ. դըժոխք պարտեցաւ ապականութի լուծաւ. * կենդանարար Քս կեցո ըզմեզ: Այսօր գոլով ի Բեթանիա զքո զաշխարհակեցոյց նր զյարութիդ. յառաջագոյն ծանուցեր անապականաբար կոչմամբ զչորեքօրեայն ի թաղմանէ. կենդանարար: Այսօր գոլով ի Բեթանիա Եբրայեցւոց մանկունքն ըսքանչացեալ ասէին. զՄարիամու զեղբայրն ի թաղմանէ յարուցեալ որդւոյն Մարիամու. կենդանարար:

Ղչր: Կենդանութեանց բաշխող Քրիստոս ի Բեթանիա եկաւորեալ այսօր. բարեկամին Ղազարու պարգեւէ զկենդանութիւն: Տնօրինաբար արտասուելով ընդ Մարթայի և ընդ Մարիամու. ողբակցէր և որպէս մարդ հարցանէր ուր եդիք ըզՂազարոս: Եւ որպէս զԱծ բարբառովն յարուցանէ ի մեռելոց ըզչորեքօրեայն. և զուգընթաց ձայնին մեռեալն եկն արտաքս անապական:

Վրք: Որ ի լերինն այլակերպեալ ցուցեր զածային քո զօրութիդ. * զքեզ փառաւորեմք իմանալի լոյս: Որ ըզճառագայթ փառաց քոց ցուցեր. արեգակնակերպ փայլմամբ զարարածըս լուսաւորեցեր. զքեզ փառ: Որ ահագին տեսլեամբ զարհուրեցուցեր զքո զաշակերտսն. ի Թըմբրութի հրաշիցն ի սէր ածային փառաց քոց. զքեզ փառ:

Օրհ: Զփառաւորեալըն յամ արարածոց. եւ ի ծագաց մինչ ի ծագս երկրի զերկըրպագեալն. զմարմնացեալ Բանն ի կուսէն ձայնիւ երգով օրհնեսցուք: Որ դիմեալ գայ յԵդովմայ բարձրացեալ փողով. յարուցեալ ի պատերազմ ընկըղմեաց զաներեւոյթն Ամա-

ղէկ. զիջեալ բանն ի դժոխս ձայնիւ երգով օրհնեսցուք: Ծագումն ի Հօրէ փառակից սուրբ Հոգւոյն. կենդանութիւն ազգի մարդկան. որ յարեաւն այսօր ի մեռելոց. զհամբարձեալ բանն ի յերկինս ձայնիւ երգով օրհնեսցուք:

ՀՈԳ. Որ ի քրովբէական կառսըդ հանգչիս. այսօր իջեր յերկնից ի դասս առաքելոցըն սուրբ Հոգի. * օրհնեալ ես Թագաւոր անմահ: Որ գնաս ի վերայ թեւոց հողմոց. այսօր ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառաքեալսըն սուրբ Հոգի. օրհնեալ: Որ խնամես տեսչութեամբ զքո զարարածս. այսօր եկիր ի հաստատել զեկեղեցի քո սուրբ Հոգի. օրհնեալ:

ՆՉՂ: Ձայն արկեալ կենարարին Ածածային բարբառովն. ասէ եկայք օրհնեալք Հօր իմոյ. ժառանգեցէք պատրաստեալ ձեզ ըզկեանսն ի հանդերձեալ երկրին: Ընդ առաջ ելանել քեզ հաւատով ի յօդըս վերինս. աստուածազգեաց լուսով պայծառացեալ ի դասս անմարմնոցն. ի լսել ըզձայն երանաւէտ կոչմանն: Ընդ աջմէ քումմէ կացո ընդ իմաստունն սուրբ կուսանսն. ի լուսեղէն առագաստին պայծառացեալ ի դասս անմարմնոցն. ի ժողովս անդրանկաց գրելոց ի յերկինս:

ԱՃՆ: Մարմնացեալդ ի կուսէն նախայաւիտեան Բանդ. այսօր ի տաճարին եկիր կատարել զօրէնս. վասըն փրկութեան հեթանոսաց: Որ յանարուեստ աթոռ նըստիս բարեբանեալդ ի հրեշտակաց. այսօր ի Սիմէոնէ բառնալով ի գիրկս. որ ընծայեսցես ըզմեզ ի կեանսըդ յաւիտենից: Որ արձակիչդ ես կապելոց պարգեւատու ամենեցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա և զիս ըզբազմամեղս. ի կապանաց մահու ի կեանսըդ յաւիտենից:

ԽՂ. Ի խորանի քում սրբութեան զոր ընտրեցեր գալըստեամբըդ քո Քս. * ի սմա միաձայնեալ աղաչեմք ըզքեզ. լուր ձայնի աղաչանաց մերոց. ընկալ եւ կեցո ըզմեզ: Ածային լուսով քով պայծառ քան զարեգակըն լուսաւորեցեր ըզքո սբ զեկեղեցի. ի սմա միաձայն: փառք Հօր: Այսօր և հրեշտակք ուրախանան ընդ պայծառութիւն քոյ սբ եկեղեցւոյ. ի սմա:

Այժմ և: Այսօր զուարճացան տիեզերըք գալըստեամբ Ածորդւոյն յԷմ. և գոչէին հընչմամբ երգով. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Մաղ. փառք հրաշափառ գալստեան:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Տէր Ած մեր երեւեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչեւ յանկիւնս սեղանոյ: Ած իմ ես դու, խոստովան եղէց քեզ. Ած իմ ես դու, և բարձր արարից ըզքեզ:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Փ. Լերինք ցնծասցեն առաջի Տեառն զի գայ. և հասեալ է Տր ի դատել զերկիր: Դատէ զաշխարհս արդարութբ. և զժողովուրդըս իւր ուղղութբ:

Փառք և: Այժմ և. ալէլուիա:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դկ:

Որ ի քրովբէական աթոռ ընդ Հօր նըստէիր Բանդ Այ. այսօր խոնարհութեամբ նըստար մարմնով նոր յաւանակի. ըզքեզ բարեբանեմք Աստուած հարցըն մերոց: Որ ի սրովբէիցըն սըրբասաց ձայնիւ անդադար օրհնաբանիս. այսօր ի դասուց Եբրայեցւոց որդւոց Դաւթի փառաբանեցար. ըզքեզ բարեբանեմք Աստուած

հարցըն մերոց: Որ ի հրակերպիցն երգաբանեալ հընչմամբ ի բարձունս օրհնաբանիս. այսօր ի ծերոց և ի տղայոց գովեցար ովսաննա երգով. ընդ քեզ բարեբանեմք Ած հարցըն մերոց:

Գ. Ի ղՏր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այսօր ըզգաստուս փրկչին մերոյ ցընծութբ տօնէ նոր Երուսաղէմ. ժողովուրդք որք ի հեթանոսաց. բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Այսօր ընդ մանկանցն Եբրայեցւոց. զհինաւուրցն եկեալ նոր արքայ ի Սիովն. մանկունք ծեր եկեղեցւոյ. բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և: Այսօր ընդ ծերոցն օրհնաբանից. ուրախութբ բարեբանեցէք. զանմահ թագաւորն եկեալ. քահանայք հոգեւոր երգով բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մեծացո. ԱՁ: Ուրախ լեր յոյժ դուստր Սիովնի. պայծառացիր Երուսաղէմ. զարդարեա ըզդրունս քո քաղաքդ Աստուծոյ: Փառք Հօր: Քանզի Քս որ էնն ի յաթոռ փառաց. այսօր մտանէ ի քեզ նստեալ ի վր յաւանակի նորոյ: Այժմ և: Ծերք և տղայք ոստովք ձիթենեաց միաբանութբ երգէին. օրհնութի որդւոյ Դաւթի օրհնեալ եկեալ անուամբ Տն:

Իալէլուիայ առաջ. Ղուկ: Եւ ահա այր մի: 45:

Ալլէ Երգ: Փառք յարութեան քո Տէր. ոչ դադար:

Գիշերի Պահպանութեան: Դասք լուսեղէն զուարթնոցն սպասէին մեծի գալստեանն Տն: Եւ երգէին երգ նոր. օրհնեալ է քո նոր գալուստդ:

Ողորմ. ԲԿ: Ուրախ լեր եկեղեցի սուրբ. ի գալստեան սուրբ միածնին. ուրախ լեր և ցընծա. հանդերձ ամենայն սրբովք: Փառք Հօր: Խընդա յոյժ դուստր վերին Սիովնի. ահա թագաւոր քո գայ

նըստեալ յաւանակի նորոյ. արդար և փրկիչ. փրկէ և կեցուցանէ: Այժմ և: Զուարճացիր և բերկրեա ժողովուրդ Աստուծոյ. մատո զուստրս ծաղկեալս հաւատով և ասա. օրհնեալ որ եկիրդ թագաւոր տիեզերաց:

Տէրունկ. ԲԿ: Քրիստոս թագաւորն որ էնն ի յաթոռ փառաց. տեսաք ի յերկրի նըստեալ ի նոր յաւանակի: Փառք Հօր: Ընդ առաջ եկեալ արքային դասք Եբրայեցւոցն. ծերքն ոստովք ձիթենեաց և տղայքն արմաւենեօք: Այժմ և: Միաբանեալ ձայնիւ գոչէին երգ նոր. բարեբանելով զանմահ թագաւորն:

Այլ է Տէրունականէս մինչև տօնն Համբարձման ի Կիւրակէն ... և Տէրունական ...

Առաւ. Երգ: Այսօր մտանէ թագաւորըն մեր Քրիստոս. ի յԵրուսաղէմ նոր քաղաք Դաւթի:

Ընդ առաջ ելին ծերքն ոստովք ձիթենեօք. և զԱստուածորդին փառաւորէին:

Քարոզ. Ասասցուք. կամ Քանզի:

Հանգստեան Աստուածածին՝ Շարական ԱՁ:

Որ վերօրհնիս յաթոռս քերովբէից. ի վերայ նըստեալ յաւանակի հանեցար. բարեբանեալ որ եկիրդ ի կեցուցանել: Ուստի և մեք զյաղթական օրհնութեանցն ըզձայն. մատուցանեմք քեզ թագաւոր փառաց ընդ տղայսն օրհնաբանելով. բարեբանեալ որ եկիրդ ի կեցուցանել: Ովսաննա ի բարձունս ալէլուիա. բարեբանեալ եկեալ անուամբ Տն ալէլուիա. և օրհնութի որ գալոցդ ես անուամբ Տն՝. ալէլուիա:

Սաղմոս ՂԸ:

ԿՑ. Տեսին ամ՟ ծագք երկրի զփրկութի՟ ԱՅ՟ մերոյ:

Փխ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր, զի սքանչելիս արար:

փրկեաց նմա աջ իւր. և բազուկ սուրբ իւր:

Ցոյց Տէր զփրկութիւն իւր. առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր:

Յիշեաց ողորմութեամբ իւրով զՅակոբ, ճշմարտութեամբ իւրով զտունն Իսրայէլի. և տեսին ամ՟ ծագք երկրի զփրկութիւն ԱՅ՟ մերոյ:

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր. օրհնեցէք, ցնծացէք և սաղմոս ասացէք:

Սաղմոս ասացէք ԱՅ՟ մերոյ օրհնութեամբ. օրհնութեամբ և ի ձայն սաղմոսաց:

Ի ձայն օրհնութեան կռածոյ փողոյ. օրհնութեամբ ցնծութեամբ և ի ձայն եղջեր փողոյ աղաղակեցէք առաջի Թագաւորին Տեառն:

Խռովեսցի ծով լրիւ իւրով, տիեզերք և ամ՟ բնակիչք նր՟. և գետք ծափս հարցեն ի միասին ձեռամբ:

Լերինք ցնծասցեն առաջի Տեառն, զի գայ. և հասեալ է Տէր ի դատել զերկիր:

Դատի զաշխարհս արդարութեամբ և զժողովուրդս իւր ուղղութեամբ:

ընթերցուած յԵրգոց երգոյն Սողոմոնի: Բ. 8:

Ձայն եղբօրորդւոյ իմոյ. ահաւասիկ սա եկն վաղելով ի վր՟ լերանց՝ խայտալով ի վր՟ բլրոց: Նման է եղբօրորդին իմ այծեման կամ որթուց եղանց ի վր՟ լերանց Բեթելայ: Արի՛, եկ մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ. վն՟ զի ահա ձմեռն էանց. անձրևք անցին, և գնացեալ մեկնեցան: Ծաղիկք երևեցան յերկրի. ժամանակ յատանելոյ եհաս: Ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում: Թզենի ընձիւղեաց զբողբոջ իւր. այգիք մեր ծաղկեցան և ետուն զհոտս իւրեանց: Արի՛, եկ մերձաւո՛ր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ. եկ ընդ հովանեաւ վիմին՝ մերձ առ նախապարիսպն: Ցո՛յց ինձ զդէմս քո. լսելի՛ արա ինձ զբարբառ քո. վն՟ զի ձայն քո քաղցր է, և դէմք քո գեղեցիկ: Կալարո՛ւք մեզ աղուեսունս փոքունս՝ զապականիչս այգեաց. և այգիք մեր ծաղկեսցին: Եղբօրորդին իմ ինձ և ես նմա. որ հովուէն ի մէջ շուշանաց: Իջցէ եղբօրորդին իմ ի պարտէզ իւր. և կերիցէ զպտուղս ծառոց իւրոց: Տեսին զնա դստերք և երանեցին նմա. թագուհիք և հարճք գովեցին զնա: Ո՞վ է սա՛ որ երևեալս է իբրև զառաւօտ. գեղեցիկ որ՟ զլուսին. ընտիր իբրև զարեգակն. իբրև զհիացումն կարգեալ: Ի պարտէզս ընկուզաց իջի հայել յարմտիս ուղխից. տեսանել թէ ծաղկեա՛լ իցէ որթն, թէ ծաղկեալ իցեն նռնենիք: Անդ տաց զստինս իմ:

ընթերցուած յԵսայեայ մարգարէէ: ԿԲ. 11:

Ասացէք դստեր Սիովնի, ահաւասիկ փրկիչ քո հասեալ գայ և ունի զվարձս իւր ընդ իւր. և գործ իւր առաջի երեսաց իւրոց: Եւ կոչեսցէ զնա ժողովուրդ սուրբ փրկեալ ի Տեառնէ. և դու կոչեսցիս խնդրեալ քաղաք և ոչ լքեալ: 12:

Պօղոսի առաքելոյն յԵփեսացւոց թղթոյն է ընթերցուածս: Ա. 3:

Օրհնեալ է ԱԾ՟ և Հայր Տեառն մերոյ ՅՍի ՔՍի, որ օրհնեաց զմեզ ամ՟ հոգևոր օրհնութբ՟ յերկնաւորս ի ՔՍ: Որպէս ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն աշխարհի, լինել մեզ սբ՟ս և անարատս առաջի նր՟ սիրով: Յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդէգրութի՟ ի ձեռն ՅՍի ՔՍի, ի նոյն ըստ հաճութե՟ կամաց իւրոց, ի գովեստ փառաց շնորհաց իւրոց. որով զուարճացոյց զմեզ սիրելեաւն: Որով ունիմք զփրկութի՟ ի ձեռն արեան նր՟, զթողութի՟ մեղաց՝ ըստ մեծութե՟ շնոր-

հաց իւրոց. որ առաւելաւ ի մեզ ամենայն իմաստութեամբ և գիտութեամբ։ Եցոյց մեզ զխորհուրդս կամաց իւրոց՝ ըստ հաճութ՟ե իւրում, զոր յառաջագոյն եդ նովաւ ի տնտեսութ՟ի լրման ժամանակաց, բովանդակել զամենայն Քրիստոսիւ, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի՝ ի նոյն։ 10։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն. օրհնեալ որ գալոց ես անուամբ Տեառն. և օրհնեցաք զքեզ ի տանէ Տեառն։

Զկնի՝ Ո՛րթիւ։

Աւետարան ըստ Մարկոսի։ Ժ. 46։

Վասն գալստեան Տեառն մերոյ Յ՟ի Ք՟ի։

Եւ գան յԵրիքով. և ընդ ելանելն նորա յԵրիքովէ աշակերտօքն և բզմ՟ ժողովրդով, որդի Տիմեի Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ յանցս ճանապարհի։ Իբրև լուաւ՝ թէ Յ՟ս Նազովրեցի է, սկսաւ աղաղակել և ասել. որդի՛ Դաւթի Յ՟ս՝ ողորմեա՛ ինձ։ Եւ սաստէին նմա բազումք՝ զի լռեսցէ. և նա առաւել ևս աղաղակէր. որդի՛ Դաւթի ողորմեա՛ ինձ։ Զտեղի առ Յ՟ս՝ և հրամայեաց կոչել զնա։ Կոչեն զկոյրն և ասեն ցնա. քաջալերեա՛ց, արի՛, կոչէ զքեզ։ Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր, յարեաւ և եկն առ Յ՟ս։ Պատասխանի ետ նմա Յ՟ս և ասէ. զի՞նչ կամիս՝ թէ արարից քեզ. ասէ ցնա կոյրն. ռաբունի, զի բացայց։ Եւ Յ՟ս ասէ ցնա. երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ. և վաղվաղակի բացաւ, և երթայր զհետ նորա ի ճանապարհին։ Եւ յորժամ մերձ եղեն յԵ՟մ, ի Բեթփագէ և ի Բեթանիա՝ մօտ ի լեառն Ձիթենեաց, առաքէ երկուս յաշակերտաց անտի, և ասէ ցն՟ս. երթա՛յք դուք ի գեօղդ՝ որ ընդդէմ ձեր կայ. և նոյնժամայն իբրև մտանիցէք ի նա, գտանէք յաւանակ մի կապեալ, յորոյ վ՟ր ոչ ոք ի մարդկանէ նստաւ, լուծէք զնա և ածէք։ Եւ եթէ ոք ա-

սասցէ ձեզ՝ թէ զի՞ լուծանէք զյաւանակդ. ասասջի՛ք՝ թէ տ՟ռն իւրում պիտոյ է. և վաղվաղակի առաքեսցէ զնա այսր։ Չոգան և գտին զյաւանակն կապեալ առ դուրս արտաքոյ ի փողոցի անդ, և լուծին զնա։ Եւ ոմանք յորոց անդն կային՝ ասեն ցն՟ս. զի՞ գործէք, զի՞ լուծանէք զյաւանակդ։ Եւ նոքա ասեն ցն՟ս ո՟պ ասացն Յ՟ս. և թոյլ ետուն ն՟ց։ Ածեն զյաւանակն առ Յ՟ս. և արկանեն ի վ՟ր ն՟ր հանդերձս, և նստաւ ի վ՟ր ն՟ր։ Եւ բազումք զհանդերձ իւրեանց տարածանէին ի վ՟ր ճանապարհին, և այլք ոստս ի ծառոց հատանէին և արկանէին զճանապարհաւն։ Եւ որ առաջին և զկնի երթային, աղաղակէին և ասէին. ովսաննա բարձրելոյն։ Օրհնեալ որ գաս յանուն Տ՟ռն. օրհնեալ թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի. խաղաղութ՟ի յերկինս և փառք ի բարձունս։ Եւ եմուտ Յ՟ս յԵ՟մ ի տաճարն, և հայեցաւ շուրջ զամենեքումբք. և զի էր երեկոյացեալ ժամ՟ն՝ ել ի Բեթանիա երկոտասանիւքն հանդերձ։ ԺԱ. 11։

Զկնի աւետարանին սարկաւագն քարոզէ. Եւ ևս խաղաղութ՟ե։ Վ՟ս ի վերուստ։ Եւ տեառնագրեն զանդաստանն խաչիւ և աւետարանաւ, և օրհնեն զչորս կողմն աշխարհի։

Զկնի քրզ. Ս՟բ խաչիւս։ Աղ. Պահպանեա։

Եւ ապա ասեն։

Յորժամ եկեալ կենարարն ի գերեզմանն Ղազարու. յորժամ եկեալ կենարարն ի գերեզմանն Ղազարու՝ աւետաւոր ձայնիւն աղաղակէր ասելով. Ղա՛զարէ, արի՛ եկ արտաքս։ Իսկ մեռեալն ի գերեզմանէն յարեաւ. և նոյն ինքն զանմահութ՟ե պարգևեսն ետ սիրելոյն. և ա՟ծային ձայնիւն ի գերեզմանէն կոչեաց. վ՟ն որոյ և մանկունք Եբրայեցւոց ոստովք օրհնէին զանմահ թագաւորութ՟ի քո. ովսաննա օրհնեալ է գալուստ քո, օրհնութ՟ի ի բարձունս. օրհնեալ որ գալոցդ ես անուամբ Տեառն։

Հր. Դկ. ՍՏ: Յիսուս միածինն անմահութեանց պարգեւատուն երեւեցաւ մեզ. խափանեաց զզօրութիւն մահու: Բղխմամբ արտասուաց Մարիամու և Մարթայի անկեալ առ ոտսն Տեառն. խընդրէին զնորոգումն եղբօրն: Բանիւ Բանն Աստուած կենագործեաց ըզՂազարոս ի թաղմանէ. և եկեալ արտաքս անապական:

Աշխ: Գուն ծաղիկ անթառամ տնկմի սեռիս մարդկութեան. և շառաւիղ օրհնութեան նախնւոյ ծնողին մեր բնութեան. * բարեխօսեա միածնին Ածածին մայր Բանին: Երկնաւոր արքային եղեր տաճար ըստ երգողին. յանկարծակի փեսային ի յառագաստ բազմեալ քոյին. բարեխօսեա: Զօրք երկնից անմարմնոց իմանալեացըն զուարթնոց. իջեալ յերկնից ի յերկիր սպասաւորել մեծ արքային. բարեխօսեա:

Խղ: Այսօր նշան յաղթող երեւեալ ի յերկրի. պայծառացոյց ըզտիեզերս. զէն յաղթութեան եդեր ըզխաչ քո Տէր. * ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց թշնամւոյն: Փառք Հօր: Փայտ կենաց կանգնեալ ի մէջ տիեզերաց յոյս եւ ապաւէն ազգի մարդկան. սա պահեսցէ ըզմեզ յամենայն վտանգից մերոց. ապրեց: Այժմ և միշտ: Յաղթող զօրութբ խաչի քո պահեա ըզմեզ Քն Աստծ. որ տարածեցեր ըզձեռս քո ի նմա. եւ լուծեր ըզկնիք դատապարտութեան յանցանաց մերոց. ապրեց:

Եւ երթան ի գերեզմանն. Եւ ասեն յայնժամ՝

Սաղմոս ՃԻԹ:

Կց. Եղիցին ականջք քո ի լսել ձայն աղօթից իմոց:

Փխ. Ի խորոց կարդացի առ քեզ Տէր. Տէր լուր ձայնի իմում:

Եղիցին ականջք քո ի լսել ձայն աղօթից իմոց: Թէ զանօրէնութիւս քննես Տէր. Տէր ո՞ կարէ կալ առաջի քո, զի ի քէն է քաւութիւն:

Վն անուան քո համբերի Տր. համբեր անձն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ ի Տր: Ի պահէ առաւօտու մինչև յերեկոյ. ի պահէ առաւօտու յուսացաւ Իսրայէլ ի Տէր:

Ի Տեառնէ է ողորմութիւն բազում, և ի նմանէ է փրկութիւն. — և նա փրկեաց զԻսրայէլ յամենայն նեղութեանց նորա:

Ձայնէ Որթիւ:

Աւետարան ըստ Յովհաննու: ԺԱ. 1:

Վասն փառաց Տեառն մերոյ Յսի Քսի:

Էր ոմն հիւանդ Ղազարոս. երես 157:

Ձայնէ Մաղթանք. Հոգւոցն հանգուցելոց: Քարոզ. Վասն հոգւոցն: Աղօթք. Քս Որդի Այ:

Եւ է փառաւորեն յեկեղեցին տանելն Շարական ԲԿ:

Այսօր ընդ հրակերպեան դասուցն օրհնաբանէին ծերքն ոստովք եւ տղայքն արմաւենեօք. * ովսաննայ. օրհնեալ եկեալդ ի յանուն Տեառն: Զոր սերովբէքըն ծածկաբար ընդունել ոչ բաւէին. ի վերայ յաւանակի նորոյ նստեալ բարեբանեցաւ ի տղայոց. ովսաննայ: Այսօր ընդ ծերոց և ընդ տղայոց օրհնաբանութեանցըն վերերգեմք նորոյ արքայիդ եկեալ յԵրուսաղէմ. ովսաննայ:

Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն. օրհնեալ որ գալոցդ ես: — ԶՕրհնեալ եկեալն երեքս ասա:

Եւ ասա Նորաստեղծեալ:

Քրզ. Խնդրեսցուք: Կեցո յայնժ: Աղ. Քում ամենազօր և հրաշալի գալստեանդ:

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ի յինն ժամու ժողովին է պաշտօն Եկեղեցւոյն. Եւ ասեն Սաղմոս ՂԷ:

ԿՑ. Լերինք ցնծասցեն առաջի Տ՟ն զի գայ. և հասեալ է Տէր ի դատել զերկիր:

Փխ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր, զի սքանչելիս արար:

Փրկեաց նմա աջ իւր, և բազուկ սուրբ իւր:

Եցոյց Տէր զփրկութիւն իւր. առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր:

Յիշեաց ողորմութ՟ իւրով զՅակովբ. ճշմարտութ՟ իւրով զտունն Իսրայէլի. և տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Ա՟յ մերոյ:

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր. օրհնեցէք, ցնծացէք և սաղմոս ասացէք:

Սաղմոս ասացէք Ա՟յ մերոյ օրհնութեամբ. օրհնութեամբ և ի ձայն սաղմոսաց:

Ի ձայն օրհնութեան կռածոյ փողոյ. օրհնութեամբ ցնծութեամբ և ի ձայն եղջեր փողոյ աղաղակեցէք առաջի թագաւորին Տեառն:

Խռովեսցի ծով լրիւ իւրով, տիեզերք և ա՟մ բնակիչք ն՟ր. և գետք ծափս հարցեն ի միասին ձեռամբ:

Լերինք ցնծասցեն առաջի Տ՟ն, զի գայ. և հասեալ է Տէր ի դատել զերկիր:

Դատի զաշխարհս արդարութեամբ. և զժողովուրդս իւր ուղղութեամբ:

ընթերցուածս յԱռակաց: Ը. 22:

Տէր ստացաւ զիս ի սկիզբն ճանապարհաց իւրոց ի գործս իւր. յառաջ քան զյաւիտեանս հաստատեաց զիս: Ի սկզբանէ յառաջ քան զերկիր առնել, և նախ քան զանդունդս գործել, և յառաջ քան զբղխել աղբերաց ջուրց: Եւ նախ քան զլերինս հաստատել, և

յառաջ քան զա՟մ բլուրս ծնաւ զիս: Տէր արար զշէնս և զանշէնս, և զեզերս զբնակեալս ի ներքոյ երկնից: Յորժամ պատրաստէր զերկինս՝ ընդ նմա էի. և մինչ զատուցանէր զաթոռ իւր ի վ՟ր հողմոց: Եւ յորժամ զօրացուցանէր զամպս վերինս. յորժամ անսխալ դնէր զաղբիւրս ի ներքոյ երկնից: Ի դնել ծովու զգուշութ՟ե ն՟ր. զի ջուրք մ՟ի անցցեն ընդ ափն ն՟ր. ի ժամանակի՝ յորժամ հաստատուն դնէր զհիմունս երկրի: Ես էի առ նմա պատշաճեալ. ես էի որով ուրախ լինէր Տէր հանապազ. և ցնծայի առաջի նորա յամենայն ժամ: Յորժամ զուարճացեալ էր զտիեզերս բովանդակել. և ուրախ լինէր յորդիս մարդկան: 31.

ընթերցուած յԵրեմեայ մարգարէէ: (Բարուք Դ. 36:)

Հայեաց ընդ արեւելս Եղ՟էմ, և տես զեկեալ ուրախութ՟ին քեզ յԱ՟յ: Ահաւադիկ գան որդիք քո զորս յուղարկեցեր. գան ժողովեալք յարեւելից մինչեւ ի մուտս արեւու բանիւ սրբոյն. խնդացեալք փառօքն Ա՟յ: Մերկեա՛ Եղ՟էմ զհանդերձ սգոյ և լլկանաց քոց. և զգեցի՛ր զվայելչութիւն փառացն Ա՟յ ի յաւիտեան: Եւ ա՛րկ զքեւ զկրկնոցն արդարութեան յԱ՟յ. դի՛ր խոյր ի գլուխ քո զփառաց յաւիտենականին: Զի ցուցցէ Ա՟Ծ ի ներքոյ երկնից զա՟մ լուսաւորութիւն քո: Եւ կոչեսցի քեզ անուն յԱ՟յ ի յաւիտեան. խաղաղութիւն արդարութեան և փառք ա՟ծպաշտութեան: Ե. 4:

Պետրոսի առաքելոյն ի կաթուղիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս: Ա. 3:

Օրհնեալ է Ա՟Ծ և Հայր Տ՟ն մերոյ Յ՟ի Ք՟ի, որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի՝ ի ձեռն յարութ՟ե՟ն Յ՟ի Ք՟ի ի մեռելոց. յանեղծ և յանարատ և յանթառամ ժառանգութիւնն՝ որ պահեալ է յերկինս ի ձեզ. որ զօրութ՟բ՟ն Ա՟յ պահեալ էիք հաւատովք ի պատրաստեալ փրկու-

թ՟ին, յայտնեալ ի յետին ժամանակս: Որով ուրախ
լինիջիք, որ այժմ սակաւիկ ինչ ըստ պատշաճի իրացդ
տրտմեալ էք ի պէսպէս փորձութիւնս: Զի հանդէս ձերոյ
հաւատոյն առաւել քան զոսկի կորստական՝ պատուա-
կան է. որ հրով փորձեալ՝ գտաւ ի գովութիւն և ի
փառս և ի պատիւ ի յայտնութ՟են Յ՟սի Ք՟սի: Զոր ոչն
տեսէք՝ և սիրեցէք. ընդ որ այժմ ոչ հայեցեալք՝ բայց
հաւատացէք. և ուրախ էք անճառ և փառաւորեալ
խնդութ՟բն. ընկալեալ զկատարումն հաւատոյն ձերոյ
զոգւոցն փրկութ՟ի: Թ:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Տ՟ր ի տաճար ս՟բ իւրում. Տ՟ր յերկինս յաթոռ իւրում:

Զ՟նէ՝ Ո՛րթիւ:

Աւետարան ըստ Ղուկասու: Ժթ. 29:

Վասն գալստեան Տեառն մերոյ Յ՟սի Ք՟սի:

Եւ եղեւ իբրեւ մերձեցաւ ի Բեթփագէ և ի Բե-
թանիա մօտ ի լեառն որ կոչի Ձիթենեաց, առաքեաց
երկուս յաշակերտացն իւրոց, և ասէ: Երթայք դուք ի
գեօղն՝ որ հանդէպ մեր կայ. յոր իբրեւ մտանէք՝
գտանիցէք յաւանակ կապեալ, յորում ոք ի մարդ-
կանէ երբեք ոչ նստաւ, լուծէք զնա և ածէք: Եւ եթէ
ոք հարցանիցէ զձեզ՝ թէ ընդէ՞ր լուծանէք, այսպէս
ասասջիք ցնա, թէ տ՟ն իւրում պիտոյ է: Իբրև չոգան
որ առաքեցանն՝ գտին ո՟պ ասացն ցնոսա, կայր յաւ-
անակն: Եւ մինչդեռ լուծանէին զյաւանակն, ասեն
տեարքն ն՟ր ցն՟ս. զի՞ լուծանէք զյաւանակդ: Եւ նոքա
ասեն, տ՟ն իւրում պիտոյ է: Եւ ածին զնա առ Յ՟ս. և
արկին զնովաւ հանդերձս, և հեծուցին զՅ՟ս: Եւ մինչ-
դեռ երթայր՝ զհանդերձս իւրեանց տարածանէին
զճանապարհաւն: Եւ իբրեւ այն ինչ մերձ եղեւ ի զառ-
իվայր լերինն Ձիթենեաց, սկսաւ ա՟մ բազմութ՟ի ա-
շակերտացն ուրախութ՟բ օրհնել զԱ՟ծ ի ձայն մեծ՝ վ՟ն
ա՟մ եղելոց զօրութ՟եցն զոր տեսին. և ասէին. օրհնեալ

որ գայ թագաւորդ յանուն Տ՟ն. խաղաղութ՟ի յեր-
կինս և փառք ի բարձունս: Եւ ոմանք ի Փարիսեցւոցն
յամբոխէ անտի ասեն ցնա. վա՛րդապետ՝ սաստեա՛ ա-
շակերտացդ քոց: Պատասխանի ետ և ասէ. ասեմ ձեզ՝
զի եթէ դոքա լռեսցեն, քարինքդ աղաղակեսցեն: Եւ
իբրեւ մերձեցաւ, տեսեալ զքաղաքն՝ ելաց ի վ՟ր ն՟ր,
և ասէ. եթէ գիտէիր դու գոնէ յաւուրս յայսմիկ
զխաղաղութ՟ին քո. բայց այժմ ծածկեցաւ յերեսաց
քոց: Զի եկեսցեն աւուրք ի վ՟ր քո, և պատեսցեն զքեւ
թշնամիք քո պատնէշ, և պաշարեսցեն զքեզ, և նե-
ղեսցեն զքեզ յա՟մ կողմանց. և յատակեսցեն զքեզ
և զորդիս քո ի քեզ. և ոչ թողուցուն քար ի քարի
վ՟ր յա՟մ ի քեզ. փոխանակ զի ոչ ծաներ զժամա-
նակ այցելութ՟ե քո: Եւ մտեալ ի տաճարն սկսաւ հա-
նել զաղաւնէվաճառսն և զգնողս. և զսեղանս հատա-
վաճառացն ցրուեաց: Եւ ասէ ցն՟ս. գրեալ է՝ Եւ եղիցի
տուն իմ տուն աղօթից. և դուք արարէք զդա այրս
աւազակաց: Եւ ուսուցանէր զնոսա հանապազ ի տա-
ճարին. իսկ քահանայապետքն և դպիրք և գլխաւորք
ժողովրդեանն խնդրէին զնա կորուսանել: Եւ ոչ գտա-
նէին՝ թէ զինչ արասցեն. զի ժողովուրդն ա՟մ կախեալ
կային զնմանէ ի լսել: 48:

Եւ ելանեն խաչիւ եւ աւետարանաւ եւ ամենայն ժողովուրդ.
ի դուրս յանդաստան՝ առնլով Շարական: Եւ դադարեն ի
տեղի ինչ մինչեւ ասի Շարական ԱՁ:

Ո՛ր վե՛րօրհնիս յա՛թոռըս քերո՛վբէի՛ց. ի վե՛ր նըստել
յա՛ւանակի՛ հաճեցա՛ր. * բա՛րեբանեա՛լ ո՛ր եկի՛րդ ի՛
կե՛ցուցանե՛լ: Ո՛ւստի և մե՛ք զյա՛ղթակա՛ն օրհնութե՛ցն
ե՛րգձայն. մա՛տուցանե՛մք քեզ թագա՛ւո՛ր փառաց ընդ
տղա՛յոցն օրհնաբանե՛լո՛վ. բա՛րեբան: Ո՛վսաննա՛ ի բա՛ր-
ձունս ա՛լէ՛լո՛ւիա. բա՛րեբա՛նեա՛լ եկեա՛լ անուա՛մբ Տ՟ն ա՛-
լէլո՛ւիա. և օ՛րհնու՛թի՛ ո՛ր գալո՛ցդ ես անուա՛մբ Տ՟ն ա՛լէ՛լ:

Ձ՟ն՝ Որթիւ:

Աւետարան ըստ Մատթէոսի: ԻԱ. 1:

Վասն գալստեան Տեառն մերոյ Յ՟սի Ք՟սի:

Իբրեւ մօտ եղեն յԵրուսաղէմ, և եկին ի Բեթփագէ մերձ ի լեառն Ձիթենեաց, յայնժամ Յ՟ս արձակեաց երկուս յաշակերտացն իւրոց: Եւ ասէ ց՟նս. երթա՛յք ի գեօղդ՝ որ առաջի ձեր է. և անդէն գտանէք էշ կապեալ, և յաւանակ ընդ նմին. լուծէք ածէք ինձ: Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ, ասասջի՛ք, եթէ տ՟ռն իւրեանց պիտոյ են. և վաղվաղակի առաքեսցէ զնոսա: Բայց այս ա՟մ եղեւ, զի լցցի բան մարգարէին՝ որ ասէ. Ասացէք դստեր Սիովնի. ահա թագաւոր քո գայ քեզ հեզ, և հեծեալ յէշ և յաւանակի իշոյ: Գնացին աշակերտքն, և արարին որպէս հրամայեաց նոցա Յիսուս: Եւ ածին զէշն և զյաւանակն, և արկին զնոքօք զձորձս իւրեանց. և նստաւ ի վերայ նոցա: Եւ բազում ժողովուրդք տարածեցին զհանդերձս իւրեանց ի ճանապարհին, և այլք հատանէին ոստս ի ծառոց և տարածանէին ի ճանապարհին: Եւ ժողովուրդքն որ առաջի և զկնի երթային՝ աղաղակէին և ասէին. օրհնութիւն որդւոյ Դաւթի. օրհնեալ որ գայ յանուն Տեառն. օրհնութիւն ի բարձունս: 9:

Եւ Երգեան յայլ հանգիստ՝ առեալ Շարական Դ.Զ:

Թագաւոր գոլով քո յաշխարհս. մտեր ի քաղաքն Երուսաղէմ. նստեալ ի վ՟ր հողեղէն նոր յաւանակի. կոչել զհեթանոսս յերկրպագութի: Ծերքն ոստովք ձիթենեօք. եւ տղայքն ոստովք արմաւենեօք. եւ երամ երամ դասուքն աղաղակէին. ովսաննա օրհնեալ եկեալ ի յանունն Տ՟ռն: Ցընծացաւ ն՟ր Սիովն. բերկրեցան ն՟ր եկեղեցիք. եւ խնդութիւ բազմաւ ելին ընդ առաջ. օրհնէին զգալուստ քո փրկիչ յաշխարհ:

Ձ՟ն՝ Որթիւ:

Աւետարան ըստ Մարկոսի: ԺԱ. 1:

Վասն գալստեան Տեառն մերոյ Յ՟սի Ք՟սի:

Եւ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ ի Բեթփագէ և ի Բեթանիա մօտ ի լեառն Ձիթենեաց, առաքէ երկուս յաշակերտաց անտի. և ասէ ց՟նս. երթա՛յք դուք ի գեօղդ՝ որ ընդդէմ ձեր կայ. և նոյնժամայն իբրեւ մտանէք ի նա, գտանէք յաւանակ մի կապեալ. յորոյ վ՟ր ոչ ոք ի մարդկանէ նստաւ, լուծէք զնա և ածէք: Եւ եթէ ոք ասասցէ ձեզ՝ եթէ զի՞ լուծանէք զյաւանակդ. ասասջի՛ք՝ եթէ տ՟ռն իւրում պիտոյ է. և վաղվաղակի առաքեսցէ զնա այսր: Չոքան, և գտին զյաւանակն կապեալ առ դուրս արտաքոյ ի փողոցի անդ, և լուծին զնա: Եւ ոմանք յորոց անդն կային՝ ասեն ց՟նս. զի՞ լուծանէք զյաւանակդ: Եւ նոքա ասեն ց՟նս ո՟պ ասացն Յ՟ս. և թոյլ ետուն ն՟ց: Ածեն զյաւանակն առ Յ՟ս. և արկանեն ի վ՟ր ն՟ր հանդերձս. և նստաւ ի վ՟ր ն՟ր: Եւ բազումք զհանդերձս իւրեանց տարածանէին ի վ՟ր ճանապարհին, և այլք ոստս ի ծառոց հատանէին և արկանէին զճանապարհաւն: Եւ որ առաջին և զկնի երթային՝ աղաղակէին՝ և ասէին. ովսաննա բարձրելոյն: Օրհնեալ որ գաս յանուն Տ՟ռն. օրհնեալ թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի. խաղաղութի յերկինս և փառք ի բարձունս: 10:

Եւ Երգեան յայլ հանգիստ՝ առեալ Շարական Դ.Զ:

Յորժամ եկն Յ՟ս յԵ՟մ ի քաղաքն. ընդ առաջ ելին ծերքն ոստովք ձիթենեօք. և զԱ՟ծորդին փառաւորէին: Ի լեռնէ ձիթենեաց տարածանէին մանկունքն զհանդերձս իւրեանց. և ոստս ի ծառոց բերեալ մատուցանէին. Ա՟ծորդւոյն ն՟ր՝ թագաւորին: Ոստովք և տերեւեալ ձիթենեօք. Եբրայեցւոց մանկունք օրհնէին. ուրախ լեր Երուսաղէմ քաղաք. և ցնծա Սիովն մայր եկեղեցի:

Զնէ́ Որթէւ։

Աւետարան ըստ Ղուկասու։ ԺԸ. 31։

Տէրն մեր Յս Քս

Առեալ զերկոտասանսն առանձինն՝ ասէ ցնս. ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ. և կատարեսցին ամենայն գրեալքն մարգարէիւք վն որդւոյ մարդոյ։ Զի մատնեսցի հեթանոսաց և կատակեսցի. և հարկանիցեն և սպանանիցեն զնա, և յերիր աւուր յարիցէ։ Եւ նոքա ոչինչ իմացան յայնցանէ, այլ էր բանն ծածկեալ ի նոցանէ, և ոչ գիտէին զասացեալսն։ Եւ եղեւ ի մօտենլ նր յԵրիքով՝ կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ։ Իբրեւ լուաւ զանցանել ժողովրդեանն, հարցանէր թէ զի՞նչ իցէ այն։ Եւ պատմեցին նմա, թէ Յս Նազովրեցի անցանէ։ Աղաղակեաց և ասէ. Յս որդի Դաւթի ողորմեա́ց ինձ։ Եւ որ առաջին երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ. և նա ևս առաւել աղաղակէր. որդի Դաւթի ողորմեա́ց ինձ։ Զտեղի առ Յս, և հրամայեաց ածել զնա առ ինք. և իբրեւ մերձ եղեւ առ նա, եհարց զնա և ասէ։ Զի՞նչ կամիս դու՝ զի արարից քեզ. և նա ասէ. Տէր՝ զի բացցին աչք իմ և տեսից։ Եւ Յս ասէ ցնա. հայեա́ց, հաւատք քո կեցուցին զքեզ։ Եւ առժամայն ետես. երթայր զհետ նորա, և փառաւոր առնէր զԱծ. և ամ ժողովրդեանն տեսեալ՝ տայր օրհնութի Այ։ Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով։ Եւ ահա այր մի անուն կոչեցեալ Զակքեոս, և նա էր մաքսապետ, և ինքն մեծատուն. և խնդրէր տեսանել՝ եթէ ո́վ իցէ Յս, և ոչ կարէր ի բազմութէն, զի կարճ էր հասակաւ։ Եւ ընթացեալ յառաջս՝ ել ի ժանտաթզենին՝ զի տեսանիցէ զնա. քանզի ընդ այն իսկ անցանելոց էր։ Իբրեւ եկն ի տեղին, հայեցաւ ի վեր Յս և ասէ ցնա. Զա́կքէ՝ փութա́ էջ այտի, զի այսօր ի տան քում արժան է ինձ ագանել։ Փութացաւ և էջ, և ընկալաւ զնա ուրախութբ։ Իբրեւ տեսին ամե-

նեքին, տրտնջէին և ասէին՝ թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել։ Եկն եկաց Զակքէոս՝ և ասէ ցՏէր. Տէր՝ ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց. և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին։ Եւ ասէ ցնա Յս. այսօր եղեւ փրկութի տանս այսմիկ. քանզի և սա որդի Աբրահամու է։ Զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալսն։ Եւ մինչդեռ նոքա զայն լսէին, յաւել առակ մի և ասէ, վն մերձենալոյ նր յԵէմ, և համարելոյ նց եթէ առժամայն յայտնելոց է արքայութի Այ։ Ասէ. այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն և դառնալ։ Եւ կոչեցեալ զծառայս իւր՝ ետ նոցա տասն մնաս. և ասէ ցնոսա. յարդեցէք զայդ՝ մինչեւ եկից։ Եւ քաղաքացիքն նր ատէին զնա, առաքեցին հրեշտակս զկնի նր և ասեն, թէ ոչ կամիմք թագաւորել դմա ի վերայ մեր։ Եւ եղեւ դառնալ նմա՝ առեալ զթագաւորութին, և կոչեալ զծառայսն՝ որոց տուեալ էր զարծաթն, զի գիտասցէ թէ ո́ զի՞նչ շահեցաւ։ Եկն առաջինն և ասէ. տէր՝ մնասն քո տասն մնաս արար։ Եւ ասէ ցնա, ազնի́ւ ծառայ և բարի, զի ի փոքուդ հաւատարիմ եղեր՝ լիջի́ր իշխանութի ունել ի վերայ տասն քաղաքի։ Եկն երկրորդն և ասէ. մնասն քո արար հինգ մնաս։ Ասէ և ցնա. և դու լիջի́ր ի վր հինգ քաղաքաց։ Եկն միւսն և ասէ. տէր՝ ահա մնասն քո՝ զոր ունէի ծրարեալ ի վարշամակի. երկնչէի ի քէն, զի այր ստամբակ ես. բառնաս զոր ոչ եդիր, և հնձես զոր ոչ սերմանեցեր։ Եւ ասէ ցնա, ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ ծառա́յ անհաւատ. գիտէիր թէ ես այր մի ստամբակ եմ, բառնամ զոր ոչ եդի, և հնձեմ ուր ոչ սերմանեցի։ Եւ ընդէ՞ր ոչ ետուր զարծաթն իմ ի սեղանաւորս. և եկեալ ես տոկոսեօք պահանջէի։ Եւ ասէ ցպաստաւորսն. առէք ի դմանէ զմնասն, և տարա́յք տո́ւք այնմ որ ունիցի զտասն մնասն։ Եւ ասեն ցնա. տէր՝ ունի տասն

մնաս: Ասեմ ձեզ, եթէ ամի որ ունիցի տացի. և յայնմանէ որ ոչն ունիցի՝ և զոր ունիցին բարձցի ի նմանէ: Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ, որ ոչն կամէին զիս թագաւորել ի վերայ նոցա, ածէք այսր և սպանէք առաջի իմ: Եւ իբրեւ զայս ասաց, գնաց յառաջ՝ ելանել յԵրուսաղէմ: ԺԹ. 28:

Եւ երթան յայլ հանգիստ՝ ասելով Շարական ԴԶ:

Օգալուստ քո Քն այսօր յԵրուսաղէմ նոր եկեղեցի նոր. յաղթական երգով բարեբանեմք. * օրհնեալ եկեալ անուամբ Տռն: Որ վասն մերոյ փրկութեան յաւանակի նստեալ յանձն առեր. ընդ մանկունսն բարեբանեմք. օրհնեալ ես: Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեա. և զերկրպագուս անուանդ քո պահեա ի խաղաղութեան:

Ջկնէ՝ Որթիւ:

Աւետարան ըստ Յովհաննու: ԺԲ. 12:

Վասն գալստեան Տեառն մերոյ Յսի Քսի:

Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում որ եկեալ էր ի տօնն, իբրեւ լուան թէ գայ Յս յԵրուսաղէմ, առին ոստս արմաւենեաց և ելին ընդ առաջ նորա. աղաղակէին և ասէին. ովսաննա, օրհնեալ որ գաս յանուն Տեառն՝ թագաւորդ Իէլի: Եւ գտեալ Յսի էշ մի՝ նստաւ ի վր նր. ոպ և գրեալ է. Մի՛ երկնչիր դուստր Սիովնի, ահաւադիկ թագաւոր քո գայ նստեալ ի վր յաւանակի իշոյ: Եւ զայն ինչ ոչ գիտացին աշակերտքն նր զառաջինն, այլ յորժամ փառաւորեցաւ Յս՝ յայնժամ յիշեցին, եթէ այն էր որ գրեալն էր վն նր. և զայն արարին նմա: Եւ ժողովուրդն վկայէր՝ որ էր ընդ նմա, թէ զՂազար կոչեաց ևեթ ի գերեզմանէն, և յարոյց զնա ի մեռելոց: Եւ վն այնորիկ ընդ առաջ եղեւ նմա ժողովուրդն, զի լուան եթէ զայն նշանս արարեալ էր նր: Իսկ փարիսեցիքն ասէին ընդ միմեանս. տեսանէք՝

զի ոչ ինչ օգտիք. ահաւասիկ աշխարհ ամ զկնի նր գնաց: Էին անդ ոմանք և հեթանոսք յելելոցն անդր, զի երկիր պագանիցեն ի տօնին: Նոքա մատեան առ Փիլիպպոս՝ որ ի Բեթսայիդայ Գալիլեացւոցն էր, աղաչէին զնա և ասէին. տէր՝ կամիմք զՅիսուս տեսանել: Գայ Փիլիպպոս և ասէ ցԱնդրէաս. Անդրէաս և Փիլիպպոս ասեն ցՅիսուս: Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա և ասէ. եհաս ժամ զի փառաւորեսցի որդի մարդոյ: 23:

Շարական ԴԶ:

Ի՛ յօրութե՛ յաւուր գալստեան փրկչին. տարածանէին մանկունքն ըղհանդերձս. * և անդադար ձայնիւ օրհնէին. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն: Ոստս ի ծառոց բերեալ մատուցանէին. Ածորդւոյն առ ճանապարհաւն. և անդադար ձայնիւ: Ի ծերոց բղխեալ օրհնութի. եւ ի տղայոց փառաբանութի. և անդադար ձայնիւ:

Սաղմոս Դ:

Կց. Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. և ետուր ուրախութի սրտից մերոց:

Փխ. Ի կարդալ իմում լուաւ ինձ Ած ըստ արդարութեան. ի նեղութե ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ և լուր աղօթից իմոց:

Որդիք մարդկան մինչեւ յե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութի և խնդրէք զստութի: Ծանիրո՛ւք՝ զի սքանչելիս արար Տէր սրբոյ իւրում. և Տէր լուիցէ ինձ ի կարդալ իմում առ նա:

Բարկանայք և մի՛ մեղանչէք. զոր ինչ ասէք ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարո՛ւք: Մատուցէք պատարագս արդարութեան, և յուսացարո՛ւք ի Տէր:

Բազումք ասէին, թէ ո՞ ցուցցէ մեզ զբարութի Տռն. Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. և ետուր ուրա-

խութն սրտից մերոց: Ի պտղոյ ցորենոյ, գինւոյ և ձի- թոյ իւրեանց լցուցեր զնոսա:

Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեսցուք և զարթի- ցուք. — զի դու Տէր միայն առանձինն յուսով քով բնակեցուցեր զմեզ:

Ձնէ՝ Ո՛րթիւ:

Աւետարան ըստ Մատթէոսի: ԻԴ. 27:

Տէրն մեր Յս Քս ասէ.

Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարեւելից և երևի մինչև յարեւմուտս՝ այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ: Զի ուր գէշն իցէ՝ անդր ժողովեսցին արծուիք: Վաղվաղակի յետ նեղութն աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տացէ զլոյս իւր, և աստեղք անկցին յերկնից, և զօրութիւք երկնից շարժեսցին: Եւ ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս, և յայն- ժամ կոծեսցին ամ ազգք երկրի. և տեսցեն զորդի մարդոյ եկեալ ի վր ամպոց երկնից զօրութբ և փառօք բազմօք: Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նր ի չորից հողմոց՝ ի ծագաց երկնից մինչև ի ծագս նց: Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նր ոստքն կակղասցին և տերեւն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն: Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամ. գիտասջիք թէ մերձ է ի դուրս: Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչև այս ամ եղիցի: Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի անցցեն: 35:

Ապա ասէ քարոզ. Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչ՝ վասն ի վերուստ: Եւ տեառնագրեն զանդաստանն, և օրհ- նեն զչորս կողմն աշխարհի:

Քարոզ. Սուրբ խաչիւս: Աղօթք. Պահպանեա:

Եւ ի դառնալն յեկեղեցին՝ ասասցեն. Եւ ևս խաղաղու- թեան: Օրհնութիւն և փառք:

Սաղմոս ՁԵ:

Խոնարհեցո Տր զունկն քո և լուր ինձ, զի աղքատ և տնանկ եմ ես:

Պահեա զանձն իմ Տր, Տր. փրկեա զծառայս քո Ած իմ, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տր, զի առ քեզ աղաղակեցի զօրհա- նապազ. ուրախ արա զանձն ծառայի քո, զի առ քեզ Տր համբարձի զանձն իմ:

Զի դու Տր քաղցր և ուղիղ ես. բազումողորմ առ ամենեսեան որք կարդան առ քեզ:

Ո՛ւնկն դիր աղօթից իմոց, և նայեաց ի ձայն խնդրուա- ծաց իմոց:

Յաւուր նեղութե իմոյ կարդացի առ քեզ և լուար ինձ:

Շարական ԲԿ:

Ո՛ւրախ լեր եկեղեցի Տր. ի գալստեանն նը միա- ծնին. ուրախ լեր և ցնծա հանդերձ ամենայն սըր- բովք: Երիցս կրկնեա:

Ոչ ոք է նման քեզ յաստուածս Տր. և ոչ ոք է որպէս զգործս քո:

Զամենայն ազգս՝ զոր արարեր, եկեսցեն և երկիր պագցեն առաջի քո Տէր, և փառաւոր արասցեն զա- նուն քո յաւիտեան:

Մեծ ես դու Տր, և առնես սքանչելիս, և դու միայն ես Աստուած:

Առաջնորդեա ինձ ի ճանապարհի քում, և գնացից ի ճշմարտութե քում. և ուրախ եղիցի սիրտ իմ եր- կնչել յանուանէ քումմէ:

Խոստովան եղէց առ քեզ Տէր Աստուած իմ. բոլո- րով սրտիւ իմով փառաւոր արարից զանուն քո յաւ- իտեան:

Մեծ եղեւ ի վերայ իմ ողորմութիւն քո, և փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց:

Շարական Բկ:

Խոնարհեա յոյժ դուստրն Սիոնի. ահա թագաւորն քո գայ նստեալ յաւանակի նորոյ. արդար եւ փրկիչ փրկէ եւ կեցուցանէ: Երիցս կրկնեա:

Ած, անօրէնք յարեան ի վերայ իմ, և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ. և ոչ համարեցան զքեզ Ած առաջի իւրեանց:

Այլ դու Տր Ած իմ, գթած ես և ողորմած. երկայնամիտ բազումողորմ և ճշմարիտ. նայեաց առ իս, և ողորմեա ինձ:

Տուր զօրութիւն ծառայի քո. կեցո զորդի աղախնոյ քո, և արա առ իս նշան բարութեան:

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու Տր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Շարական Բկ:

Զուարճացիր եւ բերկրեա ժողովուրդ Աստուծոյ. մատո զոստս ծաղկեալս հաւատով եւ ասա. օրհնեալ որ եկիր դու թագաւոր տիեզերաց: Երիցս կրկնեա:

Եւ ապա Մաղթանք:

Փառք քեզ Աստուած, փառք քեզ. յաղագս ամենայնի Տէր, փառք քեզ:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ:

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւ:

Սաղմոս ՃԼԹ:

Ապրեցո զիս Տր ի մարդոյ չարէ. յառնէ անիրաւէ փրկեա զիս:

Խորհեցան զանօրէնութիւն ի սիրտս իւրեանց. զօր ամ պատրաստեցան ի պատերազմ:

Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի, և թոյնք իժից ի ներքոյ շրթանց նոցա:

Պահեա զիս Տր ի ձեռաց մեղաւորի, և ի մարդոյ չարէ փրկեա զիս:

Խորհեցան խափանել զգնացս իմ. թաքուցին ամբարտաւանք որոգայթ ինձ:

Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց. շուրջ զշաւղօք իմովք եդին ինձ գայթագղութիւն:

Ասացի Տէր Ած իմ ես դու. ունկն դիր Տէր ձայնի աղօթից իմոց:

Տէր Տէր զօրութիւն փրկութեան իմոյ. հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի:

Մի մատներ զիս Տէր ի ցանկութիւն մեղաւորաց, զիք խորհեցան վն իմ ընդ վայր հարկանել զիս:

Զի մի երբէք բարձրասցին, և խորհուրդք նոցա մի կատարեսցին. վախճան կատարածի նոցա վաստակ շրթանց իւրեանց ծածկեսցէ զնս:

Արկցես ի վերայ նոցա կայծակունս հրոյ, և կործանեսցես զնս. ի տառապանաց մի կարասցեն կեալ:

Մարդոյ լեզուանւոյ մի յաջողեսցի ի վր երկրի. զայր մեղաւոր չարիք իւր որսասցեն ի կորուստ:

Շարական Բկ:

Զքրիստոս թագաւորն որ էնն ի յաթոռ փառաց. տեսաք ի յերկրի նստեալ ի նոր յաւանակի: Երիցս կրկնեա:

Ծանեայ, զի առնես Տէր դատաստանս աղքատի, և իրաւունս տնանկի:

Արդարք գոհասցին զանուանէ քումմէ, և բնակեսցին ուղիղք առաջի երեսաց քոց:

Տէր կարդացի առ քեզ, և լուր ինձ. նայեաց ի ձայն աղօթից իմոց ի կարդալ իմում առ քեզ:

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո Տէր. համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի:

Դի՛ր Տէր պահապան բերանոյ իմոյ, և դուռն ամուր շրթանց իմոց. զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան:

Ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս՝ որք գործեն զանօրէնութիւն. և ոչ եղէց կցորդ ընտրելեաց նոցա:

Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ, և յանդիման արասցէ. իւղ մեղաւորի մի՛ օծցէ զգլուխ իմ, այլ աղօթք իմ ի կամս նորա:

Արգելան մերձ առ վիմին դատաւորք նոցա. լուիցեն բանից իմոց և քաղցրասցին:

Որպէս թանձրութիւն հողոյ զի սփռեալ է ի վերայ երկրի. ցրուեսցին ոսկերք նոցա մերձ ի դժոխս:

Առ քեզ Տէր Տէր են աչք իմ, ի քեզ յուսացայ. մի՛ հաներ զհոգի յինէն:

Պահեա՛ զիս յորոգայթէ, որ թագուցաւ ինձ. ի գայթագղութենէ գործողին զանօրէնութիւն:

Անկցին ի ցանցս նորա մեղաւորք. միայն եմ ես՝ մինչեւ անցից:

Շարական Բկ:

Ընդ առաջ ելեալ արքային դասք Եբրայեցւոց. ծերքն ոստովք ձիթենեօք եւ տղայքն արմաւենեօք: Երիցս կրկնեա:

Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի. ձայնիւ իմով զՏէր աղաչեցի:

Սփռեցից առաջի Տեառն զաղօթս իմ, և զնեղութիւն իմ առաջի նորա պատմեցից:

Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ՝ դու Տէր ծանեար զշաւիղս իմ. ի ճանապարհ՝ յոր և գնայի, թագուցաւ ինձ որոգայթ:

Հայէի յաջմէ՝ տեսանէի, և ոչ ոք ճանաչէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ, և ոչ գտաւ խնդրող անձին իմոյ:

Աղաղակեցի առ քեզ Տէր, և ասացի. դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց:

Նայեա՛ց Տէր յաղօթս իմ, զի ես խոնարհ եղէ յոյժ. ապրեցո՛ զիս ի հալածչաց իմոց, զի հզօր եղեն քան զիս:

Տէր հան ի բանտէ զանձն իմ. գոհանամ զանուանէ քումմէ:

Եւ քեզ սպասեն արդարք, մինչեւ հատուսցես ինձ:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Շարական Բկ:

Միաբանական ձայնիւ գոչէին երգ նոր. բարեբանելով զանմահ Թագաւորն: Երիցս կրկնեա:

Եւ այլ Մաղթանք. Օրհնեալ Տէր, որ բնակեալ:

Մեսեդի Գալստեան: Օրհնեալ որ գաս. երես 96:

Քարոզ. Ասասցուք:

Համբարձի Բկ:

Այսօր ընդ հրակերպեան դասուցն օրհնաբանէին ծերքն ոստովք եւ տղայքն արմաւենեօք. * Ովսաննա. օրհնեալ եկեալ ի յանուն Տեառն:

Փառք Հօր: Զոր սերովբէքն ծածկաբար ընդունել ոչ բաւէին. ի վերայ յաւանակի նստեալ բարեբանեցաւ ի տղայոց. Ովսաննա:

Այժմ և: Այսօր ընդ ծերոց և ընդ տղայոց օրհնաբանութեանցն վերերգեմք նորոյ արքային եկեալ յԵրուսաղէմ. Ովսաննա:

Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն. օրհնեալ որ գալոցդ ես: — ԶՕրհնեալ եկեալն երիցս ասա:

Ասա Քրզ. Վասն խաղաղ: Աղօթք. Հայր գթած:

ԿԱՐԳ ԴՌՆԲԱՑԻ

ՄԵԾԻ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԵՐԵԿՈՅԻՆ

Ըստ խորհրդածութեանն, որ կատարի ի սուրբ քաղաքն Երուսաղէմ:

Զկնի Հայր մերին զգեցուցանեն զեպիսկոպոսն՝ եթէ լինի. կամ զմի ի պատուաւոր քահանայից. եւ լուցանեն մոմեղէնս եւ տան ի ձեռս ամենեցուն: Եւ մեծաւ յաղթանակաւ ելանեն խնկովք եւ մոմեղինօք եւ ամենայն զարդուք: Եւ գան ի դուռն եկեղեցւոյն՝ ունելով քահանայքն ի ձեռն զսուրբ խաչն: Եւ փակեն դուռն եկեղեցւոյն:

Եւ ասեն բարձր ձայնիւ Սաղմոս ՃԺԷ:

ԿՑ. Օրհնեալ որ գալոց ես անուամբ Տեառն, և օրհնեցաք զքեզ ի տանէ Տեառն:

Փխ. Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ասասցէ տունն Իսրայէլի՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ասասցէ տունն Ահարոնի՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ասասցեն երկիւղածք Տեառն՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, և լուաւ ինձ յանդորր:

Տէր է իմ օգնական, և ես ոչ երկեայց. զի՞ արասցէ ինձ մարդ:

Տէր է իմ օգնական, և ես տեսից ի թշնամիս իմ:

Բարի է յուսալ ի Տէր՝ քան յուսալ ի մարդիկ. բարի է յուսալ ի Տէր՝ քան յուսալ յիշխանս:

Ամենայն ազինք շրջեցան զինև, և անուամբ Տեառն յաղթեցի նոցա:

Շրջելով շրջեցան զինև, պաշարեցին զիս ի միասին. և անուամբ Տեառն վանեցի զնոսա:

Շուրջ եղեն զինև որպէս մեղուք. վառեցան, բորբոքեցան որպէս փուշք ի հուր. և անուամբ Տեառն մերժեցի զնոսա:

Ի մերժելն գրգռեցայ, և եղէ մերձ ի գլորել. և Տէր ընկալաւ զիս:

Զօրութիւն իմ և օգնութիւն իմ Տէր, և եղև ինձ ի փրկութիւն:

Ձայն ցնծութեան փրկութեան ի յարկս արդարոց:

Աջ Տեառն արար զօրութիւն, աջ Տեառն բարձր արար զիս. և աջ Տեառն արար զօրութիւն:

Ոչ մեռայց, այլ կեցից, և պատմեցից զգործս Տեառն:

Խրատելով խրատեաց զիս Տէր. և ի մահ ոչ մատնեաց:

Բացէք ինձ զդրունս արդարութեան, զի մտից ընդ այն և խոստովան եղէց Տեառն:

Եւ ապա ասեն մաղթան Շարական ԲՁ:

Շնորհեա մեզ Տէր արթնութիւն ընդ իմաստուն կուսանացն. և ըզհրդուց մերոց լապտերըս պայծառացո: Երկրպագեմք ի քեն Տէր զարհուրեալք ի պատասխանոյն. զամենն ասելով եթէ ոչ գիտեմ ըզձեզ: Յորժամ գաս փառօք Հօր դատել ըզտիեզերս ամ. շնորհեա և մեզ Տէր կալ ի յաջմէ քումմէ: Բացցէ մեզ դուռն ողորմութեան երկնաւոր փեսային. և մտցուք ի յառագաստ ընդ իմաստուն կուսանսն: Ժամանեսցուք ընդ առաջ փեսային և մտցուք ի յառագաստ նորա. զի մի մնասցուք արտաքս որպէս զյիմար կուսանսն: Պայծառասցին լապտերք հոգւոց մերոց. և բազմեցուսցես ըզմեզ ընդ հրաւիրեալսն ի կոչումն արքայութեանն երկնից:

Ապա եպիսկոպոսն կամ զգեցեալ քահանայն արտաքոյ առ դրունս եկեղեցւոյն կալով, ասէ ողորմ ձայնիւ եւ դողու-թեամբ. որպէս կատարածի գալստեանն եւ դատաստանի աւուրն նշանակ է:

Բաց մեզ Տէր. բաց մեզ Տէր. բաց մեզ Տէր զդուռն ողորմութեան. որ ողբալով կարդամք առ քեզ:

Եւ մի ոմն ի քահանայից կամ ի սարկաւագաց փակեալ ի ներքոյ կացեալ ձայնէ ասելով:

Ո՞վ են սոքա զի բացցեն. զի այս դուռն Տեառն է. և արդարք մտանեն ընդ սա:

Եւ զգեցեալ քահանայն, եւ որք առ դրունս եկեղեցւոյն են, արտաքուստ ասեն ողբաձայն:

Ո՛չ թէ միայն արդարք մտանեն. այլ և մեղաւորք խոստովանութբ և ապաշխարութբ արդարացեալ մտանեն ընդ սա:

Եւ սարկաւագն ի ներքուստ ասէ:

Զի սա է դուռն երկնից և հովիտ տրտմութեան. զոր ուխտեաց Ած Յակովբայ. արդարոց հանգիստ. մեղաւորաց քաւարան. հրեշտակաց բնակարան. Քսի արքայարան. սբց ժողովարան. տեղի ապաւինի. լեառն Տեառն և տուն Աստուծոյ:

Եւ քահանայն արտաքուստ ասէ:

Քանզի արժան է և ճշմարիտ զոր ասես վն նր եկեղեցւոյս. զի սա է մեզ լոյս կենաց. և սովաւ գտանեմք զփրկութիւն հոգւոց. և սա է մեզ մայր անարատ. և ի սմանէ ծնանիմք որդիք լուսոյ և ճշմարտութեան. և սովաւ ելանեմք առ Քն Հայր մեր երկնաւոր:

Եւ ասեն ի դուրսն եկեղեցւոյն միաբան Շարականն ԲԿ:

Իմաստուն կուսանքն պատրաստեալ եւղ լապտերաց. ելին ընդ առաջ երկնաւոր փեսային վառեալ լապտերօք: Իսկ յիմարաց կուսիցն անյանացեալք ի յիւղոյն. անպատրաստ գտան գալստեան փեսային շիջեալ լապտերօք: Վասն որոյ եւ մեք պատրաստեսցուք եւղ հոգեւոր. զի մտցուք ի յառագաստ անմահ փեսային վառեալ լապտերօք:

Յոյս իմ ես դու Տէր քաւիչ յանցանաց իմոց. մի անտես առներ զբղխումն արտասուաց իմոց. ողորմեա

ինձ Ած: Առ քեզ ապաւինեցայ ով զանազան որդին. Հայր մեղայ յերկինս և առաջի քո. ողորմեա ինձ Ած: Փրկեա զիս Ած ի բազում մեղաց իմոց. որ արժանի քոյին սուրբ արքայութեանդ. ողորմեա ինձ Աստուած:

Մեղք իմ բազում են յոյժ ծանր են քան զաւազ ծովու. * քանզի քեզ միայնոյ մեղայ. ողորմեա ինձ Ած: Բաց Տէր զդուռն ողորմութեան որ ողբալով կարդամ առ քեզ. քանզի քեզ: Հեղ յիս զգթութիւնս քո բազումողորմ եւ մարդասէր. քանզի:

Եւ այս ասէ զգեցեալ քահանայն բարձր ձայնիւ:

Բաց մեզ Տէր. բաց մեզ Տէր. բաց մեզ Տէր զդուռն ողորմութեան. որ ողբալով կարդամք առ քեզ:

Եւ սարկաւագն ի ներքուստ ասէ:

Ահա տեսանեմք զՏէրն մեր Քն. որ բազմեալ կայ ի վր նր սեղանոյս. և կոչէ առ ինքն զկամարարս իւր. թէ ուր եսն եմ անդ և պաշտօնեայն իմ եղիցի:

Եւ քահանայն արտաքուստ ասէ:

Գին եմք անապական արեան Որդւոյն Աստուծոյ. ցնծութեամբ օրհնեսցուք զփրկիչն մեր Քրիստոս. և ասասցուք ամենեքեան. փառք սոսկալի գալստեանն քո Տէր:

Եւ ասեն միաբան Շարականն ԲՉ:

Թագաւոր փառաց քեզ սպասեսցուք պատրաստեալք արթնութբ. ընդառաջել որ գաս ի դատել զերկիր: Անաղօտ վառեալ լապտերօք հաւատոյ ընդ դասս իմաստուն կուսանացն. մտանել ի յառագաստ ընդ երկնաւոր փեսային: Փութասցուք կանխեալ յառաջ քան ըզձայն Ածային բարբառոյն. զի մի մնասցուք արտաքս ընդ շիջման հինգ կուսանացն:

Եւ ի կատարման շարականին զգեցեալ քահանայն ասէ արտաքոյ բարձր ձայնիւ:

Բա՛ց մե՛զ Տէ՛ր. բա՛ց մե՛զ Տէ՛ր. բա՛ց մե՛զ Տէ՛ր զդրո՛ւռն ո՛ղորմութե՛ն. որ ո՛ղբալով կարդա՛մք առ քե՛զ:

Եւ սարկաւագն ի ներքուստ ասէ:

Փողն երկնաւորին Ա՛ծ ահագի՛ն ձայնիւ գոչէ՛ ասելով. ահա փեսա՛յ գայ. արի՛ք ընդ առա՛ջ նորա՛:

Եւ զգեցեալ քահանայն ասէ ահիւ եւ դողութեամբ. բայց ի միտ ածցէ զոր ասէն:

Ահա՛ ես և մանկո՛ւնք իմ զոր ետ ինձ Ա՛ծ. կա՛մք ամենեքեա՛ն. և ա՛կն ունիմք տեսոյն Քնի՛. և լսե՛լ զերանաւէտ բարբառ նորա՛:

Եւ սարկաւագն ի ներքուստ պատասխանէ ասելով:

Զա՛յն արարչին Ա՛ծ գոչէ ասելո՛վ. եկա՛յք օրհնեալք Հօր իմո՛յ. ժառանգե՛ցէք զպատրաստեալ ձեզ զարքայութի՛ն երկնից ի սկզբանէ աշխարհի:

Եւ ապա քահանայն ասէ ի բեմ:

Բացէք ինձ զդրունս արդարութե՛ն, զի մտից ընդ այն և խոստովան եղէց Տե՛ռն:

Եւ բանայ զդուռն յեռամբ իւրով. զի իշխանութիւն է նորա փակելոյ եւ բանալոյ: Եւ ամենայն ժողովուրդն մտանեն յեկեղեցին ցնծութեամբ եւ ուրախութեամբ: Եւ ասեն

Շարական. ԴԿ:

Ողորմութե՛ քո զդուռըն բա՛ց մեզ Տ՛ր. և ա՛րժանի ա՛րա զմե՛զ լուսեղէն յարկաց քո՛ց ընդ սուրբըս քո՛: Ի պատրաստեա՛լ քո յօթեւա՛նըս սըրբո՛ց քոց. ընկա՛լ և՛ւ ըզմեզ փըրկի՛չ յորդէգրութիւն ի դըպրութեա՛ն կենա՛ց: Ի նըստե՛լ քո յատենի դա՛տաւոր ահե՛ղ խնայեա՛ յարարածըս քո. բարեխօսութե՛բ և աղօթի՛ւք մե՛ր ճըգնաւորացն:

Զկնի՝ Որթիւ:

Մէջ Աւետարանիս որ ըստ Յովհաննու: ԺԲ. 44:

Տէրն մեր Յս Քս

Աղաղակէր և ասէր. որ հաւատայ յիս, ոչ հաւատայ յիս, այլ յայն որ առաքեացն զիս: Եւ որ տեսանէ զիս, զայն տեսանէ՝ որ առաքեացն զիս: Ես լոյս յաշխարհ եկի. զի ամ որ հաւատայ յիս՝ ի խաւարի մի՛ մնասցէ: Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց և ոչ պահեսցէ, ես ոչ դատիմ զնա. քանզի ոչ եկի՝ թէ դատեցայց զաշխարհ, այլ զի փրկեցից զաշխարհ: Որ անարգէ զիս, և ոչ ընդունի զբանս իմ. գոյ որ դատի զնա. բանն զոր ես խօսեցայ՝ նա դատի զնա յաւուրն յետնում: Զի ես յանձնէ իմմէ ոչ խօսեցայ. այլ որ առաքեացն զիս Հայր՝ նա ետ ինձ պատուէր՝ զինչ ասացից և զինչ խօսեցայց: Եւ գիտեմ եթէ պատուէրն այն կեանք են յաւիտենականք: Արդ՝ զոր ես խօսիմ, որպէս ասաց ինձ Հայրն՝ այնպէս խօսիմ: 50:

Զկնի Քարոզ. Խնդրեսցուք:

Եւ ամենեքեան բարձր ձայնիւ ասեն. Կեցո՛ Տէ՛ր:

Տէր ողորմեա. Տէ՛ր ողորմեա՛. Տէ՛ր ողորմեա՛:

Աղօթք. Թագաւոր խաղաղութե՛ն օգնական:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր որ:

Եւ արձակին ի խաղաղութեան:

ԱՒԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ, ԲՋ.

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն ԲՁ:

Անեղն ի Հօրէ ծնեալ Որդի յանէից գոյացուցեալ զերկնային և զերկրաւոր էութիւն. * Արարածք ամենայն տուք փառս արարչին յաւիտենից: Պատկեր աներեւոյթ փառացն Հօր ի պատկեր բարերարութեան իւրոյ. արար զմարդկային բնութիւնս. արարածք: Լոյսն ի Հօրէ լուսոյ ծագեալ լուսափայլ զարդարեաց զԱդամ. ի դրախտին եդեալ անմահ տնկոցն երկրագործ. արարածք:

† Եկայք որդիք մարդկան այսօր ողբասցուք ըզհօրն ըզվտանգ. որ մերկացաւ մեղօք ըզփառս արարչին. Եւ զգեցաւ զթզենւոյն ծածկոյթ փոխանակ անճառ լուսոյն: Գովեցէք զՈրդին Այ այսօր ցնծութեամբ որդիք Ադամայ. որ եկն ի խնդիր եղծեալ պատկերին. և գտեալ նորոգեաց ի փառս առաջին պատմուճանին:

Ղշբ: Թագաւոր փառաց քեզ սպասեսցուք պատրաստեալք արթնութեամբ. ընդառաջել որ գաս ի դատել զերկիր: Անաղօտ վառեալ լապտերօք հաւատոյ ընդ դասս իմաստուն կուսանացն. մտանել ի յառագաստ ընդ երկնաւոր փեսային: Փութասցուք կանխեալ յառաջ քան զգալն ահագին բարբառոյն. զի մի մնասցուք արտաքս ըստ չիջման հինգ կուսանացն:

Որ նստիս ի քրովբէս Աստուած բանդ. այսօր ձիվայրն մեր խոնարհութեամբ նստար ի լերինն ձիթենեաց. * օրհնեմք զքեզ անդադար երգով: Որ

համագոյդ ես խորհրդոցդ հայրենի. աշակերտաց քոց ծանուցեր զխորհուրդ քո գալստեանն. օրհնեմք: Որ ամենայն ես արարիչ և ստեղծիչ կենդանութեան. այսօր զծածկեալ խորհուրդ Երրորդութեանդ յայտնեցեր եկեղեցւոյ սրբոյ քո. օրհնեմք:

Շնորհեա մեզ Տէր արթնութիւն ընդ իմաստուն կուսանացն. և զհոգւոց մերոց լապտերս պայծառացո: Երկրպագեմք ի քեզ Տէր զարհուրեալք ի պատասխանոյն. զամենն ասելով եթէ ոչ գիտեմ զձեզ: Յորժամ գաս փառօք Հօր դատել զտիեզերս ամ. շնորհեա և մեզ Տէր կալ ի յաջմէ քումմէ: Բացցի մեզ դուռն ողորմութեան երկնաւոր փեսային. և մտցուք ի յառագաստ ընդ իմաստուն կուսանսն: Ժամանեսցուք ընդ առաջ փեսային և մտցուք ի յառագաստ նորա. զի մի մնասցուք արտաքս որպէս զյիմար կուսանսն: Պայծառասցին լապտերք հոգւոց մերոց. և բազմեցուսցես զմեզ ընդ հրաւիրեալսն ի կոչումն արքայութեանն երկնից:

Ալլ: Որ ի վերոյ ես քան զամ ըզմիտս և զխորհուրդս. * փառաց թագաւոր խնայեա ի մեզ: Որ միայն ունիս զանմահութիւն և զանեղութիւն. փառաց թագ: Որ նստիս ի քրովբէս Երրորդութիւն անբաժանելի. փառաց: Որ երկրպագեալդ ես ի հրեշտակաց և ի մարդկանէ. փառաց թագ:

ՀՈԳ. Լոյսն և նման Հօր և Որդւոյ Հոգիդ անեղ և համագոյ. բղխումն Հօր անքննաբար առող յՈրդւոյ անճառաբար. ի վերնատունն այսօր իջեր զհոգիդ շնորհաց քոց արբուցեր. արբո և մեզ ողորմութեամբ ի բաժակէդ իմաստութեան: Էից ստեղ-

ծով արարածոց որ շարժէիր ի վերայ ջրոց. նոյն և ի ջուրսն աւազանին ի շնորհել մեզ քում էակցին. գրգուես սիրով աղաւնակերպ զմարդիկ ծնանիս անճակերպ. * աւրհնեա և մեզ ողորմութեամբ ի բաժակէդ իմաստութեան։ Բարուն վերնոցն իմանալեաց և ըստորին այսըր զգալեաց. որ մարգարէս տաս ի հովուաց և առաքեալս ի ձկնորսաց. աւետաւոր ըզմաքսաւորս քարոզ բանի քում զհալածողս. աւրհնեա և։

ՆՆՉ։ Հրեշտակային ձայնիւ օրհնեսցուք զամենաբեր զԵրրորդութիւնըն. փառաւորելով ըզՀայր. որ վերակոչեաց * զամենեսեան ի մահուանէ յանմահութիւն։ Երգեցէք Տեառն երգ նոր եկեղեցիք սրբեցելոց. Քրիստոսի երկրպագելով. որ վերակոչեաց զամենեսեան։ Սրբասաց ձայնիւ օրհնեսցուք. հոգեւորական հընչմամբ գովեսցուք. սուրբ զՀոգին փառաւորելով. որ վերահանգոյց զամենեսեան։

ԱՁՆ։ Բըզքեզ կոյս և մայր և բնակարան անճառին ներմարդութեանն. գոհաբանեմք և վերօրհնեմք զեղեալ փրկող կենդանութեան ազգի մարդկան. * վասն որոյ ըզքեզ Աստուածածին և կոյս բարեբանեմք ըզմայր և զաղախին փրկչին մերոյ։ Ծընունդըն Հօր և հինաւուրց անժամանակն յաւիտենից. ժամանակաւ յորովայնի քում բնակեցաւ և ի Հօրէ ոչ մեկնեցաւ. վասն որոյ։ Ծընեալն ի քէն ի խաչ ելեալ. եւ ի յաթոռ փառաց ընդ Հօր. անարգել ի մարդկանէ փառաւորութեան էութեան երկրպագեալ. վասն որոյ։ Ըզքեզ ոչ միայն որդիք մարդկան այլ և վերին զօրութիւնք. դասք անմարմնոց հոգեղինաց հրեղինաց զուարթնոց եւ հրեշտակաց. գոհաբանեն և վերօրհնեն եւ փառաւորեն ըզմայր և զաղախին փրկչին մերոյ։

ԽՆ։ Բանալի արքայութեան տուաւ հողածին մարդոյն. ուստի յառաջին ճաշակմանէն արտաքս անկեալ ի յաւէժ կենդանութենէն. * որ ձեւացոյց մեզ. սովաւ մտանել ընդ դուռն անեղաշէն դրախտին Տեառն։ Գաւազանաձեւ երեւեալ եգիպտական ազգին. ցուցանելով ըզզօրութիւն սրբոյ խաչին. յափըշտակելով ըզգաւազանըն դիւթականէն. որ ձեւացոյց։ Փառք Հօր և։ Դրոշմ ըզգայութեան օրինակեալ ի վերայ սեմոց դրանց նոցա. աներկիւղ պահելով ըզժողովուրդն յանդրանկածախ սատակմանէն. որ ձեւացոյց։

Այժմ և միշտ։ Նոր նորոգող բնութեան մերոյ Յիսուս. որ ի խորհուրդ հընութեան մարդոյն. զանպըտուղն այսօր չորացուցեր զթըզենին. եւ ըզմեզ ի հնացեալ մեղաց նորոգեա ի կեանս անմահ։

Մաղթանք. Փառք հրաշափառ տէրութեան։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Զի նա ասաց և եղեն, հրամայեաց և հաստատեցան։ Կարգեաց ըզնոսա յաւիտեան. սահման եդ որք ոչ անցանեն։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Փ. Ի սկզբանէ Տէր զհիմունս երկրի հաստատեցեր. և գործք ձեռաց քոց երկինք են։ Նոքա կորնչին. և դու կաս և մնաս յաւիտեան։

Փառք և։ Այժմ և. ալէլուիա։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց ԲՁ։

Որ արարիչդ ես յաւիտենից. եւ ստեղծեր զարարածս ամենայն յոչընչէ. ըզքեզ օրհնեմք Աստուած հարցըն մերոց։ Որ թագաւորդ ես թագաւորաց. եւ

շնորհես բանաւոր կենդանի մարդ ի հողոյ. * Զքեզ օրհնեմք Ած հարցն մերոց: Որ ապաւէնդ ես մոլորելոց. եւ խնամես զյուսացեալս ի քեզ քո տեսչութեամբդ. զքեզ օրհն:

Գ. Զգործս Տեառն օրհնեցէք * Եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Օրհնեցէք. Զթագաւորն եւ զԱստուածն որ նովաւ միայնոյ վայելէ օրհնութիւն. Եւ բարձր արարէք: Այժմ և միշտ: Օրհնեսցէ. Զի ծանուցեր մեզ սքանչելի խորհուրդ նը Երրորդութեն և մի աստուածութեանն քո. Եւ բարձր:

Մեծացո. Բ Ձ: Զքեզ Հայր յառաջ քան զյաւիտեանս բարեբանեն դասք անմարմնոց հրեշտակաց. ձայնիւ երգով գոչեն և աղաղակեն * Ած աստուծոց և Տր տերանց փրկիչ գովելի: Փառք Հօր: Առաքեցեր զքո միածինդ մարմնանալ ի նը կուսէն. եւ անարատ ծնանել յորովայնէ անապականն. բառնալով զմեր նեղութիւնս. Ած աստ: Այժմ և: Շնորհօք բարի յԵրուսաղէմ երեւեցաւ հեթանոսաց, զի արարիչն յաւիտենից տղայ եղեալ յորդեգրութի կենաց կոչէ. Աստուած աստ:

Ողորմ. Բ Ձ: Ով ամենասեան գթած Քս թագաւոր խաղաղութեան. զքեզ աղաչեմք միայն մարդասէր: Փառք Հօր: Որում այսօր փափագեալ ցանկայր հոգւով եւ մարմնով. մայր որդւովք իւրովք խնդրէր ըզբարձրագոյն ըզփառս յերկրին կենդանեաց: Այժմ և միշտ: Տիրողդ ըզկեանս անմահ առ քեզ աղաղակեմք և միաբան հայցեմք. շնորհեա և մեզ Տէր կալ ի յաջմէ քումմէ:

Տէրյերկն. Բ Ձ: Զքեզ օրհնեմք որ բաշխողդ ես բարութեանց. և հայցեմք որպէս ի մարդասիրէ. ընդ մօր քո ընտրելոցն զխմանալի աշխարհն: Զի դու ես

Տէր յորմէ հայցէր մայրըն հաւատով հանդերձ որդւովք սրբեցելովք. Ընդ աջմէ քո զփառս եւ յաւելէ. ընդ որս և մեք աղաչեմք զի դասեսցես ընդ նոսա քո: Այլ դու բարձրեալ փրկիչ. որ վասն մեր խոնարհեցար. արժանի արա ըզմեզ ըմպել ըզբաժակ պատուիրանի կենաց քոց Տր. որով կացցուք յաջմէ քումմէ ի հանդերձեալ քում գալստեանն:

Առա. Երգ: Ի սկզբանէ Տր ըզհիմունս երկրի հաստատեցեր. եւ գործք ձեռաց քոց երկինք են:

Նոքա կորընչին. և դու կաս և մնաս յաւիտեան:

Քարոզ. Փառաւորեսցուք. կամ գանձ:

Մանկ. Բ Ձ: Ցէք զանուանըն Տեառն: * Ալէլուիա. ալէլուիա. ալէլէլուիա: Փառք Հօր: Այսօր ընդ զօրս երկնից համաձայնեալ. միաբանական ձայնիւ երգեմք ասելով. ալէլէ: Այժմ և միշտ: Երկրաւորքս ընդ երկնայինսըն հողեղէնքս ընդ հրեղէնս. միաբանական ձայնիւ երգեմք ասելով. ալէլէ:

Քարոզ. Վս խաղաղութե: Աղօթ. Սբ ես Տէր:

Ապա Սաղմոս ՃԳ. ողբաձայն ասա:

ԿՏ. Խոստովանութի և մեծվայելչութի զգեցար. արկար զլոյս ոպ զօթոց. ձգեցեր զերկինս որպէս խորան, և յարկար ի վր ջուրց զվերնայարկս նր:

Փխ. Օրհնեա անձն իմ զՏէր. Տէր Ած իմ մեծ եղեր յոյժ:

Խոստովանութի և մեծվայելչութի զգեցար. արկար զլոյս ոպ զօթոց. ձգեցեր զերկինս ոպ խորան, և յարկար ի վր ջուրց զվերնայարկս նր:

Ո դնէ յամպս զգնացս իւր. և շրջի նա ի վր թեւոց հողմոց:

Ո արար զհրեշտակս իւր յոգիս․ և զպաշտօնեայս իւր ի հուր կիզելոյ։

Հաստատեաց զերկիր ի վերայ հաստատութե՟ իւրոյ, զի մի՛ սասանեսցի յաւիտեան։

Խորք ո՟ր զգեստ վերարկու է նորա․ ի վերայ լերանց կացցեն ջուրք։

Ի սաստէ քումմէ փախիցեն․ և ի ձայնէ որոտալոյ քումմէ սարսեսցեն։

Ելանեն լեռնանան և իջանեն դաշտանան․ ի տեղի յոր հաստատեցեր զնոսա։

Սահման եդիր և ոչ անցանեն․ և ոչ եւս դառնան ի ծածկել զերկիր։

Առաքեցեր զաղբերս ընդ ծործորս․ ի մէջ լերանց գնասցեն ջուրք։

Արբուցանել զա՟մ գազանս վայրի․ յագեսցին ցիռք ի ծարաւս իւրեանց։

Անդ թռչունք երկնից բոյնս դիցեն․ և ի միջոյ վիմաց տացեն զձայնս իւրեանց։

Արբուցանել զլերինս ի շտեմարանաց իւրոց․ ի պտղոյ գործոց լցցի երկիր։

Բուսուցեր զխոտ ի լերինս, զդալարի ի ծառայութի՟ մարդկան։

Հաներ զհաց յերկրէ․ գինի ուրախ առնէ, իւղ զուարթ․ և հաց հաստատէ զսիրտ մարդոյ։

Յագեսցին ծառքն անտառի․ և մայրքն Լիբանանու՝ զորս դու տնկեցեր։

Անդ թռչունք երկնից ձագս հանցեն․ և բոյն արագլի՟ ապաւէն է նոցա։

Լերինք բարձունք են եղջերուաց, և վէմք ապաւէն նապաստակաց։

Արարեր զլուսին վասն ժամանակի․ արեգակն ծանեաւ զժամ մտանելոյ իւրոյ։

Արարեր զխաւար և եղեւ գիշեր․ ի նմա գնան ա՟մ գազանք անտառի։

Կորիւնք առիւծուց մռնչեն և յափշտակեն․ և խնդրեն յԱ՟յ զկերակուր իւրեանց։

Ի ծագել արեւու ժողովին․ և ի մորիս իւրեանց դադարեն։

Ելանէ մարդ ի գործս իւր․ և ի վաստակս ձեռաց իւրոց մինչեւ յերեկոյ։

Որպէս զի մեծ են գործք քո Տէր․ և զամենայն ինչ իմաստութեամբ արարեր․ և լցաւ երկիր ստեղծուածովք քովք։

Այս ծով մեծ և անդորր․ ի սմա են սողունք որոց ոչ գոյ թիւ․ գազանք մեծամեծք և մանունք․ ի սմա և նաւք գնան․ վիշապն զոր ստեղծեր խաղալ նովաւ։

Ամենեքեան քեզ սպասեն, և դու տաս նոցա կերակուր ի ժամու։

Տաս դու նո՟ց և կերակրին․ բանաս զձեռն քո, և լցուցանես զամենեսեան քաղցրութե՟ կամօք քո։

Դարձուցանես զերեսս քո ի նոցանէ, և խռովին․ հանես զոգի քո ի նոցանէ, պակասին և ի հող դառնան։

Առաքես զոգի քո և ստանաս զնոսա․ և նորոգես զերեսս երկրի։

Եղիցին փառք Տ՟ն յաւիտեան․ Տէր ուրախ եղիցի յարարածս իւր։

Ո հայի յերկիր և տայ դողալ սմա․ մերձի ի լերինս և ծխեսցին։

Օրհնեցից զՏ՟ր ի կենաս իմ․ սաղմոս ասացից Ա՟յ իմոյ մինչեւ եմ ես։

Քաղցր եղիցի նմա օրհնութի՟ իմ․ և ես ուրախ եղէց ի Տէր։

Պակասեսցին մեղաւորք յերկրէ, ամբարիշտ մի՛ եւս գտցի ի սմա․ օրհնեա անձն իմ զՏէր։

Զ՚նի՝ Ո՛րթիւ։

Աւետարան ըստ Մատթէոսի։ ԻԱ. 18։

Տէրն մեր Յս̃ Քս̃

Եւ այգուցն իբրեւ դարձաւ անդրէն ի քաղաքն՝ քաղցեաւ։ Եւ տեսեալ թզենի մի ի վր̃ ճանապարհին՝ եկն ի նա, և ոչ ինչ եգիտ ի նմա բայց միայն տերեւ, և ասէ ցնա. մի՛ այսուհետեւ ի քէն պտուղ եղիցի յաւիտեան. և առժամայն չորացաւ թզենին։ Իբրեւ տեսին աշակերտքն՝ զարմացան և ասեն, թէ զիա՞րդ վաղվաղակի ցամաքեցաւ թզենին։ Պատասխանի ետ Յս̃ և ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս և ոչ երկմտիցէք՝ ոչ միայն թզենւոյդ առնիցէք. այլ թէպէտ և լերինդ ասիցէք, բարձի՛ր և անկի՛ր ի ծով, եղիցի։ Եւ զա̃մ ինչ զոր և խնդրիցէք յաղօթս հաւատովք՝ առնուցուք։ Եւ իբրեւ եկն ի տաճարն, մատեան առ նա՝ մինչդեռ ուսուցանէր, քահանայապետքն և ծերք ժողովրդեանն, և ասեն. որո՞վ իշխանութեբ̃ առնես զայդ. և ո՞վ ետ քեզ զիշխանութ̃իդ զայդ։ Պատասխանի ետ Յս̃ և ասէ ցնս̃. հարցից և ես զձեզ բան մի. զոր թէ ասիցէք ինձ, և ես ձեզ ասացից որո՛վ իշխանութեբ̃ առնեմ զայս։ Մկրտութ̃ին Յովհաննու ուստի՞ էր, յերկնի՞ց թէ ի մարդկանէ։ Եւ նոքա խորհէին ընդ միմեանս և ասէին. եթէ ասեմք յերկնից, ասէ ցմեզ. իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա. և եթէ ասեմք ի մարդկանէ, երկնչիմք ի ժողովրդենէն. զի ամենեքին զՅովհաննէս իբրեւ զմարգարէ ունէին։ Պատասխանի ետուն Յս̃ի և ասեն. ոչ գիտեմք։ Ասէ ցնոսա և նա. և ոչ ես ասեմ ձեզ՝ որո՛վ իշխանութեբ̃ առնեմ զայս։ Բայց զիա՞րդ թուի ձեզ. առն միոջ էին երկու որդիք, և մատուցեալ առ առաջինն ասէ. որդեակ՝ երթ այսօր գործեա յայգւոջ։ Նա պատասխանի ետ և ասէ. երթամ տր̃ և ոչ չոգաւ։ Մատեաւ և առ միւսն, և ասէ նոյնպէս. Նա պատասխանի ետ և ասէ.

ոչ կամիմ. բայց յետոյ զղջացաւ և չոգաւ յայգին։ Արդ՝ ո՞ յերկոցունց արար զկամս հօրն։ Ասեն՝ յետինն։ Ասէ ցնոսա Յս̃. ամէն ասեմ ձեզ, զի մաքսաւորք և պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ յարքայութի̃ երկնից։ Զի եկն Յովհաննէս ճանապարհաւ արդարութե̃ և ոչ հաւատացէք նմա. և մաքսաւորք և պոռնիկք հաւատացին նմա, և դուք տեսէք և ոչ զղջացարուք յետոյ հաւատալ նմա։ Այլ առակ լուարո՛ւք. այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի և ցանգով պատեաց զնա, և փորեաց ի նմա հնձան, և շինեաց աշտարակ. և ետ զնա ցմշակս. և գնաց ի տար աշխարհ։ Իբրեւ մերձեցաւ ժամանակ պտղոյ՝ առաքեաց զծառայս իւր առ մշակսն առնուլ զպտուղս նորա։ Եւ կալեալ մշակացն զծառայս նր̃՝ զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն, և արարին նց̃ նոյնպ̃։ Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր և ասէ, թերեւս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։ Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին՝ ասեն ընդ միտս. սա է ժառանգն, եկա՛յք սպանցուք զսա, և կալցուք զժառանգութի̃ նորա։ Եւ առեալ հանին զնա արտաքոյ քան զայգին և սպանին։ Արդ՝ յորժամ եկեսցէ տէր այգւոյն՝ զի՞նչ արասցէ մշակացն այնոցիկ։ Ասեն ցնա. զչարսն չարաւ կորուսցէ. և զայգին տացէ այլոց մշակաց, որք տացեն նմա զպտուղս ի ժամու իւրեանց։ Ասէ ցնոսա Յս̃. չիցէ՞ երբէք ընթերցեալ ձեր ի գիրս՝ Զվէմն զոր անարգեցին շինողքն՝ նա եղեւ գլուխ անկեան. ի Տն̃է եղեւ այս, և է սքանչելի յաչս մեր։ Վասն այսորիկ ասեմ ձեզ, զի բարձցի ի ձէնջ արքայութի̃ն Այ̃, և տացի ազգի՝ որ առնիցէ զպտուղս նր̃։ Եւ որ անկցի ի վր̃ վիմիս այսորիկ՝ փշրեսցի, և յոյր վր̃ անկցի՝ հոսեսցէ զնա։ Իբրեւ լուան քահանայապետքն և դպիրք և փարիսեցիք զառակս նորա՝ գիտացին թէ վասն նց̃ ասաց։

Եւ խնդրէին զնա ունել, բայց երկեան ի ժողովրդոցն. քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա: Դարձեալ պատասխանի ետ Յս̃, և ասէ ցնոսա առակօք: Նմանեցաւ արքայութի̃ երկնից առն Թագաւորի՝ որ արար հարսանիս որդւոյ իւրում: Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն ի հարսանիս. և ոչ կամէցան գալ: Դարձեալ առաքեաց այլ ծառայս և ասէ. ասացէք հրաւիրելոցն. ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի. զուարակք իմ և պարարակք զենեալ են, և ա̃մ ինչ պատրաստ է. եկա՛յք ի հարսանիսս: Եւ նոքա յուլացեալ գնացին՝ ոմն յագարակ իւր, և ոմն ի վաճառ իւր: Եւ այլք կալան զծառայս նորա, թշնամանեցին և սպանին: Իսկ Թագաւորն իբրև լուաւ՝ բարկացաւ, և առաքեաց զզօրս իւր և սատակեաց զսպանողսն զայնոսիկ, և զքաղաքն նց̃ այրեաց: Յայնժամ ասէ ցծառայս իւր. հարսանիքս պատրաստ են, և հրաւիրեալքն չէին արժանի: Արդ՝ երթա՛յք յանցս ճանապարհաց, և զո՛րս միանգամ գտանիցէք՝ կոչեցէք ի հարսանիսս: Եւ ելեալ ծառայքն ի ճանապարհս՝ ժողովեցին զամենեսեան զո՛րս և գտին՝ զչարս և զբարիս. և լցան հարսանիքն բազմականօք: Եւ մտեալ Թագաւորն հայել զբազմականօքն, ետես անդ այր մի՝ որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց: Եւ ասէ ցնա. ը՛նկեր, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց. և նա պապանձեցաւ: Յայնժամ ասէ Թագաւորն ցսպասաւորսն. կապեցէք զգորա զոտս և զձեռս, և հանէք զդա ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ և կրճել ատամանց: Զի բազումք են կոչեցեալք և սակաւք են ընտրեալք: Իբ. 14:

Եւք. Արարչական:

Քարոզ. Խնդրեսցուք: Կեցո Տէ̃ր: Աղ. Քում ամենազօր և հրաշալի տէրութեանդ:

Արեւագալի կանոն յաւագ շաբաթուս ոչ գոյ: Իսկ ճաշու-ժամն ցերեկն յիններորդ ժամուն ժողովեալ է սուրբ մատրանն՝ ամէն հանդերձ շարականօք եւ մեծ աղօթիւքն:

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ի տասն ժամուն աղօթնին Խոնարհեցո եւ Ապրեցո:

Մեսեդի պահոց է յայնէն:

Բերան արդարոյ խորհի զիմաստութի̃. և լեզու նո̃ խօսեսցի զիրաւունս:

Մի՛ նախանձիր ընդ չարս. և մի՛ ընդ այնոսիկ՝ ոյք գործեն զանօրէնութիւն:

Յայս շաբաթս՝ երեկոյի գերեն աշակերտի տասուն է, որ զԱպրեցոյն ասանի. եւ աւետարանն աւագերէցս տասուն՝ որ զԽոնարհեցոյն ասանի:

Ընթերցուածս ի Ծննդոց: Ա. 1:

Ի սկզբանէ արար Ած̃ զերկին և զերկիր: Եւ երկիր էր աներեւոյթ և անպատրաստ. և խաւար ի վե̃ անդնդոց, և Հոգի Այ̃ շրջէր ի վե̃ ջուրց: Եւ ասաց Ած̃. եղիցի լոյս. և եղեւ լոյս: Եւ ետես Ած̃ զլոյսն զի բարի է. և մեկնեաց Ած̃ ի մէջ լուսոյն և ի մէջ խաւարին: Եւ կոչեաց Ած̃ զլոյսն տիւ. և զխաւարն կոչեաց գիշեր: Եւ եղեւ երեկոյ և եղեւ վաղորդայն՝ օր մի: Եւ ասաց Ած̃, եղիցի հաստատութի̃ ի մէջ ջրոցդ. և եղիցի մեկնել ի մէջ ջուրցդ և ջուրց: Եւ եղեւ այնպէս: Եւ արար Ած̃ զհաստատութի̃. և անջրպետեաց Ած̃ ի մէջ ջրոյն որ էր ի ներքոյ հաստատութե̃ն, և ի մէջ ջրոյն որ ի վերոյ հաստատութե̃ն: Եւ կոչեաց Ած̃ զհաստատութի̃ն երկին. և ետես Ած̃ զի բարի է: Եւ եղեւ երեկոյ և եղեւ վաղորդայն՝ օր երկրորդ: Եւ ասաց Ած̃. ժողովեսցին ջուրքդ որ ի ներքոյ երկնից ի ժողով մի. և երեւեսցի ցամաքն: Եւ եղեւ այնպէս. և ժողովեցան ջուրքն որ ի ներքոյ երկնից՝ ի ժողովս իւրեանց. և ե-

րեւեցաւ ցամաքն: Եւ կոչեաց Ած զցամաքն երկիր, և զժողովս ջուրցն կոչեաց ծովս. և ետես Ած զի բարի է: Եւ ասաց Ած. բղխեսցէ երկիր զբանջար խոտոյ՝ սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութեան. և ծառ պտղաբեր՝ առնել պտուղ ըստ ազգի իւրում. որոյ սերմն իւր ի նմին ըստ ազգի ի նմանութն ի վր երկրի: Եւ եղեւ այնպէս: Եւ եհան երկիր զբանջար խոտոյ. սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութե. որ է ի վերայ ամ երկրի. և փայտ պտղաբեր առնել պտուղ. որոյ սերմն իւր ի նմին ըստ ազգի ի վր երկրի. և ետես Ած զի բարի է: Եւ եղեւ երեկոյ և եղեւ վաղորդայն՝ օր երրորդ: Եւ ասաց Ած. եղիցին լուսաւորք ի հաստատութե երկնից ի լուսաւորութի ի վերայ երկրի և մեկնել ի մէջ տուընջեան և ի մէջ գիշերոյ. և եղիցին ի նշանս և ի ժամանակս և յաւուրս և ի տարիս: Եւ եղիցին ի լուսաւորութի ի հաստատութե երկնից ծագել յերկիր: Եւ եղեւ այնպէս: Եւ արար Ած զերկուս լուսաւորսն զմեծամեծս. զլուսաւորն մեծ՝ յիշխանութի տուընջեան. և զլուսաւորն փոքր՝ յիշխանութի գիշերոյ. և զաստեղս: Եւ եդ զնս Ած ի հաստատութե երկնից՝ լուսատու լինել յերկիր: Եւ իշխել տուընջեան և գիշերոյ, և մեկնել ի մէջ լուսոյն և ի մէջ խաւարին. և ետես Ած զի բարի է: Եւ եղեւ երեկոյ և եղեւ վաղորդայն՝ օր չորրորդ: Եւ ասաց Ած. հանցեն ջուրք զեռունս շնչոց կենդանեաց. և թռչունս թեւաւորս ի վր երկրի ըստ հաստատութե երկնից: Եւ եղեւ այնպէս: Եւ արար Ած կէտս մեծամեծս. և զամ շունչ զեռնոց կենդանեաց, զոր հանին ջուրք ըստ ազգի իւրեանց, և զամ թռչունս թեւաւորս ըստ ազգի. և ետես Ած զի բարի են: Եւ օրհնեաց զնս Ած և ասէ. աճեցէք, և բազմացարուք, և լցէք զջուրս որ ի ծովս. և թռչունքդ բազմասցին ի վր երկրի: Եւ եղեւ երեկոյ և եղեւ վաղորդայն՝ օր հինգերորդ: Եւ ասաց

Ած. հանցէ երկիր շունչ կենդանի ըստ ազգի չորքոտանի և սողունս, և գազանս երկրի ըստ ազգի: Եւ եղեւ այնպ: Եւ արար Ած զգազանս երկրի ըստ ազգի, և զանասունս ըստ ազգի, և զամ սողունս երկրի ըստ ազգի իւրեանց. և ետես Ած զի բարի են: Եւ ասաց Ած. արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութե, և իշխեսցէ ձկանց ծովու և թռչնոց երկնից, և անասնոց, և ամ երկրի, և ամ սողնոց՝ որ սողին ի վր երկրի: Եւ արար Ած զմարդն ի պատկեր իւր. ըստ պատկերի Այ արար զնա. արու և էգ արար զնս: Եւ օրհնեաց զնս Ած՝ և ասէ. աճեցէք՝ և բազմացարուք և լցէք զերկիր. և տիրեցէք դմա. և իշխեցէք ձկանց ծովու, և թռչնոց երկնից, և ամ անասնոց, և ամ երկրի, և ամ սողնոց՝ որ սողին ի վր երկրի: Եւ ասաց Ած. ահաւադիկ ետու ձեզ զամ խոտ սերմանելի սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութեան, որ է ի վր ամ երկրի. և ամ փայտ որ ունիցի յինքեան պտուղ սերման սերմանելոյ՝ ձեզ լիցի ի կերակուր: Եւ ամ գազանաց երկրի, և ամ թռչնոց երկնից, և ամ սողնոց որ սողին ի վր երկրի՝ որ ունիցի շունչ կենդանի. և ամ խոտ դալար ի կերակուր: Եւ եղեւ այնպէս: Եւ ետես Ած զամ զոր արար. և ահա բարի են յոյժ: Եւ եղեւ երեկոյ, և եղեւ վաղորդայն, օր վեցերորդ: Եւ կատարեցան երկինք և երկիր և ամ զարդ նց: Եւ կատարեաց Ած յաւուրն վեցերորդի զամ զգործս իւր զոր արար. և հանգեաւ յաւուրն եօթներորդի յամ գործոց իւրոց զոր արար: Եւ օրհնեաց Ած զօրն եօթներորդ, և սրբեաց զնա. զի ի նմա հանգեաւ յամ գործոց իւրոց զոր սկսաւ առնել Ած: Այս է գիր արարածոց երկնի և երկրի, յաւուր յորում արար Ած զերկին և զերկիր: Եւ զամ բանջար վայրի՝ մինչ չեւ լեալ էր ի վր երկրի, և զամ խոտ վայրի՝ մինչ չեւ բուսեալ էր, զի չեւ եւս էր տեղացեալ Տրն Այ ի

վերայ երկրի. և մարդ չէր՝ որ գործէր զերկիր: Բայց աղբիւր ելանէր յերկրէ՝ և ոռոգանէր զամ երեսս երկրի: Եւ ստեղծ Տէր Ած զմարդն հող յերկրէ. և փչեաց յերեսս նր շունչ կենդանի. և եղեւ մարդն յոգի կենդանի: Եւ տնկեաց Ած զդրախտն յԵդեմ ընդ արեւելս, և եդ անդ զմարդն զոր ստեղծ: Եւ բուսոյց եւս Տր Ած յերկրէ զամ ծառ գեղեցիկ ի տեսանել՝ և քաղցր ի կերակուր. և զծառն կենաց ի մէջ դրախտին, և զծառն գիտելոյ զգիտութի բարւոյ և չարի: Եւ գետ ելանէր յԵդեմայ ոռոգանել զդրախտն. և անտի բաժանի ի չորս առաջս: Անուն միումն Փիսոն. նա է՝ որ պատէ զամ երկիրն Եւիլատայ. անդ ուր ոսկին է. և ոսկի երկրին այնորիկ ազնիւ. և անդ է ակն սուտակ և ակն դահանակ: Եւ անուն գետոյն երկրորդի Գեհոն. նա պատէ զամ երկիրն Եթովպացւոց: Եւ գետն երրորդ՝ Տիգրիս. նա է՝ որ երթայ յանդիման Ասորեստանի: Եւ գետն չորրորդ՝ Եփրատէս: Եւ առ Տէր Ած զմարդն զոր արար, և եդ զնա ի դրախտին փափկութե, գործել զնա և պահել: Եւ պատուիրեաց Տէր Ած Ադամայ՝ և ասէ. յամ ծառոց որ է ի դրախտիդ՝ ուտելով կերիցես. բայց ի ծառոյն գիտութե բարւոյ և չարի մի՛ ուտիցէք. զի յորում աւուր ուտիցէք ի նմանէ՝ մահու մեռանիցիք: Եւ ասաց Տէր Ած. ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել. արասցուք դմա օգնական ըստ դմա: Եւ ստեղծ եւս Տէր Ած զամ գազանս վայրի, և զամ թռչունս երկնից. և ած զնս առ Ադամ, տեսանել զի՛նչ կոչեսցէ զնս. և ամ շնչոյ կենդանւոյ զինչ և անուանեաց Ադամ՝ այն անուն է նր: Եւ կոչեաց Ադամ անուանս ամ անասնոց, և ամ թռչնոց երկնից, և ամ գազանաց վայրի. բայց Ադամայ ոչ գտաւ օգնական նման նմա: Եւ արկ Տէր Ած թմբրութի ի վր Ադամայ, և ննջեաց. և առ մի ի կողից նր և ելից ընդ այնր մարմին: Եւ շինեաց Տէր Ած զկողն զոր

առ յԱդամայ՝ ի կին. և ած զնա առ Ադամ: Եւ ասէ Ադամ. այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց և մարմին ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ: Վասն այնորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր. և երթիցէ զհետ կնոջ իւրոյ. և եղիցին երկոքին ի մարմին մի: Եւ էին երկոքեան մերկ՝ Ադամ և կին իւր, և ոչ ամաչէին: Եւ օձն էր իմաստնագոյն քան զամ գազանս որ ի վր երկրի, զոր արար Տէր Ած. և ասէ օձն ցկինն. զի՞ է զի ասաց Ած՝ թէ յամ ծառոց որ իցեն ի ներքս ի դրախտի այդր՝ մի՛ ուտիցէք: Եւ ասէ կինն ցօձն. ի պտղոյ ծառոց դրախտիդ կերիցուք. բայց ի պտղոյ ծառոյն որ է ի մէջ դրախտին՝ ասաց Ած; մի՛ ուտիցէք ի նմանէ. և մի՛ հուպ լինիցիք՝ զի մի՛ մեռանիցիք: Եւ ասէ օձն ցկինն. ոչ եթէ մահու մեռանիցիք. զի գիտէր Ած, թէ յորում աւուր ուտիցէք ի նմանէ՝ բանայցեն աչք ձեր, և լինիցիք իբրև զածս՝ ճանաչել զբարի և զչար: Եւ ետես կինն, զի բարի էր ծառն ի կերակուր, և հաճոյ աչաց հայելոյ, և գեղեցիկ ի տեսանել. և առ ի պտղոյ նր և եկեր. և ետ առն իւրում ընդ իւր, և կերան: Եւ բացան աչք երկոցունց. և գիտացին զի մերկ էին. և կարեցին տերեւս թզենւոյ, և արարին իւրեանց սփածանելիս: Եւ լուան զձայն զգնալոյ Տռն Այ ի դրախտի անդ ընդ երեկս. և թաքեան Ադամ և կին իւր յերեսաց Տռն Այ՝ ի մէջ ծառոց դրախտին: Եւ կոչեաց Տէր Ած զԱդամ. և ասէ ցնա. ո՞ւր ես: Եւ ասէ. լուայ զձայն քո ի Դրախտի աստ՝ և երկեայ. քանզի մերկ էի՝ և թաքեայ: Եւ ասէ ցնա, ո՞ պատմեաց քեզ թէ մերկ ես. բայց թէ ի ծառոյն՝ յորմէ պատուիրեցի քեզ անտի եւեթ չուտել, կերա՞ր արդեօք ի նմանէ: Եւ ասէ Ադամ. կինս զոր ետուր ընդ իս՝ սա ետ ինձ ի ծառոյ անտի և կերայ: Եւ ասէ Տէր Ած ցկինն. զի՞նչ գործեցեր զայդ: Եւ ասէ կինն. օձն խաբեաց զիս, և կերայ: Եւ ասէ

Տէր Ած յօձն. փոխանակ զի արարեր դու զայն՝ անի-
ծեալ լիջիր դու յամ անասնոց և յամ գազանաց եր-
կրի. ի վե՛ր լանջաց և որովայնի քո գնասցես. և հող
կերիցես զամ աւուրս կենաց քոց: Եւ եդից թշնամու-
թիւն ի մէջ քո և ի մէջ կնոջդ. և ի մէջ զաւակի քո
և ի մէջ զաւակի դորա. նա սպասեսցէ քում գլխոյ,
և դու սպասեսցես նո՛ր գարշապարի: Եւ ցկինն ասէ.
բազմացուցանելով բազմացուցից զտրտմութիս քո և
զհեծութիս քո. տրտմութբ ծնցիս որդիս. և առ այր քո
դարձ քո. և նա տիրեսցէ քեզ: Եւ ցԱդամ ասէ. փո-
խանակ զի լուար ձայնի կնոջդ քո. և կերար ի ծառոյ
անտի, յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուտել,
և կերար ի նմանէ. անիծեալ լիցի երկիր ի գործս քո.
տրտմութեամբ կերիցես զնա զամ աւուրս կենաց քոց:
փուշ և տատասկ բուսուսցէ քեզ. և կերիցես զբան-
ջար վայրի: Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո.
մինչև դարձցիս յերկիր ուստի առար. զի հող էիր
և ի հող դարձցիս: Եւ կոչեաց Ադամ զանուն կնոջ
իւրոյ կեանս. զի նա է մայր ամ կենդանեաց: Եւ արար
Ած Ադամայ և կնոջ նր հանդերձս մաշկեղէնս, և զգե-
ցոյց զնոսա: Եւ ասէ Տէր Ած. ահա Ադամ եղև
իբրև զմի ի մէնջ՝ գիտել զբարի և զչար. և արդ՝
գուցէ ձգիցէ զձեռն, և առնուցու ի ծառոյն կենաց,
ուտիցէ և կեցցէ յաւիտեան: Եւ եհան արձակեաց
զնա Տէր Ած ի դրախտէ անտի փափկութե՝ գործել
զերկիր՝ ուստի առաւ: Եւ եհան զԱդամ, և բնակեցոյց
յանդիման դրախտին փափկութե: Եւ հրամայեաց քե-
րովբէից և բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել զճա-
նապարհս ծառոյն կենաց: Գ. 24:

ընթերցուածս յԱռակաց: Ա. 1:

Ճանաչել զիմաստութի և զխրատ. իմանալ զբանս
հանճարոյ: ընդունել զդարձուածս բանից, ի միտ առ-
նուլ զարդարութի ճշմարիտ, և ուղղել զիրաւունս: Զի

տացէ անմեղաց զխորագիտութի. մանկանց տղայոց զմիտս
և զհանճար: Որոց իբրև լուիցէ իմաստունն, իմաստ-
նագոյն լիցի. իսկ որ հանճարեղն է՝ զառաջնորդութի
ստասցի: Ի միտ առցէ զառակս՝ և զբանս խորինս,
զճառս իմաստնոց՝ և զառակս նց: Սկիզբն իմաստութե
երկիւղ Տն. հանճար բարի ամենեցուն՝ որ առնեն
զնա. պաշտօն բարի առ Ած սկիզբն զգօնութե. զիմաս-
տութի և զխրատ ամպարիշտք անգոսնեն: Լո՛ւր որդեակ
խրատու հօր քո, և մի՛ մերժեր զօրէնս մօր քո: Զի
պսակ շնորհաց ընկալցի գլուխ քո. և մանեակ ոսկի ի
պարանոցի քում: 9:

ընթերցուած յԵսայեայ մարգարէէ: Խ. 1:

Մխիթարեցէք, մխիթարեցէք զժողովուրդ իմ, ասէ
Ած: Քահանայքդ խօսեցարո՛ւք ի սիրտ Եմի. և մխի-
թարեցէք զդա, զի լի եղև տառապանօք. թողեալ
լիցին դմա մեղք իւր. զի ընկալաւ ի ձեռանէ Տն
կրկին զհատուցումն մեղաց իւրոց: Ձայն բարբառոյ
յանապատի. պատրա՛ստ արարէք զճանապարհս Տն. և
ուղի՛ղ արարէք զշաւիղս Այ մերոյ: Ամենայն ձորք լցցին,
և ամ լերինք և բլուրք խոնարհեսցին. և եղիցին ամ
դժուարինք ի դիւրինս. և առապարքն ի դաշտս: Եւ
երևեսցին փառք Տն. և տեսցէ ամ մարմին զփրկութի
Այ՝ զի Տէր խօսեցաւ: Ձայն որ ասէ՝ գոչեա՛. և ասեմ,
զի՞նչ գոչեցից: Գոգջի՛ր՝ ամ մարմին խոտ է՝ և ամ
փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ: Ցամաքեցաւ
խոտն և թօթափեցաւ ծաղիկ նր. զի ոգի Տն շնչեաց
ի նա. արդարև խոտ է ժողովուրդս այս: Ցամաքեցաւ
խոտն և թօթափեցաւ ծաղիկն. և բան Տեառն մնայ
յաւիտեան: 8:

Ապա զՕրհնեցին ասա: Քրզ. Աղաչեսցուք. հաւ փառ:

Համբարձի ԲԶ: Ո՛ր յանէից գոյացուցեր զքո զարա-
րածս ի սկզբանէ. ի՛ պատկե՛ր ածութենդ քո ստեղծե՛ր

զմարդ ի հողոյ. ժառանգել նըմա զանպատում ըզկեանսն: Իսկ պատրանօք բանսարկուին ի դրախտէն արտաքս անկեալ. ի յաւէժ կենդանութեանըն մահառիթ պըտղով մեռեալ. մերկացաւ ըզփառս անըստուեր լուսոյն: Այլ դու փրկիչ բարերար. որ մարմնացար ի սբ կուսէն. և հեղմամբ արեանըդ քո բարձեր զյանցանս նախաստեղծին. փրկելով ըզմեզ յանիծից նորա: Փառք Հօր: Որ ըստ պարտեաց նախահօրըն յանձն առեր յօժարութբ. ըմպել զբաժակ չարչարանաց ընդ քեզ որդիքըն Զեբեդեայ. շնորհեա մեզ Տէր ըզբաժակ քո փրկութեան: Այժմ և միշտ:

Ի միւսանգամ քո գալըստեանըն յորժամ գաս դատել զերկիր. ընդ նոսին դասաւորեա ըզմեզ ի փառս յաջակողմանն. որով հանցուք քեզ զօրհնութիւն յանըսպառ յաւիտենին:

Քարոզ. Վն խաղաղութե: Աղօթ. Հայր գթած:

Առաջ ակտոնին շարականի առաջուկն Սաղմոս ԿԴ:

ԿԴ. Լուր մեզ Ած փրկիչ մեր. յոյս ամ ծագաց երկրի, և որ ի ծով հեռի:

Փխ. Քեզ վայելէ օրհնութի Ած ի Սիովն. և քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց, զի առ քեզ ամ մարմին եկեսցէ:

Բանք անօրինաց զօրացան ի վերայ մեր. զամբարշտութիւնս մեր դու քաւեսցես:

Երանի զորս ընտրեցեր և ընկալար. և բնակեսցեն ի գաւիթս քո:

Լցցուք մեք ի բարութենէ տան քո. սբ է տաճար քո սքանչելի արդարութբ:

Լուր մեզ Ած փրկիչ մեր. յոյս ամ ծագաց երկրի, և որ ի ծով հեռի:

Ո պատրաստէ զլերինս զօրութբ իւրով. զգեցեալ է զզօրութիւն:

Ո խռովեցուցանէ զմեծութի ծովու. և զձայն ալեաց նորա ցածուցանէ:

Խռովեսցին հեթանոսք. և երկիցեն բնակիչք երկրի ի նշանաց քոց:

Ելս առաւօտու ընդ երեկոյս զուարճասցին. Հայեցար յերկիր, արբեցուցեր զնա. և բազում արարեր զմեծութիւն նորա:

Գետն Այ լի եղեւ ջուրբ. պատրաստ արարեր զկերակուր նց, զի այսպէս է պատրաստութիւն:

Զակօս նց արբեցուցեր, և բզմ արարեր զարմտիս նց:

Ի ցօղել նորա զուարթ եղիցի բոյս նորա. օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութե քո:

Դաշտք քո լցցին պարարտութբ. պարարտասցին գեղեցկութիւնք անապատի:

Բլուրք ցնծութի զգեցցին. և զգեցցին խոյք մաքեաց:

Հովիտք բազում արասցեն ցորեան, աղաղակեսցեն և օրհնեսցեն:

Զկնի Որթիւ:

Աւետարան ըստ Մատթէոսի: Ի 17:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Իբրեւ ելանէր յԵմ՝ առ զերկոտասանսն առանձինն, և ի ճանապարհին ասէ ցնս: Ահաւասիկ ելանեմք յԵմ. և որդի մարդոյ մատնեսցի քահանայապետից և դպրաց. և դատապարտեսցեն զնա ի մահ. և մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել և հարկանել և ի խաչ հանել, և յերիր աւուր յարիցէ: Յայնժամ մատեաւ առ նա մայր որդւոցն Զեբեդեայ որդւովքն իւրովք հանդերձ. երկիր պագանէր և խնդրէր ինչ ի նմանէ: Եւ նա ասէ ցնա. զի՞նչ կամիս: Ասէ ցնա. ասա զի նստցին սոքա երկու որդիքս իմ, մի ընդ աջմէ քումմէ՝ և մի ընդ ահեկէ յարքայութե քում: Պատասխանի ետ Յս և ասէ. ոչ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոցն եմ, կամ

զմկրտութիւն զոր ես մկրտելոցն եմ մկրտել. ասեն ցնա. կարող եմք: Ասէ ցնս Յս. զբաժակն իմ ըմպիցէք, և զմկրտութիւն զոր ես մկրտելոցն եմ մկրտիցիք, բայց նստուցանել ընդ աջմէ և ընդ ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց պատրաստեալ է ի Հօրէ իմմէ: Եւ լուեալ տասանցն՝ բարկացան ի վերայ երկուցն եղբարց: Յս կոչեաց զնոսա առ ինքն՝ և ասէ. գիտէք՝ զի իշխանք ազգաց տիրեն նց, և մեծամեծքն իշխեն նց: Ոչ այնպէս լիցի և ի ձերում միջի. այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ: Եւ որ կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ: Որպ որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ՝ այլ պաշտել. և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց: 28:

Քրզ. Խնդրեսց: Կեցո՛ Տէ–: Աւետ. Թագաւոր խաղ:

Եւ պրշակին:

ԱՒԱԳ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ, ԲԿ.

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհն––բի–ն ԲԿ:

Իմաստունն կուսանքըն պատրաստեալ իւղ լապտերաց. ելին ընդ առաջ երկնաւոր փեսային փառաւոր լապտերօք: Իսկ յիմարաց կուսիցն ունայնացեալք ի յիւղոյն. անպատրաստ գտան գալըստեան փեսային շիջեալ լապտերօք: Վասն որոյ եւ մեք պատրաստեսցուք իւղ հոգեւոր. զի մտցուք ի յառագաստ անմահ փեսային փառաւոր լապտերօք:

† Յորժամ յերկնից փառօք գաս Քս նստիս յաթոռ դատողական. և բաժանես զազգս ամենայն. յաջակողմանըն քում դասեա ըզմեզ ընդ օդեացն:

Յորժամ զտաղանդ պատուիրանին պահանջեսցես ի ծառայիցն. ընդ կրկնաշահ քանքարացն. արժանացո ըզմեզ Քս ուրախութեամբ քո յերկինս:

Վրդ: Հանապազ փառաց Հօր Որդիդ միածին. որ ըզլոյս անվայրափակ մարմնով պարագրեալ. * այսօր ի Թաբօր փառօք փայլեցեր: Որ աննիւթ սրովբէից անհաս ի վեր քան ըզբան. ծառայի կերպիւ պարածածկեալ ըզլոյս անըստուեր. այսօր: Որ հրեղինացն անմերձենալի հուր ածութեդ՝. ի հողեղէնս խոնարհեալ լոյս արփիական. այսօր ի:

Գծ: Ուրախ լեր եկեղեցի սբ. ի գալըստեան սբ միածնին. ուրախ լեր եւ ցնծա. հանդերձ ամենայն սըրբովք: Խընդա յոյժ դուստր Սիոնի. ահա Թագաւոր քո գայ նըստեալ յաւանակի նորոյ. արդար եւ փրկիչ. փրկէ եւ կեցուցանէ: Զուարճացիր եւ բերկրեա ժողովուրդ Աստուծոյ. մատո զուտըրս ծաղկեալըս հաւատով եւ ասա. օրհնեալ որ եկիրըդ Թագաւոր տիեզերաց:

Կցր: Դատաւոր արդարութեան հաստատեցեր ի մեզ ըզմիտըս մեր. դատել զհոգի և ըզմարմին. արդարապէս դատմամբ ըստ օրինաց քոց Քրիստոս: Իսկ անիրաւ դատաւորին որ ի քաղաք բնութեան մերոյ. ոչ ունելով զերկիւղ քո սուրբ. եւ անպատկառ ի մարդկանէ ոչ առնելով դատ զըրկելոյն: Այլ անմահ Տէր փեսայիդ այրի հոգի իմ պաղատի. ուստի զերաւունըս քո խնդում դատաւորիս. առնել ինձ դատաստան արդար ընդ ոսոխի մարմնոյ իմոյ: Մարիամ կոյս անարատ զանապական փեսայդ աղաչեա. զի հաշտեսցի ընդ այրի եղեալ հոգիս. և միաւորեսցի դարձեալ սիրով ընդ հեռացեալ ի նմանէ:

Աղչ: Ամենայն երկիր, տուք փառս ամ:մջնմ, որ եկն եւ փրկեաց զմեզ: Ամենայն հոգիք, ձայնիւ ցնծուձ:մե, բարեբանեցէք զՏէր: Զի եցոյց մեզ Տէր, զփրկութի եւ զկեանս, յայտնեաց տանն Իսրայէլի:

ՀԲԳ. Իջեր Տէր ողորմութեամբ քո յաշխարհ, և ըզմեռեալ բընութիւնս ի կեանս վերափոխեցեր: Ելեր Տէր առ Հայր փառօք ի յերկինս, և մըխիթարիչ առաքելոցն առաքեցեր սուրբ զՀոգին: Բացեր Տէր այսօր ըզգանձդ երկնային, և բաշխեցեր առատապէս պարգեւս աղքատ բընութեանս:

ՆՆՁ: Գալըստ է միածինն փողով և փառօք Հօր, եւ ըզՀոգեղէն բնութիւնս հրեղէն նորոգէ: Լուսաւորեն ճանապարհք արդարոց, եւ ի բիւրաւոր բանակս հրեշտակաց ամպովք ընթանան: Ի վերինն Եդեմ թըռչին ամպովք ընդ առաջ Տեառըն յօդս, եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառըն լինին:

ԱԶՆ: Ըզքեզ Աստուածին որ վերօրհնիս ի զօրաց հրեշտակաց, * ազգ մարդկան կենդանեաց մեծացուցանեմք: Ըզքեզ բնակ հրեղէն աստուածութեանն յիմանալի զօրացն երանեալ, ազգ մարդ: Ըզքեզ մայր Էմմանուէլի մարգարէին յառաջ գուշակեալ, ազգ մարդկան կենդ:

ԽՆ: Ի վերայ վիմի հաւատոյ շինեցեր ըզքո Տէր զեկեղեցի, ըզսա պահեա ի խաղաղութեան: Որ շնորհեցեր ողորմութի ի բնակարանս հրեշտակաց եւ մարդկան քաւարան, տուր սըմա զանշարժ քո զխաղաղութիւն: Փառք Հօր և: Ի տաճարի փառաց սըրբութեան քո քեզ երգեն մանկունք, տուր սոցա զառատ քո զողորմութիւն:

Այժմ և միշտ: Յորժամ կոչես ըզհրաւիրեալսն ի

սկըզբանէ աշխարհի, ժառանգել ըզպատրաստեալն, շնորհեա մեզ ընդ նոսին զարքայութի քո Քս:

Մաղթանք. Փառք հրաշափառ տէրութեն:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Կացցէ դըշխոյ ընդ աջմէ քումմէ, ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ:

Լուր դուստր և տես, խոնարհեցո զունկն քո, մոռա զժողովուրդ քո և ըզտուն հօր քո, զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քո:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Փ. Տարցին թագաւորի կուսանք ըզհետ նր, և զընկերս նր տարցին նմա:

Ածցեն ցնծութբ և ուրախութբ, և տարցին ի տաճար թագաւորի, և փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո:

Փառք և: Այժմ և միշտ, ալէլուիա:

ՅԱՐԱՒՕՏՈՒ

Հարց ԲՁ:

Որ սքանչելիդ ես ի բարձունս Տէր և ահաւոր ի մէջ երկրի անուն քո Տր, * օրհնեալ ես Աստուած հարցըն մերոց: Որ զհաւատացեալսն ի քեզ պահեալ և ըզչարսըն պատժեալ, գործակցօք ջրովք սուզմամբ յանդունդս, օրհնեալ: Որ հաստատեցեր ազգի մարդկան հրով փորձիլ ի յերկրորդումըն, պահեա անարատ ըզքո փրկեալս, օրհնեալ:

Գ. Ըզտէր օրհնեցէք, * եւ բարձր արարէք զնա յաւիտեան: Օրհնեցէք զթագաւորըն յաւիտենից Քրիստոս որ եկն և փրկեաց զամենայն արարածս, եւ բարձր: Փառք Հօր: Օրհնեցէք, Որ արար գալստեամբն իւրով զփրկութի որդւոց մարդկան, եւ բարձր: Այժմ և: Նոր արարածք պատուեալք

ի հրեշտակաց զերծեալք ի խաւարէ առ լոյսն. եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

Մեծացու. Բ Զ: Ըզկուսութիւնդ քո Ածածին անարատ զոր ոչ բոցակիզեաց հուր ածութեանն. մեծացուցանեմք: Փառք Հօր և: Որ յարգանդի քում անապականաբար բնակեցաւ Քս Ած եւ փրկիչ անձանց մերոց. մեծացուցանեմք: Այժմ և: Անհասանելի տէրունական յայտնութիւնն աշխարհի ծագեցաւ. անմատոյց լուսոյն երկրպագեսցուք:

Ողորմ. Բ Զ: Թինս իմ: Թագաւոր փառաց քեզ սպասեսցուք պատրաստեալք արթնութեամբ. ընդառաջել որ գայ ի դատել զերկիր: Փառք Հօր: Անաղօտ վառեալ լապտերօք հաւատոյ ընդ դասս իմաստուն կուսանացն. մտանել ի յառագաստ ընդ երկնաւոր փեսային: Այժմ և: Փութասցուք կանխեալ յառաջ քան զձայն ածային բարբառոյն. զի մի մնասցուք արտաքս ըստ շիջման հինգ կուսանացն:

Տէրունին. Բ Զ: Որ նստիս ի քրովբէս Ած Բանդ. այսօր վասն մեր խոնարհութեամբ նստար ի լերինն ձիթենեաց. *օրհնեմք զքեզ անդադար երգով: Փառք Հօր: Որ համագոյդ ես խորհրդոյդ Հայրենի. աշակերտաց քոց ծանուցեր զխորհուրդ քո գալստեանն. օրհնեմք: Այժմ և: Որ ամենայնց ես արարիչ և ըստեղծիչ կենդանութեան. այսօր ըզծածկեալ խորհուրդ Երրորդութեանդ յայտնեցեր եկեղեցւոյ սրբոյ քո. օրհնեմք:

Առաւ. Երգ: Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա. եւ զընկերս նորա տարցին նմա:

Ածցեն ցընծութեամբ եւ ուրախութեամբ. եւ տարցին ի տաճար թագաւորին:

Քարոզ. Փառաւորեսցուք. կամ ձայն:

Մանկ. Գ Զ: Ահաւոր ես թագաւոր քրովբէական ձայնիւ օրհնեալ. ի յերկինս ի յերկրի եւ յամենայն ժամանակի: Փառք Հօր: Ահաւոր ես թագաւոր որ նորոգես զքո զարարածս. հաստատես ի հաւատս ի գիտութիւն ճշմարտութեան: Այժմ և: Լուսաւորեա զմեզ Քս ի միւսանգամ քո գալստեանն. յորժամ ծագիս ի յերկնից եւ նորոգես զքո զարարածս:

Քարոզ. Վն խաղաղութե: Աղօթ. Մե ես Տր:

Առա Սաղմոս ԽԴ. ողբաձայն:

ԿՑ. Տարցին թագաւորի կուսանք զհետ նր, և զընկերս նորա տարցին նմա.

Փխ. Բղխեաց սիրտ իմ բան բարի. և ասեմ զգործս իմ թագաւորի:

Լեզու իմ ոճ գրիչ երագագիր դպրի. գեղեցիկ տեսլեամբ քան զամ որդիս մարդկան:

Սփռեցան շնորհք ի շրթանց քոց. վն այսորիկ օրհնեաց զքեզ Ած յաւիտեան:

Ած զսուր ընդ մէջ քո հզօր. վայելչութն և գեղոյ քո:

Լարեա ուղղեա և թագաւորեա վն ճշմարտութն, հեզութն և արդարութն. և առաջնորդեսցէ քեզ սքանչելապէս աջ քո:

Նետք քո սրեալ են հզօր. և ժողովուրդք ի ներքոյ անկցին ի սիրտս թշնամեաց թագաւորի:

Աթոռ քո Ած յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղութն գաւազան արքայութն քո:

Սիրեցեր զարդարութի, և ատեցեր զանիրաւութի:

Վասն այսորիկ օծ զքեզ Ած, Ած քո իւղով ուրախութն առաւել քան զընկերս քո:

Զմուռս և ստաշխ և կասիա ի զգեստէ քումմէ. ի տաճարաց փղոսկրէից, ուստի ուրախ արարին զքեզ դստերք թագաւորաց ի պատիւ:

կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ. ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ։

Լո՛ւր դուստր և տե՛ս՝ խոնարհեցո՛ զունկն քո. մոռա՛ զժողովուրդ քո, և զտուն հօր քո. զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քո։

Սա ինքն է Տէր քո՝ երկիր պագցես սմա. և դուստր Ծուրայ երկիր պագցէ սմա. և պատարագօք զերեսս ք՟ պաշտեսցեն մեծամեծք ի ժողովրդոց։

Ամենայն փառք դստեր թագաւորի ի ներքոյ. ի վերջաւորս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ։

Տարցին թագաւորի կուսանք զհետ ն՟ր. և զընկերս նորա տարցին նմա։

Ածցեն ցնծութ՟բ և ուրախութ՟բ. և տարցին ի տաճար թագաւորի. և փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո։

Կացուսցես զն՟ս իշխանս ընդ ա՟մ երկիր. յիշեսցի անուն քո ընդ ա՟մ ազգս ազգաց։

Վ՟ս այսորիկ ժողովուրդք խոստովան եղիցին առ քեզ յաւիտեան. և յաւիտեանս յաւիտենից։

Զկնի Ո՛րթիւ։

Աւետարան ըստ Մարկոսի։ ԺԲ. 13։

Առ Տէրն մեր Յ՟ս Ք՟ս

Եւ առաքեն զոմանս ի փարիսեցւոց անտի՝ և ի հերովդիանոսաց, զի զնա որսասցեն բանիւ։ Եւ նոքա եկեալ հարցանէին զնա նենգութ՟բ՝ և ասէին. վա՛րդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես, և ոչ ինչ փոյթ է քեզ զումեքէ. զի ոչ հայիս յերեսս մարդկան, այլ ճշմարտութ՟բ զճանապարհն Ա՟յ ուսուցանես. արդ՝ ասա՛ մեզ, արժա՞ն է հարկս տալ կայսեր՝ եթէ ոչ. տացո՞ւք՝ եթէ ոչ տացուք։ Եւ Յ՟ս գիտաց զկեղծաւորութ՟ի ն՟ց, ասէ ցնոսա. զի՞ փորձէք զիս կե՛ղծաւորք, բերէք ինձ դահեկան մի՝ զի տեսից։ Եւ նոքա բերին։ Եւ ասէ ցնոսա. ո՞յր է պատկերս այս կամ գիր։ Եւ նոքա ասեն ցնա. կայսեր։ Պատասխանի ետ Յ՟ս և ասէ ցնոսա. երթա՛յք

տո՛ւք զկայսերն՝ կայսեր, և զԱ՟յն՝ Ա՟յ։ Եւ զարմացան ընդ նա։ Գան առ նա Սադուկեցիքն որ ասեն՝ թէ չիք յարութ՟ի. հարցանէին ցնա և ասէին։ Վա՛րդապետ, Մովսէս գրեաց մեզ. եթէ ուրուք եղբայր մեռանիցի և թողուցու կին և որդի ոչ թողուցու, զի առցէ եղբայր նորա զկին նորա, և յարուսցէ զաւակ եղբօր իւրում։ Արդ՝ եղբարք եօթն էին առ մեզ. առաջինն ա՛ռ կին՝ և մեռաւ, և ոչ եթող զաւակ։ Եւ երկրորդն առ զնոյն՝ և մեռաւ, և ոչ նա եթող զաւակ. նոյնպէս և երրորդն առ զնոյն. և եօթնեքեան իսկ, և ոչ թողին զաւակ։ Յետ ամենեցուն մեռաւ և կինն։ Արդ՝ ի յարութ՟են յորժամ յառնիցեն, ո՞յր ի նոցանէ լինիցի կինն. զի եօթնեքեան կալան զնա կին։ Պատասխանի ետ Յ՟ս և ասէ ցնոսա. ո՞չ վասն այդորիկ իսկ մոլորեալ էք, զի ոչ գիտէք զգիրս և ոչ զզօրութ՟ի Ա՟յ։ Զի յորժամ ի մեռելոց յարիցեն՝ ոչ արք կանայս առնեն, և ոչ կանայք արանց լինին. այլ իբրեւ զհրեշտակս իցեն, որ յերկինս են։ Այլ վասն յարութեան մեռելոց զի յառնեն՝ ո՞չ իցէ ընթերցեալ ձեր ի գիրսն Մովսեսի ի մորենւոջն. ո՟պ ասաց ցնա Ա՟ծ. Ես եմ, ասէ, Ա՟ծ Աբրահամու, և Ա՟ծ Իսահակայ, և Ա՟ծ Յակոբայ։ Եւ ոչ է Ա՟ծ մեռելոց՝ այլ կենդանեաց. և արդ դուք յոյժ մոլորեալ էք։ Եւ մատուցեալ մի ո՟մն ի դպրացն՝ լսէր ն՟ց մինչ վիճէին. իբրեւ ետես եթէ բարւոք ետ ն՟ց զպատասխանին, եհարց ցնա և ասէ. ո՞ր պատուիրան է առաջին։ Եւ Յ՟ս ասէ ցնա. առաջին քան զա՟մ. Լո՛ւր Ի՟էլ, Տէր Ա՟ծ մեր Տէր մի է, և սիրեսցես զՏէր Ա՟ծ քո յա՟մ սրտէ քումմէ, և յա՟մ անձնէ քումմէ, և յա՟մ մտաց քոց, և յա՟մ զօրու՟է քումմէ. այս է առաջին պատուիրան։ Եւ երկրորդն նման սմին. Սիրեսցես զընկեր քո՝ իբրեւ զանձն քո. մեծ քան զսոսա այլ պատուիրան ոչ գոյ։ Եւ ասէ ցնա դպիրն. բարւոք է վարդապետ. ճշմարտութ՟բ ասացեր՝ թէ մի է Ա՟ծ, և ոչ

դոյ այլ բաց ի նմանէ։ Եւ սիրելն զնա յամ զօրուէ և յամ մտաց, և սիրելն զընկերն իբրև զանձն՝ առաւել է քան զողջակէզս և զզոհս։ Եւ տեսեալ Յսի թէ իմաստութբ ետ զպատասխանին՝ ասէ ցնա. չես հեռի յարքայուէ Այ. և ոչ ևս ոք իշխէր ինչ հարցանել ցնա։ Պատասխանի ետ Յս և ասէ մինչ ուսուցանէր ի տաճարին. զիարդ ասեն դպիրքն, եթէ Քսն որդի Դաւթի է։ Եւ ինքն Դաւիթ Հոգւովն սրբով ասէ. Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։ Արդ՝ եթէ ինքն իսկ Դաւիթ զնա Տէր կոչէ՝ զիարդ իցէ որդի նր։ Եւ բազում ժողովուրդ լսէր նմա քաղցրութբ։ Եւ ասէր ուսուցանելով ի վարդապետութե իւրում. զգուշ լերուք ի դպրաց անտի, որ կամին ի հանդերձս երևելիս շրջել, զնախողջոյնս խնդրել ի հրապարակս և զնախաթոռս ի ժողովուրդս և զգահագլուխս յընթրիս։ Որ ուտեն զտունս այրեաց, պատճառանօք յերկարեալ զաղօթս, զի աւելի ևս դատաստանս ընկալցին։ Կայր Յս ընդդէմ գանձանակին, տեսանէր թէ զիարդ ժողովուրդն արկանէր պղինձ ի գանձանակն. և բազում մեծատունք արկին բազում ինչ։ Եկն այրի մի՝ և արկ երկուս լումայս, որ է նաքարակիտ մի։ Եւ կոչեցեալ առ ինքն զաշակերտսն, ասէ ցնս. ամէն ասեմ ձեզ, զի այրին այն տառապեալ՝ շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին ի գանձանակն։ Քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին. այլ նա ի չքաւորութէ իւրմէ՝ զամ ինչ զոր ունէր՝ արկ զոյն չափ զկեանս իւր։ 44։

Երգ. Էական Բանն որ ընդ Հօր։

Քարոզ. Խնդրեսցուք։ Կեցո՛ Տէր։ Աղօթք. Քում ամենազօր և հրաշալի տէրութեդ։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ի տան ժամն ժողովքին եւ ասեն Խոնարհեցո եւ Ապրեցո։

Մեսեդի ղահոյ է յայնէ։

Ողորմութի արարեր ընդ ծառայի քում Տէր ըստ բանի քում։

Քաղցր ես դու Տէր. և քաղցրութեամբ քով խրատեա զիս։

Ընթերցուածս ի Ծննդոց։ Զ. 9։

Եւ այս են ծնունդք Նոյի. Նոյ այր արդար կատարեալ էր յազգի անդ իւրում. և հաճոյ եղև Նոյ Այ։ Եւ ծնաւ Նոյ երիս որդիս զՍէմ, զՔամ, զՅաբեթ։ Եւ ապականեցաւ երկիր առջի Այ. և լցաւ երկիր անիրաւութբ։ Եւ ետես Տր Աճ զերկիր, և էր ապականեալ. զի ապականեաց ամ մարմին զճանապարհս իւր ի վր երկրի։ Եւ ասէ Տէր Աճ ցՆոյ. ժամանակ ամ մարդոյ հասեալ է առաջի իմ. զի լցաւ երկիր անիրաւութբ ի նոցանէ. և ահա ես ապականեցից զնս և զերկիր։ Արդ՝ արա դու քեզ տապան ի չորեքկուսի փայտից. խորշս խորշս գործեսցես զտապանն. և նաւթիւ ծեփեսցես զնա ներքոյ և արտաքոյ։ Եւ այսպէս արասցես զտապանն. յերեքհարիւր կանգնոյ զերկայնութի տապանին. և ի յիսուն կանգնոյ զլայնութի. և յերեսուն կանգնոյ զբարձրութի։ Քաղելով գործեսցես զտապանն. և ի մի կանգուն կատարեսցես զնա ի վերուստ. և զդուռս տապանին ի կողմանէ արասցես. ներքնատունս և միջնատունս և վերնատունս գործեսցես ի նմա։ Եւ ահա ես ածից ջրհեղեղ ջրոյ ի վր երկրի. ապականել զամ մարմին, յորում է շունչ կենդանի ի ներքոյ երկնից. և ինչ որ իցէ ի վերայ երկրի սատակեսցի։ Եւ եդից զուխտ իմ ընդ քեզ. և մտցես ի տապանն. դու և որդիք քո և կին քո և կանայք որդւոց քոց ընդ քեզ։ Եւ յամ անասնոց և յամ գազանաց, և յամ մարմնոյ երկուս երկուս յամէ մուծցես ի տապանն

բուծանել ընդ քեզ․ արու և էգ լինիցին։ Յամ հաւուց թռչնոց ըստ ազգի․ և յամ անասնոց ըստ ազգի․ և յամ սողնոց երկրի ըստ ազգի իւրեանց․ երկու երկու յամէ մտանիցեն առ քեզ կերակրել ընդ քեզ, արու և էգ։ Եւ դու առնուցուս քեզ յամենայն կերակրոց զոր ուտիցէք․ և ժողովեսցես դու առ քեզ․ և եղիցի քեզ և նոցա կերակուր։ Եւ արար Նոյ զամ զոր միանգամ պատուիրեաց նմա Տէր Ած․ նոյնպէս և արար։ Եւ ասէ Տէր Ած ցՆոյ․ մուտ դու և ամ տուն քո ի տապանդ․ զի զքեզ տեսի արդար առաջի իմ յազգիդ յայդմիկ։ Եւ յամ անասնոց սրբոց մուծ ընդ քեզ եօթն եօթն՝ արու և էգ․ և յամ անասնոց որ ոչ են սուրբ, երկուս երկուս՝ արու և էգ։ Եւ ի թռչնոց երկնից սրբոց, եօթն եօթն՝ արու և էգ․ և ի թռչնոց որ ոչ սուրբ են, երկուս երկուս՝ արու և էգ․ բուծանել զաւակ ի վր ամ երկրի։ Եւ այլ եւս եօթն օր․ և ածից անձրեւ ի վր երկրի զքառասուն տիւ և զքառասուն գիշեր․ և ջնջեցից զամ հասակ, զոր արարի՝ յերեսաց երկրէ։ Եւ արար Նոյ զամ, զոր միանգամ պատուիրեաց նմա Տէր Ած։ Նոյ էր ամաց վեց հարիւրոց․ և ջրհեղեղ ջուրցն եղեւ ի վր երկրի։ Եւ եմուտ Նոյ և որդիք իւր և կին նր և կանայք որդւոց նր ընդ նմա ի տապանն, վս ջուրցն հեղեղի։ Եւ ի թռչնոց սբց, և ի թռչնոց որ ոչ սբ էին, և յամ սողնոց՝ որ սողին ի վր երկրի՝ երկու երկու մտին առ Նոյ ի տապան անդր՝ արու և էգ․ ոպ պատուիրեաց նմա Տէր Ած։ Եւ եղեւ յետ եօթն աւուր և ջուր ջրհեղեղին եղեւ ի վր երկրի։ Յամին վեցհարիւրորդի կենաց Նոյի, յերկրորդում ամսեանն ի քսան և եօթն ամսոյն․ և պատառեցան ամ աղբիւրք անդնդոց բազմաց․ և սահանք երկնից բացան։ Եւ եղեւ անձրեւ ի վր երկրի զքառասուն տիւ և զքառասուն գիշեր։ Յաւուր յայնմիկ եմուտ Նոյ, Սէմ, Քամ, Յաբեթ, որդիք

Նոյի, և կին Նոյի, և երեք կանայք որդւոց նր ընդ նմա ի տապան անդր։ Նոքա և ամ գազանք ըստ ազգի․ և ամ անասուն ըստ ազգի իւրեանց․ և ամ սողուն շարժուն ի վր երկրի ըստ ազգի իւրեանց․ և ամ հաւ թռչուն ըստ ազգի իւրում։ Մտին առ Նոյ ի տապան անդր երկու երկու յամ մարմնոյ, յորում է շունչ կենդանի։ Եւ որ մտանէինն՝ արու և էգ յամ մարմնոյ մտանէին․ ոպ պատուիրեաց Ած Նոյի։ Եւ փակեաց Տր Ած արտաքոյ նր զտապանն․ և եղեւ ջրհեղեղ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր ի վր երկրի․ և բազմացաւ ջուրն և վերացոյց զտապանն․ և բարձրացաւ յերկրէ։ Եւ զօրանայր ջուրն և բազմանայր յոյժ ի վր երկրի․ և շրջէր տապանն ի վր ջրոց։ Եւ սաստկանայր ջուրն յոյժ յոյժ ի վերայ երկրի․ և ծածկէր զամենայն լերինս բարձունս որք էին ի ներքոյ երկնից։ Հնգետասան կանգուն բարձրացաւ ջուրն ի վեր․ և ծածկեաց զամ լերինս։ Եւ մեռաւ ամ մարմին շարժուն ի վր երկրի, թռչնոց և անասնոց և գազանաց․ և ամ սողուն զեռուն ի վր երկրի, և ամ մարդ։ Եւ ամ որ ունէր շունչ կենդանի յռնգունս իւր, և ամ որ ինչ էր ի վր ցամաքի մեռաւ։ Եւ ջնջեաց զամ հասակ՝ որ էր ի վր երեսաց երկրի․ ի մարդոյ մինչեւ յանասուն․ և ի սողնոց մինչեւ ի թռչունս երկնից․ և ջընջեցան յերկրէ․ և մնաց միայն Նոյ, և որ ընդ նմա էին ի տապանի անդ։ Եւ բարձրացաւ ջուրն ի վերայ երկրի աւուրս հարիւր և յիսուն։ Եւ յիշեաց Ած զՆոյ և զամ գազանս և զամ անասունս և զամ թռչունս, որ էին ընդ նմա ի տապանի անդ․ և ած Ած հողմ ի վր երկրի, և դադարեաց ջուրն։ Եւ խցան աղբիւրք անդնդոց և սահանք երկնից. և արգելաւ անձրեւ յերկնից։ Եւ զիջանէր տակաւ․ երթայր ջուրն և թողանայր յերկրէ․ և նուազէր ջուրն յետ հարիւր և յիսուն աւուր։ Եւ նստաւ տապանն յեօթներորդում ամսեանն ի քսան և

եօթն ամսոյն ի լերինս Արարատայ: Եւ ջուրն երթայր և նուազէր մինչև ի տասներորդ ամիսն: Իսկ ժամանակն մետասաներորդի, որ օր առաջին էր ամսոյն, երևեցան գլուխք լերանց: Եւ եղև յետ քառասուն աւուր՝ եբաց Նոյ զպատուհան տապանին զոր արար: Եւ արձակեաց զագռաւն․ և ել և անդրէն ոչ դարձաւ մինչև ցցամաքել ջրոյն յերկրէ: Եւ արձակեաց զաղաւնին զհետ ն՟ր տեսանել թէ ցածուցեա՞լ իցէ ջուրն յերեսաց երկրի: Եւ չգտեալ աղաւնւոյն հանգիստ ոտից իւրոց, դարձաւ անդրէն առ նա ի տապան անդր․ զի ջուր դեռ ունէր զա՟մ երեսս երկրի․ և ձգեաց զձեռն և ընկալաւ զնա․ և առ զնա անդրէն առ իւր ի տապան անդր: Եւ դադարեաց ևս աւուրս եօթն․ և դարձաւ արձակեաց զաղաւնին ի տապանէ անտի: Եւ դարձաւ առ նա աղաւնին ընդ երեկս․ և ունէր տերև ձիթենւոյ շիւղ ի բերան իւրում․ և գիտաց Նոյ, թէ ցածուցեալ են ջուրքն յերկրէ: Եւ դադարեաց աւուրս եօթն ևս․ և դարձեալ արձակեաց զաղաւնին․ և ոչ ևս յաւել դառնալ առ նա: Եւ եղև ի վեցհարիւրորդի և ի միում ամի կենաց Նոյի, ժամանակն առաջնում, որ օր մի էր ամսոյն, նուազեաց ջուրն յերեսաց երկրէ․ և եբաց Նոյ զձեղուն տապանին զոր արար: Եւ ետես զի նուազեալ էր ջուրն յերեսաց երկրի: Իսկ ժամանակն երկրորդի, որ օր քսան և եօթն էր ամսոյն՝ ցամաքեցաւ երկիր: Եւ խօսեցաւ Տէր Ա՟ծ ընդ Նոյի, և ասէ: Ե՛լ ի տապանէ այտի դու և կին քո, և որդիք քո, և կանայք որդւոց քոց ընդ քեզ: Եւ ա՟մ գազանք որ են ընդ քեզ․ և ա՟մ մարմին ի թռչնոց մինչև ցանասունս․ եւ զա՟մ սողուն զեռուն երկրի հա՛ն ընդ քեզ․ և զեռասցեն ի վ՟ր երկրի: Եւ աճեցէք և բազմացարուք ի վերայ երկրի: Եւ ել Նոյ, և կին նորա, և որդիք նորա և կանայք որդւոց նորա ընդ նմա: Եւ ամենայն գազան, և ամենայն սողուն շարժուն, և ամե-

նայն թռչուն՝ յերկրէ ըստ ազգի իւրեանց, ելին ի տապանէ անտի: Եւ շինեաց Նոյ սեղան Աստուծոյ․ և առ յա՟մ անասնոց սրբոց․ և յա՟մ թռչնոց սրբոց․ և եհան ողջակէզ ի վ՟ր սեղանոյ: Եւ հոտոտեցաւ Տ՟ր Ա՟ծ ի հոտ անուշից․ և ասէ Տ՟ր Ա՟ծ, ածեալ զմտաւ, ոչ ևս յաւելից անիծանել զերկիր վ՟ն գործոց մարդկան․ զի միտք մարդկան հաստատեալ են ի խնամս չարի ի մանկութենէ իւրմէ, արդ ոչ ևս յաւելից հարկանել զա՟մ մարմին կենդանի, ո՟պ արարի: Այսուհետև զա՟մ աւուրս երկրի՝ սերմն և հունձք, ցուրտ և տօթ, ամառն և գարուն՝ զտիւ և զգիշեր մի՛ դադարեսցեն: Եւ օրհնեաց Ա՟ծ զՆոյ և զորդիս նորա․ և ասէ ցն՟ս․ աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր և տիրեցէք դմա: Եւ ահ և երկիւղ ձեր եղիցի ի վ՟ր ա՟մ գազանաց երկրի, և ի վ՟ր ա՟մ թռչնոց երկնից, եւ ի վ՟ր ա՟մ զեռնոց երկրի, և ի վ՟ր ձկանց ծովու․ զորս ընդ ձեռամբ ձեր ետու: Եւ ա՟մ զեռուն որ է կենդանի, ձեզ լիցի ի կերակուր․ իբրև զբանջար խոտոյ ետու ձեզ զա՟մ: Բայց զմիս արեամբ շնչոյ մի՛ ուտիցէք: Քանզի և զձեր արիւն շնչոյ խնդրեցից․ ի ձեռաց ա՟մ գազանաց խնդրեցից զնա․ և ի ձեռաց մարդոյ, ի ձեռաց առն զշունչ արեան եղբօր իւրոյ խնդրեցից: Որ հեղու զարիւն մարդոյ՝ փոխանակ արեան ն՟ր հեղցի արիւն ն՟ր․ զի ի պատկեր Ա՟յ արարի ես զմարդն: Այլ դուք աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր․ և բազմացարուք ի վ՟ր դորա: Եւ խօսեցաւ Տէր Ա՟ծ ընդ Նոյի, և ընդ որդիս ն՟ր որ ընդ նմա էին, եւ ասէ: Եւ ահաւասիկ ես հաստատեմ զուխտ իմ ընդ ձեզ և ընդ զաւակի ձերում յետ ձեր: Եւ ընդ ա՟մ շնչոյ կենդանւոյ որք ընդ ձեզ են․ ի թռչնոց և յանասնոց և յա՟մ գազանաց երկրի որ ընդ ձեզ․ եւ յամենեցունց որ ելին ի տապանէ անտի․ և յա՟մ անասնոց երկրի: Եւ հաստատեցից զուխտ իմ ընդ ձեզ․ և ոչ ևս մեռանիցի ա՟մ

մարմին ի ջրհեղեղէ. եւ ոչ եւս եղիցի ջրհեղեղ ջրոց ապականել զա՟մ երկիր։ Եւ ասէ Տ՟ր Ա՟ծ ցՆոյ. այս է նշան ուխտին, զոր ես տաց ընդ իս եւ ընդ ձեզ. եւ ի մէջ ա՟մ շնչոյ կենդանւոյ որ է ընդ ձեզ. յազգս յաւիտենից։ Զաղեղն իմ եդից յամպս, եւ եղիցի ի նշանակ յաւիտենական ուխտին ընդ իս եւ ընդ ա՟մ երկիր։ Եւ եղիցի ի գումարել ինձ զամպս ի վ՟ր երկրի, երեւեսցի աղեղն իմ յամպս։ Եւ յիշեցից զուխտ իմ որ ընդ իս եւ ընդ ձեզ. եւ ի մէջ ա՟մ շնչոյ կենդանւոյ յա՟մ մարմին. եւ ոչ եւս եղիցի ջրհեղեղ ի սատակել զա՟մ մարմին։ Եւ եղիցի աղեղն իմ յամպս. եւ տեսից յիշել զուխտն յաւիտենական, ի մէջ իմ եւ ի մէջ ա՟մ շնչոյ կենդանւոյ. յա՟մ մարմնի որ է ի վ՟ր երկրի։ Եւ ասէ Ա՟ծ ցՆոյ. այս է նշան ուխտին. զոր ուխտեցի ես ընդ իս եւ ընդ ձեզ. եւ ի մէջ ա՟մ մարմնոյ որ է ի վերայ երկրի։ Թ. 17։

ընթերցուածս յԱռակաց։ Թ. 1։

Իմաստութիւն շինեաց իւր տուն. եւ կանգնեաց սիւնս եօթն։ Եզեն զզենլիս իւր. եւ խառնեաց ի խառնարանս զգինի իւր. եւ պատրաստեաց զսեղան իւր։ Եւ առաքեաց զծառայս իւր՝ կոչել բարձր քարոզութ՟բ ի խառնելիս իւր։ Եւ ասէ. որ ոք իցէ անզգամ եկեսցէ առ իս։ Եւ ցպակասամիտս ասէ. եկա՛յք կերա՛յք ի հացէ իմմէ, եւ արբէք զգինի իմ, զոր խառնեցի ձեզ։ Թողէք զանզգամութիւն, եւ կեցջիք. խնդրեցէք զիմաստու՟ն. զի ապրեսջիք. եւ ուղղեցէք գիտութ՟բ զհանճար. եւ ուղիղ ճանապարհաւ իմացարո՛ւք զխրատ։ Որ խրատէ զչարս՝ առցէ անձին իւրում անարգանս. եւ որ յանդիմանէ զամբարիշտն, ատեայ զանձն։ Մի՛ յանդիմաներ զչարս՝ զի մի՛ ատեսցեն զքեզ. յանդիմանեա՛ զիմաստունն, եւ սիրեսցէ զքեզ. զանմիտն, եւ յաւելցէ ատել զքեզ։ Տո՛ւր իմաստնոյն պատճառս, եւ իմաստնագոյն եւս լիցի. ծանո՛ արդարոյն, եւ յաւելցէ ընդունել։

Սկիզբն իմաստութ՟ե երկիւղ Տ՟ն. եւ խորհուրդ ս՟բց հանճար. իմանալ զօրէնս՝ մտաց առատաց է։ Այսու օրինակաւ բազում ժամանակս կեցցես. եւ յաւելցին քեզ ամք կենաց։ 11։

ընթերցուած յԵսայեայ մարգարէէ։ Խ. 9։

Ե՛լ ի վ՟ր լերինդ բարձու՝ աւետարանիչդ Սիովնի. բարձրացո՛ զօրութեամբ զբարբառ քո՝ աւետարանիչդ Եր՟ղէմի. բարձրացուցէք. մի՛ երկնչիք։ Ասա՛ ցքաղաքդ Յուդայ. ահաւասիկ Ա՟ծ ձեր. ահաւասիկ Տէր Տէր՝ գայ զօրութ՟բ, եւ բազուկն տէրութ՟բ իւրով. ահաւասիկ վարձք իւր ընդ իւր. եւ գործք առաջի ն՟ր։ Իբրեւ հովիւ մի հովուեսցէ զխաշինս իւր. եւ բազկաւ իւրով ժողովեսցէ զգառինս. եւ ի ծոց իւր կրեսցէ զն՟ս. եւ մխիթար լիցի յղեաց։ Ո՞ չափեաց ափով իւրով զջուրս, եւ զերկինս թզաւ եւ զերկիր ա՟մ քլաւ. ո՞ կշռեաց զլերինս կշռով, եւ զդաշտս կշռորդօք։ Ո՞ գիտաց զմիտս Տ՟ն. եւ ո՞ եղեւ նմա խորհրդակից՝ եթէ խելամուտ արասցէ զնա։ Կամ ընդ ո՞ւմ խորհեցաւ եւ արար զնա խելամուտ. կամ ո՞ եցոյց նմա զդատաստան եւ զճանապարհ իմաստութ՟ե. կամ ո՞ ետ նմա փոխ յառաջագոյն, եւ հատուցանիցէ նմա։ Եթէ ա՟մ հեթանոսք իբրեւ զկաթիլ մի ի դուլէ են. եւ իբրեւ զմէտ մի ի կշռոց համարեցան. եւ իբրեւ զթուք ի բերանոյ համարեսցին։ Եթէ Լիբանան չէ բաւական յայրումն. եւ ա՟մ չորքոտանիք չեն բաւական յողջակէզս։ Եւ ա՟մ հեթանոսք ոչինչ են. եւ յոչինչ համարեցան նմա։ 17։

Ապա զՕրհնեցին ասա։ Քարոզ. Աղաչեսցուք. Հայր մեր։

Հարցուկի Բ Զ։ Շնորհեա մեզ Տ՟ր արթնութիւն. ընդ իմաստունն կուսանացն. եւ զհոգւոց մերոց լապտերս պայծառացո։ Երկրնչիմք ի քէն Տէր. զարհուրեալք ի պատասխանոյն. զամէնն ասելով եթէ ոչ գիտեմ ըզձեզ։ Յորժամ գաս փառօք Հօր. դատել ըզտիե-

զերս իմ՝․ շնորհեա և մեզ Տէր կալ ի յաջմէ քումմէ։ Բացցէ մեզ դուռն ողորմութեան երկնաւոր փեսային․ և մտցուք ի յառագաստ ընդ իմաստուն կուսանսն։ Փառք Հօր։ Ժամանեսցուք ընդ առաջ փեսային և մտցուք ի յառագաստ նորա․ զի մի՛ մնասցուք արտաքս որպէս զյիմար կուսանսն։ Այժմ և միշտ։ Պայծառասցին լապտերք հոգւոց մերոց․ և բազմեցուսցես զմեզ ընդ հրաւիրեալսն ի կոչումն արքայութեանն երկնից։

Քարոզ․ Վասն խաղաղութեան։ Աղօթք․ Հայր գթած։

Ապա ասողքն Սաղմոս ԻԴ․ ողբաձայն։

Առ քեզ Տէր համբարձի զանձն իմ․ Աստուած իմ ի քեզ յուսացայ, մի՛ ամաչեցից, և մի՛ ծիծաղեսցին զինեւ թշնամիք իմ։

Ամենեքեան որ համբերեն քեզ՝ մի՛ ամաչեսցեն, այլ ամաչեսցեն անօրէնք յունայնութեան իւրեանց։

Զճանապարհս քո Տէր ցոյց ինձ․ և զշաւիղս քո ուսո ինձ։

Առաջնորդեա ինձ ի ճշմարտութեան քում, և ուսո զիս․ զի դու ես Աստուած փրկիչ իմ․ և ես քեզ համբերեմ զօր հանապազ։

Յիշեա Տէր զգթութիւնս քո․ և զողորմութիւնս՝ որ են յաւիտենից։

Զմեղս մանկութեան և զանգիտութեան իմոյ մի՛ յիշեր․ այլ յիշեա զիս Տէր ըստ ողորմութեան քում, վասն քաղցրութեան քո․ զի քաղցր և ուղիղ ես Տէր։

Վասն այսորիկ օրէնսդէտ առնես զմեղաւորս ի ճանապարհի․ առաջնորդես հեզոց ի դատաստանի․ և ուսուցանես հեզոց զճանապարհս քո։

Ամենայն ճանապարհք Տեառն ողորմութեամբ և ճշմարտութեամբ են այնոցիկ որ խնդրեն զուխտս և զվկայութիւնս նորա։

Վասն անուան քո Տէր քաւեա զմեղս իմ, զի բազում են․ ո՞վ է մարդ որ երկնչի ի Տեառնէ․ օրէնսդէտ առնէ զնա ի ճանապարհի՝ յոր և հաճեցաւ։

Անձն նորա ի բարութեան հանգիցէ․ և զաւակ նորա ժառանգեսցէ զերկիր։

Զօրութիւն է Տէր երկիւղածաց իւրոց․ և զկտակարանս իւր ուսուցանէ նոցա։

Աչք իմ յամենայն ժամ առ Տէր․ և նա հանէ յորոգայթէ զոտս իմ։

Նայեաց առ իս, և ողորմեա ինձ․ զի միամօր և աղքատ եմ ես։

Նեղութիւնք սրտի իմոյ բազում եղեն յոյժ․ և ի վշտաց իմոց հան զիս։

Տես զխոնարհութիւն իմ և զվաստակ իմ․ և թող ինձ զամենայն մեղս իմ։

Տես զթշնամիս իմ՝ զի բազում եղեն․ ատելութիւն զոր ի նանիր ատեցին զիս։

Պահեա զանձն իմ, և փրկեա զիս, և մի՛ յամօթ եղէց՝ զի յուսացայ ի քեզ։

Անբիծք և ուղիղք կցորդք եղեն ինձ. և ես քեզ համբերի․ փրկեա Աստուած զԻսրայէլ յամենայն նեղութեանց նորա։

Զկնի՝ Ո՛րթիւ։

Աւետարան ըստ Մատթէոսի։ ԻԴ․ 1։

Տէրն մեր Յ՟ս Ք՟ս

Եւ ելեալ արտաքս ի տաճարէն գնայր․ և մատեան աշակերտքն ցուցանել նմա զշինուածս տաճարին։ Եւ նա պատասխանի ետ և ասէ ցնոսա․ տեսանէ՞ք զայդ ամենայն. ամէն ասեմ ձեզ․ ոչ մնասցէ այդր քար ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի։ Եւ մինչդեռ նստէր ի լերինն ձիթենեաց, մատեան առ նա աշակերտքն առանձինն և ասեն․ ասա մեզ՝ երբ լինիցի այդ․ և կամ զի՞նչ նշան իցէ քոյոյ գալստեանդ, և վախճանի աշխարհիս։ Պատասխանի ետ Յ՟ս և ասէ ցնոսա․ զգո՛յշ լերուք՝ գուցէ ոք

զձեզ խաբիցէ։ Զի բազումք գայցեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ ես եմ Ք՟ն. և զբազումս մոլորեցուցանիցեն։ Լսելոց էք պատերազմունս և համբաւս պատերազմաց. զգո՛յշ լերուք՝ մի՛ խռովեսջիք, զի պարտ է լինել այնմ ամ՟ի, այլ չև է կատարած։ Յարիցէ ազգ յազգի վ՟ր, և թագաւորութ՟ի ի թագաւորութ՟ե վ՟ր. և եղիցին սովք և սրածութ՟իք և սասանութ՟իք ի տեղիս տեղիս։ Սակայն և այն ամ՟ սկիզբն է երկանց։ Յայնժամ մատնեսցեն զձեզ ի նեղութ՟իս, և սպանանիցեն զձեզ. և եղիջիք ատեցեալք յամ՟ ազգաց վ՟ն անուան իմոյ։ Եւ յայնժամ գայթագղեսցին բազումք, և զմիմեանս մատնեսցեն, և ատեսցեն զմիմեանս։ Եւ բազում սուտ մարգարէք յարիցեն, և զբազումս մոլորեցուսցեն։ Եւ վ՟ն բազմանալոյ անօրէնութ՟են՝ ցամաքեսցի սէր բազմաց։ Բայց որ համբերեսցէ ի սպառ, նա կեցցէ։ Եւ քարոզեսցի աւետարանս արքայութ՟ե ընդ ամ՟ տիեզերս՝ ի վկայութիւն ամ՟ հեթանոսաց, և ապա եկեսցէ կատարած։ Արդ՝ յորժամ տեսանիցէք զպղծութ՟ի աւերածոյն, որ ասացեալն է ի ձեռն Դանիէլի մարգարէի. զի կայցէ ի տեղւոջն սրբութ՟ե. որ ընթեռնուն՝ ի միտ առցէ։ Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի լերինս. և որ ի տանիս կայցէ՝ մի՛ իջցէ առնուլ ինչ ի տանէ իւրմէ։ Եւ որ յանդի իցէ՝ մի՛ դարձցի յետս առնուլ զձորձս իւր։ Բայց վա՜յ իցէ յղեաց և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ։ Յաղօթս կացէք՝ զի մի՛ լինիցի փախուստն ձեր ձմերայնի, և մի՛ ի շաբաթու։ Զի եղիցի յայնժամ նեղութ՟ի մեծ, որպիսի ոչ եղև ի սկզբանէ արարածոց աշխարհի մինչև ցայժմ, և ոչ այլ լիցի։ Եւ եթէ ոչ կարճէին աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր ամ՟ մարմին. բայց վ՟ն ընտրելոցն կարճեսցին աւուրքն այնոքիկ։ Յայնժամ թէ ոք ասիցէ ձեզ՝ ահաւասիկ աստ է Ք՟ն կամ անդ, մի՛ հաւատայցէք։ Զի յարիցեն սուտ ք՟ք և սուտ մարգարէք.

և տայցեն նշանս մեծամեծս և արուեստս, մինչև մոլորեցուցանել՝ թէ հնար ինչ իցէ և զընտրեալսն։ Ահա յառաջագոյն ասացի ձեզ։ Ապա թէ ասիցեն ձեզ, ահաւանիկ յանապատի է, մի՛ ելանիցէք. և թէ ահա յշտեմարանս է, մի՛ հաւատայցէք։ Զի որ՟պ փայլակն՝ որ ելանէ յարևելից, և երևի մինչև յարևմուտս, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ։ Զի ուր գէշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք։ Վաղվաղակի յետ նեղութ՟ե աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տացէ զլոյս իւր, և աստեղք անկցին յերկնից, և զօրութ՟իք երկնից շարժեսցին։ Եւ ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ամ՟ ազգք երկրի. և տեսցեն զորդի մարդոյ եկեալ ի վ՟ր ամպոց երկնից զօրութ՟բ և փառօք բազմօք։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս ն՟ր ի չորից հողմոց՝ ի ծագաց երկնից մինչև ի ծագս ն՟ց։ Ի թզենւոյ անտի ուսարո՛ւք զառակն. զի յորժամ ն՟ր ոստքն կակղասցին և տերևն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն։ Նոյնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամ՟, գիտասջիք թէ մերձ է ի դուրս։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս մինչև այս ամ՟ եղիցի։ Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի՛ անցցեն։ Բայց վ՟ն աւուրն այնորիկ և ժամուն, ոչ ոք գիտէ. ոչ հրեշտակք երկնից և ոչ Որդի, բայց միայն Հայր։ Այլ որ՟պ աւուրքն Նոյի, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ։ Զի որ՟պ էին յաւուրսն որ յառաջ քան զջրհեղեղն, ուտէին և ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին, մինչև յօրն՝ յորում եմուտ Նոյ ի տապանն. և ոչ գիտացին մինչև եկն ջրհեղեղն և եբարձ զամենեսին, այնպէս եղիցի և գալուստն որդւոյ մարդոյ։ Յայնժամ թէ իցեն երկու յագարակի, մին առնուցու և միւսն թողուցու։ Եւ եթէ երկու աղայցեն ի մի երկանս, մին առնուցու և միւսն

թողուցու։ Արթո՛ւն կացէք՝ զի ոչ գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ։ Զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն՝ յորում պահու գող գայ, սկէր և ոչ տայր ական հատանել զտան իւրոյ։ Վա՛ն այսորիկ և դուք եղերո՛ւք պատրաստք, զի յորում ժամու ոչ ակն ունիցիք գայ որդի մարդոյ։ Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ և իմաստուն, զոր կացոյց տէր իւր ի վ՟ր ծառայից իւրոց՝ տալ ն՟ց կերակուր ի ժամու։ Երանի՛ իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէրն գտանիցէ արարեալ այնպէս։ Ամէն ասեմ ձեզ, զի ի վ՟ր ա՟մ ընչից իւրոց կացուսցէ զնա։ Ապա թէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւրում, տէր իմ յամէ զգալ. և սկսանիցի հարկանել զծառայակիցս իւր, ուտիցէ և ըմպիցէ ընդ արբեցողս։ Գայցէ տէր ծառային այնորիկ, յաւուր՝ յորում ոչ ակն ունիցի, և ի ժամու՝ յորում ոչ գիտիցէ. և կտրեսցէ զնա ընդ մէջ, և զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ։ Անդ եղիցի լալ և կրճել ատամանց։ Յայնժամ նմանեսցի արքայութի՟ երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց ելին ընդ առաջ փեսայի և հարսին։ Հինգն ի նոցանէ յիմարք էին և հինգն իմաստունք։ Յիմարքն առին զլապտերսն, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին։ Իսկ իմաստունքն առին ձէթ ամանօք ընդ լապտերս իւրեանց։ Եւ ի յամել փեսային, նիրհեցին ամենեքեան և ի քուն մտին։ Եւ ի մէջ գիշերի եղեւ բարբառ, ահա փեսայ գայ՝ ա՛րք ընդ առաջ ն՟ր։ Յայնժամ յարեան ա՟մ կուսանքն, և կազմեցին զլապտերս իւրեանց։ Ասեն յիմարքն ցիմաստունսն, տո՛ւք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերք մեր։ Պատասխանի ետուն իմաստունքն և ասեն. գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական. այլ երթա՛յք ի վաճառականս և գնեսջիք ձեզ։ Իբրեւ նոքա գնացին գնել՝ եկն փեսայն, և պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն, և փակեցաւ դուռն։ Յետոյ գան և այլ կու-

սանքն և ասեն. տէ՛ր տէ՛ր, բա՛ց մեզ։ Նա պատասխանի ետ և ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ ոչ գիտեմ զձեզ։ Արթո՛ւն կացէք՝ զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամ՟։ Ո՟պ այր մի գնացեալ ի տար աշխարհ, կոչեաց զծառայս իւր, և ետ ն՟ց զինչս իւր։ Ումեմն ետ հինգ քանքար, և ումեմն երկուս, և ումեմն մի, իւրաքանչիւր ըստ իւրում կարի, և գնաց։ Չոգաւ վաղվաղակի՝ որ առ զհինգն՝ գործեաց նոքօք, և շահեցաւ այլ եւս հինգ։ Նոյնպէս և որ զերկուսն, շահեցաւ այլ եւս երկուս։ Եւ որ զմին առ՝ գնաց փորեաց զերկիր, և թաղոյց զարծաթ տ՟ն իւրոյ։ Յետ բազում ժամանակի գայ տէր ծառայիցն այնոցիկ, և առնէ համարս ի մէջ ն՟ց։ Եւ մատուցեալ՝ որ զհինգ քանքարն առ, մատոյց այլ եւս հինգ քանքար, և ասէ. տէ՛ր հինգ քանքար ետուր ցիս, արդ՝ ահասիկ հինգ այլ եւս քանքար ի վ՟ր շահեցայ։ Ասէ ցնա տէրն իւր. ազնի՛ւ, ծառայ բարի և հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վ՟ր բազմաց կացուցից զքեզ. մո՛ւտ յուրախութի՟ տ՟ն քո։ Մատուցեալ և որոյ զերկուս քանքարսն առեալ էր, և ասէ. տէ՛ր՝ երկուս քանքարս ետուր ցիս, ահաւասիկ երկուս եւս այլ քանքարս՝ զոր ի վ՟ր շահեցայ։ Ասէ ցնա տէրն իւր. ազնի՛ւ, ծառայ բարի և հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մո՛ւտ յուրախութի՟ տ՟ն քո։ Մատուցեալ եւ որոյ զմի քանքարն առեալ էր, և ասէ. տէ՛ր՝ գիտէի, զի այր մի խիստ ես, հնձես՝ զոր ոչ սերմանեցեր, եւ ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր. երկեայ՝ գնացի և թաղուցի զքանքարն քո յերկրի. արդ՝ ահասիկ քոյդ ցքեզ։ Պատասխանի ետ տէրն և ասէ ցնա. ծառա՛յ չար և վատ, գիտէիր եթէ հնձեմ՝ ուստի ոչ սերմանեցի, եւ ժողովեմ՝ ուստի ոչ սփռեցի. պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք պահանջէի զիմ՟։ Արդ՝

առէք ի դմանէ զքանքարդ, և տուք այնմ որ ունիցի զտասն քանքարն։ Զի ամի որ ունիցի՝ տացի և յաւելցի, և որ ոչն ունիցի՝ և զոր ունիցին բարձցի ի նմանէ։ Եւ զծառայդ անպիտան հանէք ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց։ Եւ յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք իւրովք, և ամ հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց։ Եւ ժողովեսցին առաջի նր ամ ազգք, և մեկնեսցէ զնս ի միմեանց, ոռ հովիւ զի մեկնեսցէ զօդիս յայծեաց։ Եւ կացուսցէ զօդիսն ընդ աջմէ իւրմէ, և զայծիսն ի ձախմէ։ Յայնժամ ասասցէ Թագաւորն ցայնոսիկ՝ որ ընդ աջմէն իցեն. եկայք օրհնեալք Հօր իմոյ՝ ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութին ի սկզբանէ աշխարհի։ Զի քաղցեայ, և ետուք ինձ ուտել. ծարաւեցի, և արբուցէք ինձ. օտար էի, և ժողովեցէք զիս. մերկ, և զգեցուցէք զիս. հիւանդ էի, և տեսէք զիս. ի բանտի էի, և եկիք առ իս։ Յայնժամ պատասխանի տացեն նմա արդարքն և ասասցեն. տէր, երբ տեսաք զքեզ քաղցեալ, և կերակրեցաք. կամ ծարաւի, և արբուցաք։ Ե՞րբ տեսաք զքեզ օտար, և ժողովեցաք. կամ մերկ, և զգեցուցաք։ Ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ կամ ի բանտի, և եկաք առ քեզ։ Պատասխանի տացէ Թագաւորն և ասասցէ ցնս. ամէն ասեմ ձեզ, որովհետեւ արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք։ Յայնժամ ասասցէ և ցայնոսիկ՝ որ ընդ ահեկէն իցեն, երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նր։ Զի քաղցեայ, և ոչ ետուք ինձ ուտել. ծարաւեցի, և ոչ արբուցէք զիս. օտար էի, և ոչ ժողովեցէք զիս. մերկ էի, և ոչ զգեցուցէք զիս. հիւանդ և ի բանտի, և ոչ տեսէք զիս։ Յայնժամ պատասխանի տացեն և նքա և ասասցեն. տէր, երբ տեսաք զքեզ քաղցեալ կամ ծարաւի կամ

օտար կամ մերկ կամ հիւանդ կամ ի բանտի, և ոչ պաշտեցաք զքեզ։ Յայնժամ պատասխանի տացէ նց և ասասցէ. ամէն ասեմ ձեզ, որովհետեւ ոչ արարէք միում ի փոքրկանցս յայսցանէ, և ոչ ինձ արարէք։ Եւ երթիցեն նոքա ի տանջանս յաւիտենականս, և արդարքն ի կեանս յաւիտենականս։ Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յս զամ զբանս զայսոսիկ, ասէ ցաշակերտսն իւր։ Գիտէք, զի յետ երկուց աւուրց զատիկ լինի. և որդի մարդոյ մատնի ի խաչ ելանել։ ԻԶ. 2։

Քրզ. Խնդրեսցուք։ Կեցո՛ Տէր։ Աղ. Թագաւոր խաղաղ։

Եւ արձակեն։

ԱՒԱԳ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ, Գ Զ.

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Գ Զ։

Որ յաթոռ փառաց բազմեալ ընդ Հօր անսկզբնակից Բանդ. այսօր բազմել ընդ հողեղէնսըն յանձն առեր. * օրհնեմք զենեալդ ի փրկութի աշխարհի։ Որ զանճառ ծնութեամբդ օծեալ զքո ծառայական կերպ. այսօր հաճեցար օծանիլ իւղով ի մեղաւորաց. օրհնեմք։ Որ կենարար Թաղման քո գուշակ զիւղոյն ծանուցեր զօծումն. այսօր Յուդայի յայտնեցաւ խորհուրդ արծաթսիրութեան. օրհնեմք։

† Որ խորհրդեամբ ընդ Հօր և Հոգւոյն. արար ի պատկեր իւր զմարդն առաջին. այսօր որդիք մարդկան ժողովեալ խորհին մատնել ի մահ զՈրդին Աստուծոյ։ Յուդամ սիրոյն աշակերտ. փոխանակեաց զատելութի առ վարդապետին. մատնելով քահանայից ընդ երեսուն արծաթոյ։

Ղշ։ Մերաձգողն երկնից մշտնջենաւոր Հօր Որդին. ներգործեալ խոնարհ ի վեր քան զհրաշս. ծառայի առեալ զկերպ անկողոպտելի աստուածութեանն։ Բանին զմաքրեցելոցն ջրով զոտս լուանայ. զի զխոնարհութիւն ի նոսա տպաւորեսցէ. Երրորդութեանն գով օթեւան։ Բաշխէ զմարմին իւր եւ զարիւնն նոր ուխտ անուանեալ. եւ յիշատակ կամաւոր մահուանն. մերձեցելոցս ի նա սրբութեամբ։

Երկողդ զլուխս որպէս զօթոց. այսօր անճառ խոնարհութեամբ ի վերնատունն խորհրդոյ. զզգեստ ծառայի ըմփածանիլ յանձն առեր. օրհնեմք զքեզ կեալդ ի կամաւոր չարչարանս։ Որում երկրպագեն դասք հրեշտակաց. խոնարհեցար ի լուանալ զոտս հողեղէնս. բժշկել սոքօք զգարշապարս նախահօրն. բժշկեա զհոգւոյ իմոյ զհիւանդութիւն։ Որ ի խորհուրդս փրկականս եկեղեցւոյ. բաշխեցեր աշակերտացն զմարմին քո. նորոգելով զմահացեալսն ի ճաշակմանէ. հաղորդս այսմ ընկալ զմեզ միայն մարդասէր։

Որ անընկճելն յէութեան ես Աստուած. այսօր զգեցար զզգեստ հողեղէն ծառայի. ծածկելով զմերկութիւն նախահօրն. * օրհնեալ եկեալդ ի փրկութիւն ազգի մարդկան։ Որ վերօրհնիս ի հրեղէն քերովբէից. այսօր եկիր կամաւ ի վերնատունն խորհրդոյ. լուացեր զաշակերտսն յօրինակ վասն մեր. օրհնեալ եկեալդ։ Որ յաթոռ փառաց նստիս ընդ Հօր. այսօր բազմեալ ընդ աշակերտսն յանձն առեր. բաշխելով զմարմին եւ զարիւն քո սուրբ. օրհնեալ։

Եկեալ ի փրկութիւն ազգի մարդկան. ի ծառայէ յանձն առնու մատնիլ ի դատաստան. համբերելով վասն զմեզ կեցուցանել։ Մատնեալ Պի-

ղատոսի ոչ մահապարտ. ի յԱննայէ եւ ի Կայիափայ դատապարտեալ. * համբերելով վասն զմեզ կեցուցանել։ Կացեալ ի յատեանն երկրորդ Ադամ. վասն առաջինն Ադամայ պարտեացն թողուլ. համբերե։

ՀՈԳ. Արեգակն արդարութեան քո ծագեալ յաշխարհ հալածեաց զխաւարն անգիտութեան. եւ յետ մահու եւ յարութեան համբարձաւ առ Հայր յորմէ ծագեցաւ. որ երկրպագի յերկնաւորաց եւ յերկրաւորաց ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն. * վասն որոյ եւ մեք երկիր պագանեմք Հօր Հոգւով եւ ճշմարտութեամբ։ Որ փոխանակ ծոցածին Բանին որ ել յերկինս. առաքեցաւ աւետիքն Հօր ի բարձանց Հոգին ճշմարտութեան. մխիթարել զորս յԱդամայ տրտմեցելոց եւ հրաժարել զընտրեալ դասս առաքելոցն. վասն որոյ։ Այսօր տրտմական եւ գիշերային լուծան երկունք ծննդեան նախամօրն. քանզի զծնեալսն մարմնով ի մահ եւ յապականութիւն. վերստին ծնանի Հոգին յորդիս լուսոյ Հօրն երկնաւորի. վասն որոյ եւ։

ՆՋ։ Ի ձայն մեծի զուարթնոյն եւ ի հնչումն հրաշալի փողոյն. ուր հողացեալ մարմինք մարդկան նորոգին. * յայնմ աւուր յահեղին յիշեա Տէր եւ զմեր զննջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբս քո։ Յորժամ նշան տէրունեան ճառագայթիւք փայլէ. եւ թագաւորդ թագաւորաց փառօք տեսանիս. յայնմ աւուր։ Յորժամ ատեան դատաստանին դնի. եւ դպրութիւնք հրաշիցն բանին. յայնմ աւուր։

Աջն։ Այսօր Գաբրիէլ ցնծութեամբ երգեաց սրբոյ կուսին աւետիս բերկրեաց ասելով. որ ծնաւ զփրկիչ անձանց մերոց։ Անբաւելին երկնի եւ

երկրի ի կուսական արգանդէ մեզ կեանք յայտնեցաւ. Աստուած այցելու մարդկան: Յառաջընթաց փայլումն լուսատեսիլ աստեղն. մոգուցն հետեւելով նշանին ի ծնունդ Աստուածորդւոյն:

Խն: Այսօր ցնծան զուարթք հրեշտակաց ընդ հաստատել քո ի յերկրի. ով լուսեղէն խորան երկնանման եկեղեցի սուրբ. ուրախ լեր մայր վէմ պատուական հովանի մեր և յոյս: Զուարճացիր հարսն աննարատ ընծօղարկեալ վայելչապէս. զարդարեալ հանդերձ փառօք և եկ ընդ առաջ երկնաւոր փեսային. ուրախ լեր մայր ամուլ բազմածին ահա փեսայն գայ առ քեզ: Փառք Հօր: Աստանօր նորոգեցաւ մեզ աւազան մկրտութեան. յորդանդ մօր հոգւովն յղացեալ ծնանելով վերստին զհաւատացեալս ի Քս. ուրախ լեր մայր անմայր յառաջնումն ահա Որդին գայ առ քեզ:

Այժմ և միշտ: Որ զամենայն տնօրինաբար. կամաւ յանձն առեր փրկիչ ընդ մեզ աւորացս. վն անճառ խոնարհութեանդ քո և մեզ ողորմեա:

Մաղթանք. Փառք հրաշափառ տէրութեան:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Որ ուտէր ըղհաց իմ. յաճախեաց առնել ինձ խաբէութիւն: Այլ դու Տէր ողորմեա ինձ և կանգնեա զիս, և ես հատուցից նոցա:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Փ. Խորհեցան և խօսեցան զչարութի. և զանիրաւութի ի բարձունս խորհեցան: Եդին յերկինս զբերանս իւրեանց. և լեզուս իւրեանց անցին զերկրաւ:

Փառք և: Այժմ և. ալէլուիա:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Գ Ձ:

Որ խորհրդով ես Տէր Աստուած անմահ. զծածկեալ խորհուրդ չարին ապականեալ վանեա. * Ըղքեզ օրհնեմք Աստուած հարցն մերոց: Որ ընդնախնոյն Աբրահամու զհանդէս խորագոյնս ծանուցեր աւետեօք որդւոյն պատուեալ. զքեզ օրհ: Որ շնորհես ծածկելոց յայտնի գոլ. Յուդաս արծաթոյ զանհասանելիդ մատնէր. զքեզ օրհ:

Գ. Զտէր օրհնեցէք. * Եւ բարձր արարէք ըղնա յաւիտեան: Փառք Հօր և: Զընդհանուրն ի վերին զօրսըն ծածկապէս խորհուրդ. քահանայքն հոլովեալ վաճառէին զԱծ. եւ բարձր: Այժմ և միշտ: Որ վասըն մեր համբերեաց բանսարկուին. կամաւ վաճառի Աստուած Բանն. եւ բարձր:

Մեծացու. Գ Ձ: Ըծածուկն երկնային դուռն ծածուկն ձայնիւն աւետարանէր հրեշտակն. * ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ: Փառք Հօր: Ի քերովբէս բազմեալ ընդ Հօր աննպականաբար բնակել հաճեցաւ ի քում յորովայնի. ուրախ: Այժմ և միշտ: Որ բոցեղէն սրովբէիւք շրջափակեալ պահիւր. այսօր ի մէջ մարդկան ի գիրկս հողեղենի յայտնեալ. ուրախ լեր:

Ողորմ. Գ Ձ: Զքէն խորհեցան ի չարութի Աստուած յաւիտենից. որ բանիւ զարարածըս խորհրդով հիմնեցուցեր: Փառք Հօր: Զքեզ որ արարիչդ ես մեծութե արծաթոյ վաճառէին. յանձն առեր զամ համբերելով վասըն մեր: Այժմ և: Զքեզ որ թագաւորդ թագաւորաց ի ծառայէ դատապարտեալ. զի զմեզ փրկեսցես ի յանիծիցն Ադամայ:

Տէրյէրէն. Գ.Զ: Այսօր եկեալ կամաւ փրկիչն աւր մատնիլ յանօրէն ժողովրդէն. վասն փրկութե հեթանոսաց: Փառք Հօր: Այսօր մատնի Բանն ի բանաւոր հօտէ. և յառաջնոց դատապարտի յանօրինաց ժողովրդէն. վասն փրկութե հեթանոսաց: Այժմ և: Այսօր հողն ըզՏէրըն դատապարտէ. և արծաթոյ վաճառի արարիչն արարածոց. վասն փրկութեան հեթանոսաց:

Առաւ. Երգ: Խոնարհեցան, և խոնեցան ընչաւորութիւնք. և զապիրատութիւն բարձունս խոնարհեցաւն:

Եդին յերկինս զբերանս իւրեանց. և զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ:

Քարոզ. Փառաւորեսցուք. հոմ ձայն.

Մաղթ. Գ.Զ: Նոր ըսքանչելիք այսօր տեսանեմք յաշխարհի ի մէջ հողեղինաց. արարածք արարչին սպանութե խորհէին զխորհուրդ: Փառք Հօր: Որ բանին իւրով զերկինս և զերկիրըս հաստատեաց յոչընչէ գոյացուցեալ. վաճառի այսօր դիւրագին ընդ երեսուն արծաթոյ: Այժմ և: Ով Յուդաս արտասուելի երկնաւոր վարդապետին սպանութե խորհի զխորհուրդ. մատնելով անօրինաց զի խաչեսցի ի մէջ երկրի:

Քարոզ. Վա խաղաղութե: Աղօթ. Սէ ես Տէր:

Առա Սաղմոս Խ. ողբաջյան:

ԿՑ. Որ ուտէր ընդ իս հաց. յաճախեաց առնել ինձ խաբէութիւն:

Փխ. Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն. յաւուր չարի փրկէ զնա Տէր:

Տէր փրկէ զնա և կեցուցանէ. երանելի առնէ զնա ի վերայ երկրի, և ոչ մատնէ զնա ի ձեռս թշնամեաց իւրոց:

Տէր օգնական է նմա ի մահիճս ցաւոց իւրոց. զամ անկողինս նորա դարձուցանէ ի հիւանդութե նորա:

Ես ասացի Տէր ողորմեա ինձ. և բժշկեա զանձն իմ. ես մեղայ քեզ:

Թշնամիք իմ ասացին ինչ չար. երբ լցէ զի մեռցի, և կորիցէ անուն նորա:

Մտանէր տեսանել զնանրութիւն. խօսէր ի սրտի իւրում. ժողովէր զանօրէնութիւնս յանձն իւր:

Արտաքս ելանէր և զնոյն խօսէր. զինէն շշնջէին ամենայն թշնամիք իմ:

Խորհեցան չար ի վերայ իմ. բան անօրէնութեան եդին ի վերայ իմ:

Մի թէ որ ննջիցէն ոչ եւս յաւելուցու յառնել. քանզի և այրն խաղաղութեան իմոյ՝ յոր և ես յուսացայ:

Որ ուտէր ընդ իս հաց. յաճախեաց առնել ինձ խաբէութիւն:

Այլ դու Տէր ողորմեա ինձ. կանգնեա զիս, և հատուցից նոցա:

Յայսմ ծանեայց թէ հաճեցար ընդ իս. զի մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ:

Այլ զիս յամբծութեան իմում ընկալար. հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան:

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի յաւիտեանս յաւիտենից. եղիցի եղիցի:

Ձնէ Որթիւ:

Աւետարան ըստ Մարկոսի: ԺԴ. 1:

ԶՏէրն մեր Յիսուս Քրիստոս

Եւ էր զատիկն և բաղարջակերք յետ երկուց աւուրց. խնդրէին քահանայապետքն և դպիրք՝ եթէ զիարդ զնա նենգաւ կալեալ սպանանիցեն: Բայց ասէին՝ թէ մի ի տօնի աստ, զի մի խռովութիւն լինիցի ի ժողովրդեանն: Եւ մինչ էր ի Բեթանիա ի տան Սի-

մօտի բորոտի բազմեալ, եկն կին մի, որ ունէր շիշ իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, և բեկեալ զշիշն՝ եհեղ ի վ̃ր գլխոյ նորա։ Եւ աշակերտքն զչարէին և ասէին. ընդէ՞ր եղեւ կորուստ իւղոյդ այդորիկ։ Մարթ էր զայդ իւղ վաճառել աւելի քան երեքհարիւր դահեկանի, և տալ աղքատաց. և զայրանային նմա յոյժ։ Եւ Յիսուս ասէ ցնոսա. Թո՛յլ տուք դմա, զի՞ աշխատ առնէք, զի գործ մի բարի գործեաց դա յիս։ Յա̃մ ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, և յորժամ կամիք՝ կարող էք առնել նց̃ բարիս. այլ զիս ոչ յա̃մ ժամ ընդ ձեզ ունիք։ Դա զոր ունէրդ՝ արար. յառաջագոյն խնկեաց զմարմին իմ ի նշան պատանաց։ Ամէն ասեմ ձեզ. ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ա̃մ աշխարհ, և զոր արար դա՝ խօսեսցի վ̃ս յիշատակի դորին։ Եւ Յուդա Սկարիովտացի մի յերկոտասանից անտի, գնաց առ քահանայապետսն՝ զի մատնեսցէ զնա նց̃։ Նոքա իբրեւ լուան՝ խնդացին, և խոստացան տալ նմա արծաթ։ Եւ խնդրէր՝ թէ զիա՞րդ պարապով մատնեսցէ զնա։ 11։

Եւթ. Խաւարն անգոյ։

Քարոզ. Խնդրեսցուք։ Կեցո Տէ—. Աղօթ—. Քում ամենազօր և հրաշալի տէրութեանդ։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ի դասն ժամուն ասի Խոնարհեցո եւ Ապրեցո։

Մեսեդն պահոց է յայնէն։

«Նայեա՛ց և լո՛ւր ինձ Տէր Աստուած իմ։
Մինչեւ յե՞րբ Տէր մոռանաս զիս իսպառ. մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն։

Ընթերցուածս ի Ծննդոց։ ԺԸ. 1։

Եւ երեւեցաւ Ած̃ (Աբրահամու) առ կաղնեաւն Մամբրէի, մինչդեռ նստէր առ դուրս խորանին իւրոյ

ի միջօրէի։ Ամբարձեալ զաչս իւր և ետես. և ահա արք երեք կային ի վերոյ քան զնա. և իբրեւ ետես՝ ընթացաւ ընդ առաջ նց̃ ի դրանէ խորանին իւրոյ. և երկիր եպագ ի վ̃ր երկրի և ասէ. Տէր եթէ գտի շնորհս առաջի քո՝ մի՛ զանց առներ ի ծառայէ քումմէ։ Այլ առից սակաւ մի ջուր, և լուասցեն զոտս ձեր, և զովասջի՛ք ընդ ծառովս։ Եւ առից հաց և կերիջիք. և ապա երթիջիք զճանապարհ ձեր, փոխանակ զի դարձայք առ ծառայ ձեր։ Եւ ասեն՝ այդպէս արա՛, ո̃պ ասացերդ. Եւ պնդեցաւ Աբրահամ ի խորանն առ Սարրա, և ասէ ցնա. փութա՛ թրեա՛ գրիւս երիս ալեր նաշհոյ. և արա՛ նկանակս։ Եւ յանդեայ ընթացաւ Աբրահամ. և ա՛ռ որթ մի մատաղ և բարի. և ետ ցպատանին. և փութացոյց վաղվաղակի հասուցանել։ Եւ ա՛ռ կոգի և կաթն, և զորթն զոր հասոյց, և եդ առաջի նց̃, և կերան. և նա կայր առաջի նց̃ ընդ ծառովն։ Եւ ասեն ցնա. ո՞ւր է Սարրա կին քո։ Նա պատասխանի ետ և ասէ. ահաւանիկ ի խորանի անդ է։ Եւ ասէ. դարձեալ եկից առ քեզ ի ժամանակի յայսմիկ ի սոյն աւուրս, և ունիցի որդի Սարրա կին քո։ Եւ Սարրա ունկն դնէր առ դրան խորանին. քանզի յետոյ նր̃ կայր։ Եւ Աբրահամ և Սարրա ծերացեալք էին և անցեալք զաւուրբք. և պակասեալ էր ի Սարրայէ լինել ի կանանց օրինի։ Ծիծաղեցաւ Սարրա ընդ միտս և ասէ. որ ինչ ցայժմ ոչ եղեւ ինձ՝ ա՞րդ լինիցի. և տէր իմ ծերացեալ է։ Եւ ասէ Տ̃ր ցԱբրահամ. զի՞ է զի ծիծաղեցաւ Սարրա ընդ միտս իւր և ասէ. թէ արդարեւ ծնանիցի՞մ, զի ահա ես պառաւեալ եմ։ Մի՛ թէ տկարանայցէ՞ առ ի յԱյ̃ բան. ի ժամանակի յայսմիկ դարձայց առ քեզ ի սոյն աւուրս. և եղիցի Սարրայի որդի։ Ժխտեաց Սարրա և ասէ՝ թէ ոչ ծիծաղեցայ. քանզի երկեաւ։ Եւ ասէ. ոչ այդպէս է, այլ ծիծաղեցար։ Եւ յարուցեալ անտի արանցն՝

հայեցան ընդ երեսս Սոդոմայեցւոցն և Գոմորացւոց. և Աբրահամ երթայր ընդ նս՝ յուղարկել զնս: Եւ ասէ Տէր. մի՞ թէ թագո՞ւստ ինչ իցէ յԱբրահամէ ծառայէ իմմէ՝ զոր ինչ գործելոց եմ: Այլ Աբրահամ լինելով եղիցի յազգ մեծ և ի բազում, և օրհնեսցին ի նա ամ ազգք երկրի: Քանզի գիտէի եթէ պատուիրեսցէ որդւոց իւրոց և տան իւրոյ յետ իւր՝ պահել զճանապարհս Տռն և առնել զարդարութի և զիրաւունս. և ածցէ Տր Ած ի վր Աբրահամու զամ զոր խօսեցաւ ընդ նմա: Եւ ասէ Տէր. աղաղակ Սոդոմացւոց և Գոմորացւոց յաճախեաց. և մեղք նց մեծացան յոյժ: Եւ արդ իջեալ տեսից եթէ ըստ աղաղակին նց որ յիս հասանէ՝ վճարիցե՞ն. ապա թէ ոչ՝ զի գիտացից: Եւ դարձեալ արանցն անտի՝ եկին ի Սոդոմ. և Աբրահամ կայր առաջի Տռն: Եւ մատուցեալ Աբրահամ ասէր. մի՞ թէ կորուսանիցե՞ս զարդարն ընդ ամպարշտին. և լինիցի արդարն իբրև զամպարիշտն: Եթէ իցեն յիսուն արդար ի քաղաքի՝ կորուսանիցե՞ս զնս. և ո՞չ ներեսցես ամ տեղեացն վն յիսուն արդարոցն, եթէ իցեն ի նմա: Քա՛ւ լիցի քեզ առնել զայն բան, սպանանել զարդարն ընդ ամպարշտի. և լինիցի արդարն իբրև զամպարիշտն. քա՛ւ լիցի քեզ՝ որ դատիս զամ երկիր. մի՛ արասցես զայն դատաստան: Եւ ասէ Տէր. եթէ գտցի ի Սոդոմ յիսուն արդար ի քաղաքի անդ, թողացուցից ամ տեղեացն վն նց: Պատասխանի ետ Աբրահամ և ասէ. այժմ սկսայ խօսել ընդ Տռն. բայց ես հող եմ և մոխիր: Եթէ պակաս իցեն քան զյիսուն արդար՝ հնգիւ չափ, կորուսանիցե՞ս վն հնգիցն զամ քաղաքն: Եւ ասէ. ոչ կորուսից՝ եթէ գտցի անդ քառասուն և հինգ: Եւ յաւել եւս խօսել ընդ նմա և ասէ. իսկ եթէ գտցի անդ քառասո՞ւն: Եւ ասէ. ոչ կորուսից վն քառասնիցն: Եւ ասէ. մի՞ թէ իցէ՞ ինչ Տէր եթէ խօսիցիմ. իսկ եթէ գտցին անդ երեսո՞ւն: Եւ ա-

սէ. ոչ կորուսից՝ եթէ գտցի անդ երեսուն: Եւ ասէ. որովհետև կալայ խօսել ընդ Տռն, եթէ գտցի անդ քսա՞ն: Եւ ասէ. ոչ կորուսից վն քսանիցն: Եւ ասէ. մի՞ թէ իցէ՞ ինչ Տէր, եթէ խօսեցայց եւս միւսանգամ. եթէ գտանիցի անդ տա՞սն: Եւ ասէ. ոչ կորուսից վն տասանցն: Եւ գնաց Տէր՝ իբրև լռեաց ի խօսելոյ անտի ընդ Աբրահամու. և Աբրահամ դարձաւ ի տեղի իւր: Եւ եկին երկու հրեշտակքն ի Սոդոմ ընդ երեկս. և Ղովտ նստէր առ դրան Սոդոմայեցւոցն. իբրև ետես Ղովտ՝ յարեաւ ընդ առաջ նց. և երկիր եպագ ի վր երեսաց իւրոց յերկիր, և ասէ: Ահաւասիկ ես տեարք, եկա՛յք ի տուն ծառայի ձերոյ, հանգերո՛ւք, և լուացից զոտս ձեր. և կանխեալ ընդ առաւօտս երթիջիք զճանապարհ ձեր: Եւ ասեն. ոչ, այլ ի քաղաքամիջի աստ ագցուք: Եւ բռնադատեաց զնս յոյժ. և խոտորեցան առ նա. և մտին ի տուն նորա, և արար նց ընթրիս. և բաղարջ եփեաց նոցա, և կերան: Մինչ չև ի քուն մտեալ էր նց. և արք քաղաքին Սոդոմայեցւոց պատեցին զտունն յերիտասարդաց մինչև ցծերս. ամ ժողովուրդն ի միասին: Եւ կոչէին արտաքս զՂովտ. և ասէին ցնա. ո՞ւր են արքն որք մտին առ քեզ գիշերի. ած զնս առ մեզ, զի գիտասցուք զնս: Եւ ել առ նոսա Ղովտ արտաքոյ դրանն. և զդուռն ձգեաց զկնի իւր: Եւ ասէ ցնոսա. քա՛ւ լիցի ձեզ եղբարք. մի՛ գործէք զայդ չարիս. են իմ երկու դստերք, որք զայր ոչ գիտեն. հանից զնս առ ձեզ, և արարէք ընդ նս ոճ և հաճոյ իցէ ձեզ. բայց միայն արանցդ այդոցիկ մի՛ ինչ մեղ առնիցէք. որովհետև մտին ընդ յարկաւ գերանաց իմոց: Եւ ասեն. ի բա՛ց կաց. մտեր բնակել պանդխտութբ, մի՛ թէ և դատաստա՞ն եւս դատել. այժմ և զքեզ եւս չարչարեսցուք առաւել քան զնս: Եւ բռնադատէին զայրն զՂովտ յոյժ. և մերձ էին զդուռն խորտակել: Եւ ձգեալ արանցն զձեռս իւրեանց՝ կոր-

զեցին յինքեանս զՂովտ ի տուն անդր. և զդուրս տանն փակեցին: Եւ զարսն որք առ դուրս տանն կային՝ հարին կուրութբ, ի փոքուէ մինչև ցմեծն. և լքան խնդրել զդուրսն: Եւ ասեն արքն ցՂովտ. է՞ ոք քո աստ փեսայ կամ որդիք կամ դստերք կամ այլ ոք որ քո իցէ՝ ի քաղաքի աստ. հա՛ն զնս ի տեղւոջէ յայսմանէ: Զի կործանելոց եմք մեք զքաղաքս զայս. զի բարձրացաւ աղաղակ սոցա առաջի Տն. և առաքեաց զմեզ Տէր սատակել զսա: Ել Ղովտ, և խօսեցաւ ընդ փեսայս իւր՝ որք առնլոց էին զդստերս նր. և ասէ. արի՛ք ելէ՛ք ի տեղւոջէ աստի յայսմանէ, զի սատակէ Տէր զքաղաքս: Եւ թուէր ծաղր առնել յաչս փեսայից իւրոց: Եւ իբրև եղև առաւօտ՝ փութացուցանէին հրեշտակքն զՂովտ՝ և ասէին. արի՛ ա՛ռ զկին քո և զերկուս դստերս քո զոր ունիս, և ե՛լ աստի, զի մի՛ և դու կորնչիցիս ընդ անօրէնութիս քաղաքիդ: Եւ նոքա խռովեցան. և կալան հրեշտակքն զձեռանէ նր և զձեռանէ կնոջ նր և զձեռանէ երկուց դստերաց նր. զի խնայեաց Տէր ի նա. և հանին զնա, և եդին արտաքոյ քաղաքին: Եւ եղև իբրև հանին զնս արտաքս՝ ասեն. ապրեցո՛ զանձն քո. մի՛ դառնայցես յետս, և մի՛ կայցես յամ կողմանս աշխարհիդ. զերծի՛ր ի լեառն, գուցէ ընդ նս ըմբռնիցիս: Եւ ասէ Ղովտ ցնս. աղաչեմ Տէր իմ, որովհետև եգիտ ծառայ քո ողորմութի առաջի քո. և մեծ արարեր զարդարութի քո՝ զոր առնես յիս ապրել անձին իմոյ. և արդ ես ոչ կարեմ զերծանել ի լեառն. գուցէ հասանիցեն ինձ չարիք, և մեռանիցիմ: Ահա քաղաքս այս մերձ է անկանել ի նա, որ է փոքրիկ. անդ ապրեցայց. և չէ փոքր, և կեցցէ անձն իմ վն քո: Եւ ասէ ցնա. ահաւադիկ արարի մեծարանս երեսաց քոց, և ի բանի յայդմիկ չկործանել զքաղաքն վն որոյ խօսեցար: Եւ արդ փութա՛ զերծանել ի նա. զի ոչ կարեմ առ-

նել իրս ինչ՝ մինչև անկանիցիս անդր. վասն այնորիկ կոչեաց զանուն քաղաքին այնորիկ Սեգովր: Արեգակն ծագեաց յերկիր. և Ղովտ եմուտ ի Սեգովր: Եւ Տէր տեղաց ի Սոդոմ և ի Գոմոր ծծումբ և հուր ի Տեառնէ յերկնից: Եւ կործանեաց զքաղաքսն զայնոսիկ և զամ կողմանս, և զամ բնակիչս քաղաքացն և զամ բոյս երկրին: Եւ դարձաւ կինն Ղովտայ յետս. և եղև արձան աղի: Եւ կանխեաց Աբրահամ ընդ առաւօտն ի տեղին ուր կայր առաջի Տեառն. և հայեցաւ յերեսս Սոդովմացւոց և Գոմորացւոց, և յամ երեսս երկրի գաւառին. և ետես, և ահա ելանէր բոց երկրին իբրև մրրիկ հնոցի: Եւ եղև ի սատակել Տեառն զամ զքաղաքս շուրջ զընակութբն՝ յիշեաց Ած զԱբրահամ, և եհան արձակեաց զՂովտ ի միջոյ կործանմանն. ի կործանել Տեառն զքաղաքսն յորս բնակեալ էր ի նոսա Ղովտ: Եւ ել Ղովտ ի Սեգովրայ, և նստէր ի լերինն. և երկոքին դստերք նր ընդ նմա. քանզի երկեաւ բնակել ի Սեգովր. և բնակեաց յայրի անդ ինքն և երկոքեան դստերք նորա ընդ նմա: ԺԹ. 30:

Ընթերցուածս յԱռակաց: Ա. 10:

Որդեակ, մի՛ խաբեսցեն զքեզ արք ամպարիշտք. և մի՛ ախորժեսցիս. եթէ կոչեսցեն զքեզ և ասասցեն. եկ ընդ մեզ՝ կցո՛րդ լեր արեան. ծածկեսցո՛ւք յերկրի զայր արդար ի տարապարտուց: Կլցուք զնա կենդանւոյն իբրև դժոխք. և բարձցուք զյիշատակս նր յերկրէ: Եւ զստացուածս նր զպէսպէսս ըմբռնեսցուք. լցցուք զտունս մեր աւարաւ: Զվիճակ քո ա՛րկ ընդ մեզ. քսակ հասարակաց ստասցուք ամենեքեան. գանձարան ի միասին եղիցի մեր: Որդեակ, մի՛ երթար ճանապարհ ընդ նս. խոտորեա՛ զոտն քո ի շաւղաց նց: Զի ոտք նց ի չարիս ընթանան, և երագունք են ի հեղուլ զարիւն: Զի ոչ եթէ տարապարտուց ձգեն

գործիս Թուչնոց։ Քանզի նոքին իսկ որք սպանութեան հաղորդքին, գանձեն անձանց իւրեանց չարիս։ Կործանումն անօրինաց չար է։ Այս ճանապարհք են ամենեցուն՝ որք գործեն զանօրէնս. զի ամպարշտութիւն զանձինս իւրեանց սատակեն։ 19։

ընթերցուածս ի Զաքարեայ մարգարէէ։ ԺԱ. 11։

Եւ ծանիցեն Քանանացիքն զխաշինս պահեստի իմոյ. զի բան Տեառն է։ Եւ ասացի ցնոսա. թէ բարւոք թուի յաչս ձեր՝ տուք զվարձս իմ. ապա թէ ոչ՝ զոյց արարէք։ Եւ կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթի։ Եւ ասէ ցիս Տէր. արկ զոսա ի բովս. և քննեա թէ փորձ իցէ որպէս գտայ փորձ վասն նոցա։ Եւ առի զերեսուն արծաթին, և արկի ի տուն Տեառն ի բովս։ Եւ ընկեցի զգաւազանն երկրորդ զվիճակն՝ ցրել զուխտ իմ ի մէջ Յուդայ և ի մէջ Իսրայէլի։ 14։

Ապա շՈ–ղլեցեն ասա։ Քրզ. Աղաչեսցուք. հաւ ֆանչ։

Համբարձի Գ.Զ։ Սո՛ր ըսքանչէ՛լի՛ք այսօ՛ր տեսա՛նե՛մք յաշխարհի՛ ի՛ մէջ հողե՛ղինա՛ց. ա՛րարա՛ծք ա՛րարչի՛՛ն սպա՛նութե՛ն խո՛րհի՛՛ն զխորհո՛ւրդ։ Փառք Հօր։ Ո՛ր բա՛նիւն իւրո՛վ զե՛րկի՛նս և զե՛րկի՛րըս հա՛ստատեա՛ց յո՛չընչէ գոյա՛ցուցեա՛լ. վաճառի՛ այսօ՛ր դի՛ւրագին ը՛նդ ե՛րեսո՛ւն ա՛րծաթո՛յ։ Այժմ և միշտ։ Ո՛վ Յո՛ւդաս արտա՛սուելի՛ ե՛րկնաւո՛ր վարդա՛պետի՛՛ն սպա՛նութեան խորհի՛ զխո՛րհո՛ւրդ. մատնելո՛վ ա՛նօ՛րինաց զե՛ խա՛չեսցի ի մէ՛ջ ե՛րկրի՛։

Քարոզ. Վ՛ն խաղաղութե՛։ Աղօթ.։ Հայր գթած։

Ապա ստողոգեն Սաղմոս Խ. ողբայօյն։

ԿՑ. Ես ասացի Տէր ողորմեա ինձ. բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։

ՓԽ. Նորանի որ խորհի զաղքատն. Տէ. է ՆԽ–Ն 244։

Զնե՛ Ո՛րթի՛ւ։

Աւետարան ըստ Մատթէոսի։ ԻԶ։ 3։

Վ՛ն Տ՛ն մերոյ Յ՛ի Ք՛ի.

Յայնժամ ժողովեցան քահանայապետքն և դպիրքըն և ծերք ժողովրդեանն ի սրահ քահանայապետին՝ որում անուն էր Կայիափա։ Եւ արարին խորհուրդ՝ զի նենգութեամբ կալցին զՅ՛ս և սպանցեն։ Բայց ասէին՝ թէ մի՛ ի տօնի աստ՝ զի մի՛ խռովութիւն լինիցի ի ժողովրդեանն։ Իբրև եկն Յ՛ս ի Բեթանիա՝ ի տուն Սիմոնի բորոտի, մատեաւ առ նա կին մի, որ ունէր շիշ իւղոյ ծանրագնի, և թափեաց ի գլուխ նորա ի բազմականին։ Իբրև տեսին աշակերտքն՝ բարկացան և ասեն. ընդէ՞ր է կորուստ այդ իւղոյդ։ Զի մարթ էր վաճառել զդա մեծագնի և տալ աղքատաց։ Գիտաց Յ՛ս և ասէ ցնոսա. զի՞ աշխատ առնէք զկինդ, գործ մի բարի գործեաց դա յիս։ Զամ ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք. բայց զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք։ Արկանել դորա զիւղդ ի մարմին իմ՝ առ ի թաղելոյ զիս նշանակեաց։ Բայց ամէն ասեմ ձեզ. զի ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ամ աշխարհ՝ խօսեսցի և զոր արար դա՝ ի յիշատակ դորա։ Յայնժամ գնաց մի յերկոտասանից անուանեալն Յուդա Սկարիովտացի՝ առ քահանայապետսն, և ասէ. զի՞նչ կամիք տալ ինձ, և ես մատնեցից զնա ձեզ. և նոքա կշռեցին նմա երեսուն արծաթի։ Եւ յայնմ հետէ խնդրէր պարապ՝ զի մատնեսցէ զնա նոցա։ 16։

Քարոզ. Խնդրեսցուք։ Կեցո Տէ–։ Աղօթ.։ Թագաւոր խաղաղութեան։

Եւ արձակեն։

ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ, ԳԿ.

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն Գ Զ:

Վերաձգողն երկնից մշտնջենաւոր Հօր Որդին. ներգործեալ խմելս ի վեր քան զհրաշս. ծառայի աւեալ զկերպ անկողոպտելի աստուածութեն: Բանին զմաքրեցելոցն ջրով զոտս լուանայ. զի զխոնարհութի ինոսա տպաւորեսցէ. Եւ որոգողութեանն գոլ օթեվան: Բաշխէ զմարմին իւր եւ զարիւնն նոր ուխտ անուանեալ. եւ յիշատակ կամաւոր մահուանն. մերձեցելոցս ի նա սրբութեամբ:

† Աղբեր լուսոյ և ճառագայթ անշիջանելի լուսոյ. որ լուանալ յանձն առեր զոտս աշակերտացն. * մաքրեա ի մէնջ զաղտ խաւարին խորհրդոց եւ լուսաւորեա զմեզ: Որ մարմնով և արեամբ քո ցուցեր զթողութիւն մեղաց. որք միշտ պատարագիս ի մեզ անծախսապէս. մաքրեա ի մէնջ: Որ քաւիչ զայս նոր ուխտ ցուցեր յետ առաջնոյ քո. մահացելոցս ի ճաշակմանէ նախահօրն. մաքրեա ի մէնջ:

† Որ եսդ ի յերկինս եւ ի վերայ երկրի. այսօր յանձն առեր լուանալ զոտս աշակերտացն. եւ զիս լուա Քրիստոս ի մեղաց իմոց: Որ բարերանիս յիմանալի զուարթնոցն. հաճեցար մարմնով պատարագիլ. արա եւ զիս արժանի ածային շնորհիդ: Որոյ աթոռ քերովբէ ի վերնատունն բազմեցար. կենարար բաժակաւն զմեզ փրկեցեր. փրկեա եւ զիս յաւիտենից ի հրոյն:

† Քրիստոս Աստուած որ վասն մեր խոնարհեցար ի կամաւոր չարչարանս. լուացեր զոտս աշակերտացն

* այսօր ի սուրբ վերնատունն. աղաչեմք փրկիչ ողորմեա: Որ կազմեցեր սեղան խորհրդոյ և արբուցեր յանմահական բաժակէն. սրբոց քոց առաքելոց այսօր ի: Մաքրեա զմիտս եւ զխորհուրդս. զի եւ մեք հաղորդեսցուք սրբութեան. ընդ սրբոց քոց առաքելոց այսօր ի սուրբ:

† Որ վասն մեր յերկրի երեւեալ. զամենայնն կատարեցեր ըստ օրինացն. այսօր կատարումն ստուերական տօնիցն. * Որդի Աստուծոյ ողորմեա: Մարդ ճշմարիտ և գառն անարատ. որ դատապարտեցեր զմեղս ի մարմնի. այսօր խոնարհեցար ի լուանալ զոտս աշակերտացն. Որդի: Բան Հօր և քահանայապետ ճշմարիտ. որ զաշխարհակեցոյց զմարմին և զարիւնդ քո բաշխեցեր յառաքեալսն. այսօր հաղորդին հողեղէնք ածային խորհրդոյդ. Որդի:

† Յորժամ սարսեալ սերովբէքն ոչ իշխէին նայել. այսօր ի ծառայի կերպարանս եղեալ նախայաւիտեան Բանն. * օրհնեցէք զնա հոգեւոր երգով: Որ զստուերականն այսօր ճշմարտապէս կատարեաց. լուանալով զոտս աշակերտացն ի պատրանաց թշնամւոյն. օրհնեցէք:

ՀՈԳ. Որ համագոյ ես Հօր և Որդւոյ. անճառաբար բղխումն ի միշտ Էէն. այսօր. բղխեցեր ջուր կենդանի յԵրուսաղէմ. * Հոգի Աստուծոյ ողորմեա: Որ աթոռակից ես Հօր և Որդւոյ. որով կենդանածնեալք ի ջուրս արարածք. այսօր. որդիս Աստուծոյ ծնանիս ի ջուրց. Հոգի: Որ փառակից ես Հօր և Որդւոյ. և քննես զխորս Աստուծոյ. այսօր. խորագէտս իմաստից զյիմարս աշխարհի արարեր. Հոգի:

ՆՉ։ Որ երկայնամիտդ ես Տէր. քաղցր և անոխակալ հանգո զհոգիս քոց ծառայից. * զի մի դարձցի տնանկ ամաչեցեալ յաւուրն ահեղ ատենին։ Զյիշատակ հրաժարելոցն ի հաճոյս քեզ ընկալցիս. եւ զուխտըս մեր ընկալ որպէս զԱբէլին զնուէրն և զԱբրահամուն. զի մի դարձ։ Ի խորան քում սիրողաց հանգուսցես ընծայեալս քո. եւ զհոգիս նոցա դասեսցես ընդ սուրբըս քո. զի մի դարձ։

ԱՉՆ։ Որ յէութեանդ ես ընդ Հօր և սուրբ Հոգւոյն անընկճելին Որդի. խոնարհեցար ի հայրական ծոցոյ. մարդ եղեալ մարմնացար ի կուսէն. բառնալով զյանցթումըն մահու յանցանաց նախահօրն. * քեզ երգեմք ընդ զօրըս հրեշտակացն ի մէջ հովուացն օրհնեալ ես Քս նախայաւիտեան Բանդ։ Այսօր ծնեալ որ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս Որդի. ճառագայթ փառաց և ծագումըն անմեկնելի լուսոյն. աստղագուշակ տեսլեամբն յայրին իջեալ անի եւ ի մսուր յանբանից բազմեալ. քեզ երգեմք։ Թագաւոր փառաց Քն և արարիչ բոլորից. Ած հզօր իշխան հայր հանդերձեալ լուսոյն. մանուկ երեւեալ այսօր անփոփոխելիդ ի յէութեան. քեզ երգեմք։

ԽՆ։ Այսօր ուրախացեալ ցնծան երկնիք բարձրութիւքն. ի նաւակատիս սուրբ եկեղեցւոյ. քանզի շնորհեցաւ մեզ քահանայապետ յաւիտենից. ի լուսաւորել զկաթուղիկէ սուրբ զեկեղեցի. * փաւ ուք զգալըստեան քո Տէր։ Այսօր սիւն լուսոյ հովանի եղեւ մեզ ի բարձանց. քանզի թագաւորն երկնաւոր եկաւորի ի մեր եկեղեցի. եւ զօրք հրեշտակաց ծաւալեալ տօնեն ընդ մարդկան. փաւ ուք։ Փառք Հօր։ Այսօր քահանայապետ ճշմարիտ

ածային օրէնօքըն պատուեալ. կանգնէ ըզքառանկիւն սեղանն խաչին. արժանապէս պատարագեալ բաշխէ զմարմինն և զարիւնըն Տն. մաքրապէս մերձեցարուք փրկեալքդ նորոգ ժողովուրդք. և հայցեցէք ի Քրիստոսէ զի շնորհեսցէ ըզսա մեզ ընդ երկայն աւուրս։

Այժմ և միշտ։ Այսօր վերըստին նորոգեցաք ի յանիծից նախահօրն ճաշակելով ըզմարմին և զարիւն Որդւոյն Աստուծոյ. օրհնեցէք ըզնա հոգեւոր երգով։

Մաղթանք. Փառք հրաշափառ տէրութեան։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Լուացայց սրբութեամբ ըզձեռս իմ. և շուրջ եղէց ըզսեղանով քո Տէր։ Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո. և զտեղի յարկի փառաց քոց։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Փ. Պատրաստ արարեր առաջի իմ սեղան. ակն յանդիման նեղչաց իմոց։ Օծեր իւղով ըզգլուխ իմ. բաժակ քո ող անապակ արբեցոյց զիս։

Փառք և։ Այժմ և. ալէլուիա։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց ԲՉ։

Լոյսդ ի հայրական ծոցոյ ծագեալ հալածելով զխաւար մեղաց. կենարարըդ յայտնեցեր այսօր զխորհուրդ ընտրեալ քո աշակերտացն. * օրհնեալ եկեալդ ի փրկութիւն մեզ Աստուած հարցըն մերոց։ Զոր օրհնեն դասք լուսեղէնք. զոտըս տաժանեալըս լուացեր զանիծիցըն մերկացեալ ի մէնջ ծածկոյթ ըզգեստ ծառայի սփածար. օրհնեալ եկեալդ։ Անապականութեամբ աղբիւր զկենդանարարըդ բաշխեցեր զմարմինըդ

քո. Նորոգելով զմահացեալսն յանցանօք ի պատրանաց թշնամւոյն. օրհնեալ եկեալդ ի փրկութիւն մեզ Աստուած հարցն մերոց:

Գ. Եղէք: Ճառագայթ փառաց Հօր և պատկեր բարերարութեան. որ զգեցար այսօր զգեստ ծառայական կերպի. * զնա ամենայն ազինք օրհնեցէք հաւասար երգով: Փառք Հօր: Որ անճառ խոնարհութեամբ ի մաքրութիւն ոտից աշակերտացն. զմարդկային ազգի զգնացս ուղղեաց ի յերկինս. զնա ամենայն: Այժմ և: Որ բաշխմամբ կենդանարար խորհրդոյ անապական ճաշակմամբն. հրաւիրեաց զմեզ յերկնից յարքայութիւնն. զնա ամենայն:

Մեծացո. Բ Ձ: Օքեղ Հայր յառաջ քան զյաւիտեանս բարեբանեն դասք անմարմնոց հրեշտակաց. ձայնիւ երգով գոչեն և աղաղակեն. * Ած աստուծոց և Տր տերանց փրկիչ գոլով: Փառք Հօր: Առաքեցեր զքո միածին Որդի մարմնանալ ի սբ կուսէն. եւ անարատ ծննանել յորովայնէ անապական. բառնալով զմեր նեղութիւն. Ած աստ: Այժմ և: Շնորհք բարի յԵդեմ երեւեցաւ հեթանոսաց. զի արարիչն յաւիտենից տեղայ եղեալ յորդեգրութիւն կենաց կոչէ. Ած աստու:

Ողորմ. Գ Ձ. Երկոդ զլծոյ ոմ զօթոց. այսօր անճառ խոնարհութեամբ ի վերնատունն խորհրդոյ. զգեստ ծառայի ըսփածանել յանձն առեր. օրհնեմք զեկեալդ ի կամաւոր չարչարանս: Փառք Հօր: Որում երկրպագեն դասք հրեշտակաց. խոնարհեցար ի լուանալ զոտս հողեղէնս. բժշկել զոգիս ըղգամրշապարս նախահօրն. բժշկեա զհոգւոյ իմոյ զհիւանդութիւն: Այժմ և միշտ: Որ ի խորհրդոյ փրկական եկեղեցւոյ. բաշխեցեր աշակերտացն զմարմինդ քո.

Նորոգելով զմահացեալսն ի ճաշակմանէ. հաղորդս այսմ ընկալ զմեզ միայն մարդասէր:

Տերոյերկն. Գ Ձ: Որ անսկիզբն յէութեան ես Աստուած. այսօր զգեցար զգեստ հողեղէն ծառայի. ծածկելով զմերկութիւն նախահօրն. * օրհնեալ եկեալդ ի փրկութիւն ազգի մարդկան: Փառք Հօր և: Որ վերօրհնիս ի հրեղէն քերովբէից. այսօր եկիր կամաւ ի վերնատունն խորհրդոյ. լուացեր զաշակերտսն յօրինակ վասն մեր. օրհնեալ: Այժմ և: Որ յաթոռ փառաց նստիս ընդ Հօր. այսօր բազմել ընդ աշակերտսն յանձն առեր. բաշխելով զմարմին և զարիւն քո սուրբ. օրհնեալ:

Առաւ. երգ: Որսացան զանձն արդարոյ. և զարիւն ամբիծ պարտաւոր առնէին:

Եղեւ Տր ապաւէն իմ. Ած օգնական յուսոյ իմոյ:

Քարոզ. Փառաւորեսցուք. կամ Զոյն:

Մաղթ. ԱԿ: Այսօր կարգեցաւ օրինակ խոնարհութե ի յուղղութիւն վարուց մերոց: Այսօր Տէրն մեր լուանայր զոտս աշակերտացն և պատուիրէր զայս առնելով: Մի ոմն ի ձէնջ եղբարք մատնելոց է զիս ի մահ. և որոշի յաշակերտացդ: Փառք Հօր: Զայն լուեալ Պետրոսի ակնարկէր առ Յովհաննէս հարցանել թէ ով իցէ: Այժմ և: Բանն զոր ասաց Յիսուս տրտմեցոյց զնր զաշակերտսն եւ խռովեցան ամենեքեան:

Ալէ. Քարոզ. Վն խաղաղութե: Աղ. Մէ ես Տէր:

Սաղմոս ՂԳ. ողբոյն ասա:

ԿՑ. Որսացան զանձն արդարոյ, և զարիւն ամբիծ պարտաւոր առնէին:

Փխ. Ած վրէժխնդիր. Տր Ած վրէժխնդիր յայտնեցար: Բարձր լեր, որ դատիս զերկիր. հատո զհատուցումն ամբարտաւանից:

Մինչեւ յե՞րբ մեղաւորք Տր̃, մինչեւ յե՞րբ մեղաւորք պարծեսցին:

Բարբառեալ խօսէին զանիրաւութիւն. խօսեսցին ամենեքեան որ գործեն զանօրէնութիւն:

Զժողովուրդս քո Տէր խոնարհ արարին. եւ զժառանգութիւն քո չարչարեցին:

Զայրին եւ զպանդուխտն սպանին, զորբն կոտորեցին, եւ ասացին ոչ տեսանէ զայս Տէր, եւ ոչ ի միտ առնու Աստուած Յակովբայ:

Իմացարո՛ւք անզգամք ժողովրդոց եւ անմիտք. մինչեւ յե՞րբ ոչ առնուք ի միտ:

Ո՞չ զի թէ որ տնկեաց զունկն՝ ինքն ո՞չ լուիցէ. կամ որ ստեղծ զակն՝ ինքն ո՞չ տեսանիցէ:

Որ խրատէն զազգս, ո՞չ թէ ո՞չ յանդիմանեսցէ. ուսուցանէ մարդոյ զգիտութիւն. Տէր ճանաչէ զխորհուրդս մարդկան զի են ընդունայն:

Երանի մարդոյ զոր խրատես դու Տէր. եւ յօրինաց քոց ուսուցանես դու նմա:

Ցածուցանես դու նմա զաւուրսն չարութեան, մինչեւ փորեսցի խորխորատ մեղաւորի:

Ոչ մերժէ Տէր զժողովուրդ իւր. եւ զժառանգութիւն իւր ոչ առնէ անտես:

Մինչեւ դարձցին իրաւունք յարդարութիւն. ընկալցին զնա ամենեքեան որ ուղիղ են սրտիւք:

Ո՞ յարիցէ ընդ իս ի վերայ չարաց. կամ ո՞ հաւասարեսցէ ինձ ի վերայ այնոցիկ որ գործեն զանօրէնութիւն:

Թէ ոչ Տէառն օգնեալ էր ինձ, փոքր միւս եւս բնակեալ էր անձն իմ ի դժոխս:

Թէ ասէի թէ ահա սասանեցան ոտք իմ, ողորմութիւն քո Տէր օգնէր ինձ:

Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ մխիթարութիւն քո ուրախ առնէր զանձն իմ:

Մի՞ հաւասարեսցի քեզ աթոռ անօրէնութե̃, ո պատճառէ զվաստակս ընդդէմ հրամանի:

Որսացան զանձն արդարոյ, եւ զարիւն ամբիծ պարտաւոր առնէին:

Եղեւ Տէր ապաւէն իմ. Ա̃ծ օգնական յուսոյ իմոյ:

Հատուսցէ նց̃ Տէր ըստ անօրէնութե̃ նց̃, ըստ չարութե̃ նց̃ կործանեսցէ զնս̃ Տէր Աստուած մեր:

Զկնի՝ Ո՛րթիւ:

Աւետարան ըստ Յովհաննու: ԺԲ. 27:

Տէրն մեր Յս̃ Քս̃ ասէ.

Բայց այժմ անձն իմ խռովեալ է, եւ զի՞նչ ասացից, եթէ Հա՛յր՝ ապրեցո՛ զիս ի ժամէ աստի յայսմանէ. այլ վասն այնորիկ եկի ի ժամս յայս: Հա՛յր, փառաւորեա՛ զանուն քո: Եկն բարբառ յերկնից. Եւ փառաւոր արարի, եւ դարձեալ փառաւոր արարից: Եւ ժողովուրդն որ կայր եւ լսէր՝ ասէին որոտումն լինել. կէսքն ասէին, հրեշտակ խօսեցաւ ընդ նմա: Պատասխանի ետ Յս̃՝ եւ ասէ. ոչ վս̃ իմ ինչ եկն բարբառս այս, այլ վս̃ ձեր: Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ. այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս: Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս: Զայս ասէր, նշանակեալ՝ թէ որով մահու մեռանելոց իցէ: Պատասխանի ետ նմա ժողովուրդն. մեք լուաք յօրինաց՝ եթէ Քս̃ն յաւիտեան կայ, եւ դու զիա՞րդ ասես՝ թէ պարտ է բարձրանալ որդւոյ մարդոյ. ո՞վ է այն որդին մարդոյ: Ասէ ցնս̃ Յս̃. փոքր միւս եւս ժամանակ լոյս ընդ ձեզ է. գնացէք՝ մինչդեռ զլոյսն ունիք, զի մի՛ խաւար ձեզ հասցէ. զի որ գնայ ի խաւարի՝ ոչ գիտէ յո՛ երթայ: Մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք՝ հաւատացէք ի լոյսն, զի որդիք լուսոյ եղիջիք: Զայս խօսեցաւ Յս̃, եւ չոգաւ թագեաւ ի նոցանէ: Եւ այնչափ նշանս արարեալ էր առաջի նոցա. եւ նոքա ոչ հաւատային ի նա. զի լցցի

բանն Եսայեայ մարգարէի՝ զոր ասացն. Տէր ո՞ հաւատաց ի լուր մեր, և բազուկ Տ՟ն ո՞ւմ յայտնեցաւ: Վ՟ն այնորիկ ոչ կարէին հաւատալ, զի միւսանգամ ասէ Եսայի թէ՝ կուրացոյց զաչս ն՟ց. և ապշեցոյց զսիրտս ն՟ց. զի մի տեսցեն աչօք, և իմասցին սրտիւք, և դարձցին և բժշկեցից զն՟ս: Զայս ասաց Եսայի՝ զի ետես զփառս ն՟ր, և խօսեցաւ վ՟ն ն՟ր: Բայց սակայն և յիշխանաց անտի բազումք հաւատացին ի նա. այլ վասն փարիսեցւոցն ոչ յայտնէին, զի մի ի ժողովրդենէն ելանիցեն: Քանզի սիրեցին զփառս մարդկան առաւել քան զփառսն Աստուծոյ: 43:

Երէ. Ճառագայթեալ:

Քրզ. Խնդրեսցուք: Կեցո Ի՛ւ—: Աղ. Քում ամենազօր և հրաշալի տէրութեանդ:

ԿԱՐԳ ՄԵԾԻ ՀԻՆԳՇԱԲԱԹԻՆ

ԶԱՊԱՇԽԱՐՈՂՍՆ ԱՐՁԱԿԵԼՈՅ

ՅԵՐԵԿՆ

Յերրորդ ժամուն ժողովին է դասուն եկեղեցւոյն վասն արձակելոյ զապաշխարողսն: Բայց թէ լինի ապաշխարող եւ թէ ոչ՝ զերրորդն կատարել պարտ է:

Եւ նախ ասի. Օրհնեալ Հոգին: Սղմ. Ծ. Ողորմեա ինձ Ա՟Ծ. է Ի՛ւ—: Եւ ապա Օրհնեմք զքեզ: Մաղթանք. Յամ ժամու: Սրկ. Եւ եւս խաղաղ: Քհն. Օրհնութի և փառք:

Եւ ապա ասեն Սաղմոս է Ի՛ւ՝ փոխեղայս վեց:

Առաջին փոխեղայ: Սաղմոս ԻԴ:

Առ քեզ Տ՟ր համբարձի զանձն իմ. Ա՟Ծ իմ ի քեզ յուսացայ. մի ամաչեցից, և մի ծիծաղեսցին զինեւ թշնամիք իմ:

Ամենեքեան որք համբերեն քեզ՝ մի ամաչեսցեն. այլ ամաչեսցեն անօրէնք յունայնութե իւրեանց:

Զճանապարհս քո Տէր ցոյց ինձ. և զշաւիղս քո ուսո ինձ:

Առաջնորդեա ինձ ի ճշմարտութեան քում, և ուսո զիս. զի դու ես Աստուած փրկիչ իմ. և ես քեզ համբերեմ զօրհանապազ:

Յիշեա Տէր զգթութիւնս քո. և զողորմութիւնս որ ենն յաւիտենից:

Զմեղս մանկութեան և զանգիտութե իմոյ մի յիշեր. այլ յիշեա զիս Տէր ըստ ողորմութեան քում, վասն քաղցրութե քո. զի քաղցր և ուղիղ ես Տէր:

Վասն այսորիկ օրէնսդէտ առնես զմեղաւորս ի ճանապարհի. առաջնորդես հեզոց ի դատաստանի. և ուսուցանես հեզոց զճանապարհս քո:

Ամենայն ճանապարհք Տեառն ողորմութեամբ և ճշմարտութեամբ են այնոցիկ, որք խնդրեն զուխտս և զվկայութիւն նորա:

Վ՟ն անուան քո Տէր քաւեա զմեղս իմ, զի բազում եղեն. ո՞վ է մարդ որ երկնչի ի Տեառնէ. օրէնսդէտ առնէ զնա ի ճանապարհի՝ յոր և հաճեցաւ:

Անձն նորա ի բարութեան հանգիցէ. և զաւակ նորա ժառանգեսցէ զերկիր:

Զօրութիւն է Տէր երկիւղածաց իւրոց. և զկտակարանս իւր ուսուցանէ նոցա:

Աչք իմ յամենայն ժամ առ Տէր. և նա հանէ յորոգայթէ զոտս իմ:

Նայեաց առ իս և ողորմեա ինձ. զի միամօր և աղքատ եմ ես:

Նեղութիւնք սրտի իմոյ բազում եղեն յոյժ. և ի վշտաց իմոց հան զիս:

Տե՛ս զխոնարհութիւն իմ և զվաստակ իմ. և թող ինձ զամենայն մեղս իմ:

Տե՛ս զթշնամիս զի բազում եղեն. ատելութիւն զոր ի նանիր ատեցին զիս:

պահեա զանձն իմ, և փրկեա զիս․ և մի՛ յամօթ եղէց՝ զի յուսացայ ի քեզ։

Անբիծք և ուղիղք կցորդք եղեն ինձ․ և ես քեզ համբերի․ փրկեա Ա՟ծ զԻ՟էլ յա՟մ նեղութ՟նց նորա։

Սաղմոս ԻԵ։

Դա՛տ արա ինձ Տէր զի ես յամբծութեան իմում գնացի․ ի Տէր յուսացայ, մի՛ եղէց հիւանդ։

Փորձեա զիս Տէր և քննեա զիս․ փորձեա զերիկամունս իմ և զսիրտ իմ։

Ողորմութ՟ի քո Տէր առաջի աչաց իմոց, և հաճոյ եղէց ճշմարտութ՟ե քում։

Ոչ նստայց ես յաթոռս նանրաց․ և ընդ անօրէնս ես ոչ մտից։

Ատեցի ես զժողովս չարաց․ ընդ ամբարիշտս ես ոչ նստայց։

Լուացայց սրբութ՟բ զձեռս իմ․ և շուրջ եղէց զսեղանով քո Տէր։

Լսել ինձ զձայն օրհնութ՟ե քո․ և պատմել զամենայն սքանչելիս քո։

Տէր սիրեցի զվայելչութ՟ի տան քո․ և զտեղի յարկի փառաց քոց։

Մի՛ կորուսաներ ընդ ամբարիշտս զանձն իմ․ և մի՛ ընդ արս արիւնահեղս զկեանս իմ։

Որոց ձեռք յանօրէնութ՟ե են․ և աջ ն՟ց լի է կաշառօք։

Ես յամբծութեան իմում գնացի․ փրկեա զիս Տէր և ողորմեա ինձ։

Ոտն իմ կացցէ յուղղութեան․ յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ։

Սաղմոս ԻԶ։

Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց․ Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողացայց։

Ի մերձենալ առ իս չարաց ուտել զմարմին իմ. նեղիչք իմ և թշնամիք իմ՝ նոքա տկարացան և անկան։

Թէ պատրաստեսցի ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ. թէ յարիցէ ի վերայ իմ ճակատամարտ, սակայն և այսուիկ ի քեզ Տէր յուսացայ։

Զմի խնդրեցի ի Տեառնէ և զայն աղաչեմ, բնակել ինձ ի տան Տեառն զա՟մ աւուրս կենաց իմոց։

Տեսանել ինձ զվայելչութ՟ի Տեառն, և հրաման տալ ի տաճարի նորա։

Ծածկեաց զիս ի խորանի իւրում յաւուր չարի. ընդ յարկաւ արար զիս ի ծածկոյթ խորանի իւրում։

Ի վիմէ բարձր արարեր զիս. և այժմ բա՛րձր արա զգլուխ իմ ի վերայ թշնամեաց իմոց։

Շուրջ եղէց և մատուցից ի խորանի նորա պատարագ օրհնութ՟ե. օրհնեցից և սաղմոս ասացից Տեառն։

Լո՛ւր Տէր ձայնի իմում, զի կարդացի առ քեզ. ողորմեա ինձ և լո՛ւր ինձ. զի քեզ ասաց սիրտ իմ. և խնդրեցին երեսք իմ. զերեսս քո Տէր խնդրեցից։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. և մի՛ խոտորիր բարկութեամբ ի ծառայէ քումմէ։

Օգնական իմ լեր Տէր. մի՛ անարգեր զիս, և մի՛ թողուր զիս Աստուած փրկիչ իմ։

Հայր իմ և մայր իմ թողին զիս, և Տ՟ր ընկալաւ զիս։

Օրէնսդէ՛տ արա զիս Տէր ի ճանապարհի քում. և առաջնորդեա ինձ ի շաւիղս քո ուղիղս։

Վասն թշնամեաց իմոց մի՛ մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց։

Յարեան ի վերայ իմ վկայք մեղաց. և ստեցին ինձ յանօրէնութեան իւրեանց։

Հաւատացի տեսանել զբարութիւն Տեառն յերկրին կենդանեաց․ համբե՛ր Տեառն և քաջալերեա՛ց․ զօրասցի սիրտ քո, և համբե՛ր Տեառն։

Փառք Հօր։ Այժմ և միշտ։

Ն՟ւ եւս խաղաղութ՟ե։ Օրհնութ՟ի և փառք։

Երկրորդ ժամ–ճաշոյ։ Սաղմոս ԻԷ։

Առ քեզ Տէր կարդացի, Աստուած իմ մի լռեր յինէն. մի երբեք լռիցես յինէն. նմանիցիմ այնոցիկ որ իջանեն ի գուբ։

Լուր Տէր ձայնի խնդրուածոց իմոց՝ յաղաչել ինձ առ քեզ. ի համբառնալ ձեռաց իմոց ի տաճար սբ̃ քո։

Մի համարիր ընդ ամբարիշտս զանձն իմ. և մի ընդ այնոսիկ ոյք գործեն զանօրէնութի̃՝ կորուսաներ զիս։

Ոյք խօսէին զխաղաղութի̃ ընդ ընկերս իւրեանց. և չարութիւն է ի սիրտս նոցա։

Տուր նոցա Տէր ըստ գործս նոցա. ըստ անօրէնութե̃ գնացից նոցա հատո նոցա։

Ըստ գործոց ձեռաց նոցա հատո նոցա. զհատուցումն նոցա նոցին։

Ոչ իմացան նոքա զգործս Տն̃. և ոչ ի գործս ձեռաց նր̃ հայեցան. կործանեսցես զնս̃, և այլ մի շինեսցին։

Օրհնեալ է Տէր՝ զի լուաւ ձայնի աղօթից իմոց. Տէր օգնական իմ և պաշտպան իմ։

Ի նա յուսացաւ սիրտ իմ. օգնեցաւ և զուարճացաւ մարմին իմ. և ես կամօք իմովք խոստովան եղէց նմա։

Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ. ապաւէն փրկութեան օծելոյ իւրոյ։

Փրկեա զժողովուրդս քո. և օրհնեա զժառանգութիւնս քո. հովուեա և բարձրացո զնոսա մինչև յաւիտեան։

Սաղմոս ԻԸ։

Մատուցէք Տեառն՝ որդիք Այ̃. մատուցէք Տեառն զորդիս խոյոց։

Մատուցէք Տն̃ զփառս և զպատիւ. մատուցէք Տն̃ զփառս անուան նր̃. և երկիր պագէք Տն̃ ի սրահ սրբութե̃ նորա։

Ձայն Տն̃ ի վր̃ ջուրց՝ և Ած̃ փառաց որոտաց. և Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց։

Ձայն Տն̃ զօրութե̃ց, և ձայն Տն̃ մեծվայելչութե̃ց։

Ձայն Տն̃ փշրէ զմայրս. և մանրեսցէ Տէր զմայրսն Լիբանանու։

Մանրեսցէ զնս̃ ոք̃ զմատաղատունկսն Լիբանանու. որ սիրելին է ոք̃ զորդիս միեղջերուի։

Ձայն Տն̃ հատանէ զբոց ի հրոյ. ձայն Տն̃ շարժէ զանապատն. և խռովեցուցանէ Տէր զանապատն Կադէս։

Ձայն Տն̃ հաստատէ զեղջերուս. և յայտնի առնէ զանտառս։

Ի տաճարի նր̃ ամենեքեան ասասցեն փառս նմա։

Տէր զջրհեղեղս զնստուցանէ և ցածուցանէ. Թագաւորեսցէ Տէր յաւիտեան։

Տէր զօրութի̃ ժողովրդեան իւրում տացէ. և օրհնեսցէ զժողովուրդ իւր ի խաղաղութի̃։

Սաղմոս ԻԹ։

Բարձր առնեմ զքեզ Տէր, զի ընկալար զիս. և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս։

Տէր Ած̃ իմ կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս. Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ որք իջանեն ի գուբ։

Սաղմոս ասացէք Տն̃ սբ̃ք նր̃. խոստովան եղերուք յիշատակի սրբութե̃ նր̃։

Սրտմտութի̃ է ի բարկութեան նորա. և կեանք են ի կամաց նորա։

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք. առաւօտու եղիցի ուրախութի̃։

Ես ասացի ի բարեկենդանութեան իմում, թէ ոչ սասանեցայց յաւիտեան։

Տէր ի կամս քո ետուր գեղոյ իմոյ զօրութիւն. դարձուցեր զերեսս քո յինէն, և ես եղէ խռովեալ։

Ես առ քեզ Տէր կարդացի. առ Ածդ̃ իմ աղաղակեցի. զի՞նչ օգուտ է քեզ յարենէ իմմէ, թէ իջանեմ ես յապականութիւն։

Մի՛ թէ հո՞ղ խոստովան առնիցի առ քեզ. կամ պատմեսցէ զճշմարտութիւնս քո:

Լուաւ ինձ Տր̃ և ողորմեցաւ. և Տր̃ եղև ինձ օգնական:

Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն. զերծ յինէն զքուրձ. և ինձ զգեցոյց զուրախութի̃:

Ոպ̃ սաղմոս ասասցեն քեզ փառք իմ. և այլ մի՛ ևս զղջացայց. Տէր Աստուած իմ, յաւիտեան խոստովան եղէց քեզ:

Փառք Հօր և: Այժմ և միշտ:

Եւ ևս խաղաղութե̃: Օրհնութի̃ և փառք:

Երրորդ փոխ Բղայ: Սաղմոս Լ:

Ի քեզ Տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան. յարդարութե̃ քում փրկեա՛ զիս և ապրեցո՛ զիս:

Խոնարհեցո՛ առ իս զունկն քո. վաղվաղեա՛ կեցուցանել զիս.

Լե՛ր իմ Ած̃ պաշտպան և տուն ապաւինի՝ ապրեցուցանել զիս. զի հզօրիչ իմ և ապաւէն իմ ես դու:

Վս̃ անուան քո Տր̃ առաջնորդեսցես ինձ և սնուսցես զիս. և հանցես զիս յորոգայթէ յայսմանէ՝ որ թագուցաւ ինձ:

Դու ես պաշտպան իմ Տէր. և ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ:

Փրկեցեր զիս Տէր Ած̃ ճշմարտութբ̃ քով. ատեցեր զայնոսիկ որք պահեն զերկիւղ ի սնոտիս:

Ես ի Տէր յուսացայ. ցնծացայց և ուրախ եղէց ի փրկութե̃ քում:

Զի հայեցար ի խոնարհութի̃ իմ, և փրկեցեր ի վշտաց զանձն իմ. ոչ մատնեցեր զիս ի ձեռս նեղչաց իմոց. և կացուցեր յանդորրու զոտս իմ:

Ողորմեա՛ ինձ Տէր զի նեղեալ եմ ես. խռովեցաւ ի սրտմութե̃ ակն իմ, անձն իմ և փոր իմ:

Պակասեցան ի ցաւոց կեանք իմ. և ամք իմ յոգւոց ելանելոյ:

Աղքատացաւ ի տկարութե̃ զօրութի̃ իմ. և ոսկերք իմ խռովեցան:

Քան զա̃մ թշնամիս իմ եղէ ես նախատ դրացեաց իմոց յոյժ. ահ և երկիւղ ծանօթից իմոց:

Ամենեքեան ոյք տեսանէին զիս՝ արտաքս փախչէին յինէն:

Մոռացեալ եղէ ես ոպ̃ մեռեալ ի սրտէ. և եղէ ես ոպ̃ զանօթ կորուսեալ:

Զի լուայ ես զբամբասանս բազմաց, որք շուրջ էին զինև. ի ժողովել նց̃ ի միասին, առնուլ զանձն իմ խորհեցան. այլ ես ի քեզ Տէր յուսացայ:

Ասացի դու ես Ած̃ իմ. և ի ձեռս քո է ժառանգութի̃ իմ:

Փրկեա՛ զիս ի ձեռաց թշնամեաց իմոց. և ի հալածչաց իմոց:

Երևեցո՛ զերեսս քո ի ծառայս քո. ապրեցո՛ զիս Տէր ըստ ողորմութե̃ քում. Տր̃ մի՛ յամօթ եղէց՝ զի կարդացի առ քեզ:

Ամաչեսցեն ամբարիշտք և իջցեն ի դժոխս. համր եղիցին շրթունք նենգաւորք, ոյք խօսէին զարդարոյ զանիրաւութիւն յամբարտաւանել և յանգոսնել իւրեանց:

Որպէս զի բազում է ողորմութի̃ քաղցրութե̃ քո Տր̃, զոր պահեցեր երկիւղածաց քոց:

Արարեր դու այնոցիկ ոյք յուսացեալ են ի քեզ, առաջի որդւոց մարդկան:

Ամրացուսցես զնոսա ի ծածկոյթ երեսաց քոց, ի խռովութենէ մարդկան:

Ծածկեսցես զն̃ ի խորանի քում, ի հակառակութենէ լեզուաց:

Օրհնեալ է Տէր՝ զի սքանչելիս արար. զողորմութիւն իւր ի քաղաք ամուր:

Ես ասացի ի զարմանալ իմում. թէ ընկեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց:

Վ̃ն այսորիկ լուար ձայնի աղօթից իմոց. յաղաղակել իմում առ քեզ:

Սիրեցէք զՏէր ա̃մ սր̃ք ն̃ր. զի զստուգութ̃իս խնդրէ Տէր. և հատուցանէ այնոցիկ՝ որք առաւել առնեն զամբարտաւանութիւն:

Քաջալերեցարո՛ւք և զօրասցին սիրտք ձեր. ամենեքեան որք յուսացեալ էք ի Տէր:

Սաղմոս ԼԱ:

Երանի՛ ում թողութիւն եղեւ մեղաց. և ծածկեցան ամենայն յանցանք նորա:

Երանի՛ առն՝ որում ոչ համարի Տէր զմեղս նորա. և ոչ գոյ նենգութիւն ի բերան նորա:

Լռեցի ես, և մաշեցան ա̃մ ոսկերք իմ. առ աղաղակել ինձ առ Տէր զօրհանապազ՝ ի տուէ և ի գիշերի:

Ծանրացաւ ձեռն քո ի վերայ իմ. և դարձայ ի թշուառութիւն, զի հարան յիս փուշք:

Զմեղս իմ ցուցի քեզ. և զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցի ի քէն:

Ասացի, թէ պատմեցից ինձէն զմեղս իմ. և դու թողցես զա̃մ ամբարշտութ̃իս մեղաց իմոց:

Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ քեզ ամենայն սուրբք ի ժամ ընդունելի:

Բայց միայն ի ջուրցն հեղեղաց բազմաց, որ առ նոսա ինչ ոչ մերձեսցին:

Դու ես ապաւէն իմ ի նեղութենէ յայսմանէ որ շուրջ եղեւ զինեւ:

Ցնծութիւն իմ, փրկեա՛ զիս յայնցանէ որ պաշարեցին զիս:

Իմաստուն արարից զքեզ և խելամուտ ի ճանապարհի յոր և գնասցես. և հաստատեցից ի վ̃ր քո զաչս իմ:

Մի՛ լինիք որպէս զձի և զջորի, զի ոչ գոյ ի նոսա իմաստութ̃ի. ի սանձս և ի դանդանաւանդս ճմլեսցես զկզակս նոցա, որ առ քեզ ինչ ոչ մերձենան:

Բազում տանջանք են մեղաւորաց. բայց որք յուսան ի Տէր՝ ողորմութիւն Տ̃ն շուրջ եղիցի զնոքօք:

Ուրա՛խ լերուք և ցնծացէ՛ք արդարք. ի Տէր պարծեցարուք ամենեքեան որք ուղիղ էք սրտիւք:

Փառք Հօր և: Այժմ և միշտ:

Եւ եւս խաղաղութ̃ե: Օրհնութ̃ի և փառք:

Չորրորդ գոմբղայ: Սաղմոս ԼԶ:

Մի՛ նախանձիր ընդ չարս. և մի՛ ընդ այնոսիկ որք գործեն զանօրէնութիւն:

Զի որպէս խոտ վաղվաղակի ցամաքեսցին. որպէս զդալարի խոտոյ վաղվաղակի անցցեն:

Յուսա՛ ի Տէր և արա՛ զքաղցրութ̃ի. բնակեա՛ յերկրի, և հովուեսցիս ի մեծութեան նորա:

Ժտեա՛ ի Տեառնէ, և նա տացէ քեզ զխնդրուածս սրտի քո. յայտնեա՛ առաջի Տեառն զճանապարհս քո և յուսա՛ ի նա:

Նա արասցէ և հանցէ որպէս լոյս զարդարութիւն քո. զիրաւունս քո որպէս զօրհասարակ:

Հնազա՛նդ լեր Տեառն և ծառայեա՛ նմա. և մի՛ նախանձիր ընդ այնոսիկ՝ որոց անառակեալ իցեն ճանապարհք իւրեանց ընդ մարդոյ որ գործէ զանօրէնութ̃ի:

Լռեա՛ ի բարկութենէ և հանգի՛ր ի սրտմտութենէ. և մի՛ նախանձիր ընդ չարս:

Չարք վաղվաղակի սատակեսցին. բայց որք համբերեն Տեառն՝ նոքա ժառանգեսցեն զերկիր:

Փոքր մի և այլ ոչ եւս իցէ ամբարիշտն. խնդրեսցես զտեղի նորա և ոչ գտցես:

Այլ որ հեզքն են՝ նոքա ժառանգեսցեն զերկիր. և փափկասցին ի բազում խաղաղութեան իւրեանց:

Սպասէ մեղաւոր արդարոյ, և կրճտէ զատամունս իւր. այլ Տէր ծիծաղեսցի զնովաւ:

Քանզի յառաջագոյն տեսանէ, զի հասեալ է օր ն̃ր:

Սուր հանին մեղաւորք և լարեցին զաղեղունս իւրեանց,

հարկանել զաղքատն և զտնանկն. սպանանել զայն, որ խոնարհ է սրտիւ:

Զի սուրք ն՟ց մտցեն ի սիրտս ն՟ց, և աղեղունք նոցա փշրեսցին:

Լաւ է սակաւ ինչ արդարոյ՝ քան զբազում մեծութի՟ մեղաւորաց. և բազուկք ամբարտաւանից խորտակեսցին:

Հաստատէ Տէր զարդարն. և ճանաչէ զաւուրս ամբծից. ժառանգութի՟ ն՟ց յաւիտեան եղիցի:

Մի՛ ամաչեսցեն նոքա ի ժամանակս չարութե՟. այլ յաւուրս սովու յագեսցին:

Ահա մեղաւորք կորիցեն. այլ թշնամիք Տ՟ն ի փառաւորել և ի բարձրանալ իւրեանց պակասեսցին՝ ո՟պ ծուխ զի պակասէ:

Փոխ առնու մեղաւորն և ոչ հատուցանէ. այլ որ արդարն է՝ ողորմի և տայ:

Ոյք օրհնեն զՏէր՝ ժառանգեսցեն զերկիր. և ո՟յք անիծանեն՝ սատակեսցին ի նմանէ:

Ի Տ՟նէ ուղղին գնացք առն. և զճանապարհս ն՟ր նա կամի յոյժ:

Թէպէտ և գայթագղեսցի՝ նա մի՛ կործանեսցի. զի Տէր ձեռնկալու է ն՟ր:

Մանուկ էի ես և ծերացայ. և ոչ տեսի զարդար արհամարհեալ՝ և ոչ զզաւակ ն՟ր թէ մուրանայ հաց:

Զօրհանապազ ողորմի և տայ փոխ. զաւակ ն՟ր օրհնեալ եղիցի յաւիտեան:

Խոտորեա՛ ի չարէ և արա՛ զբարի. բնակեսցես յաւիտեանս յաւիտենից ի նմա:

Տէր սիրէ զիրաւունս, և ոչ ընդ վայր հարկանէ զս՟ր իւր. այլ յաւիտեան պահէ զն՟ս:

Անօրէնք հալածեսցին ի միասին. և զաւակք ամբարշտաց սատակեսցին:

Այլ արդարք ժառանգեսցեն զերկիր. բնակեսցեն յաւիտեանս յաւիտենից ի նմա:

Բերան արդարոյ խորհի զիմաստութի՟. և լեզու նորա խօսեսցի զիրաւունս:

Օրէնք Ա՟յ իւրոյ են ի սրտի իւրում. և մի՛ գայթագղեսցին գնացք նորա:

Հայի մեղաւոր ընդ արդար, և խնդրէ սպանանել զնա. այլ Տէր ոչ թողու զնա ի ձեռս ն՟ր. և ոչ դատապարտէ յորժամ դատի զնա:

Համբեր Տ՟ն և պահեա՛ զճանապարհս ն՟ր. և բարձր արասցէ զքեզ ի ժառանգել զերկիր. և զսատակումն մեղաւորաց տեսցես:

Տեսի զամբարիշտն վերացեալ բարձրացեալ որպէս զմայրսն Լիբանանու:

Անցի, և ահա ոչ էր. խնդրեցի, և ոչ գտաւ տեղի ն՟ր:

Պահեա՛ զամբծութի՟ և տե՛ս զուղղութի՟. զի գո՟ն մնացուածք առն խաղաղարարի:

Անօրէնք հալածեսցին ի միասին. և զաւակք ամբարշտաց կորիցեն:

Փրկութի՟ արդարոց ի Տ՟նէ է. վերակացու է ն՟ց ի ժամանակի նեղութե՟:

Օգնեսցէ ն՟ց Տ՟ր, և փրկեսցէ զն՟ս. ապրեցուսցէ ի մեղաւորաց և կեցուսցէ զնոսա, զի յուսացան ի նա:

Փառք Հօր և: Այժմ և միշտ:

Նու եւս խաղաղութե՟: Օրհնութի՟ և փառք:

Հինգերորդ քառեակս: Սաղմոս ԼԷ:

Տէր մի՛ սրտմտութ՟բ քով յանդիմաներ զիս. և մի՛ բարկութ՟բ քո խրատեր զիս:

Զի նետք քո հարան յիս. և յիս հաստատեցաւ ձեռն քո:

Ոչ գոյ բժշկութի՟ մարմնոյ իմոյ՝ յերեսաց բարկութեան քոյ:

Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց՝ յերեսաց մեղաց իմոց:

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ․ որպէս բեռն ծանր ծանրացան ի վերայ իմ։

Նեխեցան և փտեցան վէրք իմ՝ յերեսաց անզգամութեան իմոյ։

Տառապեցայ և խոնարհ եղէ յոյժ․ զօրհանապազ տրտում գնայի, զի անձն իմ լի եղեւ չարչարանօք․ և ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ։

Չարչարեցայ և խոնարհ եղէ մինչեւ յոյժ․ մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ։

Տէր առաջի քո են ամենայն ցանկութիւնք իմ․ և հեծութիւն իմ ի քէն ոչ ծածկեցաւ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս, և եթող զիս զօրութիւն իմ․ լոյս աչաց իմոց՝ և այս ոչ եղեւ ընդ իս։

Բարեկամք իմ և մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան և կացին․ և մերձաւորք իմ հեռի եղեն յինէն։

Բռնադատէին զիս և խնդրէին զանձն իմ՝ ոյք խորհէին չար ի վերայ իմ․ խօսեցան զանօրէնութիւն, և զնենգութիւն զօրհանապազ խորհեցան։

Այլ ես որպէս խուլ զի ոչ լսէ․ որպէս համր որ ոչ բանայ զբերան իւր։

Եղէ ես որպէս մարդ որ ոչ լսէ․ և ոչ գոն խօսք ի բերան նորա։

Ես ի քեզ Տէր յուսացայ․ և դու լուիցես ինձ Տէր Աստուած իմ։

Ասացի թէ մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ․ ի սասանել ոտից իմոց՝ ի վերայ իմ մեծամեծս խօսեցան։

Ես ի տանջանս պատրաստ եմ․ և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Զանօրէնութիւնս իմ պատմեցից․ և հոգացայց վասն մեղաց իմոց։

Իսկ արդ՝ թշնամիք իմ կենդանի են, և զօրացեալք են քան զիս․ և բազում էին ոյք ատէին զիս ի տարապարտուց։

Ոյք հատուցին ինչ չար փոխանակ ընդ բարւոյ, չարախօսէին զինէն, զի ես երթայի զհետ արդարութե՛։

Մի՛ թողուր զիս Տէր Ա՛ծ իմ, և մի ի բացեայ առնիր յինէն․ հայեա՛ց յօգնել ինչ Տէր փրկութե՛ իմոյ։

Սաղմոս ԼԸ։

Ասացի թէ պահեցից զճանապարհս իմ․ զի մի՛ մեղայց լեզուաւ իմով։

Եդի պահապան բերանոյ իմոյ՝ ի հակառակել մեղաւորին առաջի իմ։

Լուռ եղէ և խոնարհեցայ․ լռեցի ի բարութենէ․ և ցաւք իմ նորոգեցան յիս։

Ջեռաւ սիրտ իմ ի փորի իմում․ և ի խորհուրդս իմ վառեցաւ հուր։

Խօսեցայ լեզուաւ իմով և ասացի․ ցո՛յց ինձ Տէր զկատարած իմ, և զթիւ աւուրց իմոց՝ քանի՛ն է․ զի գիտացից թէ ո՛րչափ ինչ պակասեալ է յինէն։

Ահա չափով եդիր զաւուրս իմ, և կար զօրութեան իմոյ որպէս ոչինչ է առաջի իմ․ սակայն ամենեւին ընդունայն է ամենայն մարդ մնեղի։

Ապաքէն որպէս ի պատկերի շրջի մարդ, սակայն ի զուր խռովի․ գանձէ, և ոչ գիտէ ում ժողովէ։

Իսկ արդ ո՞վ է համբերութիւն իմ, թէ ոչ դու Տէր․ կամ կար զօրութեան իմոյ՝ թէ ոչ ի քէն է։

Յամենայն անօրէնութենէ իմմէ փրկեցեր զիս․ նախատինս անզգամաց արարեր զիս։

Լուռ եղէ և ոչ բացի զբերան իմ, զի դու արարեր։

Ի բա՛ց արա յինէն զտանջանս իմ․ զի ի զօրութենէ ձեռին քո ես պակասեցայ։

Կշտամբութեամբ վասն մեղաց խրատեցեր զմարդ․ մաշեցեր որպէս սարդի ոստայն զանձն նորա․ սակայն ընդունայն է ամենայն մարդ։

Լո՛ւր Տէր աղօթից իմոց․ ո՛ւնկն դիր խնդրուածոց իմոց․ արտասուաց իմոց մի՛ լռեր։

Պանդուխտ եմ ես առաջի քո. նժդեհ և անցաւոր՝ որպէս ամենայն հարքն իմ:

Թո՛յլ արա ինձ զի հանգեայց. մինչչեւ երթեալ իցեմ՝ ուստի ոչ գտանիցիմ:

Սաղմոս ԼԹ:

Համբերելով համբերի Տեառն. նայեցաւ առ իս, և լուաւ աղօթից իմոց:

Եհան զիս ի գբոյ տառապանաց. ի կաւոյ և ի տղմոյ:

Հաստատեաց ի վերայ վիմի զոտս իմ. և ուղղեաց զգնացս իմ:

Արկ ի բերան իմ օրհնութիւն նոր. զօրհնութիւն Տեառն Աստուծոյ մերոյ:

Տեսցեն բազումք և երկիցեն, և յուսասցին ի Տէր. երանեալ է այր՝ որոյ անուն Տեառն յոյս է նորա:

Ոչ հայեցաւ նա ի նանրութ̃ի. և ոչ ի մոլութ̃ի սուտ:

Բազում արարեր դու Տէր Աստուած իմ զսքանչելիս. խորհրդոց քոց ոչ ոք է որ նմանէ քեզ:

Պատմեցի և խօսեցայ, և բազում եղեն քան զթիւ. ընդ զոհս և ընդ պատարագս ոչ հաճեցար. մարմին հաստատեցեր ինձ. զողջակէզս և զվասն մեղացն ոչ խնդրեցեր:

Յայնժամ ասացի թէ ահաւասիկ գամ ես. ի գլուխս գրոց գրեալ է վասն իմ:

Առնել զկամս քո Աստուած իմ կամեցայ. և զօրէնս քո ի մէջ որովայնի իմոյ:

Աւետարանեցից զարդարութիս քո յեկեղեցիս մեծս. ահա զշրթունս իմ ոչ արգելից ի քէն:

Տէր դու գիտացեր՝ զի զարդարութ̃ի քո ոչ ծածկեցի ի սրտի իմում. զճշմարտութ̃ի քո և զփրկութ̃ի քո:

Ասացի և ոչ թագուցի զողորմութիւնս քո. և զճշմարտութիւնս քո ի ժողովրդենէ մեծէ:

Դու Տէր՝ մի՛ հեռի առներ զգթութ̃ի քո յինէն. զի ողորմութ̃ի և ճշմարտութ̃ի քո յա̃մ ժամ ընկալցին զիս:

Շուրջ եղեն զինեւ չարք՝ որոց ոչ գոյր թիւ. հասին ինձ անօրէնութիւնք իմ, և ես ոչ կարացի տեսանել:

Բազում եղեն քան զհեր գլխոյ իմոյ. և սիրտ իմ եթող զիս:

Կամեա՛ց Տր̃ փրկել զիս. և Տր̃ յօգնել ինձ նայեաց:

Ամաչեսցեն և յամօթ լիցին ոյք խնդրեն զանձն իմ՝ բառնալ զնա. դարձցին յետս և ամաչեսցեն՝ ոյք խորհէին ինձ չար:

Կրեսցեն զամօթ առժամայն վաղվաղակի՝ ոյք ասէին ինձ վա՜շ վա՜շ:

Ցնծասցեն և ուրախ լիցին ի քեզ՝ ամենեքեան որ խնդրեն զքեզ Տէր:

Ասասցեն յամենայն ժամ մեծ է Աստուած՝ ոյք սիրեն զփրկութիւն քո:

Ես աղքատ և տնանկ եմ. Աստուած խորհեա՛ զիս. օգնական և պաշտպան իմ ես. և դու Տէր իմ մի՛ յամենար:

Փառք Հօր և: Այժմ և միշտ:

Եւ եւս խաղաղութ̃ե: Օրհնութ̃ի և փառք:

Վեցերորդ ժամուն: Սաղմոս Խ:

Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն. յաւուր չարի փրկէ զնա Տէր:

Տէր փրկէ զնա և կեցուցանէ. երանելի առնէ զնա ի վերայ երկրի, և ոչ մատնէ զնա ի ձեռս թշնամեաց իւրոց:

Տէր օգնական է նմա ի մահիճս ցաւոց իւրոց. զա̃մ անկողինս նորա դարձուցանէ ի հիւանդութ̃է նորա:

Ես ասացի Տէր ողորմեա՛ ինձ. և բժշկեա՛ զանձն իմ. ես մեղայ քեզ:

Թշնամիք իմ ասացին ինձ չար. Ե՞րբ իցէ զի մեռցի, և կորիցէ անուն նորա:

Մտանէր տեսանել զնանրութիւն. խօսէր ի սրտի իւրում. ժողովէր զանօրէնութիւնս յանձն իւր:

Արտաքս ելանէր և զնոյն խօսէր. զնմէն շշնջէին ամենայն թշնամիք իմ:

Խորհեցան չար ի վերայ իմ. բան անօրէնութեան եդին ի վերայ իմ:

Մի՛ թէ որ ննջիցէն ոչ ևս յաւելուցու յառնել. քանզի և այրն խաղաղութեան իմոյ՝ յոր և ես յուսացայ:

Որ ուտէր ընդ իս հաց, յաճախեաց առնել ինձ խաբէութիւն:

Այլ դու Տէր ողորմեա՛ ինձ. կանգնեա՛ զիս, և հատուցից նոցա:

Յայսմ ծանեայց թէ հաճեցար ընդ իս. զի մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ:

Այլ զիս յամբծութեան իմում ընկալար. հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան:

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի յաւիտենից յաւիտենից. եղիցի եղիցի:

Սաղմոս ԽԱ:

Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց. այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ ԱԾ:

Ծարաւի է անձն իմ առ քեզ, ԱԾ հզօր և կենդանի. Ե՞րբ եկից երևեցայց երեսացդ ԱՅ:

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ և ի գիշերի. և այն զի ասէին ցիս զօրհանապազ՝ թէ ո՞ւր է Աստուած քո:

Զայս ոգ յիշէի՛ տառապէր յիս անձն իմ. քաջալերէի զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց տան ԱՅ:

Ի ձայն ցնծութեան խոստովանութեան. և ի ձայն բարեկենդանութեան:

Արդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ԱԾ, խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց ԱԾ է:

Անձն իմ յոյժ խռովեցաւ. վա՛ն այսորիկ յիշեցի զքեզ յերկրէն Յորդանանու, յԱհերմոնէ լեռնէ փոքուէ:

Խորք խորոց կարդացին առ քեզ՝ ի ձայն սահանաց քոց:

Ամենայն զբօսանք քո և ալիք քո անցին ի վե՛ր իմ:

Ի տուէ պատուիրեաց Տէր զողորմութիւն իւր. գիշերի զօրհնութիւն նոր. և աղօթք իմ առ Աստուած վասն կենաց իմոց:

Ասացի ԱՅ ընդունելի իմ ես. ընդէ՞ր մերժեցեր զիս. ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:

Ի փշրել ոսկերաց իմոց նախատեցին զիս թշնամիք իմ. յասել ցիս զօրհանապազ՝ թէ ո՞ւր է ԱԾ քո:

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ. կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ԱԾ, խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Սաղմոս ԽԲ:

Դատ արա ինձ ԱԾ. և իրաւ արա ինձ ի դատաստանի իմում:

Յազգէ որ ոչ է սուրբ. ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա՛ զիս:

Դու ԱԾ հզօրիչ իմ ես. ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:

Առաքեա՛ Տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ, հանցեն զիս ի լեառնսն և ի յարկս քո:

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ. առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, ԱԾ ԱԾ իմ:

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ. կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ԱԾ, խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց ԱԾ է:

Փառք Հօր: Այժմ և միշտ:

Եւ ևս խաղաղութեան: Օրհնութիւն և փառք:

Աղօթք Յովնանու մարգարէին: Բ. 3:

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի. և լուաւ ԱԾ յանդնդոց դժոխոց աղաղակի իմում:

Լուր Տէր ձայնի իմում, զի ընկեցեր զիս ի խորս ծովու. և շրջանք գետոց պաշարեցին զիս:

Ամենայն զբօսանք քո և ալիք քո անցին ի վր իմ. և ասացի, թէ մերժեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց:

Արդ իցէ թէ յաւելից հայել ի տաճար սբ. քո. զի հեղան զինեւ ջուրք մինչեւ յանձն իմ. և անդունդք անհնարինք պաշարեցին զիս:

Եմուտ գլուխ իմ ընդ փապարս լերանց. իջի ես ի խորս երկրի, և տեսի զնիգս նր՝ զի էին ոմ աղխք յաւիտենից. և ելցեն յապականութէ կեանք իմ:

Առ քեզ Տէր Ած իմ ի նուաղել անձին իմոյ կարդացի, և զքեզ Տէր յիշեցի. և մտցեն աղօթք իմ ի տաճար սբ. քո:

Զի ոյք պահէին զունայնութի և զստութիւն, յողորմութե իւրեանց մերժեցան:

Այլ ես ի ձայն օրհնութե խոստովան եղէց քեզ. մատուցից պատարագս Տն, և կատարեցից զուխտ իմ ի փրկութեան:

Փառք Հօր: Այժմ և միշտ:

Եւ է ձայնիւ անկէալ սխաանէն ողբոյոյն՝

Շարական Դկ. ՍՏ: Օրհուրեալ դողացամ. ամենամեղ անձն իմ. յահեղ քո դատաստանացն յաններելի տանջանացն: Երիցս կրկնեա:

Զկնի Նոյ եւս խաղաղութե: Օրհնութի և փառք:

Դարձեալ Աղօթ. Յովհաննու մարգարէին:

Ի նեղութե իմում ես առ Տէր կարդ: 279:

Շարական Դկ. ՍՏ: Քանզի կամաւ մերձեցայ ի մեղս մեծամեծս. արդ կամ եւ ձայնեմ ինձ աններելի պատուհասն: Երիցս կրկնեա:

Զկնի Նոյ եւս խաղաղութե: Օրհնութի և փառք:

Դարձեալ Աղօթ. Յովհաննու մարգարէին:

Ի նեղութե իմում ես առ Տէր կարդ: 279:

Շարական Դկ. ՍՏ: Որդ անկեալ աղաչեմ մ. փրկիչ եւ բարերար. խնայեա յիս ի մեղուցեալս. եւ ողորմեա ինձ բազմամեղիս: Երիցս կրկնեա:

Եւ ապա ասէն:

Տէր ամենակալ Աստուած Աբրահամու, Իսահակայ, Յակովբայ, և զաւակի նոցա արդարոց. * ամենակալ Տէր թող զմեղս իմ:

Որ արարեր զերկինս և զերկիր, և զամենայն զարդ նոցա. ամենակալ:

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քոյ. փակեցեր զխորս. կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով սրբով. ամենակալ:

Որ ամ ինչ սարսի և դողայ յերեսաց ահի զօրութեան քո. ամենակալ:

Անբաւ է մեծվայելչութիւն փառաց սրբութեան քոյ. և սաստիկ է բարկութիւն սպառնալեաց քոց ի վերայ մեղաւորաց. անչափ և անքնին են ողորմութիւնք աւետեաց քոց. ամենակալ:

Դու Տր բարձրեալ գթած երկայնամիտ բազումողորմ, և զղջանաս ի վերայ չարեաց մարդկան. ամենակալ:

Դու Աստուած ոչ եդիր ապաշխարութիւն վասն արդարոցն Աբրահամու, Իսահակայ և Յակովբայ, որք ոչ մեղան քեզ. ամենակալ:

Այլ եդիր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս. զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, և բազմացան անօրէնութիւնք իմ. ամենակալ:

Չեմ արժանի հայել և տեսանել զբարձրութիւնս երկնից ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. ամենակալ Տէր:

Կորացեալ եմ ես ի բռնութէ կապանաց երկաթից, և ոչ գոյ ինձ հանգիստ. ամենակալ:

Բարկացուցի զքրտմութի, և չար առաջի քո արարի. կանգնեցի պատկեր և բազմացուցի զցասումն. ամենա:

Եւ արդ Տէր, խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ. և հայցեմ ի քաղցրութենէ քումմէ.* ամենակալ Տէր թող զմեղս իմ.

Մեղայ Տէր, մեղայ. և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենակալ:

Աղաչեմ և խնդրեմ ի քէն՝ թո՛ղ ինձ Տէր, թո՛ղ ինձ. և մի՛ կորուսաներ զիս ըստ անօրէնութե իմոյ. ամենա:

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ Տէր. և մի՛ յիշեր զչարիսն իմ. և մի՛ պարտաւորեր զիս ընդ իջեալսն ի ներքոյ երկրի չարեօք. ամենակալ:

Զի դու Աստուած, Աստուած ապաշխարողաց ես. և յիս ցո՛յց զբարերարութիւն քո, որ անարժան եմ. ամենակալ:

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութեան քում. և ես օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց. ամենակալ:

Զքեզ Տէր օրհնեն ամ զօրութիւնք երկնից. և քո են փառք յաւիտեանս. ամէն:

Շարական Դկ. ՍՏ: Ա՛մենակա՛լ. քաւեա՛ զմե՛ղս ի՛մ. զի Ած ես ապաշխարողաց: Երիցս կրկնել:

Ապա դարձեալ ասէ.

Տէր ամենակալ Ած Աբրահամու: 281:

Շարական Դկ. ՍՏ: Եւ զհո՛գի՛դ սուրբ. մի՛ հանե՛ր յինէն. զի Ած ես ապաշխարողաց: Երիցս կրկնել:

Եւ դարձեալ ասէ.

Տէր ամենակալ Ած Աբրահամու: 281:

Փառք Հօր և: Այժմ և միշտ:

Աղաչեմ և խնդրեմ ի քէն Տէր. թո՛ղ ինձ զմեղս իմ:

Բազումողորմ Տէր, ողորմեաց ինձ:

Աստուած, քաւեա՛ զիս զմեղաւորս:

Արարիչ իմ և յոյս Ած, գթա՛ յիս ի մեղուցեալ ծառայս, և ողորմեա՛ ինձ բազմամեղիս:

Ամենօրհնեալ սրբուհի և միշտ կոյս Ածածին Մարիամ. բարեխօսեա՛ առ Տէր վն իմ մեղաւորիս:

Ամենայն սրբք Այ, բարեխօսեցէք առ Հայր ի յերկինս վն մեր մեղաւորացս:

Քն Որդի Այ անոխակալ, ընկա՛լ զաղաչանս մեր. զի ի քեզ են ապաւինեալ անձինք մեր:

Յաղթող զօրութբ նը և կենդանարար և պատուական խաչի քո Տէր պահպանեա՛ զմեզ:

Առաքեա՛ Տէր զհրեշտակ խաղաղութե քո, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռով ի տուէ և ի գիշերի:

Եւ մարդասիրութեամբ քով յիշեա՛ զմեզ Տէր. յիշեա՛ զմեզ յորժամ գաս արքայութեամբ քով. և ողորմեա՛ց մեզ:

Շարական Դկ. ՍՏ: Ո՛ւ փրկեա՛ զիս. յա՛հագի՛ն հրո՛յն. զի Ած ես ապաշխարողաց: Երիցս կրկնել:

Զկնի՝ Քարոզ:

Նկեալքս ի խոստովանութի ապաշխարութե՝ հաւատով զլոյս միածնի Որդւոյն Ած դիցուք ի սիրտս մեր, խնդրելով ի նմանէ զքաւութի և զթողութի յանցանաց մերոց: Վասն զի նա ինքն է նախախնամողն Ած յաւիտենական, որ եկն կամաւ Հօր ի փրկել զարարածս. և ասաց զինքն լինել քաւիչ մեղաւորաց, յոյս ապաշխարողաց, շնորհելով հանդիստ աշխատելոց, ընդունելով զծանրաբեռնեալքս և զտաժանեալքս մեղօք յապաշխարութի քաւութե: Արդ՝ եկա՛յք ամենեքեան՝ խոնարհեալ անձամբ, բեկեալ սրտիւք, անկցուք և լացցուք առաջի Տեառն արարչին մերոյ, զի անցուսցէ ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութբն իւրով: Ամենակալ Տէր Ած մեր կեցո՛ և ողորմեա՛:

Աղօթք:

Տէր Ած փրկութե մերոյ, որ ողորմած ես և գթած, երկայնամիտ, բազումողորմ, և զղջանաս ի վը չարեաց

մարդկան. որ ոչ կամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալ նր ի չար ճանապարհէն և զկեալն: Դու Տէր առատ մարդասիրութբդ քով մխիթարեա զծառայքս քո, և տուր սոցա տեղի ապաշխարութն. հաշտեա մարդասիրութբ քո, և արա զսոսա անդամս եկեղեցւոյ քում սբյ: Ո՟ զի առողջացեալք հոգւով, խոստովանութբ և ապաշխարութբ մտցեն յեկեղեցի քո սբ. և ընդ ժողովրդեան քում քեզ հանցեն զօրհնութի և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սբյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ապա ասեն ողորմեայն Սաղմոսն Ծ. է լման:

կց. Ցօղեա յիս մշտկաւ և սբ եղէց. լուա և քան զձիւն սպիտակ եղէց:

փխ. Ողորմեա ինձ Աճ ըստ մեծի ողորմութե քում. ըստ բազում գթութե քում քաւեա զանօրէնութիս իմ:

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. և ի մեղաց իմոց սուրբ արա զիս:

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ:

Քեզ միայն մեղայ Տէր. և զչար առաջի քո արարի:

Որպէս արդար եղիցիս ի բանս քո. և յաղթեսցես ի դատել քո:

Անօրէնութբ յղացաւ. և ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու Տր զճշմարտութի սիրեցեր. զանյայտս և զծածկեալս իմաստութբ քով յայտնեցեր ինձ:

Ցօղեա յիս մշտկաւ, և սբ եղէց. լուա, և քան զձիւն սպիտակ եղէց:

Լսելի արա ինձ Տէր զցնծութի և զուրախութի. և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:

Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց. և զամ անօրէնութիս իմ քաւեա յինէն:

Սիրտ սուրբ հաստատեա յիս Աճ. և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում:

Մի ընկենուր զիս Տէր յերեսաց քոց. և զՀոգի քո սբ մի հաներ յինէն:

Տուր ինձ զցնծութի փրկութե. և հոգւով պետութե քո հաստատեա զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամպարիշտք առ քեզ դարձցին:

Փրկեա զիս յարենէ Աճ, Աճ փրկութե իմոյ. և ցնծասցէ լեզու իմ յարդարութե քում:

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիս քո:

Թէ կամեցեալ էիր պատարագս՝ մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

Պատարագ Այ հոգի խոնարհ. զսիրտ սբ և զհոգի խոնարհ Աճ ոչ արհամարհէ:

Բարի արա Տէր կամօք քովք Սիովնի. և շինեսցին պարիսպքն Երուսաղէմի:

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութե. ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս:

ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ: կ. 21:

Եւ կատարեսցին աւուրք սգոյ քոյ: Եւ ժողովուրդ քո ամենեւին արդար, և յաւիտեան ժառանգեսցեն զերկիր. պահել զնորատունկ գործոց ձեռաց իւրեանց ի փառս: Սակաւաւորն հազարաւոր եղիցի, և կրտսերն յազգ մեծ. զի ես Տէր ընդ ժամանակս ժամանակս ժողովեցից զնոսա: 22:

ընթերցուածս յԵզեկիէլէ մարգարէէ: Լզ. 24:

Այսպէս ասէ Տէր. և առից զձեզ ի հեթանոսաց, և ժողովեցից զձեզ յամենայն ազգաց. և տարայց զձեզ յերկիրն ձեր: Եւ ցանեցից ի վերայ ձեր ջուր սբ. և սրբեսջիք յամ պղծութեց ձերոց, և յամ կռոց ձերոց սրբեցից զձեզ: Եւ տաց ձեզ սիրտ նոր, և ոգի նոր նորոգեցից ի ձեզ. և հանից զսիրտն քարեղէն ի

մարմնոց ձերոց, և տաց ձեզ սիրտ մարմնեղէն: Եւ զոգի իմ տաց ձեզ. և արարից զի յարդարութիւնս իմ գնայցէք, և զիրաւունս իմ պահիցէք և առնիցէք զնս: Եւ բնակիցէք յերկրին զոր ետու հարցն ձերոց. և եղիջիք ինձ ի ժողովուրդ, և ես եղէց ձեզ յԱԾ: Եւ զերծուցից զձեզ յամենայն պղծութեանց ձերոց. կոչեցից զցորեան, և բազմացուցից զնա. և ոչ ածից ի վերայ ձեր սով: Եւ բազմացուցից զպտուղ ծառոց և զարդիւնս անդոց. զի մի եւս ընդունիցիք զնախատինս սովու ի մէջ ազգաց: Եւ յիշեսջիք զճանապարհս ձեր չարս և զգնացս ձեր զանբարիս. և տաղտկասջիք յերեսաց անօրէնութնց ձերոց և ի գարշելեացն ձերոց: 31:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս: Ժ. 19:

Ունիմք այսուհետեւ եղբարք՝ համարձակութիւն ի մուտս սրբութեանցն արեամբն Յիսուսի. զոր նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ և կենդանի ի ձեռն վարագուրին, այսինքն է՝ մարմնոյ իւրոյ. և քահանայ մեծ ի վերայ տանն Աստուծոյ. մատիցուք ճշմարիտ սրտիւք, լրութեամբ հաւատոց, լուացեալ զսիրտս ի խղճէ չարեաց, և մկրտեալ զմարմին ի ջուրն սրբութեան: Պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն. զի հաւատարիմ է որ խոստացաւն: Եւ զգուշասցուք միմեանց յորդորմամբք սիրոյ և գործոց բարեաց. և մի թողցուք զժողովս միմեանց, ոպ և սովոր են ոմանք. այլ մխիթարեսցուք, և այնչափ եւս առաւել՝ որչափ տեսանիցէք զօրն մերձեալ: Զի կամակար մոք եթէ յանցանիցեմք յետ ընդունելուն գիտուն ճշմարտութն՝ այնուհետեւ ոչ եւս պիտոյ է վն մեղաց պատարագ, այլ ահեղ ակնկալութիւն դատաստանին և նախանձ հրոյն՝ որ ուտիցէ զհակառակորդսն: Արհամարհեալ ուրուք զօրէնսն Մովսէսի՝ առանց ողորմութնց առ եր-

կուք կամ երիւք վկայիւք մեռանէր: Իսկ ո՞րչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն, որ զՈրդին ԱՅ առ ոտն եհար, և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ՝ որով և սրբեցաւն. և զհոգին շնորհաց թշնամանեաց: Այլ գիտեմք զայն որ ասացն. Իմ են վրէժխնդրութիւնք, և ես հատուցից, ասէ Տէր. և դարձեալ թէ՝ Դատի Տէր զժողովուրդ իւր: Ահ մեծ է անկանել ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ: 31:

Ալէլու-իա Սաղմոս ԽԱ. է ըստ ...:

Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց. այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ Աստուած:

Ծարաւի է անձն իմ առ քեզ, Աստուած հզօր և կենդանի. երբ եկից երեւեցայց երեսացդ ԱՅ:

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ և ի գիշերի. այն զի ասէին ցիս զօրհանապազ՝ թէ ո՞ւր է Աստուած քո:

Զայս որպէս յիշէի՝ տառապէր յիս անձն իմ. քաջալերէի զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց տան ԱՅ:

Ի ձայն ցնծութն խոստովանութն. և ի ձայն բարեկենդանութեան:

Արդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ. կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ԱԾ. խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Անձն իմ յոյժ խռովեցաւ. վն այսորիկ յիշեցի զքեզ յերկրէն Յորդանանու, յԱհերմոնէ լեռնէ փոքուէ:

Խորք խորոց կարդացին առ քեզ ի ձայն սահանաց քոց:

Ամենայն զբօսանք քո, և ալիք քո անցին ի վր իմ:

Ի տուէ պատուիրեաց Տէր զողորմութի իւր. գիշերի զօրհնութի նոր. և աղօթք իմ առ ԱԾ վն կենաց իմոց:

Ասացի ԱՅ՝ ընդունելի իմ ես. ընդէ՞ր մերժեցեր զիս. ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:

Ի փշրել ոսկերաց իմոց նախատեցին զիս թշնամիք իմ. յասել ցիս զօրհանապազ թէ ո՞ւր է ԱԾ քո:

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ. կամ ընդէ՞ր խռո-
վես զիս. յուսա՛ առ Աստուած. խոստովանեա՛ նմա.
փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Ձնէ՝ Ո՛րթիւ:

Աւետարան ըստ Ղուկասու: Է. 36:

Զտէրն մեր Յիսուս Քրիստոս

Աղաչէր ոմն ի փարիսեցւոցն՝ զի կերիցէ ճաշ ընդ նմա. և մտեալ ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ: Եւ կին մի էր ի քաղաքին մեղաւոր. իբրև գիտաց թէ բազմեալ է ի տան փարիսեցւոյն՝ բերեալ շիշ մի իւղոյ ազնուի՝ կայր յետոյ առ ոտս նր՟, լայր, և արտասուօքն սկսաւ թանալ զոտս նր՟, և հերով գլխոյ իւրոյ ջնջէր, և համբուրէր զոտս նր՟ և օծանէր իւղովն: Եւ տեսեալ փարիսեցւոյն որ կոչեացն զնա՝ ասէր ընդ միտս իւր. սա թէ մարգարէ ոք էր, ապա գիտէր թէ ո՛վ և որպիսի՛ ոք կին մերձենայ ի սա. զի մեղաւոր է: Պատասխանի ետ Յս՟ և ասէ ցնա. Սիմովն, ունիմ ինչ ասել քեզ. և նա ասէ. ասա՛ վարդապետ: Եւ ասէ. երկու պարտապանք էին ուրումն փոխատուի. միոյն պարտէր հինգ հարիւր դահեկան, և միւսն յիսուն: Եւ իբրև ոչ գոյր նց՟ հատուցանել՝ երկոցունցն շնորհեաց. արդ ասա՛, ո՞վ առաւել սիրեսցէ զնա: Ասէ Սիմովն. ինձ այսպէս թուի՝ եթէ որում զբազումն շնորհեաց. և նա ասէ ցնա. ուղիղ դատեցար: Եւ դարձեալ ի կինն կողմն՝ ասէ ցՍիմովն. տեսանե՞ս զայս կին. մտի ի տուն քո՝ ջուր ոտից իմոց ոչ ետուր, իսկ սա արտասուօք իւրովք եթաց զոտս իմ, և հերով իւրով ջնջեաց: Համբոյր մի դու ոչ ետուր ինձ, սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ՝ ոչ դադարեաց ի համբուրելոյ զոտս իմ: Իւղով զգլուխ իմ ոչ օծեր, սա իւղով անուշիւ օծ: Վն՟ որոյ ասեմ քեզ. թողեալ լիցին սմա մեղք իւր բազում, զի յոյժ սիրեաց. զի որում շատ թողուցու՝ շատ սիրէ, և որում սակաւ՝ սակաւ: Եւ ասէ ցնա. թողեալ լիցին

քեզ մեղք քո: Եւ սկսան՝ որ բազմեալն էին ընդ նմա՝ ասել ընդ միտս իւրեանց. ո՞վ է սա՝ որ զմեղս թողու: Եւ նա ասէ ցկինն. հաւատք քո կեցուցին զքեզ. երթ ի խաղաղութիւն: 50:

Ապա սարկաւագն քարոզէ:

Եւ եւս խաղաղութն՟ զՏէր աղաչեսցուք:

Լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց: Ամենակալ Տր՟ Աստուած մեր կեցո՛ և ողորմեա՛:

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Եւ ապա կարդան զաղօթս զոր ասացեալ է Սրբոյն Բարսղէ Կեսարու հայրապետին ի վերայ ապաշխարողաց:

Տէր Ած՟ Հայր ամենակալ արարիչ երկնի և երկրի, որ յակնարկել բարերար կամաց քոց գոյացուցեր զամ՟ արարածս, զերեւելիս և զաներեւոյթս, զերկնայինս և զերկրայինս. և նախախնամութբ՟ քով ստեղծեր զմարդն ի հողոյ. և ըստ պատկերի բարերարութեդ՟ պատուով մեծարեցեր զնա. շնորհելով նմա զանմահութի՟ և զանապականութն՟ զկենդանութիւն. ինքնիշխան կամօք և փառօք զարդարեալ պսակեցեր զնա, պարգեւելով նմա զվայելումն ուրախութն՟ դրախտին փափկութն՟, գործել զնա և պահել, և հանապազ մշտնջենաւորիլ յանձառ պարգեւսն, և յառաջանալ օր ըստ օրէ ի գործս բարիս. և յաւելեր նմա զպատուիրանադրութի՟ կենսաբեր հրամանի բարերար կամաց քոց. զի յաւելուածով պատուիրանադրութն՟՝ առաւել յաւելուածով մեծի փառաց՝ և պատուոյ զնա ճոխացուցանէիր. և ի ձեռն բարեյօժար կամաց հնազանդութն՟ եւս առաւել ի գերակատար կեանս զնա փոխէիր յիմանալի կայանս բնակութեան վերինն Երուսաղէմի:

Իսկ նա ի ձեռն օձապատիր չարին խաբէութն՟ զգործի կենացն և զպատճառս բարեացն անձնիշխանութբն՟ ի կողմն բանսարկուին դարձուցեալ, և ինքնայօժար

կամօք գործակցեալ խաբէութ՟ն չարին, ի բաց մերժե-
ցաւ ի քումմէ արարչագիր և կենսաբեր պատուիրա-
նագրութ՟ն։ և ի ներքոյ անկեալ չարին հնազանդու-
թ՟ն, նախամեծար առնելով զվրիպական բանս պատրող
թշնամւոյն քան զքո ածագիր օրէնսդրութիւն, կնոջն
լսելով խրատու, կորոյս զտիրական վեհ իմաստութիւն՝
ոտից հնազանդեալ գլխոյն առաջնորդական տէրու-
թեան, անհանճարաբար և անխորհրդապէս ի բաց
մերկացաւ զլոյսաճաճանչ լուսեղէն զարդարանսն։ Եւ
հակառակաբար հայթայթանօք ջանայր ծածկել զա-
մօթալիր մերկութիւնն պատառատուն տերևովն՝ ան-
յուսացեալ ի զօրութ՟ն ամենակալիդ. կարծէր թաքչել
յամենատես գիտութ՟ն ածութ՟ն քո՝ պատճառելով
զպատճառս մեղաց, եթէ կինս զոր ետուր ինձ՝ սա ե-
ղեւ ինձ պատճառ։ Վ՟ն որոյ զցաւոցն և զանիծիցն ժա-
ռանգեաց զկեանս, ի ներքոյ անկեալ մահու և ապա-
կանութեան, ըստ անսուտ ածային հրամանիդ, ասելով՝
եթէ Յաւուր յորում ուտիցէք՝ մահու մեռանիցիք. ո-
րով թագաւորեալ տիրեաց ի վերայ մեր իշխանն մա-
հու, և զբնութիւնս մեր գրաւեալ ինքեան հնազան-
դութեամբ պահակն կորստեան, և զամենեսեան ծա-
ռայս իւր արարեալ, վարէր ի գործս խիստս ծառայու-
թեան դժոխոց։

Իսկ դու Հայր բազմագութ և բարերար, յառատ և
անբաւ մարդասիրութենէ քումմէ յաղթեալ՝ ոչ հան-
դուրժեցեր տեսանելով զանարատ ձեռին քո ստեղ-
ծուածն յայնպիսի վտանգաւոր աղէտս տարակուսա-
նաց։ ԱՅԼ բարեգործեալ հայրական խնամով սիրոյ
քոյ գթացար յորդիս մարդկան, և այցելու լեալ կո-
րուսելոյն՝ առաքեցեր ի խնդիր զմիածին և զէակից
Հօր զծոցածին և զանբաժանելի Բանն Ա՟ծ, որ եկն և
էառ զկերպարանս գձձութեան աղքատացեալ բնութ՟ես
մերոյ, ներմարդացեալ ի ն՟բ և յանարատ կուսէն Մա-

րիամայ Աստուածածնէն, և յանձն էառ զյանցանս
սխալման մեղացն Ադամայ. և ածախնամ տեսչութ՟բն
իւրով տնօրինեալ զամենայն կիրս մարդկայինս յանձին
իւրում՝ բաց ի մեղաց, եղև պտուղ մարդկութ՟ես։ Հա-
վիւն երկնաւոր եկն խնդրել զոչխարն մոլորեալ ի վ՟ր
լերինն բարձու. և առեալ եդ զնա ի վ՟ր կենսաբեր
ուսոց իւրոց, դարձուցանելով ի հայրենի բնակութ՟ին,
ուստի արտաքսեցաւն տարագրութեամբ. և զանիծից
և զցաւոց եղյծ զդատապարտութ՟ի իւրով պատժական
և անպարտական մահուամբն։ Եւ զանկեալն ի ձեռս
աւազակացն վերստին ողջացոյց պատելով զվէրս ն՟ր.
արկանել ի վ՟ր նորա ձէթ և գինի, և աւանդելով ի
պանդոկիս ամէնընկալ կաթուղիկէ եկեղեցւոյ. ուր ժո-
ղովէ զամ՟ ցրուեալսն և զկեղեքեալսն, և միաւորէ
յորդէգրութ՟ի ժառանգութ՟ն Հօրդ երկնաւորի. և
հաշտարար և մեղսաքաւիչ իւրով պատարագաւն որ
ի վ՟ր խաչին՝ բոլորապտուղ զէնքն քեզ ընծայեցոյց
ընդ մեր. և վ՟ն մերոյ պարտեաց զանձն իւր փոխանա-
կելով։ Եւ դարձեալ վերստին ստացաւ զմեզ ն՟բ ա-
րեամբն իւրով, և ազատեաց ի ծառայութ՟է բանսար-
կուին, պատառելով զմուրհակ դատապարտութեան
յանցանաց մերոց, որ կայր մեզ հակառակ. եբարձ
զայն ի միջոյ և բեւեռեաց ընդ խաչափայտին. մերկեաց
զիշխանութ՟իս և զպետութ՟իս մեքենաւոր զօրութ՟ն ն՟ր.
յայտ յանդիման խայտառակեալ նշաւակեաց զնա յան-
ձին իւրում զօրութեամբ ածութ՟բ իւրով։ Եւ իշխա-
նական պետութ՟բ իջեալ ի ստորին սանդարամետս դժո-
խոց, աղարտելով զզօրութ՟ի բռնութ՟ն կարծեալ իշխա-
նին աշխարհի, որ բարձրացեալ և լեռնացեալ ամբար-
տաւանութ՟բ ունէր գրաւեալ ընդ իւրեւ զբնութիւնս
մարդկութ՟ես. որով ժամանեալ եհաս թագաւորն
բարձանց, հզօրն ի պատերազմի, և ել ի բարձրութ՟իս
հպարտացելոյն. և կապեաց զհսկայն՝ աւերելով զա-

մուրս նր̃, և յափշտակեաց զզանձն նր̃. և դարձեալ եմուծ զարքունական պատկերն ի դրախտն ուստի եհան, զեօթնեկին շնորհսն տալով՝ զոր կորոյսն եօթնեակ յանցանօք: Քանզի շինեաց իմաստութիւնն Հօր տուն զխորանն Դաւթի, զանկեալն և զկործանեալն վերստին նորոգեաց, վս̃ լինելոյ նորա ծաղիկ յարմատոյն Յեսսեայ. և հանգեաւ ի նա Հոգի սբ̃, որ ի մեզ խորհրդածի, Հոգի իմաստութե̃ և հանճարոյ. Հոգի գիտութե̃ և ա̃ծպաշտուե̃. և լցեալ եղեւ Հոգւով երկիւղի իմաստութե̃: Վս̃ զի ուր երկիւղ Տե̃ն է՝ անդ պատուիրանաց պահպանութի. և ուր պատուիրանաց պահպանութի՝ անդ և ոչ ինչ յանցանք: Քանզի զյանցանս մեր էառ, և զցաւս մեր եբարձ. և զքեզ միայն ծանոյց մեզ հաւաստեաւ Ա̃ծ կենդանեաց և մեռելոց, առնելով խաղաղութի արեամբ խաչին իւրոյ որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի ի նոյն: Եւ միջնորդական սբ̃ արեամբն իւրով հաշտեցոյց զկամս քաղցրութե̃ սիրոյ քո առ արարածս: Քանզի բարձաւ միջնորմն և լուծաւ կրճիմն, որ կայր խափան և արգել մերոյ փրկութե̃. և տեղի տուեալ սրովբէից շուրջանակաւ բոցեղէն սրովն, որ պահէր զճանապարհս ծառոյն կենաց. վս̃ զի ընդ մեզ եղաւ ճանապարհ և ճշմարտութի և կեանք Յս̃. որ առաջնորդեաց մեզ ընդ երկնաչու պողոտայն փրկաւէտ կենացն. և անցոյց ի վեր ընդ դրունս երկնից. և նստոյց դեր ի վերոյ իշխանութե̃ց և պետութե̃ց: Եւ խրախոյս տուեալ հաւատացելոց՝ ասէ. Քաջալերեցարո՛ւք զի ես յաղթեցի աշխարհի. և Ետու ձեզ իշխանութի կոխել զօձս և զկարիճս և զա̃մ զօրութի թշնամւոյն: Առ որս և ասել մեզ համարձակապէս՝ թէ Ո՞ւր է մահ յաղթութի քո. ո՞ւր է դժոխք խայթոցք քո. քանզի եղաք փրկեալք և ազատեալք արեամբ միածնի Որդւոյ քո Յս̃ի Քս̃ի Տեառն մերոյ, ընդ որում քեզ Հօր և Հոգւոյդ սբ̃յ վայելէ փառք, իշխ:

Խաղաղութի ամենեցուն:

Աստուծոյ երկրպագեսցուք:

Եւ արդ՝ Տէր Ա̃ծ մեր բարերար և բազմագութ, որ այսպիսի անճառ և անպատում բարեաց հաղորդս զազգս մարդկան արարեր. որով մեծարեցեր զմեզ ի ձեռն միածնի քոյ տնօրէնութեան. որ եկեալ կատարեաց զա̃մ գրեալս օրինաց և մարգարէից և քաղցրուսոյց վարդապետութբ̃ իւրով ժողովեաց զցրուեալ ազգս մարդկան. և միացուցեալ միաւորեաց զամենեսեան միաբան սիրով ի մի հաւատս և ի մի յոյս կոչման քում արարչական խնամոց գթութե̃ցդ. և հորդեաց ճանապարհ փրկուե̃ ա̃մ տիեզերաց, պարգեւելով զառհաւատչեայ կենդանութի Հոգւոյդ սբ̃յ Նորածնելոց նոր ժողովրդոց որդւոց առագաստի. կազմելով դեղ և սպեղանիս ապաշխարութե̃՝ իւրով առատ ողորմութբ̃ն և մարդասիրութբ̃ն, ասելով՝ եթէ Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութի. և դարձեալ՝ թէ Եկա՛յք առ իս ա̃մ աշխատեալք և որք ունիք բեռինս ծանունս մեղաց, և ես հանգուցից զձեզ: Եւ յորդորական ա̃ծախօս ձայնիւն յորդորեալ քաջալերեաց զամենեսեան ի հնազանդութի ա̃ծային լծոյ ծառայութե̃, ասելով՝ եթէ Առէք զլուծ իմ ի ձեզ, և ուսարո՛ւք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է և բեռն իմ փոքրոգի:

Եւ արդ մեք ծառայքս քո և ժողովուրդ, խաշն արօտի քո, գինք արեան միածնի Որդւոյ քո՝ ժողովեալք ի գաւիթ սբ̃յ եկեղեցւոյ քո, և խոնարհեալ աղաչեմք զբազմագութ և զառատ մարդասիրութի քո, և հայցեմք ի քաղցրութե̃ քումմէ զքաւութի և զթողութի մեղաց մերոց: Խոնարհեցո՛ Տէր զունկն քո և լո՛ւր աղաչանաց մերոց. և գթութբ̃ ողորմութե̃ քո թո՛ղ մեզ զյանցանս մեր զկամայ և զակամայ. և արա՛ զմեզ որ-

դիս լուսոյ և որդիս տուընջեան, զորս գրեցեր ի գիր դրս լուսոյ և որդիս տուընջեան, զորս գրեցեր ի գիր որդեգրութն ժառանգութն մեջն ի լոյս, որ չարին որդեգրութն ժառանգութն մջն ի լոյս, որ չարին պատրանօք որսացեալ եղաք կամօք մերովք ի մեղսասէր և ի կամակոր նր̃ կամս, որոշելով ի հայրախնամ արարչական սիրոյ քո, տարադիր առնելով զանձինս մեր յորդեգրութենէ ժառանգութն Հօրդ երկնաւորի. և ոչ պահեցաք զգուշութբ զստացուածս և զգանձս հոգեւոր մեծութն՝ զոր նը աւազանաւն ստացաք, զանմահութն և զմաքրութն և զանմեղութն և զարդարութն և զհոգեւոր մեծաշահ փարթամութն։ Այլ անթիւն և զհոգեւոր մեծաշահ փարթամութն։ Այլ անառակ վարուք մերովք ծախեցաք զհայրենատուր մեծութին, մինչեւ ժամանեաց ի վր̃ մեր յետին աղքատութն, և սովամահ չքաւորութբ նուաղեցան անձինք մեր։ Եւ յոյս ակնկալութն մերոյ չէք այլ ոք բաց ի քէն. զի դու ես Տր̃ Ած̃ մեր, և զանուն քո անուանեմք զօրհանապազ։ Հայր երկնաւոր, հայեաց ի դարձումն ծառայից քոց, և ընկալ զզղջումն խոստովանութն մեծառայից քոց, և ընկալ զզղջումն խոստովանութն մերում, ով զանառակ որդւոյ ընկալար զդարձումն, և լուսեղէն վերստին զարդարեցեր զնա արփիափայլ և լուսեղէն զգեստիւն, և առաջին պատմուճանին ծածկութիւ, զոր ինքեան կամակոր և անառակ վարուքն մերկացաւ։ Վ̃յ և մեք նորին յօժարութբ զզջացեալ սրտիւ և բեկեալ անձամբք դառնամք առ քո գթութիդ, ասելով՝ Հայր, մեղաք յերկինս և առաջի քո, ոչ եւս եմք արժանի կոչել որդի սբ̃ անուանդ քոյ. արա զմեզ իբրեւ զմի ի վարձկանաց քոց։ Հայեաց Տէր ողորմութբ և քաղցրութբ կամօք քովք. և հայրական գթով բարերարութբդ քով եկ ընդ առաջ մեր. և զգեցո մեզ զառաջին պատմուճանին զլուսափայլ վերարկուն, զոր զգեստաւորեալ զարդարեցաք աւազանին լուսափայլ պայծառութբն։ Մերկեա ի մէնջ Տէր զհնացեալ պատմուճան չարին ծածկութից, զոր ծուլութբ և անառակ վարուք մերովք զգեցաք, և օտարացաք ի հայր-

ական խնամոց քոց։ Տո՛ւր մեզ Տէր Ած̃ մեր զքո ուրախարար և զմարդասիրական համբոյրդ, տալով զկնիք սրբութն ի հոգիս մեր. և զմատանին արդարութեան տպաւորեա՛ յաջոյ ձեռին մերում, միշտ ունելով մեզ զնշան և զդրոշմն ուխտին սրբութն, զոր ուխտեցաք միջնորդութբ մարմնոյ և արեան Որդւոյ քոյ սիրելոյ։ Արբո՛ մեզ զբաժակն ուրախարար, զոր խառնեցեր ի խառնարան սրբութն ածընկալ սեղանոյն քաւութեւ խաչին, յորում զենաւ զզենումն ճշմարիտ պատարագին եզինն պարարակի, և հրաւիրեցեր ի պատրաստեալ ճաշ հարսանեաց միածնի Որդւոյ քոյ սիրելոյ՝ զպակասամիտսն ի հանճարոյ, յաստուածային երկեղէն և ի պատուիրանին զգուշութենէ, և զանզգամսն պատուիրեցեր թողուլ զանզգամութեան ճանապարհն։

Եւ արդ՝ տո՛ւր մեզ զհացն սրբութեան մարմնոյ միածնի քո, որով կեցցուք. և արբո՛ զմեզ գինւով անուշութեամբ ուրախութբ սբ̃ բաժակին. զի արբեալ միշտ ուրախասցուք յանսպառ ուրախութիդ. և վայելեսցուք յանկապուտ ճոխութիդ՝ յերջանիկ յօթեւանս Հօրդ երկնաւորի. զոր պատրաստեցեր ի սկզբանէ աշխարհի սբ̃ց քոց. և ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍբ̃ Հոգիդ, այժմ և։

Զկնի ողջունիցն ասեն է Ըի՝

Սաղմոս ՃԺԷ։

ԿՑ. Բացէք ինձ զդրունս արդարութն. զի մտից ընդ այն և խոստովան եղէց Տն̃ն։

Փխ. Խոստովան եղերուք Տն̃ն, զի բարի է. զի յաւիտեան է ողորմութի նորա։

Ասասցէ տունն Իսրայէլի. զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ասասցէ տունն Ահարոնի. զի յաւիտեան է ողորմութի նորա։

Ասասցեն երկիւղածք Տն. զի յաւիտեան է ողոր-
մութի Նորա:

Ի նեղութե իմում ես առ Տէր կարդացի. և լուաւ
ինձ յանդորր:

Տէր է իմ օգնական, և ես ոչ երկեայց. զի՞ արասցէ
ինձ մարդ:

Տէր է իմ օգնական, և ես տեսից ի թշնամիս իմ:

Բարի է յուսալ ի Տէր՝ քան յուսալ ի մարդիկ. բարի
է յուսալ ի Տէր՝ քան յուսալ յիշխանս:

Ամենայն ազինք շրջեցան զինև. և անուամբ Տեառն
յաղթեցի նց:

Շրջելով շրջեցան զինև, պաշարեցին զիս ի միասին.
և անուամբ Տն վանեցի զնոսա:

Շուրջ եղեն զինև ոպ մեղուք. վառեցան, բորբոքե-
ցան ոպ փուշք ի հուր. և անուամբ Տն մերժեցի զնս:

Ի մերժելն դրդուեցայ, և եղէ մերձ ի գլորել. և Տէր
ընկալաւ զիս:

Զօրութի իմ և օգնութի իմ Տր. և եղև ինձ ի փրկութի:

Ձայն ցնծութե փրկութե ի յարկս արդարոց:

Աջ Տն արար զօրութի. աջ Տն բարձր արար զիս.
և աջ Տեառն արար զօրութիւն:

Ոչ մեռայց, այլ կեցից. և պատմեցից զգործս Տն:

Խրատելով խրատեաց զիս Տր. և ի մահ ոչ մատնեաց.

Բացէք ինձ զդրունս արդարութե, զի մտից ընդ այն՝
և խոստովան եղէց Տեառն:

Ապա ասեն ժամանային սաղմոսերգութիւն, եւ մտանեն յեկե-
ղեցին. եւ ասեն Սաղմոս ՂԹ:

Աղաղակեցէք առ Տէր ամ երկիր. ծառայեցէք Տն
ուրախութեամբ:

Մտէք առաջի Նորա ցնծութբ. ծանիրո՛ւք զի Նա է
Տէր Աստուած մեր:

Նա արար զմեզ և ոչ մեք էաք. մեք ժողովուրդք
ձեռին Նորա, և խաշն արօտի Նորա:

Մտէք ընդ դրունս Նորա խոստովանութբ. և օրհնու-
թեամբ ի յարկս Նորա:

Խոստովան եղերուք Տն, և օրհնեցէք զանուն Նր:

Քաղցր է Տէր. յաւիտեան է ողորմութի Նր. յազգէ
մինչև յազգ է ճշմարտութիւն Նորա:

Զկնի սարկաւագն քարոզէ. Սուրբ եկեղեցեաւս: Աղ. Ի
մէջ տաճարիս:

Եւ ելեալ այս կարգաւ՝ օրհնէ առաջնորդն զապաշխարողսն եւ
զժողովուրդն, ասելով:

Օրհնեալ է անբաւ ողորմութի և մարդասիրութի
Քրիստոսի Այ մերոյ, որ արժանաւորեաց զմեզ խաղա-
ղութբ հասանել ի փառաւորութիւն մեծապատիւ և
խորհրդական աւուրս այսորիկ, յորում եղեն խնդու-
թե աւետիք և փրկութի ամ տիեզերաց: Վն զի այսօր
կենարարն մեր խոնարհեալ վն փրկութե մերոյ՝ առ ի
լուանալ զոտս աշակերտացն, և արարիչն երկնի և եր-
կրի՝ ծառայական կերպիւ խոնարհութբ և սարսափելի
տնօրէնութբ իջեալ ի ծունկս հողեղինացն, և զգես-
տիւն զոր սփածաւ՝ ջնջեալ մաքրագործեաց զգարշա-
պարս առաքելոցն, տալով նց զօրութի և իշխանութի՝
կոխել զօձս և զկարիճս և զամ զօրութի թշնամւոյն:
Այսօր մարգարէական լցաւ բանն՝ որ ասէ. Պահել
զնորատունկս գործոց ձեռաց իմոց, զի ես Տէր ընդ
ժամանակս ժամանակս ժողովեցից զնոսա: Այսօր Տէրն
մեր բաշխեալ զանապական մարմին և զարիւն իւր նբ՝
ի քաւութի և ի թողութի ամ հաւատացելոց: Այսօր
կատարումն արարեալ գրաւական կտակիս՝ հնոյ աւան-
դութեն մովսիսական օրինացն տուչութե. և սկզբնաւ-
որեալ զնորոյ խորհրդական շնորհացս աւետարանա-
կան աւանդութեսս Նորոյ ուխտիս առատութե, և հո-
գևորական բարեացն առատաբաշխ ողորմութե: Օրհ-
նեալ է անբաւ ողորմութիւն և մարդասիրութին Քնի
Այ մերոյ, որ արժանաւորեաց զձեզ այսպիսի մեծի

ւուրս, և շնորհեաց ձեզ բարեպաշտութի՟ կատարել զընթացս հոգևոր ճգնութեան, և յօժարութի՟ ճաշակել զբաժակ ապաշխարութեան։ Արժանաւորեսցէ զձեզ լսել զամենահեշտ բարբառն՝ եթէ Եկա՛յք առ իս ա՟մ աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։ Եւ փոխանակ սրբապահութե՟ ձերոյ՝ զերկնաւորն և զյաւիտենականն պատրաստեսցէ ձեզ կերակուր։ Եւ փոխանակ ժուժկալութե՟ ձերոյ զոր ծարաւեցայք՝ յանմահական աղբերէն ըմպել ջուր։ Եւ փոխանակ գիշերային տքնութե՟ ձերոյ՝ ընդ հրեշտակս օրհնել զամենօրհնեալն Ք՟ս։ Եւ փոխանակ անլուայութե՟ ձերոյ՝ անթառամ պսակօքն զարդարեսցէ զձեզ։ Եւ փոխանակ գետնախշտութե՟ ձերոյ՝ լսել ձայնի Որդւոյն Ա՟յ, եթէ Բազմեցուցից զձեզ ընդ աջմէ Հօր իմոյ, և անցեալ պաշտեցից զձեզ։ Եւ փոխանակ գթութե՟ և ողորմութեան ձերոյ որ առ աղքատսն՝ յաջակողմանն դասեցուսցէ զձեզ, և արժանի արասցէ զձեզ լսել զամենահեշտ բարբառն, եթէ Եկա՛յք օրհնեալք Հօր իմոյ՝ ժառանգեցէ՛ք զպատրաստեալ ձեզ արքայութի՟ն. զի զոր արարէք միում ի փոքրկանցս յայսցանէ՝ ինձ արարէք։ Արդ՝ բարեգութն Ա՟ծ Քրիստոս Որդին Ա՟յ, որ այսօր խոնարհեցաւ յոտս աշակերտացն՝ լուանալ զգայթագղութի՟սն որ ի նս՟, և նոքա համարձակութե՟ և բազում յօժարութե՟ քարոզեցին զբանն կենաց. նոյն ինքն մարդասէրն Ա՟ծ արժանի արասցէ զձեզ հոգևոր լուացման, աստուածային բազկօքն մաքրել զաղտ յանցանաց բանսարկուին, և յաղթել զօրութե՟ թշնամւոյն. կոխել զիժն և զքարբն, թևարկելով ի վե՟ր նս՟ առաքելական գնացիւք. և ժամանել ի խորանս երկնաւոր լուսոյն ի Ք՟ս Յ՟ս ի Տէր մեր. որում փառք և երկրպագութի՟ և գոհացողական օրհնութի՟ ընդ Հօր և ընդ Հոգւոյն սբ՟յ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Կամ հայրապետ եպիսկոպոսն կամ առաջներէցն զմեծս զայս օրհնութիւն ժամատան եւ ապաշխարողաց եւ ամենայն ժողովրդեան։

Օրհնեալ է ամենասուրբ Երրորդութիւնն ի բարձունս Հայր և Որդի և սբ՟ Հոգին։ Մեծ գոհութի՟ երից անձանց և մի ա՟ծութե՟ անսահմանելւոյ, անփոփոխելւոյ, ամենակարողի, անմահի, ամենակեցուցանողի, ամենապարգևելի, անճառի. պատիւ, երկրպագութիւն և մշտնջենաւոր փառաբանութիւն յերկնաւորաց և յերկրաւորաց, ի հրեշտակաց և ի մարդկանէ, ի սերովբէից և ի քերովբէից, ի տէրութեանց և յիշխանութեանց. Երրորդութեան երրեակ և մի աստուածութեան, որ էնն յէութե՟ իսկութեան համագոյական ա՟ծութե՟ հարթ և հաւասար ի խորութի՟ և ի բարձրութիւն՝ ի լայնութի՟ և յերկայնութի՟։ Որ իւրով կանխագէտ զօրութեամբն արար զերկինս և զերկիր. ձգեաց զերկինս առանց հիման խորանաձև հաստատութե՟ն, և արկ ի վե՟ր նս՟ զբազմութի՟ ջուրց. գնաց հրեղէնքն ընդ ջուրն և ոչ շիջանին, զի նմա ա՟մ ինչ կարելի է. սահմանեաց զծով աւազով. բուսոյց յերկրէ զծառս և զծաղիկս՝ հանդերձ սերմանեօք. պաճուճեաց չորիւք եղանակօք զբոլոր շրջանս տարւոյն. եդ զնս՟ հակառակ անհաշտելի և ի սէր անքակտելի. արար ազգի ազգի զեռունս ի ծովու, և զթռչունս թևաւորս, և բազում գազանս վայրենիս։ Ապա յետ ամենեցուն զմարդն արար ձեռօք իւրովք ըստ պատկերի իւրում, և փչեաց ի նա շունչ կենդանի, և եղև մարդն ի հոգի կենդանի. և զա՟մ ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից նր՟, և կացոյց միջասահման՝ կենաց և մահու. և ետ նոցա պատուէր չճաշակել ի պտղոյ ծառոյն գիտութե՟, և ի պահել պատուիրանին՝ խոստացաւ նց՟ զվերնայարկ վերինն Երուսաղէմ։ Իսկ բանսարկուն սատանայ աման չարին գտեալ զօձն, և նովաւ խօսեցաւ ընդ կնոջն ի պատճառս ա՟ծա-

նալոյն, ետ նմա ուտել ի ծառոյն գիտութե՟ն. և մերկացաւ ի լուսեղէն փառացն: Իսկ բարերարին քաղցրաձայնեալ ասէ. Ո՞ւր ես Ադամ. և ի գալ Նր՟ ի դրախտն նկարեցաւ գալուստն իւր յաշխարհս. և ձայն ոտից Նր՟ դրոշմեաց զՅովհաննէս մկրտիչ. իսկ Ադամայ անզղջութե՟ դիմեալ ի մահ՝ զանպարտականն Այ՟ պատճառս իւրոյ կորստեանն համարեալ՝ ասէր, թէ կինս զոր ետուր ցիս՝ սա յանցոյց զիս: Իսկ դատաւորն ստուգութե՟ անէծ զնա և զխաւսակարս Նր՟. և եհան զնա արտաքոյ դրախտին: Սակայն ոչ ժուժկալեալ ողորմութե՟՝ ընկալաւ զպատարագն Աբելի. անմահացոյց զզաւակ նորա զԵնովք. պահեաց զՆոյ ի տապանին բազմահոյլ կենդանեօք. և զամբարշտեալն Կայէն իւրովք ծննդովքն սահանաբաց անձրևովք ջնջեաց: Օրհնելով զտամներորդն զԱբրահամ՝ խոստանալով նմա երդմամբ, եթէ բազմացուցից զզաւակն քո՝ որ՟ զաստեղս երկնից. բազում նշանօք և արուեստիւք խօսեցաւ առ հարսն մեր՝ որք արարին ազգի ազգի նշանս. առաքեաց զհրեշտակս վերակացուս: Իսկ իբրև եկն լրումն ժամանակին՝ խօսեցաւ ընդ մեզ Որդւովն, որ եկն և մարմնացաւ ի մ՟ջ կուսէն, և Եմուտ ընդ օրինօք, զի զորս ընդ օրինօքն էին՝ ազատեսցէ. կատարեաց զօրէնս. ելից զտառս մարգարէիցն: Արար նշանս և արուեստս. լուսաւորեաց զկոյրս. առողջացոյց զանդամալոյծս. հալածեաց զդևս: Ապա ի կատարումն նշանացն՝ շնորհեաց զյարութիւն Ղազարու չորեքօրեայ կոչմամբ ի թաղմանէ: Նստաւ ի վ՟ր յաւանակի իշոյ, որ է խորհուրդ կոչման Հրէից և հեթանոսաց. վ՟ն որոյ և մանկտին ովսաննա երգէին, օրհնութի՟ որդւոյ Դաւթի: Իսկ ի սերկեան աւուրս՝ գայ կամաւորութե՟ ի չարչարանս. յանձն առնու մատնել յանօրէն աշակերտէն: Յերեկոյ հասեալ ժամու աւուրն՝ զոտս երկոտասանիցն՝ զխոնարհութի՟ ուսուցանելով Նր՟, նա և զՅուդայն յառաջ լուանայր. որ և

աշխատեցաւ մինչև ցդաւի՟թ քահանայապետին. վ՟ն որոյ և Յուդա ի միտս իւր ասէր. թէ բիւր անգամ մեծարես զիս՝ ոչ եմ մոռանալոց զերեսուն արծաթին: Արդ ի յայսմ ահաւոր և սքանչելագործ տօնիս՝ եղև ուրախութի՟ հրեշտակաց և մարդկան: Այսօր բարձաւ ցանկ անիծիցն Ադամայ: Այսօր ազատեցաք ի ծառայութե՟ սատանայի: Այսօր արարիչն արարածոց ի յերկրի երևեցաւ: Այսօր Այ՟ն սերովբէից ծառայի զգենու զկերպարանս: Այսօր անհասն քերովբէից՝ խոնարհի և լուանայ զոտս աշակերտացն: Այսօր արկողն զլոյս որ՟ զօթոց՝ զգենու զենջակ: Այսօր աթոռակիցն Հօր՝ ընդ հողեղէնս բազմի: Այսօր փառակիցն ս՟բ Հոգւոյն՝ յանձն առնու մատնիլ ի դատաստան մահու: Այսօր կենագործողն ամենեցուն՝ ընդ մահուամբ սահմանի: Այսօր վէմն առանց ձեռին հատեալ, և ինքն լեռնացեալ ելից զտիեզերս: Այսօր բաշխէ զմարմին և զարիւնն, և յայտնէ զանօրէն աշակերտին զխորհուրդն: Այսօր կապեալ լինի արձակիչն կապելոց, զոր երկինք ոչ բաւէին տանել: Այսօր օրհնէ զառաքեալսն ի դպրութի՟ քահանայութե՟: Այսօր գտանի դրամն կորուսեալ, որ է թագաւորական պատկերն: Այսօր եղև ուրախութի՟ հրեշտակաց վ՟ն գիւտի մոլորեալ ոչխարին: Այսօր ճշմարտապէս հաղորդեցաք մարմնոյ և արեան Տեառն: Այսօր օրհնեցան քահանայապետք ամենայն հանդերձ քահանայիւք: Այսօր լուսազարդեցան թագաւորք հանդերձ ա՟մ զօրութե՟ն իւրեանց և իշխանութե՟՝ ընդ Դաւթի և ընդ դասագլուխս Նր՟: Այսօր օրհնեցան ծերք և տղայք, երիտասարդք և կուսանք՝ ի ձեռն կապողին և արձակողին: Այսօր դրախտն բանի մարդկութե՟ս, և ա՟մ արարածք ցնծան յանմահական կեանս: Այսօր ի հին տրտմութե՟ց փոխեցաք, և ամենեքեան նորոգեցաք ի Ք՟ս: Այսօր ետ իշխանութի՟ կոխել զօձս և զկարիճս և զա՟մ զօրութի՟ս թշնամւոյն: Այսօր ի ձեռն

աւազանին լուսազարդեալք մաքրեցան հաւատացեալք յաղտոյ մեղաց: Արդ եկեսցէ մխիթարութին Եղէմի ի վր ձեր, որ ասէ. Մխիթարեցէք, մխիթարեցէք զժողովուրդ իմ, ասէ Ած. քահանայք խօսեցարուք ի սիրտ Եղէմի. մխիթարեցէք զդա, զի լի եղև տառապանօք. թողեալ լիցին դմա մեղք իւր: Դարձեալ՝ եթէ Զճանապարհս սրտի նր տեսի և բժշկեցի, և ետու նմա մխիթարութի, և փոխանակ մոխրոյն՝ օծումն ուրախութե:

Արդ՝ բարեգութն Ած ուրախացուսցէ զձեզ զամենեսեան, և երկնաւոր պարգևացն արժանի արասցէ: Օրհնեսցէ Տէր Ած զհայրապետս. ընդ սրբոյն Գրիգորի և ընդ այլ սրբց հայրապետացն մասնակիցս արասցէ: Օրհնեսցէ Տէր Ած զքահանայս ընդ քահանայութե Մելքիսեդեկի, և զարդարեսցէ ընդ տեսլեանն Մովսէսի ի զարդ անկողոպտելի, ըստ պատմուճանին Ահարոնի. և հոգեզարդեսցէ ըստ առաքելոցն խորանակցութե. և արասցէ մշակս առանց ամօթոյ, զի յերևել հօտապետին՝ ընդունիցին զանթառամ փառաց պսակն: Օրհնեսցէ Տէր Ած զմիաբան ժողովուրդս, և թեթևացուսցէ զբեռինս մեղաց ձերոց: Օրհնեսցէ Տր Ած զտունս զայս և զբնակութիս, և զհիմունս եկեղեցւոյս՝ ըստ այնմ որ ասէ. Այսօր եղև փրկութի տանս այսորիկ՝ ըստ աւետեացն Աբրահամու հանդերձ ազգաւ և ժառանգակցօք իւրովք: Օրհնեսցէ Տր Ած զսպասաւորս տանս այսորիկ, զլուսարարս, զդռնաբացս, և անթառամ պսակացն արժանիս արասցէ: Օրհնեսցէ Տր Ած զխոստովանողսդ և զապաշխարողսդ, և թողցէ զյանցանս ձեր՝ ոպ զպոռնկին և զմաքսաւորին: Օրհնեսցէ Տէր Ած զծերսդ՝ ոպ զծերսն իսրայէլեան բանակին, և ոպ զծերունին Սիմէոնի՝ որ զԱծորդին ի գիրկս իւր ընկալաւ, և հայցէր արձակիլ ի խաղաղութիւն: Օրհնեսցէ Տէր Ած զտղայս ձեր՝ ոպ զտղայս Եբրայեցւոց՝ որք առին ոստս արմաւենեաց, և ելին ընդ առաջ Նր.

աղաղակէին և ասէին. Ովսաննա օրհնեալ որ գաս յանուն Տեառն: Օրհնեսցէ Տէր Ած զերիտասարդս՝ ոպ զերանելին Յովսէփ, որ հաճոյ եղև Այ և օրհնեցաւ ի նմանէ: Օրհնեսցէ Տէր Աստուած զկանայս՝ որպէս զկանայս իւղաբերս՝ որ եկին ի գերեզման փրկչին և լցան աւետեօք սուրբ յարութեան Տեառն: Օրհնեսցէ Տէր Աստուած զժամակոչ քաղաքիս մերոյ. զի որպէս ձայն հրեշտակապետի յաղթող է առ ի զարթուցանել զննջեցեալս ի մահահանդիստ քնոյ, նոյնպէս և ձայն սորա յաղթող է առ ի հալածել զլեգէոնն ամենայն զօրօք իւրովք: Օրհնեսցէ Տէր Աստուած զվերակացու տանս, զմշակս և զեզինս, զխաշինս և զհօտս սորա: Օրհնեսցէ Տէր Ած զանդաստանս մեր, և բուսուսցէ զամ բոյս շահեկանութե. ի բաց արասցէ զամ վնաս և զբիծ, զհրայրեաց և զդալուկ, զժանտ, զկարկուտ, զմարախ, զջորեակ, զսառն եղեմնածին, և զամ ցաւս և զխաշնամահ ի մարդոյ և յանասնոյ. և հալածեսցէ զլեգէոնն ամ զօրօքն իւրովք և առաքեսցէ յանդունդս. և զհրեշտակ խաղաղութե առաքեսցէ և օրհնեսցէ զամենեսեան: Օրհնեսցէ Տէր Ած զամենեսեան զմիաբան զարսդ և զկանայսդ, զծերսդ և զտղայսդ, և փրկեսցէ զձեզ զամենեսեանդ յամ չարեաց. և ամրացուսցէ ընդ հովանեաւ աջոյն իւրոյ, և երկնից արքայութե արժանիս արասցէ: Օրհնեսցէ Տէր Ած զբնակութի քաղաքիս մերոյ, և հալածեսցէ զամ չար և զզօրութի բռնացեալ թշնամւոյն: Օրհնեսցէ Տէր Ած զկրօնաւորսդ ընդ սրբոյն Եղիայի, և ընդ Անտոնի ժառանգակիցս և մասնակիցս արասցէ: Օրհնեսցէ Տր Ած զժողովուրդսդ որ եկեղեցւոյս մերոյ առ հասարակ՝ զարսդ և զկանայսդ, զերիտասարդսդ. և երևեցուսցէ զերեսս իւր ի ձեզ: Օրհնեսցէ Տէր Ած զխոստովանողսդ և արժանի արասցէ զձեզ լուացման որ առաքելոցն ի վերնատանն: Եւ փոխանակ սրբապահութեան ձերոյ զեր-

կնոյինն պարգեւեսցէ ձեզ կերակուր: Եւ փոխանակ ժուժկալութե ձերոյ զոր ծարաւեցայք՝ յանմահական աղբերէն տացէ ձեզ ըմպել ջուր: Եւ փոխանակ գիշերային տքնութեան ձերոյ՝ ընդ հրեշտակս դասեսցէ զձեզ: Եւ փոխանակ լուակցութե ձերոյ՝ անթառամ պսակօք զարդարեսցէ զձեզ: Եւ փոխանակ ողորմութե ձերոյ որ առ աղքատս՝ յաջակողման բազմեցուսցէ:

Արդ՝ ով ծծասէր ժողովուրդք և հաւատացեալք քրիստոսի, պահեցէք զպատուիրանս Տն և զկրաւունս Նր. և մի դադարիք և ձանձրանայք առնել ողորմութիւն. մինչ դեռ ժամանակս ի ձեռս է՝ գործեցէք զբարիս, զի զփոխարէնն ի փրկչէն մերմէ Յսէ քսէ յաւիտենական կեանս առնուցուք: Արդ՝ հատուցանողն բարեաց ամենեցուն տացէ եկեղեցեացս շինութի, քահանայիցս՝ ուղղափառութի, թագաւորաց և իշխանաց՝ վայելչութի, ծերոց՝ մխիթարութի, կրօնաւորաց՝ ժուժկալութի, երիտասարդաց՝ ողջախոհութի. մեղաց՝ լուծումն, հիւանդաց՝ բժշկութի, դիւաց՝ խորտակումն, ախտաժետաց՝ առողջութիւն, և փրկութի հոգւոց և մարմնոց: Եւ արդ՝ լսելով զայս ի բաց ընկեցէք յանձանց ձերոց զչարութի և զամ խարդախութի, թողէք իւրաքանչիւր եղբօր իւրում զյանցանս, և զամ խէթ զոր ունիք ընդ միմեանս և զամ չարութի. գործք բարիք բոլորովին ի կատարումն. սիրեցէք զՏր յամ սրտէ, և զկամս Նորա կատարեցէք, ընդ ամ մարդոյ զխաղաղութի ունիցիք. հեզ լիջիք և խոնարհ. լսել ձայնին որ ասէ, Յօ՞ բնակեցայց՝ եթէ ոչ ի հեզս և ի խոնարհս և ոյք դողան ի բանից իմոց. խնդրեցէք զխաղաղութի և երթիցէք զհետ արդարութե. յուսոյ ակն կալջիք յաւիտեանս յաւիտենից: Եւ Տէր Ած արարիչն ամի՝ հաստատեսցէ զձեզ. և տացէ առատաբեղս բարիս՝ աստ և ի հանդերձելումն. և արժանի արասցէ զձեզ դասիլ յաջակողմանն. և ննջեցելոց ծանօթից և անծանօթից զեր-

ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹԻՆ

նից արքայութե պարգեւեսցէ. և քսի Այ մերոյ փառք յաւիտեանս. ամէն:

Զկնի ՚ատրոց. Խնդրեսցուք: Եւ ասեն երէցուն Տէր ողորմեա է ԺԲ: Աղօթք. Քում ամենազօր և հրաշալի տէրութեանդ:

Եւ դնէ սուրբ խաչն եւ աւետարանն առաջի բեմին. եւ համբուրեն նախ զսուրբ խաչն եւ զաւետարանն, եւ ապա զաջ քահանային: Եւ օրհնէ քահանայն զժողովուրդն. եւ արձակին ողջունելով զմիմեանս, եւ երթան խաղաղութեամբ:

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ի յեօթն ժամն ժողովին ի դուռն եկեղեցւոյն: Եւ ասեն զՃաշու ժամու ճաշացեալ Ողորմեայքն: Եւ նշխար գործի: Եւ ապա մտանեն յեկեղեցին, եւ սկսանին

Ես առ Ած կարդացի: Փառք Հօր: Եւ եւս խաղաղ: Օրհնութի և փառք: Խոնարհեցո եւ Ապրեցո: Մեսեդի:

Լուացայց սրբութեամբ զձեռս իմ. և շուրջ եղէց զսեղանով քով Տէր:

Տէր սիրեցի զվայելչութիւն տան քոյ. և զտեղի յարկի փառաց քոց:

Ընթերցուածս ի Ծննդոց: ԻԲ. 1:

Եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ փորձեաց Ած զԱբրահամ և ասէ ցնա. Աբրահամ Աբրահամ. և նա ասէ. ահաւասիկ եմ: Եւ ասէ ցնա. առ դու զորդիդ քո զսիրելի զոր սիրեցեր՝ զիսահակ. և գնա դու յերկիր բարձր, և հանցես զդա անդ յողջակէզ ի վր միոյ լերանց՝ յորոց ասացից քեզ: Եւ յարեաւ Աբրահամ ընդ առաւօտն, համետեաց զէշ իւր. և առ ընդ իւր երկուս ծառայս և զիսահակ զորդի իւր. և պատառեաց փայտ յողջակէզ, յարեաւ և գնաց. և եկն ի տեղին զոր ասաց նմա Ած: Եւ յաւուրն երրորդի համ-

բարձ Աբրահամ զաչս իւր և ետես զտեղին ի հեռաստանէ։ Եւ ասէ Աբրահամ ցպատանիս իւր. Նստարու՛ք դուք այդր հանդերձ իշովդ. և ես և պատանեակս երթիցուք մինչև ցանդր, և երկիր պագցուք, և դարձցուք առ ձեզ. Եւ ա՛ռ Աբրահամ զփայտ ողջակիզին, և եդ ի վ՟ր Իսահակայ որդւոյ իւրոյ. և ա՛ռ ի ձեռն զհուրն և զսուր. և գնացին երկոքեան ի միասին։ Եւ ասէ Իսահակ ցԱբրահամ ցհայր իւր. հա՛յր։ Եւ նա ասէ. զի՞ է որդեակ։ Եւ նա ասէ. ահա հուր և ահա փայտ. ո՞ւր է ոչխար յողջակէզ։ Եւ նա ասէ. Ա՟Ծ տեսցէ իւր ոչխար յողջակէզ որդեակ։ Գնացին երկոքեան ի միասին։ Եւ եկին ի տեղին զոր ասաց նմա Ա՟Ծ. անդ շինեաց սեղան Աբրահամ, և եդ ի վերայ զփայտն. և կապեաց զԻսահակ զորդի իւր. և եդ զնա ի սեղանն ի վ՟ր փայտին։ Եւ ձգեաց Աբրահամ զձեռն առնուլ զսուրն և զենուլ զորդի իւր։ Եւ կոչեաց զնա հրեշտակ Տեառն յերկնից, և ասէ. Աբրահա՛մ Աբրահամ։ Եւ նա ասէ ցնա. ահաւասիկ եմ։ Եւ ասէ. մի՛ մխեր զձեռն քո ի պատանեակդ, և մի՛ ինչ առներ դմա. զի այժմ գիտացի թէ երկիւղած ես դու յԱ՟Ծ. և ոչ խնայեցեր յորդւոյդ քո սիրելւոյ վ՟ն իմ։ Համբարձ Աբրահամ զաչս իւր և ետես. և ահա խոյ մի կախեալ կայր զծառոյն Սաբեկայ զեղջերաց։ Եւ գնաց Աբրահամ և առ զխոյն. և եհան զնա յողջակէզ փոխանակ Իսահակայ որդւոյ իւրոյ։ Եւ կոչեաց Աբրահամ զանուն տեղւոյն այնորիկ՝ Տէր ետես. զի ասիցեն ցայսօր. ի լերինն յայնմիկ Տէր երեւեցաւ։ Եւ կոչեաց հրեշտակ Տ՟ն զԱբրահամ երկիցս անգամ յերկնից և ասէ. յանձն իմ երդուայ, ասէ Տէր. փոխանակ զի արարեր դու զբանդ զայդ, և ոչ խնայեցեր յորդւոյդ քո սիրելւոյ վ՟ն իմ. այո՛՝ օրհնելով օրհնեցից զքեզ. և բազմացուցանելով բազմացուցից զզաւակ քո իբրև զաստեղս երկնից բազմութ՟բ և իբրև զաւազ առ ափն

ծովու. և ժառանգեսցէ զաւակ քո զքաղաքս հակառակորդաց իւրոց։ Եւ օրհնեսցին ի զաւակի քում ա՟մ ազգք երկրի. փոխանակ զի լուար ձայնի իմում։ 18։

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ։ ԿԱ. 1։

Հոգի Տ՟ն ի վ՟ր իմ, վ՟յ և օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս. բժշկել զբեկեալս սրտիւք, քարոզել գերեաց զթողութ՟ի և կուրաց տեսանել։ Կոչել ամ Տ՟ն ընդունելի, և օր հատուցման Ա՟Ծ մերոյ. մխիթարել զա՟մ սգաւորս։ Տալ սգաւորաց Սիովնի փառս. փոխանակ մոխրոյ օծումն ուրախութ՟ե. և սգաւորաց հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոյն վհատութ՟ե, և կոչեսցին նոքա ազգք արդարութ՟ե՝ տունկ Տ՟ն ի փառս։ Եւ շինեսցեն զաւերակսն յաւիտենից. և զյառաջագոյն աւերեալսն կանգնեսցեն. և նորոգեսցեն զքաղաքս աւերեալս յազգաց մինչև յազգս։ Եւ եկեսցեն օտարածինք հովիւք խաշանց քոց, և այլազգիք մաճկալք և այգեգործք քո։ Բայց դուք քահանայք Տ՟ն կոչիջիք, և պաշտօնեայք Ա՟Ծ մերոյ անուանիջիք. զզօրութիս ազգաց կերիջիք, և մեծութ՟բ ն՟ց սքանչելի լինիջիք։ Փոխանակ ամօթոյն ձերոյ կրկին ուրախութ՟ի, և փոխանակ անարգանաց ձերոց ցնծութ՟ի. և ապա զերկիրն յերկրորդում ժառանգեսցեն. և ուրախութ՟ի յաւիտենից ի վ՟ր գլխոց ն՟ց։ 7։

Ընթերցուած ի Գործոց առաքելոց։ Ա. 15։

Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետրոս ի մէջ եղբարցն՝ ասէ. և էր անդ բազմութ՟ի անուանց իբրև հարիւր և քսանից։ Ա՛րք եղբարք՝ պարտ էր կատարել Գրոյն, զոր յառաջագոյն ասաց Հոգին ս՟բ ի բերանոյ Դաւթի՝ վ՟ն Յուդայի, որ եղև առաջնորդ ունելեացն Յ՟սի. զի ի թիւս մեր էր ընդ մեզ. և հասեալ էր նմա վիճակ պաշտամանս այսորիկ։ Սա ստացաւ գեօղ ի վարձուց անիրաւութ՟ե. և ուռուցեալ հերձաւ ընդ

մէջ, և հեղաւ ամ փոր նր։ Եւ յայտնի եղեւ ամենեցուն որ բնակեալ են յԵրուսաղէմ. մինչեւ կոչել գեղջն այնմիկ բարբառովն իւրեանց Ակեղդամայ. այսինքն է՝ գեօղ արեան։ Զի գրեալ է ի գիրս սաղմոսաց. Եղիցի բնակութի նր աւերակ, և մի՛ ոք իցէ՝ որ բնակիցէ ի նմա. և զկարգ նր առցէ այլ։ Արդ՝ պարտ է յարանցս յայսցանէ՝ եկելոցս ընդ մեզ յամ ժամանակի յորում մուտ և ել առ մեզ Տէր Յս, սկսեալ ի մկրտութէն Յովհաննու մինչեւ յօրն յորում վերացաւ ի մէնջ՝ վկայ յարութե նր ընդ մեզ լինել միում ի սոցանէ։ Եւ կացուցին երկուս. զՅովսէփ, որում Բարսաբայն կոչէին, որ անուանեցաւն Յուստոս, և զՄատաթիա։ Եւ կացեալ յաղօթս՝ ասեն. դու Տէր սրտագէտ ամի, յայտնեա՛ զմի ոք՝ զոր ընտրեցեր ի սոցանէ յերկոցունց՝ առնուլ զվիճակ պաշտամանս այսորիկ և զառաքելութե, յորմէ անկաւ Յուդաս՝ գնալ ի տեղի իւր։ Եւ ետուն վիճակս նց. և ելանէր վիճակն Մատաթեայ. և համարեցաւ ընդ մետասան առաքեալսն։ 26

Ապա Սաղմոս ԾԴ. ստողողքի ձայնիւ։

ԿՑ. Կակուղ էին բանք նոցա քան զձէթ. և ինքեանք որպէս սլաք։

ՓԽ. Ո՛ւնկն դիր Ած աղօթից իմոց. և մի՛ անտես առներ զխնդրուածս իմ։

Նայեա՛ առ իս և լո՛ւր ինձ. զի տրտմեցայ ես ի ձանձրանալ իմում և խռովեցայ։

Ի ձայնէ թշնամւոյն և ի նեղել մեղաւորին խոտորեցան յիս անիրաւութք. բարկութք ոխս պահէին ինձ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս. և երկիւղ մահու անկաւ ի վերայ իմ։

Ահ և դողումն եկն ի վր իմ. և ծածկեաց զիս խաւար։

Ասէի, տայր ոք ինձ թեւս որպէս աղաւնւոյ, զի թռչէի վերանայի, հեռացեալ դադարէի յանապատի։

Ակն ունէի յԱծ, որ փրկէ զիս ի կարճմտութենէ, ի զայրանալոյ և ի մրրկեալ նեղսրտութենէ։

Ընկլո՛ Տէր և բաժանեա՛ զլեզուս նց. զի տեսի զանօրէնութիւն և զհակառակութիւն ի քաղաքի։

Ի տուէ և ի գիշերի շուրջ եղեն զպարսպօք նր անօրէնութիւք. չարիք և մեղք են ի մէջ նոցա. և ոչ պակասեաց ի հրապարակաց նոցա վաշխ և նենգութի։

Զի թէ թշնամւոյն նախատեալ էր՝ համբերէի արդեօք, կամ ատելւոյն մեծաբանեալ էր ի վերայ իմ՝ թաքչէի արդեօք ի նմանէ։

Իսկ արդ դու մարդ հաւասար իմ, առաջնորդ իմ և ծանօթ իմ։

Ապաքէն ի նոյն քաղցրացուցեր ինձ և քեզ կերակուր. զի գնայաք միաբանութք ի տան Ած։

Եկեսցէ մահ ի վր նց, և կենդանւոյն իջցեն ի դժոխս. զի չարութի է ի բնակութի նց և ի մէջ նց։

Ես առ Ած կարդացի. և լուաւ ինձ յերեկոյս և ի վաղորդայն և ի հասարակ աւուր։

Պատմեցի և ասացի, և լուիցէ ձայնի իմում. փրկեսցէ խաղաղութք զանձն իմ ի մերձաւորաց իմոց. զի կարեօք հասին ի վր իմ։

Լուիցէ Ած և խոնարհ արասցէ զնս. այն որ յառաջ է քան զյաւիտեանս։

Զի ոչ գոյր նոցա փոխանակ. և ոչ երկեան յԱծ։

Զգեաց զձեռն իւր ի հատուցանել նց. և նոքա պղծեցին զօրէնս նորա։

Բաժանեցան ի սրտմտութէ երեսաց նր. և եհաս ի սիրտս նոցա։

Կակուղ էին բանք նց քան զձէթ. և ինքեանք որպէս սլաք։

Ընկեա՛ ի Տէր զհոգս քո, և նա կերակրէ զքեզ. և ոչ տայ յաւիտեան սասանութի արդարոյ։

Դու Ած իջուսցես զնս ի գուբ ապականութե. արք

արխնահեղք և նենգաւորք մի հասարակեսցեն զաւուրս իւրեանց․ այլ ես ի քեզ Տէր յուսացայ:

Ապա շՈւղղէցէն աւէն է Ոէ–:

Ուղիղ եղիցին աղօթք իմ․
Որպէս խունկ առաջի քո Տէր:
Զերեկոյի զաղօթս մեր ընկալ Տէր․
Եւ զտարածումն ձեռաց մերոց:

Քարոզ․ Աղաչեսցուք․ կամ գանձ:

Համբարձի ԱԿ: Այսօր կարգեցաւ օրինակ խոնարհութեան ի յուղղութիւն վարուց մերոց: Այսօր Տէրըն մեր լուանայր զոտս աշակերտացն և պատուիրէր զայս ասելով: Մի ոմն ի ձէնջ եղբարք մատնելոց է զիս ի մահ. և որոշէ յաշակերտացդ: Փառք Հօր: Զայն լուեալ Պետրոսի ակնարկէր առ Յովհաննէս հարցանել թէ ով իցէ: Այժմ և: Բանըն զօր ասաց Յիսուս տրտմեցոյց զնոր զաշակերտսն․ Եւ խռովեցան ամենեքեան:

Քարոզ․ Վն խաղաղութե: Աղօթ․ Հայր գթած:

Եւ ապա մտանեն ի պատարագ:

Զկնի պատարագին Սաղմոս ԻԲ:

ԿՑ․ Պատրաստ արարեր առաջի իմ սեղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց:

Փխ․ Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցի:

Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս․ և առ ջուրս հանգստեան սնոյց զիս:

Դարձոյց զանձն իմ առ իս․ և առաջնորդեաց ինձ ի ճանապարհս արդարութե վն անուան իւրոյ:

Թէպէտ և գնացից ես ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց ի չարէ․ զի դու Տէր ընդ իս ես:

Ցուպ քո և գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս:

Պատրաստ արարեր առաջի իմ սեղան, ակնյանդիման նեղչաց իմոց:

Օծեր իւղով զգլուխ իմ․ բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս:

Ողորմութի քո Տր զհետ իմ եկեսցէ զամ աւուրս կենաց իմոց․ բնակել ինձ ի տան Տռն ընդ երկայն աւուրս:

Եւ յայնէ սարկաւագն ի բեմն․ Որթիւ:

Եւ կարդան ի բեմն՝

Աւետարան ըստ Մարկոսի: ԺԴ․ 1:

Զտէրն մեր Յս Քրիստոս

Եւ էր զատիկն և բաղարջակերք յետ երկուց աւուրց․ խնդրէին քահանայապետքն և դպիրք՝ եթէ զիարդ զնա նենգաւ կալեալ սպանանիցեն: Բայց ասէին՝ թէ մի ի տօնի աստ, զի մի խռովութիւն լինիցի ի ժողովրդեանն: Եւ մինչ էր ի Բեթանիա՝ ի տան Սիմովնի բորոտի բազմեալ՝ եկն կին մի, որ ունէր շիշ իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, և բեկեալ զշիշն՝ եհեղ ի վր գլխոյ նորա: Եւ աշակերտքն զչարէին և ասէին․ ընդէր եղեւ կորուստ իւղոյդ այդորիկ: Մարթ էր զայդ իւղ վաճառել աւելի քան երեքհարիւր դահեկանի և տալ աղքատաց․ և զայրանային նմա յոյժ: Եւ Յս ասէ ցնս․ Թոյլ տուք դմա, զի՞ աշխատ առնէք․ զի գործ մի բարի գործեաց դա յիս: Յամ ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, և յորժամ կամիք՝ կարող էք առնել նց բարիս․ այլ զիս ոչ յամ ժամ ընդ ձեզ ունիք: Դա զոր ունէրդ՝ արար․ յառաջագոյն խնկեաց զմարմին իմ ի նշան պատանաց: Ամէն ասեմ ձեզ․ ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ամ աշխարհ՝ և զոր արար դա՝ խօսեսցի վն յիշատակի դորին: Եւ Յուդա Սկարիովտացի՝ մի յերկոտասանից անտի՝ գնաց առ քահանայապետսն՝ զի մատնեսցէ զնա նց: Նոքա իբրեւ լուան՝ խնդացին, և խոստացան տալ նմա արծաթ: Եւ խնդրէր թէ զիարդ պարապով մատնեսցէ զնա: Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն՝ յորում զզատիկն զենուին, ասեն ցնա աշակերտքն․ ո՞ւր կամիս՝ եր-

Թիցուք պատրաստեսցուք՝ զի կերիցես զզատիկն: Եւ առաքէ երկուս յաշակերտաց անտի, և ասէ ցնո̃. երթայք ի քաղաքն, և իբրեւ մտանիցէք ի քաղաքն՝ պատահեսցէ ձեզ այր մի՝ որ սափոր ջրոյ յուս ունիցի, երթայք զհետ Նր̃: Եւ յո՛ր տուն մտանիցէ՝ ասասջի՛ք ցտանուտէրն. վարդապետ ասէ՝ ո՞ւր են իջավանքն, ուր աշակերտօքս ուտիցեմ զզատիկն: Եւ Նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ. անդ պատրաստեսջի՛ք մեզ: Եւ գնացին պատրաստել աշակերտքն Նր̃. եկին ի քաղաքն. և գտին ո՛րպ ասացն Նց̃. և պատրաստեցին զզատիկն: Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ գայ երկոտասանիւքն հանդերձ: Եւ իբրեւ բազմեցան և դեռ ուտէին՝ ասէ ցն̃. ամէն ասեմ ձեզ՝ զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս, որ ուտէ իսկ ընդ իս: Եւ նոքա սկսան տրտմել, և ասել մի ըստ միոջէ. մի՞ թէ ես իցեմ, և միւսն՝ մի՞ թէ ես իցեմ: Նա պատասխանի ետ և ասէ ցնո̃. մի յերկոտասանից այտի, որ մխեաց ընդ իս ի սկաւառակդ: Այլ որդի մարդոյ երթայ՝ ո՛րպ և գրեալ է վասն Նր̃. բայց վա՜յ իցէ մարդոյն այնմիկ՝ յորյ ձեռս որդի մարդոյ մատնեսցի. լաւ էր Նմա՝ թէ չէր իսկ ծնեալ մարդն այն: Եւ մինչդեռ ուտէին, առեալ Յս̃ի հաց՝ օրհնեաց և եբեկ, ետ Նց̃, և ասէ. առէք՝ այդ է մարմին իմ: Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ և ետ Նց̃, և արբին ի Նմանէ ամենեքեան: Եւ ասէ ցնո̃. այս է արիւն իմ Նորոյ ուխտի, որ փոխանակ բազմաց հեղու: Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ եւս յաւելից ըմպել ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն ցայն՝ յորժամ արբից զնա նոր յարքայութն Այ̃: Եւ գոհացեալ՝ ելին ի լեառն ձիթենեաց: 26:

Քարոզ. Խնդրեսցուք: Կեցո՛ Տէր: Աղօթ. Թագաւոր *խաղաղութեան:*

Եւ արձակեն խաղաղութեամբ:

ԿԱՐԳ ՈՏՆԱԼՈՒԱՅԻՆ

ՄԵԾԻ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ ԵՐԵԿՈՅԻՆ

ԸՍՏ ՈՐՈՒՄ ԱՍԱՑՆ ՅԻՍՈՒՍ, ԹԷ ՕՐԻՆԱԿ ՄԻ ԵՏՈՒ ՁԵԶ.

Զոր արարեալ է Սրբոյն Եփրեմի Խորին Ասորւոյ. զոր եւ Թարգմանեաց սուրբ գլխապետն Հայոց մեծն Գրիգոր Վկայասէր:

Յերեկոյի ոտնալուային զկնի կատարման սուրբ պատարագին, ի տասներորդ ժամուն ժողովին ի դուռն եկեղեցւոյն, յառաջագոյն պատրաստ ունելով զպաս խորհրդական լուացմանն: Եւ դնեն զսուրբ Աւետարանն ի վերայ սեղանոյ առաջի եկեղեցւոյն, եւ զկենսակիր սուրբ նշանն տան ի ձեռս քահանայի միոջ. եւ մոմեղէն երկու ի ձեռս սպասաւորաց: Եւ կացցեն յաջմէ եւ յահեկէ աւագանին՝ հանդերձ մոմեղինօք լուցելովք եւ անուշահոտն խնկովք:

Եւ սարկաւագն քարոզէ: Եւ *եւս խաղաղութեան:* Եւ ապա եպիսկոպոսն եւ կամ քհն այլ ոք ի գլխաւոր երիցանցն իցէ, կամ վանաց երէց, կատարիչ գործոյն, որում հաւատացաւ փառաւոր օրն, ասէ. *Օրհնութիւն և փառք:*

Եւ ասեն հանդերձ բազմութեամբն ողբաձայն՝

Սաղմոս Ծ.

ԿՑ. *Ցօղեա՛ յիս մշտկաւ և սբ եղէց. լուա՛ և քան զձիւն սպիտակ եղէց:*

Փխ. *Ողորմեա ինձ Աստուած՝ ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ:*

Առաւե՛լ լուա զիս յանօրէնութենէ իմմէ. և ի մեղաց իմոց սո՛ւրբ արա զիս:

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ Տէր. և զչար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս ի բանս քո. և յաղթեսցես ի դատելն քո։

Անօրէնութբ̃ յղացայ. և ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու Տր̃ զճշմարտութի̃ սիրեցեր. զանյայտս և զծածկեալս իմաստութբ̃ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա յիս մշտկաւ, և սբ̃ եղէց. լուա, և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի արա ինձ Տէր զցնծութի̃ և զուրախութի. և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց. և զա̃մ անօրէնութի̃ս իմ քաւեա յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա յիս Ա̃Ծ. և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։

Մի ընկենուր զիս Տէր յերեսաց քոց. և զՀոգի քո սբ̃ մի հաներ յինէն։

Տուր ինձ զցնծութի̃ փրկութե̃. և հոգւով պետութե̃ քո հաստատեա զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամպարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա զիս յարենէ Աստուած, Աստուած փրկութեան իմոյ. և ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութի̃ս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս՝ մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ Ա̃Յ հոգի խոնարհ. զսիրտ սբ̃ և զհոգի խոնարհ Ա̃Ծ ոչ արհամարհէ։

Բարի արա Տէր կամօք քովք Սիոնի. և շինեսցին պարիսպքն Երուսաղեմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութե̃. ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս։

Ապա Շարական Ակ։

Այսօր կարգեցաւ օրինակ խոնարհութե̃. ի յուղղութիւն վարուց մերոց։ Այսօր Տէրըն մեր լուանայր զոտս աշակերտացն. և պատուիրէր զայս ասելով։ Մի ոմն ի ձէնջ եղբարք մատնելոց է զիս ի մահ. և որոշի յաշակերտացդ։ Զայն լուեալ Պետրոսի ակնարկէր առ Յովհաննէս հարցանել թէ ով իցէ։ Բանըն զոր ասաց Յս̃ տրտմեցոյց զիւր զաշակերտսն. եւ խռովեցան ամենեքեան։

Ապա սարկաւագն քարոզէ։

Եւ եւս գոհութի̃ և երկրպագութի̃ մատուսցուք Տե̃ն մերոյ և փրկչին Յս̃ի Քս̃ի, որ է ճառագայթ փառաց, և ծագումն էութե̃ անսկզբնական բնութե̃ Հօր։ Որ նոյն ինքն այսօր անբաժանելի գոլով յէական լուսոյն, խոնարհեցոյց զինքն յաղքատ բնութիւս մեր, առեալ զկերպարանս ծառայի. կատարեաց զօրինական փրկագործութիւն, լուաց զոտս աշակերտացն յօրինակ մեզ։ Աղաչեսցուք և խնդրեսցուք ի նմանէ, զի և այժմ խոնարհեսցի մարդասիրութբ̃ն իւրով ի ժողովարանս մեր, և լուացմամբ երեւելի ջրովս այսմիկ՝ շնորհօք սրբեսցէ զաներեւոյթ հոգիս մեր ի մեղաց մերոց։ Ամենակալ Տէր Ա̃Ծ մեր կեցուսցէ և ողորմեսցի։

Եւ ժողովուրդն ասեն է ՃԺ. երեք Տէր ողորմեա։

Եւ ապա եպիսկոպոսն կամ աւագերէցն ասէ զԱղօթս զայս։

Փառաւորեմք զքեզ Տէր մեր և փրկիչ Յս̃ Քս̃ միածին Որդի և բան Հօր, Տէր և արարիչ հրեշտակաց և մարդկան, Ա̃Ծ հուր կիզելոյ. որ և հրեղէն զօրութիւքն զարհուրեալ սարսափին նայել ի պատիւ փառաց ածութեդ քո. ուստի և սերովբէքն թեւասքօղեալ ծածկէին զդէմս իւրեանց՝ անդադար փառաբանութի̃

մատուցանելով առաջի աթոռոյ տէրութեանդ քո։ Դու Տէր և այժմ ի լրման ժամանակի փրկութեան մերում հաճեցար լինել մարդ ի ս̃բ և յանարատ կուսէն Մարիամայ. և ընդ ա̃մ կիրս մարդկութեան անցանելով՝ բաց ի մեղաց, բարձեր զպարտիսն Ադամայ յա̃ծագործ մարմինդ քո, զոր ի մերմէ բնութենէս ընկալար, և զա̃մ կատարեցեր ըստ օրինացն, փրկելով զմեզ յանիծից օրինացն։ Եկիր ի վերնատունն՝ կատարելով և զայն ևս զմովսիսադիր ստուերակերպ օրէնսդրութիւն։ Եւ որ սպասաւորեալ պաշտիս յաննիւթական հրեղինացն, ըստ որում կրկնի քեզ ա̃մ ծունր երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց, այսօր տնօրինական մարդասիրութեամբ խոնարհեցար ի ծունկս քոյոց ս̃բց առաքելոցն. լուացեր զոտս հողեղէնս, և զբարուք և զգեղեցիկ կարգ աւանդելով մեզ։

Եւ արդ Տէր բարերար և բազումողորմ, ոչ և յայնժամ աղդ արարեալ դաստիարակեցեր զմեզ՝ կերպարանակից լինել փրկագործ խոնարհութեան քոյ, շնորհեա և այժմ մեղաւոր ծառայիցս քոց, որք յերեսս անկեալ աղաչեմք զգութ մարդասէր շնորհաց քոց՝ գ.քաւութի մեղաց. ոչ զի օրինակաւ ջրոյս այսորիկ՝ յորս լուանամք զոտս միմեանց՝ և տկար անձամբք մերովք զկեննարար աւանդութիւն քո կատարեմք, հեղցես ի մեզ զամենառատ և զամենազօր շնորհս քո, և մաքրեսցես զմեզ յա̃մ աղտեղութեանց և ի շաղախմանց մեղաց մերոց։ Հեռացո ի մէնջ զա̃մ հպարտութի և զամբարտաւանութի, զոր էած բանսարկուն ի վր̃ տկար բնութեաս մերում պատրանօք իւրովք։ Արժանաւորեա զմեզ մտաց աչօք լուսաւոր ճառագայթիւք նայել ի կենսաբեր տնօրէնութի քո։ Զգեցո մեզ Տէր զճշմարիտ խոնարհութի և զհեզութի և զքաղցրութի, և զսէր քո՝ որ է լրումն օրինաց քոց, զոր կատարեցեր և ուսուցեր մաքրափայլ աշակերտաց քոց. ոչ զի և մեք կատարե-

լով զյիշատակ փրկաւէտ չարչարանաց քոց, ընդ դասս ս̃բց առաքելոցն արժանի լիցուք տօնել զլուսափայլ յարութիւն քո, և ընդ նոսին խոստովանելով զքեզ Քրիստոս Աստուած մեր, փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին. այժմ և։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Դարձեալ երկիր պագանեմք, և փառաւորեմք զքեզ Քս̃ Ա̃ծ մեր, որ եսդ էակից Հօր և համագոյակից ս̃բ Հոգւոյն, որ միշտ փառաւորեալ օրհնիս անդադար սրբասաց ձայնիւ ի հոգեղէն և ի հրեղէն զուարթնոցն անպատմելի և հրաշազարդ գեղապարութեամբ։ Հաճեցար և ի հողեղինացս ընդունել զօրհնաբանութի, որք ի քոյոց ս̃բց առաքելոցն ընկալեալք զաւանդութիւն, և ըստ կարի մերում զվերնոցն բերելով զնմանութի, պար առեալ կամք առաջի քոյոյ տէրութեանդ՝ հանդերձ զգալի անուշահոտութեամբ։ Ընկալ Տէր և զխունկս զայս ի մէնջ մեղաւորացս, զոր մատուցանեմք քեզ ի ժամուս յայսմիկ, որ է յիշատակ խոնարհութեան քո՝ զոր վն̃ մեր կատարեցեր. և լցո զմեզ յանուշահոտութենէ մարմնատիպ ա̃ծութե քոյ՝ զոր վն̃ մեր զգեցար. և ի ձեռն լուացմանս այսորիկ նիւթականի լուա և մաքրեա զաներեւոյթ ոգիս մեր ի թունից մահաբեր վիշապին. և արժանաւորեա զմեզ՝ մաքուր տաճար և օթեվան լինել ս̃բյ Երրորդութեանդ. այժմ և միշտ։

Եւ յետ այսորիկ կատարին գործոյն՝ առեալ ջուր արկանէ ի կոնքն խոյլանման։ Եւ այս կանոն կատարի։

Ասեն յայնի Սաղմոս ԻԸ։

ԿՑ. Ձայն Տեառն ի վերայ ջուրց, և Ա̃ծ փառաց որոտաց. և Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց։

Փխ. Մատուցէք Տեառն՝ որդիք Ա̃յ. մատուցէք Տն̃ զորդիս խոյոց։

Մատուցէք Տն̃ զփառս և զպատիւ. մատուցէք Տն̃

զփառս անուան նր՟. և երկի՛ր պագէք Տ՟ն ի սրահ սրբութե՟ նորա:

Ձայն Տ՟ն ի վ՟ր ջուրց, և Ա՟Ծ փառաց որոտաց. և Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց:

Ձայն Տ՟ն զօրութե՟ց, և ձայն Տ՟ն մեծվայելչութե՟ց:

Ձայն Տ՟ն փշրէ զմայրս. և մանրեսցէ Տէր զմայրսն Լիբանանու:

Մանրեսցէ զն՟ս ո՟չ զմատաղատունկսն Լիբանանու. որ սիրելին է ո՟չ զորդիս միեղջերուի:

Ձայն Տ՟ն հատանէ զբոց ի հրոյ. ձայն Տ՟ն շարժէ զանապատն. և խռովեցուցանէ Տէր զանապատն Կադէս:

Ձայն Տ՟ն հաստատէ զեղջերուս. և յայտնի առնէ զանտառս:

Ի տաճարի նր՟ ամենեքեան ասասցեն փառս նմա:

Տէր զջրհեղեղս զնստուցանէ և ցածուցանէ. թագաւորեսցէ Տէր յաւիտեան:

Տէր զօրութի՟ ժողովրդեան իւրում տացէ. և օրհնեսցէ զժողովուրդ իւր ի խաղաղութի՟:

Ընթերցուած յԵլից: Լ. 17:

Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի և ասէ: Արա՛ աւազան պղնձի և զխարիսխ նորա պղնձի, առ ի լուանալոյ ի նմա. և դիցես զնա ընդ խորանն վկայութեան և ընդ սեղանն. և արկցես ի նա ջուր: Եւ լուասցեն Ահարոն և որդիք նր՟ ի նմանէ զձեռս և զոտս իւրեանց: Յորժամ մտանիցեն ի խորանն վկայութե՟՝ լուասցին ջրով և մի՟ մեռանիցին. կամ յորժամ մերձենայցեն ի սեղանն պաշտել և հանել զողջակէզսն Տ՟ն՝ լուասցեն զձեռս և զոտս իւրեանց, զի մի՟ մեռանիցին: Եւ եղիցի նց՟ օրէն յաւիտենական, նմա և ազգաց նր՟ յետ նորա: 21:

Ընթերցուած յերրորդ Թագաւորութե՟ց: Է. 38:

Եւ արար Քիրամ տասն պուտնարդս պղնձիս. և ունէր պուտնարդ մի քառասուն սափոր. ի չորից կանգնոց

պուտնարդ մի չափով. և պուտնարդ մի ի վ՟ր միոյ մեքենովթայ՝ տասնեցունց մեքենովթացն: Եւ եդ զմեքենովթսն՝ հինգ յուսոյ տանն յաջմէ, և զհինգն յուսոյ տանն ի ձախմէ. և ծովն յուսոյ տանն ընդ աջմէ ընդ արեւելս ի հարաւոյ կողմանէ: Եւ արար Քիրամ զսանսն և զջեռուցիչսն և զտաշտսն. և կատարեաց Քիրամ առնել զամենայն գործն զոր արար արքայի Սողոմոնի ի տանն Տեառն: 40:

Ընթերցուած յերկրորդ Մնացորդաց: Դ. 2:

Եւ արար Սողոմոն զծովն հալածոյ ի տասն կանգնոյ զչափն բոլորակ շուրջանակի. և ի հինգ կանգնոյ զբարձրութի՟. և շուրջանակի յերեսուն կանգնոյ: Եւ նմանութի՟ եզանց ի ներքոյ նր՟, որք շուրջ կային՝ ի տասն կանգնոյ շուրջ պատեալ զնովաւ. և ձուլեցին զզուարակսն ըստ ձուլածոյն իւրեանց: Ո՟չ արարին զն՟ս երկոտասան զուարակս. երեքն հայէին ի հիւսիս, և երեքն հայէին յարեւմուտս, և երեքն հայէին ի հարաւ, և երեքն հայէին յարեւելս. և ծովն ի վ՟ր նց՟. և յետոյքն իւրեանց ի ներքոյ: Եւ թանձրութի՟ ծովուն թզաւ. և շուրթն նր՟ իբրև զշուրթն բաժակի քանդակեալ բոյս շուշանի. և տանէր երիս հազարս չափ: Եւ կատարեաց զնա. և արար աւազանս տասն. և եդ զհինգն յաջմէ, և զհինգն ի ձախմէ լուանալ ի ն՟ս զգործ ողջակիզացն. և ողողել ի ն՟ս. և ծովն առ ի լուանալ ի նմա քահանայիցն զինքեանս: 6:

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ: ԽԴ. 2:

Մի՛ երկնչիր ծառայ իմ Յակոբ և սիրեցեալդ իմ Ի՟էլ՝ զոր ընտրեցի: Զի ես տաց ջուր ի ծարաւ՝ որոց գնան յանջրդւոջ. եդից զոգի իմ ի վ՟ր զաւակի քո, և զօրհնութի՟ս իմ ի վ՟ր որդւոց քոց: Եւ զուարճասցին իբրև զխոտ ջրարբի, և իբրև զուռ ի մէջ ջուրց գնացից: Մին ասիցէ՝ Ա՟Յ եմ ես. և միւսն խրախոյս

բարձցէ յանուն ԱՅ՟ Յակովբայ. և միւսն ևս գիր հանցէ ձեռամբ իւրով՝ թէ ԱՅ՟ եմ ես, և յանուն Իսրայէլի խրախոյս բարձցէ: Այսպէս ասէ Աստուած Թագաւորն Իսրայէլի, որ փրկեացն զնա՝ Աստուած զօրութեանց: 6:

Պետրոսի առաքելոյն ի կաթուղիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս: Գ. 17:

Զի լաւ է բարեգործաց, եթէ կամիցին ըստ ԱՅ՟ կամացն չարչարել՝ քան չարագործացն. զի և Քս՟ մի անգամ վն՟ մեղաց ի վր՟ ձեր մեռաւ, արդարն ի վր՟ անարդարոց. զի զձեզ մերձեցուսցէ առ ԱԾ՟. թէպէտ և մեռաւ մարմնով, այլ կենդանի է հոգւով: Որով և ոգւոցն որ էին ի բանտին՝ երթեալ քարոզեաց՝ երբեմն ապստամբելոցն, յորժամ ներէր նց՟ ԱՅ՟ երկայնմտութիւնն յաւուրս Նոյի, յորս տապանն կազմէր. յոր նուազունք՝ այս ինքն ոգիք իբրեւ ութ ապրեցան ի ջրոցն: Որ և զձեզ ըստ նմին օրինակի կեցուսցէ մկրտութի՟ն. ոչ զմարմնոյ աղտն ի բաց ընկենլով՝ այլ զբարւոք մտացն հանդէս առ ԱԾ՟ ի ձեռն յարութե՟ն Յս՟ի Քս՟ի. որ է ընդ աջմէ ԱՅ՟ երթեալ յերկինս, ի հնազանդել նմա հրեշտակաց և իշխանութե՟ց և զօրութեանց: 22:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս: Ժ. 1:

Ոչ կամիմ եթէ տգէտք իցէք եղբարք, զի հարքն մեր ամենեքին ընդ ամպովն էին. և ամենեքին ընդ ծովն անցին. և ամենեքին ի Մովսէս մկրտեցան՝ յամպն և ի ծովն. և ամենեքին զնոյն հոգեւոր կերակուրն կերան, և ամենեքին զնոյն հոգեւոր ըմպելին արբին, զի ըմպէին ի հոգեւոր վիմէն՝ որ երթայր զհետ նց՟. և վէմն էր ինքն Քս՟: 4:

Յովհաննու առաքելոյն ի կաթուղիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս: Դ. 7:

Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս, զի սէր յԱՅ՟ է. և ամ՟ որ սիրէ՝ յԱՅ՟ է ծնեալ և ճանաչէ զԱԾ՟: Եւ որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զԱԾ՟, զի ԱԾ՟ սէր է: Եւ զի յայսմ երեւեցաւ սէրն ԱՅ՟ ի մեզ, զի զՈրդին իւր միածին առաքեաց յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիք: Յայսմ է սէրն, ոչ զի մեք սիրեցաք զԱԾ՟ այլ զի նա սիրեաց զմեզ. և առաքեաց զՈրդին իւր ի քաւութի՟ մեղաց մերոց: Սիրելիք՝ եթէ ԱԾ՟ այնպէս սիրեաց զմեզ, ապա և մեք պարտիմք զմիմեանս սիրել: ԶԱԾ՟ ուրուք երբէք չէք տեսեալ. եթէ սիրեսցուք զմիմեանս՝ ԱԾ՟ ի մեզ բնակէ, և սէր նր՟ ի մեզ կատարեալ է: Այսուիկ գիտեմք, եթէ մեք ի նմա բնակեալ եմք, և նա ի մեզ, զի ի Հոգւոյն իւրմէ ետ մեզ: Եւ մեք տեսաք և վկայեմք՝ զի Հայր առաքեաց զՈրդին իւր փրկիչ աշխարհի: Որ ոք խոստովանեսցի՝ եթէ Յս՟ է որդի ԱՅ՟, ԱԾ՟ ի նմա բնակէ, և նա յԱԾ՟: Եւ մեք հաւատացաք, և ծանեաք զսէրն ԱՅ՟ զոր ունի առ մեզ: ԱԾ՟ սէր է. և որ կայ ի սէրն՝ բնակեալ է յԱԾ՟ և ԱԾ՟ ի նմա բնակէ: Յայսմիկ կատարեալ է սէրն նր՟ ի մեզ, զի համարձակութի՟ ունիցիմք յաւուրն դատաստանի. զի ոպ՟ և նայն է՝ նոյնպէս և մեք եմք յաշխարհիս յայսմիկ: Երկիւղ ոչ գոյ ի սէր, այլ սէրն կատարեալ ի բաց մերժէ զերկիւղն. զի երկիւղ ընդ տանջանօք է, իսկ որ երկնչին՝ չէ կատարեալ ի սէրն: Մեք սիրեսցուք զԱստուած, վասն զի նա նախ սիրեաց զմեզ: Եթէ ոք ասիցէ՝ եթէ սիրեմ զԱստուած, և զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղբայր իւր՝ զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն տեսեալ՝ զիա՞րդ կարիցէ սիրել: Եւ զայս պատուէր ունիմք առ ի նմանէ, զի որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա և զեղբայր իւր: 21:

Խրատ տուեալ վասն սիրոյ:

Ա՟Ծ սէր է, ասէ որդին որոտման՝ սիրելի աշակերտն Ք՟ի Յովհաննէս. և որ կայ ի սէրն՝ յԱ՟Ծ բնակի, և Ա՟Ծ ի նմա: Եւ արդ եղբարք, լուարուք և ի միտ առէք զճառ սիրոյ: Զի ա՟մ որ սիրէ զԱ՟Ծ՝ սիրէ նա և զեղբայր իւր: Զի սէրն Ա՟Յ՝ սիրով եղբօրն երեւի: Զի թէ զեղբայրն զոր տեսանէ՝ ոչ սիրէ, զԱ՟Ծ զոր ոչն տեսանէ՝ զիա՞րդ կարիցէ սիրել: Այսուիկ ճանաչեմք եթէ սիրեմք զԱ՟Ծ՝ յորժամ սիրեմք զեղբայրն մեր ըստ հոգւոյն սիրոյ և ոչ ըստ մարմնոյ. զի այլ է սէր հոգւոյն, և այլ մարմնոյն. զոր յառաջ գնացեալ ասասցուք յիւրում տեղւոջն: Բայց արդ՝ ա՟մ որ սիրէ՝ ճանաչի յԱ՟Յ, և ինքն ճանաչէ զԱ՟Ծ. և ա՟մ որ ոչ սիրէ զեղբայր իւր ցաւակցաբար՝ օտար է յԱ՟Յ, և զշնորհս ա՟ծային ոչ կարէ ընդունել: Ամենայն որ սիրէ զեղբայր իւր ի ն՟ը սրտէ՝ բնակարան լինի Ա՟Յ, և Ա՟Ծ ի նա բնակէ: Զի ինքն Տէրն սիրեաց զմեզ, և առաքեաց զՀոգին ճշմարտութ՟ն՝ բնակել ի մեզ: Զի իմանալի հոգիս մեր՝ ընդ անիմանալի Հոգւոյն Ա՟Յ սիրով կապակցի: Եւ ո՟ր նա սիրեաց զմեզ, նոյնպէս և ի մէնջ կամի զսէր առ միմեանս: Տե՛ս թէ որչափ համարձակութ՟ի ունի սէրն առ Ա՟Ծ. ո՟ր թէ նման Ա՟Յ առնէ զմարդն. զի Ա՟Ծ սիրովն իւրով նման մարդկան եղեւ. և եցոյց թէ մարդիկ իւրեանց սիրովն նման Ա՟Յ լինելոց են: Զի Ա՟Ծ այնչափ սիրեաց զաշխարհս՝ մինչեւ զՈրդին իւր միածին առաքեաց ի փրկութ՟ի աշխարհի: Եւ թէ մեք սիրեսցուք զմիմեանս, ո՟ր և Ա՟Ծ սիրեաց զմեզ, ոչ ինչ է չար՝ որ խափանէ զսէրն մեր. ա՟մ որ սիրէ՝ յայտնի է առաջի մարդկան, և համարձակ առաջի Ա՟Յ: Զի զերկիւղ ի մեղաց մահու ոչ ունի. այլ սիրովն Ա՟Յ զինեալ կայ, և անմահ յա՟մ երկիւղական վտանգից: Ուր սէր է՝ անդ երկիւղ ոչ է, ո՟ր Յովհաննէս ասէ. Երկիւղ ոչ գոյ ի սէրն. այլ սէր կատարեալ ի բաց մերժէ

զերկիւղ. զի երկիւղն ընդ տանջանօք է, և սէր ի համարձակութ՟ի. և զի երկիւղն հալածի ի սիրոյն. և ուր սէր ոչ է՝ անդ է երկիւղ դատաստանին և ահ կորստեան աւուր մեծի ահեղ ատենին: Իսկ սէրն աներկիւղ առնէ զմարդն յա՟մ տանջանաց. սէր զայն ասեմ, որ ամենեւին հեռի է յերկբայութ՟է. զի երկբայութ՟ի և սէր ի միասին ոչ բնակին: Եւ գիտելի է, զի սէրն ոչ միայն ի կեանսն յաւիտենականս պտղաբերէ զպտուղ խաղաղութ՟ն իւրոյ, այլ եւ յաշխարհիս յայսմիկ զա՟մ թշնամութ՟ի ի բաց հալածէ. զնախանձ և զատելութ՟ի, զոխակալութ՟ի և զչարութ՟ի, զչարախօսութ՟ի և զհայհոյութ՟ի, զտրտունջ և զբամբասանս, զհպարտութ՟ի և զամբարհաւաճութ՟ի: Եւ մանաւանդ՝ զմայրն ա՟մ չարեաց՝ զարծաթսիրութ՟ի և զագահութ՟ի: Արդ՝ որ սէր ունի՝ յայս ա՟մ չարեացս ի բաց հեռանայ, և յերկնային անքոյթ խաղաղական հանգիստն ժամանէ յամենեւին բարին: Զի՞նչ խաղաղական քան զսէրն. ազատ լինել յա՟մ խռովութ՟է, և զա՟ծային հաճոյսն կատարել: Սէրն բանալի է արքայութ՟ն երկնից, և ճանապարհ կենացն յաւիտենից: Սէրն զմարդիկ որդիս Ա՟Յ առնէ, և երկնից արքայութ՟ն ժառանգորդ: Սէրն զապականացու բնութ՟իս անապական գործէ, և զմահկանացուս յանմահութ՟ի գերափոխէ: Սէրն զերկրայինսն երկնայինս առնէ, և զհողեղէնսն հրեղէն կազմէ: Եւ արդ՝ ո՞վ կարէ պատմել զանչափ մեծութ՟ի սիրոյն. զի անճառ և անպատում է. ըստ որում և անեղ բնութ՟ի ա՟ծութեան անքննելի է, այսպէս և բնութ՟ի սիրոյն: Եւ ո՟ր Ա՟Ծ անբաւ է, բայց յամենեսեան մերձ է և բնակեալ է ի հեզս և ի խոնարհս և յայնոսիկ որք դողան ի բանից ն՟ր, այսպէս և սէրն յամենեսին մերձ է՝ որ կամին զնա, և ինքն եկեալ բնակեսցէ ի խնդրողս իւր. քանզի սէրն սիրէ զսիրելիս իւր, և ատէ ոչ՝ զատելիս իւր: Որք խնդրեն զնա՝ մերձ է ի ն՟ա

ծածապէս. զի Ած սէր է, և կամեցող սիրոյ՝ ի մբ սրտէ, և յանկեղծաւոր հաւատոցն:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Տէր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ոչ պակասեսցի:

կամ Պատրաստ արարեր առաջի իմ սեղան. ակն յանդիման նեղչաց իմոց: Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո ող անապակ արբեցոյց զիս:

Զկնի՝ Որթիւ:

Աւետարան ըստ Յովհաննու: ԺԳ. 1:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Յառաջագոյն քան զտօնն զատկի գիտաց Յս թէ հասեալ է ժամ նր՝ զի փոխեսցի յաշխարհէ աստի առ Հայր, սիրեաց զիւրսն որ յաշխարհի աստ էին, ի սպառ սիրեաց զնս: Եւ ի լինել ընթրեացն՝ սատանայի իսկ արկեալ էր ի սիրտ՝ զի մատնեսցէ զնա Յուդա Սիմովնի իսկարիովտացւոյ. գիտաց Յս՝ զի զամ ինչ ետ Հայր ի ձեռս նր, և թէ յԱյ ել և առ Ած երթայ, յառնէ յընթրեաց անտի, և դնէ զհանդերձսն, և առեալ ղենջակ մի՝ սփածաւ: Եւ ապա առեալ ջուր՝ արկ ի կոնք, և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն, և սրբէր ղենջակաւն զոր սփածեալն էր: Գայ առ Սիմովն Պետրոս. և նա ասէ ցնա. Տէր՝ դու զիմ զոտս լուանաս: Պատասխանի ետ նմա Յս և ասէ. զոր ինչ ես գործեմ՝ դու այժմ ոչ գիտես, բայց ապա գիտասցես: Ասէ ցնա Պետրոս. ոչ լուասցես զոտս իմ յաւիտեան: Պատասխանի ետ նմա Յս. եթէ ոչ լուացից զքեզ՝ ոչ ունիս ընդ իս մասն: Ասէ ցնա Սիմովն Պետրոս. Տր՝ մի միայն զոտս իմ, այլ և զձեռս և զգլուխ: Ասէ ցնա Յս. լուացելոյն չէ ինչ պիտոյ՝ բայց զի զոտսն լուանայցէ, քանզի ամենեւին մբ է. և դուք մբ էք, այլ ոչ ամենեքին: Զի գիտէր զայն որ մատնելոցն էր զնա. վասն այնորիկ ասաց՝ թէ ոչ ամենեքին մբ էք: 11:

Զկնի Հաւատոյ կամ Սուրբ Աստուածն Քարոզն եղանակաւ:

Ըստ մեծ և սքանչելագործ զօրութեան. անեղանելի բընութեան. որ ողորմութեամբ հաճեցար առնել զարարածս քո. աղաչեմք: Լուր Տէր և ողորմեա:

Զըգեցեր ըզվերնայարկս երկնից որպէս խորան. ի վերայ ջուրցն մածուցեալ հաստատութեան. ի բնակութեան անպարագրելի աստուածութեանդ քո. եւ զամենայն հրաշակերտս ի գովեստ անուանդ քում սրբոյ. աղաչեմք: Լուր Տէր և ող:

Արարեր քեզ սրբասացս ըզսերովբէսն և ըզքերովբէսն. ըզհոգեղէնս և ըզհրեղէն աննիւթական բընութիւնս. ընդ նոսին և ի հողեղինացս հաճեցար ընդունել փառաբանիչս և երկրպագուս ամենազօր տէրութեանդ քո. աղաչեմք: Լուր Տէր և ող:

Եղեր մարդ ճշմարիտ անճառելի ծննդեամբ. և ճառագայթ անհասանելի անիմանալի էութեանդ Հօր. եւ եկիր ի փրկութիւն մեզ մարդասէր. աղաչեմք: Լուր Տէր և ող:

Եղեր լրումն օրինաց եւ մարգարէից. և եկիր կամաւ ի վերնատունն խորհրդոյ. լուացեր զոտս աշակերտաց քոց անճառելի խոնարհութեամբդ քո. աղաչեմք: Լուր Տէր և ող:

Ընկալ Տէր և այժմ ըզլուացմունս զոր աւանդեցեր մեզ ի յօրինակ խոնարհութեան. բարեխօսութեամբ սրբուհւոյ մօր քո և միշտ կուսին Մարիամու Աստուածածնին. աղաչեմք: Լուր Տէր և ող:

Աղաչանօք երջանիկ և նախընթաց կարապետին քո և մկրտչին Յովհաննու ճգնաւորական հանդիսիւ. հեղմամբ արեան սրբոյն Ստեփանոսի նախասարկաւագին քո և առաջին վկային. մաղթանօք ընտրելոց քոց

առաքելոց ընդ անձանց մարտիրոսացն պսակելոց ի քէն. աղաչեմք: Լուր Տէր և ող:

Եւ ես առաւել զյորդորումն սիրոյ եւ ըզգործս բարեաց պարգեւել մեզ խնդրեմք:

Տուր մեզ Տէր Աստուած մեր:

Զանձինս մեր եւ ըզմիմեանս Տն̃ Այ̃ ամենա:

Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի:

Տր̃ ողորմեա. Տր̃ ողորմեա. լուր Տէր եւ ողորմեա:

Եւ [illegible] [illegible] [illegible]. Զահեղ զանքննին. Եւ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. Ածն ամենի:

Եւ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ի [illegible] [illegible]:

Տէր մեր Յս̃ Քս̃ Ած̃ սքանչելագործ, հզօր և փառաւորեալ. անհասանելի, անիմանալի, վերացեալ բարձրացեալ քան զամ̃ փառս. որ նստիս ի քրովբէական կառս և մի ի մէջ Երրորդութեանդ դաւանիս ի վերնական սրբասաց սերովբէից. վն̃ որոյ և զերեքսրբեան փառաբանութի̃ ընդ Հօր և սբ̃ Հոգւոյն՝ հրեղէն բերանօքն իւրեանց սոսկալի ձայնիւ սարսափելով առաջի փառաց աթոռոյ մծութեանդ քո մատուցանէին քեզ, լի ասելով զամ̃ երկիր փառօք քո: Դու Տր̃ յաղթեալ ի մարդասիրութենէդ քումմէ՝ ոչ կարացեր անտես առնել զարարածս քո զ՚ի հողոյ ստեղծեալքս. այլ հաճեցար և ի մերմէ բնութենէս փառաւորել, խառնելով զհողեղէն ստորեւ կացեալքս ընդ վերնական հոգեղէն և հրեղէն աննիւթական բնութիւնս: Եկիր յաշխարհս կամաւ Հօր և սբ̃ Հոգւոյն. առեր զկերպարանս ծառայի ի սբ̃ և յանշաղաղ կուսէն Մարիամայ. և ճշմարիտ Բանդ Հօր մարմին եղեալ՝ անեղծ և անապական նոր և անճառելի խառնմամբ, և կատարելով զամ̃ ստուերական օրէնսն, եղեր լրումն օրինաց և մարգարէից. ճշմարիտ օրէնսդիր Ած̃ իմ Յս̃ Քս̃: Եւ ի լըման

ամի՝ եկիր ի վերնատունն խորհրդոյ, կատարեցեր և զայն եւս մովսիսադիր ստուեր զատկազէն նորոյ փրկագործութեան խորհուրդ, որ նախ յԵգիպտոս նկարեցաւ: Եւ դու ինքնին քահանայապետ սբ̃՝ կատարիչ խորհրդոյ, և գառն Այ̃՝ որ մշտնջենաւոր բառնաս զմեղս աշխարհի, միանգամ պատարագաւն հատեր զմարմինդ սիրով. բաշխելով քոյոց ընտրեալ աշակերտացն. և հրամայեցեր նց̃ զկամաւոր չարչարանս քո որ վն̃ մեր, և զմահդ պատմել մինչեւ ի միւսանգամ քո յերկրորդ և ի փառաւոր գալուստն: Բայց նախ քան զայսոսիկ անճառելի խոնարհութբ̃ ի բաց եդեալ զհանդերձս՝ զգեցար զենջակ, որ զգեցեալ էիր զլոյս որպ̃ զօթոց. և տնօրինաբար ներմարդութբ̃ խոնարհեցար ի ծունկս աշակերտացն՝ առ ի լուանալ զոտս հողեղէնս, որում կրկնի ծունր երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. և զկատարեալ խոնարհութիւնդ յայտնապէս ուսուցեր և աւանդեցեր ասելով, թէ Օրինակ մի ետու ձեզ. զի որպ̃ ես ձեզ արարի, և դուք միմեանց առնիջիք:

Եւ արդ Տէր բարերար, մեք ծառայքս քո և խաշն արօտի քոյ՝ ժողովեալքս ի գաւիթ սբ̃ եկեղեցւոյ քոյ ըստ ածային օրէնսդրութեանդ, զոր աւանդեցեր մեզ ի ձեռն սբ̃ առաքելոցն, աղաչեմք զքեզ, առաքեա զէակիցդ քո և զփառակից ծնողիդ քոյ՝ զՀոգիդ սբ̃ յարքունական աթոռոյդ, որ եկեալ հանգիցէ ի ժողովարանս մեր. և սրբեսցէ զմեզ ի մեղաց մերոց, և զընթացս ամ̃ բարեաց ճանապարհաց. զի սովաւ զօրացուցեալ զգարշապարս մեր՝ անխափան ընթասցուք խաչազգեստեալք ի յաւիտենական ճանապարհս պատուիրանաց քոց. և արժանի լիցուք հասանել ի մասն ժառանգութե̃ սբ̃ցն ի լոյս. և գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսբ̃ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Աստուծոյ երկրպագեսցուք:

Դարձեալ երկիր պագանեմք, և աղաչեմք զամենագութ ողորմութիւնդ քո, քաւեա զաղտ և զանօրէնութիւն ոգւոց մերոց օրինակաւ ջրոյս այսորիկ. որ և յաւուրսն Նոյի զանօրէնութիւն ամ երկրի՝ ջրովն հեղեղաւ. և որ զբռնութիւն նեեման Ասորւոյ՝ ի ձեռն Յորդանանու, և որ զղանաղան ախտսն՝ ի ձեռն յուզման ջուրցն Սելովամայ, և որ զմեղս ամ աշխարհի ի ձեռն աւազանին վերստին ծննդեան: Եւ որ յայնժամ հաստատելով զճշմարիտ մարդեղութիւնդ քո՝ անօրինաբար խոնարհեցար, և լուացեր զոտս երանելի առաքելոց քոց, զօրացուցանելով զգարշապարսն յընթացս աւետարանի քո ընդ ամ տիեզերս. այլ և կոխել զզօրութիւն թշնամւոյն աներկիւղ համարձակութբ. այսպէս ի մեզ հրաշագործեա մարդասէր Տր՝ ի ձեռն աներեւոյթ գալստեան քո ի ժողովարանս մեր. որ զի և մեք զօրացեալք ի շնորհաց քոց՝ անխափան ընթասցուք ի շաւիղս պատուիրանաց քոց. որով և փրկութեան արժանաւորեսցուք հասանել ընդ ամ սբս քո. և գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍբ Հոգին. այժմ և միշտ և:

Եւ յաւարտ աղօթիցս դրոշմեսցէ խաչիւ եւ աւետարանաւ զջուրն՝ երիցս անգամ. ասելով՝

Օրհնեսցի եւ սրբեսցի ջուրս այս նշանաւ սբ խաչիս և սբ աւետարանիս և աւուրս շնորհիւ. յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Եւ ժողովուրդքն միաբան ասեն:

Ամէն. ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Ապա Քարոզ. Սբ խաչիւս: Աղօթք. Պահպանեա:

Եւ ապա այնուհետեւ զգեցուցանեն զեպիսկոպոսն կամ զաւագերէցն, եւ երկուս ի գլխաւոր երիցանցն եւ ի պատուաւոր

ծերոցն: Եւ առեալ զընծայս, եւ նստեալ լուացեն կարգաւ զոտս ամենեցուն ի միջամիջոց մինչեւ ցփոխումն, եւ օրհնեսցեն զընծայսն զոր ածեալ են:

Եւ այնքան պար առեալ յայսկոյս եւ յայնկոյս անուշահոտ խնկովք եւ մոմեղինօք լուցելովք, երգեն քաղցր ձայնիւ Շարական Գ.Զ. Վերաձգողն երկնից. (տես եր. 254.) զամեն շարականքն ի լման ասեն: Եւ զԱյսօր անճառն այլեւ զՆորոգողն, եւ այլ որոց եւ կամին զխորհրդաւոր շարականքն, մինչեւ վճարի ոտից լուացումն:

Եւ լուացեալքն կարգ ըստ կարգէ երկրպագեն սուրբ խաչին. եւ համբուրեն զաւետարանն եւ զաջ եպիսկոպոսին կամ քահանային լուացողի:

Եւ յորժամ ամենայն կատարումն առցէ՝ երգն եւ լուացումն, նստի եպիսկոպոսն վերամբարձ յաթոռ, եւ ասեն. Որթին. եւ ընթերցուն աւետարանն կարդան:

Աւետարան ըստ Յովհաննու: ԺԳ. 12:

Տէրն մեր Յս Քս

Եւ յորժամ լուաց զոտս նց՝ առ զհանդերձսն իւր և դարձեալ բազմեցաւ, և ասէ ցնս. գիտէք զինչ արարի ձեզ: Դուք կոչէք զիս վարդապետ և տէր. և բարւոք ասէք, քանզի եմ իսկ: Իսկ արդ՝ եթէ ես լուացի զոտս ձեր՝ տէրս և վարդապետս, և դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ: Զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, և դուք առնիջիք: 15:

Ապա սարկաւագն քարոզէ:

Եւ եւս միաբան ամենեքեան գոհացարուք զանհասանելի և զանճառելի մարդասիրութն Տռն մերոյ Յսի Քսի, որ այսօր նորոգեաց ի մեզ զսահման պատուիրանի իւրոյ, տալով մեզ առհաւատչեայ պարգեւս թողութեան մեղաց՝ սբյ աւազանին մաքրութն: Աղաչեսցուք և խնդրեսցուք ի նմանէ, զի արժանաւորեսցէ զմեզ արթնութբ և զգաստութբ հաղորդ լինել չարչարա-

նաց նր՝ առ ի հանդիպումն լուսոյ փառաւոր յարութեն իւրոյ: Ամենակալ Տէր Աձ մեր կեցուսցէ և ողորմեսցի:

Եւ ժողովուրդն ասէ:

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

Եւ եպիսկոպոսն կամ քահանայն ասէ զԱղօթս:

Տէր Աձ մեր, որ ըստ բազում սքանչելագործ մարդասիրութեան քո ոչ անարժան համարեցար լուանալ զոտս աշակերտաց քոց. զի խոնարհութք ուսուցեր բարձրանալ այնոցիկ՝ որք գան զհետ հրամանաց քոց Տէր. դու նոյն ինքն փրկիչ աշխարհի և այժմ նորոգեա ի մեզ զսահման պատուիրանի քո, և երեւելի ջրովս այսորիկ լուացմամբ շնորհեա մեզ զսրբութի Հոգւոյդ սբյ. պարգևեա զմեզ ի հոգի և ի մարմին՝ յամ սատանայական ներգործութեց, զի դու ես Թագաւոր մեր, և անուն քո կոչեցեալ է ի վր մեր: Վն որոյ քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս Հօր և ամենասուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Աստուծոյ երկրպագեսցուք:

Ողորմած, քաղցր, հովիւ բարի և մարդասէր Տէր մեր Յս Քս, որ կամաւորաբար յանձն առեր դնել զանձն քո ի վր բանաւոր հօտի քոյ. որ կամաւ Հօր և սբ Հոգւոյն եկիր ի խնդիր մոլորեալ ոչխարի քո. որ զմոլորեալսն գտեր, և զվիրաւորեալսն բժշկեցեր հոգւով և ջրով նը աւազանին լուացմամբ. անապական մարմնոյ և արեան քո ճաշակմամբ: Վն որոյ և այսօր տնօրինական ներմարդութբ զերկուս փրկագործութիւնս մեր անճառելի խոնարհութբ սկիզբն արարեալ կատարեցեր ի նը վերնատանն՝ լուանալով զոտս աշակերտաց քոց, բաշխելով ի նն զկենդանարար մարմին քո և զարիւն. և զնոյն յիշատակ կամաւոր չարչարանաց քոց նոքօք աւանդեցեր ամ հաւատացելոց քոց՝ կատարել մինչեւ յերկրորդ գալուստն քո: Եւ արդ Տէր

բարերար՝ մեք մեղուցեալ ծառայքս քո ըստ կարի տկարութե մերում՝ զօրէնս քո յանդ հանեալ՝ աղաչեմք զշնորհս ողորմութե քոյ: Հովուեա զբանաւոր հօտս քո յարօտս կենդանարար աւետարանական վարդապետութե քո: Հանգո զմեզ ի ջուրս աւազանի քո, առ ի յորդեգրութի երկնաւոր Հօր քո: Արբո զմեզ ի յուղխս փափկութե անապական արեան քո՝ զոր վն մեր հեղեր: Տուր մեզ զկենդանարար մարմինդ քո, որ է հաց կենաց իջեալ յերկնից և աշխարհի կեանս պարգեւէ: Առաջնորդեա մեզ ի շաւիղս պատուիրանաց քոց՝ առաջնորդական Հոգւովդ քով սրբով: Տուր պահապան երկիւղածաց քոց զբանակս հրեշտակաց քոց, ամրացուցանելով շուրջանակի զհոգի և զմարմին մեր ի մեքենայից բանսարկուին: Տուր մեզ իմաստութի ճառագայթեալ հոգւով ելանել ընդ քեզ յաղօթս ի նը լեառն ձիթենեաց, առ ի կցորդութի կամաւոր չարչարանաց քոց: Շնորհեա մեզ Տէր զզջումն արտասուաց ընդ երանելւոյն Պետրոսի, առ ի լուացումն մեղաց մերոց: Արժանաւորեա զմեզ մաքուր հոգւով հանդիպել քեզ ի փառաւոր և ի միւսանգամ գալստեանդ քո, և ընդ ամ սբս քո յարագուարձ բերկրանօք ուրախութբ օրհնել գովել և փառաւորել զամենասուրբ զԵրրորդութիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Զկնի աղօթիցն ասի տաղ. Հասեալ հրեշտակաց: Փոխ. Ընդ երեկոյս հասեալ ժամ:

Յառաջիկն քարոզ. Խնդրեսցուք: Կեցո յայնժ.: Աղօթ. Թագաւոր խաղաղութեան:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր որ:

Եւ արձակէն:

ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ, ԴՋ.

Ի ԳԻՇԵՐԻՆ

Հսկումն է։ Եւ է կարգաւորութիւն սաղմոսին՝ առ կանոնա-
գլուխ ԴՋ. Օրհնեա անձն իմ զՏէր։

Հետեւակ շարական։ ԴՋ։

Այսօր ի կատարումն ծածկելոյն ընտրեցաւ Նոր ուխտի ճշմարտութեան քո. ի վերնատունն խորհրդոց տարամերժեալ Յուդաս ի հօտէն փրկչին. ուստի եւ դու գառն Աստուծոյ. դիմեալ կամաւ ի մահ խաչին առ ի բառնալ զմեղս աշխարհի. * վասն որոյ խնայեա ի մեզ Քս կամաւոր քո չարչարանօք։ Այսօր որ ի հրեղէն զօրաց երկնից միշտ փառաբանեալ երկրպագիս Բանդ. աղօթէիր առ Հայր մարմնով ընկալեալ ընդ Հօր ըզքո վն իմ զպաղատանս. ուստի կամաւ կրելով զերկիւղ. ի հրեշտակաց զօրանայիր զօրացուցիչդ երկնաւորաց եւ երկրաւորաց. վասն որոյ խնայեա։ Այսօր յառաջ նշանակեալ հրամանն քո կատարիւր յաշակերտաց դասն. քանզի զհովիւդ քաջ հարեալ ցրուեցաւ հօտն ըստ մարգարէին. որ եւ կապեցար անկապելիդ. ի յԱննայէ եւ ի Կայիափայ դատապարտեալ. ի ծառայէ ապտակեցար եւ նախատանաց թուք կերպարանդ Հօր ընկալար. վն որոյ խնայ։ Այսօր ըզվէմն հաւատոյ շարժեալ փորձողին խաբէութեն մարտ. առ ի քէն թողացուցեալ ըզմարդկային տըկարութիւնս յանդիմանելով. եւ առ յոյս դարձի մեղաւորաց. որ դառնապէս արտասուելովն ընկալաւ ի քէն երիւք հարցմամբ սիրոյն զերից ուրացութեանցն

ըզբժշկութիւն. ընդ նմին բժշկեա զմեզ Քս եւ շնորհեա մեզ արտասուս ապաշխարութեան։

† Այսօր զոր երկնային լուսեղինացն ահիւ պատուեալ Բանդ Այ. նսեմացեալ դասք Եբրայեցւոցն. զիմանալին զլոյսդ ի գիշերի ջահիւք եւ սուսերօք եկեալ ըմբռնել զանըմբռնելիդ. * վասն որոյ երկրպագեմք անճառելի քո խոնարհութեանդ։ Այսօր զոր սերովբէքն ծածկէին զդէմս յահէ փառաց աստուածութեանդ. իսկ կորստեան որդին Յուդաս. ի համբոյր մերձեալ նենգութեամբ. նշանակ եւ առիթ մահու մատնէիրդ. վն որոյ երկիր։ Այսօր ընդ գերագոյն տնօրէնութիւնդ քո Որդի Աստուծոյ. հոյլք անմարմնոցն հրաբուն սեռիցն. պակուցեալ զարմանային. տեսանելով զանտեսանելիդ մատնեալ կամաւ ի ձեռս մեղաւորաց. վն որոյ երկրպա։ Այսօր բարեկամք եւ մերձաւորք քո հեռի եղեն ի քէն Քս. օտարացան եւ եղբարք քո. եւ ցուլք գէրք պաշարեցին որք ի դըպրաց եւ ի փարիսեցւոց. եւ շուրջ եղեն շունք բազումք զինուորք Պիղատոսի եւ Հերովդէի. վասն որոյ երկրպագ։

Եւ եւս խաղաղ։ Օրհնութիւն Ե։

Եւ ապա լուցանեն ջահս եւ երկոտասան մոմեղէնս ի վերայ սեղանոյն յաջակոյս եւ յահեկոյս, եւ մոմեղէն մի մեծ ի մէջ։

Եւ դնեն զխաչն, եւ զսուրբ Աւետարանն ի վերայ. եւ զսաղմոսարանն. եւ ասեն երկու ժամանակ սաղմոս Գ. Գ. փոխ։ Եւ ընթեռնուն Զ. փոխ Աւետարան։

Առաջին փոխ։ Սաղմոս Բ։

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. եւ ժողովուրդք խորհեցան ի սնոտիս։

Յանդիման եղեն թագաւորք երկրի. եւ իշխանք ժողովեցան ի միասին, վն Տռն եւ վն օծելոյ նր։

Խզեսցուք զկապանս նց՟. և ընկեսցուք ի մէնջ զլուծ նց՟։

Բնակեալն յերկինս ծիծաղեսցի զնոքօք, եւ Տէր ար-
համարհեսցէ զնս՟։

Յայնժամ խօսեսցի ընդ նոսա բարկութբ՟ իւրով. եւ
սրտմտութբ՟ իւրով խռովեցուսցէ զնս՟։

Ես կացի թագաւոր ի նմանէ, ի վր՟ Սիովնի լերին
սբյ՟ նր՟, ի պատմել ինձ զհրամանս Տն՟։

Տր՟ ասաց ցիս որդի իմ ես դու. և ես այսօր ծնայ զքեզ։
խնդրեա՛ յինէն. և տաց քեզ զհեթանոսս ի ժառան-
գութի՟, և իշխանութի՟ քեզ զա՟մ ծագս երկրի։

Հովուեսցես զնոսա գաւազանաւ երկաթեաւ. որպէս
զանօթ բրտի փշրեսցես զնոսա։

Արդ՝ թագաւորք զայս ի միտ առէք. խրատեցարո՛ւք
ամենեքեան, ոյք դատիք զերկիր։

Ծառայեցէք Տն՟ երկիւղիւ. և ցնծացէք առաջի նորա
դողութեամբ։

Ընկալարո՛ւք զխրատ նորա, զի մի՛ բարկասցի Տէր. և
կորնչիցիք ի ճանապարհացն արդարութեան։

Ի ժամանակի, ո՟ր բորբոքեսցի բարկութի՟ նորա։

Երանի՛ ամենեցուն՝ որ յուսացեալ են ի Տէր։

Սաղմոս Գ։

Տէր, զի՞ բազում եղեն նեղիչք իմ. բազումք յա-
րեան ի վերայ իմ։

Բազումք ասէին զանձնէ իմմէ. թէ չիք փրկութիւն
նորա առ Աստուած իւր։

Այլ դու Տէր օգնական իմ ես. փառք իմ և բար-
ձրացուցիչ գլխոյ իմոյ։

Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի. և լուաւ ինձ ի
լեռնէ սրբոյ իւրմէ։

Ես ննջեցի և ի քուն եղէ. զարթեայ, և Տէր ընդու-
նելի իմ է։

Ոչ երկեայց ես ի բիւրուց զօրաց նոցա. որ շուրջա-
նակի պատեալ պահեալ պաշարէին զիս։

Արի՛ Տէր, և փրկեա՛ զիս ԱԾ՟ իմ. զի դու հարեր
զամենեսեան, ոյք էին ընդ իս թշնամութբ՟ ի տարա-
պարտուց. զատամունս մեղաւորաց փշրեսցես։

Տն՟ է փրկութի՟. ի վր՟ ժողովրդեան քո օրհնութի՟ քո։

Սաղմոս Դ։

Ի կարդալ իմում լուաւ ինձ Աստուած ըստ ար-
դարութեան. ի նեղութեան ինձ անդորր արարեր. ո-
ղորմեա՛ ինձ, և լո՛ւր աղօթից իմոց։

Որդիք մարդկան մինչեւ յե՞րբ էք խստասիրտք. ընդ-
է՞ր սիրէք զնանրութի՟, և խնդրէք զստութիւն։

Ծանիրո՛ւք զի սքանչելիս արար Տէր սբյ՟ իւրում. և
Տէր լուիցէ ինձ ի կարդալ իմում առ նա։

Բարկանայք և մի՛ մեղանչէք. զոր ինչ ասէք ի սիրտս
ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք։

Մատուցէք պատարագս արդարութեան. և յուսա-
ցարո՛ւք ի Տէր։

Բազումք ասէին՝ թէ ո՞ ցուցցէ մեզ զբարութի՟ Տն՟.
նշանեցաւ ի մեզ լոյս երեսաց քոց. և ետուր ուրա-
խութիւն սրտից մերոց։

Ի պտղոյ ցորենոյ, գինւոյ, և ձիթոյ իւրեանց լցուցեր
զնոսա։

Խաղաղութբ՟ յայս և ի սոյն ննջեսցուք և զարթիցուք.
զի դու Տէր միայն առանձին յուսով քով բնակե-
ցուցեր զմեզ։

Եւ ասէն եղանակէն Յայնժամ կցուրդ։

Իշխանք ժողովեցան ի միասին. վասն Տն՟ և
վասն օծելոյ նորա։ Երեք անգամ ասեն, եւ զկէսքն բարձր։

Ապա Երգ Տեառն Ներբողեան. Դկ։

Այսօր անճառ լուսոյն ծագումն ի փրկութեան
մեր կատարումն. խոնարհի ի վերնատունն ի ստուե-
րական տօնից լրումն. նախ քան զընթրիսն խոր-
հրդոյ սփածանէ զենջակ արկողն լուսոյ. և ջուր ա-
ռեալ ծառայաբար զոտս լուանայ զաշակերտացն։

Բանին Հօր փառաց լուսոյ Պետրոս մերձիլ յոտս ոչ ներէր. այնրմ ձեռաց որոյ են գործք երկնից երկինք և երկրաւորք. որով կուրաց աչք բացան խուլք և համերք արձակեցան. որ վերածեաց զինքն ի ծովին սաստեաց ալեացն և լռեցին:

Գըլխոյն ընտրեալ հօտին փոքու սաստէր զխորհուրդն ոչ գիտելոյ. որով դառնայր և հնազանդէր զոտս և ըզգլուխս մաքրել մաղթէր. գլխոյս ասէ չէ ինչ պիտոյ լուացումն ջրոյ զի լուացեալ է. ոտիցդ պէտք են մաքրութն յօդիլ ի գլուխըս սրբութեամբ:

Դասուց իւրոց աշակերտաց զոր նախ բանիւ վարդապետեաց. այսօր գործով ըզծայրագոյնն եցոյց յինքեան զխոնարհութի. սպասաւորեալ հողեղինաց այն որ անհաս է հրեղինաց. տարեալ պաշտօն իւր ծառայիցն այն որ պաշտին ի սրովբէից:

Եթէ Տէրս՝ ասէ՝ էից և վարդապետըս բոլորից. զաշակերտացդ և զծառայից զոտըս լուացի ի հնոյ աշտից. միմեանց և դուք համարձակութբ ցուցէք ըզնոյն խոնարհութի. բարձրացելոյն ի կործանումն և անկելոյ բնութեանդ կանգնումն:

Զոր մաքրեցեր յաւազանին մաքուր ձեռօք զոտըս նոցին. և ուսուցեր խոնարհութբ յաղթող լինել չար հըպարտին. և զիմ լուա զտիղմն մեղաց աղաչանօք սրբոյ գընդին. և ըզգընացս ուղղեա զոտին խոնարհութբ ելիւք յերկինս:

Ապա յառաջբերեալ պատէն՝ Ո՛րթն:

Աւետարան ըստ Յովհաննու: ԺԳ. 16:

Տէրն մեր Յն Քրիստոս ասէ.

Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր. և ոչ առաքեալ՝ մեծ քան զայն որ առաքեացն զնա: Եթէ զայս գիտէք՝ երանելի եւս էք եթէ առնիցէք զայս: Ոչ վն ամենեցուն ձեր ասեմ. զի ես գիտեմ զորս ընտրեցի. այլ զի լցցի գիրն՝ թէ Որ ուտէր ընդ

իս հաց՝ արար ինձ խաբէութի: Յայսմ հետէ իսկ ասեմ ձեզ մինչ չեւ եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք թէ ես եմ: Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ընդունի զոր ոք ես առաքեցից՝ զիս ընդունի. և որ զիս ընդունի՝ ընդունի զայն որ առաքեացն զիս: Զայս իբրեւ ասաց Յիսուս՝ խռովեցաւ յոգի իւր, վկայեաց և ասէ. ամէն ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս: Հայէին ընդ միմեանս աշակերտքն տարակուսեալք՝ թէ զումէ ասիցէ: Եւ էր մի ոմն յաշակերտացն բազմեալ առ Յիսուսիւ, զոր սիրէրն Յիսուս: Ակնարկէ նմա Սիմովն Պետրոս՝ հարցանել ո՛վ իցէ վասն որոյ ասէն: Եւ նա անկեալ զլանջօքն Յիսուսի՝ ասէ ցնա. Տէր, ո՞վ է: Պատասխանի ետ Յիսուս և ասէ. այն է՝ որում ես թացից զպատառն և տաց. և թացեալ զպատառն՝ տայ Յուդայի Սկարիովտացւոյ: Եւ յետ պատառոյն ապա եմուտ ի նա սատանայ. և ասէ ցնա Յն. արդ՝ զոր ինչ առնելոց ես՝ արա՛ վաղվաղակի: Եւ զայս ոչ ոք իմացաւ ի բազմականաց անտի, թէ առ ինչ ասաց ցնա: Զի ոմանք համարէին, թէ զի զարկղն ունէր Յուդա, ասաց նմա Յն, գնեա՛ ինչ որ պիտոյ իցէ մեզ ի տօնիս, և կամ զի աղքատաց ինչ տացէ: Իսկ նորա առեալ զպատառն՝ ել արտաքս վաղվաղակի. և էր գիշեր: Եւ իբրեւ ել, ասէ Յիսուս. այժմ փառաւորեցաւ որդի մարդոյ, և Ած փառաւորեցաւ ի նմա: Զի եթէ Ած փառաւորեցաւ ի նմա, և Ած փառաւորեսցէ զնա յանձն իւր, և վաղվաղակի փառաւորեսցէ զնա: Որդեակք իմ, փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրիցէք զիս, և որպէս ասացի ցհրեայսն, եթէ ուր ես երթամ՝ դուք ոչ կարէք գալ, և արդ ձեզ ասեմ: Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս. որպէս սիրեցի ես զձեզ, զի և դուք սիրեսջիք զմիմեանս: Յայսմ գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս: Ասէ ցնա Սիմովն Պետրոս. Տէր,

յո՞վ երթաս։ Պատասխանի ետ Յս՟, ուր ես երթամ՝ դու ոչ կարես այժմ գալ զկնի իմ, բայց ապա եկեսցես զկնի իմ։ Ասէ ցնա Պետրոս. Տէ՛ր, ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ այժմ զկնի քո. արդէն զանձն իմ իսկ եդից ի վ՟ր քո։ Պատասխանի ետ Յս՟. զա՞նձն քո դիցես ի վ՟ր իմ. ամէն ամէն ասեմ քեզ. չեւ իցէ հաւու խօսեալ՝ մինչ դու երիցս ուրասցիս զիս։ Մի՛ խռովեսցին սիրտք ձեր. այլ հաւատացէք յԱծ՟, և յիս հաւատացէք։ Ի տան Հօր իմոյ օթեւանք բազում են. ապա թէ ոչ ասացեալ էր իմ ձեզ, թէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի։ Եւ եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ և առնում զձեզ առ իս. զի ուր ես իցեմ՝ և դուք անդ իցէք։ Եւ ուր երթամն գիտիցէք, և զճանապարհն գիտիցէք։ Ասէ ցնա Թովմաս. Տէ՛ր, ոչ գիտեմք յո՛ երթաս, և զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել։ Ասէ ցնա Յս՟. ես եմ ճանապարհ և ճշմարտութի՟ւն և կեանք. ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինեւ։ Եթէ զիս գիտէիք՝ ապա և զՀայրն իմ գիտէիք, և այսուհետեւ գիտասջիք զնա։ Ասէ ցնա Փիլիպպոս. Տէ՛ր, ցո՛յց մեզ զՀայր՝ և շատ է մեզ։ Ասէ ցնա Յս՟. այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, եւ ո՞չ ծանեար զիս Փի՛լիպպէ. որ ետես զիս՝ ետես զՀայրն. և դու զիա՞րդ ասես՝ եթէ ցո՛յց մեզ զՀայր։ Ո՞չ հաւատաս՝ եթէ ես ի Հայր, և Հայր յիս է. զբանս զոր ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն որ յիս բնակեալ է՝ նա գործէ զգործսն։ Հաւատա՞յք ինձ, եթէ ես ի Հայր՝ և Հայր յիս։ Ապա թէ ոչ՝ գոնէ վ՟ն գործոցն հաւատացէք ինձ։ Ամէն ամէն ասեմ ձեզ, թէ որ հաւատայն յիս՝ զգործսն զոր ես գործեմ՝ և նա գործեսցէ, և մեծամեծս ևս քան զնոյնս գործեսցէ. զի ես առ Հայր երթամ։ Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ՝ արարից զայն. զի փառաւորեսցի Հայր յՈրդի։ Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս

իմ պահեսջիք։ Եւ ես աղաչեցից զՀայր, և ա՛յլ մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցէ յաւիտեան. զՀոգին ճշմարտութե՟ան, զոր աշխարհս ոչ կարէ ընդունել. զի ոչ տեսանէ զնա և ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցէ և ընդ ձեզ եղիցի։ Ոչ թողից զձեզ որբս. գամ առ ձեզ։ Փոքր միւս եւս՝ և աշխարհս ոչ եւս տեսանէ զիս, բայց դուք տեսանիցէք զիս. զի ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք։ Յայնմ աւուր գիտասջիք դուք, զի ես ի Հօր իմում՝ և դուք յիս՝ և ես ի ձեզ։ Որ ունի զպատուիրանս իմ և պահէ զնս՟՝ նա է որ սիրէ զիս. և որ սիրէն զիս՝ սիրեսցի ի Հօրէ իմմէ. և ես սիրեցից զնա, և երեւեցուցից նմա զիս։ Ասէ ցնա Յուդա՝ ոչ Սկարիովտացին. Տէ՛ր՝ զի՞ եղեւ՝ զի մեզ յայտնելոց ես զքեզ՝ և ոչ աշխարհի։ Պատասխանի ետ Յս՟ և ասէ ցնա. եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ, և Հայր իմ սիրեսցէ զնա. և առ նա եկեսցուք, և օթեւանս առ նմա արասցուք. և որ ոչն սիրէ զիս՝ զբանս իմ ոչ պահէ. և բանն իմ զոր լսէք՝ ոչ է իմ, այլ Հօրն որ առաքեացն զիս։ Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ ձեզս եմ։ Իսկ մխիթարիչն Հոգին Ս՟բ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զա՟մ, և յիշեցուսցէ զա՟մ որ ինչ ասացի ձեզ։ Խաղաղութի՟ւն թողում ձեզ, զխաղաղութի՟ւն զիմ տամ ձեզ. ոչ ո՟պ աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի՛ խռովեսցին սիրտք ձեր, և մի՛ զանգիտեսցեն։ Լուարուք զի ասացի ես ձեզ՝ թէ երթամ և գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լեալ էր ձեր՝ թէ ես առ Հայր երթամ, զի Հայր իմ մեծ է քան զիս։ Եւ այժմ ասացի ձեզ մինչ չեւ եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք։ Ոչ եւս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. գայ իշխան աշխարհիս այսորիկ, և յիս ինչ ոչ գտանէ։ Այլ զի ծանիցէ աշխարհ, եթէ սիրեմ զՀայր, և որպէս պատուիրեաց ինձ Հայր՝

այնպէս առնեմ. ձ՟ն, արի՛ք գնասցուք աստի։ Ես եմ որթն ճշմարիտ, և Հայր իմ մշակ է։ Ամենայն ուռ որ յիս է և ոչ բերէ պտուղ՝ կտրէ զնա. և զա՟մ որ բերէ պտուղ՝ սրբէ զնա, զի առաւել եւս պտղաբեր լիցի։ Դուք արդէն իսկ սուրբ էք վ՟ն բանին զոր խօսեցայ ընդ ձեզ։ Կացէք յիս՝ և ես ի ձեզ. որպէս ուռն ոչ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ ոչ իցէ հաստատեալ յորթն, նոյնպէս և դուք՝ եթէ ոչ յիս հաստատեալ իցէք։ Ես եմ որթ, և դուք ուռ. որ հաստատեալ է յիս՝ և ես ի նա, նա բերէ պտուղ յոյժ. զի առանց իմ ոչինչ կարէք առնել։ Եթէ ոք ոչ է հաստատեալ յիս, ել նա արտաքս իբրեւ զուռն՝ և ցամաքեցաւ, և ժողովեն զնա և ի հուր արկանեն, և այրի։ Եթէ կայցէք յիս՝ և բանք իմ ի ձեզ կայցեն, որ ինչ կամիցիք՝ խնդրեսջիք, և լինիցի ձեզ։ Յայսմիկ փառաւորեցաւ Հայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք, և եղիջիք իմ աշակերտք։ Ո՟պ սիրեաց զիս Հայր՝ և ես սիրեցի զձեզ. հաստատուն կացէք ի սէր իմ։ Եթէ պահիցէք զպատուիրանս իմ՝ կացջիք ի սէր իմ. ո՟պ ես զպատուիրանս Հօր իմոյ պահեցի, և կամ ի սէր ն՟ր։ Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրախութի՟ իմ ի ձեզ իցէ, և ձեր ուրախութիւնն լցեալ եղիցի։ Այս է պատուէր իմ՝ զի սիրեսջիք զմիմեանս, ո՟պ և ես զձեզ սիրեցի։ Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի՝ եթէ զանձն իւր դիցէ ի վ՟ր բարեկամաց իւրոց։ Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք զոր ես պատուիրեմ ձեզ։ Ոչ եւս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ տէրն ն՟ր. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զա՟մ զոր լուայ ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ։ Ոչ եթէ դուք զիս ընտրեցէք, այլ ես ընտրեցի զձեզ, և եդի զձեզ՝ զի դուք երթայցէք և պտղաբերք լինիցիք. և պտուղն ձեր կացցէ. և զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ՝ տացէ ձեզ։ Զայս պատուիրեմ՝ զի սիրեսջիք զմի-

մեանս։ Եթէ աշխարհ զձեզ ատեայ՝ գիտասջիք զի նախ զիս ատեաց։ Եթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զիւրսն սիրէր արդեօք. բայց զի չէք յաշխարհէ, այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վ՟ն այնորիկ ատեայ զձեզ աշխարհ։ Յիշեցէք զբանն զոր ասացի ձեզ, թէ ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր. եթէ զիս հալածեցին, ապա և զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա և զձերն պահեսցեն։ Այլ զնոյնս արասցեն ընդ ձեզ վ՟ն անուան իմոյ, զի ոչ գիտեն զայն որ առաքեացն զիս։ Իմ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ ն՟ա՝ մեղ ինչ ոչ գոյր ն՟ց. բայց արդ չիք պատճառք վ՟ն մեղաց իւրեանց։ Որ զիս ատեայ՝ և զՀայրն իմ ատեայ։ Եթէ զգործսն չէր գործեալ ի ն՟ա՝ զոր ոչ այլ ոք գործեաց, մեղ ինչ ոչ գոյր ն՟ց. բայց արդ տեսին և ատեցին՝ եւ զիս եւ զՀայր իմ։ Այլ զի լցցի բանն որ յօրէնս ն՟ց գրեալ է, թէ Ատեցին զիս տարապարտուց։ Բայց յորժամ եկեսցէ մխիթարիչն՝ զոր ես առաքեցից ձեզ ի Հօրէ, զՀոգին ճշմարտութե՟ն, որ ի Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վ՟ն իմ. և դուք վկայէք՝ զի ի սկզբանէ ընդ իս էք։ Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայթագղեսջիք։ Ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ. այլ եկեսցէ ժամանակ՝ զի զա՟մ որ սպանանիցէ զձեզ՝ համարիցի պաշտօն մատուցանել Ա՟յ։ Եւ զայն արասցեն ընդ ձեզ՝ քանզի ոչ ծանեան զՀայր և ոչ զիս։ Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ եկեսցէ ժամանակ՝ յիշիցէք թէ ես ասացի ձեզ։ Զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի։ Բայց արդ երթամ ես առ առաքիչն իմ. և ոչ ոք ի ձէնջ հարցանէ ցիս՝ թէ յո՞ երթաս։ Այլ զի զայս խօսեցայ ընդ ձեզ՝ տրտմութի՟ ելից զսիրտս ձեր։ Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ. լաւ է ձեզ եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ երթայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ՝ առաքեցից զնա առ ձեզ։ Եւ նա

եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ վն մեղաց, և վն արդարութե, և վն դատաստանի: Վասն մեղաց՝ զի ոչ հաւատան յիս. վն արդարութե՝ զի առ Հայր իմ երթամ, և ոչ ևս տեսանէք զիս. վն դատաստանի՝ զի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է: Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ, այլ ոչ կարէք համբառնալ այժմիկ: Յորժամ եկեսցէ նա, Հոգին ճշմարտութե, առաջնորդեսցէ ձեզ ամ ճշմարտութ. զի ոչ եթէ յանձնէ ինչ խօսիցի, այլ զոր լուիցէ՝ խօսիցի, և զգալոցն պատմեսցէ ձեզ: Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ: Զամ ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վն այնորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ: Փոքր մի և ոչ ևս տեսանէք զիս, և ապա սակաւիկ մի և տեսանիցէք զիս. և ես երթամ առ Հայր: Ասէին ոմանք յաշակերտաց անտի ցմիմեանս. զի՞նչ է այս զոր ասէ ցմեզ, թէ փոքր մի և ոչ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ մի և տեսանիցէք զիս. և թէ ես առ Հայր երթամ: Եւ ասէին. զի՞նչ իցէ այն փոքր միւս ևսն, չգիտեմք զինչ խօսի: Գիտաց Յս եթէ կամէին զնա հարցանել, և ասէ ցնս. վն այդորիկ խնդրէք ընդ միմեանս, զի ասացի թէ փոքր մի և ոչ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ միւս ևս՝ և տեսանիցէք զիս: Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լայջիք և ողբասջիք դուք, և աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք, այլ տրտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի: Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն՝ ոչ ևս յիշէ զնեղութիւնն՝ վասն խնդութեանն զի ծնաւ մարդ յաշխարհ: Եւ դուք այժմ տրտմութիւն ունիք. այլ դարձեալ տեսից զձեզ, և ուրախ լիցին սիրտք ձեր. և զուրախութիւնն ձեր ոչ ոք հանիցէ ի ձէնջ: Եւ յայնմ աւուր զիս ինչ ոչ հարցանիցէք: Ամէն ամէն ասեմ ձեզ,

զի զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ՝ տացէ ձեզ: Մինչև ցայժմ ոչ ինչ խնդրեցէք յանուն իմ. խնդրեցէք, և առնուցուք. զի ուրախութիւնն ձեր լցեալ իցէ: Զայս առակօք խօսեցայ ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ևս առակօք խօսեցայց ընդ ձեզ. այլ յայտնապէս զՀօրէ պատմեցից ձեզ: Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ. և ոչ ասեմ ձեզ՝ եթէ ես աղաչեցից զՀայր վն ձեր. զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ, զի դուք զիս սիրեցէք, և հաւատացէք՝ եթէ ես յԱՅ ելի: Ելի ի Հօրէ և եկի յաշխարհ. դարձեալ թողում զաշխարհ, և երթամ առ Հայր: Ասեն ցնա աշակերտքն. ահա արդ յայտնութբ խօսիս, և առակ և ոչ մի ինչ ասես: Այժմիկ գիտեմք՝ եթէ գիտես զամ. և ոչ ինչ պիտոյ է՝ եթէ ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ հաւատամք՝ եթէ յԱՅ ելեր: Պատասխանի ետ նց Յս, և ասէ. այժմ հաւատա՞ք: Ահա եկեսցէ ժամ, և եկեալ իսկ է, զի ցրուեսջիք յիւրաքանչիւր տեղիս, և զիս միա՛յն թողուցուք. և չեմ միայն, զի Հայր ընդ իս է: Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ընդ իս խաղաղութի ունիցիք. յաշխարհի աստ նեղութի ունիցիք, այլ քաջալերեցարու՛ք, զի ես յաղթեցի աշխարհի: Զայս իբրև խօսեցաւ Յս, ամբարձ զաչս իւր յերկինս, և ասէ. Հա՛յր՝ հասեալ է ժամ, փառաւորեա՛ զՈրդի քո, զի և Որդի քո փառաւորեսցէ զքեզ: Ոպ ետուր նմա իշխանութի ամ մարմնոյ, զի ամի զոր ետուր նմա՝ տացէ զկեանսն յաւիտենականս: Այս են յաւիտենական կեանք՝ զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Ած, և զոր առաքեցեր զՅս Քս: Ես զքեզ փառաւորեցի յերկրի. զգործն կատարեցի, զոր ետուր ցիս զի արարից. և այժմ փառաւորեա՛ զիս Հայր՝ առ ի քէն փառօքն զոր ունէի յառաջ քան զլինել աշխարհի առ ի քէն: Յայտնեցի զանուն քո մարդկան՝ զորս ետուր ինձ յաշխարհէ. քո էին, և ինձ ետուր

զն՟ս, և զբանն քո պահեցին: Արդ գիտացին՝ եթէ զա՟մ ինչ զոր ետուր ինձ՝ ետու ն՟ց. և նոքա ընկալան, և ծանեան ճշմարտու՟թ՝ թէ առ ի քէն ելի. և հաւատացին եթէ դու առաքեցեր զիս: Արդ՝ ես վ՟ն ն՟ց աղաչեմ, և ոչ վ՟ն աշխարհի աղաչեմ. այլ վ՟ն ն՟ց՝ զորս ետուրն ինձ, զի քո են: Եւ որ ինչ իմ է՝ ա՟մ քո է. և որ ինչ քո է՝ այն իմ է. և փառաւորեալ եմ ի ն՟ս: Եւ ես ոչ եւս եմ յաշխարհի, և նոքա յաշխարհի են, և ես առ քեզ գամ. Հա՛յր ս՟բ, պահեա՛ զն՟ս յանուն քո, որով ետուրն ինձ. զի եղիցին մի, ո՟պ և մեք մի եմք: Մինչ էի յաշխարհի ընդ ն՟ս, ես պահէի զն՟ս յանուն քո՝ որով ետուրն ինձ, և պահեցի. և ոչ ոք ի նոցանէ կորեաւ, բայց որդին կորստեան, զի գիրն լցցի: Բայց արդ առ քեզ գամ. և զայս խօսիմ յաշխարհի, զի ունիցին զուրախութի՟ն իմ լիով յանձինս իւրեանց: Ես ետու ն՟ց զբանն քո. և աշխարհ ատեաց զն՟ս, զի չեն յաշխարհէ, ո՟պ և ես չեմ յաշխարհէ: Ոչ զայս աղաչեմ՝ զի բարձցես զն՟ս յաշխարհէ, այլ զի պահեսցես զն՟ս ի չարէ: Յաշխարհէ աստի չեն, ո՟պ և ես չեմ յաշխարհէ: Սո՛ւրբ արա զն՟ս ճշմարտու՟թբ քով. զի քո բանդ ճշմարտու՟թի է: Ո՟պ զիս առաքեցեր յաշխարհ, և ես առաքեցի զն՟ս յաշխարհ: Եւ ի վ՟ն ն՟ց ես ս՟բ առնեմ զանձն իմ, զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտու՟թբ: Այլ ոչ վ՟ն նոցա միայն աղաչեմ, այլ և վ՟ն ա՟մ հաւատացելոց բանիւն նոցա յիս. զի ամենեքին մի իցեն, ո՟պ դու Հայր յիս և ես ի քեզ, զի և նոքա ի մեզ իցեն. զի և աշխարհ հաւատասցէ՝ եթէ դու առաքեցեր զիս: Եւ ես զփառսն զոր ետուր ինձ՝ ետու նոցա, զի իցեն մի ո՟պ և մեք մի եմք: Ես ի ն՟ս, և դու յիս, զի եղիցին կատարեալք ի մի: Եւ գիտասցէ աշխարհ՝ եթէ դու առաքեցեր զիս. և սիրեցի զն՟ս ո՟պ դու զիս սիրեցեր: Հա՛յր, զորս ետուրն ինձ՝ կամիմ զի ուր եմն եմ՝ և նոքա իցեն ընդ իս. զի տեսանիցեն

զփառս իմ զոր ետուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ քան զլինելն աշխարհի: Հա՛յր արդար, և աշխարհ զքեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ ծանեայ, և նոքա ծանեան՝ եթէ դու առաքեցեր զիս: Եւ ծանուցի նոցա զանուն քո, և ծանուցից. զի սէրն զոր սիրեցեր զիս՝ ի նոսա իցէ, և ես ի նոսա: Զայս իբրեւ ասաց Յիսուս՝ ել աշակերտօքն հանդերձ յայնկոյս ձորոյն Կեդրովնի, ուր էր պարտէզ, յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր: ԺԸ. 1:

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք:
Տէր ողորմեա: Երեք անգամ կրկնել:

Եւ եւս խաղաղութեան: Օրհնութի՟ և փառք:

Ի վճարել ամէն մի փոխի՝ շեշտադրեն երկուս մասերն՝ մի յաջորդ եւ մի յառաջէ՝ յերկոտասան մասերանցն, և յետոյ ունել մինչեւ ցառաջինն:

Երկրորդ փոխ: Սաղմոս Խ:

Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն. յաւուր չարի փրկէ զնա Տէր:

Տէր փրկէ զնա և կեցուցանէ. երանելի առնէ զնա ի վերայ երկրի, և ոչ մատնէ զնա ի ձեռս թշնամեաց իւրոց:

Տէր օգնական է նմա ի մահիճս ցաւոց իւրոց. և զամենայն անկողինս նորա դարձուցանէ ի հիւանդութենէ նորա:

Ես ասացի Տէր ողորմեա ինձ. և բժշկեա զանձն իմ. ես մեղայ քեզ:

Թշնամիք իմ ասացին ինձ չար. Երբ իցէ զի մեռցի և կորիցէ անուն նորա:

Մտանէր տեսանել զնանրութիւն. խօսէր ի սրտի իւրում. ժողովէր զանօրէնութիւնս յանձն իւր:

Արտաքս ելանէր և զնոյն խօսէր. զինէն շշնջէին ամենայն թշնամիք իմ:

Խորհեցան չար ի վերայ իմ․ բան անօրէնութեան ե-դին ի վերայ իմ։

Մի՛ թէ որ ննջիցէն ո՛չ եւս յաւելուցու յառնել․ քանզի և այրն խաղաղութեան իմոյ՝ յոր և եսն յու-սացայ։

Որ ուտէր ընդ իս հաց, յաճախեաց առնել ինձ խա-բէութիւն։

Այլ դու Տէր ողորմեա՛ ինձ․ կանգնեա՛ զիս, և հա-տուցից նոցա։

Յայսմ ծանեայց թէ հաճեցար ընդ իս․ զի մի՛ ու-րախ եղիցին յիս թշնամիք իմ։

Այլ զիս յամբծութեան իմում ընկալար․ հաստա-տեցեր զիս առաջի քո յաւիտեան։

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի յաւիտենանս յաւ-իտենից․ եղիցի եղիցի։

Սաղմոս ԽԱ։

Ո՜ր փափաքէ եղջերու յաղբերս ջուրց․ այնպէս փա-փաքէ անձն իմ առ քեզ ԱԾ։

Ծարաւի է անձն իմ առ քեզ, ԱԾ հզօր և կենդանի․ երբ եկից երեւեցայց երեսացդ ԱՅ։

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ և ի գի-շերի․ և այն զի ասէին ցիս զօրհանապազ՝ թէ ո՞ւր է Աստուած քո։

Զայս ո՜ր յիշէի՝ տառապէր յիս անձն իմ․ քաջալերէի զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց տան ԱՅ։

Ի ձայն ցնծութե՟ խոստովանութե՟․ և ի ձայն բարե-կենդանութե՟։

Արդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս․ յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ նմա․ փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Անձն իմ յիս խռովեցաւ․ վասն այսորիկ յիշեցի զքեզ յերկրէն Յորդանանու, յԱհերմոնէ լեռնէ փո-քուէ։

Խորք խորոց կարդացին առ քեզ՝ ի ձայն սահանաց քոց։

Ամենայն զբօսանք քո և ալիք քո անցին ի վ՟ր իմ։

Ի տուէ պատուիրեաց Տէր զողորմութիւն իւր․ գի-շերի զօրհնութիւն նոր․ և աղօթք իմ առ Աստուած վասն կենաց իմոց։

Ասացի ԱՅ․ ընդունելի իմ ես, ընդէ՞ր մերժեցեր զիս․ ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ։

Ի փշրել ոսկերաց իմոց նախատեցին զիս թշնամիք իմ․ յասել ցիս զօրհանապազ՝ թէ ո՞ւր է ԱԾ քո։

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ․ կամ ընդէ՞ր խռով-ես զիս․ յուսա՛ առ ԱԾ, խոստովանեա՛ նմա․ փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Սաղմոս ԽԲ։

Դատ արա ինձ ԱԾ․ և իրաւ արա ինձ ի դատաս-տանի իմում։

Յազգէ որ ոչ է սբ․ ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա՛ զիս։

Դու ԱԾ հզօրիչ իմ ես․ ընդէ՞ր մոռացար զիս․ ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ։

Առաքեա՛ Տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո․ զի առաջնորդեսցեն ինձ․ հանցեն զիս ի լեառն սուրբ և ի յարկս քո։

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ․ առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, Աստուած Աս-տուած իմ։

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ․ կամ ընդէ՞ր խռով-ես զիս․ յուսա՛ առ ԱԾ, խոստովանեա՛ նմա․ փրկիչ երեսաց իմոց ԱԾ է։

Փառք Հօր։ Այժմ և միշտ։

Կցուրդ։

Բա՛ն անօրէ՛նութե՟ եդի՛ն ի՟ վե՛րա՟յ իմ․ Տէ՟ր Տէ՟ր մի՛ թո՛ղո՟ւր զի՛ս։ Երեք անգամ կրկնեա, եւ շարականն բարձր ասա։

Շարական ԴԿ։

Լըլից զօրէ՞նսըն Մովսէսի զոր խօսեցաւ ի Սինայի. եկեր ըզգառն օրինակին և ըզբաղարջըն ընդ եղեգի. ըզհինն ի նո՞րըս փոխելով զըստուերն ի լոյս ճըշմարտելով. փոխան գառին ինքըն գոլով գառն Աստուծոյ նըւիրելով։

Ընդ բաղարջին հաց անխըմոր ետ ըզմարմինն իւր զերկնաւոր. ըզկուսածինն անսերմնաւոր զանապական և զկենարար. ընդ ոչխարին արեան ուխտին ետ մեզ զարիւնն իւր ուխտ կըկին. և եղեգան դառնագունին փոխան ըզվարս աստուածային։

Թագաւո՛րն արարածոց զհացըն կենաց ետ քաղցելոց. և ըզբաժակն ուրախարար որք յԱդամայ տրտմեցելոց. այս նոր ուխտ է իմոյ արեան փոխան հընոյ ուխտին արեանց. զոր յիշատակ իմ առնիջէք մինչև եկից ես միւսանգամ։

Ժողովեա՛լքս ի քէն հայցեմք ընդ ժողովեալ մետասանին. յոր զկենարարըդ քո մարմին բաշխեալ ետուր ընդ բաժակին. շնորհեա՛ և մեզ Տէր ընդ նոսին հաղորդ լինել քում սեղանին. կենաց հացիդ յոր փափագիմք և ըմպելոյդ ում ծարաւիմք։

Ի յըլնտրելոց աշակերտացն Յուդաս մեկնեալ ի նր գառանցն. զբարձող մեղաց զգառն Այ մատնէր ի մահ ընդ արծաթոյ. ի յընթրի՛սըն հոգևոր մերձի ժըպիրհն և նենգաւո՛րն. ուտելով ընդ վարդապետըն յաճախէ զխաբէութիւն։

Այսըն խօսէր աղերսալի խաւարելոյն վասըն դարձի. մի ոմն ի ձէնջ ասէ եղբարըք զիս մատնելոց է առ ի մահ. Պետրոս լըւեալ զայն զարհուրէր և ակնարկէր առ Յովհաննէս. հարցանել թէ ով իցէ դաւաճանող վարդապետին։

Ջնչ Որթիւ։

Աւետարան ըստ Ղուկասու։ ԻԲ. 1։

Վասն չարչարանաց Տեառն մերոյ Յսի Քսի։

Մերձեցաւ տօն բաղարջակերացն՝ որ կոչէր Պասքա. և խնդրէին քահանայապետքն և դպիրք՝ թէ որպէս սպանանիցեն զնա. բայց երկնչէին ի ժողովրդենէ անտի։ Ապա եմուտ սատանայ ի Յուդա կոչեցեալն Իսկարիովտացի, որ էր ի թուոյ երկոտասանիցն։ Չոգաւ եդ բանս ընդ քահանայապետսն և ընդ դպիրս և ընդ իշխանս ժողովրդեանն, զի մատնեսցէ զնա նց։ Եւ խնդացին, և խոստացան տալ նմա արծաթ։ Եւ յանձն առ, և խնդրէր պարապ՝ մատնել զնա նց մեկուսի յամբոխէն։ Եկն օր բաղարջակերացն՝ յորում օրէն էր զենուլ զպասեքն։ Եւ առաքեաց զՊետրոս և զՅովհաննէս, և ասէ. երթա՛յք պատրաստեցէք մեզ զպասեքն՝ զի կերիցուք։ Եւ նոքա ասեն. ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք։ Եւ ասէ ցնս. ահա իբրև մտանիցէք ի քաղաքն, պատահեսցէ ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ. երթիջի՛ք զհետ նր ի տունն յոր մտանիցէ. և ասասջի՛ք ցտանուտէր տանն. վարդապետ ասէ քեզ. ո՞ւր են վանքն իմ, յորում զպասեքն ուտիցեմ աշակերտօքս հանդերձ։ Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ, և ա՛նդ պատրաստեսջի՛ք։ Եւ գնացեալ գտին ոպ եւ ասացն նց, և պատրաստեցին զպասեքն։ Եւ իբրև ժամ եղև՝ բազմեցաւ, և երկոտասան առաքեալքն ընդ նմա։ Եւ ասէ ցնոսա. ցանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ՝ մինչ չև չարչարեալ իցեմ։ Բայց ասեմ ձեզ, թէ ոչ ևս կերայց ի սմանէ՝ մինչև լցցի յարքայութն Այ։ Եւ ընկալեալ բաժակ՝ գոհացաւ և ասէ. առէք զայդ՝ և բաժանեցէք ի ձեզ։ Ասեմ ձեզ՝ թէ յայսմ հետէ ոչ արբից ի բերոյ որթոյ՝ մինչև եկեսցէ արքայութի Այ։ Եւ առեալ հաց գոհացաւ, եբեկ և ետ նց, և

ասէ. այս է մարմին իմ, որ վ՟ն բազմաց տուեալ. զայս արասջիք առ իմոյ յիշատակի: Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն առ, և ասէ. այս բաժակ է նոր ուխտ իմով արեամբ վ՟ն ձեր հեղլոյ: Բայց ահաւասիկ ձեռն մատնչի իմոյ ընդ իս ի սեղանս: Եւ որդի մարդոյ ըստ սահմանելոյն երթայ, բայց վա՜յ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն մատնիցի: Եւ նոքա սկսան խնդրել ընդ միմեանս, թէ ո՞վ է ի նոցանէ՝ որ զայն գործելոց իցէ: Եւ եղեւ հակառակութ՟ի ի մէջ ն՟ց, թէ ո՞ ի նոցանէ համարիցի մեծ: Եւ նա ասէ ց՟ն՟ս. թագաւորք ազգաց տիրեն ն՟ց, և որ իշխենն ն՟ց՝ բարերարք կոչին. այլ դուք ոչ այնպէս. այլ որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրեւ զկրտսերն, և առաջնորդն իբրեւ զսպասաւորն: Ո՞վ է մեծ, բազմեա՞լն եթէ սպասաւորն. ո՞չ ապաքէն բազմեալն. բայց ես եմ ի միջի ձերում իբրեւ սպասաւոր: Եւ դո՛ւք էք՝ որ ցանդ կայիք ընդ իս ի փորձութիւնս իմ. և ես ուխտեմ ձեզ, ո՟պ և Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն, զի ուտիցէք և ըմպիցէք ի սեղան իմ յարքայութեան իմում, և նստիցիք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգս Իսրայէլի: Եւ ասէ Տէր. Ս՟իմ՟ն Ս՟իմ՟ն, ահա սատանայ խնդրեաց զձեզ՝ խարբալել իբրեւ զցորեան. այլ ես աղաչեցի վ՟ն քո՝ զի մի պակասեսցեն հաւատք քո. և դու երբեմ՟ն դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո: Եւ նա ասէ ցնա. Տէր, ընդ քեզ պատրաստ եմ և ի բանտ և ի մահ երթալ: Եւ նա ասէ ցնա. ասեմ քեզ Պետրէ, չիցէ այսօր հաւու խօսեալ՝ մինչեւ երիցս ուրասցիս զիս չգիտել: Եւ ասէ ց՟ն՟ս. յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի և մախաղի և կօշկաց, մի՞ թէ կարօտացայք իմիք: Եւ նոքա ասեն. եւ ոչ իմիք: Ապա ասէ. այլ այժմ որ ունիցի քսակ՝ բարձցէ, նոյնպէս և մախաղ. եւ որ ո՟չ ունիցի՝ վաճառեսցէ զձորձս իւր և գնեսցէ իւր սուսեր: Բայց ասեմ ձեզ. զի այս եւս որ գրեալ է՝ պարտ է

զի կատարեսցի յիս, թէ ընդ անօրէնս համարեցաւ. զի որ վ՟ն իմ ինչ է՝ վճարեալ է: Եւ նոքա ասեն. Տէր, ահաւասիկ են աստ երկու սուրք: Եւ ասէ ցնոսա. բաւական են: Եւ ելեալ գնաց ըստ սովորութեան ի լեառն Ձիթենեաց. գնացին զհետ ն՟ր և աշակերտքն: Իբրեւ եհաս ի տեղին՝ ասէ ցնոսա. յաղօ՛թս կացէք չմտանել ի փորձութ՟ի: Եւ ինքն մեկնեցաւ ի նոցանէ իբրեւ քարընկէց մի. եդ ծունր, կայր յաղօթս, և ասէր. Հա՛յր՝ եթէ կամիս՝ անցո՛ զբաժակս զայս յինէն. բայց ոչ իմ կամք՝ այլ քո՟դ լիցին: Եւ երեւեցաւ նմա հրեշտակ յերկնից՝ և զօրացուցանէր զնա. և էր ի տագնապի, և մտադիւրութ՟բ եւս կայր յաղօթս: Եւ հոսէին ի նմանէ քրտունք իբրեւ զկայլակս արեան՝ ոլոռն ոլոռն հեղեալ յերկիր: Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եկն առ աշակերտսն, և եգիտ զն՟ս ի քուն ի տրտմութ՟են. և ասէ ց՟ն՟ս. զի՞ ննջէք, արի՛ք կացէք յաղօթս՝ զի մի՛ մտանիցէք ի փորձութ՟ի: Եւ մինչ դեռ խօսէր, ահաասիկ ամբոխ. և որ կոչէրն Յուդա՝ մի յերկոտասանիցն, առաջնորդէր ն՟ց: Իբրեւ մերձեցաւ առ Յ՟ս համբուրեաց զնա. քանզի զայն նշան տուեալ էր ն՟ց, թէ ընդ որում ես համբուրեցից՝ նա է, զնա ունիցիք: Ասէ ցնա Յ՟ս. Յո՛ւդա, համբուրելո՞վ մատնես զորդի մարդոյ: Իբրեւ տեսին որ զնովաւն էին՝ որ ինչ եղեւն, ասեն ցնա. Տէր, հարցո՞ւք զն՟ս սրով: Եւ եհար մի ո՟մն ի նոցանէ զքահանայապետին ծառայ, և ի բաց եհան զաջոյ ունկն ն՟ր: Պատասխանի ետ Յ՟ս և ասէ. թո՛յլ տուք մինչեւ ցայդ վայր, և մատուցեալ յունկնն՝ բժշկեաց զնա: Եւ ասէ ցեկեալսն ի վ՟ր ն՟ր՝ ցքահանայապետսն և ցիշխանս տաճարին և ցծերսն. իբրեւ ի վ՟ր աւազակի՞ ելէք սուսերօք և բրօք. հանապազ ընդ ձեզ էի ի տաճարին, և ոչ ձգեցէք ձեռս յիս. այլ այս է ձեր ժամ, և իշխանութ՟ի խաւարի: Եւ կալեալ զնա՝ ածին և մուծին ի տուն քահանայապետին, և Պետրոս եր-

թայր զկնի նր՟ հեռագոյն: Իբրեւ լուցին կրակ ի մէջ գաւթին և նստան շուրջ՝ նստաւ և Պետրոս ի մէջ նց՟: Ետես զնա աղախին ոմն՝ զի նստէր առ լոյսն. հայեցաւ ընդ նա և ասէ. և սա ընդ նմ՟ էր՝ որ ընդ նմայն էին: Իսկ Պետրոս ուրացաւ և ասէ. ոչ գիտեմ զնա, կին դու: Եւ յետ սակաւ միոյ այլ ոմն ետես զնա, և ասէ. և դու ի նոցանէ ես: Եւ Պետրոս ասէ. այր դու, չեմ ի նոցանէ: Եւ իբրեւ ժամ մի անց ի վր՟՝ այլ ոմն վիճէր և ասէր. ստոյգ և սա ընդ նմա էր, քանզի Գալիլեացի է: Ասէ Պետրոս. այր դու, չգիտեմ զինչ խօսիս: Եւ առժամայն՝ մինչ դեռ նա զայն ասէր, խօսեցաւ հաւ: Դարձաւ Տէր և հայեցաւ ի Պետրոս. և յիշեաց Պետրոս զբանն Տռ՟ն զոր ասաց ցնա. մինչ չեւ հաւու խօսեալ իցէ, երիցս ուրասցիս՝ չգիտել զիս: Եւ ելեալ արտաքս՝ ելաց դառնապէս: Եւ արքն որ պահէին զնա՝ այպն առնէին զնովաւ, և հարկանէին: Ծածկէին զերեսս նր՟ և տանջէին. և հարցանէին ցնա և ասէին. մարգարեա՛ց՝ ո՞վ է որ եհարն զքեզ: Եւ այլ բազում ինչ հայհոյութբ՟ խօսէին ի նա: 65:

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք:
Տէր ողորմեա՛: Երիցս կրկնեա:

Եւ եւս խաղաղ: Օրհնութիւն և փառք:

Երրորդ փոխ: Սաղմոս ԾԸ:

Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց Ած՟. յայնցանէ որ յարուցեալ են ի վր՟ իմ՝ ապրեցո՛ զիս:

Փրկեա՛ զիս յայնցանէ որ գործեն զանօրէնութիւն. յարանց արիւնահեղաց ապրեցո՛ զիս:

Որսալ զանձն իմ կամեցան. և հասին ի վերայ իմ հզօրք:

Ոչ մեղք իմ և ոչ յանցանք. առանց մեղաց ընթացայ և ուղիղ եղէ:

Զարթի՛ր ընդ առաջ իմ և տես. դու Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի:

Նայեա՛ց և այց արա ամ՟ հեթանոսաց. մի՛ ողորմիր ամենեցուն որ գործեն զանօրէնութիւն:

Դարձցին ընդ երեկոյս. սովեսցին որպէս շունք, և շրջեսցին զքաղաքաւ:

Նոքա զօղանջեսցեն բերանովք իւրեանց. և սուր է ի շրթունս նոցա:

Իսկ արդ՝ ո՞վ լուաւ զայս, զի դու Տէր ծիծաղեսցիս զնոքօք. և արհամարհեսցես զամենայն հեթանոս:

Զզօրութի՛ իմ առ քեզ պահեցից. զի Ած՟ օգնական իմ է:

Աստուած իմ, ողորմութիւն նորա կանխեսցէ առ իս. և Աստուած իմ ցուցցէ ինձ ի թշնամիս իմ:

Մի՛ սպանաներ զնս՟. զի մի մոռասցին զժողովուրդս քո:

Ցրուեա՛ զնոսա զօրութեամբ քով և ընկեցեա՛ զնոսա. զի դու ես պաշտպան իմ Տէր:

Մեղք բերանոյ նոցա և բանք շրթանց նոցա. ընկլցին նոքա յամբարտաւանութեան իւրեանց:

Յանէծս և ի ստութիւն մատնեսցին. ի կատարածի բարկութեամբ սպառեսցին և մի՛ գտցին:

Գիտասցեն զի Աստուած տիրէ Յակովբայ և ամենայն ծագաց երկրի:

Դարձցին ընդ երեկոյս. սովեսցին որպէս շունք, և շրջեսցին զքաղաքաւ:

Նոքա սփռեսցին յուտել. ապա թէ ոչ յագեսցին՝ տրտնջեսցեն:

Ես օրհնեցից զօրհնութիւնս Տեառն. ցնծացայց առաւօտուց յողորմութեան քում:

Զի եղեր իմ պաշտպան և տուն ապաւինի. յաւուր նեղութեան իմոյ օգնական իմ:

Քեզ սաղմոս ասացից Աստուած, ապաւէն իմ. Աստուած ողորմութեան իմոյ:

Սաղմոս ԾԹ:

Աստուած մերժեցեր և աւերեցեր զմեզ. բարկացար և գթացիր ի մեզ:

Շարժեցեր զերկիր և խռովեցուցեր զսա. բժշկեա զհարուածս սորա՝ զի սասանեցաւ:

Ցուցեր ժողովրդեան քում խստութիւն. և ետուր ըմպել մեզ գինի յիմարութեան:

Ետուր երկիւղածաց քոց նշան. զի ապրեսցին յերեսաց աղեղան:

Ով փրկեսցին սիրելիք քո. կեցո աջով քո և լուր մեզ:

Աստուած խօսեցաւ ի սրբութենէ իւրմէ. ցնծացայց, բարձր եղէց, բաժանեցայց զՍիկէմ. և զհովիտս յարկաց չափեցից:

Իմ է Գաղաադ և իմ է Մանասէ. Եփրեմ հզօրիչ գլխոյ իմոյ:

Յուդա թագաւոր իմ. Մովաբ աւազան յուսոյ իմոյ:

Յեդովմէ ուղղեցից զգնացս իմ. և ինձ այլազգիք հնազանդ եղեն:

Ո՞ տարցի զիս ի քաղաք ամուր. կամ ո՞ առաջնորդեսցէ ինձ մինչև յԵդումէ:

Եթէ ոչ դու Աստուած որ մերժեցեր զմեզ. և ոչ ելեր Աստուած ընդ զօրս մեր:

Տուր մեզ օգնութիւն ի նեղութեան. զի ընդունայն է փրկութիւն մարդոյ:

Աստուծով արասցուք զօրութիւն. և նա արհամարհեսցէ զայնոսիկ որ նեղեն զմեզ:

Սաղմոս Կ:

Լուր Աստուած աղօթից իմոց, և նայեա Տէր յաղօթս իմ:

Ի ծագաց յերկրէ կարդացի առ քեզ. մինչ ի վաստակել սրտի իմոյ:

Ի վիմէ բարձր արարեր զիս, առաջնորդեցեր ինձ. և իմ եղեր յոյս, և աշտարակ հզօր եղեր ինձ յերեսաց թշնամւոյն:

Բնակեցայց ես ի յարկս քո յաւիտեան. և ծածկեցայց ընդ հովանեաւ թևոց քոց:

Դու Ա՟ծ լուար աղօթից իմոց. ետուր ժառանգութ՟ի ոյք երկնչին յանուանէ քումմէ:

Աւուրս յաւուրս յաւելեր թագաւորի. ամաց նորա աւուրս՝ յազգաց մինչև յազգս նորա:

Կայ և մնայ յաւիտեան առաջի Ա՟յ. ողորմութ՟ի և ճշմարտութ՟ի՝ ոյք խնդրեսցեն ի նմանէ:

Այսպէս սաղմոս ասացից անուան քում յաւիտեան. և տաց քեզ զաղօթս իմ օր ըստ օրէ:

Կցուրդ:

Փըրկեա զիս ի թշնամեաց իմոց Աստուած. և ի հալածչաց իմոց ապրեցո զիս: Երեք անգամ կրկնեա, Ե-ղջերինն բարձր ասա:

Շարական ԴԿ:

Խնամով սիրոյն յիւր սիրելեացն ըզտըրտմութիւն փարատեաց. Թացեալ պատառ տայ Յուդայի նըշաւակեալ զգողըն մատնիչ. զոր առեալ և մերկացաւ յածայլին Հոգւոյն շնորհաց. մատնեցաւ նախանձարին ընդ մատնութեան վարդապետին:

Ծայրագոյն լուսոյն զըրկեալ խաւարասէրն արտաքս ելեալ. Տէրըն յայտնէր լոյս եղելոցն ըզգայթագղելն ի գիշերի. Պետրոս խօսէր խրախուսելի և կըշտամբիւր հաւախօսի. զնուրն յաշխարհէ զփոխիլն ասէր և ըզգալուստ Հոգւոյն պատմէր:

Կեդրոնեան յանկոյս ձորոյն ի վերնատունն ել խորհրդոյ. եմուտ պարտէզ ընդ պարտիզի, եմոյծ զԱդամ յԱդին դրախտին. մուծցես և զմեզ Տէր ընդ նըմին ուստի հաներ նախ զառաջինն. զի ժառանգել ըզհայրենին արժանասցուք մեք վերըստին:

Հոգայր ըզկրիցըն տըրտմաբար երիւքն եղեալ առանձնաբար. փըրկել զաշխարհ հոգիս յօժար, բայց է բնութ՟ի մարմնոյս տըկար. ոչ ոմն ուժեղ և զօրաւոր և ոմն անզօր վըտանգաւոր. այլ մի և նոյն գոլ միաւոր կրօէր ըզկիրսըն կամաւոր:

Զայնիւ մաղթէր աղօթական վ՟ն իմ առ Հայր իւր էական. ծունըր դընէր խոնարհական որում կրկնի ծունր ամենայն. եթէ փոխել մարդկան հնար է առանց մահու իմ որ գրեալ է. բաժակ մահուս յինէն անցցէ ոչ իմ կամաւ այլ քո՟դ եսցէ:

Ղօղեալ յերկիւղ քրտանց հոսման ոլոռնաձեւ կայլակ վիժման. ի զօրանալ հրեշտակ մերձեալ զօրինական գիրըն լցեալ. զի կատարեալ էառ զընութիւն Ա՟ծըն Բան ըզմարդկութեան. պարտ էր զերկիւղ և զտրտմութի՟ յիւրումըն կրել տնօրէնութիւն:

Ջ՟նէ՝ Ո՛րթիւ:

Աւետարան ըստ Մարկոսի: ԺԴ. 27:

Վ՟ն չարչարանաց Տեառն մերոյ Յ՟ի Ք՟ի:

Եւ ասէ ցն՟ս Յ՟ս. ամենեքին գայթագղելոց էք յինէն յայսմ գիշերի. զի գրեալ է, թէ հարից զհովիւն, և ոչխարքն ցրուեսցին: Այլ յետ յարութե՟ իմոյ յառաջագոյն երթայց քան զձեզ ի Գալիլեա: Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա. թէպէտ և ամենեքեան գայթագղեսցին, այլ ես ոչ: Եւ ասէ ցնա Յ՟ս. ամէն ասեմ քեզ, դու իսկ յայսմ գիշերի՝ մինչ չեւ հաւու խօսեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս: Իսկ Պետրոս առաւել եւս պնդէր և ասէր. եթէ մեռանել եւս հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց: Նոյնպէս և ամենեքեան ասէին: Գան ի գեօղն՝ որում անուն էր Գեթսեմանի. և ասէ ցաշակերտսն. նստարո՛ւք աստ՝ մինչեւ ես յաղօթս կացից: Եւ առնու ընդ իւր զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս. և սկսաւ տխրել և հոգալ: Յայնժամ ասէ ցն՟ս. տրտում է անձն իմ մինչեւ ի մահ, մնացէք աստ և արթո՛ւն կացէք: Եւ մատուցեալ սակաւիկ մի յառաջ՝ անկաւ ի վ՟ր երեսաց իւրոց յերկիր. և կայր յաղօթս, զի եթէ հնար ինչ է՝ անցցէ ի նմանէ ժամն: Եւ ասէ. Ա՛բբա Հա՛յր՝ ա՟մ ինչ քեզ հնարաւոր է, անցո զբաժակս զայս

յինէն. բայց ոչ ո՟չ ես կամիմ՝ այլ ո՟չ դու կամիս: Եւ գայ գտանէ զն՟ս զի ննջէին, և ասէ ցՊետրոս. Սիմոն, ննջե՞ս, ո՞չ կարացեր ժամ մի արթուն կալ: Արթո՛ւն կացէք և յաղօ՛թս կացէք, զի մի՛ մտջիք ի փորձութի՟. ոգիս յօժար է՝ բայց մարմինս տկար: Եւ դարձեալ չոքաւ եկաց յաղօթս, և զնոյն բանս ասաց: Դարձաւ միւսանգամ անդրէն, և եգիտ զն՟ս ի քուն. քանզի էին աչք նոցա ծանրացեալ, և ոչ գիտէին՝ թէ զինչ պատասխանի տայցեն նմա: Գայ երրորդ անգամ, և ասէ ցն՟ս. ննջեցէք այսուհետեւ և հանգերո՛ւք, զի հասեալ է վախճան, եկն ժամ, և ահա մատնի որդի մարդոյ ի ձեռս մեղաւորաց: Օ՛ն, արի՛ք գնասցուք. զի ահաւասիկ մերձեցաւ որ մատնելոցն է զիս: Եւ մինչ դեռ նա զայն խօսէր՝ գայ Յուդա Իսկարիովտացի՝ մի յերկոտասանից անտի, և ընդ նմա ամբոխ սուսերօք և բրօք՝ ի քահանայապետից և ի դպրաց և ի ծերոց: Տուեալ էր նշան մատնչին, և ասէր. ընդ որում ես համբուրեցից՝ նա է. կալջի՛ք զնա և տարջի՛ք զգուշութ՟բ: Եւ մատուցեալ վաղվաղակի՝ ասէ ցնա. ռա՛բբի ռա՛բբի. և համբուրեաց զնա: Եւ նոքա արկին ի նա ձեռս և կալան զնա: Եւ մի ո՟մն յայնցանէ որ զնովաւն կային՝ ձգեաց սուր, և եհար զծառայ քահանայապետին, և ի բաց եհան զունկն ն՟ր: Պատասխանի ետ Յ՟ս և ասէ ցն՟ս. իբրեւ ի վ՟ր աւազակի ելէք սուսերօք և բրօք ունել զիս: Հանապազ առ ձեզ էի, և ուսուցանէի ի տաճարին, և ոչ կալայք զիս. այլ զի լցցին գիրք մարգարէից: Յայնժամ թողին զնա աշակերտքն ամենեքին և փախեան: Եւ ո՟մն երիտասարդ զհետ երթայր ն՟ր՝ արկեալ զիւրեւ կտաւ մի ի մերկուց. ունէին զնա երիտասարդքն: Եւ ն՟ր թողեալ զկտաւն՝ փախեաւ մերկ ի նոցանէ: Եւ տարան զՅիսուս առ քահանայապետն Կայիափա. և գային ընդ նմա ա՟մ քահանայապետքն և դպիրք և ծերք: Եւ Պետրոս երթայր ի հեռաստանէ

զհետ նր՟ մինչեւ ի ներքս իսկ՝ ի գաւիթ քահանայապետին, և նստէր ընդ սպասաւորսն և ջեռնոյր առ լուսովն։ Իսկ քահանայապետքն և ամ՟ ատեանն խնդրէին հակառակ Յ՟սի վկայութի՟ ինչ, զի սպանանիցեն զնա. և ոչ գտանէին։ Զի բազումք սուտ վկայութիւն վկայէին զնմանէ, և նման միմեանց ոչ էին վկայութիւքն։ Այլք յարուցեալ վկայէին սուտ զնմանէ, և ասէին, թէ մեք լուաք ի դմանէ՝ զի ասէր. ես քակեցից զտաճարդ զայդ ձեռագործ, և զերիս աւուրս շինեցից այլ՝ առանց ձեռագործի։ Սակայն և այնպէս՝ չէր նման վկայութի՟ն նց՟։ Ապա յարուցեալ քահանայապետն ի մէջ՝ հարցանէր զՅ՟ս, և ասէր. ոչինչ տաս պատասխանի, զինչ դոքա զքէն վկայեն։ Եւ նա լուռ եւեթ կայր, և չտայր ինչ պատասխանի։ Դարձեալ քահանայապետն հարցանէր զնա կրկին անգամ և ասէր. դու՞ ես Ք՟ս Որդի Ա՟յ օրհնելոյն։ Պատասխանի ետ Յ՟ս և ասէ ցնա. դու ասացեր՝ թէ ես եմ. բայց տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութե՟ն, և եկեալ ընդ ամպս երկնից։ Եւ քահանայապետն պատառեաց վաղվաղակի զպատմուճան իւր և ասէ. զի՞նչ եւս պիտոյ են մեզ վկայք։ Ահա լուայք ամենեքին զհայհոյութի՟ ի բերանոյ դորա. զի՞րդ թուի ձեզ։ Եւ ամենեքեան դատապարտեցին զնա՝ թէ մահապարտ է։ Եւ ոմանք սկսան թքանել ընդ երեսս նր՟, ձորձ զգլխով արկանել, կափել և ասել, մարգարեա՛ց մեզ Ք՟նդ՝ ո՞վ է այն որ եհարն զքեզ։ Եւ սպասաւորքն ապտակս հանէին նմա։ Եւ Պետրոս մինչդեռ էր ի խոնարհ ի գաւթին՝ գայ աղախին մի քահանայապետին, և տեսանէ զնա զի ջեռնոյր. հայեցաւ ընդ նա և ասէ. եւ դու ընդ Յ՟սի Նազովրեցւոյ էիր։ Նա ուրացաւ և ասէ. ոչ ճանաչեմ և ոչ գիտեմ զինչ դուդ ասես. և իբրեւ ել յարտաքին գաւիթն՝ և հաւ խօսեցաւ։ Դարձեալ ետես զնա աղախինն, և սկսաւ ասել ցայնոսիկ որ շուրջն

կային, թէ և սա ի նոցանէ է։ Եւ նա դարձեալ ուրացաւ. և յետ սակաւ միոյ՝ դարձեալ որ շուրջն կային՝ ասեն ցՊետրոս. արդարեւ և դու ի նոցանէ ես, քանզի Գալիլեացի ես, և խօսքդ իսկ քո՝ նման են։ Եւ նա սկսաւ նզովել, երդնուլ և ասել, թէ ոչ գիտեմ զայրն զորմէ դուքդ ասէք։ Եւ նոյնժամայն կրկին հաւ խօսեցաւ։ Եւ յիշեաց Պետրոս զբանն զոր ասաց ցնա Յ՟ս, թէ չեւ լցէ հաւու երկիցս խօսեալ՝ զի դու երիցս ուրասցիս զիս. և սկսաւ լալ։ 72։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք։
Տէր ողորմեա։ Երիցս կրկնեա։

Եւ եւս խաղաղութե՟։ Օրհնութի՟ և փառք։

Չորրորդ ձայն։ Սաղմոս ՀԸ։

Ա՟ծ, մտին հեթանոսք ի ժառանգութի՟ քո. պղծեցին զտաճար սուրբ քո։

Արարին զԵրուսաղէմ որպ՟ հիւղս մրգապահաց. արկին զդիակունս ծառայից քոց գէշ թռչնոց երկնից, և զմարմինս սրբոց քոց գազանաց երկրի։

Հեղին զարիւն նց՟ որպ՟ ջուր շուրջ զԵրուսաղէմաւ. և ոչ ոք էր որ թաղէր զնոսա։

Եղաք մեք նախատինք դրացեաց մերոց. ծաղր և այպն կատականաց այնոցիկ որք շուրջ էին զմեօք։

Մինչեւ յե՞րբ Տէր բարկանաս դու ի սպառ. բորբոքեսցի որպէս հուր նախանձ քո։

Հե՛ղ զբարկութի՟ քո ի վ՟ր ազգաց որ զքեզ ոչ ճանաչեն. ի վ՟ր թագաւորաց որ զանուն քո ոչ կարդացին. զի կերան զՅակոբ և զտեղի նորա աւերեցին։

Մի՛ յիշեր զմեղս մեր զառաջինս. վաղվաղեսցէ առ մեզ ողորմութի՟ քո, զի աղքատացաք յոյժ։

Օգնեա՛ մեզ Ա՟ծ փրկիչ մեր՝ վասն մեծի փառաց անուան քո։

Տէր փրկեա՛ զմեզ. և քաւեա՛ զմեղս մեր վ՟ն անուան քոյ։

Մի՛ երբեք ասասցեն ի հեթանոսս, թէ ո՞ւր է Ա՟ծ նց՟։

Այլ յայտնի լիցի ի վ՟ր հեթանոսաց, առաջի աչաց մերոց. առ ի խնդրել զվրէժ արեան ծառայից քոց ուր և հեղաւ։

Մտցէ առաջի քո հեծութիւն կապելոց. ըստ մեծութեան բազկի քոյ շահեա՛ դու զորդիս սպանելոց։

Հատո՛ դրացեաց մերոց եօթնպատիկ ի ծոց ն՟ց. նախատինս զոր նախատեցին զքեզ Տէր։

Մեք ժողովուրդք և խաշն արօտի քոյ. խոստովան եղիցուք առ քեզ յաւիտեան, ազգէ յազգ պատմեսցուք զօրհնութի՟ս քո։

Սաղմոս ՀԹ։

Ո հովուեսդ Իսրայէլի՝ նայեա՛ց. ո առաջնորդես ո՟պ խաշին՝ Յովսեփու։

Որ նստիս ի քրովբէս՝ յայտնեա՛ց առաջի Եփրեմի, Բենիամենի և Մանասէի։

Զարթո՛ զզօրութի՟ քո, և եկ կեցուցանել զմեզ։

Ա՟ծ զօրութե՟ց դարձո՛ զմեզ. երեւեցո՛ զերեսս քո ի մեզ և կեցցուք։

Տէր Ա՟ծ զօրութե՟ց. մինչեւ յե՞րբ բարկանաս յաղօթս ծառայից քոց։

Ջամբեցեր մեզ հաց արտասուաց. և արբուցեր մեզ արտասուս չափով։

Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց, այպն կատականաց թշնամեաց մերոց։

Ա՟ծ զօրութե՟ց, դարձո՛ զմեզ. երեւեցո՛ զերեսս քո ի մեզ և կեցցուք։

Այգի յԵգիպտոսէ փոխեցեր. հաներ զհեթանոսս և զնո՟ տնկեցեր, և առաջնորդեցեր նոցա։

Հաստատեցեր զարմատս ն՟ր, և ելից զերկիր. ծածկեաց զլերինս հովանի նորա, և բարունակ նորա զմայրս Աստուծոյ։

Ձգեաց զորթ իւր մինչեւ ի ծով. մինչեւ ի գետս ե՟ն շառաւիղք նորա։

Ընդէ՞ր քակեցեր զցանկ նորա. կթեն զնա անցաւորք ճանապարհի։

Ապականեաց զնա խոզ անտառի. երէ վայրի արածեցաւ ի նմա։

Աստուած զօրութեանց, դա՛րձ հայեա՛ց յերկնից և տե՛ս. ա՛յց արա այգւոյս այսմիկ. դարման տար սմա զոր տնկեաց աջ քո։

Ի վ՟ր որդւոյ մարդոյ՝ զոր զօրացուցեր զնա ի քեզ. այրեցեալ ի հուր և աւերեալ ի սաստէ քումմէ կորիցէ։

Եղիցի ձեռն քո ի վերայ առն. աջ քո ի վերայ որդւոյ մարդոյ զոր զօրացուցեր զնա ի քեզ։

Ոչ եւս ի բացեայ եղիցուք մեք ի քէն. կեցուսցես դու զմեզ, և զանուն քո Տէր կարդասցուք։

Աստուած զօրութեանց դարձո՛ զմեզ. երեւեցո՛ զերեսս քո ի մեզ և կեցցուք։

Սաղմոս Ձ։

Ցնծացէ՛ք առ Աստուած օգնական է մեր. աղաղակեցէ՛ք առ Աստուած Յակովբայ։

Առէ՛ք սաղմոս և տո՛ւք օրհնութիւն. սաղմոս ասացէ՛ք նմա ի ձայն քաղցրութեան։

Փո՛ղ հարէ՛ք ի գլուխ ամսոց. յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց։

Հրաման է այս Իսրայելի. և իրաւունք Ա՟յ Յակովբայ։

Վկայութի՟ Յովսեփու զոր եդ ընդ նմա. ո՟պ ելանէր նա յերկրէն Եգիպտացւոց, լեզու զոր ոչ գիտէր լուաւ։

Ի բա՛ց արա ի բեռանց զթիկունս ն՟ր, և զձեռն ն՟ր յորթ և ի թի ծառայելոյ։

Ի նեղութեան կարդացեր առ իս, և փրկեցի զքեզ. լուայ քեզ ի գաղտնութե՟ մրրկին, և փորձեցի զքեզ ի վ՟ր ջուրցն հակառակութեան։

Լո՛ւր ժողովուրդ իմ և վկայեմ քեզ. և Իսրայէլ, թէ լուիցես ինձ։

Մի՛ եւս եղիցին քեզ ածք առժամայնք. և մի՛ երկիր պագանիցես դու մյ օտարի:

Ես եմ Տէր Ած քո՝ որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց. բաց զբերան քո և լցից զդա:

Ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում. և Իսրայէլ յիս ինչ ոչ նայեցաւ:

Բարձի թողի զնս՝ երթալ զհետ կամաց սրտից իւրեանց. զի գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց:

Զի թէ ժողովրդեան իմոյ լուեալ էր ինձ, կամ Իսրայելի զճանապարհս իմ գնացեալ էր:

Ոչ զոչինչ խոնարհ արարեալ էր իմ զթշնամիս նց. և ի վր նեղչաց նց արկեալ էր զձեռն իմ:

Թշնամիք Տեառն ստեցին նմա. եղիցին ժամանակք նց յաշխարհի:

Կերակրեաց զնս ի պարարտութէ ցորենոյ. և ի վիմէ մեղր յագեցոյց նոցա:

Կցուրդ:

Նոքա ի ձեռանէ քումմէ մերժեցան. մեք ժողովուրդք եւ խաշն արօտի քո: Գ անգամ ասեն, եւ վերջինն բարձր:

Շարական Դկ:

Զօրագոյն փառաց Էին որ ըստ բնութեան մարդկային. տագնապեցար ի գիշերին աղօթեցեր առ Հայր յերկինս. ծագեա ի մեզ զլոյս երկնային և փարատեա զերկիւղ չարին. մասունք հոգւոց մեր եւ մարմնոյ յերկիւղ քո նր բեւեռեսցին:

Մերձեալ Յուդաս որ մատնելոց՝ հանդերձ դասուն փարիսեցւոց. անկան նման ստորանկելոց՝ որք յաւիտեան չեն կանգնելոց. Յուդաս նենգաւ համբուրելով՝ առիթ մահու նշան տալով. փոխան սիրոյ զնա մատնելով, չար ընդ բարւոյ վճարելով:

Յայնժամ առ գութ սիրոյն Պետրոս՝ ըղծառային անուն Մաղքոս. եհատ սուսերբ զականջն աջոյ, որ ոչ լուաւ Տեառն իւրոյ. իսկ Տէրըն մեր արագապէս

յունկըն մերձեալ բըժըշկապէս. առողջացոյց աստուածապէս. զոր ոչ տեսին կուրացն հանդէս:

Նոր հօտին փոքու ցրուեալ քանզի զհովիւըն քաջ հարեալ. Պետրոս միայն ըզհետ երթեալ, ի յաղջկանէ վիմին շարժեալ. նըշանակեալ հաւըն խօսէր առ ի Պետրոս Տէրն ակնարկէր. զբանըն յիշէր դառն արտասուէր, ի գլորմանէն դարձեալ կանգնէր:

Շնորհեալ վիմին եկեղեցւոյ զոր պահեցեր ի հոսելոյ. և կանգնեցեր ի գլորելոյ վասըն սրտիւն արտասուելոյ. կանգնեա և զիս Տէր ընդ նըմին ի գլորմանէ սայթաքողին. տալով աչացս յորդ արտասուս և ջուր նըման ծովու գլխոյս:

Ո՛վ կամաւ զանկապելին կապեալ ըզձեռսն արձակողին. ի յապարանըսն տանէին Կայիափայ և Աննային. ծառայն զերեսն այն ապտակէր յորմէ սրովբէն թեւաքօղէր. թուք արձակեալ պիղծ բերանովն յայն որ կուրին լոյս ծագեաց թքովն:

Զկնի՝ Որթիւ:

Աւետարան ըստ Մատթէոսի: ԻԶ: 31:

Տէրն մեր Յս Քս

Յայնժամ ասէ ցնս. ամենեքին դուք գայթագղելոց էք յինէն յայսմ գիշերի, զի գրեալ է՝ թէ Հարից զհովիւն, և ցրուեսցին ոչխարք հօտին: Եւ յետ յառնելոյն իմոյ յառաջեցից քան զձեզ ի Գալիլեա: Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա. Թէպէտ և ամենեքեան գայթագղեսցին ի քէն՝ սակայն ես ոչ գայթագղեցայց: Ասէ ցնա Յս. ամէն ասեմ քեզ՝ զի յայսմ գիշերի մինչ չեւ հաւու խօսեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս: Ասէ ցնա Պետրոս, թէ եւ մեռանել հասանիցէ ընդ քեզ՝ զքեզ ոչ ուրացայց: Նոյնպէս և ամ աշակերտքն ասէին: Յայնժամ գայ Յս ընդ նս ի գեօղ մի՝ որում անուն էր Գեթսեմանի, և ասէ ցնս. Նստարո՛ւք այդր, մինչեւ երթայց կացից յաղօթս: Եւ

առեալ ընդ իւր զՊետրոս և զերկուս որդիսն Զեբեդեայ՝ սկսաւ տրտմել և հոգալ։ Յայնժամ ասէ ցն̃ս· տրտում է ոգի իմ մինչեւ ի մահ, կացէք աստ և սկեցէք ընդ իս։ Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝ անկաւ ի վ̃ր երեսաց իւրոց, եկաց յաղօթս և ասէ· Հայր իմ, եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն· բայց ոչ ոպ̃ ես կամիմ, այլ ոպ̃ դու։ Գայ առ աշակերտսն, և գտանէ զն̃ս ի քուն, և ասէ ցՊետրոս· այդպէս ո՞չ կարացէք մի ժամ արթուն կալ ընդ իս։ Արթուն կացէք և աղօթս արարէք՝ զի մի անկանիցիք ի փորձութիւն· հոգիս յօժար է՝ բայց մարմինս տկար։ Դարձեալ երկրորդ անգամ չոգաւ՝ եկաց յաղօթս Յս̃, և ասէ· Հայր իմ, եթէ հնար իցէ անցանել յինէն բաժակիս այսմիկ, ապա թէ ոչ՝ արբից զսա· եղիցին կամք քո։ Եւ եկեալ միւսանգամ՝ եգիտ զն̃ս ի քուն, զի էին աչք իւրեանց ծանրացեալք։ Եթող զն̃ս և գնաց եկաց յաղօթս երրորդ անգամ, և դարձեալ զնոյն բան ասաց։ Յայնժամ գայ առ աշակերտսն, և ասէ ցն̃ս· Ննջեցէք այսուհետեւ և հանգերուք· զի ահա հասեալ է ժամ, և որդի մարդոյ մատնի ի ձեռս մեղաւորաց։ Արիք երթիցուք աստի, զի ահաւասիկ եհաս որ մատնելոց է զիս։ Եւ մինչդեռ նա զայս խօսէր՝ ահա Յուդա՝ մի յերկոտասանիցն եկն, և ընդ նմա ամբոխ բազում սրովք և բրօք՝ ի քահանայապետիցն և ի ծերոց ժողովրդեանն։ Եւ որ մատնելոցն էր զնա՝ ետ նց̃ նշան և ասէ· ընդ որում ես համբուրեցից՝ նա է, զնա ունիցիք։ Եւ վաղվաղակի մատուցեալ առ Յս̃՝ ասէ· ողջ եր վարդապետ· և համբուրեաց ընդ նմա։ Եւ Յս̃ ասէ ցնա· ընկեր, վս̃ որոյ եկիր։ Յայնժամ մատուցեալ արկին ձեռս ի Յս̃, և կալան զնա։ Եւ ահա մի ոմ̃ն յայնցանէ որ ընդ Յս̃ի էին՝ ձգեաց զձեռն և եհան զսուր իւր, և եհար զծառայ քահանայապետին, և ի բաց եհան զունկն նր̃։ Յայնժամ ասէ ցնա Յս̃· դարձո

զսուր քո ի տեղի իւր· զի ամենեքեան որ սուր առնուցուն՝ սրով անկանիցին։ Թէ համարիցիս թէ ոչ կարեմ աղաչել զՀայր իմ, և հասուցանիցէ ինձ այժմ այսր աւելի քան զերկոտասան գունդս հրեշտակաց։ Այլ զիա՞րդ լնուցուն գիրք՝ թէ այսպէս պարտ է լինել։ Յայնժամ ասաց Յս̃ ցամբոխն· իբրեւ ի վ̃ր աւազակի ելէք սուսերօք և բրօք՝ ունել զիս· հանապազ առ ձեզ ի տաճարին նստէի և ուսուցանէի, և ոչ կալայք զիս։ Այլ այս ամ̃ եղեւ՝ զի լցցին գիրք մարգարէիցն։ Յայնժամ աշակերտքն ամենեքին թողին զնա և փախեան։ 56։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։ Երիցս կրկնեա։

Եւ եւս խաղաղութ̃։ Օրհնութ̃ի և փառք։

Հինգերորդ կոխ։ Սաղմոս ՃԸ։

Աստուած օրհնութեան իմոյ մի՛ լռեր· զի բերան մեղաւորի բերան նենգաւորի բացաւ ի վ̃ր իմ։

Խօսեցան զինէն լեզուաւ նենգաւորաւ· և բանիւ ատելութեան պաշարեցին զիս։

Մարտեան ընդ իս ի տարապարտուց· փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս, այլ ես յաղօթս կայի։

Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ, ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ։

Կացո̃ ի վերայ նորա մեղաւոր· սատանայ կացցէ ընդ աջմէ նորա։

Ի դատաստանէ իւրմէ ելցէ դատապարտեալ· և աղօթք նորա ի մեղս դարձցին։

Եղիցին աւուրք նորա նուազ· և զայցելութիւն նորա ղայն այլ տարցի։

Եղիցին որդիք նորա որբ, և կին նր̃ այրի· սահեսցին փոփոխեսցին, որդիք նորա մուրողք եղիցին· և ելցեն ի բնակութենէ իւրեանց։

Քննեսցէ փոխատու զամենայն ինչս նորա․ յափշտակեսցեն օտարք զվաստակս նորա։

Մի՛ գտցի օգնական նմա․ և մի՛ ոք ողորմեսցի ի վ՟ր որբոց նորա։

Եղիցին որդիք ն՟ր ի սատակումն․ և յազգէ ջնջեսցի անուն նորա։

Յիշեսցին մեղք հօր ն՟ր առաջի Տ՟ն, և մեղք մօր ն՟ր մի՛ ջնջեսցին․ և եղիցին առաջի Տ՟ն յա՟մ ժամ։

Սատակեսցի յերկրէ յիշատակ ն՟ր․ փոխանակ զի ոչ յիշեաց առնել զողորմութիւն։

Հալածեաց զայր աղքատ և զտնանկ․ սպանանել զայն որ խոնարհ է սրտիւ։

Սիրեաց զանէծս, և ելցէ նմա․ ոչ կամեցաւ զօրհնութիւն, հեռի եղիցի ի նմանէ։

Զգեցաւ զանէծս ո՟պ հանդերձ․ մտցէ ո՟պ ջուր ի փոր ն՟ր, ո՟պ ձէթ ընդ ոսկերս նորա։

Եղիցի նմա ո՟պ հանդերձ զի ագանի․ ո՟պ գօտի զի ածի հանապազ ընդ մէջ։

Այս գործ է այնոցիկ որ չարախօս կային զինէն առ Տէր․ և ոյք խօսէին չար զանձնէ իմմէ։

Այլ դու Տէր Տէր, արա՛ ընդ իս ըստ անուան քում, զի քաղցր է ողորմութ՟ի քո․ և փրկեա զիս, զի աղքատ և տնանկ եմ ես։

Սիրտ իմ խռովեցաւ ի փորի իմում․ և ես ո՟պ ստուեր ի խուսափել իմում պակասեցայ․ և թօթափեցայ որպէս մարախ։

Ծունկք իմ տկարացան ի պահոց․ և մարմին իմ այլագունեաց յիւղոյ։

Եղէ ես նախատ ն՟ց․ տեսին զիս և շարժեցին զգլուխս իւրեանց։

Օգնեա՛ ինձ Տէր Ա՟Ծ իմ․ և փրկեա՛ զիս ըստ ողորմութեան քում։

Ծանիցեն զի ձեռն քո այս է․ և դու Տ՟ր արարեր զայս։

Նոքա անիծանեն, և դու օրհնեսցես․ ոյք յարուցեալ են ի վ՟ր իմ՝ զամօթ կրեսցեն․ այլ ծառայ քո ուրախ եղիցի ի քեզ։

Զգեցցին զամօթ ոյք չարախօս կային զանձնէ իմմէ․ և արկցեն ո՟պ կրկնոց զամօթ իւրեանց զիւրեամբք։

Այլ ես խոստովան եղէց առ Տէր յոյժ բերանով իմով․ ի մէջ բազմաց օրհնեցից զքեզ։

Զի եկաց նա ընդ աջմէ տնանկիս․ փրկել զիս յայնցանէ որ հալածեն զանձն իմ։

Սաղմոս ՃԹ։

Ասաց Տէր ցՏէր իմ․ նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։

Գաւազան զօրութ՟ե առաքեսցէ քեզ Տէր ի Սիովնէ․ և տիրեսցես դու ի մէջ թշնամեաց քոց։

Ընդ քեզ է ինձ սկիզբն աւուրն զօրութ՟ե․ ի վայելչութ՟ի սրբ՟ց քոց, յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ։

Երդուաւ Տէր և ոչ եւս զղջասցի․ թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի․ և Տէր ընդ աջմէ քումմէ։

Խորտակեսցէ յաւուր բարկութ՟ե զթագաւորս․ դատեսցի զհեթանոսս, և բազում արասցէ զհարուածս․ և խորտակեսցէ զգլուխս բազմաց յերկրի։

Զուղխս ի ճանապարհի արբուսցէ․ վ՟ն այնորիկ և բարձր արասցէ զգլուխս։

Սաղմոս ՃԺ։

Խոստովան եղէց քեզ Տէր բոլորով սրտիւ իմով, ի խորհուրդս ուղղոց ի ժողովս․ մեծ են գործք Տ՟ն, և քննեալ են յա՟մի կամք նորա։

Խոստովանութ՟ի և վայելչութ՟ի են գործք ն՟ր․ արդարութ՟ի ն՟ր մն՟այ յաւիտեանս յաւիտենից։

Յիշատակ արար սքանչելեաց իւրոց ուղղոց․ ողորմած գթած է Տէր, կերակուր տայ երկիւղածաց իւրոց։

Յիշեաց յաւիտենից զուխտ իւր. զզօրութի̃ գործոց իւրոց պատուիրեաց ժողովրդեան իւրում:

Տալ նց̃ զժառանգութի̃ հեթանոսաց. և գործք ձե֊ռաց նր̃ արդարութի̃ և իրաւունք են:

Հաւատարիմ են յամի պատուիրանք նր̃. հաստա֊տեալ են յաւիտեանս յաւիտենից. արարեալ են ճշմարտութեամբ և ուղղութեամբ:

Փրկութիւն առաքեաց Տր̃ ժողովրդեան իւրում. պա֊տուիրեաց յաւիտենից զուխտ իւր. սուրբ և ահեղ է ա֊նուն նորա:

Սկիզբն զգօնութե̃ երկիւղ Տեառն. իմաստութի̃ բարի ամենեցուն որ առնեն զնա. և օրհնութի̃ նր̃ մնայ յաւ֊իտեանս յաւիտենից:

Կցուրդ:

Խօսեցան զինէն լեզուաւ նենգաւորաւ. եւ բանիւ ատելութեան զիս պաշարեցին: Երեքս անգամ կրկնեա, եւ շեշտելն բարձր ասա:

Շարական Դկ:

Զա՞ր կապանաց մարդկան լուծիչ որ կապեցար ընդ կապելոյն. զիս արձակեա յինքնակամ կապէս մեղաց կա֊պից դժոխայնոյն. որ ընդ մեզք պարտաւորին կացեր անմեղդ ի յատենի. յորժամ փառօք գաս հայրենի մի դատեսցես զիս ընդ նոսին:

Պատկառանօք հինն Ադամայ, որ ձաղեցար վասըն նորա. ջնջեա զամօթ մեղաց լըրբին, որով զերեսս իմ ծածկեցին. որ ներեցեր չար ծառային՝ ածել ձեռօք քեզ պատակին. հար ուժգնակի զդէմս չարին, որպէս և զիս եհար ուժգին:

Զահըն լուսոյ յառաւօտին ի յուրբաթու հընոյ զատ֊կին, կայր առաջի դատաւորին, ծառայն նըստէր ի յա֊տենին. ի հարցանել Պիղատոսի Տէրն ոչ առնէր պա֊տասխանի. զի կանխասաց գիրըն լըցցի՝ Եղէ ես մարդ որ ոչ խօսի:

Ռամկական դասք զնուորացն արկին հանդերձ նա֊խատանաց. այնմ որոյ զգեստն է լոյս փառաց իբրեւ զօթոց զինքեամբ արկած. ի ծունր իջեալ կատակէին զգլուխն եղեգամբ հարկանէին. պըսակ ի փշոց բոլո֊րէին ըզփուշ մեղացըն բարձողին:

Սոսկալին սերովբէից բառնայր ինքեամբ ըզփայտ խաչին. մինչ ի տեղի Գողգոթային, յորում եդեալ մարդն առաջին. ետուն ըմպել գինի զմըռսեալ և կե֊րակուր լեղեաւ խառնեալ. որով զպըտղոյն դառըն ճաշակ փոխեաց մեզ քաղցր և ախորժակ:

Վերնականքըն զարհուրեալ տեսին ըզՏէրըն մերկա֊ցեալ. և ըզհանդերձսըն բաժանեալ, պատմուճանին վի֊ճակ արկեալ. ըզձեռսն և զոտսըն ծակեցին ըստ յայտ֊նապէս դաւթեան ձայնին. ընդ փայտ խաչին բեւեռե֊ցին զմատուննսն որ գրեաց ի տախտակին:

Ձնէ՝ Որթիւ:

Աւետարան ըստ Մատթէոսի: Իզ. 57:

Վն̃ չարչարանաց Տեառն մերոյ Յս̃ի Քս̃ի:

Իսկ նց̃ կալեալ զՅս̃՝ ածին առ Կայիափա քահա֊նայապետ, ուր դպիրքն և ծերք ժողովեալ էին: Եւ Պետրոս զհետ նր̃ երթայր բացագոյն մինչեւ ի սրահ քահանայապետին. և մտեալ ի ներքս՝ նստէր ընդ սպասաւորսն՝ տեսանել զկատարածն: Իսկ քահանայ֊ապետքն և ա̃մ ատեանն խնդրէին սուտ վկայութի̃ զՅս̃է, զի սպանցեն զնա. և ոչ գտանէին ի բազմաց սուտ վկայիցն մատուցելոց: Յետոյ մատուցեալ երկու սուտ վկայք՝ ասէին թէ սա ասէր՝ կարող եմ քակել զտաճարն Աստուծոյ և զերիս աւուրս շինել: Եւ յա֊րուցեալ քահանայապետն ասէ ցնա. չտա̃ս պատաս֊խանի, զի՞նչ դոքա ամբաստանեն զքէն: Եւ Յիսուս լուռ կայր: Պատասխանի ետ քահանայապետն և ասէ ցնա. երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի, զի ասասցես մեզ՝ թէ դո̃ւ ես Քրիստոսն Որդի Աստու֊

ծոյ։ Ասէ ցնա Յիսուս. դու ասացեր. բայց ասեմ ձեզ. յայսմհետէ տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեանն, և եկեալ ընդ ամպս երկնից։ Յայնժամ քահանայապետն պատառեաց զհանդերձս իւր և ասէ. հայհոյեաց, զի՞ եւս պիտոյ են մեզ վկայք. ահա արդ լուայք զհայհոյութիւն նորա. զի՞նչ հաճոյ է ձեզ։ Նոքա պատասխանի ետուն և ասեն. մահապարտ է։ Յայնժամ թքին ընդ երեսս նորա, և կռփեցին զնա. և ոմանք ապտակեցին, և ասեն. մարգարեաց մեզ Քրիստոս, ո՞վ է որ եհարն զքեզ։ Իսկ Պետրոս նստէր արտաքոյ ի գաւթին։ Մատեաւ առ նա աղախին մի, և ասէ. և դու ընդ Յիսուսի Գալիլեացւոյ էիր։ Նա ուրացաւ առաջի ամենեցուն և ասէ, թէ ոչ գիտեմ զինչ խօսիդ։ Եւ իբրեւ ել նա արտաքս քան զդուռնն՝ ետես զնա այլ կին մի, և ասէ ցայնոսիկ որ անդն կային, և սա ընդ Յիսուսի Նազովրացւոյ էր։ Եւ դարձեալ ուրացաւ երդմամբ, թէ ոչ գիտեմ զայրն։ Եւ յետ սակաւ միոյ մատուցեալ որք կայինն անդ՝ ասեն ցՊետրոս. արդարեւ և դու ի նոցանէ ես, քանզի և խօսք քո յայտ առնեն զքեզ։ Յայնժամ սկսաւ նզովել և երդնուլ, թէ ոչ գիտեմ զայրն. և խկոյն հաւ խօսեցաւ։ Եւ յիշեաց Պետրոս զբանն Յիսուսի զոր ասաց, թէ մինչ չեւ հաւու խօսեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս. և ելեալ արտաքս՝ ելաց դառնապէս։ 75։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։ Երեքս կրկնեա։

Եւ եւս խաղաղութիւն։ Օրհնութիւն և փառք։

Վեցերորդ ձայն։ Սաղմոս ՃԺԷ։

Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ասասցէ տունն Իսրայելի. զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ասասցէ տունն Ահարոնի. զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ասասցեն երկիւղածք Տեառն. զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի. և լուաւ ինձ յանդորր։

Տէր է իմ օգնական, և ես ոչ երկեայց. զի՞ արասցէ ինձ մարդ։

Տէր է իմ օգնական. և ես տեսից ի թշնամիս իմ։

Բարի է յուսալ ի Տէր՝ քան յուսալ ի մարդիկ. բարի է յուսալ ի Տէր՝ քան յուսալ յիշխանս։

Ամենայն ազինք շրջեցան զինեւ. և անուամբ Տեառն յաղթեցի նոցա։

Շրջելով շրջեցան զինեւ, պաշարեցին զիս ի միասին. և անուամբ Տեառն վանեցի զնոսա։

Շուրջ եղեն զինեւ որպէս մեղուք, վառեցան բորբոքեցան որպէս փուշք ի հուր. և անուամբ Տեառն մերժեցի զնոսա։

Ի մերժելն դրդուեցայ, և եղէ մերձ ի գլորել. և Տէր ընկալաւ զիս։

Զօրութիւն իմ և օգնութիւն իմ Տէր. և եղեւ ինձ ի փրկութիւն։

Ձայն ցնծութեան փրկութեան ի յարկս արդարոց։

Աջ Տեառն արար զօրութիւն. աջ Տեառն բարձր արար զիս. և աջ Տեառն արար զօրութիւն։

Ոչ մեռայց այլ կեցից. և պատմեցից զգործս Տեառն։

Խրատելով խրատեաց զիս Տէր. և ի մահ ոչ մատնեաց։

Բացէք ինձ զդրունս արդարութեան, զի մտից ընդ այն և խոստովան եղէց Տեառն։

Կցուրդ։

Խոստովան եղերուք Տեառն զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա։ Երեք անգամ կրկնեա, եւ Շեղինն բարձր ասա։

Եւ մտանեն յեկեղեցին, եւ ասեն Շարական Դկ:

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց ոտք ընդ ոտից ըն- թանալեաց. փայտ ընդ փայտի դառըն պըտղոյ կեանք ընդ մահու փոխարկելով. ի մէջ երկուց անօրինաց կայր մերկացեալ տուողն օրինաց. զոր ոչ տեսին անգ- գըն կուրաց բայց ի միոյն յաւազակաց:

Բոպէից արեգականն ըզտիւն արար գիշերանման. զըստուերըն քօղ արկ մերկութե՝ զի մի տեսցէ ակն անարժան. ի միջօրեայն նըսեմացաւ՝ յորժամ Ադամ մեղօք մեռաւ. ի յիններորդն ի լոյս դարձաւ՝ յորժամ մահուամբ մահըն լուծաւ:

Ցօղէր արտօսըր ցաւագին մայր Տե̃ռն որ կայր մերձ առ խաչին. յորժամ լըսէր ըզծարաւին բարբառելոյ իւր միածնին. ետուն քացախ խառնեալ լեղի այնմ որ բըղխեաց գետ յԱդենի. և ի վիմէն վըտակ բարի ար- բոյց տոհմին դառնացողի:

Իւծեալ յերրորդ ժամու օձին զմիտըս նախնոյ մօրն Եւայի. ի վեցն անկեալ մարդն առաջին հաւանական բանիւ նորին. ի սոյն ժամու Տէրն ի խաչին զի քաւեսցէ զմեղըս նոցին. և յորժամ եւ Ադամըն հին՝ եդ զաւա- զակն ի մէջ դրախտին:

Փարելի բարբառ ընդ իմ Էլի Էլի առ Հայր գոչէր. զհոգին կամաւ Հօր աւանդէր, զհոգիս մարդկան նոյն ընծայէր. երկիր հիմամբք սասանեցաւ և վարագոյրն ընդ մէջ հերձաւ. վէմք ի յինքեանց պատառեցան և գերեզմանք մահու բացան:

Քարոզի ի սքանչելեաց Աստուած մարմնով վասն իմ խաչեալ. մերով բնութեամբըս մեռանի, Աստուած ան- մահ խոստովանի. կրկնավըտակ կողին աղբերբք եկե- ղեցի իւր հաստատի. ջըրովըն մաքրի զարիւնն ըմպէ, զՈրդի ընդ Հօր փառաւորէ:

Զկնէ Որթիւ:

Եւ կարդան ի վերայ բեմին զԱւետարանս:

Աւետարան ըստ Յովհաննու: ԺԸ. 2:

Վն չարչարանաց Տեառն մերոյ Յ̃ի Ք̃ի:

Գիտէր և Յուդա որ զնա մատնելոց էր՝ զտեղին. զի բազում անգամ ժողովեալ էր անդր Յ̃ի աշակեր- տօքն հանդերձ: Եւ Յուդայի առեալ ընդ իւր զգունդն, և ի քահանայապետից և ի փարիսեցւոց սպասաւորս, գայ անդր ջահիւք և լապտերօք և զինուք: Իսկ Յ̃ս իբրեւ ետես զայն ամենայն եկեալ ի վ̃ր ն̃ր՝ ել և ասէ ցն̃ս. զո՞ խնդրէք: Պատասխանի ետուն նմա. զՅ̃ս Նա- զովրեցի: Ասէ ցն̃ս Յ̃ս. Ես եմ: Կայր ընդ ն̃ս և Յուդա՝ որ մատնէրն զնա: Իբրեւ ասաց թէ Ես եմ՝ յետս յետս չոգան և զարկան զգետնի: Դարձեալ եհարց զն̃ս. զո՞ խնդրէք: Եւ նոքա ասեն. զՅ̃ս Նազովրեցի: Պատաս- խանի ետ ն̃ց Յ̃ս. ասացի ձեզ թէ Ես եմ. արդ՝ եթէ զիս խնդրէք՝ թո՛յլ տուք դոցա երթալ: Զի լցցի բանն՝ զոր ասաց. թէ Զոր ետուրն ցիս՝ ոչ կորուսից ի նո- ցանէ և ոչ զոք: Իսկ Սիմովն Պետրոս՝ քանզի ունէր սուր՝ ձգեաց զնա, և եհար զքահանայապետին ծառայ, և ի բաց առ զունկն ն̃ր զաջոյ. և էր անուն ծառային Մաղքոս: Ասէ Յ̃ս ցՊետրոս. ա՛րկ զսուրդ անդրէն ի պատեանս իւր. զբաժակն զոր ետ ինձ Հայր՝ ո՞չ ըմ- պիցեմ զնա: Իսկ գունդն և հազարապետն և սպա- սաւորք Հրէից կալան զՅ̃ս և կապեցին. և ածին զնա նախ առ Աննա, որ էր աներ Կայիափայի, որ քահա- նայապետն էր տարւոյն այնորիկ: Այս այն Կայիափա էր՝ որ խրատն ետ Հրէից, եթէ Լաւ է առն միում մե- ռանել ի վերայ ժողովրդեան: Եւ երթայր զհետ Յ̃ի Սիմովն Պետրոս և միւս աշակերտն: Եւ աշակերտն այն՝ քանզի ծանօթ էր քահանայապետին՝ եմուտ ընդ Յ̃ի ի գաւիթ քահանայապետին: Եւ Պետրոս կայր առ դրանն արտաքոյ: Ել միւս աշակերտն որ էր ծանօթ քահանայապետին, և ասաց դռնապանն, և եմոյծ ի ներքս զՊետրոս: Ասէ աղջիկն որ դռնապանն էր՝ ցՊե-

տրոս. մի՞ թէ և դու յաշակերտաց առնն այնորիկ իցես: Եւ նա ասէ. ոչ եմ: Կային անդ ծառայքն և սպասաւորքն՝ խարոյկ արկեալ՝ քանզի ցուրտ էր, և ջեռնուին. կայր ընդ նս և Պետրոս և ջեռնոյր: Եւ քահանայապետն եհարց զՅս վն աշակերտացն և վն վարդապետութեան նր: Պատասխանի ետ նմա Յիսուս. ես յայտնապէս խօսեցայ յաշխարհի. ես յամենայն ժամ ուսուցի ի ժողովրդեանն, և ի տաճարի անդ՝ ուր ամենայն Հրեայք ժողովեալ էին, և ի ծածուկ ինչ ոչ խօսեցայ: Զի՞ հարցանես զիս. հա՛րց զայնոսիկ՝ որ լուանն, թէ զինչ խօսեցայ ընդ նս. ահաւանիկ նոքա գիտեն զինչ ասացի ես: Իբրև նա զայս ասաց՝ մի ոմն ի սպասաւորացն որ անդ կայր՝ ած ապտակ Յսի և ասէ. ա՞յդպէս պատասխանի տաս քահանայապետիդ: Եւ Յիսուս ասէ ցնա. եթէ չար ինչ խօսեցայ՝ վկայեա՛ վն չարին, իսկ եթէ բարի՝ ընդէ՞ր հարկանես զիս: Եւ առաքեաց զնա Աննա կապեալ առ Կայիափա քահանայապետ: Եւ Սիմովն Պետրոս կայր անդ և ջեռնոյր. ասեն ցնա. մի՞ թէ և դու յաշակերտաց անտի նր իցես: Նա ուրացաւ և ասէ՝ թէ չեմ: Եւ ասէ մի ոմն ի ծառայից քահանայապետին՝ ազգական այնորիկ զորոյ զունկն եհատ Պետրոս. ո՞չ ես իսկ տեսի զքեզ ի պարտիզի անդ ընդ նմա: Դարձեալ ուրացաւ Պետրոս: Եւ վաղվաղակի հաւ խօսեցաւ: 27:

Շարական. ԴՁ:

Զարհուրեցան զօրք երկնայինք. յորժամ տեսին զՏէրդ ի խաչին. արեգական լոյս քո զարկեալ. և լոյս լուսնին նուաղեցաւ. յահեղ փառաց Ած որդւոյդ խաւար եղեւ ընդ տիեզերս. ողորմեա Տր ողորմեա հոգւոցն մեր ննջեցելոց:

Մղթ. Հոգւոցն հանգ: Քրզ. Վն հոգւ: Աղ. Քս որդի Այ:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

Եւ ապա ասեն կանոնագլուխ ԴՁ:

Իշխանք հալածեցին զիս ի նանիր. ալէլուիա. այլ ի բանից քոց երկեաւ սիրտ իմ. * ալէլուիա:

Ցնծացայ ես ի բանս քո. որպէս այն որ գտանէ աւար բազում. ալէլ:

Ըզմեղս ատեցի և անարգեցի. և զօրէնս քո սիրեցի. ալէլ:

Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ. վն իրաւանց և արդարութե քոյ. ալէ:

Խաղաղութի բազում է այնոցիկ ոյք սիրեն զօրէնս քո. և ոչ գոյ ի նս գայթագղութիւն. ալէ:

Սպասեցի փրկութեան քում Տէր. և զպատուիրանս քո սիրեցի. ալէ:

Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո. և սիրեաց զնոսա յոյժ. ալէ:

Պահեցից զպատուիրանս և զվկայութիւնս քո. զի ամենայն ճանապարհք իմ առաջի քո են. ալէ:

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր. ըստ բանի քում իմաստուն արա զիս. ալէ:

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր. և բանիւ քով փրկեա զիս. ալէ:

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո. յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո. ալէ:

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամ պատուիրանք քո արդարութք են. ալէ:

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի. ալէ:

Ցանկացայ փրկութե քում Տէր. և օրէնք քո խօսք իմ էին. ալէ:

կեցցէ անձն իմ օրհնեսցէ զՔեզ. և խրատունք քո օգնեսցեն ինձ. * ալէլուիա:

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա զծառայս քո. զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ. ալէ:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն. ալէ:

ԶՆի՝ Նու եւս խաղաղութե: Օրհնութի և փառք:

Օրհնութիւն ԲՁ:

Արծաթսիրութեամբն մոլեալ Յուդա. զիւր ըզմեծ ըզվարդապետն ընդ երեսուն արծաթոյ Հրէիցն մատնէր: Ընդ որում ես համբուրեցից ասէ ըզնա կալարուք. ով համբոյր նենգութեան նշան եւ աւուր մահու: Մերկացաւ յինքենէ զաստուածային սուրբ Հոգին. և զգեցաւ զսատանայ որպէս զհանդերձ արկաւ զիւրեաւ:

† Ի գիշերին յորում մատնէր փրկիչն մեր ի մահ խաչին եղ ի լեառն ձիթենեաց. աղօթելով զայս ասէր. Հայր անցցէ յինէն զբաժակս: Իսկ անօրէն աշակերտին Թողեալ զզգուշութ սիրոյ Նորա. և փութայր առ քահանայսն. ասէր ինձ զինչ կամիք տալ զի մատնեցից զվարդապետն:

Դձ. Որ նստիս ի քրովբէս Աստուած բանդ. այսօր վասն մեր խոնարհութեամբ նստար ի լերինն ձիթենեաց. օրհնեմք զՔեզ անդադար երգով: Որ համագոյդ ես խորհրդոյդ հայրենի. աշակերտաց քոց ծանուցեր զխորհուրդ քո գալստեանն. օրհնեմք զՔեզ անդադար երգով: Որ ամենայնից ես արարիչ և ստեղծիչ կենդանութե. այսօր զծածկեալ խորհուրդ Երրորդութեդ յայտնեցեր եկեղեցւոյ սրբոյ քո. օրհնեմք զՔեզ անդադար երգով:

ԶՔեզ օրհնեմք որ բաշխողդ ես բարութեանց. և հայցեմք ոչ ի մարդասիրէ. ընդ մօր քո ընտրելոցն զնմանալի աշխարհն: Զի դու ես Տէր յորմէ հայցէր մայրն հաւատով հանդերձ որդւովք սրբեցելովք. ընդ աջմէ քո զփառս եւ յահեկէ. ընդ որս և մեք աղաչեմք զի դասեսցես ընդ նոսա քո: Այլ դու բարձրեալ փրկիչ. որ վասն մեր խոնարհեցար. արժանի արա զմեզ ըմպել զբաժակ պատուիրանի կենաց քոց Տէր. որով կացցուք յաջմէ քումմէ ի հանդերձեալ քում գալստեանն:

ՀՈԳ. Սարսափելի հողմոյ նման ահեղագոչ սաստիկ հնչմամբ. երեւեցար ի վերնատանն Հոգի դասուն երկոտասանն. որք առ ի քէն մկրտեցան որպէս զոսկի հրով մաքրեցան. * մաքրեա ի մէնջ զմեղս մեղաց եւ զգեցո զլոյս փառաց: Եկիր յերկիր աստուածաբար դատել զաշխարհս իշխանաբար. ընդ արդարութեան և ընդ մեղաց և ընդ չարին դատաստանաց. բացեր զգանձս անհնութական պարգեւս եւ տուր որդւոց մարդկան. մաքրեա: Սէրն ի սիրոյ զսէրդ առաքեաց յինքն զանդամս իւր քեւ յօդեաց. զեկեղեցի իւր զոր շինեաց եօթն սեամբ քո հաստատեաց. տնտես ի նմա եդ զառաքեալսն եօթնեակ շնորհօք քո զարդարեաց. մաքրեա ի մէնջ զմեղս:

ՆՆՋ: Թագաւոր անմահ արարիչ յաւիտենից. մարդասիրութեամբդ քո խոնարհեալ յանձինս մեր. ստեղծիչ կենդանեաց և հանգուցիչ ննջեցելոց: Ի խաչին բեւեռեցար. զմահու լուծեր զիշխանութի. յաւիտենից զննջեցեալսն վերածեր յանմահ ի կեանս. ստեղծիչ կենդանեաց և հանգուցիչ ննջեցելոց: Արժանաւորաց քոց աղօթիւք յիշեա զննջեցեալսն. յորժամ գայցես անճառ փառօք հատուցանել մարդկան

ըստ գործս: Եւ մեր ննջեցելոցն շնորհեա դասել ընդ սուրբըս քո:

Ածն: Ըզքեզ կոյս և մայր և բնակարան ածային նէրմարդութեանն. գոհաբանեմք և վերօրհնեմք զեղեալ փրկող կենդանութեան ազգի մարդկան. * վասն որոյ ըզքեզ Ածածին և կոյս բարեբանեմք ըզմայր և զաղախին փրկչին մերոյ: Ծընունդըն Հօր և հինաւուրց. անժամանակն յաւիտենից. ժամանակաւ յորովայնի քում բնակեցաւ և ի Հօրէ ոչ մեկնեցաւ. վն որոյ: Ծընեալն ի քէն ի խաչ ելեալ. եւ ի յանթառ փառաց ընդ Հօր. անարգել ի մարդկանէ փառատրութեն էութեն երկրպագեալ. վն որոյ: Ըզքեզ ոչ միայն որդիք մարդկան այլ և վերին զօրութիւնք. դասք անմարմնոց հոգեղինաց հրեղինաց զուարթնոց եւ հրեշտակաց. գոհաբանեն և վերօրհնեն եւ փառաւորեն ըզմայր և զաղախին փրկչին մերոյ:

Խչ: Ապաւինեցաք ի խաչ քո արարիչ յաւիտենից. որ ետուր մեզ պահապան. յաղթող ընդդէմ թշնամւոյն. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինըս մեր: Բարձրեալ թագաւոր. որ վասն մեր ելեր ի խաչ. և բարձեր սովաւ զյանցանս. Նախաստեղծին Ադամայ. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինըս մեր: Գլուխ նբ հաւատոյ. և փայտ կենաց մարդկան յայտնեալ. զոր տեսեալ այսոյն պղծոյ. կործանեցաւ անկանգնելի. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինըս մեր: Դողացաւ թշնամին ընդ յայտնել սրբոյ խաչին. և ի յահէ փառաց նորա. կործանեցաւ յանդունդս երկրի. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինըս մեր: Փառք Հօր և: Երկինք ցընծային և երկիրս ուրախանայր. քանզի

փրկիչ ցուցաւ սբ խաչն. և լուսատու տիեզերաց. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինըս մեր:

Այժմ և միշտ: Ժողովեալ Հըրէիցըն կըշռեցին արծաթ բազում. առեալ տարան առ Պիղատոս. ասեն ի խաչ հան ի խաչ. զի հայհոյիչ է օրինացն:

Մաղնան+. փառք հրաշափառ չարչարանաց քոց:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Զարթեաւ աղեղըն քո ի նետըս կապարճից քոց. արբեցուցեր զգետս ցրուեցեր զերկիր. և դողացուցեր ի սաստկութենէ անձրեւի որ անցանէ ընդ սա: Անդունդք աղաղակեցին մեծապէս. լոյս փայլման արեգականն արգելաւ. և ծագումն լուսնին դադարեցաւ:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Փ. Մարտեան ընդ իս ի տարապարտուց. փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս. այլ ես յաղօթս կայի: Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ. ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ:

Փառք և: Այժմ և միշտ. ալէլուիա:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԳՁ:

Իջեր յերկնից անընկճելըն Որդի. ի հողեղէն ի բնութենէ մարդկան զչարչարանըս յանձն առեր. * օրհնեմք ըզքեզ որ էիր յառաջ քան զամենայն յաւիտեանս: Որ ասացեր բանիւ լինել ամենայն երկրի. ի յերկրի յատենի կացեալ տեսանէին արարածք. օրհնեմք ըզքեզ: Յորժամ դողան զուարթունք երկնից. այսօր եկիր կամաւ ի խաչ գեղարդեամբըն խոցեցար. օրհնեմք ըզքեզ:

Գ. ԸզՏէր օրհնեցէք. բարձր արարէք յաւիտեանս:

Փառք Հօր: Եւ զինուորըն գեղարդեամբըն յարձա-

կեալ. խոցեաց զկող կենարարին. բարձր արարէք յաւիտեան: Այժմ և միշտ: Ուստի աղբեր կենդանարար բղխեալ. լուաց զտիեզերս ի մեղաց. բարձր արարէք յաւիտեան:

Մեծացո. ԳՁ: Լոյս լուսոյ մայր և կենարար Բանին բնակարան. քեզ երանիցեն ազգք եւ ազինք ամենայն: Փառք Հօր: Ստեղծողին մայր և հնութեան կերպի նորոգողին. քեզ երանիցեն ազգ եւ ազինք ամենայն: Այժմ և միշտ: Լոյս ծագեցաւ ի քէն նստելոցս ի խաւարի. քեզ երանիցեն ազգք եւ ազինք ամենայն:

Ողորմ. ԳՁ: Եկեալ ի փրկութիւն ազգի մարդկան. ի ծառայէ յանձն առնու մատնիլ ի դատաստան. համբերելով վասն ըզմեզ կեցուցանել: Փառք Հօր: Մատնեալ Պիղատոսի որ՝ մահապարտ. ի յԱննայէ և ի Կայիափայ դատապարտեալ. համբերելով վասն ըզմեզ կեցուցանել: Այժմ և: Կացեալ ի յատենի երկրորդ Ադամ. վասն առաջինն Ադամայ պարտեացն թողութեան. համբերելով վասն ըզմեզ կեցուցանել:

Տէրյերկն. ԳՁ: Ով ըսքանչելիս և տեսիլ ահաւոր. զարմանալին երկնի եւ երկրի այսօր տեսաք ի խաչին: Փառք Հօր: Տեսեալ ըզՏէրն ի խաչին խաւարեցաւ արեգակն. և վարագոյր տաճարին ցելոյր վերուստ մինչ ի վայր: Այժմ և միշտ: Անարգաբար խաչեցաւ Տէրն ի մէջ ի յանօրինաց. զի լցցի գիրն որ ասէ թէ ընդ անօրէնս համարեցաւ:

Յորժամ ասեն զՏէրյերկնիցն՝ Խաչքուրանեն զՄասեալ ի մէջ մատրանն, մինչև վերջն փառք ի բարձունսն: Եւ ապա բերեալ դնեն առաջ խորանին կանգնեն:

Առաւ. Երգ: Մատնեցայ եւ ոչ ելանէի. աչք իմ տկարացան յաղքատութենէ:

Աղաղակեցի առ Տէր զօր համապազ. և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Քարոզ. Փառաւորեսցուք. կամ գոհ:

Մանկ. ԲՁ: Որ թագաւորդ ես թագաւորաց Քս. ի ծառայէ դատապարտեալ համբերելով վասն մեր. երկայնամիտ Տէր քեզ փառք: Փառք Հօր: Որ պատուական խաչիւդ Քս Քրիստոս. և նոր արեամբդ քո հեղմամբ կեցուցանել զմեզ կամեցար. երկայնամիտ Տէր քեզ փառք: Այժմ և միշտ: Որ մարդասիրապէս վասն ամենեցուն ամենայնի համբերեցեր. եւ ի մահու զմահ կոխեցեր. երկայնամիտ Տէր քեզ փառք:

Քարոզ. Վս խաղաղութեան: Աղօթ. Սբ ես Տէր:

Եւ ապա ասէ ստողոգի Սաղմոս ՃԸ:

ԿՑ. Փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս, այլ ես յաղօթս կայի:

Փխ. Աստուած օրհնութեան իմոյ մի լռեր. զի բերան մեղաւորի բերան նենգաւորի բացաւ ի վերայ իմ:

Խօսեցան զինէն լեզուաւ նենգաւորաւ. և բանիւ ատելութեան պաշարեցին զիս:

Մարտեան ընդ իս ի տարապարտուց. փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս, այլ ես յաղօթս կայի:

Հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ. ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ:

Կացո ի վերայ նորա մեղաւոր. սատանայ կացցէ ընդ աջմէ նորա:

Ի դատաստանէ ելցէ դատապարտեալ. և աղօթք նորա ի մեղս դարձցին:

Եղիցին աւուրք նորա նուազ. և զայցելութիւն նորա զայն այլ տարցի:

Եղիցին որդիք նորա որբ և կին ն՟ր այրի. սահեսցին փոփոխեսցին, որդիք նորա մուրողք եղիցին. և ելցեն ի բնակութենէ իւրեանց:

Քննեսցէ փոխատու զամենայն ինչս նորա. յափշտակեսցեն օտարք զվաստակս նորա:

Մի՛ գտցի օգնական նմա. և մի՛ ոք ողորմեսցի ի վ՟ր որբոց նորա:

Եղիցին որդիք ն՟ր ի սատակումն. և յազգէ ջնջեսցի անուն նորա:

Յիշեսցին մեղք հօր ն՟ր առաջի Տ՟ն, և մեղք մօր ն՟ր մի՛ ջնջեսցին. և եղիցին առաջի Տ՟ն յա՟մ ժամ:

Սատակեսցի յերկրէ յիշատակ ն՟ր. փոխանակ զի ոչ յիշեաց առնել զողորմութիւն:

Հալածեաց զայր աղքատ և զտնանկ. սպանանել զայն որ խոնարհ է սրտիւ:

Սիրեաց զանէծս, և ելցէ նմա. ոչ կամեցաւ զօրհնութիւն, հեռի եղիցի ի նմանէ:

Զգեցաւ զանէծս ո՟պ հանդերձ. մտցէ ո՟պ ջուր ի փոր ն՟ր, ո՟պ ձէթ ընդ ոսկերս նորա:

Եղիցի նմա ո՟պ հանդերձ զի ագանի. ո՟պ գօտի զի ածի հանապազ ընդ մէջ:

Այս գործ է այնոցիկ որ չարախօս կային զինէն առ Տէր. և ոյք խօսէին չար զանձնէ իմմէ:

Այլ դու Տէր Տէր, արա՛ ընդ իս ըստ անուան քում, զի քաղցր է ողորմութ՟ի քո. և փրկեա զիս, զի աղքատ և տնանկ եմ ես:

Սիրտ իմ խռովեցաւ ի փորի իմում. և ես ո՟պ ստուեր ի խոնարհել իմում պակասեցայ. և թօթափեցայ որպէս մարախ:

Ծունկք իմ տկարացան ի պահոց. և մարմին իմ այլագունեաց յիւղոյ:

Եղէ ես նախատ ն՟ց. տեսին զիս և շարժեցին զգլուխս իւրեանց:

Օգնեա՛ ինձ Տէր Ա՟ծ իմ. և փրկեա՛ զիս ըստ ողորմութեան քում:

Ծանիցեն զի ձեռն քո այս է. և դու Տ՟ր արարեր զայս:

Նոքա անիծանեն, և դու օրհնեսցես. ոյք յարուցեալ են ի վ՟ր իմ՝ զամօթ կրեսցեն. այլ ծառայ քո ուրախ եղիցի ի քեզ:

Զգեցցին զամօթ ոյք չարախօս կային զանձնէ իմմէ. և արկցեն ո՟պ կրկնոց զամօթ իւրեանց զիւրեամբք:

Այլ ես խոստովան եղէց առ Տէր յոյժ բերանով իմով. ի մէջ բազմաց օրհնեցից զքեզ:

Զի եկաց նա ընդ աջմէ տնանկիս. փրկել զիս յայնցանէ որ հալածեն զանձն իմ:

Զնի՝ Ո՛րթի՛ւ:

Աւետարան ըստ Յովհաննու: ԺԸ. 28:

Վասն չարչարանաց Տեառն մերոյ Յ՟սի Ք՟սի:

Եւ ածեն զՅիսուս ի վանացն Կայիափայ յապարանս դատաւորին. և էր այգուց: Եւ նոքա ոչ մտին յապարանսն, զի մի՛ պղծեսցին, այլ զի ուտիցեն զզատիկն: Ել առ ն՟ս Պիղատոս արտաքս և ասէ. զի՞նչ չարախօսութ՟ի մատուցանէք զառնէն զայնմանէ: Պատասխանի ետուն և ասեն ցնա. եթէ չէր չարագործ այրն այն՝ ապա ոչ մատնէաք զնա քեզ: Ասէ ցն՟ս Պիղատոս. առէք զնա դուք, և ըստ ձերոց օրինացն դատեցարուք: Ասեն ցնա Հրեայքն. մեզ ոչ է արժան սպանանել զոք: Զի լցցի բանն Յ՟սի՝ զոր ասաց, նշանակեալ՝ թէ որո՛վ մահու մեռանելոց իցէ: Եմուտ միւսանգամ յապարանսն Պիղատոս, կոչեաց զՅ՟ս և ասէ ցնա. դու՞ ես թագաւորն Հրէից: Պատասխանի ետ Յ՟ս. ի քէ՞ն ասես զայդ՝ եթէ այլք ասացին քեզ զինէն: Պատասխանի ետ Պեղատոս. մի՛ թէ և ես Հրեայ իցեմ. ազգն քո և քահանայապետք մատնեցին զքեզ ինձ. զի՞նչ

գործ գործեալ է քո: Պատասխանի ետ Յս. իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ. եթէ յաշխարհէ աստի էր արքայութիւն իմ, սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք՝ զի մի՛ մատնեցայց Հրէից. բայց արդ՝ թագաւորութիւն իմ չէ աստի: Ասէ ցնա Պիղատոս. ապա թէ այդպէս իցէ՝ թագաւոր ո՞ս ես դու: Պատասխանի ետ Յս. դու ասես՝ թէ թագաւոր իցեմ. բայց ես յայդ իսկ ծնեալ եմ, և ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ՝ զի վկայեցից ճշմարտութեան. ամ որ ի ճշմարտութենէ է՝ լսէ բարբառոյ իմոյ: Ասէ ցնա Պիղատոս. զի՞նչ է ճշմարտութիւն: Զայս իբրեւ ասաց, դարձեալ ել առ Հրեայսն և ասէ ցնոսա. ես և ոչ մի ինչ պատճառս գտանեմ ի նմա: Բայց է ձեր սովորութիւն, զի զմի ոք արձակեցից ձեզ ի զատկիս. արդ՝ կամի՞ք զի արձակեցից ձեզ զթագաւորն Հրէից: Աղաղակեցին ամենեքեան և ասէին. մի՛ զդա՝ այլ զԲարաբբա: Եւ էր Բարաբբայն այն աւազակ: Յայնժամ առ Պիղատոս զՅս և գան եհար: Եւ զինուորացն արարեալ պսակ ի փշոց՝ եդին ի գլուխ նր, և զգեցուցին նմա հանդերձ ծիրանի. և գային առ նա և ասէին. ողջ եր արքայ Հրէից. և հանէին նմա ապտակս: Ել դարձեալ Պիղատոս արտաքս, և ասէ ցնոսա. ահա ածեմ զնա արտաքս առ ձեզ, զի գիտասջիք թէ ես վնաս ինչ ի նմա ոչ գտանեմ: Ել Յս արտաքս և ունէր պսակ ի փշոց և հանդերձ ծիրանի. և ասէ ցնս. ահա այրդ ցձեզ: Իբրեւ տեսին զնա քահանայապետքն և սպասաւորք՝ զաղաղակ բարձին և ասեն. ի խա՛չ հան, ի խա՛չ հան զդա: Ասէ ցնոսա Պիղատոս. առէք զդա ի ձեզ, և ձեզէն հանէք ի խաչ. զի ես ի դմա վնաս ինչ ոչ գտանեմ: Պատասխանի ետուն նմա Հրեայքն. մեք օրէնս ունիմք, և ըստ օրինաց մերոց պարտի մեռանել. զի զանձն իւր Որդի Այ արար: Իբրեւ լուաւ զբանս զայս Պիղատոս՝ առաւել եւս երկեաւ: Եմուտ դարձեալ անդրէն յա-

պարանսն, և ասէ ցՅս. ուստի՞ ես դու. և Յս ոչ ետ նմա պատասխանի: Ասէ ցնա Պիղատոս. ընդ իս ո՞չ խօսիս. ո՞չ գիտես եթէ իշխանութիւն ունիմ հանել զքեզ ի խաչ, և իշխանութիւն ունիմ արձակել զքեզ: Պատասխանի ետ Յս. ոչ ունէիր դու իշխանութիւն ի վր իմ և ոչ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ ի վերուստ. վասն այնորիկ որ մատնեացն զիս քեզ, նորա մեծ մեղք են: Եւ յայնմանէ Պիղատոս խնդրէր արձակել զնա. և Հրեայքն աղաղակէին և ասէին. եթէ զդա արձակես՝ չես բարեկամ կայսեր. ամ ոք որ թագաւոր կոչէ զանձն իւր՝ հակառակ է կայսեր: Իսկ Պիղատոս իբրեւ լուաւ զբանս զայսոսիկ՝ ած զՅս արտաքս. և նստաւ ի վր բեմին ի տեղւոջն որ կոչէր Քարայատակ, և եբրայեցերէն՝ Կապպաթա: Էր ուրբաթն զատկի, և էր ժամ իբրեւ վեցերորդ. և ասէ ցՀրեայսն. ահա թագաւորդ ձեր ցձեզ: Եւ նոքա աղաղակէին. բա՛րձ ի մէնջ, բա՛րձ ի մէնջ, և հա՛ն զդա ի խաչ: Ասէ ցնոսա Պիղատոս. ես զթագաւորդ ձեր ի խա՞չ հանիցեմ: Պատասխանի ետուն քահանայապետքն. չիք մեր թագաւոր բաց ի կայսերէ: Յայնժամ ետ զնա ի ձեռս նց՝ զի ի խաչ ելանիցէ: ԺԹ. 16:

Երգ. Զհանդուրժեալ բնութք:

Քրզ. Խնդրեսցուք: Կեցո Յայնի—: Աղ. Քում ամենազօր և հրաշալի չարչարանացդ:

Եւ դնեն զսուրբ խաչն եւ զաւետարանն ի վերայ բեմին կամ Տրապիզին. եւ խունկ ծխեն: Եւ երկիր պագանեն ամենեքեան, եւ համբուրեն զխաչն եւ զաւետարանն մինչեւ ցերիս ժամու:

Եւ քահանայքն պար ածեալ ասեն Շարական

Բկ. Խաչի քո Քրիստոս երկիր պագանեմք. և ըզթաղումն քո մեծացուցանեմք. եւ սբ զյարութիւն ըզքո փառաւորեմք: Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ. վասն զի եկն ի ձեռն խաչին իւրոյ շնորհեաց պարգեւս աշխարհի:

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ և անմահ, ողորմեա մեզ:

ԱԿ. * Փառք քեզ խաչելոյդ ալէլուիա. քեզ Սիովնի ալէ-լուիա. քեզ յարուցելոյդ ալէլուիա:

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. և ետուր ուրախութիւն սրտից մերոց: Ի պտղոյ ցորենոյ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա:

Փառք քեզ խաչելոյդ ալէլ. Եւ այլն, որպէս է վերոյ:

Փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Փառք քեզ խաչելոյդ ալէլ. Եւ այլն, որպէս է վերոյ:

ԲԿ. Խաչըն կենարար որ եղեւ մեզ փրկութիւն. * սովաւ ամենեքեան ընդ քեզ բարեբանեմք: Որ ի Հօրէ լուսոյ լոյս ճառագայթեալ, ի յերկրի եւ գաւազան զօրութեան հաստատեցելոյ. սովաւ: Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս մեզ ցուցաւ. ի յօգնութիւն ընդդէմ թշնամեացն. սովաւ:

Քարոզ. Սբ խաչիւս: Աղօթք. Պահպանեա զմեզ:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

Եւ ապա տաղ ուրբաթու. Ծարաւեցաւ Տէր իմ, կամ այլ տաղ խաչելութեան: Եւ ապա կարգաւ զկարգ մեծի ուրբաթուն, որ յաղագս խաչելութեանն Քրիստոսի:

Յերեքժամն ժողովին ի տուն եկեղեցւոյն. եւ ասեն զՃաշու ժամն. Օրհնեալ Հոգիդ նր. եւ զՈղորմեա փոխեն. եւ զՏէր Ներողն երգեն՝ Խաւարեցաւ եւ Չարչարակցեալ. եւ զեծ քարոզն՝ զՄիաբանն եւ զԱրթուն մտօք եւ զՍբ սրտիւ, եւ զերեանց աղօթսն: Զկնի՝ Մաղթանք. Հոգւոցն հանգուցելոց: Քարոզ. Վսն հոգւոցն: Աղօթք. Քս որդի Այ. եւ Հայր մեր:

Յ Ե Ր Ե Կ Ն

Ի վերջ ժամն ժողովին յեկեղեցին. եւ ասեն սաղմոս ութ փոխ. եւ կարգաւ ութ ընթերցուածս մարգարէականս եւ ութ առաքելականս, ըստ միոյ սաղմոսի երկուս ընթերցուածս. եւ աւետարանս չորս:

Առաջին Սաղմոս ԼԴ:

ԿՑ. Յարեան ի վր իմ վկայք չարեաց. զոր ինչ ոչ գիտէի հարցանէին ցիս:

ՓԽ. Դատեա Տէր զայնոսիկ որ դատին զիս. մարտիր ընդ այնոսիկ որ մարտնչին ընդ իս:

Առ զզէն և զասպար քո, և արի օգնել ինձ. հան զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց. արգել զնս, և ասա դու ցանձն իմ, թէ փրկութիւն քո ես եմ:

Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ ոյք խնդրէին զանձն իմ. դարձցին յետս և ամաչեսցեն՝ ոյք խորհէին ինձ չար:

Եղիցին որպէս փոշի առաջի հողմոյ. և հրեշտակ Տեառն նեղեսցէ զնս:

Եղիցին ճանապարհք նց ի խաւար և ի գայթագղութիւն. և հրեշտակ Այ հալածեսցէ զնս:

Ի նանիր թագուցին ինձ որոգայթ յապականութեան իւրեանց. և ի նանիր նախատեցին զանձն իմ:

Հասցէ ի վր նց որոգայթ զոր ոչ գիտացին. և որս զոր թագուցին՝ առցէ զնս նց. և ի յորոգայթ ի նոյն անկցին:

Այլ անձն իմ ցնծասցէ ի Տէր. ուրախ եղէցի ի փրկութեն նր. և ամենայն ոսկերք իմ ասասցեն. Տէր, ո՞ նմանէ քեզ:

Զի փրկեաց զաղքատն ի ձեռաց հզօրին. զաղքատն և զտնանկն յայնցանէ որ յափշտակէին զնա:

Յարեան ի վերայ իմ վկայք չարեաց. զոր ինչ ոչ գիտէի հարցանէին ցիս:

Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ. ժառանգել զանձն իմ խորհեցան յորդւոց մարդկանէ:

Ես ի նեղել նոցա քուրձ զգենուի. խոնարհ առնէի պահովք զանձն իմ, և աղօթք իմ ի ծոց իմ դարձցին։

Ոչ զեղբայր և զընկեր՝ այնպէս հաճոյ լինէի. որպէս սգաւոր և տրտում՝ այնպէս խոնարհ առնէի։

Ի վ՟ր իմ ուրախ եղեն և ժողովեցան. ժողովեցան յիս տանջանք, և ես ոչ ծանեայ. ցրուեցան և ոչ զղջացան։

Փորձեցին զիս և արհամարհեցին արհամարհանօք. կրճտեցին ի վերայ իմ զատամունս իւրեանց. Տէր երբ տեսցես։

Ի բա՛ց արա զանձն իմ ի խորամանկութենէ նոցա. և յառիւծուց զմիամօրութիւն իմ։

Խոստովան եղէց քեզ Տէր՝ յեկեղեցիս մեծս. և ի ժողովս բազմաց օրհնեցից զքեզ։

Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. ոյք ատէին զիս ի տարապարտուց. ակնարկէի առնէին զիս աչօք իւրեանց։

Ընդ իս զխաղաղութիւն խօսէին. և ինքեանք բարկութեամբ զնենգութիւն խորհէին։

Բացին ի վերայ իմ զբերանս իւրեանց. և ասացին՝ այո՛ այո՛ տեսին աչք մեր։

Տեսեր Տէր և մի՛ լռեր. Տէր մի՛ ի բացեայ առնիր յինէն։

Զարթի՛ր և հայեա՛ Տէր յիրաւունս իմ, Աստուած իմ և Տէր իմ՝ ի դատաստանս իմ. և իրաւ արա ինձ ըստ արդարութեան քում Տէր Աստուած իմ։

Մի՛ ուրախ լիցին յիս թշնամիք իմ. և մի՛ ասասցեն ի սիրտս իւրեանց՝ թէ վա՜շ վա՜շ անձանց մերոց, զի ընկլուզաք զնա։

Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ ոյք խնդային ընդ չար իմ. զգեցցին զամօթ և զանարգանս՝ ոյք մեծաբանէին ի վերայ իմ։

Ցնծասցեն և ուրախ լիցին ի քեզ ամենեքեան. ոյք կամին ընդ արդարութիւն իմ։

Ասասցեն յամենայն ժամ մեծ է Աստուած. և որ կամին զխաղաղութիւն ծառայի քո։

Լեզու իմ խօսեսցի զարդարութիւնս քո. զօրհանապազ զգովութիւնս քո։

Առաջին ընթերցուածն աշակերտի պատանի է։

Ընթերցուածս ի Զաքարեայ մարգարէէ։ ԺԱ. 11։

Եւ ծանիցեն Քանանացիքն զխաշինս պահեստի իմոյ. զի բան Տ՟ն է։ Եւ ասացի ցն՟ս, թէ բարւոք թուի յաչս ձեր՝ տո՛ւք զվարձս իմ. ապա թէ ոչ՝ զրո՛յց արարէք։ Եւ կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթի։ Եւ ասէ ցիս Տէր՝ ա՛րկ դու զայդ ի բովս, և քննեա՛ թէ փո՞րձ իցէ, ո՟ր ես դտայ փորձ վ՟ն ն՟ց։ Եւ առի զերեսուն արծաթին, և արկի ի տուն Տ՟ն ի բովս։ Եւ ընկեցի զգաւազանն երկրորդ զվիճակն՝ ցրել զուխտ իմ ի մէջ Յուդայ և ի մէջ Իսրայէլի։ 14։

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս։ Զ. 14։

Այլ ինձ քա՛ւ լիցի պարծել՝ բայց միայն ի խաչն Տ՟ն մերոյ Յ՟ի Ք՟ի. որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, և ես աշխարհի։ Զի ի Ք՟ս Յ՟ս ոչ թլփատութի՟ ինչ է և ոչ անթլփատութի՟, այլ նոր արարածս։ Եւ որ միանգամ այսմ կանոնի միաբան լինին՝ խաղաղութիւն ի վ՟ր ն՟ց և ողորմութի՟, և ի վ՟ր Իսրայէլին Աստուծոյ։ Այսուհետեւ աշխատ ոք զիս մի՛ արասցէ, զի ես զչարչարանսն Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում եղբարք. ամէն։ 18։

Աղօթք հանդերձ սաղմոսելով զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։ Երեք անգամ կրկնեա։

Եւ եւս խաղաղութե՟։ Օրհնութի՟ և փառք։

Երկրորդ Սաղմոս ԼԷ։

ԿՑ. Ես ի տանջանս պատրաստ եմ. և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

ՓԽ. Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. և մի՛ բարկութեամբ քո խրատեր զիս։

Զի նետք քո հարան յիս. և յիս հաստատեցաւ ձեռն քո։

Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ՝ յերեսաց բարկութեան քոյ։

Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց՝ յերեսաց մեղաց իմոց։

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ. որպէս բեռն ծանր ծանրացան ի վերայ իմ։

Նեխեցան և փտեցան վէրք իմ՝ յերեսաց անզգամութեան իմոյ։

Տառապեցայ և խոնարհ եղէ յոյժ. զօրհանապազ տրտում գնայի, զի անձն իմ լի եղև չարչարանօք. և ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ։

Չարչարեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ. մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ։

Տէր առաջի քո են ամենայն ցանկութիւնք իմ. և հեծութիւն իմ ի քէն ոչ ծածկեցաւ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս, և եթող զիս զօրութիւն իմ. լոյս աչաց իմոց, և այս ոչ եղև ընդ իս։

Բարեկամք իմ և մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան և կացին. և մերձաւորք իմ հեռի եղեն յինէն։

Բռնադատէին զիս և խնդրէին զանձն իմ՝ որք խորհէին չար ի վերայ իմ. խօսեցան զանօրէնութիւն, և զնենգութիւն զօրհանապազ խորհեցան։

Այլ ես որպէս խուլ զի ոչ լսէ. որպէս համր որ ոչ բանայ զբերան իւր։

Եղէ ես որպէս մարդ որ ոչ լսէ. և ոչ գոն խօսք ի բերան նորա։

Ես ի քեզ Տէր յուսացայ. և դու լուիցես ինձ Տէր Աստուած իմ։

Ասացի թէ մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. ի սասանել ոտից իմոց՝ ի վերայ իմ մեծամեծս խօսեցան։

Ես ի տանջանս պատրաստ եմ. և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Զանօրէնութիւնս իմ պատմեցից. և հոգացայց վասն մեղաց իմոց։

Իսկ արդ՝ թշնամիք իմ կենդանի են, և զօրացեալ են քան զիս. և բազում էին որք ատէին զիս ի տարապարտուց։

Որք հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ՝ չարախօսէին զինէն, զի ես երթայի զհետ արդարութեան։

Մի՛ թողուր զիս Տէր Աստուած իմ, և մի՛ ի բացեայ առնիր յինէն. հայեա՛ց յօգնել ինձ Տէր փրկութեան իմոյ։

Ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ։ Գ. 10։

Վա՜յ անձանց նոցա. զի խորհեցան խորհուրդ չար առանձինն։ Եւ ասեն. կապեսցուք զարդարն՝ զի դժպհի եղև մեզ. այսուհետև զարդիւնս գործոց իւրեանց կերիցեն։ Վա՜յ անօրինին. չարիք ըստ գործոց ձեռաց իւրոց անցցեն ընդ նա։ Ժողովուրդ իմ, հարկահանք ձեր ճռաքաղ առնեն զձեզ, և պահանջողք տիրեն ձեզ. ժողովուրդ իմ, որ երանենդ ձեզ՝ խաբեն զձեզ. և զշաւիղս ոտից ձերոց խռովեցուցանեն։ Այլ արդ՝ հասցէ Տէր ի դատաստան, և կացուսցէ յատենի զժողովուրդ իւր։ Ինքնին Տէր ի դատ եկեսցէ ընդ ծերս ժողովրդեան իւրոյ և ընդ իշխանս նոցա. դուք զի՞ հրկէզ արարէք զայգի իմ. և յափշտակութիւն տնանկին է ի տունս ձեր։ Դուք զի՞ զրկէք զժողովուրդ իմ, և զերեսս տնանկաց լի առնէք ամօթով, ասէ Տէր Տէր զօրութեանց։ 15։

Պօղոսի առաքելոյն ի փիլիպեցւոց թղթոյն է ընթերցուածս: Բ. 5:

Զայն խորհեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ՝ որ ի Քն՟ Յն՟, որ ի կերպարանս ԱՅ՟ է, ոչ ինչ յափշտակութի՟ համարեցաւ զլինելն հաւասար ԱՅ՟. այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ, և կերպարանօք գտեալ իբրև զմարդ: Խոնարհեցոյց զանձն՝ լեալ հնազանդ մահու չափ և մահու խաչի: Վն՟ և Ած՟ զնա առաւել բարձրացոյց. և շնորհեաց նմա անուն՝ որ ի վեր է քան զա՟մ անուն: Զի յանուն Յն՟ի Քն՟ի ա՟մ ծունր կրկնեսցի՝ երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. և ա՟մ լեզու խոստովան լիցի, թէ Տէր է Յն՟ Քն՟ ի փառս Աստուծոյ Հօր: 11:

Աղօթք հանդերձ սաղմոսելով զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա: Երիցս անգամ կրկնեա:

Եւ եւս խաղաղութե՟: Օրհնութի՟ և փառք:

Երրորդ Սաղմոս Խ:

կց. Մտանէր տեսանել զնանրութի՟. խօսէր ի սրտի իւրում. ժողովէր զանօրէնութի՟ս յանձն իւր:

փխ. Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն. յաւուր չարի փրկէ զնա Տէր:

Տէր փրկէ զնա և կեցուցանէ. երանելի առնէ զնա ի վր՟ երկրի, և ոչ մատնէ զնա ի ձեռս թշնամեաց իւրոց:

Տէր օգնական է նմա ի մահիճս ցաւոց իւրոց. և զա՟մ անկողինս նորա դարձուցանէ ի հիւանդութե՟ նր՟:

Ես ասացի Տէր ողորմեա ինձ. և բժշկեա զանձն իմ. ես մեղայ քեզ:

Թշնամիք իմ ասացին ինձ չար. Ե՞րբ իցէ զի մեռցի և կորիցէ անուն նորա:

Մտանէր տեսանել զնանրութիւն. խօսէր ի սրտի իւրում. ժողովէր զանօրէնութիւնս յանձն իւր:

Արտաքս ելանէր և զնոյն խօսէր. զինէն շշնջէին ամենայն թշնամիք իմ:

Խորհեցան չար ի վերայ իմ. բան անօրէնութեան եդին ի վերայ իմ:

Մի՞ թէ որ ննջիցէն ո՞չ եւս յաւելուցու յառնել. քանզի և այրն խաղաղութե՟ իմոյ՝ յոր և եսն յուսացայ:

Որ ուտէր ընդ իս հաց, յաճախեաց առնել ինձ խաբէութիւն:

Այլ դու Տէր ողորմեա ինձ. կանգնեա զիս, և հատուցից նոցա:

Յայսմ ծանեայց թէ հաճեցար ընդ իս. զի մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ:

Այլ զիս յամբծութեան իմում ընկալար. հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան:

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի յաւիտեանս յաւիտենից. եղիցի եղիցի:

Ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ: Ծ. 4:

Տէր Տէր տայ ինձ լեզու խրատու, զի գիտացից խօսել ի ժամու զբանն: Պատրաստեաց զիս ընդ առաւօտս. յաւել ինձ ունկն ի լսել: Եւ խրատ Տե՟ն բանայ զականջս իմ, և ես ոչ խստանամ և ոչ ընդդէմ դառնամ: Զթիկունս իմ ետու ի հարուածս, զծնօտս իմ յապտակս. և զերեսս իմ ոչ դարձուցի յամօթոյ ընդ երեսս թքանելոյ: Եւ Տէր Տէր եղև իմ օգնական. վն՟ այնորիկ ոչ ամաչեցի. այլ արարի զդէմս իմ իբրև զվէմ հաստատուն. և գիտացի՝ թէ ոչ ամաչեցից: Զի մերձ է՝ որ արդարացուցանէն զիս: Ո՞վ է ոսոխն իմ, եկեսցէ կացցէ ի մէջ. և ո՞վ է որ դատէն զիս, մերձեսցի առ իս: Զի ահաւասիկ Տէր Տէր օգնական է ինձ. ո՞վ է որ չարչարիցէն զիս: Ահաւադիկ դուք ամենեքին իբրև զձորձս հնասջիք. և ցեց մեցամէս կերիցէ զձեզ: 9:

Պօղոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս: Ե. 6:

Զի մինչ դեռ տկարքն էաք՝ Քս վն մեր ի ժամանակի ի վր ամպարշտաց մեռաւ: Զի վն արդարոյ հազիւ ոք թէ մեռանիցի. այլ վն բարւոյ թերեւս համարձակիցի ոք մեռանել: Յայտնեաց ԱԾ զսէրն իւր ի մեզ, զի մինչ դեռ մեղաւորքն էաք՝ Քս վն մեր մեռաւ. որչափ եւս առաւել յարդարանալս մերում այժմիկ արեամբն նր՝ ապրեսցուք նովաւ ի բարկութենէ անտի: Զի եթէ մինչ թշնամիքն էաք՝ հաշտեցաք ընդ ԱԾ մահուամբ Որդւոյ նր. որչափ եւս առաւել ի հաշտելս մերում՝ ապրեսցուք կենօքն նր: Եւ ոչ այսչափ միայն, այլ և պարծիմք եւս յԱԾ ի ձեռն ՏՆ մերոյ ՅՍի ՔՍի. որով և զհաշտութիւնն իսկ ընկալաք: 11:

Աղօթք հանդերձ սաղմոսելով զՏէր աղաչեսցուք:
Տէր ողորմեա: Երեք անգամ կրկնել:

Եւ եւս խաղաղութե: Օրհնութիւն և փառք:

Չորրորդ Սաղմոս ԻԱ:

ԿՑ. Բաժանեցան զհանդերձս իմ ի մէջ իւրեանց. և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին:

Փխ. Աստուած Աստուած իմ, նայեա՛ց առ իս. ընդէ՞ր թողեր զիս. հեռի եղէ ի փրկութենէ իմմէ վասն բանից յանցանաց իմոց:

Աստուած իմ ի տուէ կարդացի առ քեզ, և ինձ ոչ լուար. ի գիշերի, և ինձ ոչ անսացեր:

Դու ի սրբս բնակեալ ես. և գովեալ Իսրայէլի:

Ի քեզ յուսացան հարքն մեր. յուսացան ի քեզ և փրկեցեր զնոսա:

Առ քեզ աղաղակեցին և կեցին. ի քեզ յուսացան և ոչ ամաչեցին:

Այլ ես որդն եմ, և ոչ եմ մարդ. նախատինք մարդկան և արհամարհանք ժողովրդոց:

Ամենեքեան որ տեսանէին զիս՝ արհամարհէին զինեւ. խօսէին շրթամբք և շարժէին զգլուխս իւրեանց:

Յուսացաւ ի Տէր, և փրկեսցէ զնա. կեցուսցէ զնա, զի կամի զնա:

Դու ես որ հաներ զիս յարգանդէ. յոյս իմ ի ստեանց մօր իմոյ:

Ի քեզ անկայ ես յարգանդէ. յորովայնէ մօր իմոյ դու ես Աստուած իմ:

Մի՛ ի բացեայ առնիր յինէն. զի նեղութիւնք մերձեալ են, և ոչ ոք է որ օգնէ ինձ:

Շուրջ եղեն զինեւ զուարակք բազումք. և ցուլք գէրք պաշարեցին զիս:

Բացին ի վերայ իմ զբերանս իւրեանց՝ որպէս առիւծ զի մռնչէ և յափշտակէ:

Ես որպէս զջուր հեղայ և ցրուեցան ամենայն ոսկերք իմ. և եղեւ սիրտ իմ որպէս մոմ հալեալ ի մէջ որովայնի իմոյ:

Չորացաւ որպէս խեցի զօրութիւն իմ. լեզու իմ ի քիմս իմ կցեցաւ. և ի հող մահու իջուցին զիս:

Շուրջ եղեն զինեւ շունք բազումք. և ժողովք չարաց պաշարեցին զիս:

Ծակեցին զձեռս իմ և զոտս իմ, և թուեցին զամ ոսկերս իմ. և նոքա հայեցան և տեսին զիս:

Բաժանեցան զհանդերձս իմ ի մէջ իւրեանց. և ի վր պատմուճանի իմոյ վիճակս արկանէին:

Դու Տէր, մի՛ հեռի առներ զօգնութիւնս քո յինէն. և Տէր յօգնել ինձ նայեա՛ց:

Փրկեա՛ ի սրոյ զանձն իմ. և ի ձեռաց շանց զմիամօրութիւն իմ:

Փրկեա՛ զիս ի բերանոյ առիւծու. յեղջերէ միեղջերուի զխոնարհութիւն իմ:

Պատմեցից զանուն քո եղբարց իմոց. ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ:

Երկիւղածք Տեառն օրհնեցէք զՏ՟ր. ամենայն զաւակն Յակովբեան փառաւոր արասցեն զնա:

Երկիցէ ի Տեառնէ ամենայն զաւակն Իսրայէլի, զի ոչ արհամարհեաց և ոչ անարգեաց զաղօթս աղքատի. և ոչ դարձոյց զերեսս իւր յինէն. այլ ի կարդալ իմում առ նա՝ լուաւ ինձ:

Ի քէն է գովութիւն իմ. յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ:

Զուխտս իմ կատարեցից առաջի ա՟մ երկիւղածաց ն՟ր:

Կերիցեն տնանկք և յագեսցին. օրհնեսցեն զՏէր որք խնդրեն զնա:

Կեցցեն սիրտք նոցա յաւիտեանս յաւիտենից. յիշեսցեն, և դարձցին առ Տէր ամենայն ծագք երկրի:

Երկիր պագցեն նմա ա՟մ տոհմք ազանց. զի Տեառն է արքայութ՟ի, և նա տիրէ ի վ՟ր ա՟մ հեթանոսաց:

Կերան և երկիր պագին նմա ա՟մ պարարտք երկրի. առաջի ն՟ր անկցին ամենեքեան որ իջանեն ի հող:

Անձն իմ նովաւ կեայ. և զաւակ իմ ծառայեսցէ նմա:

Պատմեսցի Տ՟ն ազգ որ գալոց է. պատմեսցեն զարդարութիւն նորա ժողովրդեան որ ծնանելոց իցէ՝ զոր արար Տէր:

Ընթերցուած յԱմովսայ մարգարէէ: Ը. 9:

Եւ եղիցի յաւուր յայնմիկ ասէ Տէր Տէր՝ մտցէ արեգակն ի միջօրէի. և խաւարեսցի յերկրէ լոյս ի տուէ: Եւ դարձուցից ի սուգ զտօնս ձեր, և զա՟մ երգս ձեր յողբս. և ածից ի վ՟ր ա՟մ հասակաց քուրձ, և ի վ՟ր ա՟մ գլխոց կնտութ՟ի. և արարից նմա իբրեւ սուգ սիրելոյ, և որոց ընդ նմայն իցեն՝ իբրեւ օր ցաւոց: Ահա աւուրք գան, ասէ Տէր Տէր, և առաքեցից սով յերկիր, ոչ սով հացի և ոչ ծարաւ ջրոյ, այլ սով լսելոյ զբանն Տ՟ն: Եւ խռովեսցին ջուրք ի ծովէ մինչեւ ի ծով, և ի հիւսիսոյ մինչեւ յարեւելս. ընթասցին խնդրել զբանն Տեառն, և մ՟ի գտցեն: 12:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս: Ա. 18:

Զի բան խաչին կորուսելոցն յիմարութ՟ի է. այլ փրկելոցս մեզ՝ զօրութ՟ի Ա՟յ: Զի գրեալ է. Կորուսից զիմաստութ՟ի իմաստնոց, և զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից: Ո՞ւր իմաստուն, ո՞ւր դպիր, ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ. ո՞չ ապաքէն յիմարեցոյց Ա՟ծ զիմաստութ՟ի աշխարհիս այսորիկ: Քանզի իմաստութ՟բն Ա՟յ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութ՟բն զԱ՟ծ, հաճեցաւ Ա՟ծ յիմարութ՟բ քարոզութ՟ենն ապրեցուցանել զհաւատացեալս: Իսկ որովհետեւ Հրեայք նշան հայցեն, և հեթանոսք զիմաստութիւն խնդրեն, մեք քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս, Հրէից գայթագղութիւն և հեթանոսաց յիմարութիւն. բայց նոցին իսկ կոչեցելոցն Հրէից և հեթանոսաց, զՔրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութ՟ի: Զի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ, և տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ: Թէպէտ և զձեր իսկ կոչումնդ տեսէք, եղբարք, զի ոչ բազում իմաստունք ըստ մարմնոյ, և ոչ բազում հզօրք և ոչ բազում ազնուականք. այլ զյիմարս աշխարհիս ընտրեաց Ա՟ծ՝ զի յամօթ արասցէ զիմաստունս. և զտկարս աշխարհիս ընտրեաց Ա՟ծ, զի յամօթ արասցէ զհզօրս. և զանտոհմս աշխարհի և զարհամարհեալս ընտրեաց Ա՟ծ և զոչինչսն՝ զի զէան ի՟մն խափանեսցէ. ո՟պ զի մ՟ի պարծեսցի ա՟մ մարմին առաջի Ա՟յ: Զի ի նմանէ դուք էք ի Ք՟ս Յ՟ս, որ եղեւ մեզ իմաստութ՟ի յԱ՟յ, արդարութ՟ի և սրբութիւն և փրկութ՟ի. զի ո՟պ և գրեալ է. Որ պարծին՝ ի Տէր պարծեսցի: 31:

Աղօթք հանդերձ սաղմոսելով զՏէր աղաչեսցուք: Տ՟ր ողորմեա: Երեք անգամ կրկնեա:

Եւ եւս խաղաղութեան: Օրհնութիւն և փառք:

Հինգշաբթի Սաղմոս Լ։

ԿՑ. Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ։

ՓԽ. Ի քեզ Տ՟ր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան. յարդարութ՟ն քում փրկեա՛ զիս և ապրեցո՛ զիս։

Խոնարհեցո՛ առ իս զունկն քո. վաղվաղեա՛ կեցուցանել զիս։

Լե՛ր իմ Ա՟ծ պաշտպան և տուն ապաւինի՝ ապրեցուցանել զիս. զի հզօրիչ իմ և ապաւէն իմ ես դու։

Վ՟ն անուան քո Տ՟ր առաջնորդեսցես ինձ և սնուսցես զիս. և հանցես զիս յորոգայթէ յայսմանէ՝ որ թագուցաւ ինձ։

Դու ես պաշտպան իմ Տէր. և ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ։

Փրկեցեր զիս Տէր Ա՟ծ ճշմարտութ՟բ քով. ատեցեր զայնոսիկ որք պահեն զերկիւղ ի սնոտիս։

Ես ի Տէր յուսացայ. ցնծացայց և ուրախ եղէց ի փրկութ՟ն քում։

Զի հայեցար ի խոնարհութ՟ի իմ, և փրկեցեր ի վըշտաց զանձն իմ. ոչ մատնեցեր զիս ի ձեռս նեղչաց իմոց, և կացուցեր յանդորրու զոտս իմ։

Ողորմեա՛ ինձ Տէր, զի նեղեալ եմ ես. խռովեցաւ ի սրտմտութ՟է ակն իմ, անձն իմ և փոր իմ։

Պակասեցան ի ցաւոց կեանք իմ. և ամք իմ յոգւոց ելանելոյ։

Աղքատացաւ ի տկարութ՟է զօրութ՟ի իմ. և ոսկերք իմ խռովեցան։

Քան զա՟մ թշնամիս իմ եղէ ես նախատ դրացեաց իմոց յոյժ. ահ և երկիւղ ծանօթից իմոց։

Ամենեքեան ոյք տեսանէին զիս՝ արտաքս փախչէին յինէն։

Մոռացեալ եղէ ես ո՟պ մեռեալ ի սրտէ. և եղէ ես ո՟պ զանօթ կորուսեալ։

Զի լուայ ես զբամբասանս բազմաց, որք շուրջ էին

զինեւ. ի ժողովել ն՟ց ի միասին, առնուլ զանձն իմ խորհեցան. այլ ես ի քեզ Տէր յուսացայ։

Ասացի դու ես Ա՟ծ իմ. և ի ձեռս քո է ժառանգութ՟ի իմ։

Փրկեա՛ զիս ի ձեռաց թշնամեաց իմոց. և ի հալածչաց իմոց։

Երեւեցո՛ զերեսս քո ի ծառայս քո. ապրեցո՛ զիս Տէր ըստ ողորմութ՟ն քում. Տ՟ր մի՛ յամօթ եղէց՝ զի կարդացի առ քեզ։

Ամաչեսցեն ամբարիշտք և իջցեն ի դժոխս. համր եղիցին շրթունք նենգաւորք, ոյք խօսէին զարդարոյ զանիրաւութ՟ի յամբարտաւանել և յանգոսնել իւրեանց։

Որպէս զի բազում է ողորմութ՟ի քաղցրութ՟ն քո Տ՟ր, զոր պահեցեր երկիւղածաց քոց։

Արարեր դու այնոցիկ ոյք յուսացեալ են ի քեզ, առաջի որդւոց մարդկան։

Ամրացուսցես զնոսա ի ծածկոյթ երեսաց քոց, ի խռովութենէ մարդկան։

Ծածկեսցես զն՟ս ի խորանի քում, ի հակառակութենէ լեզուաց։

Օրհնեալ է Տէր՝ զի սքանչելիս արար. զողորմութիւն իւր ի քաղաք ամուր։

Ես ասացի ի զարմանալ իմում. թէ ընկեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց։

Վ՟ն այսորիկ լուար ձայնի աղօթից իմոց. յաղաղակել իմում առ քեզ։

Սիրեցէ՛ք զՏէր ա՟մ ս՟րք ն՟ր. զի զստուգութ՟իս խնդրէ Տէր. և հատուցանէ այնոցիկ՝ որք առաւել առնեն զամբարտաւանութիւն։

Քաջալերեցարո՛ւք և զօրասցին սիրտք ձեր. ամենեքեան ոյք յուսացեալ էք ի Տէր։

Ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ։ Ծբ. 13։

Ահաւադիկ ի միտ առցէ մանուկ իմ. վերասցի և բարձրասցի և փառաւորեսցի յոյժ։ Զոր օրինակ զար-

մասցին բազումք ի վր՟ քո. այնպէս անշքեսցի տեսիլ քո ի մարդկանէ, և փառք քո յորդւոց ի մարդկանէ։ Այնպէս զարմասցին ազգք բազումք ի վր՟ քո, և կարկեսցեն թագաւորք զբերանս իւրեանց։ Զի որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, և որոց ոչ իցէ լուեալ՝ ի միտ առցեն։ Տէր, ո՞ հաւատաց լրոյ մերում. և բազուկ Տեառն ո՞ւմ յայտնեցաւ։ Պատմեցաք առաջի նորա իբրև զմանուկ, իբրև զարմատ ի ծարաւուտ երկրէ. ոչ գոյր նր՟ տեսիլ և ոչ փառք. տեսաք մեք զնա, և ոչ գոյր նր՟ տեսիլ և ոչ գեղեցկութի՟։ Այլ տեսիլ նր՟ անարգ՝ նուաղեալ քան զամ՟ որդւոց մարդկան. այր մի ի հարուածս և գիտէ համբերել ցաւոց. զի դարձուցեալ զերեսս իւր անարգեցաւ և ոչ ինչ համարեցաւ։ Նա զմեղս մեր բառնայ և վս՟ մեր չարչարի. և մեք համարեցաք զնա ի ցաւս և ի հարուածս և ի չարչարանս իբրև յԱյ՟։ Բայց նա վիրաւորեցաւ վս՟ մեղաց մերոց, և պատժեցաւ վս՟ մերոց անօրէնութե՟ց. խրատ խաղաղութե՟ մերոյ ի նմա, և նր՟ վիրօքն բժշկեցաք։ Ամենեքին իբրև ոչխարք մոլորեալք՝ այր ի ճանապարհի իւրում մոլորեցաւ, և Տէր մատնեաց զնա առ մեղս մեր։ Եւ նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր. իբրև ոչխար ի սպանդ վարեցաւ, և իբրև որոջ առաջի կտրչի անմռունչ կայ, այնպէս ոչ բանայ զբերան իւր։ Առ խոնարհութե՟ նր՟ դատաստան նր՟ բարձաւ. և զազգատոհմ նր՟ ո՞ պատմեսցէ. զի բառնան յերկրէ կեանք նր՟. յանօրէնութե՟ց ժողովրդեան իմոյ ի մահ վարեցաւ։ Եւ տաց զչարս փոխանակ գերեզմանի նր՟, և զմեծամեծս փոխանակ մահու նր՟. զի անօրէնութիւն ոչ գործեաց, և ոչ գտաւ նենգութի՟ ի բերան նր՟։ Եւ Տէր կամի սրբել զնա ի վիրաց անտի. եթէ տայցէք զվս՟ մեղացն, անձինք ձեր տեսցեն զաւակ երկայնակեաց. և կամի Տէր ի ձեռն նր՟ բառնալ ի ցաւոց անձին նր՟։ Ցուցանել նմա լոյս և ստեղծուլ իմաստութե՟. արդա-

ցուցանել զարդարն՝ որ մատչիւրն ծառայեաց բազմաց. և զմեղս նց՟ նա վերացուսցէ։ Վս՟ այսորիկ նա ժառանգեսցէ զբազումս, և զաւար հզօրաց բաշխեսցէ. փոխանակ զի ի մահ մատնեցաւ անձն նր՟, և ընդ անօրէնս համարեցաւ. և նա զմեղս բազմաց վերացոյց, և վս՟ անօրէնութե՟ց նոցա մատնեցաւ։ ԾԳ. 12։

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս։ Բ. 11։

Զի որ սրբէն և որ սրբին՝ ի միոջէ էին ամենեքին, վս՟ ոչ ամօթ համարի եղբարս անուանել զնս՟, և ասել. Պատմեցից զանուն քո եղբարց իմոց. ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ։ Եւ դարձեալ՝ թէ Ես եղէց յուսացեալ ի նա։ Եւ դարձեալ. Ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Այ՟։ Արդ՝ որովհետև մանկունք հաղորդեցին արեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձաւորութե՟ կցորդ եղև նոցունց. զի մահուն իւրով խափանեսցէ զայն որ զիշխանութի՟ մահուն ունէր, այս ինքն է՝ զսատանայ, և ապրեցուսցէ զայնոսիկ որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք ի ծառայութիւն։ Քանզի ոչ երբէք զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զզաւակէն Աբրահամու բուռն հարկանէ։ Ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանել. զի ողորմած լինիցի, և հաւատարիմ քահանայապետ յածակոյս կողմանէ անտի՝ առ ի քաւելոյ զմեղս ժողովրդեանն։ Զի որով ինքն չարչարեցաւ զփորձ առեալ՝ կարող է և փորձանաւորացն օգնական լինել։ 18։

Եւ ապա սկսանին զԵրգ ասացեալ Տեառն Ներսեսի յաղագ[illegible] ուրբաթուն ցերեկի աւետարանացն։

Շարական ԴԿ։

Նորոգող տիեզերաց որ զգեցուցեր մեզ լոյս փառաց. արկար ըզքեւ ի զինուորաց քղամիդ կարմիր նախատանաց. մերկեա յինէն ըզքուրձ մեղաց ըզ-

տըրտմագին արեամբ ներկած. և ըղձեցի զուրախալին ըզպատմուճանն իմ զառաջին:

Երկնաւոր Թագաւորիդ ի ծունր իջեալ խաղ առնէին. ծածկեալ ըզգլուխըդ կըտփէին և եղեգամբ հարկանէին. և զիմ անկեալ մինչ ի գետին ի հնազանդել կամաց չարին. մի թողուցուս խաղալ սովին այլ կանգնեսցես զիս վերըստին:

Բամեալ բոլորըդ քո մարմին յետ վըճռոյ դատաւորին. սաստիկ էառ զհարուած գանին վասըն գանից նախաստեղծին. զիս որ յոտից մինչեւ ցըգլուխ ցաւօք նեղիմ անհընարին. առողջացո դարձեալ կըրկին որպէս շնորհօք յաւազանին:

Սըրբափայլ պըճնեալ զարդուն զոր զգեցուցեր Ահարոնի, փոխան պըսակ ի փշոց եդին մըշակք այգւոյն Իսրայէլին. ըզփուշ մեղաց հանցես յինէն զոր յիս եհար իմ թըշնամին. և ողջացո զխայթուած վէրին զի սպիք մեղացըն ջընջեսցին:

Ձնէ Որթին:

Աւետարան ըստ Մատթէոսի: ԻԷ. 1:

Այս Աւետարան ասորերէնցու դասին է:

Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յսի Քսի:

Իբրեւ այգ եղեւ, խորհուրդ արարին ամ քահանայապետքն և ծերք ժողովրդեանն վս Յսի սպանանել զնա: կապեցին զնա, և առին գնացին. և ետուն ի ձեռս Պոնտացւոյ Պիղատոսի դատաւորի: Յայնժամ տեսեալ Յուդայի՝ որ մատնեացն զնա, թէ պարտաւորեցաւ, զղջացաւ և դարձոյց զարծաթն առ քահանայապետսն և ծերս ժողովրդեանն, և ասէ. մեղայ, զի մատնեցի զարիւն արդար. և նոքա ասեն. մեզ չէ փոյթ, դու գիտես: Եւ ընկէց զարծաթն ի տաճարին և գնաց, և չոգաւ խեղդեցաւ: Իսկ քահանայապետիցն առեալ զարծաթն՝ ասեն. ոչ է արժան ընդունել զայդ ի կորբանն, քանզի գինք արեան են: Խորհուրդ առեալ

գնեցին այնու զագարակն բրտի ի գերեզման օտարաց: Վս այնորիկ կոչեցաւ ագարակն այն՝ Ագարակ արեան՝ մինչեւ ցայսօր: Յայնժամ լցաւ՝ որ ասացաւն ի ձեռն Երեմեայ մարգարէի. Եւ առին զերեսուն արծաթին զգինս վաճառելոյն, զոր արկին յորդւոցն Իսրայէլի. և ետուն զնա յարդարակն բրտի, որպէս հրամայեաց ինձ Տէր: Եւ Յս եկաց առաջի դատաւորին. եհարց ցնա դատաւորն և ասէ. դու ես Թագաւորն Հրէից: Եւ Յս ասէ. դու ասես: Եւ ի չարախօսելն նր ի քահանայապետիցն և ի ծերոց՝ ոչ ինչ ետ պատասխանի: Յայնժամ ասէ ցնա Պիղատոս. ո՞չ լսես՝ որչափ դոքա հակառակ քո վկայեն: Եւ ոչ ետ նմա պատասխանի և ոչ բան մի, մինչեւ զարմանալ դատաւորին յոյժ: Բայց ըստ տօնի սովոր էր դատաւորն արձակել ժողովրդեանն կապեալ մի՝ զոր կամէին: Ունէին յայնժամ կապեալ մի նշանաւոր, որում անուն էր Յեսու Բարաբբա: Իբրեւ ժողովեցան, ասէ ցնս Պիղատոս. զո՞ կամիք յերկուց աստի՝ զի արձակեցից ձեզ, զՅեսու Բարաբբա՝ եթէ զՅս զանուանեալն Քս: Քանզի գիտէր՝ թէ առ նախանձու մատնեցին զնա: Եւ մինչ նստէր յատենին՝ առաքեաց առ նա կինն իւր և ասէ. չկայ ինչ քո և արդարոյն այնորիկ. զի բազում անցք անցին ընդ իս այսօր յանուրջս վս նր: Իսկ քահանայապետքն և ծերք հաւանեցուցին զժողովուրդն՝ զի խնդրեսցեն զԲարաբբայն, և զՅս կորուսցեն: Պատասխանի ետ դատաւորն և ասէ ցնս. զո՞ կամիք զի արձակեցից ձեզ յերկուց այտի: Եւ նոքա ասեն. զԲարաբբա: Ասէ ցնս Պիղատոս. իսկ զի՞ արարից զՅս զանուանեալն Քս: Ասեն ամենեքեան՝ խաչեսցի. և նա ասէ, զի՞նչ չար արար. և նոքա առաւել եւս աղաղակէին և ասէին, խաչեսցի: Եւ տեսեալ Պիղատոսի թէ ոչ ինչ օգնէ՝ այլ առաւել խռովութիւն լինի, առեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժողովրդեանն և ասէ. քաւեալ եմ ես

յարենէ արդարոյդ այդորիկ․ դուք գիտասջիք։ Պատասխանի ետ ամենայն ժողովուրդն և ասէ․ արիւն դորա ի վ՟ր մեր և ի վ՟ր որդւոց մերոց։ Յայնժամ արձակեաց ն՟ց զԲարաբբայն, և զՅ՟ս գան հարեալ ետ ի ձեռս՝ զի խաչեսցի։ Յայնժամ զինուորք դատաւորին առին զՅ՟ս յապարանս․ և ժողովեցին ի վ՟ր ն՟ր զա՟մ զգունդն․ մերկացին զնա, և արկին զնովաւ քղամիդ կարմիր։ Եւ բոլորեալ պսակ ի փշոց՝ եդին ի գլուխ ն՟ր, և եղէգն յաջոյ ձեռին ն՟ր․ ի ծունր իջեալ առաջի ն՟ր՝ կատակէին և ասէին․ ո՛ղջ եր Թագաւոր Հրէից։ Եւ Թքեալ ի նա՝ առնուին զեղէգնն և ծեծէին զգլուխ ն՟ր։ Եւ յորժամ ձաղեցին զնա՝ մերկացուցին ի նմանէ զքղամիդն կարմիր և ագուցին նմա զիւր հանդերձն, և տարան զնա ի խաչ հանել։ Եւ ելեալ արտաքս՝ գտին այր մի Կիւրենացի՝ անուն Սիմովն, զնա կալան պահակ՝ զի բարձցէ զխաչն ն՟ր։ Եւ եկեալ ի տեղին անուանեալ Գողգոթա, որ է տեղի կառափելոյ, ետուն նմա ըմպել գինի ընդ լեղի խառնեալ․ և իբրև ճաշակեաց՝ ոչ կամէր ըմպել։ Եւ հանեալ զնա ի խաչ՝ բաժանեցին զհանդերձսն ն՟ր վիճակաւ․ զի լցցի բանն՝ որ ասացաւ ի մարգարէէն․ Բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս, և ի վ՟ր պատմուճանի իմոյ վիճակս արկանէին։ Եւ նստեալ պահէին զնա։ Եւ եդին ի վ՟ր գլխոյ ն՟ր գրեալ զվնաս ն՟ր՝ Թէ այս է Յ՟ս Թագաւորն հրէից։ Յայնժամ հանին ընդ նմա ի խաչ երկուս աւազակս, մի յաջմէ ն՟ր և մի յահեկէ։ Եւ որ անցանէինն՝ հայհոյէին զնա․ շարժէին զգլուխս իւրեանց և ասէին․ վա՜հ որ քակէիր զտաճարն, և զերիս աւուրս շինէիր զնա․ ապրեցո՛ զքեզ, եթէ Որդի ես Ա՟յ՝ էջ ի խաչէդ։ Նոյնպէս և քահանայապետքն ձաղէին հանդերձ դպրօքն և ծերովք և ասէին։ Զայլս ապրեցոյց՝ զինքն ոչ կարէ ապրեցուցանել․ եթէ Թագաւոր է Իսրայէլի՝ իջցէ այժմ ի խաչէդ, և հաւատասցուք դմա․ եթէ յուսացաւ

յԱծ՟՝ փրկեսցէ այժմ զդա՝ եթէ կամի զդա․ քանզի ասաց՝ եթէ Ա՟յ Որդի եմ։ Զնոյն և աւազակքն որ խաչեալ էին ընդ նմա, նախատէին զնա։ Եւ ի վեց ժամէ աւուրն՝ խաւար եղեւ ի վ՟ր ա՟մ երկրի մինչեւ ցինն ժամ։ Եւ զինն ժամաւն գոչեաց Յ՟ս ի ձայն մեծ և ասէ․ Է՛լի, Է՛լի, լամա սաբաքթանի․ այս ինքն է՝ Ած՟ իմ, Ած՟ իմ, ընդէ՞ր Թողեր զիս։ Ոմանք յայնցանէ որ անդն կային, իբրև լուան՝ ասէին․ զԵղիա կարդայ դա։ Եւ վաղվաղակի ընթացաւ մի ո՟մն ի նոցանէ, ա՛ռ սպունգ լի քացախով, հարեալ յեղեգան՝ ետ ըմպել նմա։ Եւ կէսքն ասէին․ Թո՛ղ տեսցուք եթէ գա՞յ Եղիա փրկել զդա։ Եւ Յ՟ս դարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ և արձակեաց զոգին։ Եւ ահա վարագոյր տաճարին ցելաւ յերկուս՝ ի վերուստ մինչեւ ի վայր, և երկիր շարժեցաւ, և վէմք պատառեցան։ Եւ գերեզմանք բացան և բազում մարմինք ննջեցելոց ս՟բց յարեան։ Եւ ելեալ ի գերեզմանաց յետ յարութե՟ն ն՟ր մտին ի քաղաքն ս՟բ և երեւեցան բազմաց։ Իսկ հարիւրապետն և որ ընդ նմա պահէին զՅ՟ս, իբրև տեսին զշարժումն և զեղեալսն՝ երկեան յոյժ և ասեն․ արդարեւ Ա՟յ որդի էր սա։ Էին անդ կանայք բազումք, կային ի հեռաստանէ և հայէին, որք եկին զկնի Յ՟սի ի Գալիլեէ պաշտել զնա․ յորս էր Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակովբայ և Յովսեայ մայր, և մայր որդւոցն Զեբեդեայ։ 56։

Աղօթք հանդերձ սաղմոսելով զՏէր աղաչեսցուք։
Տէր ողորմեա։ Երեք անգամ կրկնեա։

Եւ եւս խաղաղութե՟։ Օրհնութի՟ և փառք։

Վեցերորդ Սաղմոս ԿԸ։

ԿՑ․ Եդուն ի կերակուր ինձ լեղի․ և ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ։

ՓԽ․ Ապրեցո՛ զիս Ած՟, զի հասին ջուրք յանձն իմ․ ընկլայ ես ի խորս անդնդոց, ուր ոչ գոյ ինձ հանդիստ։

Եկի ես ի խորս ծովու. և շրջանք ընկղմեցին զիս։

Վաստակեցի ես առ աղաղակել. և կերկերեցաւ կո-կորդ իմ։

Նուաղեցան աչք իմ առ յուսալ ինձ առ Տէր Աստուած իմ։

Բազում եղեն քան զհեր գլխոյ իմոյ ոյք ատէին զիս ի տարապարտուց։

Զօրացան յիս թշնամիք իմ և ատելիք իմ ի նանիր. ինչ զոր ոչ յափշտակեալ էր՝ տուժէի նոցա։

Ած դու ծանեար զանզգամութի իմ, և յանցանք իմ ի քէն ոչ ծածկեցան։

Մի՛ ամաչեսցեն վն իմ ոյք համբերեն քեզ Տէր Տէր զօրութեանց. մի՛ պատկառեսցեն վն իմ, ոյք խնդրեն զքեզ Աստուած Իսրայէլի։

Վն քո համբերի նախատանաց, և ծածկեաց ամօթ զերեսս իմ։

Օտար եղէ ես եղբարց իմոց. և հիւր որդւոց մօր իմոյ։

Նախանձ տան քո եկեր զիս. նախատինք նախատչաց քոց անկան ի վերայ իմ։

Խոնարհեցուցի պահօք զանձն իմ, և եղեն ինձ այս նախատինք. արարի զհանդերձս իմ քուրձ և եղէ յառակ նոցա։

Զինէն խորհէին, որ նստէին առ դրունս, զիս այպն առնէին՝ ոյք ըմպէին գինի։

Ես յաղօթս կայի առ քեզ Տէր ի ժամանակ ընդունելի։

Ած ի բազում ողորմութե քում լուր ինձ, ի ճշմարտութիւն փրկութեան քո։

Ապրեցո զիս ի կաւոյ զի մի՛ ընկլայց. ապրեցայց ես յատելեաց իմոց, և ի խորոց ջուրց բազմաց։

Մի՛ ընկլցեն զիս պտոյտք ջուրց, և մի՛ ընկղմեսցեն զիս անդունդք խորոց. և ջրհոր մի՛ կափուսցէ զբերան իւր ի վերայ իմ։

Լուր ինձ Տէր, զի քաղցր է ողորմութի քո. ըստ բազում գթութե քո հայեա՛ յիս, և մի՛ դարձուցաներ զերեսս քո ի ծառայէ քումմէ, զի նեղեալ եմ ես վաղվաղակի լո՛ւր ինձ։

Հայեա՛ յանձն իմ, և փրկեա՛ զիս. և վն թշնամեաց իմոց ապրեցո՛ զիս։

Զի դու գիտես զնախատինս իմ, զամօթ իմ, և զպատկառանս իմ։

Առաջի քո են ամ նեղիչք անձին իմոյ. նախատանաց համբեր սիրտ իմ և թշուառութեան։

Ակն ունէի՝ թէ ոք տրտմեսցի ընդ իս, և ոչ ոք էր. և մխիթարիչ ինձ ոք ոչ գտաւ։

Ետուն ի կերակուր ինձ լեղի. և ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ։

Եղիցին սեղանք նց առաջի նց յորոգայթ, ի հատուցումն և ի գայթագղութիւն։

Խաւարեսցին աչք նց, զի մի՛ տեսցեն. և զթիկունս նոցա հանապազ կորացո։

Արկցես ի վր նց զբարկութի քո. սրտմտութի բարկութե քո հասցէ ի վր նոցա։

Եղիցին բնակութիք նց աւերակ, և ի յարկս նց մի՛ ոք իցէ որ բնակիցէ։

Զի զոր դուն հարեր՝ հալածեցին. և ի վէրս ցաւոց իմոց յաւելին։

Դի՛ր մեղս ի վր մեղաց նց, զի մի՛ մտցեն յարդարութիւն քո։

Ջնջեսցին նոքա ի դպրութէ քումմէ կենաց. և ընդ արդարս քո մի՛ գրեսցին։

Աղքատ և ցաւած եմ ես. փրկութի քո Աստուած ընկալցի զիս։

Օրհնեցից զանուն Այ իմոյ օրհնութբ, և բարձր արարից զնա գովութեամբ։

Հաճոյ եղիցի Այ քան զորթ մատաղ, որ բերէ եղջիւրս և կճղակս։

Տեսցեն աղքատք և ուրախ եղիցին. խնդրեցէք զԱ՟ստուած և կեցցեն անձինք ձեր։

Զի լուաւ Տէր տնանկաց, և զկապեալս իւր ոչ արհամարհեաց։

Օրհնեսցեն զնա երկինք և երկիր, ծով և ամենայն որ զեռայ ի նոսա։

Ա՟ծ փրկէ զՍիովն, և շինեսցին քաղաքք Հրէաստանի. շինեսցեն բնակեսցեն և ժառանգեսցեն ի նմա։

Զաւակ ծառայից քոց հաստատեսցի անդ. և ո՟յք սիրեն զանուն քո բնակեսցեն ի նմա։

Ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ։ Կգ. 1։

Իսկ այս ո՞վ է՝ որ դիմեալ գայ յԵդովմայ. կարմրութի՟ ձորձոց իւրոց ի Բոսորայ. գեղեցիկ պատմուճանաւ և բուռն զօրութե՟։ Ես խօսիմ զարդարութի՟ և իրաւունս փրկութե՟։ Վ՟ն էր կարմիր են ձորձք քո. և հանդերձք քո իբրև հնձանահարի լիոյ հնձանի կոխելոյ։ Հնձան հարի միայն, և ի հեթանոսաց ոչ ոք էր ընդ իս. կոխեցի զն՟ս սրտմտութե՟ և ճմլեցի զն՟ս բարկութե՟, և իջուցի յերկիր. և զա՟մ հանդերձս իմ թաթաւեցի։ Զի հասեալ էր ի վ՟ր ն՟ց օր հատուցման, և ամ փրկութե՟ եկեալ հասեալ։ Հայեցայ, և ոչ ոք էր որ օգնէր. զմտաւ ածի, և ոչ ոք էր որ ի թիկունս հասանէր։ Փրկեաց զն՟ս բազուկ իմ. և սրտմտութիւն իմ միայն զգէմ կալաւ։ Կոխեցի զն՟ս բարկութեամբ իմով, և զենի զն՟ս սրտմտութե՟ իմով. և իջուցի զնոսա յերկիր։ 6։

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս։ Թ. 11։

Այլ Ք՟ս եկեալ քահանայապետ հանդերձելոցն բարեաց՝ մեծաւն և կատարելովն և անձեռագործ խորանաւն, այս ինքն է՝ որ ոչ յայսց արարածոց, և ոչ արեամբ նոխազաց և զուարակաց. այլ իւրով արեամբն

եմուտ միանգամ ի սրբութիւն յաւիտենականս գտեալ զփրկութի՟։ Զի եթէ արիւն ցլուցն և նոխազաց և մոխիր երնջոցն ցանեալ՝ զպղծեալսն սրբէր առ ի մարմնոյ սրբութե՟. ո՞րչափ ևս առաւել արիւն Ք՟ի, որ ի ձեռն Հոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն անարատ պատարագ Ա՟յ, սրբեսցէ զխիղճ մտաց ձերոց ի մեռելոտի գործոց անտի՝ պաշտել զԱ՟ծ կենդանի։ Եւ վ՟ն այնորիկ նորոյ ուխտիս է միջնորդ. զի յորժամ մահ լինիցի՝ ի փրկութի՟ վ՟ն առաջին ուխտին յանցանաց, զաւետիս առցեն հրաւիրեալքն ի ժառանգութի՟ յաւիտենից։ Քանզի ուր կտակ է, հարկ է զմահ ի մէջ բերել զկտակագրին։ Զի կտակ յետ մահու հաստատուն է. ապա թէ ոչ՝ զի՞րդ իցէ հաստատուն, մինչ կտակագիրն կենդանի է։ Ուստի և ոչ առաջինն առանց արեան նորոգէր։ Քանզի իբրև պատմեցան ա՟մ պատուիրանք օրինացն ի Մովսիսէ ժողովրդեանն, առեալ զարիւն ցլուցն և նոխազացն, ջրով և բրդով, կարմրով և զոպայիւ, զկտակարանօքն իսկ և զա՟մ ժողովրդեամբն սրսկեաց, և ասէ. Այս է արիւն կտակին՝ զոր պատուիրեաց ձեզ Ա՟ծ։ Եւ զխորանաւն և զա՟մ կահիւ սպասուն նոյնպէս սրսկեաց զարիւնն։ Եւ գրեթէ ա՟մ ինչ արեամբն սրբէր ըստ օրինացն. և առանց հեղման արեան չլինէր թողութի՟։ Ապա հարկ էր օրինաւորացն այնպիսեօքն սրբել. և բուն իսկ երկնաւորացն՝ առաւել ևս պատարագօք քան զնոյնս։ Զի ոչ եթէ ի ձեռագործ սրբութիւն եմուտ Ք՟ս յօրինակս ճշմարտութե՟ն. այլ ի բուն իսկ յերկինս, յանդիման լինել երեսացն Ա՟յ վ՟ն մեր։ Ոչ զի բազում անգամ մատուցանիցէ զանձն պատարագ՝ ո՟պ քահանայապետն, որ մտանէր ի սրբութի՟ սրբութեցն ամի ամի արեամբ օտարաւ. ապա թէ ոչ՝ պարտ էր նմա բազում անգամ չարչարել ի սկզբանէ աշխարհի. բայց արդ աւասիկ մի անգամ ի կատարած յաւիտենից՝ յանարգութի՟ մեղաց իւրով

պատարագաւն յայտնեալ է։ Եւ զոր օրինակ կայ մնայ մարդկան մի անգամ մեռանել, և յետ այնորիկ դատաստան․ նոյնպէս և Քս մի անգամ մատուցեալ պատարագ առ ի բառնալոյ զմեղս բազմաց․ իսկ յերկրորդումն առանց մեղաց յայտնեսցի այնոցիկ, որ ակն ունիցին նմա հաւատովք ի փրկութիւն։ 28։

Շարական Դկ։

Ե՞տուն ըմպել քեզ ըզլեղին և ըզքացախն ի ծարաւին․ ո՛րբեր կամաւ զի՛ քա՛ղցրասցին ճաշա՛կք պըտո՛ղոյն դառնագունին․ ըզգառնութի՞ւն թունաւո՛րին զոր ի մա՛սունս հոգւոյս արկին․ հեղքեա ի բաց հանդե՛րձ սովին եւ քա՛ղցրասցի սէր քո՛ ի սմի՛ն։

Ստեղնեալ ծառոյ մահաբերին այն որ բուսաւ ի մէջ դրախտին․ փոխան բարձեր ըզփայտ խաչին ի Գողգոթա հաներ տեղին․ զիմ առ ի մեղս անկեալ զոգի և ծանրագոյն բարձող բեռին․ բարձ ի յուսոյդ ըստ ոչխարին հան ի յերկինս յուխտեալ տեղին։

Ի յուրբաթու ժամ երրորդին բեւեռեցար Տէր ի խաչին․ լուծեր զկապանս նախաստեղծին և կապեցեր ըզթշնամին․ զիս ամրացո ընդ հովանեաւ կենդանարար քո նըշանին․ և ի ծագեն յարեւելից լուսաւորեա լուսով նորին։

Երանեա՛լ աւազակին բացեր ըզդուռն Ադին դրախտին․ ըստ հաւատոյ սըրտի նորին կատարեցեր ըզխընդրելին․ տուր և ի՞նձ Տէր ընդ նըմին լսել ըզնոյն պատասխանին․ այսօր ընդ իս իցես յԱդին ի հայրենին քո առաջին։

Ջ՞նէ՛ Ո՛րթի՛ւ։

Աւետարան ըստ Մարկոսի։ ԺԵ․ 1։

Վն խաչելութե Տեառն մերոյ Յսի Քսի։

Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խորհուրդ արարեալ քահանայապետացն հանդերձ ծերովքն և դպրօք, և ամ ատեանն կապեցին զՅս և տարան մատնեցին Պի-

ղատոսի։ Եհարց զնա Պիղատոս և ասէ․ դո՞ւ ես թագաւորն Հրէից։ Նա պատասխանի ետ նմա և ասէ․ դու ասես։ Եւ չարախօսէին զնմանէ յոյժ քահանայապետքն, և նա ոչ ինչ տայր պատասխանի։ Իսկ Պիղատոս դարձեալ հարցանէր զնա․ ո՞չ ինչ տաս պատասխանի, տե՛ս՝ քանի՛ ամբաստանեն զքէն։ Եւ Յիսուս այնուհետեւ ոչ ինչ ետ պատասխանի, մինչեւ զարմանալ յոյժ Պիղատոսի։ Բայց ըստ տօնի արձակէր նց զմի ոք զկապեալ, զոր ինքեանք խնդրէին։ Եւ էր՝ որում անուն էր Բարաբբա՝ կապեալ ընդ խռովիչսն, որոց ի խռովելն՝ այր մի սպանեալ էր։ Ի ձայն բարձր սկսաւ աղաղակել ամբոխն և խնդրել՝ որպ սովոր էր, զի արձակեսցէ նց զԲարաբբայն։ Պատասխանի ետ Պիղատոս և ասէ ցնս․ կամի՞ք՝ զի արձակեցից ձեզ զարքայն Հրէից։ Քանզի գիտէր թէ առ նախանձու մատնեցին զնա քահանայապետքն։ Որք և զամբոխն հաւանեցուցին՝ զի արձակեսցէ նց զԲարաբբայն։ Դարձեալ պատասխանի ետ Պիղատոս և ասէ ցնս․ իսկ զի՞նչ կամիք թէ արարից զարքայն Հրէից։ Եւ նոքա դարձեալ աղաղակէին՝ յուզեալք ի քահանայապետացն, ի խա՛չ հան զդա։ Ասէ ցնս Պիղատոս․ զի՞նչ ինչ չար արարեալ իցէ դորա։ Եւ նոքա առաւել եւս աղաղակէին և ասէին, ի խա՛չ հան զդա։ Իսկ Պիղատոս իբրեւ զմիտս կամեցաւ հաճել զամբոխին, արձակեաց նց զԲարաբբայն․ և զՅս գան հարեալ՝ ետ ի ձեռս, զի ի խաչ ելանիցէ։ Եւ զինուորքն տարան զնա ի ներքս ի գաւիթն՝ ուր հրապարակն էր․ և կոչեն միանգամայն զամ զգունդն, և զգեցուցանեն նմա քղամիդ կարմիր և ծիրանիս, և եդին ի գլուխ նորա պսակ արարեալ ի փշոց։ Եւ սկսան ողջոյն տալ նմա և ասել․ ողջ եր արքայդ Հրէից։ Եւ ծեծէին զգլուխն եղեգամբ, և թքանէին ընդ երեսս, և ի ծունր իջեալ երկիր պագանէին նմա։ Եւ իբրեւ կատակեցին զնա՝ մերկացուցին զքղամիդն և զծիրանիս,

և զգեցուցին նմա զիւր հանդերձ, և ածին արտաքս՝ զի ի խաչ հանցեն զնա։ Եւ ունէին պահակ զՍիմովն Կիւրենացի՝ որ ընդ այն անցանէր՝ եկեալ յագարակէ, զհայրն Աղեքսանդրի և Ռուփայ. զի բարձցէ զխաչափայտն նր՟։ Եւ ածեն զնա ի Գողգոթա, տեղի մի՝ որ թարգմանի՝ տեղի կառափելոյ։ Եւ տային նմա գինի զմուսեալ, և նա ոչ առ. և հանեն զնա ի խաչ։ Եւ բաժանեցին զհանդերձս նր՟, արկեալ վիճակս ի վ՟ր՝ թէ ո՛ զինչ առնուցու։ Էր ժամ երրորդ, և հանին զնա ի խաչ։ Եւ էր գիր վնասու նր՟ գրեալ՝ թէ թագաւոր է հրէից։ Եւ ընդ նմա հանին ի խաչ երկուս աւազակս, մի ընդ աջմէ և մի ընդ ահեկէ նր՟։ Եւ լցաւ գիրն որ ասէ, թէ ընդ անօրէնս համարեցաւ։ Եւ որք անցանէինն՝ հայհոյէին զնա, շարժեալ զգլուխս իւրեանց և ասէին. վա՜հ որ քակէիր զտաճարն, և զերիս աւուրս շինէիր. ապրեցո՛ զանձն քո և է՛ջ ի խաչէդ։ Նոյնպէս և քահանայապետքն այպն արարեալ ընդ միմեանս հանդերձ դպրօքն, և ասէին. զայլս ապրեցոյց՝ զանձն ոչ կարէ ապրեցուցանել։ Քս՟դ արքայդ Իսրայէլի, իջցէ այժմ ի խաչէ այտի, զի տեսցուք և հաւատասցուք դմա. և որ ընդ նմա ի խաչն ելեալ էին՝ նախատէին զնա։ Եւ իբրև վեց ժամ եղեւ՝ խաւար կալաւ զա՟մ երկիր մինչև ցինն ժամ։ Եւ յիններորդ ժամուն աղաղակեաց Յ՟ս ի ձայն մեծ, և ասէ. Է՛լի, Է՛լի, լամա սաբաքթանի. որ թարգմանի՝ Ա՟ծ իմ, Ա՟ծ իմ, ընդէ՞ր թողեր զիս։ Եւ ոմանք ի նոցանէ որ շուրջն կային զնովաւ՝ իբրև լուան, ասէին թէ զԵղիա կարդայ։ Եւ ընթացեալ մի ոմն՝ ելից սպունգ մի քացախով, և հարեալ յեղեգան՝ տայր ըմպել նմա, և ասէ. թո՛յլ տուր տեսցուք՝ գա՞յ Եղիա իջուցանել զդա։ Եւ Յ՟ս արձակեաց ձայն մեծ և եհան զոգի։ Եւ վարագոյր տաճարին պատառեցաւ յերկուս՝ ի վերուստ մինչև ի խոնարհ։ Եւ տեսեալ հարիւրապետին որ կայր անդ՝ թէ աղաղակեաց և ե-

հան զոգի, ասէ. արդարև այրս այս Որդի Ա՟յ էր։ Էին և կանայք՝ որ հայէին ի հեռաստանէ. յորս էր Մարիամ Մագդաղենացի, և Մարիամ Յակովբու փոքրկան և Յովսեայ մայրն և Սողովմէ. որք յորժամ էրն ի Գալիլեա՛ զհետ շրջէին նորա և պաշտէին զնա. և այլ բազում կանայք՝ որք ընդ նմա խակ ելեալ էին յԵրուսաղէմ։ 41.

Աղօթք հանդերձ սաղմոսելով զՏէր աղաչեսցուք։ Տ՟ր ողորմեա։ Երեք անգամ կրկնել։

Եւ եւս խաղաղութեան։ Օրհնութիւն և փառք։

Եօթներորդ Սաղմոս ՁԷ։

ԿՑ. Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի, և ի մեռեալս ազատ։

ՓԽ. Տէր Աստուած փրկութեան իմոյ ի տուէ կարդացի, և գիշերի առաջի քո։

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր. խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս իմ։

Զի լցաւ չարչարանօք անձն իմ. և կեանք իմ ի դժոխս մերձեցան. և համարեցայ ես ընդ այնոսիկ որ իջանեն ի գուբ։

Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի, և ի մեռեալս ազատ։

Որպէս վիրաւորս որ ննջեն ի գերեզմանս։

Զորս դու ոչ յիշեցեր. նոքա ի ձեռանէ քումմէ մերժեցան։

Եդին զիս ի գբի ներքնում, ի խաւարի և ի ստուերս մահու։

Ցիս հաստատեցաւ սրտմութիւն քո. զամենայն զբօսանս քո ածեր ի վերայ իմ։

Հեռի արարեր յինէն զծանօթս իմ, և եդին զիս նշաւակ իւրեանց։

Մատնեցայ և ոչ ելանէի. աչք իմ տկարացան յաղքատութենէ։

Աղաղակեցի առ Տէր զօրհանապազ. և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Մի՛ թէ մեռելո՞ց առնիցես սքանչելիս. կամ բժիշկք յարուցանիցեն, խոստովան առնիցեն առ քեզ:

Մի՛ թէ պատմեսցէ՞ ոք երբեք ի գերեզմանի զողորմութիւնս քո, կամ զճշմարտութիւնս քո ի կորստեան:

Մի՛ թէ ճանաչիցի՞ն ի խաւարի սքանչելիք քո, կամ արդարութիւն քո յերկիր մոռացեալ:

Ես առ քեզ Տէր աղաղակեցի. առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ:

Ընդէ՞ր Տէր մերժես զանձն իմ, կամ դարձուցանես զերեսս քո յինէն,

Տնանկ և վաստակաւոր եմ ես ի մանկութենէ իմմէ. ի բարձրութենէ խոնարհեցայ և ապշեցայ:

Յիս հաստատեցաւ բարկութիւն քո. արհաւիրք քո խռովեցուցին զիս:

Շրջեցան զինեւ ո՟պ ջուր. զօր ա՟մ պաշարեցին զիս ի միասին:

Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ, և զծանօթս իմ վ՟ն թշուառութ՟ե իմոյ:

Ընթերցուածս յԵրեմեայ մարգարէէ: ԺԱ. 18:

Տէր ծանո՛ ինձ, և ծանեայց. յայնժամ տեսի զգործս նց՟: Ես իբրեւ զգառն անմեղ վարեալ ի սպանդ, ոչ գիտացի՝ թէ զինէն խորհեցան խորհուրդս, և ասեն. եկա՛յք, արկցո՛ւք փայտ ի հաց նր՟, և ջնջեսցուք զնա յերկրէն կենդանեաց. և անուն նորա մի՛ եւս յիշեսցի: Տէր զօրութեանց, որ ընտրես զիրաւունս և քննես զերիկամունս և զսիրտ, տեսից առ ի քէն զվրէժխնդրութիւն առ ի նոսա. զի քեզ յայտնեցի զիրաւունս իմ: Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր ի վերայ արանցն Անաթովթայ՝ որք խնդրեն զանձն քո և ասեն. մի՛ մարգարէանար վասն մեր, ապա թէ ոչ՝ մեռանիս ի ձեռաց մերոց: Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր զօրու-

թեանց. ահաւասիկ ես այց արարից ի վերայ նոցա. երիտասարդք նց՟ սրով մեռցին, և ուստերք և դստերք նց՟ սովու վախճանեսցին: Եւ մնացորդք ոչ եղիցի նց՟, զի ածից չարիս ի վր՟ բնակչացն Անաթովթայ՝ յամի այցելուե՟ նց՟: Արդար ես դու Տէր և մատուցից առաջի քո աղերս, բայց խօսեցայց զիրաւունս: Զի՞ է զի ճանապարհք ամբարշտաց յաջողեալ են, և երջանկացան ամենեքեան որ արհամարհեն զարհամարհանս: Տնկեցեր զնոսա և արմատացան, ծնան որդիս և արարին պտուղ: Մերձ ես դու Տէր ի բերանս նց՟, և հեռի յերիկամանց նց՟: Եւ դու Տէր գիտես զիս. տեսեր զիս և փորձեցեր զսիրտ իմ առաջի քո. ժողովեա՛ զնոսա իբրեւ զոչխարս ի սպանումն, և նուիրեա՛ զն՟ս յօր սպանման նց՟: Մինչեւ յե՞րբ սուգ ունիցի երկիր, և խոտ ա՟մ վայրի ցամաքեսցի: Ի չարեաց բնակչաց երկրին ապականեցան անասուն և թռչուն. զի ասացին թէ ոչ տեսցէ Ա՟ծ զճանապարհս մեր: Ոտք քո ընթանան և լքուցեն զքեզ. զիա՞րդ կազմիցիս երիվարօք. իսկ արդ՝ յերկի՞րդ խաղաղութ՟ե յուսացեալ իցես. զի՞ գործեսցես ի վերանալ Յորդանան գետոյ: Քանզի և եղբարքն քո և տուն հօր քո, և նոքա դաւեցին զքեզ, և նոքին աղաղակեցին զկնի քո. կուտեցան ի վր՟ քո. մի՛ հաւատար նց՟, զի խօսեսցին զքէն չարութ՟ի: Լքի զտուն իմ, թողի զժառանգութ՟ի իմ. ետու զսիրելին անձին իմոյ ի ձեռս թշնամեաց իւրոց: Եղեւ ժառանգութ՟ի իմ ինձ իբրեւ առիւծ յանտառի. ետ ի վր՟ իմ զբարբառ իւր. վ՟ն այնորիկ ատեցի զնա: ԺԲ. 8:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս: Ժ. 19:

Ունիմք այսուհետեւ եղբարք՝ համարձակութիւն ի մուտս սրբութեանցն արեամբն Յիսուսի. զոր նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ և կենդանի ի ձեռն վա-

րադուրին, այսինքն է՝ մարմնոյ իւրոյ. և քահանայ մեծ ի վերայ տանն Աստուծոյ. մատիցուք ճշմարիտ սրտիւք, լրութեամբ հաւատոց, լուացեալ զսիրտս ի խղճէ չարեաց, և մկրտեալ զմարմին ի ջուրն սրբութեան: Պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն. զի հաւատարիմ է որ խոստացաւն: Եւ զգուշասցուք միմեանց յորդորմամբք սիրոյ և գործոց բարեաց. և մի թողցուք զժողովս միմեանց, ո՟պ և սովոր են ոմանք. այլ մխիթարեսցուք, և այնչափ ևս առաւել՝ որչափ տեսանիցէք զօրն մերձեալ: Զի կամակար մտօք եթէ յանցանիցեմք յետ ընդունելու՟թ գիտու՟թ ճշմարտու՟թն՝ այնուհետեւ ոչ ևս պիտոյ է վ՟ն մեղաց պատարագ, այլ ահեղ ակնկալութիւն դատաստանին և նախանձ հրոյն՝ որ ուտիցէ զհակառակորդսն: Արհամարհեալ ուրուք զօրէնս Մովսէսի՝ առանց ողորմու՟թց առ երկուք կամ երիւք վկայիւք մեռանէր: Իսկ ո՞րչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն, որ զՈրդին Ա՟Յ առ ոտն եհար. և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ՝ որով և սրբեցաւն. և զՀոգին շնորհաց թշնամանեաց: Այլ գիտեմք զայն՝ որ ասացն. Իմ են վրէժխնդրութիւնք, և ես հատուցից՝ ասէ Տէր. և դարձեալ՝ թէ Դատի Տէր զժողովուրդ իւր: Ահ մեծ է անկանել ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ: 31:

Շարական ԴԿ:

Բարբառելով զԷլի՛ Էլին հիմունք երկրի տատանէին. եւ վարագոյր հին օրինին՝ վերուստ ի վայր պատառէին. արդ ընդ վիմացն որ շարժէին՝ շարժեա զանշարժ սիրտս ի բարին. ընդ պատառել վարագուրին՝ զիմ պատառեա ըզգեստ պարտին:

Արեգական լոյս քօղարկեալ խաւարանայր միջօրէին. և գերեզմանք բանային մարմինք սրբոցըն յառնէին. ընդ խաւարել լուսաւորացն մաքրեա յինէն զգործ

խաւարին. ընդ մեռելոցն որ յառնէին կանգնեա զմեղօք մեռեալ հոգիս:

Նոր սիրով պատուիրանին գործով լըցող եղեր բանին. աղօթելով առ Հայր յերկինս թողուլ զմեղս որ ի խաչին. ինձ որ հոգւովս հաւատացեալ երկրպագեմ քեզ միածին. թող զլուծումըն հրամանին մի՛ յիշեսցին մեղքն առաջին:

Սարսեցին սանդարամետք ի յաւանդելն առ Հայր զհոգին. որ ի դըժոխս իջեր ներքին ի բանտ մահու և խաւարին. կապեալ զիշխանըն մահածին հաներ զհոգիսն որ ի բանդին. և զիս հանցես Տէր ընդ նոսին բանտէ մեղաց աղջամղջին:

Զկնի՝ Ո՛րթիւ:

Աւետարան ըստ Ղուկասու: ԻԲ. 66:

Վասն խաչելու՟թն Տ՟ն մերոյ Յ՟ի Ք՟ի:

Եւ իբրեւ այգ եղեւ՝ ժողովեցաւ ծերակոյտ ժողովրդեանն՝ քահանայապետքն և դպիրք, և հանին ածին զնա յատեանն իւրեանց, և ասեն. Եթէ դու ես Ք՟ն՝ ասա մեզ: Ասէ ց՟նս. թէ ասացից ձեզ՝ սակայն ոչ հաւատայք. և եթէ հարցից ինչ զձեզ՝ չտայք ինձ պատասխանի կամ արձակիցէք: Բայց յայսմհետէ Նստցի Որդի մարդոյ ընդ աջմէ զօրու՟թն Ա՟Յ: Եւ ասեն ամենեքեան. ուրեմն դու ես Որդին Ա՟Յ: Եւ նա ասէ ց՟նս. դուք ասէք թէ ես եմ: Եւ նոքա ասեն. զի՞նչ ևս պիտոյ է մեզ վկայու՟թի, զի մեզէն իսկ լուաք ի բերանոյ դորա: Եւ յարուցեալ ա՟մ բազմու՟թին ն՟ց՝ ածին զնա առ Պիղատոս: Եւ սկսան չարախօս լինել զնմանէ և ասել. գտաք զսա՝ զի թիւրէր զազգս մեր, և արգելոյր ի տալոյ հարկս կայսեր, և ասէր զինքն թէ Ք՟ն իցէ թագաւոր: Իսկ Պիղատոս եհարց զնա և ասէ. դո՞ւ ես թագաւորն Հրէից: Նա պատասխանի ետ նմա և ասէ. դու ասացեր: Ասէ Պիղատոս ցքահանայապետսն և ցժողովուրդսն. չգտանեմ ինչ վնաս յառնս յայսմիկ:

Եւ նոքա պնդէին և ասէին, թէ խռովէ զժողովուրդս, ուսուցանէ ընդ ա՟մ Հրէաստան՝ սկսեալ ի Գալիլեէ մինչեւ ցայսր: Իսկ Պիղատոս իբրեւ լուաւ զԳալիլեէ՝ եհարց եթէ Գալիլեացի՞ է այրն: Եւ իբրեւ գիտաց թէ յիշխանութենէ Հերովդի իցէ՝ ետ տանել զնա առ Հերովդէս. քանզի և նա յԵ՟ղէմ էր յաւուրսն յայնոսիկ: Եւ Հերովդէս իբրեւ ետես զՅ՟ս՝ ուրախ եղեւ յոյժ, զի ցանկայր ի բազում ժամանակաց տեսանել զնա. քանզի լսէր բազում անգամ զնմանէ, և ակն ունէր նշան ինչ լեալ՝ տեսանել ի նմանէ: Հարցանէր զնա բանիւք բազմօք. և նա ոչինչ ետ նմա պատասխանի: Կային քահանայապետքն և դպիրք, և պնդագոյնս չարախօսէին զնմանէ: Արհամարհեաց զնա և Հերովդէս հանդերձ իւրովք զօրականօքն, և այպն արարեալ՝ արկ զնովաւ հանդերձս սպիտակս, և ետ տանել անդրէն առ Պիղատոս: Եւ եղեն բարեկամք Պիղատոս և Հերովդէս յաւուր յայնմիկ, քանզի յառաջ թշնամիք էին միմեանց: Կոչեաց Պիղատոս զքահանայապետսն և զիշխանս և զժողովուրդն, և ասէ ցն՟ս. ածէք մատուցէք ինձ զայրս զայս իբրեւ զխոտորեցուցիչ ժողովրդեանն. և ահաւասիկ առաջի ձեր դատեցայ, և վնաս ինչ ոչ գտի յառնս յայսմիկ՝ զորոց դուք չարախօսէքդ զդմանէ: Այլ և ոչ Հերովդէս, քանզի ետու տանել զդա առ նա. և արդ՝ ոչինչ մահու արժանի է գործեալ դորա. խրատեցից զդա և արձակեցից: Զի հարկ էր մի մի ըստ տօնի արձակել նոցա: Եւ նոքա աղաղակէին ա՟մ բազմութ՟բն և ասէին. բա՛րձ զդա, և արձակեա՛ մեզ զԲարաբբա. որ էր վ՟ն խռովութ՟ն իրիք եղելոյ ի քաղաքին և սպանութ՟ն մտեալ ի բանտ: Դարձեալ Պիղատոս սկսաւ խօսել. քանզի կամէր արձակել զՅ՟ս: Եւ նոքա անդրէն աղաղակէին և ասէին. ի խա՛չ հան զդա: Եւ նա երիցս ասէ ցն՟ս. զի՞նչ չար արար սա. ոչինչ վնաս մահու գտի ի սմա.

խրատեցից զսա և արձակեցից: Եւ նոքա ստիպէին մեծաձայն, և խնդրէին զնա ի խաչ հանել. և զօրանային բարբառք նոցա և քահանայապետացն: Եւ Պիղատոս հաւանեցաւ առնել զհայցուածս ն՟ց: Արձակեաց նոցա զԲարաբբայն՝ զոր վ՟ն խռովութ՟ն և սպանութ՟ն արկեալ էր ի բանտ, զոր և խնդրէինն իսկ. և զՅ՟ս մատնեաց կամաց ն՟ց: Իբրեւ առին գնացին զնա՝ ըմբռնեցին զոմն Սիմովն Կիւրենացի՝ որ գայր յանդէ. եդին ի վ՟ր ն՟ր զխաչն բերել զկնի Յ՟ի: Եւ երթայր զհետ ն՟ր բազմութ՟ի ժողովրդեանն, և կանանց՝ որ կոծէին և աշխարէին զնա: Դարձաւ Յիսուս և ասէ ցն՟ս. դստերք Ե՟ղմի, մի լայք ի վ՟ր իմ, այլ լացէք ի վ՟ր անձանց և ի վ՟ր որդւոց ձերոց: Զի եկեսցեն աւուրք՝ յորս ասիցեն, թէ երանի՜ ամլոց և որովայնից որ ոչ ծնան, և ստեանց որ ոչ դիեցուցին: Յայնժամ սկսանիցիք ասել լերանց՝ թէ անկերո՛ւք ի վ՟ր մեր, և բլրոց՝ թէ ծածկեցէ՛ք զմեզ: Զի եթէ ընդ փայտ դալար զայս առնեն՝ ընդ չորն զի՞նչ լինիցի: Ածին և այլ երկուս չարագործս՝ սպանանել ընդ նմա: Իբրեւ չոգան ի տեղին՝ կոչեցեալ Գագաթն՝ անդ հանին զնա ի խաչ. և զչարագործսն զոմն ընդ աջմէ և զոմն ընդ ձախմէ խաչեցին: Եւ Յ՟ս ասէ. Հայր, թո՛ղ դոցա, զի ոչ գիտեն զի՞նչ գործեն: Եւ ի բաժանել զհանդերձս ն՟ր՝ արկին վիճակս: Եւ կայր ժողովուրդն հայեցեալ: Անգոսնէին զնա իշխանքն հանդերձ նոքօք, և ասէին. զայլս ապրեցոյց, ապրեցուսցէ և զանձն՝ եթէ դա է Ք՟ս որդի Ա՟Յ ընտրեալն: Այպն առնէին զնա և զինուորքն, եկեալ առաջի՝ մատուցանէին նմա քացախ և ասէին. եթէ դու ես թագաւորն Հրէից՝ փրկեա՛ զանձն քո: Եւ էր գիր գրեալ ի վ՟ր ն՟ր՝ յունարէն և դաղմատերէն և եբրայեցերէն գրով, թէ սա է արքայն Հրէից: Իսկ մի ոմն ի կախելոց չարագործացն հայհոյէր զնա և ասէր. ո՞չ դու ես Ք՟ն, փրկեա՛ զանձն քո և զմեզ: Պատաս-

խանի եւ ընկերն սաստելով նմա եւ ասէ. չերկնչիս դու յԱծ՟ զի ի նմին պատժի կաս: Եւ մեք յիրաւի՝ զի արժանի որոց գործեցաքն՝ առնումք զհատուցումն. եւ սա ապիրատ ինչ ոչ գործեաց: Եւ ասէ ցՅն. յիշեա զիս Տէր՝ յորժամ գայցես արքայութբ քով: Եւ ասէ ցնա Յիսուս. ամէն ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես ի դրախտին: Եւ էր իբրեւ վեցերորդ ժամ. եւ խաւար եղեւ ի վր ամ երկրի մինչեւ ցիններորդ ժամն. խաւարեցաւ արեգակն: Եւ հերձաւ վարագոյր տաճարին ընդ մէջ: Եւ կարդաց Յն ի ձայն մեծ, եւ ասէ. Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ: Զայս իբրեւ ասաց՝ եհան զոգի: Եւ տեսեալ հարիւրապետին զոր ինչ եղեւն՝ փառաւոր արար զԱծ եւ ասէ. արդարեւ այրս այս արդար էր: Եւ ամ ժողովուրդքն որ եկեալ էին եւ տեսանէին զտեսիլն զայն եւ զգործ, բախէին զկուրծս եւ դառնային: Կային եւ ամ ծանօթքն նր ի հեռաստանէ, եւ կանայք որք եկեալ էին զհետ նր ի Գալիլեէ՝ տեսանէին զայն: 49:

Աղօթք հանդերձ սաղմոսելով զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա: Երիցս անգամ կրկնեա:

Եւ եւս խաղաղութեան: Օրհնութիւն եւ փառք:

Ո–բերորդ Սաղմոս ՃԱ:

ԿՑ. Կցեցաւ ոսկր իմ ի մարմին իմ, նմանեցայ ես հաւալսան յանապատի:

ՓԽ. Տէր լուր աղօթից իմոց. աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. մի դարձուցաներ զերեսս քո յինէն:

Յաւուր նեղութե իմոյ խոնարհեցո առ իս զունկն քո. յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լուր ինձ:

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ. եւ ոսկերք իմ որպէս խուխ չորացան:

Հարայ որպէս խոտ, եւ ցամաքեաց սիրտ իմ. մոռացայ ուտել զհաց իմ ի ձայնէ հեծութեան իմոյ:

Կցեցաւ ոսկր իմ ի մարմին իմ, նմանեցայ ես հաւալսան յանապատի:

Եղէ ես որպէս բու յաւերակի. տքնեցայ, եւ եղէ ես որպէս ճնճղուկ միայն ի տանիս:

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ, եւ գովիչք իմ ինեւ երդնուին:

Զմոխիր որպէս զհաց կերայ, եւ զըմպելի իմ արտասուօք խառնեցի:

Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո. զի դու բարձրացուցեր եւ խոնարհեցուցեր զիս:

Աւուրք իմ որպէս հովանի անցին. եւ ես որպէս խոտ ցամաքեցայ:

Դու Տէր յաւիտեան կաս. եւ յիշատակ քո յազգէ մինչեւ յազգ:

Դու յարուցեալ գթասցիս ի վր Սիովնի. ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ:

Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նորա. եւ ի հողս նորա գթասցին:

Երկիցեն հեթանոսք յանուանէ քումմէ, եւ ամենայն թագաւորք երկրի ի փառաց քոց:

Շինէ Տէր զՍիոն, եւ երեւեսցի փառօք իւրովք ի նմա:

Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, եւ ոչ արհամարհեաց զխնդրուածս նոցա:

Գրեսցի այս յազգ այլ. ժողովուրդ՝ զոր ստացեալ է, օրհնեսցէ զՏէր:

Հայեցաւ նա ի բարձանց ի սրբութենէ իւրմէ. Տէր յերկնից յերկիր հայեցաւ:

Լսել զհեծութիւն կապելոց, եւ արձակել զորդիս մահապարտաց:

Պատմել ի Սիովն զանուն Տեառն. եւ զօրհնութիւնս նորա յԵրուսաղէմ:

Ժողովել ժողովրդոց ի միասին, եւ թագաւորաց ծառայել Տեառն:

Պատասխանի ետ նմա ի ճանապարհի զօրութե̃ իւրոյ. զնուազութի̃ աւուրց իմոց ասա́ ինձ, և մի́ հաներ զիս ի կէս աւուրց իմոց, զի ազգէ յազգ են ամք քո:
Ի սկզբանէ Տէր զհիմունս երկրի հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են:
Նոքա անցանեն, և դու կաս և մնաս յաւիտեան:
Ամենեքեան որպէս զձորձս մաշեսցին. որպէս զվերարկուս փոխեսցես զնոսա և փոխեսցին:
Բայց դու նոյն իսկ ես, և ամք քո ոչ անցանեն. որդիք ծառայից քոց բնակեսցեն ի նմա. և զաւակի նց յաւիտեան յաջողեսցի:

ընթերցուածս ի Զաքարեայ մարգարէէ: ԺԴ. 5:

Եւ եկեսցէ հասցէ Տէր Աճ իմ, և ամ սրբք ընդ նմա: Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ ոչ եղիցի լոյս. և ցուրտ և պարզ: Եղիցի օր մի, և օրն այն յայտնի Տն. ո́չ տիւ լիցի և ո́չ գիշեր. և ընդ երեկս եղիցի լոյս: Յաւուր յայնմիկ բղխեսցէ ջուր կենդանի յԵրմ. կէս նր ի ծովն առաջին, և կէս նր ի ծովն որ յետոյ. զամառն և զգարուն նոյնպէս եղիցի: Եւ եղիցի Տէր թագաւոր ի վր ամ երկրի. յաւուր յայնմիկ եղիցի Տէր մի՝ անուն նր մի: Պատել զամ երկիր, զանապատն՝ ի Գաբայ մինչև ցՌեմոն՝ ընդ կողմն հարաւոյ Եէմի: Եւ Հռամ ի տեղւոջ իւրում կացցէ. ի դրանէն Բենիամինի մինչև ի տեղի դրանն առաջնոյ. մինչև ի դուռն անկեանցն և մինչև ցաշտարակն Անամայէլի, մինչև ի հնձանս թագաւորին: Եւ բնակեսցեն ի նմա, և նզովք ոչ ևս լիցին. և բնակեսցէ Երուսաղէմ յուսով: 11:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուածս: Զ. 13:

Պատուիրեմ քեզ առաջի Այ որ կենդանի առնէ զամ, և Յսի Քսի՝ որ վկայեաց առաջի Պոնտացւոյ Պիղատոսի զբարւոք դաւանութին. պահել քեզ զպատուիրանն անբիծ, անարատ՝ մինչև ի յայտնութի Տն մերոյ Յսի Քսի. զոր յիւր ժամանակս ցուցցէ երանելին և միայն հզօր, թագաւոր թագաւորաց և տէր տերանց. որ միայն ունի զանմահութի̃ բնակեալ ի լոյս անմատոյց. զոր ոչ ոք ետես ի մարդկանէ և ոչ տեսանել կարող է. որում պատիւ և զօրութիւն յաւիտեանս. ամէն: 16:

Շարական Դկ:

Ո՞ղբերացն անմապական որ յետ մահուն անմահարար. բըղխեալ ի քէն վըտակ կրկին ի նորոգումն կողածնին. բաց ըղբերան իմ յարբուցումն քո արեան կենարարին. լուա դարձեալ յաւազանին թէ ո́չ շնորհօք այլ արտասուօք:
Յանմահիդ մեռանելոյ զմեռեալ հոգիս կենդանացո. թաղմամբ ի նոր գերեզմանի զթաղեալս ի մեղս վերածեա. ի գբի ներքնումն իջանելովն ի գբոյն մեղաց վերաբերեա. ի ստուեր մահու բընակելով լուսաւորեա և զիս հոգւով:
Սիրտ իմ առ քեզ աղաղակէ Բանդ որ ընդ Հօր ի սկզբանէ. որ կամաւոր վասն մարդկան կրեցեր մարմնով զայս ամ. ինձ լսելի արա ըղձայն յարքայութեն քո կոչման. ընդ ժողովոցն անդ անդրանկացն օրհնել ըզքեզ միշտ յաւիտեան:

Զկնի Ո́րթին:

Աւետարան ըստ Յովհաննու: ԺԹ. 17:

Վն խաչելութե̃ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ նոքա առեալ տանէին զնա. և բարձեալ էր ինքնին զխաչափայտն, և ելանէր ի տեղին՝ որ անուանեալ էր Գագաթան, և կոչէր եբրայեցերէն Գողգոթա. ուր և ի խաչն իսկ հանին զնա. և ընդ նմա երկուս ևս այլս աստի և անտի, և ի միջի զՅս: Գրեաց և տախտակ Պիղատոս, և եդ ի վր խաչին. և էր գրեալ.

Յս՟ Նազովրեցի՝ Թագաւոր Հրէից: Զայն տախտակ ընթերցան բազումք ի Հրէից, զի մօտ էր ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն Յս՟. և էր գրեալ եբրայեցերէն, դաղմատերէն և յունարէն: Ասեն ցՊիղատոս քահանայապետքն Հրէից. մի՛ գրեր Թագաւոր Հրէից, այլ թէ նա ասաց՝ Թագաւոր եմ Հրէից: Պատասխանի ետ Պիղատոս. զոր ինչ գրեցի՝ գրեցի: Իսկ զինուորքն իբրեւ հանին ի խաչ զՅս՟, առին զհանդերձս Նր՟, և արարին չորս մասունս, իւրաքանչիւր զինուորի մասն: Իսկ զպատմուճանն՝ քանզի էր առանց կարանի՝ ի վերուստ փորանկեալ ամենեւին. ասեն ցմիմեանս. մի՛ պատառեսցուք զայդ, այլ արկցուք վիճակս ի վր՟ դորա՝ ում և ելցէ: Զի լցցի գիրն՝ որ ասէ. Բաժանեցան զհանդերձս իմ յիւրեանս, և ի վր՟ պատմուճանի իմոյ վիճակս արկին: Զինուորքն՝ զայս ինչ գործեցին: Եւ կային առ խաչին Յսի մայրն Նր՟, և քոյր մօր նորա Մարիամ Կղէովպա, և Մարիամ Մագդաղենացի: Յս՟ իբրեւ ետես զմայրն և զաշակերտն՝ զոր սիրէր, զի կայր մօտ. ասէ ցմայրն, կին դու՝ ահա որդի քո: Ապա ասէ ցաշակերտն. ահա մայր քո: Եւ յայնմ ժամանակէ առ աշակերտն՝ զնա առ իւր: Յետ այսորիկ իբրեւ գիտաց Յս՟. եթէ ահա ամ՟ ինչ կատարեալ է, զի կատարեսցի գիրն, ասէ. ծարաւի եմ: Եւ անդ կայր աման ինչ՝ լի քացախով. և նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեղւոյ՝ շուրջ եդեալ զմշտկաւ զոպայի՝ մատուցին ի բերան Նր՟: Իբրեւ առ Յիսուս զքացախն հանդերձ լեղւովն՝ ասէ. ամենայն ինչ կատարեալ է: Եւ խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին: Իսկ Հրեայքն՝ քանզի ուրբաթ էր, զի մի՛ անդէն ի խաչին ագանիցին մարմինքն մինչեւ ցշաբաթն, զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ. աղաչեցին զՊիղատոս՝ զի խորտակեսցեն զբարձս նց՟, և բարձցին: Եկին զինուորքն, և զառաջնոյն խորտակեցին զբարձս, նոյնպէս և զմիւսոյն՝

որ ընդ նմա ի խաչն ելեալ էր: Բայց իբրեւ եկին առ Յս՟, և տեսին զի այն ինչ մեռեալ էր, ոչ խորտակեցին զբարձս Նր՟. այլ մի ոմ՟ ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս Նր՟. և վաղվաղակի ել արիւն և ջուր: Եւ որ ետեսն՝ վկայեաց, և ճշմարիտ է վկայութի՟ Նր՟. և նա գիտէ թէ ճշմարիտ ասէ, զի և դուք հաւատասջիք: Այս եղեւ՝ զի լցցի գիրն, եթէ Ոսկր Նր՟ մի՛ փշրեսցի: Եւ դարձեալ միւս գիր ասէ, եթէ Հայեսցին ի նա՝ յոր խոցեցինն: 37:

Աղօթք հանդերձ սաղմոսելով զՏր՟ աղաչեսցուք: Տր՟ ողորմեա: Երէց. անգամ կրկնեա:

Յետ այսորիկ դնեն զխաչն եւ զաւետարանն ի վերայ բեմին,
եւ համբուրեն ամենեքեան ասելով:

Շարական ԲԿ:

Խաչի քո Քս՟ երկիր պագանեմք. եւ որ ի կարգին. 385:
Զկնի Քրզ. Սուրբ խաչիւս: Աղ. Պահպանեա զմեզ Քս՟:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր որ:
Եւ արձակին ի խաղաղութեան:

ՑԵՐԵԿՈՅԻՆ

Ի տասն ժամու ժողովին եւ մտանեն յեկեղեցին, եւ կատարեն զկարգ Թաղմանն Քրիստոսի: Բայց ոմանք ի ժամատունն կատարեն: Եւ սկսանին Ես առ Աժ՟: Խոնարհեցո եւ Ապրեցո: Զկնի՝ Լոյս զուարթ:

Մեսեդի:

Ետուն ի կերակուր ինձ լեղի. և ի ծարաւ իմ արբուցին քացախ:

Եղիցին սեղանք նց՟ առաջի նց՟ յորոգայթ, ի հատուցումն և ի գայթագղութիւն:

Ընթերցուածս Յերեմեայ մարգարէէ: ԺԱ. 18:

Տէր ծանո ինձ, և ծանեայց. յայնժամ տեսի զգործս նց՟: Ես իբրեւ զգառն անմեղ վարեալ ի սպանդ, ոչ

գիտացի՝ թէ զինէն խորհեցան խորհուրդս, և ասեն. եկա՛յք, արկցո՛ւք փայտ ի հաց նր, և ջնջեսցուք զնա յերկրէն կենդանեաց. և անուն նորա մի՛ ևս յիշեսցի: Տէր զօրութեանց, որ ընտրես զիրաւունս և քննես զերիկամունս և զսիրտ, տեսից առ ի քէն զվրէժխնդրութիւն առ ի նոսա. զի քեզ յայտնեցի զիրաւունս իմ: Վասն այնորիկ այսպէս ասէ Տէր ի վերայ արանցն Անաթովթայ՝ որք խնդրեն զանձն քո և ասեն. մի՛ մարգարէանար վասն մեր, ապա թէ ոչ՝ մեռանիս ի ձեռաց մերոց: Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց. ահաւասիկ ես այց արարից ի վերայ նոցա. երիտասարդք նց սրով մեռցին, և ուստերք և դստերք նց սովու վախճանեսցին: Եւ մնացորդք ոչ եղիցի նց, զի ածից չարիս ի վր բնակչացն Անաթովթայ՝ յամի այցելութե նց: Արդար ես դու Տէր և մատուցից առաջի քո աղերս, բայց խօսեցայց զիրաւունս: Զի՞ է զի ճանապարհք ամբարշտաց յաջողեալ են, և երջանկացան ամենեքեան որ արհամարհեն զարհամարհանս: Տնկեցեր զնոսա և արմատացան, ծնան որդիս և արարին պտուղ: Մերձ ես դու Տէր ի բերանս նց, և հեռի յերիկամանց նց: Եւ դու Տէր գիտես զիս. տեսեր զիս և փորձեցեր զսիրտ իմ առաջի քո. ժողովեա՛ զնոսա իբրև զոչխարս ի սպանումն, և նուիրեա՛ զնս յօր սպանման նց: Մինչև յե՞րբ սուգ ունիցի երկիր, և խոտ ամ վայրի ցամաքեսցի: Ի չարեաց բնակչաց երկրին ապականեցան անասուն և թռչուն. զի ասացին թէ ոչ տեսցէ ԱԾ զճանապարհս մեր: Ոտք քո ընթանան և լքուսցեն զքեզ. զիա՞րդ կազմիցիս երիվարօք. իսկ արդ՝ յերկի՞րդ խաղաղութե յուսացեալ լիցես. զի՞ գործեսցես ի վերանալ Յորդանան գետոյ: Քանզի և եղբարքն քո և տուն հօր քո, և նոքա դաւեցին քեզ, և նոքին աղաղակեցին զկնի քո. կուտեցան ի վր քո. մի՛ հաւատար նց, զի խօսեսցին զքէն չարութի: Լքի զտուն

իմ, թողի զժառանգութի իմ. ետու զսիրելին անձին իմոյ ի ձեռս թշնամեաց իւրոց: Եղեւ ժառանգութի իմ ինձ իբրև առիւծ յանապատի. ետ ի վր իմ զբարբառ իւր. վն այնորիկ ատեցի զնա: ԺԲ. 8:

Ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ: ԾԲ. 13:

Ահաւադիկ ի միտ առցէ մանուկ իմ. վերասցի և բարձրասցի և փառաւորեսցի յոյժ: Զոր օրինակ զարմասցին բազումք ի վր քո. այնպէս անշքեսցի տեսիլ քո ի մարդկանէ, և փառք քո յորդւոց ի մարդկանէ: Այնպէս զարմասցին ազգք բազումք ի վր քո, և կարկեսցեն թագաւորք զբերանս իւրեանց: Զի որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, և որոց ոչ իցէ լուեալ՝ ի միտ առցեն: Տէր, ո՞ հաւատաց լրոյ մերում. և բազուկ Տեառն ո՞ւմ յայտնեցաւ: Պատմեցաք առաջի նորա իբրև զմանուկ, իբրև զարմատ ի ծարաւուտ երկրէ. ոչ գոյր նր տեսիլ և ոչ փառք՝ տեսաք մեք զնա, և ոչ գոյր նր տեսիլ և ոչ գեղեցկութի: Այլ տեսիլ նր անարգ՝ նուաղեալ քան զամ որդւոց մարդկան. այր մի ի հարուածս և գիտէ համբերել ցաւոց. զի դարձուցեալ զերեսս իւր անարգեցաւ և ոչինչ համարեցաւ: Նա զմեղս մեր բառնայ և վասն մեր չարչարի. և մեք համարեցաք զնա ի ցաւս և ի հարուածս և ի չարչարանս իբրև յԱԾ: Բայց նա վիրաւորեցաւ վն մեղաց մերոց, և պատժեցաւ վն մերոց անօրէնութեց. խրատ խաղաղութեան մերոյ ի նմա, և նր վիրօքն բժշկեցաք: Ամենեքին իբրև ոչխարք մոլորեալք՝ այր ի ճանապարհի իւրում մոլորեցաւ, և Տէր մատնեաց զնա առ մեղս մեր: Եւ նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր. իբրև ոչխար ի սպանդ վարեցաւ, և իբրև որոջ առաջի կտրչի անմռունչ կայ, այնպէս ոչ բանայ զբերան իւր: Առ խոնարհութե նր դատաստան նր բարձաւ. և զազգատոհմ նր ո՞ պատմեսցէ. զի բառնան յերկրէ կեանք նր. յանօրէնութեց ժողովրդեան իմոյ ի մահ վարեցաւ:

Եւ տաց զչարս փոխանակ գերեզմանի նր՟, և զմեծամեծս փոխանակ մահու նր՟. զի անօրէնութիւն ոչ գործեաց, և ոչ գտաւ նենգութիւն ի բերան նր՟։ Եւ Տէր կամի սրբել զնա ի վիրաց անտի. եթէ տայցէք զվասն մեղացն, անձինք ձեր տեսցեն զաւակ երկայնակեաց. և կամի Տէր ի ձեռն նր՟ բառնալ ի ցաւոց անձին նր՟։ Ցուցանել նմա լոյս և ստեղծուլ իմաստութբ՟. արդարացուցանել զարդարն՝ որ մատչիւրն ծառայեաց բազմաց. և զմեղս նց՟ նա վերացուսցէ։ Վս՟ այսորիկ նա ժառանգեսցէ զբազումս, և զաւար հզօրաց բաշխեսցէ. փոխանակ զի ի մահ մատնեցաւ անձն նր՟, և ընդ անօրէնս համարեցաւ. և նա զմեղս բազմաց վերացոյց, և վս՟ անօրէնութեց՟ նոցա մատնեցաւ։ Ծգ. 12։

Սաղմոս ԻԱ։

ԿՑ. Բաժանեցան զհանդերձս իմ ի մէջ իւրեանց. և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին։

Փխ. Ա՟ծ Ա՟ծ իմ, նայեա՛ց առ իս. ընդէ՞ր թողեր զիս. հեռի եղէ ի փրկութե՟ իմմէ վս՟ բանից յանցանաց իմոց։

Աստուած իմ ի տուէ կարդացի առ քեզ, և ինձ ոչ լուար. ի գիշերի, և ինձ ոչ անսացեր։

Դու ի սբ՟ս բնակեալ ես. և գովեալ Իսրայէլի։

Ի քեզ յուսացան հարքն մեր. յուսացան ի քեզ և փրկեցեր զնոսա։

Առ քեզ աղաղակեցին և կեցին. ի քեզ յուսացան և ոչ ամաչեցին։

Այլ ես որդն եմ, և ոչ եմ մարդ. նախատինք մարդկան և արհամարհանք ժողովրդոց։

Ամենեքեան որ տեսանէին զիս՝ արհամարհէին զինև. խօսէին շրթամբք և շարժէին զգլուխս իւրեանց։

Յուսացաւ ի Տէր, և փրկեսցէ զնա. կեցուսցէ զնա, զի կամի զնա։

Դու ես որ հանար զիս յարգանդէ. յոյս իմ ի ստեանց մօր իմոյ։

Ի քեզ անկայ ես յարգանդէ. յորովայնէ մօր իմոյ դու ես Աստուած իմ։

Մի՛ ի բացեայ առնիր յինէն. զի նեղութիւնք մերձեալ են, և ոչ ոք է որ օգնէ ինձ։

Շուրջ եղեն զինև զուարակք բազումք. և ցուլք գէրք պաշարեցին զիս։

Բացին ի վերայ իմ զբերանս իւրեանց՝ որպէս առիւծ զի մռնչէ և յափշտակէ։

Ես որպէս զջուր հեղայ և ցրուեցան ամենայն ոսկերք իմ. և եղեւ սիրտ իմ որպէս մոմ հալեալ ի մէջ որովայնի իմոյ։

Չորացաւ որպէս խեցի զօրութիւն իմ. լեզու իմ ի քիմս իմ կցեցաւ. և ի հող մահու իջուցին զիս։

Շուրջ եղեն զինև շունք բազումք. և ժողովք չարաց պաշարեցին զիս։

Ծակեցին զձեռս իմ և զոտս իմ, և թուեցին զա՟մ ոսկերս իմ. և նոքա հայեցան և տեսին զիս։

Բաժանեցան զհանդերձս իմ ի մէջ իւրեանց. և ի վր՟ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին։

Դու Տէր, մի՛ հեռի առներ զօգնութիւնս քո յինէն. և Տէր յօգնել ինձ նայեա՛ց։

Փրկեա՛ ի սրոյ զանձն իմ. և ի ձեռաց շանց զմիամօրութիւն իմ։

Փրկեա՛ զիս ի բերանոյ առիւծու. յեղջերէ միեղջերուի զխոնարհութիւն իմ։

Պատմեցից զանուն քո եղբարց իմոց. ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ։

Երկիւղածք Տեառն օրհնեցէք զՏր՟. ամենայն զաւակն յակովբեան փառաւոր արասցեն զնա։

Երկիցէ ի Տեառնէ ամենայն զաւակն Իսրայէլի, զի ոչ արհամարհեաց և ոչ անարգեաց զաղօթս աղքատի. և ոչ դարձոյց զերեսս իւր յինէն. այլ ի կարդալ իմում առ նա՝ լուաւ ինձ։

Ի քէն է գովութիւն իմ. յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ:

Զուխտս իմ կատարեցից առաջի ամ երկիւղածաց նր:

Կերիցեն տնանկք և յագեսցին. օրհնեսցեն զՏէր ոյք խնդրեն զնա:

Կեցցեն սիրտք նոցա յաւիտեանս յաւիտենից. յիշեսցեն, և դարձցին առ Տէր ամենայն ծագք երկրի:

Երկիր պագցեն նմա ամ տոհմք ազանց. զի Տեառն է արքայութի, և նա տիրէ ի վր ամ հեթանոսաց:

Կերան և երկիր պագին նմա ամ պարարտք երկրի. առաջի նր անկցին ամենեքեան որ իջանեն ի հող:

Անձն իմ նովաւ կեայ. և զաւակ իմ ծառայեսցէ նմա:

Պատմեսցի Տն ազգ որ գալոց է. պատմեսցեն զարդարութիւն նորա ժողովրդեան որ ծնանելոց իցէ՝ զոր արար Տէր:

Ապա շարականս ասեն այսպէս:

Ուղիղ եղիցին աղաչանք իմ.
Որպէս խունկ առաջի քո Տէր:
Տարածումն ձեռաց իմոց.
Պատարագ երեկոյի:

Զկնի Քարոզ. Աղաչեսցուք. կամ գանձ:
Սուրբ Աստուածն ի ծունկս անկեալ քահանայք եւ ժողովուրդք միաբան եւ գլխիկոր՝ բարեխօսարար ասեն:

Համբարձի ԴՉ. ՍՏ:

Մանկունք հաւատացեալք երկրպագեսցուք մի Երրորդութեան լուսոյ որ ընդ Հօր է յէութեան. ի քահանայից դասապարտեալ եկեալ ի խաչ ելանել. անմահ թագաւորին: Փառք Հօր: Զոր երկինք ոչ բաւէին տանել. զխաչ պատուհասի ուսով բարձեալ. եւ եկեալ ի տեղի կառափելոյ ի խաչ ելանել. անմահ թագաւորին: Այժմ և միշտ: Հիացեալ պետութեանց երկնից ընդ թա-

զմարմն Տն ի նոր գերեզմանի. քանզի զինքն որ անմահն է յէութեան վն մարդածնաց փրկութե ընդ մահուն ճաշակեաց. անմահ թագաւորին:

Եւ զկնի ասէ Սաղմոս ԺԵ. ի ՆԻ:

ԿՑ. Զի ոչ թողցես զանձն իմ ի դժոխս. և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութի:

Փխ. Պահեա զիս Ած, զի ես ի քեզ յուսացայ. ասացի Տեառն, Տէր իմ ես դու, և բարիք իմ քեզ չեն ինչ պիտոյ:

Սրբց քոց որ են յերկրի քում. սքանչելի արարեր զամենայն կամս իմ ի նոսա:

Յաճախեցին հիւանդութիւնք նոցա. յետ այսորիկ ապա փաղփաղեցին:

Ոչ ժողովեցայց ի ժողովս նոցա յարեանց. և ոչ յիշեցից զանուանս նց ի շրթունս իմ:

Տէր բաժին ժառանգութե իմոյ և բաժակի իմոյ դու ես, որ այսրէն դարձուցանես զժառանգութի իմ յիս:

Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս. և ժառանգութիւն իմ հաճոյ եղեւ ինձ:

Օրհնեցից զՏէր՝ որ իմաստուն արար զիս. մինչ ի գիշերի եւս խրատեցին զիս երիկամունք իմ:

Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամ ժամ. զի է ընդ աջմէ իմմէ, զի մի սասանեցայց:

Վն այսորիկ ուրախ եղեւ սիրտ իմ. և ցնծացաւ լեզու իմ. եւս և մարմին իմ բնակեսցէ յուսով:

Զի ոչ թողցես զանձն իմ ի դժոխս. և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն:

Ցուցեր ինձ զճանապարհս քո կենաց. լցուցեր զիս ուրախութբ երեսաց քոց ի քաղցրութէ վայելչութե աջոյ քո մինչ ի սպառ:

Ընթերցուածս յԱռակաց: Իմաստ. Բ. 1:

Խորհեցան յանձինս իւրեանց զանուղղայս. և ասեն. սակաւ և ցաւագին են կեանք մեր. և ոչ գոյ բժշկու-

թիւն ի վախճանի մարդոյ. և ոչ երևեցաւ որ դարձաւ ի դժոխոց: Զի յանկարծակի ի՟մ եղեաք, և յետ այսորիկ լինիցիմք իբրև չէեղեալս. զի իբրև զծուխ է շունչ յռնգունս մեր, և իբրև զկայծակն՝ բանն ի շարժման սրտի մերոյ: Յորոյ ի շիջանելն՝ մոխիր լինի մարմինն. և ոգին սփռի իբրև զօդ թոյլ: Եւ անունս մեր մոռասցի ժամանակաւ. և ոչ ոք յիշատակեսցէ զգործս մեր. և անցցեն կեանք մեր իբրև զհետս ամպոյ. և իբրև զշամանդաղ ցրուեսցին հալածեալք ի ճառագայթից արեգական. և ի տապոյ ն՟ր ծանրացեալք: Զի անցք ստուերի են կեանք մեր. և չիք խափան վախճանի մարդոյ. զի կնքեցաւ, և ոչ ոք է որ դարձուցանէ: Արդ՝ եկայք և վայելեսցուք ի բարութիս՝ որ կան. և վարեսցուք արարածովքս՝ զբաղեալք իբրև ի մանկութ՟ե: Պէսպէս գինեօք և անոյշ իւղովք լցցուք. մի՛ անցցէ առ մեօք ծաղիկ գարնայնոյ: Բոլորիւք վարդից պսակեսցուք՝ մինչ չեւ թառամեալ իցեն: Մի՛ ոք ամենեւին անմասն լիցի ի մեծ ուրախութենէս մերմէ: Յա՟մ տեղիս թողցուք զնշանակ ուրախութեան, զի այն է բաժին մեր, և սոյն վիճակ: Բռնադատեսցուք զաղքատն անիրաւութ՟բ. մի՛ խնայեսցուք յայրին. մի՛ խորշեսցուք ի բազմաժամանակեայ ալեաց ծերոյն: Եւ օրէնս արդարութ՟ե բռնութ՟ի մեր եղիցի, զի տկարութ՟ի անպիտան յանդիմանի: Դարանակալ լիցուք արդարոյն, զի դժպհի եղեւ մեզ. և հակառակ կայ գործոց մերոց. և նախատինս դնէ մեզ զյանցանս օրինացն. և բամբասէ զմեզ մեղօք մանկութ՟ե մերոյ: Խոստանայ ունել զգիտութ՟ի Ա՟յ. և Որդի Ա՟յ զանձն իւր անուանէ: Եւ եղեւ յանդիմանութ՟ի մտաց մերոց: Ծանր է մեզ և տեսանել զնա՝ զի աննման են այլոց կեանք ն՟ր, և այլազգի շաւիղք ն՟ր: Ի գարշութ՟ի համարեցաք նմա և խորշի ի ճանապարհաց մերոց՝ ո՟պ ի պղծութ՟ց. երանէ զվախճան արդարոց, և հպարտացեալ կոչէ հայր զԱ՟ծ:

Տեսցուք թէ ճշմարիտ իցեն բանք ն՟ր. և փորձեսցուք զվախճան նորա: Եթէ իցէ արդարեւ Որդի Աստուծոյ՝ պաշտպանեսցէ նմա. և փրկեսցէ զնա Աստուած ի ձեռաց հակառակորդաց: Թշնամանօք և գանիւք խոշտանգեսցուք զնա, զի զչափ առցուք հեզութեան նորա, և խելամուտ լիցուք անոխակալութեան նորա: Մահու խայտառակութեան դատեսցուք զնա. եթէ լինիցի՞ այցելութիւն նմա ի բանից իւրոց: Զայս խորհեցան և խաբեցան. զի կուրացոյց զնոսա չարութիւն իւրեանց: Եւ ոչ ծանեան զխորհուրդս Աստուծոյ, և ոչ վարձուց ակն կալան սրբութեան. և ոչ ընտրեցին զպատիւ ոգւոց անարատից: 22:

ընթերցուածս ի Զաքարեայ մարգարէէ: ԺԲ. 8:

Եւ եղիցի յաւուր յայնմիկ պաշտպանեսցէ Տէր զա՟մ բնակչաց Երուսաղէմի. և եղիցի՝ որ տկարն իցէ ի նոսա յաւուր յայնմիկ՝ իբրև զԴաւիթ. և տուն Դաւթի իբրև զտունն Ա՟յ՝ իբրև զհրեշտակ Տ՟ն առաջի ն՟ց: Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ խնդրեցից բառնալ զա՟մ ազգս եկեալս ի վ՟ր Եղ՟էմի: Եւ հեղից ի վ՟ր տանն Դաւթի և ի վ՟ր բնակչաց Եղ՟էմի հոգի շնորհաց և գթութ՟ե: Եւ հայեսցին առ իս փոխանակ կաքաւելոյն. և կոծեսցին ի վերայ նորա կոծ իբրև ի վերայ սիրելոյ. և աշխարհեսցեն աշխար իբրև ի վ՟ր անդրանկան: Յաւուր յայնմիկ սաստկասցի կոծ յԵղ՟էմ. իբրև զկոծ նռնենեաց կոտորելոց ի դաշտի: Եւ կոծեսցի երկիր ըստ ազգս ազգաց առանձինն: Ազգ տանն Դաւթի առանձինն, և կանայք ն՟ց առանձինն. ազգ տանն Նաթանայ առանձինն, և կանայք ն՟ց առանձինն. ազգ տանն Ղեւեայ առանձինն, և կանայք ն՟ց առանձինն. ազգ տանն Շմաւոնի առանձինն, և կանայք ն՟ց առանձինն: Ամենայն ազգք մնացեալք առանձինն, և կանայք նոցա առանձինն: 14:

Պետրոսի առաքելոյն ի կաթուղիկեայ առաջին թղթոյն է ընթերցուածս։ Գ. 17։

Զի լաւ է բարեգործաց, եթէ կամիցին ըստ Այ կամացն չարչարել՝ քան չարագործացն. զի և Քս մի անգամ վն մեղաց ի վր ձեր մեռաւ, արդարն ի վր անարդարոց, զի զձեզ մերձեցուսցէ առ Այ. թէպէտ և մեռաւ մարմնով, այլ կենդանի է հոգւով։ Որով և ոգւոցն՝ որ էին ի բանտին, երթեալ քարոզեաց՝ երբեմն ապստամբելոցն, յորժամ ներէր Նոյա Աստուծոյ երկայնմտութիւնն յաւուրս Նոյի, յորս տապանն կազմէր. յոր նուազունք, այս ինքն՝ ոգիք իբրև ութ ապրեցան ի ջրոյն։ 20։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք. առաւօտուց եղիցի ուրախութիւն։

Զկնի՝ Որթիւ։

Աւետարան ըստ Մատթէոսի։ ԻԷ։ 57։

վասն թաղման Տեառն մերոյ Յսի Քսի։

Եւ իբրև երեկոյ եղև՝ եկն այր մի մեծատուն յԱրիմաթեայ, որում անուն էր Յովսէփ, որ և աշակերտեցաւ իսկ Յսի։ Սա մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յսի. յայնժամ Պիղատոս հրամայեաց տալ զմարմինն։ Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց սբ կտաւովք, և եդ ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց ի վիմի. և թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ՝ գնաց։ Անդ էր Մարիամ Մագդաղենացի և միւս Մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին։ 61։

Զկնի՝

Սբ Այ, սբ և հզօր, սբ և անմահ. ողորմեա մեզ։

Եւ այս նախատօնակ արա, զի Թաղումն Տեառն է. ասելով

Շարական ԲՁ։

Պարգևատուն ամենեցուն. Տէր երր առաջն. 435։

Քարոզ. Խնդրեսցուք։ Կեցո ի Տէր։ Աղօթ. Քում ամենազօր և հրաշալի թաղմանդ։

Եւ դնեն զսուրբ խաչն և զաւետարանն ի բազմոցի կամ ի վերայ գրակալի, պատեալ ազնուական պատարագակալաւ ի խորհուրդ պատանացն Քրիստոսի։ Եւ երկրպագեն և համբուրեն միաբան ամենեքեան զսուրբ խաչն։ Եւ պար առեալ ասեն

Շարական ԲԿ։

Խաչի քո Քս երկիր պագանեմք. Եւ որ ի կարգին. 385։

Այս աւր տաղ ողբոյն. Ածածին կոյսն Մարիամ։

Զկնի՝ Քրզ. Սբ խաչիւս։ Աղօթ. Պահպանեա զմեզ։

Օրհնեալ Տէր մեր։ Հայր մեր որ։

Եւ արձակեն խաղաղութեամբ։

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ, ԴԿ.

Ի ԳԻՇԵՐԻՆ

Վառեն լոյս յառաջ խորանն միայն։ Կանոնագլուխ ԴԿ. զմահու Դաւթեայն առա. Դատեա Տէր զայնոսիկ։

Օրհնութիւն ԲՁ։

Պարգևատուն ամենեցուն այսօր. խնդրի պարգևս ի Պիղատոսէ. և արկողն ըզլոյս որպէս զօթոց հաւանի պատիլ ի Յովսէփայ։ Կենդանատուն ամենեցուն այսօր. դնի ի նոր գերեզմանի. և գանձն անմահութեան կնքի մատանեաւ քահանայիցն։ Արարածոց փրկութիւն Քրիստոս այսօր. եդաւ ի նորափոր վիմի. զոր օրհնեն զօրք երկնից երգով պահպանի ի զինուորացն։

† Կենդանին յաւիտենից Քս այսօր. խնդրի ոչ մեռեալ ի Պիղատոսէ. և մերկութեան ծածկոյթն Ադա-

մայ յանձն առնու պատիլ ի Յովսէփայ: Անմահու-
թեանց տրւող Քն այսօր, ի հող մահու խոնարհեցաւ,
և բնակեալն ի լոյս յանմատոյց թաղեցաւ մարմնով
ի սիրտ երկրի: Արեգակն արդարութեն Քրիստոս այս-
օր, եդաւ ի գբի ստորերկանի, և փառացըն Հօր
ճառագայթ ծածկեցաւ վիմով ի մէջ երկրի:

† Կուսածին մարմնով Քրիստոս այսօր, դընի ի կոյս
գերեզմանի, և լուծիչն երկանց դըժոխոց մատանեաւ
կընքի քահանայից: Արթուն բնութեք արարիչն ամե-
նեցուն այսօր, նըննջէ ի մէջ մահացելոց, որ պահէն
զիսրայէլ անքուն պահպանի ի զինուորացն:

Որ թագաւորդ ես թագաւորաց Քս, ի ծառայէ դա-
տապարտեալ համբերելով վասըն մեր, երկայնամիտ
Տէր քեզ փառք: Որ պատուական խաչիւըդ Քո
Քրիստոս, և սբ արեանըդ քո հեղմամբ կեցուցանել ըզ-
մեզ կամեցար, երկայնամիտ Տէր քեզ փառք: Որ
մարդասիրապէս վասն ամենեցուն ամենայնի համբե-
րեցեր եւ ի մահու ըզմահ կոխեցեր, երկայնամիտ
Տէր քեզ փառք:

Արծաթսիրութեամբըն մոլեալ Յուդա, զՏէր ըզմեծ
ըզվարդապետն ընդ երեսուն արծաթոյ հրէիցըն
մատնէր: Ընդ որում ես համբուրեցից ասէ ըզնա
կալարուք, ով համբոյր նենգութեան նշան եւ ա-
ռիթ մահու: Մերկացաւ յինքենէ զածայինն սբ Հո-
գին, և ըզգեցաւ ըզսատանայ որպէս զհանդերձ ար-
կաւ զիւրեաւ:

Որ նստիս ի քրովբէս Ած Բանդ, այսօր վասըն
մեր խոնարհութեամբ նստար ի լերինն ձիթենեաց,
* օրհնեմք ըզքեզ անդադար երգով: Որ համագոյդ
ես խորհրդոցըդ հայրենի, աշակերտաց քոց ծանու-

ցեր ըզխորհուրդ քոյ գալստեանն, օրհնեմք: Որ
ամենայնց ես արարիչ և ըստեղծիչ կենդանութեն,
այսօր ըզծածկեալ խորհուրդ Երրորդութեանըդ յայ-
տնեցեր եկեղեցւոյ սրբոյ քո, օրհնեմք:

ՀՈԳ. Նոյն և նման Հօր և Որդւոյ Հոգիդ անեղ
և համագոյ, բըղխումըն Հօր անքըննաբար առող
յՈրդւոյ անճառաբար, ի վերնատունն այսօր իջեր
զհոգիդ շնորհաց քոց արբուցեր, արբո և մեզ ո-
ղորմութեամբ ի բաժակէդ իմաստութեն: Իբր ստեղ-
ծող արարածոց որ շրջէիր ի վր ջրոց, նոյն և ի
ջուրսն աւազանին ի շնորհել մեզ քում էակցին,
գըգուես սիրով աղաւնակերպ զմարդիկ ծնանիս ածա-
կերպ, արբո և մեզ ողորմութեամբ ի բաժակէդ ի-
մաստութեն: Բաբուն վերնոցն իմանալեաց և ըստորին
այսըր զգալեաց, որ մարգարէս տաս ի հովուաց և ա-
ռաքեալս ի ձըկնորսաց, աւետաւոր ըզմաքսաւորս քա-
րող բանի քում զհալածողս, արբո և մեզ ողորմու-
թեամբ ի բաժակէդ իմաստութեան:

ՆՆՉ: Ի ձայն փողոյ գալստեան քո Տէր ամ հոգիք
զարթիցեն կալ ի դատաստանի քում Քս Ած մեր:
Յորժամ հընչէ բարբառն ահագին. և հարկանի փող
յարութեան մերոյ. եւ մեք գոչելով ասեմք փառք
գալստեան քո Տէր: Յորժամ առնես հատուցումըն
Տր, և սուրբք քո պարծեսցին ի քեզ, եւ մեզ շնոր-
հեսցես փրկիչ կալ ի յաջմէ քումմէ:

ԱՁՆ: Օ քեզ Հայր յառաջ քան զյաւիտեանս բա-
րեբանեն դասք անմարմնոց հրեշտակաց, ձայնիւ եր-
գով գոչեն և աղաղակեն Աստուած աստուծոց և Տէր
տերանց փրկիչ գոլով: Առաքեցեր զքո միածինըդ
մարմնանալ ի սբ կուսէն, եւ անարատ ծընանել յո-

րովայնէ անապական. բառնալով զմեր նեղութիւնս. Աստուած աստուծոց և Տէր տերանց փրկիչ գոլով: Շնորհք բարի յԵրուսաղէմ երևեցաւ հեթանոսաց. զի արարիչն յաւիտենից տղայ եղեալ յորդեգրութիւն կենաց կոչէ. Աստուած աստուծոց և Տէր տերանց փրկիչ գոլով:

Խչ: Ընդ թաղումն քո յերկրի երկիրս երկինք անուանեցաւ. նախահայրն մեր Ադամ վերստին նորոգեցաւ. աղաչեմք սուրբ փրկիչ պահպանեա զանձինս մեր: Թագաւորն արարածոց. բազկատարած կայր ի խաչին. վասն Ադամայ նախաստեղծին ճաշակման որ ի դրախտին. աղաչեմք սուրբ փրկիչ պահպանեա զանձինս մեր: Փառք Հօր: Ժամն տիւ եղև գիշեր. Տէրն ի խաչին բևեռեցաւ. գեղարդեամբն խոցեցաւ. ի հող մահու խոնարհեցաւ. աղաչեմք սուրբ փրկիչ պահպանեա զանձինս մեր:

Այժմ և միշտ: Ցնծութիւն արարածոց քո այսօր. արտասուք ոչ մեռեալ ի տրտմագնեցից. և բուրումն անմահութեան խնկի ի զգաստիցն իւղաբերիցն:

Մաղթանք. Փառք հրաշափառ թաղման քո Տէր:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Եդին զիս ի գբի ներքնում. ի խաւարի և ի ստուերս մահու: Ցիս հաստատեցաւ սրտմտութիւն քո. զամ զբօսանս քո ածեր ի վերայ իմ:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Փ. Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի. և ի մեռեալս ազատ: Որպէս վիրաւորս. որք ննջեն ի գերեզմանի:

Փառք և: Այժմ և. ալէլուիա:

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Գ Ձ. զոր յեկեղեցին ասա ցած:

Զքեզ օրհնեմք Թագաւոր յաւիտենից անմահ. Աստուած հարցն մերոց: Զոր ոչ բնութիւնք արարածոց զԱստուած տանէին. մահուամբ սահմանեալ դնի ի նոր գերեզմանի. նոր զիս ընդունելով մարդ. գովեմք զքեզ Տէր հարցն մերոց: Որ անփակ գրով հաստատեալ քարտէս. կնքեալ մատանեաւ անկորուստ պահելով զմեզ հաւատով Երրորդութեամբ. գովեմք զքեզ Տէր հարցն մերոց:

Գ. Զտէր օրհնեցէք. և բարձր արարէք զնա յաւիտեան: Փառք Հօր: Օրհնեցէք. Զքեն Թագաւորն յիմանալի զօրացն ահիւ պատուեալ. և բարձր արարէք զնա յաւիտեան: Այժմ և: Օրհնեսցէ. Զանյաղթելի զԹագաւորն որ պահի ի զինուորաց գանձն անմահութեան. և բարձր արարէք զնա յաւիտեան:

Մեծաց. Գ Ձ: Ածածին երկնային դուռն անծային ձայնիւն աւետարանէր հրեշտակն. ուրախ լեր բերկրեալ Տէր ընդ քեզ: Փառք Հօր: Ի քերովբէս բազմեալ ընդ Հօր անապականաբար բնակել հաճեցաւ ի քում յորովայնի. ուրախ լեր բերկրեալ Տէր ընդ քեզ: Այժմ և: Որ բոցեղէն սրովբէիւք շրջափակեալ պահիւր. այսօր ի մէջ մարդկան ի գիրկս հողեղինի յայտնեցաւ. ուրախ լեր բերկրեալ Տէր ընդ քեզ:

Ողորմ. Գ Ձ: Որ բաշխող ես բարութեանց և պարգևատու արարածոց քոց. այսօր հաճեցար խնդրել ի պարգևել մասին ի Պիղատոսէ. զի և մեզ շնորհեսցես պարգևս ողորմութեան քո: Փառք Հօր:

Որ զանճառ ըզլոյս փառաց Հօրն եւ զօթոց ըզքեւ արկար
այսօր անճառ խոնարհութեամբ պատեցար ի Յովսէ-
փայ ի գերեզմանի ողբնեալ. զի ըզհնութին մեղաց
մերոց նորոգեսցես ի կեանս անմահս: Այժմ և միշտ:
Որ յէութեանդ ես ընդ Հօր անպարագրելի Բանդ.
այսօր մատանեաւ քահանայիցըն պարագրիլ ի յանձն
առեր անկողոպտելի գանձ. զի ըզմեզ փրկեսցես ի
յանցանաց մեղաց մերոց:

Տէրյէրկն. Գ2: Յովսէփի ճշմարիտ եւ արդար
հայցէր ի Պիղատոսէ զհասարակաց ըզպարգեւատուն.
որ տրուաւ մեզ գանձ անկողոպտելի: Փառք Հօր:
Պատեամբ ոբ կրտաւովք զմարմինըն տէրունական
զարկողն ըզլոյս որպէս զօթոց. որ զգեցոյց մեզ
ըզգեստ անկողոպտելի: Այժմ և միշտ: Եդամբ ի Նո-
րափոր ի վիմի և մատանեաւ կնքեցաւ. որ զնախա-
ստեղծըն կենդանացոյց. եւ զմարդկան կապանըս մա-
հու եղծ:

Առաւ. Երգ: Եդին զիս ի գբի ներքնումն. ի
խաւարի եւ ի ստուերս մահու:

Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո. զամենայն
զբօսանըս քո ածեր ի վերայ իմ:

Քարոզ. Փառաւորեսցուք. հաւ ձայն:

Մանկանց. ԴԿ. ՍՏ: Յովսէփ քեզ հաւատա-
ցեալ Պիղատոսի աղերսէր. շնորհել զտէրունեանդ
մարմինն: Փառք Հօր և: Զանապական զաստուա-
ծացեալ մարմինդ պատեալ սուրբ կրտաւովք. եւ եդ
ի գերեզմանի: Այժմ և միշտ: Որ արարիչդ ես արա-
րածոց հանգուցեալդ ի քերովբէս. վիմով կնքե-
ցար յերկրի:

Բըղ. Վն խաղաղութե: Աղ. Սբ ես Տէր:

Եւ ապա ասեն ասողքն Սաղմոս ՁԷ. ողբաձայն յարեանն է
վերայ սաղմոսարանի, մինչեւ գծոյն է լման:

ԿՑ. Եդին զիս ի գբի: ներքնումն. ի խաւարի եւ ի ստուերըս
մահու:

Փխ. Տէր Աճ փրկութեան իմոյ. ի տուէ
կարդացի եւ գիշերի առաջի քո:

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր. խոնարհեսցի
ունկն քո ի խնդրուածս իմ:

Զի լցաւ չարչարանօք անձն իմ. և կեանք իմ ի
դժոխս մերձեցան. և համարեցայ ես ընդ այնոսիկ որ
իջանեն ի գուբ:

Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի, և ի մեռեալս
ազատ:

Որպէս վիրաւորս որ ննջեն ի գերեզմանս:

Զորս դու ոչ յիշեցեր. նոքա ի ձեռանէ քումմէ մեր-
ժեցան:

Եդին զիս ի գբի ներքնումն, ի խաւարի և ի ստուերս
մահու:

Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո. զամենայն զբօ-
սանս քո ածեր ի վերայ իմ:

Հեռի արարեր յինէն զծանօթս իմ, և եդին զիս
նշաւակ իւրեանց:

Մատնեցայ և ոչ ելանէի. աչք իմ տկարացան յաղ-
քատութենէ:

Աղաղակեցի առ Տէր զօրհանապազ. և համբարձի
առ քեզ զձեռս իմ:

Միթէ մեռելոց առնիցես սքանչելիս. կամ բժիշկք
յարուցանիցեն, խոստովան առնիցեն առ քեզ:

Միթէ պատմեսցէ ոք երբեք ի գերեզմանի զողորմու-
թիւնս քո, կամ զճշմարտութիւնս քո ի կորստեան:

Մի՛ թէ ճանաչիցի՞ն ի խաւարի սքանչելիք քո, կամ արդարութիւն քո յերկիր մոռացեալ:

Ես առ քեզ Տէր աղաղակեցի. առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ:

Ընդէ՞ր Տէր մերժես զանձն իմ, կամ դարձուցանես զերեսս քո յինէն,

Տնանկ և վաստակաւոր եմ ես ի մանկութենէ իմմէ. ի բարձրութենէ խոնարհեցայ և ապշեցայ:

Յիս հաստատեցաւ բարկութիւն քո. արհաւիրք քո խռովեցուցին զիս:

Շրջեցան զինեւ ո՛րպէս ջուր. զօր ամ պաշարեցին զիս ի միասին:

Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ, և զծանօթս իմ վն թշուառութեն իմոյ:

Զկնի՝ Որթիւ:

Աւետարան ըստ Մատթէոսի: ԻԷ. 62:

Վասն Թաղման Տեառն մերոյ Յսի Քսի:

Եւ ի վաղիւ անդր՝ որ է յետ ուրբաթուն, ժողովեցան քահանայապետքն և փարիսեցիքն առ Պիղատոս, և ասեն. տէր, յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր՝ մինչ կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառնեմ: Արդ՝ հրամայեա́ զգուշանալ գերեզմանին մինչեւ ցերիս աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն գիշերի՝ գողանայցեն զնա, և ասիցեն ժողովրդեանն, թէ յարեաւ ի մեռելոց. և լինիցի յետին մոլորութի́ն չար քան զառաջինն: Ասէ ցնս Պիղատոս. ունիք զզօրականն, երթա́յք զգուշացարո́ւք ո́րպէս և գիտէք: Եւ նոքա երթեալ զգուշացան գերեզմանին, և կնքեցին զվէմն հանդերձ զօրականօքն: 66:

Երգ. Տէրն յետ ստեղծման:

Քարոզ. Խնդրեսցուք: Կեցո Տր: Աղօթք. Քում ամենազօր և հրաշալի Թաղմանդ:

Եթէ կամիս՝ տաղ եւս ասա Թաղման:

Եւ դնեն զսուրբ խաչն յատեան, պատեալ ոսկետակ պատուականաւ: Եւ երկրպագեն եւ համբուրեն զսուրբ խաչն եւ զաւետարանն: Եւ ասեն

Շարական ԲԿ:

Խաչի քո Քս երկիր պագանեմք. եւ որ է կարգին. 385:

Քարոզ. Սբ խաչիւս: Աղօթք. Պահպանեա:

ՅԵՐԵԿՈՅԻ

Ճրագալոյցն սուրբ Զատկին՝ յետն ժամու ժողովքն է սուրբ մատրանն, եւ լուցանեն երեք կանթեղս: Եւ ասեն զՃաշու ժամ. եւ Նշխար գործի: Իսկ Խոնարհեցո եւ Ապրեցո ոչ գոյ: Այլ զկնի ճաշուն սկսանի եպիսկոպոսն կամ առաջնորդն յանձնողութեան տասն Բարձր յայնի-

Սաղմոս ՃԺԲ:

Կց. Եղիցի անուն Տռն օրհնեալ. յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

Փխ. Օրհնեցէք մանկունք զՏէր. և օրհնեցէք զանուն Տեառն:

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու օրհնեալ է անուն Տեառն:

Բարձր է ի վերայ ամենայն ազգաց Տէր. և յերկինս են փառք նորա:

Ո՞վ է որպէս Տէր Ած մեր ի բարձունս բնակեալ, և զխոնարհս տեսանէ յերկինս և յերկրի:

Յարուցանէ զաղքատս յերկրէ. և բարձր առնէ զտառապեալս յաղբեւաց:

Նստուցանէ զնոսա իշխանս. ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ:

Բնակեցուցանէ զամուլն ի տան ուրախամիտ, որպէս մայր որդւովք բերկրեալ:

Ձնի՝ Շարական Գ.Ձ:

Այսօր ածութիւն զուարճանայ նոր հաստատելով զերկիր. պարեք սուրբք փառաբանեն զուարթնոց. եւ մեք ձայնիւ օրհնութեան զարդարեսցուք սուրբ ըղտօնս:

Այսօր եւ մեք ցնծամք տօնիւս ընդհանուր հնչմամբ. մեծապէս փայլմամբ երեւեցաւ յաշխարհի. առ Ած գոհութիւնք ընթանան. պատմեն անդադար զբան կենդանի: Խընդա և զուարճացիր եկեղեցի. կոյս մր եւ հարսն երկնաւոր փեսային. ահա տեսանեմք զօծեալն ըզՔրիստոս. գոլով առ քեզ լոյսն հեթանոսաց:

Ալէլուիա. ալէլուիա: Եւ ես խաղաղութեան զՏէր աղ:

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւ:

Սաղմոս ՃԺԷ:

ԿՑ. Այս օր է զոր արար Տէր. եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա:

Փխ. Խոստովան եղերուք Տն, զի բարի է. զի յաւիտեան է ողորմութի նորա:

Ասասցէ տունն Իէլի. զի յաւիտեան է ողորմութի նր:

Ասասցէ տունն Ահարոնի. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ասասցեն երկիւղածք Տեառն. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի. և լուաւ ինձ յանդորր:

Տէր է իմ օգնական, և ես ոչ երկեայց. զի՞ արասցէ ինձ մարդ:

Տէր է իմ օգնական, և ես տեսից ի թշնամիս իմ:

Բարի է յուսալ ի Տէր՝ քան յուսալ ի մարդիկ. բարի է յուսալ ի Տէր՝ քան յուսալ յիշխանս:

Ամենայն ազինք շրջեցան զինեւ. և անուամբ Տեառն յաղթեցի նոցա:

Շրջելով շրջեցան զինեւ, պաշարեցին զիս ի միասին. և անուամբ Տն վանեցի զնոսա:

Շուրջ եղեն զինեւ որպ մեղուք. վառեցան բորբոքեցան որպ փուշք ի հուր. և անուամբ Տն մերժեցի զնս:

Ի մերժելն դրդուեցայ, և եղէ մերձ ի գլորել. և Տէր ընկալաւ զիս:

Զօրութիւն իմ և օգնութիւն իմ Տր. և եղեւ ինձ ի փրկութիւն:

Ձայն ցնծութեան փրկութեան ի յարկս արդարոց:

Աջ Տեառն արար զօրութի. աջ Տեառն բարձր արար զիս. և աջ Տեառն արար զօրութիւն:

Ոչ մեռայց, այլ կեցից. և պատմեցից զգործս Տն:

Խրատելով խրատեաց զիս Տէր. և ի մահ ոչ մատնեաց:

Բացէք ինձ զդրունս արդարութեան. զի մտից ընդ այն և խոստովան եղէց Տեառն:

Այս դուռն Տն է. և արդարք մտանեն ընդ սա:

Խոստովան եղէց քեզ Տէր, զի լուար ինձ, և եղեր ինձ ի փրկութիւն:

Վէմն զոր անարգեցին շինողքն՝ նա եղեւ գլուխ անկեան:

Ի Տեառնէ եղեւ այս. և է սքանչելի յաչս մեր:

Այս օր է զոր արար Տէր. եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա:

Ո՛ Տէր փրկեա՛, ո՛ Տէր առաջնորդեա՛. օրհնեալ որ գալոց ես անուամբ Տեառն. և օրհնեցաք զքեզ ի տանէ Տեառն:

Տէր Ած մեր երեւեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչեւ յանկիւնս սեղանոյ:

Ած իմ ես դու, և խոստովան եղէց քեզ. Ած իմ ես դու, և բարձր արարից զքեզ:

Խոստովան եղէց քեզ Տէր՝ զի լուար ինձ, և եղեր ինձ ի փրկութիւն:

Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է․ զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ապա ընթեռնուն շուրջառով երկոտասան ընթերցուածս։

Ա․ ընթերցուած ի Ծննդոց։ Ա․ 1։

Ի սկզբանէ արար Աստուած․ Տէ․ է 207։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։ Երկ․ անգամ կրկնել։

Եւ եւս խաղաղութեան։ Օրհնութիւն և փառք։

Բ․ ընթերցուած ի Ծննդոց։ ԻԲ․ 1։

Եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ․ Տէ․ 305։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։ Երկ․ անգամ կրկնել։

Եւ եւս խաղաղութեան։ Օրհնութիւն և փառք։

Գ․ ընթերցուած յԵլից։ ԺԲ․ 1։

Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի և ընդ Ահարոնի յերկրին Եգիպտացւոց, և ասէ։ Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց․ առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ։ Խօսեաց ընդ ամ ժողովրդեան որդւոցն Իսրայէլի և ասասցես․ ի տասներորդում ամսեանս այսորիկ առցեն իւրեանց իւրաքանչիւր ոչխար ըստ տունս ազգացն, ոչխար ըստ երդ։ Եւ եթէ սակաւք իցեն ի տանն, ոչ թէ չիցեն բաւական լինել ոչխարին, առցէ ընդ իւր զդրացի իւր և զընկեր իւր ըստ մարդաթուի՝ իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում համարեսցի յոչխարն։ Ոչխար կատարեալ՝ արու, տարեւոր, անարատ լիցի ձեզ․ յօդեաց և յայծեաց առնուցուք։ Եւ եղիցի ձեզ պահել մինչեւ ի չորս և ի տասն աւուր ամսոյս այսորիկ․ և զենցեն զնա ամ բազմութիւն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի ընդ երեկս։ Եւ առցեն յարենէ անտի, և դիցեն ի վր երկուց սեմոցն և բարաւորի տանցն, յորս ուտիցեն զնա ի նոսա։ Եւ կերիցեն զմիսն ի գիշերիս յայսմիկ

խորովեալ հրով։ Բաղարջ ընդ եղեգի կերիցեն։ Եւ ոչ ուտիցէք ի նոցանէ հում․ և ոչ պախ եփեալ ջրով՝ այլ խորովեալ հրով, զգլուխն ոտիւքն հանդերձ և զփորոտին նորա։ Եւ ոչ թողուցուք ի նմանէ յայգ․ և ոսկր մի բեկանիցէք ի նմանէ․ և որ ինչ մնայցէ ի նմանէ յայգ՝ հրով այրեսջիք։ Եւ այսպէս ուտիցէք․ գօտիք ձեր ընդ մէջս, և կօշիկք ձեր յոտս, և ցուպ ձեր ի ձեռին․ փութանակի ուտիցէք, զի զատիկ Տն է։ Եւ անցից ընդ ամ երկիրդ Եգիպտացւոց ի գիշերիս յայսմիկ, և հարից զամ անդրանիկ երկրիդ Եգիպտացւոց ի մարդոյ մինչեւ յանասուն, և յամ դիսն Եգիպտացւոց արարից վրէժխնդրութի․ զի ես եմ Տէր։ Եւ եղիցի ձեզ արիւնդ նշանակեալ ի վր տանց՝ յորս իցէք դուք անդ։ Եւ տեսից զարիւնդ, և ապրեցուցից զձեզ․ և ոչ լինիցին ի ձեզ հարուածք ի սատակել, յորժամ հարկանիցեմ յերկրիդ Եգիպտացւոց։ Եւ եղիցի ձեզ աւուրդ այդ ի յիշատակ, և տօնիցէք զդա տօն Տեառն յազգս ձեր․ օրէն յաւիտենական տօնիցէք զդա։ Զեօթն օր բաղարջ ուտիցէք․ յառաջնմէ իսկ օրէ անտի անհետ առնիջիք զխմոր ի տանց ձերոց․ ամենայն որ ուտիցէ խմորեալ՝ սատակեսցի անձն այն յԻսրայէլէ։ Յառաջնմէ օրէ անտի մինչեւ ցօրն եօթներորդ նուիրեալ եղիցի ձեզ սուրբ․ զամենայն գործ սպասու մի գործիցէք ի նմա, բայց միայն որ գործիցի ամենայն անձին՝ այն միայն գործեսցի ձեզ։ Եւ պահեսջիք զպատուիրանս զայս, զի յաւուր յայսմիկ հանից զզօրութիւն ձեր յերկրէս Եգիպտացւոց․ և առնիցէք զօրս զայս յազգս ձեր օրէն յաւիտենական։ Ի սկսանել չորեքտասաներորդի աւուր ամսոյն առաջնոյ՝ յերեկորեայ բաղարջ ուտիցէք, մինչեւ ցքսան և մի օր ամսոյն ցերեկոյ։ Զեօթն օր մի գտցի խմոր ի տունս ձեր․ ամենայն որ ուտիցէ խմորեալ՝ սատակեսցի անձն այն ի ժողովրդենէ Իէլի, յեկաց և ի բնակաց երկրին։ Խմորեալ

մի՛ ուտիցէք․ յամ բնակութեան ձերում ուտիցէք բաղարջ։ Եւ կոչեաց Մովսէս զամ ծերակոյտ որդւոցն Իսրայէլի, և ասէ ցնոսա․ երթա՛յք առէք ձեզ ոչխար ըստ ազգաց ձերոց, և զենջիք ի զատիկ։ Եւ առնուցուք մշտիկ զոպայի թաթաւեալ յարեան՝ որ առ դրօքն իցէ, և սրսկեսջիք զբարաւորան և զերկոքումբք սեմովքն յարենէ անտի որ առ դրօքն․ բայց դուք մի՛ ելանիցէք իւրաքանչիւր ըստ դուռն տան իւրոյ մինչեւ ցառաւօտ։ Եւ անցցէ Տէր հարկանել զեգիպտացիսդ, և տեսանիցէ զարիւնն որ ի վ՟ր բարաւորին և ի վ՟ր երկուց սեմոց, և զանց առնիցէ Տէր զդրօքն, և ոչ տայցէ թոյլ սատակչին մտանել ի տունս ձեր և հարկանել։ Եւ պահեսջիք զբանս զայս՝ օրէն քեզ և որդւոց քոց մինչեւ ցյաւիտեան։ 24։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։ Երբ․ անգամ կրկնել։

Եւ եւս խաղաղութեան։ Օրհնութիւն և փառք։

Դ․ ընթերցուածս ի Յովնանու մարգարէէ։ Ա․ 1։

Եւ եղեւ բան Տ՟ռն առ Յովնան որդի Ամաթեայ, և ասէ․ Արի և գնա ի Նինուէ քաղաք մեծ․ և քարոզեսջիր անդ, զի ել աղաղակ չարութեան ն՟ց առ իս։ Եւ յարեաւ Յովնան փախչել ի Թարսիս յերեսաց Տ՟ռն․ էջ ի Յոպպէ, և եգիտ նաւ որ երթայր ի Թարսիս․ ետ գինս և եմուտ ի նաւ նաւել ընդ ն՟ց ի Թարսիս յերեսաց Տ՟ռն։ Եւ Տէր յարոյց հողմ ի ծովուն, և եղեւ մրրիկ մեծ ի ծովուն․ և նաւն ի վտանգի կայր ի խորտակել։ Եւ երկեան նաւավարքն երկիւղ մեծ․ և աղաղակէին առ իւրաքանչիւր ա՟ծս իւր․ և ընկեցին զկարասին որ էր ի նաւին՝ ի ծով անդր, զի թեթեւասցուսցեն յինքեանց։ Եւ Յովնան իջեալ ի խորշ մի նաւին՝ ննջէր և խորդայր։ Մատեաւ առ նա նաւապետն և ասէ․ զի՞նչ է այդ՝ զի խորդաս․ արի՛, կարդա՛ զՏ՟ր Աստուած քո, թերեւս ապրեցուսցէ զմեզ Աստուած, և մի կորիցուք։ Եւ ասեն իւրաքանչիւր ցընկեր իւր․ եկայք արկցուք վիճակս և տեսցուք վասն ո՞յր են չարիքս այս ի վերայ մեր։ Արկին վիճակս, և ել վիճակն Յովնանու։ Եւ ասեն ցնա․ պատմեա մեզ, վասն է՞ր են չարիքս այս մեզ․ զի՞նչ արուեստ է քո․ ուստի՞ գաս կամ յո՞ երթաս․ յորմէ՛ աշխարհէ ես կամ յորմէ՛ ժողովրդենէ․ Ասէ ցնոսա․ ծառայ Տեառն եմ ես, և զՏէր Ա՟ծ երկնից պաշտեմ, որ արար զծով և զցամաք։ Եւ երկեան արքն երկիւղ մեծ, և ասեն ցնա․ զի՞նչ գործեցեր զայդ․ զի գիտացին եթէ յերեսաց Տեառն փախուցեալ էր, քանզի պատմեաց նոցա։ Եւ ասեն ցնա․ զի՞նչ արասցուք քեզ, և դադարեսցէ ծովս ի մէնջ․ զի ծովն առաւել եւս խռովեալ էր և յարուցանէր մրրիկ ի վ՟ր ն՟ց։ Եւ ասէ ց՟նս Յովնան․ առէք ընկեցէք զիս ի ծովդ, և դադարեսցէ ի ձէնջ ծովդ․ զի գիտեմ ես՝ եթէ վ՟ն իմ է մրրիկս այս մեծ ի վ՟ր ձեր։ Եւ ջանային արքն դարձուցանել զնաւն ի ցամաք, և ոչ կարէին․ զի ծովն եւս քան զեւս խռովէր և սաստկանայր ի վ՟ր ն՟ց։ Աղաղակեցին առ Տէր և ասեն․ քա՛ւ լիցի Տէր, մի՛ կորիցուք վ՟ն անձին առնս այսորիկ․ մի՛ ածեր ի վերայ մեր արիւն արդար․ զի դու Տէր ո՟վ կամեցար՝ և արարեր։ Եւ առին զՅովնան և ընկեցին ի ծովն․ և դադարեաց ծովն ի խռովութենէ իւրմէ։ Եւ երկեան արքն երկիւղ մեծ ի Տեառնէ․ զենին զոհս Տեառն և ուխտեցին ուխտս։ Եւ հրաման ետ Տէր կիտին մեծի կլանել զՅովնան․ և էր Յովնան ի փոր կիտին զերիս տիւս և զերիս գիշերս։ Եւ եկաց Յովնան յաղօթս առ Տէր Ա՟ծ ի փոր կիտին։ Եւ ասէ․ ի նեղութեան իմում աղաղակեցի առ Տէր Ա՟ծ իմ, և լուաւ ինձ յորովայնէ դժոխոց աղաղակի իմում․ լո՛ւր Տէր ձայնի իմում։ Ընկեցեր զիս ի խորս սրտից ծովու․ և գետք պաշարեցին զիս․ Ամենայն զբօսանք քո՝ և ալիք քո անցին ի վ՟ր իմ։ Եւ

ասացի՝ թէ մերժեցայ յաչաց քոց. արդ՝ իցէ՞ թէ յաւելից հայել ի տաճար սբ քո: Հեղան զինեւ ջուրք մինչեւ յոգիս, անդունդք անհնարինք պաշարեցին զիս: Եմուտ գլուխ իմ ընդ փապարս լերանց. իջի յերկիր, որոյ նիգք իւր աղխք յաւիտենից. և ելցեն յապականութէ կեանք իմ: Առ քեզ Տէր Ած ի նուաղել հոգւոյ իմոյ կարդացի. զՏէր յիշեցի. և եկեսցեն աղօթք իմ ի տաճար սբ քո: Որ պահէին զունայնութի և զստութի՝ զողորմութի իւրեանց թողին: Այլ ես ի ձայն օրհնութե և խոստովանութե մատուցից քեզ պատարագ, զոր ուխտեցի, և հատուցից փրկութե Տեառն: Եւ հրամայեցաւ ի Տեառնէ վիշապ ձկանն, և եթուք զնա ի ցամաք: Եւ եղեւ բան Տեառն առ Յովնան երկրորդանգամ, և ասէ: Արի և գնա ի Նինուէ քաղաք մեծ, և քարոզեսջիր ի նմա ըստ առաջին քարոզութեն զոր խօսեցայ առ քեզ: Յարեաւ Յովնան և գնաց ի Նինուէ, ոպ խօսեցաւ ընդ նմա Տէր. և Նինուէ էր քաղաք մեծ ԱՅ, իբրեւ գնաց երից աւուրց ճանապարհի: Եւ սկսաւ Յովնան մտանել ի քաղաքն իբրեւ աւուր միոյ ճանապարհի. քարոզեաց և ասէ. այլ եւս երեք աւուրք՝ և Նինուէ կործանեսցի: Եւ հաւատացին արքն Նինուէացիք յԱծ, և քարոզեցին պահս, և քուրձ զգեցան ի մեծամեծաց մինչեւ ցփոքունս իւրեանց: Եհաս բանն առ թագաւորն Նինուէացւոց. յարեաւ յաթոռոյ իւրմէ, և մերկացաւ զպատմուճան իւր. զգեցաւ քուրձ և նստաւ ի վր մոխրոյ: Եւ քարոզեցաւ ի Նինուէ ի թագաւորէն և ի մեծամեծաց իւրոց. թէ մարդ և անասուն, խաշն և արջառ մի ինչ ճաշակեսցեն և մի ճարակեսցին, և մի՛ ջուր արբցեն: Եւ զգեցան քուրձ մարդ և անասուն. և աղաղակեցին առ Ած սրտի մտօք, և դարձան իւրաքանչիւր ի ճանապարհաց իւրեանց չարաց, և յանիրաւութէ՝ որ ի ձեռս իւրեանց: Եւ ասեն՝ ո՞ գիտէ՝ ապաշաւեսցէ Ած և դարձցի ի

բարկութէ սրտմտութե իւրոյ, և մի՛ կորիցուք: Եւ ետես Ած զգործս նոցա, զի դարձան իւրաքանչիւր ի ճանապարհաց իւրեանց չարաց. և զղջացաւ Ած ի վր չարեացն՝ զոր խօսեցաւ առնել նոցա, և ոչ արար: Եւ տրտմեցաւ Յովնան տրտմութի մեծ և խռովեցաւ: Եւ եկաց յաղօթս առ Տէր Ած և ասէ. ով Տէր, ո՞չ այս այն բանք են իմ՝ մինչ էի անդէն յերկրին իմում. վն այնորիկ աճապարեցի փախչել ի Թարշիշ. զի գիտէի՝ թէ ողորմած ես դու և գթած, երկայնամիտ և բազումողորմ, և զղջանաս ի վր չարեաց: Եւ արդ՝ Տէր Տէր, առ զոգի իմ յինէն. զի լաւ է ինձ մեռանել՝ քան թէ իցեմ կենդանի: Եւ ասէ Տէր ցՅովնան՝ թէ արդարեւ յո՞յժ տրտմեալ իցես: Եւ ել Յովնան ի քաղաքէ անտի, և նստաւ յանդիման քաղաքին. և արար իւր հովանի և նստաւ ընդ հովանեաւն՝ մինչեւ տեսանիցէ, թէ զինչ լինիցի քաղաքին: Եւ հրաման ետ Ած դդմենւոյն. և ել ի վր գլխոյն Յովնանու՝ լինել հովանի ի վր գլխոյ նորա, զովացուցանել զնա ի տառապանաց իւրոց: Եւ ուրախ եղեւ Յովնան ի վր դդմենւոյն յուրախութի մեծ: Եւ հրաման ետ Ած որդանն առաւօտուն ի վաղիւ անդր, եհար զդդմենին, և ցամաքեցաւ: Եւ եղեւ ի ծագել արեւուն՝ հրամայեաց Ած հողմոյ խորշակի տապախառնի, և անկաւ արեւն զգլխովն Յովնանու. և կայր ի տարակուսի, և քաղէին ոգիք նր. և ասէր՝ լաւ էր ինձ մեռանել քան զայս կեանս իմ: Եւ ասէ Տէր Ած ցՅովնան. թէ արդարեւ յո՞յժ տրտմեալ իցես ի վր դդմենւոյն. և ասէ՝ յոյժ տրտմեալ իցեմ մինչեւ ցմահ: Եւ ասէ Տէր. դու խնայեցեր ի դդմենին յոր չեղեր ինչ աշխատ և ոչ սնուցեր զնա. որ գիշերի ել և միւս գիշերի կորեաւ: Ես ո՞չ խնայեցից ի Նինուէ քաղաք մեծ, յորում բնակեալ են աւելի քան զերկոտասան բիւր մարդիկ, որ ոչ ծանեան զաջ և զահեակ իւրեանց. և անասուն բազում: Դ. 11:

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։ Երեք անգամ կրկնել։

Եւ ևս խաղաղութեան։ Օրհնութիւն և փառք։

Ե. ընթերցուած յելից։ ԺԴ. 24։

Եւ եղեւ յառաւօտին պահու հայեցաւ Տէր ի բանակն Եգիպտացւոց սեամբ հրոյ եւ ամպոյ. և խռովեաց զբանակն Եգիպտացւոց։ Եւ կապեաց զանիւս կառաց նց՟. և վարէր զնս՟ բռնութբ՟։ Ասեն Եգիպտացիքն. փախիցուք յերեսաց Իսրայէլի. զի Տէր պատերազմի վս՟ նց՟ ընդ Եգիպտացիս։ Եւ ասէ Տէր ցՄովսէս. ձգեա զձեռն քո ի վր՟ ծովուդ. և կարկատեսցի անդրէն ջուրդ, և ծածկեսցէ զԵգիպտացիսդ, զկառս դոցա և զհեծեալս իւրեանց։ Եւ ձգեաց Մովսէս զձեռն իւր ի վր՟ ծովուն. և դարձաւ ջուրն ընդ առաւօտն ի տեղի իւր և Եգիպտացիքն փախեան յերեսաց ջրոյն. և թօթափեաց Տէր զԵգիպտացիսն ի մէջ ծովուն։ Եւ դարձուցեալ զջուրսն, ծածկեաց զկառս և զհեծեալս և զա՟մ զօրութիւն փարաւոնի, որ մտեալ էին զհետ նց՟ ի ծով անդր, և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի։ Եւ որդիքն Իսրայէլի գնացին ընդ ցամաք ի մէջ ծովուն. և ջուրն պարիսպ էր ընդ աջմէ նոցա և ընդ ահեկէ իւրեանց։ Եւ ապրեցոյց Տէր զԻսրայէլ յաւուր յայնմիկ ի ձեռաց Եգիպտացւոցն։ Եւ ետես Իսրայէլ զԵգիպտացիսն մեռեալս առ ափն ծովուն. և ետես Իսրայէլ զձեռն մեծ զոր արար Տէր ընդ Եգիպտացիսն, և երկեաւ ժողովուրդն ի Տռ՟նէ, և հաւատացին յԱծ՟ և ի Մովսէս ծառայ նր՟։ Յայնժամ երգեաց Մովսէս և որդիքն Իսրայէլի զօրհնութ՟իս զայս Այ՟, և ասեն. Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ. զերիվարս և զհեծեալս նց՟ ընկէց ի ծով։ Օգնական ընդունելի իմ Տէր, և եղեւ ինձ ի փրկութ՟ի. սա է իմ Ած՟, և փառաւոր արարից զսա, Ած՟ հօր իմոյ, և բարձր արա-

րից զսա։ Տէր խորտակէ զպատերազմունս, Տէր անուն նր՟։ Զկառս փարաւոնի և զզօրութ՟իս նր՟ ընկէց ի ծով. զընտիրս հեծելոց և զսպառազէնս ընկղմեաց ի ծով կարմիր։ Խորք ծածկեցին զնս՟. ընկլան յանդունդս իբրեւ զվէմ։ Աջ քո Տէր փառաւորեալ է զօրութեամբ, աջ քո Տր՟ խորտակեաց զթշնամիս։ Եւ բազմութեամբ փառաց քոց մանրեցեր զհակառակորդս. առաքեցեր զբարկութ՟ի քո, և եկեր զնս՟ իբրեւ զեղէգն։ Եւ հողմով սրտմտութ՟ե քո բաժանեցան ջուրք. պաղեցան ոպ՟ պարիսպ ջուրք. պաղեցան ալիք ի մէջ ծովու։ Ասաց թշնամին, հալածեցից և հասից. բաժանեցից զաւար, և լցուցից ի նոցանէ զանձն իմ. սատակեցից սրով իմով. տիրեսցէ նց՟ ձեռն իմ։ Առաքեցեր զհողմ՟ քո, և ծածկեաց զնս՟ ծով. ընկղմեցան ոպ՟ կապար ի ջուրս սաստիկս։ Ո՞վ իցէ նման քեզ յա՟ծս, Տէր. և կամ ո՞վ նմանիցէ քեզ, փառաւորեալդ ի սբ՟ս սքանչելի փառօք՝ որ առնես զնշանս։ Ձգեցեր զաջ քո, և եկուլ զնս՟ երկիր։ Առաջնորդեցեր արդարութեամբ ժողովրդեան քում, այսմ՝ զոր փրկեցեր. մխիթարեցեր զօրութբ՟ քով ի բանակետղ սրբութ՟ե քո։ Լուան ազգք և բարկացան. և երկունք կալան զբնակիչս Քանանացւոց։ Յայնժամ տագնապեցան դատաւորք Եդովմայ և իշխանք Մովաբացւոց։ Կալաւ զնս՟ դողում՟. հալեցան ա՟մ բնակիչք Քանանացւոց։ Անկցի ի վր՟ նց՟ ահ եւ երկիւղ, մեծութբ՟ բազկի քո քարասցին, մինչեւ անցցէ ժողովուրդ քո Տէր, մինչեւ անցցէ ժողովուրդ քո այս՝ զոր ստացար։ Տարեալ տնկեսցես զնս՟ ի լեառն ժառանգութ՟ե քո, ի պատրաստութ՟ի բնակութեան քո, զոր արարեր Տէր սրբութ՟ի. Տէր զոր պատրաստեցին ձեռք քո. Տէր թագաւոր յաւիտեան և յաւիտեանս և ևս։ Զի մտին երիվարք փարաւոնի կառօք և հեծելովք նր՟ ի ծով. և ած ի վր՟ նց՟ Տէր զջուրս ծովուն. և որդիքն Իսրայէլի գնացին ընդ ցամաք ի մէջ ծովուն։ Եւ առ Մարի-

ամ մարգարէ քոյր Ահարոնի զթմբուկն ի ձեռս իւր. և ելին ամ կանայք զհետ նր թմբկօք և պարուք: Եւ յառաջէր Մարիամ, և ասէր. օրհնեսցուք զՏէր՝ զի փառօք է փառաւորեալ. զերիվարս և զհեծեալս ընկէց ի ծով: Ժբ. 21:

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա: Երեք անգամ կրկնեա:

Եւ եւս խաղաղութն: Օրհնութի և փառք:

Յորժամ զՕրհնեսցուքն կարդան, եւ զԼուսաւորեայն զեւտոյեալ հանդերձեալ են կարդալ, յայնժամ լուցանեն զահն եւ կանթեղս, եւ տան մոմեղէն ի ձեռս ամենեցուն: Եւ եղանեն միաբան յաղեանն, եւ երգեն

Շարական Գ.Զ:

Լուսաւորեա Եղէմ զի հասեալ է լոյս քո. զարդարեա զամուրըս քո. եւ փառք Տեառն ի վերայ քո ծագեսցի: Օրհներգութբ սաղմոսիւք քեզ վայելէ Աստծ օրհնութի ի Սիովնէ. եւ քեզ մատուսցին աղօթքք յԵրուսաղէմ: Գովեա Երուսաղէմ ըզՏէր և օրհնեա զԱստուած քո. ընոր ժողովուրդ դըշխոյ դուստրը Սիովնի:

Զ. ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ: Կ. 1:

Լուսաւորեաց, լուսաւորեաց Եմ, զի հասեալ է լոյս քո, և փառք Տեառն ի վր քո ծագեսցեն: Զի ահա խաւար ծածկեաց զերկիր, և մառախուղ՝ զհեթանոսս. բայց ի քեզ Տէր յայտնեսցի, և փառք նր ի քեզ երեւեսցին: Եւ գնասցեն թագաւորք ի լոյս քո, և հեթանոսք ի ծագել լուսոյ քո: Համբարձ շուրջ զաչս քո, և տես ժողովեալ առ քեզ զամ մանկունս քո. զի եկին հասին ի հեռաստանէ որդիք քո. և դստերք քո ի վր ուսոց նոցա բարձեալ բերիցին: Յայնժամ տեսցես և խնդասցես. երկիցես և զարհուրեսցիս ի սրտի քում. զի փոխեսցի ի քեզ մեծութի ծովու և ազգաց և ժողովրդոց: Եկեսցեն ի քեզ երամակք ուղտուց. և ծածկեսցեն զքեզ ուղտերամակքն Մադիամու և Գեփայ. ամենեքեան ի Սաբայ եկեսցեն, բերել ոսկի և կնդրուկ և ականս պատուականս. և զփրկութն Տեառն առցեն զաւետիս: Եւ ամ խաշինքն Կեդարու ժողովեսցին առ քեզ. և խոյքն Նաբէովթայ ածցին, և մատուսցին ընդունելի պատարագք ի վր սեղանոյ իմոյ. և տուն աղօթից իմոց փառաւորեսցի: Ո՞վ են սոքա՝ որք իբրեւ զամպս թռուցեալ են, և իբրեւ զաղաւնիս ձագախառն երամովին գան առ իս: Ինձ ակն ունին կղզիք և նաւք Թարշշի՝ յառաջագոյն ածել զորդիս քո ի հեռաստանէ, զարծաթն և զոսկի ընդ իւրեանս. վն անուան Տեառն սբյն և վասն սբյն Իսրայէլի փառաւորելոյ: Եւ շինեսցեն որդիք այլազգեաց զպարիսպ քո. և թագաւորք նց ընծայեսցին քեզ. զի վն բարկութն իմոյ հարի զքեզ, և վն ողորմութն իմոյ սիրեցի զքեզ: Եւ բացցին դրունք քո հանապազորդ ի տուէ և ի գիշերի, և մի փակեսցին, կրել ի քեզ զզօրութիւն ազգաց, և զթագաւորս իւրեանց ածիցեն առ քեզ: Զի ազգք և թագաւորք որ քեզ ոչ ծառայիցեն՝ կորիցեն. և ազգքն աւերելով աւերեսցին: Եւ փառքն Լիբանանու առ քեզ եկեսցեն սարդիւն և սօսիւ և նոճով և մայրիւ առ հասարակ՝ փառաւոր առնել զտեղի սրբութեան իմոյ. և զտեղի ոտից իմոց փառաւորեցից: 13:

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա: Երեք անգամ կրկնեա:

Եւ եւս խաղաղութեան: Օրհնութիւն և փառք:

Է. ընթերցուածս ի Յովբայ: ԼԸ. 1:

Ո՞վ է դա՝ որ թագուցանէ յինէն զխորհուրդս. ժողովեալ զբանս ի սրտի, և համարի յինէն թագուցա-

նել: Պնդեա՛ իբրեւ զայր զմէջ քո. հարցից զքեզ, և տո՛ւր ինձ պատասխանի: Ո՞ւր էիր՝ մինչ ես հիմունս արկանէի երկրի. պատմեա՛ ինձ, եթէ խելամուտ ես հանճարոյ: Ո՞վ եդ զչափ դորա, թէ գիտիցես. կամ ո՞վ արկ ի վ՟ր դորա լար: Յե՞ր վ՟ր հաստատեցան աղխք դորա. ո՞վ է՝ որ արկ զվէմն անկեան ի դմա: Յորժամ եղեն աստեղք ծերք՝ ա՟մ հրեշտակք աստեղաց օրհնեցին զիս մեծաձայն. և ա՟մ հրեշտակք իմ գովեցին: Փակեցի զծով դրամբք՝ յորժամ ծնաւ յորովայնէ մօր իւրոյ ելանել: Եդի նմա զմէգ ի հանդերձ, և զմառախուղ նմա ի խանձարուրս: Եդի նմա սահմանս՝ եդեալ փականս և դրունս: Ասացի. ցայդ վայր եկեսցես, և այլ մի՛ անցանիցես. այլ այդրէն ի քեզ խորտակեսցին ալիք քո: Եթէ առ քեւ կարգեցի զլոյսն առաւօտին. արուսեակն ետես զկարգ իւր՝ հասանել ի վ՟ր թեւոց երկրի, թօթափել զամպարիշտս ի նմանէ: Կամ թէ քո՞ առեալ զհողն կաւ՝ ստեղծեր կենդանի, և խօսուն եդիր զնա յերկրի: Եւ մերժեցե՞ր զլոյսն յամպարշտաց. զբազուկս ամբարտաւանից խորտակեցե՞ր: Հասեա՞լ իցես յակն ծովու. և ընդ հետս անդընդոց շրջեցա՞ր: Բանայցե՞ն քեզ ահիւ դրունք մահու. բարապանաց դժոխոց տեսեալ զքեզ սարսեցե՞ն: Խելամո՞ւտ իցես լայնութեան առ ի ներքոյ երկնից. աղէ՝ պատմեա՛ ինձ՝ ո՞րչափ իցէ: Զի՞նչ երկիր իցէ՝ յորում լոյսն ագանիցի, կամ զի՞նչ տեղի խաւարի: Տանիցե՞ս զիս ի սահմանս նց՟. եթէ խելամո՞ւտ իցես շաւղաց նց՟: Թերեւս գիտիցե՞ս և ընդ ա՟յն ժամանակս ծնեալ իցես. և թիւ աւուրց քոց բազում իցէ: Երթեա՞լ իցես ի շտեմարանս ձեան. և զգանձս կարկտի տեսեա՞լ իցես: Համբարեա՞լ կայցէ քեզ ի ժամանակս թշնամեաց, յօր մարտի և պատերազմի: Ուստի՞ ելանիցէ եղեամն. կամ սփռիցի հարաւ ի ներքոյ երկնից: Ո՞ պատրաստեաց զհոսանս սաստիկս անձրեւաց. և զճանապարհս

ամպրոպաց՝ տեղեալ յերկիր, ուր ոչ գոյ մարդ՝ յանապատ յանմարդի, յագեցուցանել զանկոխն և զանշէն, և բղխեցուցանել զբոյս դալարւոյ: Ո՞ է հայր անձրեւի, և ո՞վ է որ ծնաւ զշաղս ցօղոյ: 28:

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա՛: Երեք անգամ կրկնել:

Եւ ևս խաղաղութ՟ն: Օրհնութ՟ի և փառք:

Ը. Ընթերցուածս ի Յեսուայ որդւոյ Նաւեայ: Ա. 1:

Եւ եղեւ յետ վախճանելոյն Մովսիսի ծառայի Տ՟ն՝ խօսեցաւ Տէր ընդ Յեսուայ որդւոյ Նաւեայ պաշտօնէի Մովսիսի, և ասէ. Մովսէս ծառայ իմ վախճանեցաւ. արդ յարուցեալ անցցես ընդ այդ Յորդանան՝ դու և ա՟մ ժողովուրդ քո, յերկիր զոր ես տաց որդւոցն Իսրայէլի: Յա՟մ տեղիս յոր հասանիցեն գնացք ոտից ձերոց՝ ձեզ տաց զնա, ո՟պ խօսեցայ ընդ Մովսիսի: Զանապատն և զԼիբանաներն, մինչեւ ցգետն մեծ՝ ցգետն Եփրատ. զա՟մ երկիրն Գետացւոց մինչեւ ցծո՟վն վերջին, ի մտից արեւու՝ ձեզ լիցին սահմանքն: Եւ ոչ ոք կացցէ ընդդէմ ձեր զա՟մ աւուրս կենաց քոց: Եւ ո՟պ էի ընդ Մովսէսի՝ նոյնպէս եղէց և ընդ քեզ. և ոչ թողից զքեզ և ոչ անտես արարից զքեզ: Զօրացի՛ր և քա՛ջ լեր. զի դու բաժանեսցես ժողովրդեանդ այդմիկ զերկիրն զոր երդուայ հարցն քոց տալ դոցա: Արդ զօրացի՛ր և քա՛ջ լեր յոյժ, պահել և առնել ըստ ա՟մ օրինացն ո՟պ պատուիրեաց քեզ Մովսէս ծառայ իմ. և մի՛ խոտորեսցիս ի նոցանէ յաջ կամ յահեակ. զի խելամուտ լիցիս ա՟մի զինչ և գործեսցես: Եւ մի՛ մերժիցես զգիր օրինացս այսոցիկ ի բերանոյ քումմէ. և խոկասցես ի դա ի տուէ և ի գիշերի, զի իմասցիս առնել զա՟մ գրեալսդ ի դմա. և ապա յաջողեսցիս և ուղղեսցես զճանապարհս քո. և ապա խելամուտ լինիցիս: Ահա պատուիրեմ քեզ. զօրացի՛ր և քա՛ջ լեր.

մի զանգիտիցես և մի երկնչիցիս, զի ընդ քեզ է Տէր Ած քո յամ տեղիս ուր և երթայցես։ Գ։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։ Երեք անգամ կրկնել։

Եւ ես խաղաղութիւն։ Օրհնութիւն և փառք։

Թ․ ընթերցուած ի չորրորդ Թագաւորութեանց։ Բ․ 1։

Եւ եղեւ ի վերացուցանել Տեառն զԵղիա շարժմամբ յերկինս․ և գնացին Եղիա և Եղիսէէ ի Գաղգաղա։ Եւ ասէ Եղիա ցԵղիսէէ․ նիստ դու աստ․ զի Տէր առաքեաց զիս ի Բեթէլ։ Եւ ասէ Եղիսէէ․ կենդանի է Տէր, և կենդանի է անձն քո՝ թէ թողից զքեզ։ Եւ եկին ի Բեթէլ։ Եւ ելին որդիք մարգարէիցն որ ի Բեթէլ՝ առ Եղիսէէ, և ասեն ցնա․ եթէ գիտիցես զի այսօր առնու Տէր զտէրդ ի գլխոյ քումմէ։ Եւ ասէ․ գիտեմ և ես, լո՛ւռ լերուք։ Եւ ասէ Եղիա ցԵղիսէէ․ նիստ դու աստ․ զի Տէր առաքեաց զիս յԵրիքով։ Եւ ասէ․ կենդանի է Տէր, և կենդանի է անձն քո՝ թէ թողից զքեզ։ Եւ եկին յԵրիքով։ Եւ մատեան որդիք մարգարէիցն որ յԵրիքով՝ առ Եղիսէէ, և ասեն ցնա․ եթէ գիտիցես՝ զի այսօր առնու Տէր զտէրդ ի գլխոյ քումմէ։ Եւ ասէ․ գիտեմ և ես, լո՛ւռ լերուք։ Եւ ասէ ցնա Եղիա․ նիստ դու աստ․ զի Տէր առաքեաց զիս ի Յորդանան։ Եւ ասէ Եղիսէէ․ կենդանի է Տէր, և կենդանի է անձն քո՝ թէ թողից զքեզ։ Եւ գնացին երկոքեան․ և յիսուն այր՝ յորդւոց մարգարէիցն. և կացին ի հանդիպոջ ի բացեայ․ և երկոքին կացին յեզերն Յորդանանու։ Եւ առ Եղիա զմաշկեակն իւր և ծալեաց և եհար զջուրն․ և բաժանեցաւ ջուրն յայս կոյս և յայն կոյս․ և անցին երկոքեան ընդ ցամաք։ Եւ եղեւ ընդ անցանելն նոցա՝ ասէ Եղիա ցԵղիսէէ․ խնդրեա՛ զինչ արարից քեզ մինչ չև վերացեալ իցեմ ի քէն։ Եւ ասէ Եղիսէէ․ եղիցի կրկին ոգի քո ի վերայ

իմ։ Եւ ասէ Եղիա․ դժուարինս խնդրեցեր․ բայց եթէ տեսանիցես զիս յամբառնալ իմում ի քէն, եղիցի այնպէս․ ապա թէ ոչ՝ մի՛ եղիցի։ Եւ եղեւ մինչդեռ գնային նոքա, երթային և խօսէին․ և ահա կառք հրեղէնք և երիվարք հրեղէնք անջրպետեցին ի մէջ երկոցունց․ և վերացաւ Եղիա շարժմամբ յերկինս։ Եւ Եղիսէէ հայէր․ և աղաղակէր․ հա՛յր, հա՛յր, կառքդ Իսրայէլի և հեծեալքդ նորա․ և այլ ոչ եւս ետես զնա, և բուռն եհար զհանդերձից իւրոց, և պատառեաց յերկուս ծուէնս։ Եւ առ Եղիսէէ զմաշկեակն Եղիայի զոր ընկէց ի վերայ նորա, և դարձաւ Եղիսէէ և եկաց առ եզերն Յորդանանու։ Եւ առ զմաշկեակն Եղիայի զոր ընկէց ի վերայ նորա․ և եհար զջուրն և ասէ․ ո՞ւր է Տէր Ած Եղիայի Ափփով։ Եւ եհար զջուրսն․ և բաժանեցան յայս կոյս և յայն կոյս․ և անց Եղիսէէ։ Իբրեւ տեսին որդիք մարգարէիցն որք յԵրիքով ի հանդիպոյն, և ասեն․ հանգեաւ ոգին Եղիայի ի վերայ Եղիսէի․ և եկին ընդ առաջ նորա և երկիր պագին նմա ի վերայ երկրի։ Եւ ասեն ցնա․ ահաւասիկ են ընդ ծառայս քո որդիք զօրութեան արք յիսուն․ երթիցեն և խնդրեսցեն զտէրն քո, գուցէ առ զնա Հոգի Տեառն, և ընկէց զնա առ Յորդանանու կամ ի վերայ միոյ ուրուք ի լերանց կամ ի վերայ միոյ ուրուք ի բլրոց։ Եւ ասէ Եղիսէէ. մի՛ առաքէք։ Եւ բռնադատեցին զնա՝ մինչև ամաչէր, և ասէ. առաքեցէք։ Եւ առաքեցին յիսուն այր․ և խնդրեցին զերիս աւուրս, և ոչ գտին զնա։ Եւ դարձան առ նա․ և նա նստէր յԵրիքով․ և ասէ ցնոսա Եղիսէէ․ ո՞չ ասացի ձեզ՝ թէ մի՛ երթայք։ Եւ ասեն արք քաղաքին ցԵղիսէէ․ ահաւասիկ բնակութիւն քաղաքիս բարի է, որպէս և տէրդ իսկ տեսանէ․ և ջուրքս չար, և երկիրս անզաւակ։ Եւ ասէ Եղիսէէ․ առէք առ իս կուժ մի նոր, և դիք այդր․ և բերին առ նա։ Եւ ել Եղիսէէ յականս ջուրցն, և արկ անդր աղ․ և ասէ․

այսպէս ասէ Տէր․ բժշկեմ զջուրսդ զայդոսիկ, և մի՛ եւս լիցի այտի մահ և անզաւակութիւն։ Եւ բժշկեցան ջուրքն մինչեւ ցայսօր ըստ բանին Եղիսէի զոր խօսեցաւ։ 22։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։ Երեք անգամ կրկնեա։

Եւ եւս խաղաղութեան։ Օրհնութիւն և փառք։

Ժ․ Ընթերցուածս յԵրեմեայ մարգարէէ։ ԼԱ․ 31։

Ահաւասիկ աւուրք գան, ասէ Տէր, և ուխտեցից տանդ Իսրայէլի և տանդ Յուդայ ուխտ նոր։ Ոչ ըստ ուխտին զոր ուխտեցի ընդ հարս նոցա՝ յաւուր յորում առի զձեռանէ նց՝ հանել զնս յերկրէն Եգիպտացւոց․ զի նոքա ոչ կացին յուխտին իմում, և ես անփոյթ արարի զնոցանէ, ասէ Տէր։ Այլ այս է ուխտ՝ զոր ուխտեցից տանդ Իսրայէլի յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր․ տաց զօրէնս իմ ի միտս նոցա, և ի սիրտս նոցա գրեցից զնս․ և եղէց նց յԱծ, և նոքա եղիցին ինձ ի ժողովուրդ։ Եւ մի՛ եւս ուսուցանիցեն իւրաքանչիւր զընկեր իւր, իւրաքանչիւր զեղբայր իւր՝ ասել թէ ծանի՛ր զՏէր․ զի ամենեքեան ծանիցեն զիս ի փոքրկանց նոցա մինչեւ ի մեծամեծս, ասէ Տէր․ զի քաւիչ եղէց անիրաւութեց նց, և զմեղս նց ոչ եւս յիշեցից։ 34։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։ Երեք անգամ կրկնեա։

Եւ եւս խաղաղութեան։ Օրհնութիւն և փառք։

ԺԱ․ Ընթերցուածս յԵզեկիէլէ մարգարէէ։ ԼԷ․ 1։

Եւ եղեւ ի վերայ իմ ձեռն Տեառն, և եհան զիս հոգւով Տեառն, և եդ զիս ի մէջ դաշտին․ և այն լի էր ոսկերօք մարդկան։ Եւ շրջեցոյց զիս շուրջ զոսկերօքն․ և ահա բազում յոյժ էին ի վերայ երեսաց դաշտին, և ցամաքեալք յոյժ։ Եւ ասէ ցիս․ որդի՛

մարդոյ, իցէ՞ թէ կենդանի լինիցին ոսկերքդ այդոքիկ։ Եւ ասեմ․ Տէր Տէր, դու գիտես զայդ։ Եւ ասէ ցիս․ որդի՛ մարդոյ, մարգարեա՛ց ի վերայ ոսկերացդ այդոցիկ և ասասցես ցդոսա․ ոսկե՛րք ցամաքեալք՝ լուարո՛ւք զպատգամս Տեառն։ Այսպէս ասէ Տէր Տէր ցոսկերսդ ցայդոսիկ․ ահաւասիկ ես ածեմ ի վերայ ձեր շունչ կենդանի։ Եւ տաց ի ձեզ ջիլս, և ածից ի վերայ ձեր մարմինս, և ձգեցից ի վերայ ձեր մորթ, և տաց զոգի իմ ի ձեզ, և լինիջիք կենդանի․ և ծանիջիք եթէ ես եմ Տէր։ Եւ մարգարէացայ ոպ և հրաման ետ ինձ Տէր․ և եղև բարբառ ի մարգարէանալն իմում, և ահա շարժումն․ և մերձեցաւ ոսկր առ ոսկր՝ առ իւրաքանչիւր յօդս։ Եւ տեսի, և ահա ջիլք և մարմինք պատէին, և ձգէր ի վերայ նց մորթ․ և շունչ ոչ գոյր ի նս։ Եւ ասէ ցիս․ մարգարեա՛ց որդի մարդոյ, մարգարեա՛ց ի վերայ շնչոյն, և ասասցես ցշունչն․ այսպէս ասէ Տէր Տէր․ ե՛կ շունչ ի չորից հողմոց, և փչեա՛ ի մեռեալս յայսոսիկ, և կեցցեն։ Եւ մարգարէացայ՝ ոպ և հրաման ետ ինձ Տէր․ և եմուտ ի նս շունչ, և եղեն կենդանի․ և կանգնեցան կացին ի վերայ ոտից իւրեանց՝ ժողովուրդ բազում յոյժ յոյժ։ Եւ խօսեցաւ ընդ իս Տէր, և ասէ․ որդի՛ մարդոյ, ոսկերքդ այդոքիկ ամ տունդ Իսրայէլի է․ և դոքա ասեն․ չորացան ոսկերք մեր, հատաւ յոյս մեր և մեռաք։ Վն այդորիկ մարգարեա՛ց և ասասցես ցդոսա․ այսպէս ասէ Տէր Տէր․ ահաւադիկ ես բացից զգերեզմանս ձեր, և հանից զձեզ ի գերեզմանաց ձերոց ժողովուրդ իմ, և տարայց զձեզ յերկիրն Իսրայէլի։ Եւ ծանիջիք՝ թէ ես եմ Տէր․ ի բանալ ինձ զգերեզմանս ձեր, և հանել զձեզ ի գերեզմանաց ձերոց ժողովուրդ իմ։ Եւ տաց զոգի իմ ի ձեզ․ և լինիջիք կենդանի․ և եդից զձեզ յերկրին ձերում։ Եւ ծանիջիք թէ ես եմ Տէր․ խօսեցայ և արարից, ասէ Տէր Տէր։ 14։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։ Երեք անգամ կրկնել։

Եւ եւս խաղաղութ՟ն։ Օրհնութ՟ի և փառք։

Յաւարտ ընթերցուածոյս մտանեն յեկեղեցին, եւ կարդան զԳանձեւն ի բեմն։ Եւ ժամարարն ասէ աւետն։

ԺԲ. Ընթերցուածս ի Դանիելէ մարգարէէ։ Գ. 1։

Յամին ութուտասներորդի Նաբուքոդոնոսորայ արքայի, արար պատկեր ոսկի. բարձրութ՟ի ն՟ր վաթսուն կանգուն, և լայնութ՟ի ն՟ր կանգուն վեց. և կանգնեաց զնա ի դաշտին Դէերայ յաշխարհին Բաբելացւոց։ Եւ արձակեաց ժողովել զզօրավարս և զզօրագլուխս և զկուսակալս, զպետս և զբռնաւորս և զգործակալս և զա՟մ իշխանս աշխարհաց՝ գալ ի նաւակատիս պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Նաբուքոդոնոսոր։ Եւ ժողովեցան կուսակալք, զօրավարք և զօրագլուխք, պետք և բռնաւորք, մեծամեծք և գործակալք և ա՟մ իշխանք աշխարհաց՝ գալ ի նաւակատիս պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Նաբուքոդոնոսոր. և կային առաջի պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Նաբուքոդոնոսոր։ Եւ քարոզ կարդայր զօրութ՟ե և ասէր. ձեզ ասի ազգք և ազինք և լեզուք։ Յորժամ լսիցէք զձայն փողոյ, սրնգի, թմբկի և քնարի և տաւղի և երգոց միաբանութ՟ե և ա՟մ ազգաց արուեստականաց, անկանիջիք և երկիր պագանիջիք պատկերին՝ զոր կանգնեաց Նաբուքոդոնոսոր արքայ։ Եւ որ ոչ անկեալ երկիր պագանիցէ՝ ի նմին ժամու ընկեսցի ի հնոց հրոյն բորբոքելոյ։ Եւ եղեւ իբրեւ լուան ազգքն զձայն փողոյն, սրնգի, տաւղի և նուագարանաց և ա՟մ ազգաց արուեստականաց, անկանէին ա՟մ ազգք և ազինք և լեզուք և երկիր պագանէին պատկերին ոսկւոյ, զոր կանգնեաց արքայն Նաբուքոդոնոսոր։ Յայնժամ մատեան արք Քաղդէացիք և եղեն չարախօս զՀրէից առ

Նաբուքոդոնոսոր։ Եւ ասեն. ա՟րքայ, յաւիտեա՟ն կեաց։ Դու հրաման ետուր ա՟մ մարդոյ՝ որ լսիցէ զձայն փողոյ և սրնգի և քնարի և տաւղի և նուագարանաց և ամենայն ազգաց արուեստականաց։ Եւ որ ոչն անկեալ երկիր պագանիցէ պատկերին ոսկւոյ՝ անկցի ի հնոց հրոյն բորբոքելոյ։ Արդ՝ են աստ արք Հրեայք, զորս կացուցեր ի վ՟ր գործոց աշխարհիս Բաբելացւոց, Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, որ ոչ հնազանդեցան հրամանի քում ա՟րքայ, և զդիս քո ոչ պաշտեն, և պատկերիդ ոսկւոյ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեն։ Յայնժամ Նաբուքոդոնոսոր սրտմտութ՟ե և բարկութ՟ե հրամայեաց ածել զՍեդրաք, զՄիսաք և զԱբեդնագով. և ածին առաջի թագաւորին։ Պատասխանի ետ Նաբուքոդոնոսոր և ասէ ցն՟ս. թէ արդարեւ Սեդրաք Միսաք և Աբեդնագով, զդիս իմ ո՞չ պաշտիցէք, և պատկերին ոսկւոյ՝ զոր կանգնեցի, երկիր ո՞չ պագանիցէք։ Բայց արդ եթէ պատրաստք լինիցիք, զի յորժամ լսիցէք զձայն փողոյ, սրնգի և թմբկի և քնարի, և զմիաբանութ՟ի ա՟մ ազգաց արուեստականաց, անկանիցիք և երկիր պագանիցէք պատկերին զոր արարի. ապա թէ ոչ պագանիցէք երկիր՝ ի նմին ժամու անկցիք ի հնոց հրոյն բորբոքելոյ. և ո՞վ է Ա՟Ծ՝ որ փրկեսցէ զձեզ ի ձեռաց իմոց։ Պատասխանի ետուն Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, և ասեն ցարքայ Նաբուքոդոնոսոր. ոչ ինչ է պիտոյ վ՟ն բանիդ այդորիկ տալ քեզ պատասխանի։ Զի է մեր Ա՟Ծ յերկինս՝ զոր մեքն պաշտեմք. կարող է փրկել զմեզ ի հնոցէ հրոյդ բորբոքելոյ. և ի ձեռաց քոց ա՟րքայ՝ ապրեցուցանել զմեզ։ Ապա թէ ոչ՝ այս ինչ յայտնի լիցի քեզ ա՟րքայ. զդիս քո մեք ոչ պաշտեմք, և պատկերիդ ոսկւոյ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեմք։ Յայնժամ Նաբուքոդոնոսոր լի եղեւ սրտմտութ՟ե. և գոյն երեսաց նորա շրջեցաւ ի վերայ Սեդրաքայ, Միսաքայ և Աբեդնագովի, և ասէ. ջեռու-

ցէք զհնոցն եօթնապատիկ՝ զի մինչև ի վախճան այրեսցին: Եւ արք հինգ զօրաւորք զօրութեմբ՝ կապեցին զՍեդրաք զՄիսաք և զԱբեդնագով՝ արկանել ի հնոց հրոյն բորբոքելոյ: Յայնժամ արքն այնոքիկ կապեցան պատմուճանօք և վարտեօք, արտախուրակօք և զանկապանօք իւրեանց, և ընկեցան ի մէջ հնոցի հրոյն բորբոքելոյ: Զի հրաման թագաւորին սաստկանայր. և հնոցն բորբոքէր եօթնապատիկ առաւել յոյժ: Եւ երեքեան նոքա Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, անկան ի մէջ հնոցին կապեալք: Եւ գնային ի մէջ հրոյն, օրհնէին և գովէին զՏէր Ա՟ծ: Յարեաւ Ազարիա. և եկաց յաղօթս այսպէս. եբաց զբերան իւր ի մէջ հրոյն և ասէ: Օրհնեալ ես Տէր Ա՟ծ հարցն մերոց. գովեալ և փառաւորեալ է անուն քո յաւիտեան: Զի արդար ես յա՟մի զոր ածեր ի վերայ մեր, և ա՟մ գործք քո ճշմարիտ են. և ուղիղ են ճանապարհք քո, և ա՟մ դատաստանք քո ճշմարտութի: Եւ իրաւունս ճշմարտութեան արարեր՝ ըստ ա՟մի զոր արարեր մեզ և քաղաքին ս՟բյ հարցն մերոց Եղ՟էմի. զի ճշմարտութեամբ և յիրաւի ածեր զայս ամենայն վ՟ն մեղաց մերոց: Զի մեղաք և անօրինեցաք՝ ապստամբ լինել ի քէն. և առաւել մեղաք յա՟մի: Եւ պատուիրանաց քոց ոչ անսացաք. ոչ պահեցաք և ոչ արարաք՝ ո՟պ պատուիրեցեր մեզ, զի բարի լինիցի մեզ: Եւ զա՟մ զոր ածեր ի վերայ մեր, և զա՟մ զոր արարեր մեզ՝ արդար դատաստանաւ արարեր: Եւ մատնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց մերոց անօրինաց, խստաց և ապստամբողաց, և թագաւորի անիրաւի և չարի քան զա՟մ երկիր: Եւ արդ՝ ոչ գոյ մեզ բանալ զբերանս մեր, զի ամօթ և նախատինք եղաք ծառայից քոց պաշտօնէից: Այլ մի՛ մատներ զմեզ ի սպառ վ՟ն անուան քո. և մի՛ ցրեր զուխտ քո: Եւ մի՛ ի բացէ առներ զողորմութիւնս քո ի մէնջ. վ՟ն Աբրահամու սիրելւոյ քոյ՝ և վ՟ն Իսահակայ ծառայի քոյ և վ՟ն Իսրայէլի ս՟բյ քոյ:

Որոց խօսեցար բազմացուցանել զզաւակ ն՟ց իբրև զաստեղս երկնից, և իբրև զաւազ առ ափն ծովու: Եւ արդ Տէր նուաղեցաք քան զա՟մ ազգս, և եմք տառապեալք յա՟մ երկրի այսօր վ՟ն մեղաց մերոց: Եւ ոչ գոյ ի ժամանակի յայսմիկ իշխան, մարգարէ և առաջնորդ. ոչ ողջակէզք և ոչ զոհք և ոչ պատարագք և ոչ խունկք, և ոչ տեղի տալոյ երախայրիս առաջի քո և գտանել զողորմութի ի քէն. այլ անձամբք բեկելովք և հոգւովք տառապանաց ընդունելի լիցուք: Իբրև ողջակէզս խոյոց և զուարակաց, և իբրև զբիւրաւորս գառանց պարարտաց, այնպէս եղիցի պատարագս մեր այսօր առաջի քո. լինել կատարեալ զկնի քո. զի չիք ամօթ յուսացելոցս ի քեզ: Եւ արդ՝ գամք զհետ քո ա՟մ սրտիւք մերովք. երկնչիմք ի քէն, և խնդրեմք զերեսս քո: Մի՛ յամօթ առներ զմեզ, այլ արա՛ ընդ մեզ ըստ հեզութե քում և ըստ բազում ողորմութեան քում: Եւ փրկեա՛ զմեզ վ՟ն սքանչելեաց քոց, և տո՛ւր փառս անուան քում Տէր: Եւ յամօթ լիցին ամենեքեան՝ ո՟յք ցուցանեն չարիս ծառայից քոց, և ամաչեսցեն յա՟մ բռնութե իւրեանց. և զօրութիւն նոցա խորտակեսցի: Եւ ծանիցեն զի դու ես Տէր Ա՟ծ միայն և փառաւորեալ ի վերայ ա՟մ տիեզերաց: Եւ ոչ դադարէին՝ որք արկին զնոսա սպասաւորք թագաւորին՝ զհնոցն բորբոքելոյ նաւթիւ և ձիթով և վշով և որթով: Եւ ելանէր դիզանայր բոցն ի վերոյ քան զհնոցն ի քառասուն և յինն կանգուն: Եւ շրջէր պատէր շուրջ զհնոցաւն և այրէր զորս գտանէր ի Քաղդէացւոց անտի: Եւ հրեշտակ Ա՟յ էջ եկաց ընդ Ազարիանս ի հնոցի անդ. և թօթափեաց զբոց հրոյն ի հնոցէ անտի: Եւ արար ի մէջ հնոցին իբրև զհողմ որ ցօղագին շնչիցէ. և ոչ մերձենայր ամենևին հուրն ի ն՟ս, ոչ տրտմեցուցանէր և ոչ նեղէր զնոսա: Յայնժամ երեքեանն իբրև ի միոջէ բերանոյ օրհնէին և գովէին

և փառաւոր անէին զԱծ ի մէջ հնոցին և ասէին: Օրհնեալ ես Տր Ած հարցն մերոց. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս. և օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս: Օրհնեալ ես ի տաճարի փառաց սրբութեան քոյ. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս: Օրհնեալ ես, որ հայիս յանդունդս և նստիս ի քերովբէս. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս: Օրհնեալ ես ի վերայ աթոռոյ արքայութե քո. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս: Օրհնեալ ես ի վերայ հաստատութեան երկնից. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս: Օրհնեցէք ամենայն գործք Տռն զՏէր. * օրհնեցէք և բա՛րձր արարէք զնա յաւիտեան: Օրհնեցէք երկինք զՏէր. օրհնեցէք: Օրհնեցէք հրեշտակք Տեառն զՏէր. օրհնե: Օրհնեցէք ջուրք ամ որ ի վերոյ քան զերկինս զՏէր. օրհնեցէք և բարձր: Օրհնեցէք ամ զօրութիք Տեառն զՏէր. օրհնե: Օրհնեցէք արեւ և լուսին զՏէր. օրհնե: Օրհնեցէք ամ աստեղք երկնից զՏէր. օրհնե: Օրհնեցէք ամ անձրեւք և ցօղք զՏէր. օրհնե: Օրհնեցէք ամ հողմք զՏէր. օրհնե: Օրհնեցէք հուր և տապ զՏէր. օրհնե: Օրհնեցէք ցուրտ և տօթ զՏէր. օրհնե: Օրհնեցէք եղեամն և ձիւնաբեր զՏէր. օրհնե: Օրհնեցէք սառն և պարղ զՏէր. օրհնե: Օրհնեցէք պաղ և ձիւն զՏէր. օրհնե: Օրհնեցէք տիւք և գիշերք զՏէր. օրհնե: Օրհնեցէք լոյս և խաւար զՏէր. օրհնե: Օրհնեցէք ամպք և փայլատակունք զՏէր. օրհնե: Օրհնեսցէ երկիր զՏէր. օրհնեսցէ և բարձր արասցէ զնա յաւիտեան: Օրհնեցէք լերինք և բարձունք զՏէր. օրհ: Օրհնեցէք ամ բոյսք երկրի զՏէր. օրհնե: Օրհնեցէք աղբերք զՏէր. օրհնե: Օրհնեցէք ծովք և գետք զՏէր. օրհնե: Օրհնեցէք կէտք և ամ կայտառք որ ի ջուրս զՏէր. օրհնե: Օրհնեցէք թռչունք երկնից զՏէր. օրհնե: Օրհնեցէք ամ

գազանք և անասուն զՏէր. օրհնեցէք և բա՛րձր արարէք զնա յաւիտեան: Օրհնեցէք որդիք մարդկան զՏէր. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան: Օրհնեսցէ Իսրայէլ զՏէր. օրհնեսցէ և բարձր արասցէ զնա յաւիտեան: Օրհնեցէք քահանայք զՏէր. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան: Օրհնեցէք ծառայք Տեառն զՏէր. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան: Օրհնեցէք հոգիք և շունչք արդարոց զՏէր. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան: Օրհնեցէք սուրբք և խոնարհք սրտիւք զՏէր. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան: Օրհնեցէք Անանիա, Ազարիա և Միսայէլ զՏէր. օրհնեցէք և բա՛րձր արարէք զնա յաւիտեան: Զի փրկեաց զմեզ ի դժոխոց, և ի ձեռաց մահու ապրեցոյց զմեզ. և փրկեաց զմեզ ի հնոցէս, և ի միջոյ բորբոքեալ բոցոյս, և ի միջոյ հրոյս փրկեաց զմեզ: Գոհացարո՛ւք զՏռնէ՝ զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմ Նորա: Օրհնեցէք ամենայն պաշտօնեայք Տեառն զԱստուածն աստուծոց: Օրհնեցէք և գոհացարո՛ւք, զի յաւիտեան է ողորմ Նորա: 91:

Յասելն զՀարցն ասողսն՝ յամէն փոխն խառնին ամէն յեկեղեցին. և դառն խաղ է յետոյ երկու ժողովոյս: Եւ երբ զՕրհնեցէք ամենայն գործքն ասեն՝ դպիրքն երգեն ձայնիւ յայտնի, ասելով.

Օրհնեցէք, գովեցէք, և բա՛րձր արարէք զնա յաւիտեան:

Եւ ի կատարման Հարցն ասելոյն՝ սարկաւագն բարձր ձայնի-գոչէ. Օրհնեա տէր: Եւ պատարագն մատչի:

Զկնի արձակման պատարագին ասեն նախատօնակ առնել Յարութեան Տեառն:

Շարական ԱԶ:

Այսօր յարեաւ ի մեռելոց. Տե՛ս ի վեր առաջին 469:

Ձնի՝ Որթիւ։

Աւետարան ըստ Մատթէոսի։ Իը. 16։

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Իսկ մետասան աշակերտքն՝ գնացին ի Գալիլեա, ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս։ Իբրեւ տեսին զնա՝ երկիր պագին նմա. և ոմանք յերկուացան։ Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա և ասէ. տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ։ Գնացէք այսուհետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Ուսուցէք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի։ 20։

Քրզ։ Խնդրեսցուք։ Կեցո յոյնե–։ Աղ. Թագաւոր խաղ։

Օրհնեալ Տէր մեր։ Հայր մեր որ։

Եւ արձակեն խաղաղութեամբ։

ԿԻՒՐԱԿԷ, ԱՁ.

ԶԱՏԻԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Ի ԳԻՇԵՐԻ

Հսկումն է, եւ դնի արքայութիւն ի վերայ ծաղկոցի յատեանն։

Եւ ասեն կանոնագլուխ ԱՁ. Դատեա Տէր։

Օրհնութիւն ԱՁ։

Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ եւ երկնաւոր. քեզ աւետիք խնդութեան. հարսն ի յերկրէ եկեղեցի * օրհնեա ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիոն։ Այսօր անձառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զմանկունս քո. լուսաւորեա Երուսաղէմ. քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս. օրհնեա։ Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երրեակ լուսովն. եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան. յարութեամբն ի մեռելոց Քրիստոս. օրհնեա ի։

† Այսօր զատիկ մեր զենմամբ Քրիստոսի. արասցուք տօն ցնծութեան. նորոգեալքս ի հնութենէ մեղաց ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց։ Այսօր հրեշտակն լուսափայլ ի յերկնից իջեալ. զարհուրեցոյց ըզպահապանսն. եւ նը կանանցըն քարոզէր ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

Յոր։ Ընդ լուսանալ միաշաբաթին կանխեցին կանայքն ի գերեզմանն. ի խնկել զանապական մարմինն։ Եւ գտին ըզվէմն բարձեալ ի դրաց գերեզմանին. եւ լուեալ բարբառ ի հրեշտակէն. եթէ յարեաւ Քրիստոս և խափանեաց ըզմահ։ Եւ հանդիպեալ քո

Տէր առաքելոցն եւ տուեալ ողջոյն կենդանարար. առաքեցեր զնոսա ի փրկութիւն տիեզերաց:

* Փառք յարութեան քո Տէր: Պատրանօք նախաստեղծին մերկացաք ի լուսոյն. իսկ յարութեամբ միածնիդ ըզգեցաք զանմահութիւն. փառք: Խաբանօք փայտին ճաշակեցաք զմահ. իսկ ի փայտէն կենաց նորոգեցաք ամենեքեան. փառք:

Ընդ կանայսն իւղաբերսն առ քեզ առաւօտեմբք կենդանւոյդ յաւիտենից Քն ընկալ և զմերս. փոխանակ խունկոցն զօրհնաբանութիւնս: Փոխանակ նը աւետաւոր զուարթնոյն զքթութի քո մեզ հանդիպեսցի յուսով գիտութեան. մխիթարել զհոգիս եւ լուսաւորել: Ընդ նոսին աւետարանութեամբ քարոզեսցուք. զքո միայն զսքանչելիսդ. որ յարեար ի մեռելոց ամենազօր թագաւոր անմահ:

Որ անճառ էութեամբ Հօր ես փառակից չարչարիլ մարմնով յանձն առեր վասն մեր. միշտընծայենաւոր օրհնութեամբ ի հրեշտակաց օրհնեալ ես Տէր: Որ էակից ես ընդ Հօր եւ ընդ Հոգւոյն. խաչեցար և թաղեցար կամաւ Հօր վասն մեր. միշտընծայենաւոր օրհնութեամբ ի հրեշտակաց օրհնեալ ես Տէր: Որ միւսանգամ գալոց ես հայրենի փառօք. շնորհելով ածապէս յարութի տիեզերաց. յամենայն արարածոց յաւիտենից օրհնեալ ես Տէր:

ՀՈԳ. Որ ի քրովբէական կառսըդ հանգչիս. այսօր իջեր յերկնից ի դաս առաքելոցն ընդ Հոգի. * օրհնեալ ես թագաւոր անմահ: Որ դընաս ի վերայ թեւոց հողմոց. այսօր ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառաքեալսն ընդ Հոգի. օրհնեալ: Որ խնամես տեսչութեբ զքո զարարածս. այսօր եկիր ի հաստատել զեկեղեցի քո ընդ Հոգի. օրհնեալ:

ՆՉ: Զհոգիս ծառայից քոց Քրիստոս. ընկալ ի դաս անդրանկաց գրելոց ի յերկինս: Ընկալ վասն սոցա ըզբանաւոր պատարագս ի մենջ. եւ շնորհեա նոցա ըզթողութիւն գտանել յաւուրըն յետնում: Հաշտեա ի ձեռըն ընդ մարմնոյ և արեան քո Տէր. եւ պարգեւեա նոցա դասել յաջակողմեանըն քո:

ԱՃՆ: Յարուցելոյն ի մեռելոց բնակարան մայր եւ կոյս. որ ըզնընջեցեալսըն յԱդամայ կենագործէ անապական * զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս: Արարողին երկնի և երկրի եղեր տաճար և առագաստ. որ ըզնընջեցեալսըն մեր հրեղէն նորոգէ. զքեզ մեծ: Կերակրողին տիեզերաց արբուցեր ըզքո ընդ ըզկաթն. որ ըզնընջեցեալսըն մեր վերըստին նորոգէ. զքեզ մեծ:

ԽՆ: Որ զանարատ բազուկս քո ի խաչին տարածեցեր Քն Աստուած. եւ նըշան յաղթութեան ետուր մեզ. * սուրբ ըզկեանըս մեր պահեա: Որ զաշխարհակեցոյց բազկատարածութի խաչի քոյ Քն Ած. դաւաղան զօրութեան ետուր մեզ. սուրբ: Փառք Հօր: Որ զմեռեալսն ի ճաշակմանէ փայտին յանցանաց. կենաց փայտիւըն կենագործեցեր. սուրբ:

Այժմ և միշտ: Այսօր նոր Իսրայէլ կոչեցեալք ի Քրիստոս. ազատեալք արեամբ գառինն Աստուծոյ. պարեսցուք ընդ երկնայնոցն ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Մաղթանք. Փառք հրաշափառ յարութեան:

Ալէլու. Յարութեան ԱՁ. Ողորմութեբ Տեառն լի: 36:

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Դկ։

Այսօր մեծ աւետիք Ադամայ նախաստեղծին տրւ-աւ. արի որ ննջես լուսատու եղեւ քեզ յարուցեալն քո. *Արդ հարցն մերոց։ Այսօր ձայն աւետեաց յեւայի գոչեն լսելիս. դստերք իւղաբերք տեսաք յարուցեալ ըզյարուցիչն քո Քն Արդ։ Այսօր հրեշտակք յերկնից իջեալ տան զաւետիս մարդկան յա-րեաւ խաչեցեալն և յարոյց ըզձեզ ընդ ինքեան. Արդ։

Գ. Ըզտր՝ *օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւ-իտեան։ Փառք Հօր։ Այսօր Տէրն մեր յարեաւ. ե-կայք պարեսցուք ընդ հրեշտակս. յաղթական երգով. օրհնեց։ Այժմ և։ Այսօր սիւն լուսոյ ծագեաց մր եկեղեցւոյ. յարուցեալն ի մեռելոց Քն. օրհնեց։

Մեծացո. Դկ։ Աստուածածին տաճար լուսոյ. որ մարմնով պարագրեալ անճառաբար ծնար զԲանն Աստուած. *զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Որպէս լեր և բերկրեա մայր եւ կոյս. քանզի ծնեալն ի կուսէդ այսօր վերըստին յարութ ծնաւ ի կոյս գերեզմանէն. զքեզ բարե։ Այժմ և։ Ցընծա և զուարճացիր հարսն ի յերկրէ երկնից. քանզի այսօր երկնայնոցն իջեալ տային քեզ զաւետիս յարութե միածնի Որդւոյ քո. զքեզ բարե։

Իւղաբերից Աւետ. Յով։ Եւ ի միաշաբաթոջն։ 46։

Ապա Երգ։ Փառք յարութեան քո Տէր։

Գիշերի. Լուսապայծառ հրեշտակըն նըստելով ի կենսատու գերեզմանին։ Եւ աւետէր կանանցն յարեաւ Աստուած։

Որչափ. Դկ։ Այսօր ըզպասեք չարչարանաց եղեց Իսրայելի փոխեցեր. ի փրկութիւն հոգւոց զատիկ.

նք յարութեամբ քո Քրիստոս։ Փառք Հօր և։ Այսօր ընդ արեանցն օրինակին անբան գառանցն զենմանց. պարգեւեցեր մեզ գառն Աստուծոյ. զարիւնըդ քո փրկական։ Այժմ և։ Այսօր ընդ անդրանկացն ա-զատութեան ազատեցեր ըզգերեալսն. պըտուղ կե-նաց ընծայեցելոյ և անդրանիկ մեռելոց։

Տէրյերկնից Դկ. յորում է յետին տունն ողջունետեան համ-բուրեն զմիմեանս։

Այսօր հրեշտակք ի յերկինս ուրախանան ընդ մարդկան. որք իջեալ ի յերկնից տան աւետիս աշ-խարհի. ցընծացէք այսօր Քրիստոս յարեաւ ի մեռե-լոց։ Այսօր զուարթունն ի վիմէն խընկաբերից սուրբ կանանցն. փողէր ձայնիւ ցընծութե պատմել առա-կերտացն ասելով. ցընծացէք այսօր Քն յարեաւ ի մեռելոց։ Փառք Հօր։ Այսօր վիմին հաւատոյ եւ Յով-հաննու սիրելւոյ. ընդ հակառակս ընթացեալ ի գե-րեզման յարուցելոյն. զոր տեսեալ պատմէին Քն յա-րեաւ ի մեռելոց։ Այժմ և։ Այսօր եւ մեք զուար-ճացեալք պայծառասցուք տօնիւս. ընդ հաշտութեն Այ միմեանց արկցուք զիրկս սիրով. եւ միաբան գոչեսցուք Քն յարեաւ ի մեռելոց։

Առաւ. Երգ Յարութեան ԱՁ. Զյարութի։ Յարեաւ Ած։

Քարոզ. Ասասցուք. կամ գանձ։

Զկնի Սբ Ածին ընթեռնուն մաղթանս, եւ ելանեն ի դուռն ե-կեղեցւոյն խաչիւ եւ աւետարանաւ, խնկով եւ մոմեղինօք եւ ամենայն զարդուք։ Եւ սկսանին

Շարական ԱՁ։

Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ եւ երկնաւոր. քեզ աւետիք խընդութեան հարսն ի յերկրէ եկեղեցի. օրհնեա ի ձայն ցընծութեան

զԱստուած քո Սիոն: Այսօր անճառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց. զմանկունս քո լուսաւորեա Երուսաղէմ. քանզի յարեաւ լոյս քո Քն. * օրհնեա ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիոն: Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երրեակ լուսովն. եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան. յարուցեալն ի մեռելոց Քրիստոս. օրհնեա ի:

Սաղմոս ԿԴ:

Քեզ վայելէ օրհնութիւն Ած ի Սիոն. և քեզ տացին աղօթք յԵղէմ:

Լուր աղօթից իմոց, զի առ քեզ ամ մարմին եկեսցէ:

Բանք անօրինաց զօրացան ի վերայ մեր. զամբարշտութիւնս մեր դու քաւեսցես:

Երանի զորս ընտրեցեր և ընկալար. և բնակեսցեն ի գաւիթս քո:

Լցցուք մեք ի բարութենէ տան քո. սուրբ է տաճար քո՝ սքանչելի արդարութեամբ:

Լուր մեզ Ած փրկիչ մեր. յոյս ամենայն ծագաց երկրի, և որ ի ծով հեռի:

Ո պատրաստէ զլերինս զօրութեամբ իւրով. զգեցեալ է զզօրութիւն:

Ո խռովեցուցանէ զմեծութիւն ծովու, և զձայն ալեաց նորա ցածուցանէ:

Խռովեսցին հեթանոսք. և երկիցեն բնակիչք երկրի ի նշանաց քոց:

Ցելս առաւօտու և ընդ երեկոյս զուարճասցին. հայեցար յերկիր, արբեցուցեր զնա, և բազում արարեր զմեծութիւն նորա:

Գետն Այ լի եղեւ ջուրբ. պատրաստ արարեր զկերակուր նորա, զի այսպէս է պատրաստութիւն:

Զակօս նորա արբեցուցեր, և բազում արարեր զարմտիս նորա:

Ի ցօղել նոցա զուարթ եղիցի բոյս նորա. օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քոյ:

Դաշտք քո լցցին պարարտութեամբ. պարարտասցին գեղեցկութիւնք անապատի:

Բլուրք ցնծուն զգեցցին, և զգեցցին խոյք մաքեաց:

Հովիտք բազում արասցեն ցորեան, աղաղակեսցեն և օրհնեսցեն:

Ընթերցուածս ի Գործոց առաքելոց: Ա. 1:

Զբանն առաջին զոր արարի վն ամի, ո Թէոփիլէ, զոր սկսաւ Յն առնել և ուսուցանել՝ մինչեւ յօրն պատուիրելոյ առաքելոցն ի ձեռն Հոգւոյն սբյ, զորս ընտրեացն, և վերացաւ: Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի յետ չարչարանացն իւրոց ի բազում արուեստս՝ յաւուրս քառասուն երեւել նց և ասել վն արքայութեանն Աստուծոյ: Եւ ի հաղորդել ընդ նոսա հացի՝ պատուէր տայր նց՝ յԵղեմէ մի մեկնել, այլ սպասել աւետեացն Հօր՝ զոր լուարուք յինէն: Զի Յովհաննէս մկրտեաց ի ջուր, այլ դուք մկրտիցիք ի Հոգին սբ՝ ոչ յետ բազում ինչ աւուրցս այսոցիկ: Եւ նոքա մատուցեալ հարցանէին զնա և ասէին. Տէր, եթէ ի ժամանակի՞ աստ յայսմիկ հաստուցանելոց իցես զարքայութիւնն Իսրայէլի: Ասէ ցնս. ոչ է ձեզ գիտել զժամս և զժամանակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեն. այլ առջիք զօրութի ի հասանել Հոգւոյն սբյ ի վր ձեր. և եղիջիք ինձ վկայք յԵղէմ և յամ Հրէաստանի և ի Սամարիա, և մինչեւ ի ծագս երկրի: 8:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Հասեալ կային ոտք մեր առ դրունս քո Երուսաղէմ:

Զկնի՝ Որթիւ:

Աւետարան ըստ Մարկոսի: ԺԶ. 2:

Վասն յարութեն Տեառն մերոյ Յսի Քսի:

Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան ի գերեզմանն ընդ արեւագալն, և ասէին ցմիմեանս. ով թաւալե-

ցուցէ մեզ զվէմն ի դրաց գերեզմանին: Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր զվէմն ի գերեզմանէն. քանզի էր մեծ յոյժ: Եւ մտեալ ի ներքս ի գերեզմանն, տեսին երիտասարդ մի զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատմուճան սպիտակ, եւ զարհուրեցան: Եւ նա ասէ ցնս. մի՛ երկնչիք. զՅն խնդրէք զՆազովրեցի զխաչեալն, յարեաւ՝ չէ աստ. ահաւադիկ տեղին՝ ուր եդին զնա: Այլ երթայք ասացէք ցաշակերտս նր եւ ցՊետրոս, եթէ ահա յառաջագոյն երթայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա՝ ոպ ասացն ձեզ: Եւ իբրեւ լուան՝ ելին եւ փախեան ի գերեզմանէն, քանզի զահի հարեալ էին. եւ ոչ ումեք ինչ ասացին, զի երկնչէին: 8:

Այս կարգ է ժամատունն կատարել: Եւ ապա ելանեն խաչիւ եւ աւետարանաւ, խնկովք եւ մոմեղինօք եւ ամենայն ըղորդաւք ի դուռն: Եւ շուրջ գալով զեկեղեցեաւն, ասեն շարական յամէն յայնէ մի մի ըստ առաջին Տէրյերկնիցերն. Եւ կարդան ի չորս կողմն եկեղեցւոյն չորեքերից փոխերն:

Առաջին Շարական ԱՁ:

Ընդ լուսանալ միաշաբաթին կանխեցին կանայքն ի գերեզմանն. ի խնկել զանապական մարմինն: Եւ գտին զվէմն բարձեալ ի դրաց գերեզմանին. եւ լուեալ բարբառ ի հրեշտակէն. եթէ յարեաւ Քրիստոս եւ խափանեաց զմահ: Եւ հանդիպեալ քո Տէր առաքելոցն եւ տուեալ ողջոյն կենդանարար. առաքեցեր զնոսա ի փրկութիւն տիեզերաց:

Զնի Որթիւ: Դէպ յարեւելս կարդա:

Աւետարան ըստ Յովհաննու: ԺԹ. 38:

Վասն թաղման Տեառն մերոյ Յնի Քնի:

Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ՝ որ յԱրիմաթեայ էր, աշակերտ Յնի ի ծածուկ՝ վն ահին Հրէից, զի բարձցէ զմարմինն Յնի: Եւ հրամայեաց Պի-

ղատոս եկին եւ բարձին զնա: Եկն եւ Նիկոդեմոս՝ որ եկեալն էր առ Յն ի գիշերի զառաջինն. եւ եբեր զմուռս խառն ընդ հալուէս՝ իբրեւ լտերս հարիւր: Առին զմարմինն Յնի, եւ պատեցին կտաւովք՝ խնկովք հանդերձ, ոպ օրէն էր Հրէից պատել: Եւ էր ի տեղւոջն յորում խաչեցաւ՝ պարտէզ. եւ ի պարտիզի անդ գերեզման նոր, յորում ոչ ոք երբէք էր եդեալ: Անդ՝ վն ուրբաթուն Հրէից, զի մօտ էր գերեզմանն՝ եդին զՅն: 42:

Եւ երթան յարեւմտեան կողմն, ասելով

Երկրորդ Շարական ԱԿ:

Առաքեցար ի Հօրէ Բանդ Աստուած ի փրկութիւն ազգի մարդկան. օրհնեմք զքեզ սուրբ Աստուած: Ի գերեզման իջեր թագաւոր անմահ. եւ ի Հօրէ ոչ մեկնեցար. օրհնեմք զքեզ սուրբ Աստուած: Ի յերրորդ աւուր յարեար ծածապէս եւ ի յերկինս համբարձար. փառք յարութեան քո Տէր. օրհնեմք զքեզ սուրբ Աստուած:

Զնի Որթիւ: Դէպ յարեւմուտս կարդա:

Աւետարան ըստ Ղուկասու: ԻԳ. 50:

Վասն թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ ահա այր մի, անուն Յովսէփ, որ էր նախարար՝ այր բարեգործ եւ արդար. սա չէր միաբանեալ ընդ խորհուրդս եւ ընդ գործս նց, յԱրիմաթեայ քաղաքէ Հրէից. որ եւ ինքն իսկ ակն ունէր արքայութեան Այ: Սա մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յնի: Եւ իջուցեալ զնա՝ պատեաց պաստառակալաւ, եւ եդ ի կռածոյ գերեզմանի. ուր չէր բնաւ զոք եդեալ: Եւ օրն էր ուրբաթ, եւ շաբաթ լուսանայր: Եւ երթային զհետ նորա կանայքն՝ որ եկեալ էին ընդ նմա ի Գալիլեէ. տեսին զգերեզմանն, եւ ոպ եդաւ մարմինն նր: Դարձան, եւ պատրաստեցին խունկս եւ իւղս. եւ ի շաբաթուն հանգարտեցին վն պատուիրանին: 56:

Եւ ձայն է հարաւային կողմն. ասելով

Երրորդ Շարական ԲՁ:

Ի գերեզման քո կանխեցին կանայքն զիւղս և զխունկըս բերին. ի պատիւ թաղման քո զի զմեղք ըղհողացեալըս վերածեր ի կեանս: Փոխանակ իւղոյն զհաւատս անբիծս եւ զաղաչանըս մեր ընդ առաւօտեան կանանցն ընկալ. որք զողջոյն կենաց լուան Եւային ունկամբն: Ետուն աւետիս առաքելոցն յարեաւ յարուցիչըն մեր աւերեաց ըզդըժոխս. եւ զթըշնամին կապեաց ի յանլոյծ կապանս:

Զկնի Որհնու: Դէպ է հարաւ կողմն:

Աւետարան ըստ Մարկոսի: ԺԵ. 42:

Վասն թաղման Տեառն մերոյ Յ̃ի Ք̃ի:

Եւ իբրեւ երեկոյ եղեւ, քանզի ուրբաթ էր՝ որ է շաբաթն մտանէր, եկեալ Յովսէփ որ յԱրիմաթեայն էր՝ այր պարկեշտ նախարար, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեան Ա̃Յ. համարձակեցաւ եմուտ առ Պիղատոս, և խնդրեաց զմարմինն Յ̃ի: Եւ Պիղատոս զարմացաւ թէ այնչափ վաղ մեռաւ. և կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն, եհարց զնա և ասէ. թէ արդարեւ այնչափ վաղ մեռաւ: Եւ իբրեւ ստուգեաց ի հարիւրապետէ անտի, շնորհեաց զմարմինն Յովսեփայ: Եւ Յովսէփ գնեաց կտաւ, և իջուցեալ զնա պատեաց կտաւովն, և եդ ի գերեզմանի, զոր էր փորեալ ի վիմէ. և թաւալեցոյց վէմ մի ի դուռն գերեզմանին: Իսկ Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակովբայ և Յովսեայ՝ տեսին զտեղին ուր եդաւ: Եւ իբրեւ անց շաբաթն, Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակովբայ և Սողովմէ չոքան պատրաստեցին խունկս, զի եկեսցեն օծցեն զնա: ԺԶ. 1:

Եւ ձայն է հիւսիսային կողմն. ասելով

Չորրորդ Շարական ԲԿ:

* Քո յարութեամբդ փառք վայելէ երկնամիտ Տէր: Օրհնեալ է քո յարութիւնդ Աստուած որ ըզմահ մահու ծանուցեր քոյին կամաւոր մահուամբդ. քո յարութ: Գոչումն ահեղ հրեշտակին ի վիմին որ քարոզէր առ նը կանայսն յարեաւ Տէրն ի մեռելոց. քո յարութեանդ:

Զկնի Որհնու: Դէպ է հիւսիս կողմն:

Աւետարան ըստ Մատթէոսի: ԻԷ. 57:

Վասն թաղման Տեառն մերոյ Յ̃ի Ք̃ի:

Եւ իբրեւ երեկոյ եղեւ, եկն այր մի մեծատուն յԱրիմաթեայ, որում անուն էր Յովսէփ. որ աշակերտեցաւ իսկ Յիսուսի: Սա մատուցեալ առ Պիղատոս, խնդրեաց զմարմինն Յ̃ի. յայնժամ Պիղատոս հրամայեաց տալ զմարմինն: Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց նը կտաւովք, և եդ ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց ի վիմի, և թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ՝ գնաց: Անդ էր Մարիամ Մագդաղենացի և միւս Մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին: Եւ ի վաղիւ անդր որ է յետ ուրբաթուն, ժողովեցան քահանայապետքն և փարիսեցիքն առ Պիղատոս, և ասեն. տէր, յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր՝ մինչ կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառնեմ: Արդ՝ հրամայեա զգուշանալ գերեզմանին մինչեւ ցերիս աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն գիշերի՝ գողանայցեն զնա. և ասիցեն ժողովրդեանն, թէ յարեաւ ի մեռելոց, և լինիցի յետին մոլորութիւնն չար քան զառաջինն: Ասէ ցնա Պիղատոս. ունիք զզօրականն. երթայք զգուշացարուք ոպ̃ և գիտէք: Եւ նոքա երթեալ զգուշացան գերեզմանին և կնքեցին զվէմն հանդերձ զօրականօքն: 66:

Եւ այլ ձայն յարեանն. ասելով

Շարական խաչի ԱԶ:

Ո՛ր զանարա՛տ բա՛զուկս քո՛ ի խա՛չին տարածեցեր Քն՟ Ա՛ստուած. և՛ նշա՛ն յա՛ղթութե՛ան ե՛տուր մե՛զ. * սո՛վա՜ւ ըղկեա՛նըս մե՛ր պա՛հեա՛: Ո՛ր զաշխա՛րհակե՛ցոյց բազկա՛տարածութե՛ան խաչի՛ քո՛յ Քն՟ Ա՛ծ. դա՛ւազա՛ն զօ՛րութե՛ան ետու՛ր մե՛զ. սո՛վա՜ւ: Ո՛ր ըզմե՛ռեալն ի ճաշա՛կմանէ փա՛յտի՛ն յանցա՛նա՛ց. կե՛նա՛ց փա՛յտի՛ւըն կե՛նադո՛րծե՛ցեր. սո՛վա՜ւ:

Զկնի՝ Սաղմոս Դ:

ԿՑ. Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. և ետուր ուրախութիւն սրտից մերոց:

Փխ. Ի կարդալ իմում լուար ինձ Ած ըստ արդարութեան. ի նեղութեան ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ, և լուր աղօթից իմոց:

Որդիք մարդկան մինչեւ յե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, և խնդրէք զստութիւն:

Ծանիրուք զի սքանչելիս արար Տէր սբյ իւրում. և Տէր լուիցէ ինձ ի կարդալ իմում առ նա:

Բարկանայք և մի՛ մեղանչէք. զոր ինչ ասէք ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջացարուք:

Պատուցէք պատարագս արդարութեան, և յուսացարուք ի Տէր:

Բազումք ասէին, թէ ո՞ ցուցցէ մեզ զբարութիւն Տեառն. Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. և ետուր ուրախութիւն սրտից մերոց:

Ի պտղոյ ցորենոյ՝ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա:

Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեսցուք և զարթիցուք. զի դու Տէր միայն առանձինն յուսով քով բնակեցուցեր զմեզ:

Զկնի՝ Ո՛րթիւ:

Աւետարան ըստ Յովհաննու: ԺԹ. 16:

Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յսի Քսի:

Յայնժամ ետ զնա (Պիղատոս) ի ձեռս նց, զի ի խաչ ելանիցէ: Եւ նոքա առեալ տանէին զնա. և բարձեալ էր ինքնին զխաչափայտն, և ելանէր ի տեղին՝ որ անուանէր Գագաթան, և կոչէր եբրայեցերէն Գողգոթա. ուր և ի խաչն իսկ հանին զնա. և ընդ նմա երկուս եւս այլս աստի և անտի, և ի միջի զՅս: Գրեաց և տախտակ Պիղատոս, և եդ ի վերայ խաչին. և էր գրեալ. Յս Նազովրեցի՝ թագաւոր Հրէից: Զայն տախտակ ընթերցան բազումք ի Հրէից, զի մօտ էր ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւ Յս. և էր գրեալ եբրայեցերէն, դաղմատերէն և յունարէն: Ասեն ցՊիղատոս քահանայապետքն Հրէից. մի՛ գրեր թագաւոր Հրէից, այլ թէ նա ասաց՝ թագաւոր եմ Հրէից: Պատասխանի ետ Պիղատոս. զոր ինչ գրեցի՝ գրեցի: 22:

Ապա ութսնաւորքբէն խաչիւ եւ աւետարանաւ զանգատատանն եւ շուրջ գան: Տես երես 57:

Եւ ապա երթան ի գերեզմանն եւ ասեն

Ժամամուտ:

Քանզի յարեաւ ի մեռելոց Քս Ած յաւիտենից արարիչ, և յարութիւն ազգի մարդկան, զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց, և ամ զուարթունք երկնից, ընդ որս գոչելով ասեմք՝ փառք սոսկալի յարութեան քո Տէր:

Կամ զՂազարու ժամամուտն ասա:

Յորժամ եկեալ կենարարն ի գերեզմանն Ղազարու. յորժամ եկեալ կենարարն ի գերեզմանն Ղազարու՝ աւետաւոր ձայնիւն աղաղակէր ասելով. Ղազարէ՝ արի՛ եկ արտաքս: Իսկ մեռեալն ի գերեզմանէն յարեաւ, և նոյն ինքն զանմահութեան պարգեւսն ետ սիրելւոյն, և ածային ձայնիւն ի գերեզմանէն կոչեաց.

վեց և մանկունք Եբրայեցւոց ոստովք օրհնէին զանմահ Թագաւորութիւն քո. ովսաննա, օրհնեալ է գալուստ քո՝ օրհնութիւն ի բարձունս. օրհնեալ որ գալոցդ ես անուամբ Տեառն:

Շարական Դկ:

Յիսուս միածինն անմահութեանց պարգեւատուն երեւեցաւ մեզ. խափանեաց զզօրութիւն մահու: Բեթղեհեմ արտասուաց Մարիամու և Մարթայի անկեալ առ ոտսն Տեառն. խնդրէին զնորոգումն եղբօրն: Բանիւ բանն Աստուած կենագործեաց զՂազարոս ի թաղմանէ. և եկեալ արտաքս անապական:

Ածն: Դու ծաղիկ անթառամ տնկմի սեռին մարդկութեան. և շառաւիղ օրհնութեան նախնեաց ծնողին մեր բնութեան. բարեխօսեա միածնին Աստուածածին մայր Բանին: Երկնաւոր արքային եղեր տաճար ըստ երգողին. յանկարծակի փեսային ի յառագաստ բազմեալ քոյին. բարեխօսեա միածնին Աստուածածին մայր Բանին: Զօրք երկնից անմարմնոց իմանալեացն զուարթնոց. իջեալ յերկնից ի յերկիր սպասաւորել մեծ արքային. բարեխօսեա միածնին Աստուածածին մայր Բանին:

Խղ: Այսօր նշան յաղթող երեւեալ ի յերկրի. պայծառացոյց զտիեզերս. զի յաղթութիւն նոր զխաչ քո Տէր. *ապրեցուցանել զմեզ ի պատրանաց թշնամւոյն: Փայտ կենաց կանգնեալ ի մէջ տիեզերաց յոյս եւ ապաւէն ազգի մարդկան. սա պահեսցէ զմեզ յամենայն վտանգից մերոց. ապրեցուցանել: Փառք Հօր: Յաղթող զօրութեամբ խաչի քո պահեա զմեզ Քրիստոս Աստուած որ տարածեցեր զձեռս քո ի նմա. եւ լուծեր զկնիք դատապարտութեան յանցանաց մերոց. ապրեցուցանել:

Նղ: Այժմ և: Ի հարկանել փողոյն հրեշտակապետին

մեծի. ի բանալ գերեզմանացն զարթիցեն մեռեալքն անապական մարմնով. զարդարին ընդ առաջ քո Տէր. զապաւինեալսն ի քեզ. զհոգիս ննջեցելոց մեր ընկալ յանտրտում ի կեանս. որ օրհնիս երգով ի հրեշտակէն զուարթնոցն:

Սաղմոս ՃԻԹ. յայնժմ:

ԿՑ. Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց:

Փխ. Ի խորոց կարդացի առ քեզ Տէր. Տէր լուր ձայնի իմում:

Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց: Թէ զանօրէնութիւս քննես Տէր. Տէր ո՞ կարէ կալ առաջի քո, զի ի քէն է քաւութիւն:

Վասն անուան քո համբերի Տէր. համբեր անձն իմ բանի քում. յուսացաւ անձն իմ ի Տէր: Ի պահէ առաւօտու մինչեւ յերեկոյ, ի պահէ առաւօտու յուսացաւ Իսրայէլ ի Տէր:

Ի Տեառնէ է ողորմութիւն բազում, և ի նմանէ է փրկութիւն. — և նա փրկեաց զԻսրայէլ յամենայն անօրէնութեանց նորա:

Աւետարան Յովհ: Եւ էր ոմն հիւանդ: 157:

Մաղթ. Հոգւոցն հանգ: Քրզ. Վն հոգւ: Աղ. Քն Որդի:

Եւ ի դառնալն յեկեղեցին՝ ասասցեն Երգ. Նորաստեղծեալ:

Զկնի՝ Քրզ. Խնդրեսցուք: Կեցո յայնժմ: Աղ. Քում ամենազօր և հրաշալի յարութեամբ:

Եւ ապա դնեն զաւուրբ խաչն եւ զաւետարանն ի վերայ բեմակալին: Եւ շուրջ գալ առնել եղանակին

Շարական Բկ:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Ընդ արշալուսն առաւօտուն կանխեալ կանանցն ի գերեզմանն ասելով. Քն յարեաւ ի մեռելոց: Եւ առ նոսա ասէր հրեշտակն զի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Փութացարուք ով

սուրբ կա՛նայք ե՛ւ պա՛տմեցէ՛ք աշակե՛րտացն ասե՛լով. Քրիստո՛ս յարեա՛ւ ի՛ մեռելո՛ց:

Ապա Շարական ԲԿ:

Խաչի քո Քն երկիր պագանեմք. եւ որ ի կարգին: 385:

Եւ յաւելուն՝ զայս երկու երկու տունս խաչին, նախ տաղանայքն խնկարկելով, եւ ապա ժողովուրդն ծնրադրութեամբ. եւ համբուրեն զսուրբ խաչն եւ զաւետարանն, եւ զմիմեանս ասելով. Քն յարեաւ ի մեռելոց: Ձեզ և մեզ մեծ աւետիս:

Քրղ. Սբ խաչիւս: Աղ. Պահպանեա:

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Ի դրան ժամուն ժողովին է պաշտօն եկեղեցւոյն, եւ ասեն ի նէ-

Սաղմոս ԿԴ:

Քեզ վայելէ օրհնութիւն Ած ի Սիովն. և քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց, զի առ քեզ ամ մարմին եկեսցէ:

Բանք անօրինաց զօրացան ի վերայ մեր. զամբարշտութիւնս մեր դու քաւեսցես:

Երանի զորս ընտրեցեր և ընկալար. և բնակեսցեն ի գաւիթս քո:

Լցցուք մեք ի բարութենէ տան քո. սուրբ է տաճար քո, սքանչելի արդարութեամբ:

Լուր մեզ Ած փրկիչ մեր. յոյս ամենայն ծագաց երկրի, և որ ի ծով հեռի:

Ո պատրաստէ զլերինս զօրութեամբ իւրով. զգեցեալ է զօրութիւն:

Ո խռովեցուցանէ զմեծութիւն ծովու. և զձայն ալեաց նորա ցածուցանէ:

Խռովեսցին հեթանոսք. և երկիցեն բնակիչք երկրի ի նշանաց քոց:

Ցերս առաւօտու և ընդ երեկոյս զուարճասցին. հայեցար յերկիր, արբեցուցեր զնա, և բազում արարեր զմեծութիւն նորա:

Գետն Այ լի եղեւ ջուրբ. պատրաստ արարեր զկերակուր նորա, զի այսպէս է պատրաստութիւն:

Զակօս նր արբեցուցեր, և բզմ արարեր զարմտիս նր:

Ի ցօղել նոցա զուարթ եղիցի բոյս նորա. օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քոյ:

Դաշտք քո լցցին պարարտութեամբ. պարարտասցին գեղեցկութիւնք անապատի:

Բլուրք ցնծութի զգեցցին. և զգեցցին խոյք մաքեաց:

Հովիտք բազում արասցեն ցորեան, աղաղակեսցեն և օրհնեսցեն:

Ընթերցուածս ի Գործոց առաքելոց: Ա. 1:

Զբանն առաջին զոր արարի վն ամի, ո Թէոփիլէ, զոր սկսաւ Յն առնել և ուսուցանել՝ մինչեւ յօրն պատուիրելոյ առաքելոցն ի ձեռն Հոգւոյն սբյ, զորս ընտրեացն, և վերացաւ: Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի յետ չարչարանացն իւրոց ի բզմ արուեստս՝ յաւուրս քառասուն երեւել նոցա և ասել վասն արքայութեանն Աստուծոյ: Եւ ի հաղորդել ընդ նոսա հացիւ՝ պատուէր տայր նց յԵրուսաղեմէ մի մեկնել, այլ սպասել աւետեացն Հօր՝ զոր լուարուքն յինէն: Զի Յովհաննէս մկրտեաց ի ջուր, այլ դուք մկրտիցիք ի Հոգին սբ՝ ոչ յետ բազում ինչ աւուրցս այսոցիկ: Եւ նոքա մատուցեալ հարցանէին զնա և ասէին. Տէր, եթէ ի ժամանակի՞ աստ յայսմիկ հաստատեսցես իցես զարքայութիւնն Իսրայէլի: Ասէ ցնս. ոչ է ձեզ գիտել զժամս և զժամանակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեն. այլ առջիք զօրութի ի հասանել Հոգւոյն սբյ ի վր ձեր. և եղիջիք ինձ վկայք յԵրուսաղէմ և յամ Հրէաստանի և ի Սամարիա, և մինչեւ ի ծագս երկրի: 8:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Դու յարուցեալ գթասցիս ի վր Սիովնի. ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ:

Աւետարան ըստ Ղուկասու: ԻԴ. 13:

Յետ յարութեան Տեառն մերոյ Յ̃սի Ք̃սի:

Եւ ահա երկուք ի նոցանէ երթային ի նմին աւուր ի գեօղ մի, որ հեռի էր յԵրուսաղէմէ հարիւր և վաթսուն ասպարիսաւ. և էր անուն ն̃ր Եմմաւուս: Եւ նոքա խօսէին ընդ միմեանս վ̃ն ա̃մ անցիցն անցելոց: Եւ եղև ընդ խօսելն ն̃ց և ընդ վիճել, և ինքն Յ̃ս մերձեցաւ և երթայր ընդ նոսա: Եւ ն̃ց աչք կալեալ էին առ ի չճանաչելոյ զնա: Եւ ասէ ց̃նս. զի՞նչ են բանքդ՝ վասն որոյ վիճիքդ ընդ միմեանս մինչ դեռ գնայքդ, և տըրտմեալ էք: Պատասխանի ետ մի ոմն ի նոցանէ՝ որում անուն էր Կղէովպաս, և ասէ ցնա. դո՞ւ միայն կաս յԵրուսաղէմ, որ ոչ գիտացեր զինչ գործեցաւ ի նմա յաւուրսս յայսոսիկ: Եւ ասէ ցնոսա. զի՞նչ: Եւ նոքա ասեն. զՅ̃սէ Նազովրեցւոյ, որ եղև այր մարգարէ՝ հզօր արդեամբք և բանիւք առաջի Ա̃Յ և ա̃մ ժողովրդեանն: Ո՛ր̃պ մատնեցին զնա քահանայապետքն և իշխանքն մեր ի դատաստան մահու, և հանին զնա ի խաչ: Մեք ակն ունէաք՝ թէ նա է որ փրկելոց իցէ զԻսրայէլ. այլ և հանդերձ այսու ա̃մի՝ այս երրորդ օր է՝ յորմէ հետէ այն գործեցաւ: Այլ և կանայք ոմանք ի մէնջ զարմացուցին զմեզ, որք կանխեալ ընդ առաւօտս չոգան ի գերեզմանն, և ոչ գտին զմարմին ն̃ր. եկին և ասեն՝ թէ և տեսիլ ևս հրեշտակաց տեսին, որք ասէին զնմանէ թէ կենդանի է: Եւ գնացին ոմանք ի մէնջ ի գերեզմանն, և գտին նոյնպէս որպէս կանայքն ասացին, բայց զնա ոչ տեսին: Եւ նա ասէ ցնոսա. ո՛վ անմիտք և հեղգամիտք ի հաւատալ ամենայնի զո՛ր խօսեցան մարգարէքն: Ո՞չ զնոյն պարտ էր չարչարել Ք̃սի, և մտանել ի փառս իւր: Եւ սկսեալ ի Մովսիսէ և յա̃մ մարգարէիցն՝ մեկնէր ն̃ց որ ինչ յա̃մ գիրս գրեալ է զնմանէ: Իբրև մերձեցան ի գեօղն յոր երթային, և նա պատճառէր հեռագոյն ևս ուրեք եր-

թալ: Եւ բռնադատեցին զնա և ասեն. առ մեզ ագիր, զի ընդ երեկս է, և տարաժամեալ է օրս. և եմուտ ագանել անդ ընդ նոսա: Եւ եղև ի բազմելն նորա ընդ նոսա, առեալ զհացն՝ օրհնեաց, եբեկ և ետ ն̃ց: Եւ ն̃ց բացան աչք, և ծանեան զնա. և նա եղև ի նոցանէ աներևոյթ: Եւ ասեն ցմիմեանս. ո՞չ իսկ և սիրտք մեր ճմլէին ի մեզ՝ մինչ խօսէրն ընդ մեզ զճանապարհայն, և ո՛ր̃պ բանայր մեզ զգիրս: Եւ յարուցեալ նոյնժամայն դարձան յԵ̃մ, և գտին ժողովեալ զմետասանսն և զորս ընդ նոսայն էին: Եւ ասեն՝ թէ արդարև յարեաւ Տէր, և երևեցաւ Սիմովնի: Եւ նոքա պատմէին զայն որ զճանապարհայնն, և թէ զիա̃րդ ետ ծանօթս ն̃ց ի բեկանել հացին: 35:

Եւ ելանեն խաչիւ և աւետարանաւ, խնկով և մոմեղինօք և ամենայն զարդուք ի դուրս, աւելով

Շարական ԱԶ:

Այսօր զզատիկ մեր զենմամբ Քրիստոսի. արասցուք տօն ցնծութեամբ. նորոգեալքս ի հնութենէ մեղաց ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Այսօր հրեշտակքն լուսափայլ ի յերկնից իջեալ. զարհուրեցոյց ըզպահապանսն. և նք կանանցն քարոզէր ասելով. Ք̃ս յարեաւ ի մեռելոց: Այսօր նոր Իսրայէլ կոչեցեալք ի Քրիստոս. ազատեալք արեամբ գառինն Աստուծոյ. պարեսցուք ընդ երկնայնոցն ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Աւետարան ըստ Յովհաննու: Ի. 1:

Վասն յարութեան Տեառն մերոյ Յ̃սի Ք̃սի:

Եւ ի միաշաբաթոջն Մարիամ Մագդաղենացի գայ առաւօտուն ընդ արշալուսն ի գերեզման անդր. և տեսանէ զվէմն բարձեալ ի դրաց գերեզմանին: Ապա ընթանայ և գայ առ Սիմովն Պետրոս և առ միւս ա-

շակերտն՝ զոր սիրէրն Յս, և ասէ ցնոսա. բարձին զՏէր ի գերեզմանէ անտի, և ոչ գիտեմ՝ ուր եդին զնա: Ել Պետրոս և միւս աշակերտն, և գային ի գերեզմանն: ընթանային երկոքեան ի միասին. և միւս աշակերտն յառաջեաց ընթացաւ վաղագոյն քան զՊետրոս, և եկն նախ ի գերեզմանն: Եւ խոնարհեալ տեսանէ՝ զի կային անդ կտաւքն, բայց ի ներքս ոչ եմուտ: Եկն և Սիմովն Պետրոս՝ որ գայրն զկնի նր. և եմուտ ի գերեզմանն, և տեսանէ զկտաւսն՝ զի կային անդ. և վարշամակն որ էր ի գլուխ նր՝ ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ ի մի կողմն: Յայնժամ եմուտ և միւս աշակերտն, որ եկեալն էր յառաջագոյն ի գերեզմանն, ետես և հաւատաց. զի չեւ եւս գիտէին զգիրս՝ թէ պարտ է նմա ի մեռելոց յառնել: Չոգան դարձեալ առ միմեանս աշակերտքն: Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին և լայր. և մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ ի գերեզմանն, և տեսանէ երկուս հրեշտակս ի սպիտակս, զի նստէին մի ի սնարից և մի յանոտից՝ ուր կայր մարմինն Յսի: Եւ նոքա ասեն ցնա. կին դու՝ զի՞ լաս: Ասէ ցնոսա. զի բարձին զՏրն իմ ի գերեզմանէ աստի, և ոչ գիտեմ՝ ուր եդին զնա: Զայս իբրեւ ասաց՝ դարձաւ ի թիկունս կոյս, և տեսանէ զՅս զի կայր. և ոչ գիտէր թէ Յս իցէ: Ասէ ցնա Յս. կին դու՝ զի՞ լաս, զո՞ խնդրես: Նմա այսպէս թուեցաւ՝ թէ պարտիզպանն իցէ. ասէ ցնա. տէր՝ եթէ դու բարձեր զնա՝ ասա ինձ ո՞ւր եդիր զնա, զի ես առից զնա: Ասէ ցնա Յիսուս: Մարիամ: Եւ նա դարձաւ, և ասէ ցնա եբրայեցերէն. Րաբունի, որ թարգմանի՝ վարդապետ: Ասէ ցնա Յիսուս, մի մերձենար յիս, զի չեւ եւս ելեալ եմ առ Հայր իմ. այլ երթ դու առ եղբարսն իմ, և ասա ցնոսա, ելանեմ ես առ Հայրն իմ և առ Հայր ձեր, և Աստուածն իմ և Աստուած ձեր: Գայ Մարիամ Մագդաղենացի, և պատմէ աշակերտացն՝ եթէ ետես նա զՏէր, և զայս ինչ ասաց ցնա: 18:

Եւ երթան ի գերեզմանս, եւ առնեն հանգստեան

Շարական ԱԶ:

Որ անճառ տնօրէնութեամբք ի փրկութիւն ազգի մարդկան խոնարհեցար Բանդ Աստուած. * այսօր հանգուցելոց և ըզմեր ըղձեցելոցն ընդ մերս քո որ միայնդ ես մարդասէր: Որ անչարչարելիդ մարմնով եկիր կամաւ ի չարչարանս. եւ ի խաչին բեւեռեցար. հեղեր զարիւնդ ի փրկութիւն. այսօր հանգ: Որ թաղմամբ երեքօրեայ ըզզրօնութիւն մահու լուծեր. եւ կոխեցեր զիշխանն մահու. եւ վերածեր ըզնընջեցեալսն. այսօր հանգ: Որ հրաւիրեցեր յանմահութիւն զազգըս մարդկան անմահութեանց բաշխող Քրիստոս աղաչանօք Աստուածածնին. այսօր հանգ:

Սաղ. ՃԻԹ: ԿՑ. Եղիցին: Փխ. Ի խորոց կար: 483:

Աւետարան ըստ Յովհաննու: Ե. 24:

Տէրն մեր Յս Քս ասէ.

Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ որ առաքեացն զիս, ընդունի զկեանսն յաւիտենականս, և ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս: Ամէն ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ, և արդէն իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի Որդւոյն Այ. և որք լսիցենն՝ կեցցեն: Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս ետ և Որդւոյ ունել կեանս յանձին իւրում. և իշխանութիւն ետ նմա դատաստան առնել. և զի որդի մարդոյ է՝ ընդ այն զի՞ զարմանայք. զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որ ի գերեզմանս կայցեն՝ լուիցեն ձայնի նր և եկեսցեն արտաքս. որոց բարիս գործեալ

իցէ՝ ի յարութիւն կենաց, և որոց զչար արարեալ՝ ի յարութի դատաստանաց։ Ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոչ ինչ. այլ որպէս լսեմ՝ դատիմ, և դատաստանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեաց զիս։ 30։

Շարական ԱԶ։

Մեք խաչն օգնական հաւատացելոց կանգնեցաւ ի յերկրի յաղթող թշնամւոյն. Եկայք ժողովուրդք երկրպագեսցուք։ Արարիչն Արծ բարձրացաւ ի խաչին եւ զմեռեալս մեղօք փայտին ճաշակմամբն. ի սմա նորոգեալ կենդանացոյց։ Ի միւսանգամ գալստեան Աստուածորդւոյն սուրբ խաչն երեւի եւ լուսաւորէ. զի նա է լոյս հաւատացելոց։

Սաղմոս Դ։ ԿՑ. Նշանեցաւ։ Փխ. Ի կարդալ։ Տէր 480։

Աւետարան ըստ Յովհաննու։ ԺԹ. 31։

Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յսի Քսի։

Իսկ Հրեայքն՝ քանզի ուրբաթ էր, զի մի անդէն ի խաչին ագանիցին մարմինքն մինչեւ ցշաբաթն, զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ. աղաչեցին զՊիղատոս՝ զի խորտակեսցեն զբարձս նց, և բարձցին։ Եկին զինուորքն, և զառաջնոյն խորտակեցին զբարձս, նոյնպէս և զմիւսոյն՝ որ ընդ նմա ի խաչն ելեալ էր։ Բայց իբրեւ եկին առ Յս և տեսին զի այն ինչ մեռեալ էր, ոչ խորտակեցին զբարձս նր. այլ մի ոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս նր. և վաղվաղակի ել արիւն և ջուր։ Եւ որ ետեսն՝ վկայեաց, և ճշմարիտ է վկայութի նր. և նա գիտէ թէ ճշմարիտ ասէ, զի և դուք հաւատասջիք։ Այս եղեւ՝ զի լցցի գիրն, եթէ Ոսկր նր մի փշրեսցի։ Եւ դարձեալ միւս գիր ասէ, եթէ Հայեսցին ի նա՝ յոր խոցեցինն։ 37։

Եւ քարոզէ սարկաւագն. Եւ եւս խաղաղ։ Վն ի վերուստ. եւ քահանայքն զանդաստանն եւ զչորս կողմն աշխարհի։

Եւ է դառնալն յեկեղեցին՝ քարոզէ սարկաւագն.

Եւ եւս խաղաղութե։ Քհն. Օրհնութի և փառք։ Եւ ապա ամէն Խոնարհեցո եւ Ապրեցո։

Մեսեդի Յարութեան ԱԶ։

Տէր կարող և հզօր. Տէր կարող ի պատերազմի։ Տեառն է երկիր լրիւ իւրով. աշխարհ և ամենայն բնակիչք նորա։

Քարոզ. Ասասցուք. կամ ձայն։

Համբարձի ԱԶ։

Ընդ լուսանալ միաշաբաթին կանխեցին կանայքն ի գերեզմանն. ի խնկել զանապական մարմինն։ Փառք Հօր։ Եւ գտին զվէմն բարձեալ ի դրաց գերեզմանին. եւ լուեալ բարբառ ի հրեշտակէն. եթէ յարեաւ Քրիստոս և խափանեաց զմահ։ Այժմ և միշտ։ Եւ հանդիպեալ քո Տէր առաքելոցն եւ տուեալ ողջոյն կենդանարար. առաքեցեր զնոսա ի փրկութիւն տիեզերաց։

Ասի սկիզբն այս յարութեան Տէրունականացն. յամէն օր Համբարձի ասա է յայնէն մինչեւ ի Համբարձումն։

Քարոզ. Վասն խաղաղութե։ Աղօթ. Հայր գթած։

Արձակման Սաղմոս ՃԽԷ։

Գովեա Երուսաղէմ զՏէր։

Եւ օրհնեա զԱստուած քո Սիոն։

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց. և օրհնեաց զորդիս քո ի քեզ։

Որ եդ զսահմանս քո ի խաղաղութի. պարարտութբ ցորենոյ լցոյց զքեզ։

Որ առաքէ զբան իւր յերկիր. վաղվաղ ընթանան պատգամք նր։

Դնէ զձիւն որպէս զասր. և զմէգ ո՜ փոշի ցանեաց:

Արկանէ զսառն ո՜ պատառս. առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ:

Առաքէ զբան իւր և հալէ զնս. շնչեսցեն հողմք և գնասցեն ջուրք:

Ո պատմէ զբան իւր Յակովբայ. զարդարութի և զիրաւունս Իսրայէլի:

Ոչ այսպէս արար ամ ազգաց Տէր. և զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա:

Աւետարան ըստ Յովհաննու: Ի. 19:

Վասն յարութեան Տեառն մերոյ Յսի Քսի:

Եւ էր երեկոյ ի միաշաբաթոջ աւուրն. և դրօք փակելովք՝ ուր էին աշակերտքն ժողովեալ վն ահին Հրէից, եկն Յս և եկաց ի մէջ նց, և ասէ ցնս. ողջոյն ընդ ձեզ: Իբրև զայս ասաց՝ եցոյց նց զձեռս և զկողս իւր. և խնդացին աշակերտքն իբրև տեսին զՏէր: Ասէ ցնս դարձեալ. ողջոյն ընդ ձեզ, ո՜ առաքեաց զիս Հայր իմ՝ և ես առաքեմ զձեզ: Եւ զայս իբրև ասաց՝ փչեաց ի նոսա և ասէ. առէք Հոգի սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նց. եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի: Իսկ Թովմաս մի յերկոտասանիցն՝ անուանեալ Երկուորեակն՝ ոչ էր ընդ նոսա յորժամ եկն Յս: Ասէին ցնա այլ աշակերտքն, եթէ տեսաք զՏէր: Եւ նա ասէ ցնոսա. եթէ ոչ տեսից ի ձեռս նր զնշան բեւեռացն, և արկից զմատունս իմ ի տեղիս բեւեռացն, և մխեցից զձեռս իմ ի կողս նր, ոչ հաւատամ: 25:

Քրզ. Խնդրեսցուք: Կեցո՝ յայնէ–: Աղ. Թագաւոր:

Ա. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ, ԱԿ.

Մեռելոց է

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն ԱԿ:

Առաքեցար ի Հօրէ Բանդ Աստուած ի փրկութի ազգի մարդկան. օրհնեմք ըզքեզ սուրբ Աստուած: Ի գերեզման իջեր թագաւոր անմահ. եւ ի Հօրէ ոչ մեկնեցար. օրհնեմք ըզքեզ սուրբ Աստուած: Ի յերրորդ աւուր յարեար ածապէս եւ ի յերկինս համբարձար. փառք յարութեան քո Տէր. օրհնեմք ըզքեզ սուրբ Աստուած:

Յարուցեալ Տէրն ի գերեզմանէն միածինն որպէս փայլակն եւ լոյս փառաց ծագեաց յաշխարհս. եւ երկինք և երկիրս ցնծային: Մեծ է յարութիւն Աստուծոյն. քանզի դրունք երկնից բացեալ եղեն և հոտ անոյշ բուրեաց յաշխարհս. եւ լցոյց զարարածս ամենայն: Զօրք երկնից իջեալ էին եւ բանակեալ շուրջ ըզգերեզմանաւն. եւ հոգեղէն բարբառովն երգէին. Տէր օրհնեալ է քո յարութիւնդ:

Աքանչելի հրեշտակըն Տեառըն ցնծութեամբ իջեալ ի գերեզմանըն հարկանէր. փող յարութեանըն Տեառն: Ի հարկանել փողոյն. պահապանքըն զարհուրեցան եւ եղեն. իբրեւ յահէն որպէս մեռեալ: Զայն եղեւ ի հրեշտակէն. բարբառ եղեւ ուրախութեան Տէր յարեաւ. փառք յարութեանըն Տեառն: Դրօքըն փակելովք երեւեալ Յս աշակերտացն եւ ասէր. խաղաղութիւն ընդ ձեզ:

Հրաշալի ըզյարութիւն Աստուածորդւոյն. այսօր

տեսեալ առաքելոցն եւ բազմութիւնք հրեշտակացն. երգէին երգ նոր անլռելի ձայնիւ: Զայն ահեղ գաբրիէլեան փողոյն. այսօր գոչէր աւետարանէր աւետիք են աշխարհի. երգէին երգ նոր անլռելի ձայնիւ: Լոյս մեծ եւ ահաւոր. այսօր ծագեաց նր եկեղեցւոյ յարուցեալ ի մեռելոց Քրիստոս. երգեսցուք երգ նոր անլռելի ձայնիւ:

*Երգեսցուք քեզ ընդ հրեշտակս յաղթական օրհներգութիւնս: Որ մահուամբ քո մեռուցեր զմահ եւ յարութիւն պարգեւեցեր հողանիւթ բնութեանս. երգեսցուք: Որ ցուցեր մեզ ճանապարհ նորոգման և մաքրեցեր զաղտեղութիւն յանցանացն զոր պատրեաց թշնամին. երգեսցուք:

Կանխեցին կանայքն իւղաբերք ի գերեզմանն. եւ տեսին զյարութիւնն Տեառն: Բացաւ դուռն յարութեան գերեզմանին կնքելոյ. լոյս ծագեաց տիեզերաց:

ՀՈԳ. Որ յերկնային զօրս անմարմնոցն նախ հեղեր առատապէս Հոգիդ ճշմարիտ. զածային և զգերագոյն քո իմաստութիւնդ. լինել փառաբանիչ սուրբ Երրորդութեանդ. *ընդ նոսին փառաւորեմք զերրեակ միութիւնդ: Որ զկերպարանն ածային ստեղծեալ Երրորդութեանդ խորհրդակցութեամբ. զարդարեցեր փչմամբ շնորհաց քոց կենդանարար. եւ ընդ ծնեալսն առ ի նմանէ խօսեցար օրինօք եւ մարգարէիւք. ընդ նոսին: Որ յերկրորդի լինելութեան յետ յարութեան քում էանցին. մտեալ ի վերնատունն դրօքն փակելովք. շնորհելով ըստ առաջին փչմանն ըզքեզ մետասանիցն. առաքելոցն ասաց առէք Հոգի սուրբ. ընդ նոսին:

ՆՂ: Յորժամ յերկնից գոչէ փողն ազդեցուցիչ ամենելով տիեզերաց ի դատաստան ահաւոր. յայնմ աւուր յահեղին *յիշեա Տէր եւ ըզմեր ըզննջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբս քո: Յորժամ ճառագայթք ածութեան փայլեն ի յարեւելից. եւ դըպրութիւնք հրաշիցըն բանին. յայնմ աւուր յահեղին յիշեա Տէր եւ ըզմեր ըզնըն: Զարհուրեալ դողան արարածք ի ձայնէ սովբէագոչ փողոյն. յորժամ հարկանէ հրեշտակապետն եւ կոչէ ի դատաստան զազգս որդւոց մարդկան. յայնմ աւուր յահեղին յիշեա Տէր եւ ըզմեր:

ԱԾՆ: Զանճառելի ըզլոյս աստուածութեան տընօրինաբար կրեցեր ի քում յորովայնի Մարիամ մայր եւ կոյս. օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք: Ի մասնաւոր լուսոյն զարհուրեցան դասք առաքելոցն. այլ ի քեզ բովանդակ կրեցեր ըզհուր Աստուածութեանն Մարիամ մայր եւ կոյս. օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք: Առաքելոցըն հովանացեալ ամպ լուսեղէն. գերագոյն քեզ Հոգւոյն սրբոյ. եւ զօրութի բարձրելոյն հովանաւորեալ սուրբ Աստուածածին. օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք:

ԽՆ: Որ ի սկըզբանէ իմաստութբ հաստատեցեր զեկեղեցի Հօր իմաստութիւն. զոր նախանըկար տեսութեամբ նըշանակեալ Մովսէս խորանաւն երկնահանգոյն ի Սինա լերին. լուսաւորելով փառօքն Աստուծոյ: Որ զխորհուրդ անապական տնօրէնութեանդ քոյ ի սրբոյ կուսէն. տըպաւորելով տապանակն ածային ուխտին կտակարանաց Բանիդ Աստուծոյ. փառաց անեղինդ տեղի հանգըստեան: Փառք Հօր: Որ ի կեանս վերադարձի բնութեան դարձմամբ Յորդանանու օրինակեցեր. եւ ըզբընութիւն մահու եւ դըժոխոց կործանմամբն Երիքովի տապանակաւ խաչին հրա-

շագործեալ նոր Իսրայէլի, օրհնութիւն քեզ Տէր երգեսցեն մանկունք:

Այժմ և միշտ: Յարեաւ Տէրն ի մեռելոց, հզօր զօրութեամբ հաստատեաց զհիմունս եկեղեցւոյ սրբոյ:

Մաղթանք. փառք հրաշափառ յարութեան:

Աւետ. Յարութեան ԱԿ: Ծափս հարէք ամենայն: 36:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց հանգստեան ԱՁ:

Օրհնեալ ես դու Քս որ յարեար ի մեռելոց ողորմած և կոխեցեր զմահ. Տէր Ած հարցն մերոց: Որ մահկանացուացս կեանք ես, զհոգիս ննջեցելոց մեր ընկալ. Տէր Ած հարցն մերոց: Զորս փոխեցեր յաշխարհէն կենդանեաց հանգստեան արժանաւորեա. Տէր Ած հարցն մերոց:

Գ. Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան: Փառք Հօր: Եկայք. Որ գալոցն է զօրութեամբ բազմաւ. ազդմամբ ձայնի կենագործէ զննջեցեալսն, զՏէր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան: Այժմ և: Օրհնեսցէ: Աղաչեմք զքեզ բարերար, հանգո զհոգիս ծառայից քոց ընդ սուրբս քո, օրհնեսցուք եւ բարձր արասցուք զանուն քո յաւիտեան:

Մեծացու. ԱՁ: Յարուցելոյն ի մեռելոց բնակարան մայր եւ կոյս, որ զննջեցեալսն յԱդամայ կենագործէ անապական. *զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս: Փառք Հօր: Արարողին երկնի և երկրի եղեր տաճար և անապական, որ զննջեցեալսն մեր հրեղէն նորոգէ. զքեզ: Այժմ և միշտ: Կերակրողին տիեզերաց արբուցեր զքո զկաթն, որ զննջեցեալսն մեր վերստին նորոգէ. զքեզ:

Ողորմ. ԱՁ: Որ ստեղծմամբ ըստ պատկերի քո Տէր պատուեցեր զմեզ, ընկալ եւ այժմ զննջեցեալսն ի քեզ ուղիղ հաւատով, ըստ մեծի քում ողորմութեան: Փառք Հօր: Որ շնորհօք սբ Հոգւոյն լուսաւորեցեր յիշատակի իւրեանց զհոգիս նց ընկալ մարդասէր, ըստ մեծի քում ողորմութեան: Այժմ և: Որք հաղորդեցան մարմնոյ եւ արեան քո Տէր, հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս քո Քրիստոս Աստուած, քանզի գինք սբ արեան քո են:

Տէրունին. ԱՁ: Քեզ վայելէ Ած օրհնութի. որ յարութիւնդ ես ձայնիւ յաւիտենից ննջեցելոց. Թագաւոր եւ իշխան վերօրհնեմք զքեզ: Փառք Հօր: Ի միւսանգամ գալստեանն քո Քս փառաց Թագաւոր, ի ձայն փողոյ նորոգին հոգիք ննջեցելոցն. և յառնեն ի մեռելոց անապական մարմնով: Այժմ և միշտ: Վասն որոյ եւ մեք զքեզ աղաչեմք Հայր երկնաւոր, դասաւորեա զննջեցեալսն մեր ի վերին Երուսաղէմ, ի ժողովս անդրանկաց գրելոց յերկինս:

Աւետ. Երգ Յարութ. Զյարութի: Յարեաւ Ած: 53:

Աւետ. Սաղմոս ԿԴ: Քեզ վայելէ օրհնութի: 484:

Աւետարան ըստ Ղուկասու: ԻԴ. 1:

Վասն յարութեան Տեառն մերոյ Յսի Քսի:

Բայց ի միաշաբաթուն վաղ քաջ ընդ առաւօտն եկին ի գերեզմանն, բերին զխունկսն զոր պատրաստեցին, և այլ կանայք ընդ նս. և գտին զվէմն թաւալեցուցեալ ի գերեզմանէ անտի: Եւ մտեալ ի ներքս՝ ոչ գտին զմարմինն Տեառն Յսի: Եւ եղեւ ընդ հիանալն նց վասն այնորիկ, և ահա արք երկու հասին առ նս ի հանդերձս լուսաւորս: Եւ իբրեւ զահի հարան և խո-

նարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր, ասեն ցնոսա. զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս: Չէ աստ, այլ յարեաւ. յիշեցէք որ՟պ խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն ի Գալիլեա, և ասէր թէ պարտ է որդւոյ մարդոյ մատնել ի ձեռս մարդոց մեղաւորաց, և ի խաչ ելանել, և յերրորդ աւուր յառնել: Եւ յիշեցին զբանսն նր՟: Եւ դարձան պատմեցին զայս ամ՟ մետասանիցն և այլոցն ամենեցուն: Եւ էին Մարիամ Մագդաղենացի և Յովհաննա և Մարիամ Յակովբայ, և այլք ընդ նս՟՝ որ պատմեցին զայս առաքելոցն: Եւ երեւեցան առաջի նց՟ շաղփաղփութ՟ի բանքն նց՟, և չհաւատային նց՟: Բայց Պետրոս յարուցեալ ընթացաւ ի գերեզմանն, և հայեցեալ տեսանէ զկտաւսն լոկ՝ զի կային. և գնաց՝ ընդ միտս զարմացեալ թէ զինչ եղեւ: 12:

Քրզ. Խնդրեսցուք: Կեցո: Աղ. Քում ամենազօր:

Յայս յինանցս յառաւօտուն եւ յերեկոյին Կեցո ասա Յայնիւ: Եւ Արարչական ու ասի. Բայց ի կիւրակէս զՆորաստեղծեալն ասա:

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Առաջին Սաղմոս ԿԴ:

Քեզ վայելէ օրհնութիւն Ած՟ ի Սիովն. և քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լո՛ւր աղօթից իմոց, զի առ քեզ ամ՟ մարմին եկեսցէ:

Բանք անօրինաց զօրացան ի վերայ մեր. զամբարշտութիւնս մեր դու քաւեսցես:

Երանի զորս ընտրեցեր և ընկալար. և բնակեսցեն ի գաւիթս քո:

Լցցուք մեք ի բարութենէ տան քո. սուրբ է տաճար քո, սքանչելի արդարութեամբ:

Լո՛ւր մեզ Ած՟ փրկիչ մեր. յոյս ամենայն ծագաց երկրի, և որ ի ծով հեռի:

Ո պատրաստէ զլերինս զօրութեամբ իւրով. զգեցեալ է զօրութիւն:

Ո խռովեցուցանէ զմեծութիւն ծովու. և զձայն ալեաց նորա ցածուցանէ:

Խռովեսցին հեթանոսք. և երկիցեն բնակիչք երկրի ի նշանաց քոց:

Ելս առաւօտու և ընդ երեկոյս զուարճասցին. հայեցար յերկիր, արբեցուցեր զնա, և բազում արարեր զմեծութիւն նորա:

Գետն Այ՟ լի եղեւ ջրով. պատրաստ արարեր զկերակուր նորա, զի այսպէս է պատրաստութիւն:

Զակօս նր՟ արբեցուցեր, և բազում արարեր զարմտիս նորա:

Ի ցօղել նոցա զուարթ եղիցի բոյս նորա. օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քոյ:

Դաշտք քո լցցին պարարտութեամբ. պարարտասցին գեղեցկութիւնք անապատի:

Բլուրք ցնծութ՟ի զգեցցին. և զգեցցին խոյք մաքեաց:

Հովիտք բազում արասցեն ցորեան, աղաղակեսցեն և օրհնեսցեն:

Աւետարան ըստ Մարկոսի: ԺԶ. 2:

Վս՟ յարութե՟ տեառն մերոյ Յս՟ի Քս՟ի:

Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան ի գերեզմանն ընդ արեւագալն, և ասէին ցմիմեանս.ո՞վ թաւալեցուսցէ մեզ զվէմն ի դրաց գերեզմանին: Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր զվէմն ի գերեզմանէն. քանզի էր մեծ յոյժ: Եւ մտեալ ի ներքս ի գերեզմանն, տեսին երիտասարդ մի զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատմուճան սպիտակ, և զարհուրեցան: Եւ նա ասէ ցնս՟. մի՛ երկնչիք. զՅս՟ խնդրէք զՆազովրեցի զխաչելեալն, յարեաւ՝ չէ աստ. ահաւադիկ տեղին՝ ուր եդին զնա: Այլ երթա՛յք ասացէք ցաշա-

կերտս նորա եւ ցՊետրոս, եթէ ահա յառաջագոյն երթայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա՝ որպէս ասացն ձեզ։ Եւ ելեալ փութով ի գերեզմանէն, քանզի զահի հարեալ էին. եւ ոչ ումեք ինչ ասացին, զի երկնչէին։ 8։

Յայս շաբաթս մինչեւ ի Նոր կիւրակէն զանցեալ աւուր առաւօտու աւետարանն՝ այսր աւուր երեկոյի առաջին փոխ կարգաւ. եւ զաւուր առաւօտեան աւետարանն՝ արշալուսին կարգաւ, որ ասելն գայ։ Եւ զամէն փոխ շարս հետ կարգաւ։

Մեսեդի Յարութեան. ԱԿ։

Աթոռ քո Աճ, յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղութեան գաւազան արքայութեան քո։

Բղխեաց սիրտ իմ զբան բարի. եւ ասեմ զգործս իմ թագաւորի։

Համբարձի ԱԿ։

Առաքեցար ի Հօրէ Բանդ Աստուած ի փրկութիւն ազգի մարդկան, օրհնեմք ըզքեզ սուրբ Աստուած։ Փառք Հօր։ Ի գերեզման իջեր թագաւոր անմահ. եւ ի Հօրէ ոչ մեկնեցար. օրհնեմք ըզքեզ սուրբ Աստուած։ Այժմ եւ։ Ի յերրորդ աւուր յարեար ամենապէս եւ ի յերկինս համբարձար. փառք յարութեան քո Տէր. օրհնեմք ըզքեզ սուրբ Աստուած։

Արշալուսի Սաղմ. ՃԽԷ: Գովեա Երուսաղէմ զՏր: 491:

Առաք. Ղուկ. Բայց ի միաշաբաթուն: 497:

Քրզ. Խնդրեսցուք: Կեցո: Աղ. Թագաւոր խաղ:

Ա. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ, ԲՋ.

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն ԲՋ։

Ի գերեզման քո կանխեցին կանայքն զիւղս եւ զխունկս բերին. ի պատիւ թաղման քո զի զմեռեալս ըն- հողացեալըս վերածեր ի կեանս։ Փոխանակ իւղոյն զհաւատս անբիծս եւ զաղաչանս մեր ընդ առաւօտեան կանանցն ընկալ, որք զողջոյն կենաց լուան Եւայի ունկամբն։ Նոյն աւետիս առաքելոցն յարեաւ յարուցիչըն մեր աւերեաց ըզդժոխս. եւ զթշնամին կապեաց ի յանլոյծ կապանս։

Եկին ի գերեզմանն առաւօտեան որ կանայքն. յօծանել խնկել զանապական մարմինն։ Գուշակն հրեշտակին քաղցրերէր ընդ նոսա խօսելով. ցնծացէք յարեաւ որպէս յառաջն ասաց։ Լուեալ ի հրեշտակէն զաւետիս յարութեանն. պատմեին աշակերտացն եթէ յարեաւ Քրիստոս։

Զայն աւետաւոր հրեշտակին զուարճացոյց զառաւօտեան կանայսն. գթոյ պատմելով զյարութիւն։ Մի յուսահատիք տրտմութեամբ այլ ցնծացէք բերկրելով. խնկաոզգեացք ծայնոյն եւ փափաքողք յարութեանն։ Փութացարուք ի Գալիլեա աւետարանեցէք աշակերտացն. եթէ յարեաւ Քրիստոս եւ խափանեաց զմահ։

Այսօր զուարճացան տիեզերք ամենայն ճշմարիտ յարութեամբ Անծնողին. քանզի զդժոխս աւերեաց եւ գերեաց զարգելեալսն ի նմա։ Այսօր լուսափայլեալ մեծապայծառ ծագմամբ հրեշտակապետն ի վերայ վի-

մին. կանանցն աւետէր ասելով. զի խնդրէք ըզկեն-
դանին ընդ մեռեալս: Այսօր բերկրեցան կանայքն
իւղաբերք աւետեօք յարութեան Ածորդւոյն. դարձան
յառաքելոյսն ասելով յարեաւ Ած:

Աքանչելի կանայքն աներկիւղ եկին ի տեսանել
ըզգերեզմանն. զի կատարեալ սէրըն մերժեաց զեր-
կիւղն: Եկին ի խնկել ըզտէրունեան մարմինն եւ
տեսին յարուցեալ ի գերեզմանէն. եւ վերըստին լոյ-
սըն ծագեաց յաշխարհս: Քարոզեաց հրեշտակըն
զյարութիւն Տեառն. և բացան գերեզմանըք ննջե-
ցելոց. եւ յարութիւն Տեառըն յաղթեաց մահու:

Կանխելով ոք կանանցն ընդ առաւօտն ի գերեզ-
մանն. եւ զահաւոր յարութե ըզձայն ի հրեշտակէն
լըւեալ. եթէ յարեաւ Ած: Թողեալ ըզտըրտմութի
երջանիկ և ոք կանանցն. եւ խընդութբ ընթանային
պատմել աշակերտացն. եթէ յարեաւ Ած:

ՀՈԳ. Նոյն և Նըման Հօր և Որդւոյ Հոգիդ անեղ
և համագոյ. բղխումըն Հօր անքըննաբար առող
յՈրդւոյ անճառաբար. ի վերնատունն այսօր իջեր
զհոգիդ շնորհաց քոց արբուցեր. արբեա և մեզ ո-
ղորմութեամբ ի բաժակէդ իմաստութե: Իբրև ստեղ-
ծող արարածոց որ շըրջէիր ի վր ջրոց. նոյն և ի
ջուրսն աւազանին ի շնորհել մեզ քում էակցին.
գըգուես սիրով աղաւնակերպ զմարդիկ ծնանիս ածա-
կերպ. արբեա և մեզ ողորմութեամբ ի բաժակէդ ի-
մաստութե: Բարուն վերնոցն իմանալեաց և ըստորին
այսըր զգալեաց. որ մարգարէս տաս ի հովուաց և ա-
ռաքեալս ի ձըկնորսաց. աւետաւոր ըզմաքսաւորս քա-
րող բանի քում զհալածողս. արբեա և մեզ ողորմու-
թեամբ ի բաժակէդ իմաստութեան:

ՆՆՁ: Հրեշտակային ձայնիւն օրհնեսցուք զամենա-
սուրբ զԵրրորդութիւնըն. փառաւորելով ըզՀայր.
որ վերակոչեաց զամենեսեան ի մահուանէ յանմա-
հութիւն: Երգեցէք Տեառն երգ նոր եկեղեցիք սըր-
բեցելոց. Քրիստոսի երկըրպագելով. որ վերակոչեաց
զամենեսեան ի մահուանէ յանմահութիւն: Սըրբա-
սաց ձայնիւն օրհնեսցուք. հոգեւորական հընչմամբ
գովեսցուք. սուրբ զՀոգին փառաւորելով. որ վերա-
հանգոյց զամենեսեան ի մահուանէ յանմահութի:

ԱՁՆ: Ըզքեզ կոյս և մայր և բնակարան ածային
ներմարդութեանն. գոհաբանեմք և վերօրհնեմք զե-
ղեալ փրկող կենդանութեան ազգի մարդկան. *վասն
որոյ ըզքեզ Ածածին և կոյս բարեբանեմք ըզմայր և
զաղախին փրկչին մերոյ: Ծընունդըն Հօր և հինաւ-
ուրց. անժամանակն յաւիտենից. ժամանակաւ յորո-
վայնի քում բնակեցաւ և ի Հօրէ ոչ մեկնեցաւ. վն
որոյ: Ծընեալն ի քէն ի խաչ ելեալ. եւ ի յաթոռ
փառաց ընդ Հօր. անարգեալ ի մարդկանէ փառաւորու-
թբ էութբ երկըրպագեալ. վն որոյ: Ըզքեզ ոչ մի-
այն որդիք մարդկան այլ և վերին զօրութիք. դասք
անմարմնոց հոգեղինաց հրեղինաց զուարթնոց եւ
հրեշտակաց. գոհաբանեն և վերօրհնեն եւ փառաւո-
րեն ըզմայր և զաղախին փրկչին մերոյ:

ԽՆ: Ապաւինեցաք ի խաչ քո արարիչ յաւիտենից.
որ եղեր մեզ պահապան. յաղթող ընդդէմ թըշ-
նամւոյն. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զան-
ձինըս մեր: Բարձրեալ թագաւոր. որ վասըն մեր ելեր
ի խաչ. և բարձեր սովաւ զյանցանս. նախաստեղծին
Ադամայ. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զան-
ձինըս մեր: Գըլուխ ոք հաւատոյ. և փայտ կենաց մարդ-

կան յայտնեալ. զոր տեսեալ այսօրն պղծոյ. կործանեցաւ անկանգնելի. աղաչեմք սուրբ փրկիչ պահպանեա զանձինս մեր: Դողացաւ թշնամին ընդ յայտնել սրբոյ խաչին. և ի յահէ փառաց նորա. կործանեցաւ յանդունդս երկրի. աղաչեմք սուրբ փրկիչ պահպանեա զանձինս մեր: Փառք Հօր և: Երկինք ցնծային և երկիր ուրախանայր. քանզի փրկիչ ցուցաւ մզ խաչն. և լուսատու տիեզերաց. աղաչեմք սուրբ փրկիչ պահպանեա զանձինս մեր:

Այժմ և միշտ: Զսքանչելի և զհրաշագործ ըզյարութիւն Քնի. առաքելոցն ստուգապէս տեսեալ. ընդհանուր քարոզէին. եթէ յարեաւ Աստուած:

Մաղթ. փառք հրաշափառ յարութեան:

Աւետ. Յարութեան ԲՁ: Յարեաւ Ած և ցրուե: 36:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԱՁ:

Պայծառացիր եկեղեցի հեթանոսաց. յարութեամբ Քնի որ յարեաւն այսօր ի մեռելոց. պսակեաց զքեզ խաչիւն իւրով. Ած հարցն մերոց: Այսօր ողբայ յինքեան ըզկործանումն իւր մահ. քանզի որ յԱդամ մեռեալքն էին. կենդանացան յարութբ Քնի Ած հարցն մերոց: Այսօր ցնծան մանկունք առագաստի. քանզի Քն յարուցեալ փարատեաց զսուգ եւ զտրտմութիւն եւ լուսաւորեաց զաշխարհս. Ած հարցն մերոց:

Գ. Ըզ Տէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Այս օր է զոր արար Տէր՝ եկայք ցնծասցուք. տօնեցէք ուրախութբ մինչեւ յանկիւնս սեղանոյ. բարձր արարէք ըզնա յաւի-

տեան: Այժմ և: Բարձրացուցէք ըզՏէր Ած մեր գուչէ մարգարէն. երկրպագեցէք պատուանդանի ոտից նորա. որ եբարձ ըզդատակնիք մահու ի մէնջ. բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մեծաց. ԱՁ: Որ զաւետիս հոգւոյն ի հրեղէն ի հրեշտակէն ընկալար ուրախ լեր. բերկրեալդ Տէր ընդ քեզ Մարիամ ամենօրհնեալ: Փառք Հօր: Անըսկիզբըն բանըն հաճեցաւ առնուլ մարդեղութեամբն ըսկիզբն ի կուսէդ. Քրիստոս Աստուած թագաւորն յաւիտենից: Այժմ և: Աղաչեմք ըզքեզ որ Ածածին առ Քն բարեխօսեա փրկել ըզժողովուրդս իւր զոր գնեաց արեամբն իւրով:

Ողորմ. ԱՁ: Թիւնս իմ: Ողորմեա ինձ Աստուած: Փառք Հօր: Լուսեղէն արա ինձ Տէր ըզձայն յարութեան. աւետաւոր հրեշտակին որ քարոզեաց ըզյարութիւն. ողորմեա ինձ Աստուած: Այժմ և: Որ յարեարդ ի մեռելոց Քն Ած. և մեզ կեանս շնորհեցեր. պարգեւատու ամենեցուն. ողորմեա ինձ Աստուած:

Տէրյերկն. ԱՁ: Փառաւորք յարութե քո Տր: Փառք Հօր: Պատրանօք նախաստեղծին մերկացաք ի լուսոյն. իսկ յարութբ միածնին ըզգեցաք զանմահութիւն. փառաւորք յարութեան քո Տէր: Այժմ և: Խաբանօք փայտին ճաշակեցաք ըզմահ. իսկ ի փայտէն կենաց նորոգեցաք ամենեքեան. փառաւորք յարութե քո Տէր:

Աւետ. Երգ Յարութ. ԲՁ: Զյարութի: Զյարուցեալն: 53:

Առաւօտու Սաղմոս Ե:

ԿՑ. Տր ոչ զինու՝ հաճութբ քով պսակեցեր զմեզ: ՓԽ. Բանից իմոց ունկն դիր Տէր, և ի միտ առ զաղաղակ իմ:

Նայեա՛ ի ձայն աղօթից իմոց, թագաւոր իմ և Աճ իմ։

Ես զքեզ աղաչեմ Տէր, ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում. ընդ առաւօտս պատրաստ եղէց յանդիման լինել քեզ։

Ոչ թէ դու Աստուած կամիս զանօրէնութիւն. և ոչ բնակեն առ քեզ չարք, մի՛ անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց։

Ատեցեր զայնոսիկ որ գործեն զանօրէնութիւն կորուսանես զամենեսեան, ոյք խօսին սուտ։

Զայր արիւնահեղ և զնենգաւոր պիղծ առնես դու Տէր. այլ ես ըստ բազում ողորմութե քում մտից ի տուն քո. երկիր պագից ի տաճար սբ քո երկիւղիւ քո։

Տէր առաջնորդեա՛ ինձ յարդարութե քում. վն թշնամեաց իմոց ուղի՛ղ արա առաջի իմ զճանապարհս քո։

Զի ոչ գոյ ի բերանս նց ճշմարտութիւն, և սիրտք նց նանրեալք են։

Որպէս գերեզման բաց է կոկորդ նոցա. լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն։

Դատեա՛ զնս Աճ զի անկցին ի խորհրդոց իւրեանց. ըստ բազում ամբարշտութե նոցա մերժեա՛ զնոսա, զի դառնացուցին զքեզ։

Ուրախ լիցին ամենեքեան որ յուսացեալ են ի քեզ. յաւիտեան ցնծասցեն, և բնակեսցես դու ի նոսա։

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քո. զի օրհնեսցես դու զարդարն. Տէր ոպ զինու հաճութեբ քով պսակեցեր զմեզ։

Աւետարան ըստ Ղուկասու։ ԻԴ։ 13։

Յետ յարութե Տեառն մերոյ Յսի Քսի։

Եւ ահա երկուք ի նոցանէ երթային ի նմին աւուր ի գեօղ մի, որ հեռի էր յԵրուսաղէմէ հարիւր և վաթսուն ասպարիսաւ. և էր անուն նր Եմմաւուս։ Եւ նոքա խօսէին ընդ միմեանս վն ամ անցիցն անցելոց։ Եւ եղև

ընդ խօսելն նց և ընդ վիճել, և ինքն իսկ Յս մերձեցաւ և երթայր ընդ նոսա։ Եւ նց աչք կալեալ էին առ ի չճանաչելոյ զնա։ Եւ ասէ ցնս. զի՞նչ են բանքդ՝ վասն որոյ վիճիքդ ընդ միմեանս մինչ դեռ գնայքդ, և տրտմեալ էք։ Պատասխանի ետ մի ոմն ի նոցանէ՝ որում անուն էր Կղէովպաս, և ասէ ցնա. դո՞ւ միայն կաս յԵրուսաղէմ, որ ոչ գիտացեր զինչ գործեցաւ ի նմա յաւուրս յայսոսիկ։ Եւ ասէ ցնոսա. զի՞նչ։ Եւ նոքա ասեն. զՅսէ Նազովրեցւոյ, որ եղեւ այր մարգարէ՝ հզօր արդեամբք և բանիւք առաջի Այ և ամ ժողովրդեանն։ Ո՛րպ մատնեցին զնա քահանայապետքն և իշխանքն մեր ի դատաստան մահու, և հանին զնա ի խաչ։ Մեք ակն ունէաք՝ թէ նա է որ փրկելոցն իցէ զԻսրայէլ. այլ և հանդերձ այսու ամի՝ այս երրորդ օր է՝ յորմէ հետէ այն գործեցաւ։ Այլ և կանայք ոմանք ի մէնջ զարմացուցին զմեզ, որք կանխեալ ընդ առաւօտս չոգան ի գերեզմանն, և ոչ գտին զմարմին նր. եկին և ասեն՝ թէ և տեսիլ ևս հրեշտակաց տեսին, որք ասէին զնմանէ թէ կենդանի է։ Եւ գնացին ոմանք ի մէնջ ի գերեզմանն, և գտին նոյնպէս որպէս կանայքն ասացին, բայց զնա ոչ տեսին։ Եւ նա ասէ ցնոսա. ո՛վ անմիտք և հեղգասիրտք ի հաւատալ ամենայնի զոր խօսեցան մարգարէքն։ Ո՞չ զնոյն պարտ էր չարչարել Քսի, և մտանել ի փառս իւր։ Եւ սկսեալ ի Մովսիսէ և յամ մարգարէիցն՝ մեկնէր նց որ ինչ յամ գիրս գրեալ է զնմանէ։ Իբրև մերձեցան ի գեօղն յոր երթային, և նա պատճառէր հեռագոյն ևս ուրեք երթալ։ Եւ բռնադատեցին զնա և ասեն. առ մեզ ագիր, զի ընդ երեկս է, և տարաժամեալ է օրս. և եմուտ ագանել անդ ընդ նոսա։ Եւ եղև ի բազմելն նորա ընդ նոսա, առեալ զհացն՝ օրհնեաց, եբեկ և ետ նց։ Եւ նց բացան աչք, և ծանեան զնա. և նա եղև ի նոցանէ աներևոյթ։ Եւ ասեն ցմիմեանս. ո՞չ իսկ և սիրտք մեր

ճմլէին ի մեզ՝ մինչ խօսէրն ընդ մեզ ճանապարհայն, և ո՞չ բանայր մեզ զգիրս։ Եւ յարուցեալ նոյնժամայն դարձան յԵմ, և գտին ժողովեալ զմետասանսն և զորս ընդ նոսայն էին։ Եւ ասեն՝ թէ արդարև յարեաւ Տէր, և երևեցաւ Սիմովնի։ Եւ նոքա պատմէին զայն որ ճանապարհայնն, և թէ զիա՞րդ ետ ծանօթս նց ի բեկանել հացին։ 35։

Քրզ. Խնդրեսցուք։ Կեցո՛։ Աղ. Քում ամենազօր։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Առաջին Սաղմ. Ե։ ԿՑ. Տր ո՞չ զլինու։ Փխ. Իմանից։ 505։

Աւետարան Ղուկ։ Բայց ի միաշաբաթուն։ 497։

Մեսեդի Յարութեան ԲԶ։

Տէր թագաւորեաց, ցնծասցէ երկիր. ուրախ եղիցին կղզիք բազումք։

Երևեցան փայլատակունք նորա տիեզերաց. ետես և սասանեցաւ երկիր։

Համբարձի ԲԶ։

Ի՛ գերեզման քո կանխեցի՛ն կանա՛յքն զլո՛ւս և զխո՛ւնկըս բե՛րին. ի՛ պատի՛ւ թաղմա՛ն քո՛ զի՛ զմե՛զըս ըղհողա՛ցեալըս վե՛րածեր ի կեա՛նս։ Փառք Հօր։ Փո՛խանակ լուսո՛յն զհաւա՛տս անբի՛ծս և՛ւ զաղա՛չա՛նըս մե՛ր ը՛նդ ա՛ռաւօտեա՛ն կա՛նանցն ընկա՛լ. ո՛րք զո՛ղջոյն կենա՛ց լո՛ւա՛ն Ե՛ւա՛յի ունկա՛մբն։ Այժմ և։ Ե՛տո՛ւն ա՛ւետի՛ս ա՛ռա՛քելոցն յա՛րեա՛ւ յա՛րո՛ւցիչըն մե՛ր ա՛ւերեա՛ց ըզդըժո՛խս. Ե՛ւ զթը՛շնամի՛ն կա՛պեա՛ց ի՛ յա՛նլոյծ կապա՛նս։

Արձակման Սաղմոս Ի։

Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ։

Զցանկութիւն սրտի նր ետուր նմա. և զկամս շրթանց նր ոչ արգելեր ի նմանէ։

Ժաման արարեր զնա յօրհնութիւն քաղցրութեան քո. և եդիր ի գլուխ նր պսակ ի քարէ պատուականէ։

Կեանս խնդրեաց ի քէն. և ետուր նմա ընդ երկայն աւուրս՝ յաւիտեանս յաւիտենից։

Մեծ են փառք նորա ի փրկութեան քում. զփառս և զմեծվայելչութիւն դիցես ի վերայ նր։

Տացես զնա յօրհնութիւն յաւիտեանս յաւիտենից. ուրախ արասցես զնա յուրախութիւն երեսաց քոց։

Թագաւոր յուսացաւ ի Տէր. և յողորմութիւն Բարձրելոյն նա մի՛ սասանեսցի։

Գտցի ձեռն քո ի վերայ թշնամեաց քոց. և աջ քո գտցէ զամ ատելիս քո։

Դիցես զնս որպէս հնոց հրոյ՝ ի ժամանակի երեսաց քոց։

Տէր բարկութեամբ իւրով խռովեցուսցէ զնս. և հուր կերիցէ զնս։

Պտուղ նց յերկրէ կորիցէ. և զաւակ նց յորդւոց ի մարդկանէ։

Խոտորեցան ի քէն չարութեամբ. խորհեցան խորհուրդ՝ զոր ոչ կարացին հաստատել։

Արասցես զնս հալածեալս. ի մնացուածս քո պատրաստեսցես զերեսս նոցա։

Բարձր լեր Տէր ի զօրութեան քում. օրհնեսցուք և սաղմոս ասասցուք զօրութեան քում։

Աւետ. Ղուկ. Եւ ահա երկուք ի նոցանէ։ 506։

Քարոզ. Խնդրեսցուք։ Կեցո՛։ Աղօթ. Թագաւոր։

Ա. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ, ԲԿ.

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն ԲԿ:

Քո յարութեանդ փառք վայելէ երկայնամիտ Տէր: Օրհնեալ է քո յարութիւնդ Աստուած որ ըզմահ մահու ծանուցեր քոյին կամաւոր մահուամբդ. քո յարութեանդ փառք վայելէ երկայնամիտ Տէր: Գոչումն ահեղ հրեշտակին ի վիմին որ քարոզէր առ նը կանայսն յարեաւ Տէրն ի մեռելոց. քո յարութեանդ փառք վայելէ երկայնամիտ Տէր:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Ընդ արշալուսն առաւօտուն կանխեալ կանանցն ի գերեզմանն ասելով. Քս յարեաւ ի մեռելոց: Եւ առ նոսա ասէր հրեշտակն զի՞ խընդրէք ըզկենդանին ընդ մեռեալս. Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Փութացարուք ով սուրբ կանայք եւ պատմեցէք աշակերտացն ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Առաւօտեան սբ կանայքն հանդերձ իւղովք և խընկովք եկին ի սբ գերեզմանն. եւ ողբալով խընդրէին զանմահ փառաց թագաւորն: Եւ ի ձայնէ հրեշտակին զուարճացան տրտմազգեացք. առաւօտեան սբ կանայք զի՞ խընդրէք ըզկենդանին ընդ մեռեալս. յարեաւ փառաց թագաւորն: Ածասէր սբ կանայք փութացարուք հետեւեալ. պատմել լինել Պետրոսի և Յովհաննու սիրելւոյ. յարեաւ փառաց թագաւորն:

Կանխեցին կանայքն ընդ առաւօտն ի գերեզմանն հանդերձ խնկովք: Բերելով զիւղս անուշահոտս. ի յօծումն կենարար մարմնոյ փրկչին մերոյ: Եւ

հրեշտակըն զօրութեամբ. գոչելով աղաղակէր յարեաւ Քրիստոս:

Ըզյարութիւն քո ամենեքեան օրհնեսցուք. զի նա միայն Ած փառաւորեալ յաւիտեան: Ըզճառագայթ յարութեան տեսանելով հրեշտակին. նա զօրանայր ի պատմել ըզկենսաբեր յարութիւն: Զայն աւետեաց լսէին առաւօտեան սբ կանայքն. ի հրեշտակէն դառնային ուրախութեամբ յառաքեալսն:

Օ տիեզերական խնդութեան աւետիքս. երանելի կանանցն ուսեալք ի հրեշտակէն. աներկիւղ խընդութեամբ և բերկրալից ուրախութեամբ ընթանային պատմել աշակերտացն ասելով: Զոր մահուն երկիւղիւ ընդ մեռեալս համարեալ կարծէաք. նա ինքնիշխանութեամբ յարուցեալ. զմահու ելոյծ զիշխանութիւն և կենդանութիւն պարգեւեաց ամազգի մարդկան:

ՀՈԳ. Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորացս նորոգման. քանզի նորոգողն էից Հոգին էջ ի սբ վերնատանն. որով նորոգեցան դասք առաքելոցն: Այսօր հողանիւթեայ բնութիւնս ցնծայ ընդ Հօր հաշտութեան. քանզի որ եբարձ զՀոգին ի մարդկանէ զմարմին եղելոց. դարձեալ վերստին ըզնոյն պարգեւէ: Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն ցնծութեամբ զգալուստ սբ Հոգւոյն. որով զարդարեցան ի զգեստս լուսափայլս եւ գերապայծառս. երգեն ընդ սրովբէին զերեքսրբեանն:

ՆՉ: Թագաւոր խաղաղութեան. որ քաղցրութեամբ խնամես զքո զարարածս յիշեա Տէր զհոգիս ննջեցելոցն ընդ սբս քո. եւ դասաւորեա ի յաւուրն այցելութեան: Որ կոչեցեր ի դրանց մահու ըզսիրելին քո զՂազարոս. և ծանուցեր զմծութիւնդ ընդհանուր տիեզե-

րանց. լուսաւորեա Տէր զհոգիս ննջեցելոցն ընդ նոյս քո. եւ դասաւորեա ի յաւուրն այցելութեան: Ի տաճարի քում սրբութեան մատուցանեմք քեզ պաղատանս արտասուալից. պայծառացո Տէր զհոգիս ննջեցելոցն ընդ նոյս քո. եւ դասաւորեա ի յաւուրն այցելութեան:

Ազն: Ամպ լուսոյ և ամպ հովանի նոր կոյս. որ ցօղեցեր ի մեզ ըզցօղն երկնային. զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս: Անկէզ մորենի եւ սրովբէ հողեղէն նոր կոյս. քանզի պտուղն կենաց ի քէն տուաւ մեզ. զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս: Անէծից լուծիչ և քաւիչ մեղաց նոր կոյս. որ զանտանելին յէից ի գիրկս քո բարձեր. զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս:

Խչ. Խաչելն կենարար որ եղեւ մեզ փրկութիւն. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք: Որ ի Հօրէ լուսոյ լոյս ճառագայթեալ ի յերկրի. եւ գաւազան զօրութեան հաւատացելոց. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք: Փառք Հօր: Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս մեզ ցուցաւ. ի յօգնութիւն ընդդէմ թշնամւոյն. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք:

Այժմ և միշտ: Այլ ի բաց եդեալ ըզհրեշտական երկիւղին ըզկարծիս. նախաժամանեցին ի պատիւ այնորիկ. որ մահուամբն եղծ ըզմահ եւ անմահութիւն պարգեւեաց ազգի մարդկան:

Մաղթան. Փառք հրաշափառ յարութեան:

Աւետ— Յարութեան Բկ: Հաճեցար Տէր ընդ: 37:

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց ԱԶ:

Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց: Որ բարձրացար ի խաչին վասն ազգի մարդկան. առաքեա զքո զողորմութիւնդ ի պաշտօնեայս և յերկրպագուս. Աստուած հարցն մերոց: Որ զամենայնն յանձն առեր վասն մեր բարերար. խոնարհեա յարարածս քո յարութեամբդ քո. Աստուած հարցն մերոց:

Գ. Ըզտէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Որ յանապական յաթոռ նստի բարեբանեալն ի հրեշտակաց. կամաւոր չարչարանաց համբերեր մահու խաչի մարմնացեալ Բանն. անդադար օրհնեցէք և գովեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և: Եւ իջեալ ի գերեզմանն անապական մարմնով. զի նորոգեսցէ ըզհնութիւն մեռելութեան մերոյ յարութեամբն իւրով. անդադար օրհնեցէք և գովեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մեծացու. ԱԶ: Մեծացուցանեմք ըզքեզ որ ի Հօրէ Բանդ և անճառելի ծնունդ. որ ի կուսէն մարմնացար ցուցար մեզ: Փառք Հօր: Մեծացուցանեմք ըզքեզ որ կոխեցեր ըզմահ աստուածապէս. և լուծեր ըզկնիք մահու. որ ի խաչին բարձրացար կամաւ Հօր: Այժմ և: Մեծացուցանեմք ըզքեզ որ թաղեցար ի նոր ի գերեզմանի. և յերրորդ աւուր յարեար. որ ի յերկինս համբարձար փառօք Հօր:

Ողորմ. ԱԶ: Անճառելի Հօր էակից ի խաչ ելեր կամաւ Հօր. ողորմեա: Փառք Հօր: Անմահութեանց տըւող Քրիստոս ի գերեզմանի իջեր որպէս մարդ. ողորմեա: Այժմ և: Եւ յերրորդ աւուր յարեար յոյս յարութեան ցուցար մեզ. ողորմեա:

Տէրյէրէ․ ԱՁ։ Ընդ կանայսն իւղաբերսն առ քեզ առաւօտեմք կենդանւոյդ յարուցելոյ քո ընկալ և ըզմերս․ փոխանակ խնկոցն զօրհնաբանութիւնս։ Փառք Հօր։ Փոխանակ սուրբ աւետաւոր զուարթնոյն գթութի քո մեզ հանդիպեսցի յուսով գխոստութե մխիթարել ըզհոգիս եւ ըզոսկերսս։ Այժմ և։ Ընդ նոսին աւետաւորանութե քարոզեսցուք․ ըզքո միայնոյ զսքանչելիսդ․ որ յարեար ի մեռելոց ամենազօր թագաւոր անմահ։

Առաւ․ Երգ Յարութ․ Բկ։ Զյարութի։ Զյարուցեալն։ 53։

Առաւ․ Սաղմ․ Ձխէ։ Գովեա Եղէմ զՏէր։ Տես ի վերը։

Աւետարան ըստ Ղուկասու։ ԻԴ․ 36։

Յետ յարութե Տեառն մերոյ Յսի Քսի։

Մինչ դեռ զայն խօսէին, ինքն իսկ Յս եկաց ի մէջ նց, և ասէ ցնս․ խաղաղութի ընդ ձեզ․ ես եմ, մի երկնչիք։ Եւ զահի հարեալ երկնչէին․ և համարէին ոգի ինչ տեսանել։ Եւ ասէ ցնս․ զի՞ խռովեալ էք, և ընդէ՞ր խորհուրդք ելանեն ի սիրտս ձեր։ Տեսէք զձեռս իմ և զոտս, զի ես նոյն եմ․ շօշափեցէք զիս և տեսէք․ զի ոգի՝ մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք զի ունիմ։ Եւ զայս ասացեալ՝ եցոյց նց զձեռս և զոտս։ 40։

Քրզ․ Խնդրեսցուք։ Կեցո։ Աղ․ Քում ամենազօր։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Առաջին Սաղմս ՃԽԷ։

Գովեա Երուսաղէմ զՏէր։

Եւ օրհնեա զԱստուած քո Սիոն։

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց․ և օրհնեաց զորդիս քո ի քեզ։

Որ եդ զսահմանս քո ի խաղաղութի․ պարարտութե ցորենոյ լցոյց զքեզ։

Ո առաքէ զբան իւր յերկիր․ վաղվաղ ընթանան պատգամք նր։

Դնէ զձիւն որպէս զասր․ և զմէգ որպ փոշի ցանեաց։

Արկանէ զսառն որպ պատառս․ առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ։

Առաքէ զբան իւր և հալէ զնս․ շնչեսցեն հողմք և գնասցեն ջուրք։

Ո պատմէ զբան իւր Յակոբայ․ զարդարութի և զիրաւունս Իսրայէլի։

Ոչ այսպէս արար ամ ազգաց Տէր․ և զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա։

Աւետ․ Ղուկ։ Եւ ահա երկուք ի նոցանէ։ 506։

Մեսէդի Յարութեան Բկ։

Երգեցէք Տեառն երգ նոր ամենայն երկիր․ ծառայեցէք Տեառն ուրախութեամբ։

Մտէք առաջի նորա ցնծութեամբ․ ծաներուք զի նա է Տէր Աստուած մեր։

Համբարձի Բկ։

Քո յարութեանդ փառք վայելէ երկայնամիտ Տէր։ Փառք Հօր։ Օրհնեալ է քո յարութիւնդ Աստուած որ ըզմահ մահու ծանուցեր քոյին կամաւոր մահուամբդ․ քո յարութեանդ փառք վայելէ երկայնամիտ Տէր։ Այժմ և միշտ։ Գոչումն ահեղ հրեշտակին ի վիմին որ քարոզէր առ նը կանայսն յարեաւ Տէրն ի մեռելոց․ քո յարութեանդ փառք վայելէ երկայնամիտ Տէր։

Արշալ․ Սաղմ․ ԻԴ։ Քեզ վայելէ օրհնութի։ 484։

Աւետ․ Ղուկ։ Մինչդեռ զայն խօսէին։ 514։

Քրզ․ Խնդրեսցուք։ Կեցո։ Աղ․ Թագաւոր խաղաղ։

Ա. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ, ԳԶ.

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն գ. Ձ։

Իւղաբեր և սուրբ կանայքն ողբալով փութային եկին ի գերեզման քո Տէր. և խնդրեին զանապական մարմինդ։ Բարբառ աւետաւոր հրեշտակին որ գոչէր առ երջանիկ կանայսն. զի խնդրէք ըզկենդանին ընդ մեռեալս. քանզի յարեաւ Տէր և աւերեաց ըզդըժոխս։ Պատմեալ երանելի կանանցն զյարութիւն Տեառն աշակերտացն ուրախացեալք ընթանային Պետրոս և Յովհաննէս ի կենդանատու գերեզմանն։

Այսօր յարութիւն Քրիստոսի տօնեցէք հաւատացեալք. և մի * Աստուած Հայր ամենակալ։ Այսօր և կանայքն իւղաբերք աւետիս տալով առաքելոցն. օրհնեն զԱստուած։ Այսօր և հրեշտակք ի յերկինս հոգեւոր հնչմամբ երգով. օրհնեն զԱստուած։

Ի խաչանիշ փայտէն դըղըրդեցան դըժոխք. զօրութեամբ Հոգւոյն նորոգեցաւ երկիր. ով է սա որ խափանեաց ըզմահ։ Հրեշտակն աւետէր կուսին Մարիամու. սա է ի սկզբանէ բանն որ յառաջ քան զյաւիտեանս Որդին. սա է թագաւորն որ խափանեաց ըզմահ։ Յարեաւ յաւուր երրորդի. վէմք պատառեցան երկիր շարժեցաւ սասանեցան դըժոխք. սա է կենդանին յաւիտենից Քրիստոս։

*Փառաւորեալ է քո յարութիւնդ։ Որ յարեար ի մեռելոց յաւուր երրորդի Քրիստոս Որդի Աստուծոյ. փառաւոր։ Որ յահեղ բարբառոյ յարութեան քո Տէր երկիր շարժեցաւ. վէմք պատառեցան Քրիստոս Որդի Աստուծոյ. փառաւոր։

Ի ձայն ահեղ յարութեան քո Տէր զարհուրեցան զինուորացն դասքն. յարփիափայլ հրեշտակին իջմամբն. և դողալով շարժեցաւ երկիր։ Առաւօտեան ընդ կանանցն դիտելով ըզվիմափոր գերեզմանն. բերելով զիւղս անուշս. ի յօծումըն կենարար մարմնոյն. անպարագիր էականութեան։ Նա տեսեալ ըզքերովբէն վերանըստեալ ի վիմին. տարփողելով սըրբուհւոյն. ասէ դարձիր ողջոյն տուր փողոցն. քանզի յարեաւ որ յառաջն ասաց։

Զարմանալի յարութիւնն ըզպահապանսն զարհուրեցոյց. և հրեշտակն ի յերկնից իջեալ ի ձայն ահեղ յարութեան Աստուածորդւոյն. կանանցն աւետէր յարեաւ Աստուած։ Ի ձայնէ հրեշտակին զուարճացան տըրտմազգեաց կանայքն. և դարձան խնդութեամբ ետուն աւետիս առաքելոցն. եթէ յարեաւ նախապատմելին։

ՀՈԳ. Արեգակն արդարութեան Քրիստոս ծագեալ յաշխարհ հալածեաց ըզխաւարն անգիտութեան. և յետ մահուն և յարութեան համբարձաւ առ Հայր յորմէ ծագեաց. որ երկրպագի յերկնաւորաց և յերկրաւորաց ընդ Հօր և սուրբ Հոգւոյն. * վասն որոյ և մեք երկիր պագանեմք Հօր հոգւով և ճշմարտութեամբ։ Որ փոխանակ ծոցածին բանին որ ել յերկինս. առաքեցաւ աւետիքըն Հօր ի բարձանց Հոգին ճշմարտութեան. մխիթարել զորս յԱդամայ տրտմեցելոց և հրազինել զընտրեալ դասս առաքելոցն. վասն որոյ։ Այսօր տըրտմական և գիշերային լուծան երկունք ծննդեան նախամօրն. քանզի զծընեալըն մարմնով ի մահ և յապականութիւն. վերըստին ծնանի Հոգին յորդիս լուսոյ Հօրն երկնաւորի. վասն որոյ և։

Նոր։ Ի ձայն մեծի զուարթնոյն և ի հնչումն հրաշալի փողոյն. ուր հողացեալ մարմինք մարդկան նորոգին. *յայնմ աւուր յահեղին մինչև ցեամն և զմեր ըզմնչեցեալսն. և հանդերձ ընդ սուրբս քո։ Յորժամ նշան տէրունեան ճառագայթիւք փայլէ. և թագաւորըդ թագաւորաց փառօք տեսանիս. յայնմ աւուր։ Յորժամ ատեան դատաստանին դնի. և դպրութիւնք հրաշէցն բանին. յայնմ աւուր։

Աշխ։ Լոյս լուսոյ մայր և կենարար Բանին բնակարան. *քեզ երանիցեն ազգք և ազինք ամենայն։ Ստեղծողին մայր և հրնութեան կերպի նորոգողին. քեզ երան։ Լոյս ծագեցաւ ի քէն նըստելոցս ի խաւարի. քեզ երան։

Խաղ։ Հրաշափառ տեսութիւն ի կաթողիկէ եկեղեցւոյ տեսանի. գործարան մահու մահուամբ աւերեալ գոլ կենաց. և մահացուցիչ նախաստեղծին մահուամբ գոլ շնորհող յարութեան։ Պարգևէ գերագոյն պարգևի այսօր հաւատացելոց. և մահացուն ի կենաց առնու իւր զօրըս վերելեանս. և թողեալ վերադարձի բնակիլ ի տեղւոջն սրբութեան։ Փառք Հօր։ Եկայք ժողովուրդք ընդ հոգեղինացն սպասաւորեսցուք. երկրպագեսցուք ծածկին սուրբ նշանիս. փառաւորեսցուք ըզհրաշագործ պարգևաց տուողն։

Այժմ և։ Եկայք լուսազգեացք յօրհնութիւն նոր օրհնեսցուք զՏէր. քանզի մարմինն որ ի մէնջ էառ ի հրեշտակաց երկրպագութիւն առնու. ի սրովբէից և ի քրովբէից։

Մաղթ. Փառք հրաշափառ յարութեան։

Աւետ. Յարութեան. Գ Ձ։ Տէր թագաւորեաց։ 37։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Ա Ձ։

Ընդ երիս մանկունս օրհնաբանողն. բարեբանեմք զքեզ Քս. Աստուած հարցն մերոց։ Որ իջեր ի յերկնից խոնարհութեամբ. և խաչիւ համբերեալ փրկեցեր զմեզ. Աստուած հարցն մերոց։ Թաղեցար ի նոր ի գերեզմանի. և յարուցեալ նորոգեցեր զտիեզերս. Աստուած հարցն մերոց։

Գ. Ը զՏր. օրհնեցէք *բարձր արարէք զնա յաւիտեան։ Փառք Հօր։ Զթագաւորն անման և զԱստուած յաւիտենից. ամենայն ժողովուրդք բարեբանեսցուք. բարձր արար։ Այժմ և։ Որ մահուամբն զմահ խափանեաց. և յարութեամբ իւրով զյարութիւն մեզ պարգևեաց. բարձր արա։

Մեծաց. Ա Ձ։ Որ զհրեշտակին զձայնն լուեալ հիացեալ բերկրեցար. *բարեխօսեա վասն մեր. մեք օրհնաբանեմք զօրհնեալդ ի կանանց։ Փառք Հօր։ Որ զհօրն Աստուած յորովայնի քում կրեցեր անկիզելի մորենի. բարեխօս։ Այժմ և միշտ։ Որ զանշօշափելին յէից ի գիրկս քո բարձեալ դիեցուցեր կաթին սնուն. բարեխօս։

Ողորմ. Ա Ձ։ Որ խոնարհեցար ի յերկնից. և իջեր ի յերկիր միածին Որդի և Բանդ Այ. ողորմեա բանաւոր հօտի։ Փառք Հօր։ Որ կանգնեցեր զխաչ քո ի մէջ երկրի. և ելեալ բարձրացար փրկեցեր զտիեզերս. ողորմ։ Այժմ և միշտ։ Թաղեցար ի նոր ի գերեզմանի. և յարուցեալ յերրորդ աւուր ի յերկինս համբարձար. ողորմ։

Տէրյերկն. Ա Ձ։ Որ անճառ էութեամբ Հօր ես փառակից չարչարիլ մարմնով յանձն առեր վասն մեր.

* մշտընջենաւոր օրհնութե ի հրեշտակաց օրհնեալ ես
Տէր: փառք Հօր: Որ էակդ ես ընդ Հօր եւ ընդ Հոգւոյն.
խաչեցար և թաղեցար կամաւ Հօր վասն մեր. մշ-
տընջե: Այժմ և: Որ միւսանգամ գալոց ես հայրենի
փառօք. շնորհելով ածապէս յարուցի տիեզերաց.
ամ արարածոց յաւիտենից օրհնեալ ես Տէր:

Առաւ. Երգ Յարութ. Զյարունի: Որ ելն ի բարձ: 53:

Առաւօտու Սաղմոս ՂԸ:

ԿՑ. Բարձր արարէք զՏէր Ած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

ՓԽ. Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք. որ նստի ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

Տր ի Սիոն մեծ է. և բարձր է ի վր ամ ժողովրդոց:

Խոստովան եղիցուք անուան քում մեծի, զի ահաւոր և սուրբ է. և պատիւ թագաւորի զիրաւունս սիրէ:

Դու պատրաստեցեր զուղղութի. զիրաւունս և զարդարութի Յակովբայ դու արարեր:

Բարձր արարէք զՏէր Ած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Մովսէս և Ահարոն երիցունք նորա. Սամուէլ ընդ այնոսիկ որ կարդան զանուն նր:

Կարդային առ Տէր և նա լսէր նց. և ի սիւն ամպոյ խօսէր ընդ նոսա:

Պահէին զվկայութիս նր, և զհրամանս զոր ետ նց:

Տէր Աստուած մեր դու լսէիր նոցա. Աստուած դու քաւիչ լինէիր. վրէժխնդիր ի վերայ ամ գործոց նց:

Բարձր արարէք զՏէր Ած մեր. երկիր պագէք ի լեառն սուրբ նր, զի սուրբ է Տէր Ած մեր:

Աւետարան ըստ Մատթէոսի: Ե. 1:

Տէրն մեր Յն Քն

Նա տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն. և իբրև նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նր. և բա-

ցեալ զբերան իւր ուսուցանէր զնս, և ասէր: Երանի աղքատաց հոգւով, զի նց է արքայութի երկնից: Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին: Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր: Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութե, զի նոքա յագեսցին: Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութի գտցեն: Երանի այնոցիկ որ սրբ են սրտիւք, զի նոքա զԱծ տեսցեն: Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Այ կոչեսցին: Երանի որ հալածեալ իցեն վս արդարութե, զի նց է արքայութի երկնից: Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամ բան չար զձէնջ սուտ վասն իմ: Ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին: 12:

Քրզ. Խնդրեսցուք: Կեցո: Աղ. Քում ամենազօր:

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Առաջին Սաղմ: ԿՑ. Բարձր արա: ՓԽ. Տր թագաւ: 520:

Աւետարան Ղուկասու: ԻԴ. 36:

Յետ յարութե Տեառն մերոյ Յսի Քսի:

Մինչ դեռ զայն խօսէին, ինքն իսկ Յս եկաց ի մէջ նց, և ասէ ցնս. խաղաղութի ընդ ձեզ. ես եմ մի երկնչիք: Եւ զահի հարեալ երկնչէին. և համարէին ոգի ինչ տեսանել: Եւ ասէ ցնս. զի՞ խռովեալ էք, և ընդէ՞ր խորհուրդք ելանեն ի սիրտս ձեր: Տեսէք զձեռս իմ և զոտս, զի ես նոյն եմ շօշափեցէք զիս և տեսէք. զի ոգի՝ մարմին և ոսկերս ոչ ունի, որպ զիս տեսանէք զի ունիմ: Եւ զայս ասացեալ՝ եցոյց նց զձեռս և զոտս: 40:

Մեսեդի Յարութեան ԳՁ:

Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ. որ արար զնշանս և զարուեստս ի վերայ երկրի:

Ած մեր ապաւէն և զօրութիւն. օգնական ի վերայ նեղութեանց, որք գտին զմեզ յոյժ:

Համբարձի ԳՁ:

Իւղաբեր և սուրբ կանայքն ողբալով փութապէս եկին ի գերեզմանն քո Տէր. ի խնկել զանապական մարմինդ: Փառք Հօր: Բարբառ աւետաւոր հրեշտակին որ գոչէր առ երջանիկ կանայսն. զի խնդրէք ըզկենդանին ընդ մեռեալս. քանզի յարեաւ Տէր և աւերեաց ըզդժոխս: Այժմ և: Պատմեալ երանելի կանանցն զյարութիւն Տեառն աշակերտացն. ուրախացեալք ընթանային Պետրոս և Յովհաննէս ի կենդանատու գերեզմանն:

Արձակման Սաղմոս ԺԴ:

Տէր ով կացցէ ի խորանի քում. կամ ով բնակեսցէ ի լեառն սբ. քո:

Որ գնայ անբիծ, գործէ զարդարութիւն. խօսի զճշմարտութիւն ի սրտի իւրում:

Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով. և չար ընկերի իւրում ոչ արար:

Նախատինս ի մերձաւորաց ոչ առնու. արհամարհեալ է առաջի նր. չարագործ:

Զերկիւղածս Տեառն փառաւոր առնէ. որ երդնու ընկերի իւրում և ոչ ստէ:

Զարծաթ իւր ի վարձու ոչ տայ. կաշառ ի վերայ իրաւանց ոչ առնու. որ զայս առնէ՝ նա մի սասանեսցի յաւիտեան:

Աւետ. Մատթ: Եւ տեսեալ զժողովուրդսն: 520:

Քրզ. Խնդրեսցուք: Կեցո: Աղ. Թագաւոր:

Ա. ՈՒՐԲԱԹ, Գ Ա.

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն ԳԿ:

Յարեաւ Տէրն ի գերեզմանէն: Ընդ յառնել փրկչին մերոյ. երկիր շարժեցաւ. վէմք պատառեցան: Ճառագայթեալ լոյսն ի վերայ վիմին. զարհուրեցոյց ըզպահապանսն. առ դրանըն գերեզմանին:

Զածայն ըզգերեզմանաւն բոլորեալ դասք հրեշտակաց. տեսանէին ըզՏէրըն յարուցեալ ի գերեզմանէն: Անձամբ կանայքն եկին ի գերեզման փրկչին. ածին իւղս և խունկս. յօծանել զմարմինըն տէրունական: Լուսապայծառ հրեշտակն նստէր ի վերայ վիմին. աւետարանէր կանանցն. յարեաւ փրկիչըն տիեզերաց:

Ընդ քո յարութիւնդ օրհնեմք մարդասէր. *աղաղակելով Տէր փառք քեզ. Զոր օրհնեն սերովբէքն և գովեն քերովբէքն. աղաղակեն: Անդադար բերանով անհանգիստ բարբառով. աղաղակելով:

Ընկալ և մեր զօրհնութիւնս հրեշտակացն երգեմք և ասեմք փառք յարութեան քո Տէր: Որ խաչեցար վասն մեր թաղեցար և յարեար ազատեցեր ի մեղաց: Սբ Ած սուրբ և հզօր ես անմահ Թագաւոր:

Տեսիլ փայլականաձեւ զուարթնոյն. ի վիմին հնչեցեալ առ խնկազգեաց կանայսն. փարատեցոյց զերկիւղալից տրտմութիւն: Պահապանքն պակուցեալ անհամբերք լինէին. և կանանցն աւետարանեալ.

մահ մահու յաղթեաց և ծանուցաւ մահ։ Քարոզս առաքելով առ երջանիկ առաքեալսն․ փութացարուք ի գալիլեա․ եւ տեսանիցէք զկենագործողն ըզՔն։

Յանճառ փառաց խոնարհեցար․ և ըզգեցար ըզհողեղէն բնութիւնս․ վերառեր զանկեալն ի գլորմանէ յանմահական ի կեանս․ * ընդ քեզ օրհնեմք անապականն Բանդ Աստուած։ Անպարտական նըդ մահու․ դատապարտեալ ի վերայ խաչին․ որ փոխանակ դառնութեան պտղոյն արբուցեր մեզ ի տիգախոց կողէդ․ ընդ քեզ օրհ։

ՀՈԳ․ Զանըսկըզբնաբար բղխումն ի Հօրէ և յՈրդւոյ զՀոգին ճշմարիտ․ որ հընչմամբ ձայնի էջ ի վերնատունն այսօր նման սաստիկ հողմոյ․ * զոր փառաւորեմք հոգեւոր երգով։ Զհամագոյակիցն Հօր եւ Որդւոյ զբաշխողն շնորհաց․ որ ի հրեղէն լեզուս բաժանեալ զբանն ընտրութեան լեզուաց շնորհեաց սուրբ առաքելոցն․ զոր փառաւ։ Զաղբերն իմաստութն ըզկատարեալն անձնաւորութբ․ որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս․ զոր փառ։

ՆՆՋ։ Փառք քեզ Արծ փառաւորեալ յաւիտեան․ որ կենարարդ ես մարմնոց․ եւ գոյացուցիչ հոգւոց մեր ննջեցելոցն։ Որ բարձրացար ի խաչին վասն Ադամայ նորոգմանն․ եւ իջանելով քո ի դժոխս․ աւար առեր ըզգերեալս։ Ըզգինս արեան քո յիշեա կենագործող աշխարհի․ եւ հանգըստեան արժանաւորեա յերուսաղէմն վերին։

ԱՅՆ։ Աստուածածին խորան լուսոյ անվայրափակ արփւոյն կենաց․ որ եղեր արեւելք արեգականն արդարութեան․ եւ նըստելոցս ի խաւարի լոյս ծագեցեր․ * վասն որոյ ամենեքեան ընդ քեզ միշտ մեծա-

ցուցանեմք։ Անապական տաճար եւ մորենի անկիզելի․ որ զանշէջ հուր աստուածութեան ի քեզ տարեալ կրեցեր․ որով բնութեանս կիզեալ շիջաւ կրից բոց․ վասն որոյ։ Կենդանի տապանակ կտակարանաց նորոյ ուխտիս․ որով եղեւ յերկիր աւետեաց հորդեալ․ հոգւով ի քեզ տպաւորեալ Բանին․ վասն որոյ։

ԽՉ։ Ով քառաթեւ լուսածին գերապանծ նիշ կառուցող կենացն ամենից․ միշտ բազկատարած առ քեզ Էն։ Քառակուսի աղանց հովանի և պահապան ի յելս և ի մուտս․ փրկութիւն ի յայսոց եւ պարիսպ ամրութեան։ Փառք Հօր։ Դրօշմ ըզգայութեան եւ կնիք ի դէմս ամենից․ դու եւ յաստուածային նըշն կատարիս խորհրդոց․ յորմէ արեգակնային փայլեն ճառագայթք։

Այժմ և։ Առաքեցար ի դժոխս․ ցուցանելով ըզզօրութիւն աստուածութեանդ․ ջախջախեցեր ըզդրունս խարգախողին խափանեցեր ըզզօրութիւն մահու․ ընդ քեզ օրհնեմք անապականն Բանդ Աստուած։

Մաղթ․ Փառք հրաշափառ յարութեն։

Ալէլու Յարութեան Գկ։ Օրհնեցէք մանկունք։ 37։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց ԱՁ։

Լոյսդ որ ի հրեղէն յաթոռ բարձրացեալ հանգչիս․ երեքսրբեան ձայնիւ ի դասուց հոգեղինաց օրհնաբանիս․ Աստուած հարցն մերոց։ Պատկերակից եղեր հողեղէն բնութեանս․ մարդասիրապէս գթացար․ կուսական ծննդեամբդ ազատեցեր ըզմեզ․ Աստուած հարցն մերոց։ Քանզի միոյն յանցանօք ամենեքեան մեռաք․ այլ ի խաչելն քո Քս ամենեքեան նորոգեցաք ի փառս․ Արծ հարցն մերոց։

Գ. Ըզտէր. * օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Փառք Հօր: Որ բազմեալ հանգչիս յանարուեստ ի յաթոռ. ընդ մահ խաչին ի յանձն էառ վասն ազգի մարդկան. օրհնեցէք: Այժմ և միշտ: Եւ ի կողահոս արեան աղբերէն նորոգեցան արարածք և անմահացան. օրհնեցէք և:

Մեծացու. ԱԶ: Ըզքեզ երևեալ դուռն անշղկելի մարգարէին. ընդ որ ոչ ոք էանց եթէ ոչ Ած միայն Ածածին կոյս. օրհնութեամբ մեծացուցանեմք: Փառք Հօր: Ըզքեզ որ ի մորենւոջն առ Մովսիսիւ մարգարէին. ըզնոր խորհուրդ կուսին յայտնեցեր մարդկան ազգի. օրհնութեամբ մեծացուցանեմք: Այժմ և: Ըզքեզ որ ի Հօրէ անժամանակապէս եւ ի մօրէ անթարգմանաբար. ի ժամանակի ծնընդեան ի բոլորից փրկութեն յայտնեցար Որդի Բարձրելոյն. օրհնութեամբ մեծացուցանեմք:

Ողորմ. ԱԶ: Անսկիզբն Բանդ անբաժանելի ծնունդ Հօր. որ վասն մեր մարմնացար ի կուսէն. ընդ մահ խաչին ի յանձն առեր եւ թաղեցար յերկրի: Փառք Հօր: Այսօր զանմահ և զանապական մարմինն տեառն. կանայք ոպ մեռեալ խնկել խնդրէին. այլ հրեշտակին ձայնեալ ասէր. զի խնդրէք ըզկենդանին ընդ մեռեալս: Այժմ և: Նա ըզթըշնամին կապեաց եւ ըզդըժոխս աւերեաց. յարուցեալ ի մեռելոց Քս Ած. պարգևեաց ազգի մարդկան զմեծ զողորմութիւն:

Տէրյերկն. ԱԶ: Սոսկալի տեսիլ հրեշտակին. ի փառաւոր քո գերեզմանին. ըզպահապանսն զարհուրեցոյց: Իմանալին մարմնական ձայնիւ. բարբառէր առ նս կանայսն. փարատեցոյց զսուգ եւ զտրտմութի:

Ով կանայք ըզգաստք Ածասէրք. զամենեցուն ըզյոյսն եւ զյարութի. ընդ մեռեալս զի խնդրէք:

Փայլակնաձեւ հրեշտակն իջեալ յերկնից զարհուրեցոյց ըզպահապանսն. եւ սուրբ զկանայսն խնդութեամբ լցոյց: Փառք Հօր: Ածասէր կանայք ցնծացէք այսօր յարեաւ Քս ի մեռելոց. եւ լոյս մեծ աշխարհի ծագեաց: Այժմ և: Աւետիս լուեալ ի սբ հրեշտակէն ընթանային առ աշակերտսն. պատմելով նոցա զյարութիւնն տեառն:

Առաւ. Երգ Յարութ.: Զյարութի: Որ եղն ի բարձ: 53:

Առաւօտու Սաղմոս ՂԷ:

ԿՑ. Տեսին ամ ծագք երկրի զփրկութի Այ մերոյ:

Փխ. Օրհնեցէք զՏէր յօրհնութի նոր, զի սքանչելիս արար:

Փրկեաց նմա աջ իւր, և բազուկ սբ իւր:

Եցոյց Տէր զփրկութի իւր. առաջի ազգաց յայտնեաց զարդարութի իւր:

Յիշեաց ողորմութեամբ իւրով զՅակոբ. ճշմարտութեամբ իւրով զտունն Իսրայելի. և տեսին ամ ծագք երկրի զփրկութի Այ մերոյ:

Աղաղակեցէք առ Տէր ամ երկիր. օրհնեցէք, ցնծացէք և սաղմոս ասացէք:

Սաղմոս ասացէք Այ մերոյ օրհնութեամբ. օրհնութեամբ և ի ձայն սաղմոսաց:

Ի ձայն օրհնութեան կուածոյ փողոյ. օրհնութեամբ, ցնծութք և ի ձայն եղջեր փողոյ աղաղակեցէք առաջի թագաւորին տեառն:

Խռովեսցի ծով լրիւ իւրով. տիեզերք և ամ բնակիչք նր. և գետք ծափս հարցեն ի միասին ձեռամբ:

Լերինք ցնծասցեն առաջի տեառն. զի գայ և հասեալ է Տէր ի դատել զերկիր:

Դատի զաշխարհս արդարութբ՟, և զժողովուրդս իւր ուղղութեամբ։

Աւետարան ըստ Յովհաննու։ ԻԱ. 1։

Յետ յարութեան Տեառն մերոյ Յս՟ի Քս՟ի։

Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր Յս՟ աշակերտացն իւրոց առ ծովեզերբն Տիբերեայ. և յայտնեաց այսպէս։ Էին ի միասին Սիմովն Պետրոս և Թովմաս անուանեալն Երկուորեակ և Նաթանայէլ՝ որ ի Կանայ Գալիլեացւոց, և որդիքն Զեբեդեայ, և այլք յաշակերտաց անտի երկու։ Ասէ ցնս՟ Սիմովն Պետրոս. երթամ ձուկն որսալ։ Ասեն ցնա. գամք և մեք ընդ քեզ. գնացին և մտին ի նաւ, և յայնմ գիշերի կալան և ոչ ինչ։ Իբրև այգ եղև՝ կայր Յս՟ յեզր ծովուն, բայց ոչ ծանեան աշակերտքն թէ Յս՟ իցէ։ Ասէ ցնս՟ Յս՟. մանկունք, մի՞ թէ ունիք ինչ ուտելոյ։ Պատասխանի ետուն և ասեն ցնա. ոչ։ Ասէ ցնս՟. արկէք յաջակողմն նաւին զուռկանդ, և գտանիցէք։ Արկին, և ոչ կարէին ձգել ի բազմութէ՟ անտի ձկանցն։ Ասէ աշակերտն այն զոր սիրէրն Յս՟ ցՊետրոս. Տէր է այն։ Սիմոն Պետրոս իբրև լուաւ թէ Տէր է, արկաւ զիւրև զսփածանելին՝ քանզի մերկ էր, և ընկէց զինքն ի ծովն։ Եւ այլ աշակերտքն նաւաւն իսկ գային, քանզի չէին հեռի ի ցամաքէն՝ այլ իբրև երկերիւր կանգնաւ, քարշէին զգործին հանդերձ ձկամբն։ Իբրև ելին ի ցամաք՝ տեսանեն կրակետղ կայծականց, և ձուկն մի ի վերայ և հաց։ Ասէ ցնոսա Յս՟. բերէք ի ձկանց այտի՝ զոր դուքդ կալարուք այժմիկ։ Եմուտ Սիմովն Պետրոս, և ձգէր զգործին ի ցամաք՝ լի մեծամեծ ձկամբք հարիւր և յիսուն և երիւք. և այնչափ ինչ կայր, և ոչ պատառեցաւ գործին։ Ասէ ցնս՟ Յս՟. եկայք ճաշեցէք։ Եւ ոչ ոք յաշակերտացն իշխէր հարցանել՝ թէ դու ո՞վ ես. զի գիտէին թէ Տէրն է։ Գայ Յս՟ և առնու զհացն և տայ

նց՟, նոյնպէս և զձուկնն։ Զայս երից անգամ երևեցաւ Յս՟ աշակերտացն՝ յարուցեալ ի մեռելոց։ 14։

Քրզ. Խնդրեսցուք։ Կեցո։ Աղ. Քում ամենազօր եւ հրաշալի յարութեանդ։

ՅԵՐԵԿՈՅԻՆ

Առաջին Սաղմ. ՂԷ։ ԿՑ. Տեսին ամ՟։ Փխ. Օրհն. 527։

Աւետարան ըստ Մատթէոսի։ Ե. 1։

Տէրն մեր Յս՟ Քս՟։

Իբրև տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն. և իբրև նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նր՟. և բացեալ զբերան իւր ուսուցանէր զնս՟, և ասէր։ Երանի աղքատաց հոգւով, զի նց՟ է արքայութի՟ երկնից։ Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։ Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր։ Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութե՟, զի նոքա յագեսցին։ Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութի՟ գտցեն։ Երանի այնոցիկ որ սբ՟ են սրտիւք, զի նոքա զԱծ՟ տեսցեն։ Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Այ՟ կոչեսցին։ Երանի որ հալածեալ իցեն վն՟ արդարութե՟, զի նց՟ է արքայութի՟ երկնից։ Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զա՟մ բան չար զձէնջ սուտ վասն իմ։ Ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին։ 12։

Մեսեդի Յարութեան ԳԿ։

Աստուած մեր յերկինս և յերկրի. զամենայն զոր ինչ կամեցաւ՝ և արար։

Յելանելն Իսրայէլի յԵգիպտոսէ՝ տանն Յակովբայ ի ժողովրդենէ այլազգեաց։

Համբարձի ԳԿ:

Յարեաւ Տէրն ի գերեզմանէն: փառք Հօր: ընդ յառնել փրկչին մերոյ երկիր շարժեցաւ վէմքն պատառեցան: Այժմ և: Ճառագայթեալ լոյսն ի վերայ վիմին զարհուրեցոյց ըզպահապանսն առ դրանն գերեզմանին:

Արձակման Սաղմոս ՂԲ:

Տէր թագաւորեաց՝ վայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ:

Հաստատեաց զաշխարհ, զի մի սասանեսցի. պատրաստ է աթոռ քո, ի սկզբանէ յաւիտենից դու ես:

Ամբարձան գետք Տէր. ամբարձին գետք զձայնս իւրեանց. յարիցեն գետք ի գնացս իւրեանց:

Ի ձայնէ ջուրց բազմաց սքանչելի եղեն զբօսանք ծովու:

Սքանչելի ես դու Տէր ի բարձունս. վկայութեանց քոց մեք յոյժ հաւատացաք:

Տան քում վայելէ սրբութիւն Տէր ընդ երկայն աւուրս:

Աւետարան Յովհ. Յետ այսորիկ դարձեալ: 528:

Քրզ. Խնդրեսցուք: Կեցո: Աղ. Թագաւոր:

Ա. ՇԱԲԱԹ, ԴԶ.

Տօն է Գլխատման Յովհաննու Մկրտչին:

Ի ԳԻՇԵՐԻՆ

Օրհնութիւն ԴԶ:

Փառաբանեալ Հօր Որդի որ վասն մեր խաչեցար. զդժոխս աւերեալ յարեար յաւուր երրորդի. փառք յարութեան քո Տէր: Հրեշտակապետին իջուամբ. որ ըզպահապանսն երկիւղիւ զարհուրեցոյց առ դրանն գերեզմանին. * փառք յարութեան քո Տէր: Եւ ըսքանչելիք կանանցն աւետարանէր ասելով. յարեաւ Քս յարուցիչն մեռելոց. փառք:

Կանանցն կանխելով. ի թաղումն կենդանւոյն տեսին ըզվէմն ի դրանցն ի բաց մերժեալ: Թափուր ըզգերեզմանն. և ունայն տեսանէին. և տրտմութեամբ լային յուսահատեալք: Մայր խաչեցելոյն զի լաս տրտմազգեցեալ. քանզի Քս փառօք մեծաւ յարեաւ:

Ահագին ձայնիւ որդ քո Քս. ի վերայ խաչին գոչեցեր զարարածս ամենայն. զերկնային և զերկրաւոր բնութիւնս: Ահագին երեւումն հրեշտակին. զարհուրեցոյց ըզկանայսն ասելով. զի խնդրէք ըզկենդանին ընդ մեռեալս: Եւ յահէ զօրութեան Աստուածորդւոյն. զարհուրեցան կարապետքն դժոխոցն ասելով. համբարձէք իշխանք ըզդրունս ձեր ի վեր:

Որ ի վերդ ես քան ըզմիտս և զխորհուրդս. համագոյակցն եղելոցս արարող. ի Հօրէ առաքեցար վասն մեր և մարմնացար ի սրբոյ կուսէն: Անքննելին իջութեամբ Ած. տնօրինեցար յարգանդի կուսին. ապրեցուցանել զնախաստեղծին ծնունդն. և վերըստին նորոգել ի փառս: Ոչ շատացար մարդ եղանել Ած. այլ և խաչի համբերեալ ըզթաղումն յանձն առեր զերեքօրեայ. և յարուցեալ նորոգեցեր զաշխարհս:

Օ յարութիւն Աստուածորդւոյն. հրեշտակապետն այսօր աւետէր կանանցն ասելով. * յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն: Ընթացեալ կանանցն խընդութեամբ պատմէին աշակերտացն ասելով. յարուցեալ: Վն որոյ և մեք ընդ հրեշտակին գոչեսցուք զյարութիւն Քսի. որ փրկեացն ըզմեզ ի ձեռաց մահու:

* փառաւորեալ անճառելի յարութիւնն Քրիստոսի։ Որ կամաւ Հօր և Հոգւոյն ի վերայ քառաթեւին պատարագեալ գառն Ա՟յ․ փառաւորեալ։

ՀՈԳ․ Առաքելոյ աղաւնոյ․ իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց․ ի նմանութիւն լուսոյ փայլման հրաշալինեաց անկիզելի զաշակերտսն․ մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն։ Աննիւթական աղաւնի՝ անքննելի որ քննէ զխորս Ա՟յ․ զոր առեալ ի Հօրէ պատմէ զահաւոր և զմիւսանգամ գալուստն․ զոր քարոզեցին համագոյական։ Օրհնութիւն ի բարձունս․ երգելն ի Հօրէ՝ և յՈրդւոյ Հոգւոյն սրբոյ․ որով առաքեալքն արբեցան աննմանական բաժակաւն․ եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս։

ՆՆՉ։ Ժամանակ դարձի իմոյ եհաս ի յերկիր․ արդ Տէր ընկալ ըզծառայս քո․ * և Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։ Խոստովանող հոգիս․ որ ելից զունայնութիւն ընթացս աշխարհի․ արդ Տէր ընկալ ըզծառայս քո․ և Հոգի։ Ի վերջնումն աւուր մեծի յորժամ առնես այցելութիւն քոյոց սիրողաց․ յայնժամ խնայեա ի ծառայս քո․ եւ Հոգի։

ԱՅՆ։ Ծածկին մայր լուսոյ ոչ կոյս լուսեղէն տաճար․ որում երկինք չէին բաւական առ ի բնակութիւն ի քեն մարմնացաւ։ Ըզքեզ ամենօրհնեալ որ միայն ի կանայս օրհնեալ․ կրելով ի քեզ զանտանելի զբնութիւն․ օրհնութեամբ մեծացուցանեմք։ Ուրախ լեր աթոռ փրկութեան յոյս հաստատութեան մարդկան․ միջնորդ օրինաց և շնորհաց․ օրհնութեամբ անդադար գոհութեամբ մեծացուցանեմք։

ԽՆ։ Ի թաբօր ի լերին ձեւացուցեր ըզքո բնութիւն անտանելի գոյացութեան․ * ընդ որս և մեք ցընծութեամբ

երգեմք քեզ ողորմեա մեզ մարդասէր։ Աշակերտք հիացեալ բարբառէին ըզխորհուրդս ի տագնապել սրտից իւրեանց․ ընդ որս և։ Սքանչելի մեծ խորհուրդ զնորոգութեանդ․ քոց սրբոց առաքելոցն ծանուցեր բարերար․ ընդ որս և։ Սոսկալի հիացմամբ զայլակերպութիւն քո Տէր․ առաքելոցն տեսեալ յօրինէին քեզ տաղաւար․ ընդ որս։ Փառք Հօր։ Հովանացեալ ամպ լուսեղէն․ եւ ըզհայրականն լուեալ ըզձայն․ եթէ դա է որդի իմ սիրելի․ ընդ որս։

Այժմ և։ Քո անմահ թագաւորն հետաղօտեալ ի դըժոխս․ կապեաց զիշխանսն մեղսասէր զմահու գերեալսն յԱդամայ կենդանագործեաց ի կեանս անմահ․ փառաւորեալ անճառելի յարութիւնն Քրիստոսի։

Մաղթ․ Փառք հրաշափառ յարութեան։

Աւետ․ Յարութեան Դ․Զ։ Գովեա Երուսաղէմ։ 37։

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց ԱԶ։

Նախայաւիտեան Բանին պատմող․ առաքեցար աշխարհի ոբ՝ Յովհաննէս մկրտիչ․ աղաչեա զԱստուած հարցն մերոց։ Որ ըզհրեշտակացն անհասանելին․ յարդանդի կուսին տեսեալ քո և երկրպագեալ․ աղաչեա զԱստուած հարցն մերոց։ Որք հաւատով ըզյիշատակս քո տօնեմք․ եւ անդադար ձայնիւ ըզքեզ ունիմք բարեխօս․ աղաչեա զԱստուած հարցն մերոց։

Գ․ Ըզ Տէր․ Գովեցէք ըզՏէր Քրիստոս միշտ եւ յաւիտեան։ Զմեծին ի ծնունդս կանանց զկարապետին եւ զմկրտչին Յովհաննու․ զառաքինութեանն ըզհանդէս տօնելով այսօր ի ձայն հնչման․ գովե-

ցէք ըզՏէր Քրիստոս միշտ եւ յաւիտեան։ Փառք Հօր։ Խայտացելոյն յորովայնի հոգւով ի ծննդեանն Քնի․ որ ի փրկութիւն աշխարհի յայտնեցաւ Ած Բանն․ գովեցէք ըզՏր Քրիստոս միշտ եւ յաւիտեան։ Այժմ եւ։ Ցանապատի բարբառոյ ձայնի եւ ըզմըկրտչին Յովհաննու․ զյաղթանակ մարտի ըզգըլխատմանն կատարեմք այսօր ըզյիշատակ․ գովեցէք ըզՏէր Քրիստոս միշտ եւ յաւիտեան։

Մեծացո․ ԱԶ։ Որ զԲանն Ած բանական եղեր ընդունելի յորովայնի միշտ կոյս․ զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս։ Փառք Հօր։ Որ էից լուսոյն արժանի եղեր բառնալոյ ի գիրկս քո մարմնով․ զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս։ Այժմ եւ։ Անարատ տաճար տընորհենութեան կոչեցար Հոգւոյն սրբոյ միշտ կոյս․ զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս։

Ողորմ․ ԱԶ։ Կարապետ արքայութեան երկնից Ս․ Յովհաննէս մըկըրտիչ․ որ եղեւ աշխարհի քարոզ փրկութեան յաւիտենից․ աղօթիւք սորա Տէր լուր մեզ եւ ողորմեա։ Փառք Հօր։ Որ առաւել քան ըզմարգարէս մեծ ի ծնունդըս կանանց․ որ ըզքեզ մեզ յայտնեաց՝ Ած եւ մարդ յերկրի երեւեալ․ աղօթիւք սորա Տէր լուր մեզ եւ ողորմեա։ Այժմ եւ։ Զայն բարբառոյ յանապատի կատարիչ խորհրդոյ․ գըլխատեալ այսօր ի Հերովդիայ․ վերափոխեցաւ ի դասս անմարմնոցն․ աղօթիւք սր Տր լուր մեզ եւ ողորմեա։

Տէր յերկնից ԱԶ։ Երկնաքաղաքացին Յովհաննէս մեծ ի ծնունդըս կանանց․ քարոզէր յանապատի ազդարարող բարբառով․ ըզծագումըն լուսոյ արեգականն արդարութեան։ Փառք Հօր։ Ճըշմարիտ մար-

գարէ եւ ձեռնադրող Որդւոյն Այ․ յառաջընթաց կարապետ եւ պատմող ածային օրինաց․ հորդէր զճանապարհս թագաւորին յաւիտենից։ Այժմ եւ։ Յանօրէն գինարբուսըն մոլեգնեալ Հերովդիադա․ ի պարգեւի մասին խընդրէր ըզգլուխ մարգարէին․ չիջուցանել զարուսեակն եւ զանաղօտ լապտերն։

Առաւ․ Երգ Յարութ․ ԴԶ։ Զյարութի։ Որ համբեր։ 53։

Առաւօտու Սաղմոս ՁԸ․ է Նխ։

ԿՑ․ Աստուած փառաւորեալ է ի խորհուրդս սրբոց իւրոց մեծ եւ ահաւոր ի վր այնոցիկ՝ որ շուրջ են զնովաւ։

Փխ․ Զողորմութիւնս քո Տէր յաւիտեան օրհնեցից․ յազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնս քո բերանով իմով։

Ասացեր թէ աշխարհս ողորմութբ շինեսցի․ յերկինս պատրաստ եղիցի ճշմարտութի քո։

Եդի ուխտ ընտրելոց իմոց․ երդուայ Դաւթի ծառայի իմոյ։

Յաւիտեան հաստատեցից զզաւակ քո, եւ շինեցից յազգէ յազգ զաթոռ քո։

Խոստովան եղիցին երկինք սքանչելեաց քոց Տէր, եւ ճշմարտութի քո յեկեղեցիս սրբց։

Ո՞վ է յամպս որ հաւասարէ քեզ․ կամ ո՞վ նմանիցէ Տեառն յորդիս Այ։

Ած փառաւորեալ է ի խորհուրդս սբց իւրոց, մեծ եւ ահաւոր ի վերայ այնոցիկ՝ որ շուրջ են զնովաւ։

Տէր Ած զօրութեց, ո՞ նման է քեզ․ հզօր ես դու Տէր՝ եւ ճշմարտութի քո շուրջ է զքեւ։

Դու տիրես զօրութեց ծովու, եւ զխռովութի ալեաց նր դու ցածուցանես։

Դու խոնարհեցուցանես որպէս վիրաւորս զամբարտաւանս․ ի զօրութի բազկի քո ցրուեցեր զթշնամիս քո։

Քո են երկինք և քո է երկիր․ զաշխարհս լրիւ իւրով դու հաստատեցեր․ զհիւսիս և զհարաւ դու արարեր․ Թաբոր և Հերմոն յանուն քո ցնծասցեն։

Քո է բազուկ և քո է զօրութ՟ի․ զօրասցի աջ քո և բարձր եղիցի ձեռն քո։

Յարդարութ՟ի և յիրաւունս հաստատեալ է աթոռ քո․ ողորմութիւն և ճշմարտութիւն գնասցէ առաջի երեսաց քոց։

Երանի՛ ժողովրդեան որ գիտեն զօրհնութ՟իս քո Տէր․ ի լոյս երեսաց քոց գնասցեն, և յանուն քո ցնծասցեն զօրհանապազ, և յարդարութ՟ե քում բարձր եղիցին։

Պարծանք զօրութ՟եց մերոց դու ես, և ի կամս քո բարձր եղիցի եղջիւր մեր։

Ի Տ՟ռնէ է օգնու՟ի ն՟յն Ի՟էլի թագաւորին մերոյ։

Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ որդիս քո, և ասացեր․ եդից զօգնութ՟ի ի վերայ հզօրին․ և բարձր արարից զընտրեալն ի ժողովրդենէ իմմէ։

Գտի զԴաւիթ ծառայ իմ․ իւղով սրբով իմով օծի զնա։

Ձեռն իմ ընկալցի զնա, և բազուկ իմ զօրացուսցէ զնա։

Մի՛ մեղիցէ նմա թշնամի, և որդի անօրէնութ՟ե մի՛ չարչարեսցէ զնա։

Հարից առաջի նր՟ զթշնամիս նր՟․ և զատելիս նորա ի պարտութ՟ի մատնեցից։

Ճշմարտութ՟ի իմ և ողորմութ՟ի իմ ընդ նմա․ և յանուն իմ բարձր եղիցի եղջիւր նր՟։

Եդից ի ծովու զձեռն նր՟ և ի վ՟ր գետոց զաջ նր՟։

Նա կարդասցէ առ իս՝ հայր իմ ես դու․ Ա՟ծ ընդունելի փրկութ՟ե իմոյ։

Ես անդրանիկ արարից զնա․ և բարձր քան զա՟մ թագաւորս երկրի։

Յաւիտեան պահեցից նմա զողորմութ՟ի իմ․ և ուխտ իմ հաւատարիմ ընդ նմա։

Հաստատեցից յաւիտեանս յաւիտենից զզաւակ նր՟․ և զաթոռ նր՟ ոպ՟ զաւուրս երկնից։

Թէ թողցեն որդիք նր՟ զօրէնս իմ․ և յիրաւունս իմ ոչ կամեսցին գնալ։

Թէ զարդարութ՟իս իմ անարգեսցեն․ և զպատուիրանս իմ ոչ պահեսցեն։

Հարից գաւազանաւ զանօրէնութ՟իս նց՟․ տանջանօք զանիրաւութ՟իս նց՟։

Բայց զողորմութ՟ի իմ ոչ արգելից ի նոցանէ․ և ոչ նենգեցից ճշմարտութ՟ե իմոյ․ և ոչ անարգեցից զուխտ իմ․ և ինչ որ ելանէ ընդ շրթունս իմ՝ զայն ոչ արհամարհեցից։

Միանգամ երդուայ ի սրբութ՟ի իմ, թէ Դաւթի ես ոչ ստեցից։

Զաւակ նր՟ յաւիտեան կացցէ․ և աթոռ նր՟ ոպ՟ արեգակն առաջի իմ․ որպէս լուսին, զի հաստատեալ է յաւիտեան հաւատարիմ յերկինս։

Իսկ արդ դու մերժեցեր և անարգեցեր, և ընդ վայր հարեր զօծեալ քո։

Դարձուցեր զուխտ ի ծառայէ քումմէ․ պղծեցեր յերկրի զսրբութ՟ի նր՟։

Քակեցեր զա՟մ պարիսպս նր՟, և եդիր զամուրս նորա ի դողումն։

Յափշտակեցին զնա անցաւորք ճանապարհի․ եղեւ նա նախատ դրացեաց իւրոց։

Բարձր արարեր զաջ նեղչաց նորա․ ուրախ արարեր զա՟մ թշնամիս նր՟։

Դարձուցեր զօգնութ՟ի ի սրոյ նր՟․ և ոչ ընկալար զնա ի պատերազմի։

Անարգեցեր զսրբութ՟ի նր՟․ և զաթոռ նր՟ յերկիր կործանեցեր։

Նուազ արարեր զաւուրս ժամանակաց նր՟, և հեղեր զնովաւ զամօթ։

Մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո ի սպառ. բորբոքեսցի ո՞պ հուր բարկութի քո։

Իսկ արդ յիշեա՛ եւ տե՛ս ո՞վ է իմ հանդիստ. մի՛ թէ ի զո՞ւր ինչ ստեղծեր զամ որդիս մարդկան։

Ո՞վ է մարդ՝ որ կեցցէ եւ ոչ տեսցէ զմահ, կամ փրկեսցէ զանձն իւր ի ձեռաց դժոխոց։

Ո՞ւր են ողորմութիւնք քո Տէր առաջինք, զոր երդուար Դաւթի ճշմարտութբ քով։

Յիշեա՛ զնախատինս ծառայի քո. զոր ընկալայ ի ծոց իմ յազգաց բազմաց։

Զոր նախատեցին թշնամիք քո Տէր. նախատեցին փոխանակ օծելոյ քո։

Օրհնեալ Տէր Աստուած յաւիտեանս յաւիտենից. եղիցի եղիցի։

Ընթերցուածս յԱռակաց։ Ը. 4։

Օ՛ ձեզ աղաչեմ, ո՛վ մարդիկ, եւ բաշխեմ զբարբառ իմ որդւոց մարդկան։ Իմացարո՛ւք անմեղք զխորագիտութի. եւ անխրատք դիք ի սիրտս ձեր։ Լուարո՛ւք ինձ, զի զպարկեշտս բարբառիմ. եւ բղխեմ ի շրթանց իմոց զուղղութի։ Զճշմարտուի խոկասցէ կոկորդ իմ. եւ պիղծ են առաջի իմ շրթունք սուտք։ Արդարութբ են ամ բանք բերանոյ իմոյ. եւ ոչ գոյ ի նս ծռութի եւ ոչ թիւրութի։ Ամենայն ինչ ուղիղ է իմաստնոց. եւ յարմարեալ է այնոցիկ՝ ոյք գտանեն զգիտութիւն։ Ընկալարո՛ւք զխրատ եւ մի՛ զարծաթ. եւ զգիտութիւն քան զոսկի ընտիր։ Ընտրելի է հանճար քան զոսկի մաքուր։ Եւ լաւագոյն է իմաստուի քան զականս պատուականս. եւ ամ ինչ պատուական չարժէ զնա։ 11։

Ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ։ Խ. 3։

Ձայն բարբառոյ յանապատի. պատրաստ արարէք զճանապարհս Տեառն եւ ուղի՛ղ արարէք զշաւիղս Այ մերոյ։ Ամենայն ձորք լցցին, եւ ամ լերինք եւ բլուրք

խոնարհեսցին. եւ եղիցին ամ դժուարինք ի դիւրինս. եւ առապարքն ի դաշտս։ Եւ երեւեսցին փառք Տեառն, եւ տեսցէ ամ մարմին զփրկութի Այ. զի Տէր խօսեցաւ։ Ձայն որ ասէ՝ գոչեա՛. եւ ասեմ, զի՞նչ գոչեցից։ Գոդչի՞ր՝ ամ մարմին խոտ է, եւ ամ փառք մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ։ Ցամաքեցաւ խոտն եւ թօթափեցաւ ծաղիկ նր. զի ոգի Տեառն շնչեաց ի նա. արդարեւ խոտ է ժողովուրդս այս։ Ցամաքեցաւ խոտն, եւ թօթափեցաւ ծաղիկն. եւ բան Տեառն մնայ յաւիտեան։ 8։

Ընթերցուածս ի Մաղաքեայ մարգարէէ։ Դ. 4։

Եւ ահա ես առաքեմ առ ձեզ զԵղիա Թեզբեացի, մինչ չեւ եկեալ իցէ օր Տեառն մեծ եւ երեւելի։ Որ պատրաստեսցէ զսիրտ հօր առ որդի, եւ զսիրտ առն առ ընկեր իւր. գուցէ եկեալ հարկանիցեմ զերկիր միանգամայն։ Յիշեցէ՛ք զօրէնսն Մովսէսի ծառայի իմոյ, ո՞պ պատուիրեցի նմա ի Քորեբ, զամ հրամանս եւ զիրաւունս։ 6։

Ընթերցուածս ի Գործոց առաքելոց։ ԺԳ. 25։

Եւ իբրեւ լնոյր Յովհաննէս զընթացսն, ասէր. զո՞ ոք կարծէք զինէն՝ թէ իցեմ. չեմ ես այն. այլ ահա գայ զկնի իմ, որում չեմ արժանի զկօշիկս ոտիցն լուծանել։ Ա՛րք եղբարք՝ որդիք աբրահամեան տոհմին, եւ որ ի ձեզ երկիւղածք իցեն յԱյ. ձեզ բանս այս փրկութե առաքեցաւ։ Բայց որ բնակեալ են յԵրէմ, եւ իշխանք նց անծանօթ եղեն ի նմանէ. եւ ըստ բարբառոյ մարգարէիցն, որ զամ շաբաթս ընթեռնուին՝ դատեալ կատարեցին. եւ ոչ մի ինչ պատճառս մահու գտեալ՝ խնդրեցին ի Պիղատոսէ սպանանել զնա։ Եւ իբրեւ կատարեցին զամ՝ որ վասն նորա գրեալ էր, իջուցեալ ի փայտէն՝ եդին ի գերեզմանի։ Այլ Ած յարոյց զնա ի մեռելոց. որ երեւեցաւ աւուրբք բազմօք այնոցիկ՝ որ ելեալ էին ընդ նմա ի Գալիլեէ յԵրէմ.

որք և արդ իսկ վկայք են նորա առ ժողովուրդն: Եւ մեք ձեզ աւետարանեմք զխոստումն՝ որ առ հարսն եղեալ էր: Զի զնոյն Ած կատարեաց առ մեզ որդւոց նոցա՝ յարուցեալ զՅս. ոպ և ի սաղմոսին գրեալ է յերկրորդում. Որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ: 33:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Կարապետն Յովհաննէս զարհուրեալ, ի յորովայնէ յորովայն երկրպագեալ, սպասաւոր եղեւ Բանին Այ. և լուեալ զահաւոր զձայնն, աղաղակէր ասելով. ահա գառն Այ որ բառնայ զմեղս աշխարհի:

Աւետարան ըստ Մարկոսի: Զ. 14:

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ լուաւ արքայ Հերովդէս. քանզի յայտնի եղեւ անուն նր. և ասէր, թէ Յովհաննէս մկրտիչ յարեաւ ի մեռելոց, և վն այնորիկ զօրութիւք լինին նովաւ: Այլք ասէին՝ թէ Եղիա է, իսկ այլքն՝ թէ մարգարէ է, կամ թէ իբրեւ զմի ի մարգարէից: Իբրեւ լուաւ Հերովդէս, ասէ. զորոյ ես զգլուխն հատի զՅովհաննու՝ սա է, նա յարեաւ ի մեռելոց: Զի ինքն Հերովդէս առաքեաց կալաւ զՅովհաննէս, և կապեաց զնա և եդ ի բանտի վն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նր, զի նա կին արար զնա: Քանզի ասէր Յովհաննէս ցՀերովդէս՝ թէ ոչ է օրէն քեզ ունել զկին եղբօր քո: Եւ Հերովդիա ոխացեալ էր ընդ նմա, և կամէր սպանանել զնա, և ոչ կարէր: Զի Հերովդէս երկնչէր ի Յովհաննէ, քանզի գիտէր զնա այր արդար և սբ. և սպասէր նմա. և լուեալ ի նմանէ բազում ինչ՝ առնէր, և քաղցրութբ լսէր նմա: Իբրեւ օր մի լինէր պարապոյ, յորժամ ընթրիս տայր Հերովդէս յաւուր ծննդոց իւրոց՝ նախարարաց իւրոց և հազարապետաց և մեծամեծաց Գալիլեացւոց. և ի մտանել դստերն Հերովդիայ և ի կա-

քաւել՝ հաճոյ եղեւ Հերովդի և բազմականացն: Ասէ թագաւորն ցաղջիկն. խնդրեա՛ յինէն զոր ինչ կամիս, և տաց քեզ: Եւ երդուաւ նմա բազում անգամ, թէ զոր ինչ և խնդրեսցես դու յինէն՝ տաց քեզ, մինչեւ ցկէս թագաւորութե իմոյ: Նա ելեալ ասէ ցմայր իւր. զի՞նչ խնդրեցից. և նա ասէ, զգլուխն Յովհաննու մկրտչի: Եւ մտեալ անդրէն փութանակի առ թագաւորն, ասէ. կամիմ՝ զի այժմ տացես ինձ վաղվաղակի ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի: Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն, այլ վն երդմանցն և կոչնականացն՝ ոչ կամեցաւ անարգել զնա. և առաքեաց վաղվաղակի թագաւորն դահիճ, և հրամայեաց բերել զգլուխն նր. և չոգաւ գլխատեաց զնա ի բանտին, և եբեր զգլուխն նր սկտեղբ՝ և ետ ցաղջիկն. և աղջիկն տարաւ ետ մօր իւրում: Իբրեւ լուան աշակերտքն նր՝ եկին բարձին զմարմինն, և եդին ի գերեզմանի: 29:

Քրզ. Խնդրեսցուք: Կեցո: Աղ. Քում ամենազօր:

ՑԵՐԵԿՈՑԻՆ

Առաջին Սաղմոս ԿԶ:

Ած ողորմեա՛ մեզ և օրհնեա՛ զմեզ. երեւեցո՛ զերեսս քո ի մեզ և ողորմեա՛ մեզ:

Ճանաչել յերկրի զճանապարհս քո. յազգս ամենայն զփրկութիս քո:

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Ած, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամ:

Ուրախ եղիցին, և ցնծասցեն ազինք. զի դու դատիս զժողովուրդս յուղղութի. և ազգաց երկրի դու առաջնորդես:

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Ած. գոհասցին զքէն ժողովուրդք ամ:

Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց զմեզ Աստուած Աստուած մեր:

Աճ մեր օրհնեսցէ զմեզ, և ի նմանէ երկիցեն ամ ազգք երկրի:

Աւետարան ըստ Յովհաննու: ԻԱ. 1:

Յետ յարութեն Տեառն մերոյ Յնի Քնի:

Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր Յն աշակերտացն իւրոց առ ծովեզերբն Տիբերեայ. և յայտնեաց այսպէս: Էին ի միասին Սիմովն Պետրոս և Թովմաս անուանեալն Երկուորեակ և Նաթանայէլ՝ որ ի Կանայ Գալիլեացւոց, և որդիքն Զեբեդեայ, և այլք յաշակերտաց անտի երկու: Ասէ ցնս Սիմովն Պետրոս. երթամ ձուկն որսալ: Ասեն ցնա. գամք և մեք ընդ քեզ. գնացին և մտին ի նաւ, և յայնմ գիշերի կալան և ոչ ինչ: Իբրև այգ եղև՝ կայր Յն յեզր ծովուն, բայց ոչ ծանեան աշակերտքն թէ Յն իցէ: Ասէ ցնս Յն. մանկունք, մի՞ թէ ունիք ինչ ուտելոյ: Պատասխանի ետուն և ասեն ցնա. ոչ: Ասէ ցնս. արկէք յաջակողմն նաւին զուռկանդ, և գտանիցէք: Արկին, և ոչ կարէին ձգել ի բազմութենէ անտի ձկանցն: Ասէ աշակերտն այն զոր սիրէրն Յն՝ ցՊետրոս. Տէր է այն: Սիմոն Պետրոս իբրև լուաւ թէ Տէր է, արկաւ զիւրև զսփածանելին՝ քանզի մերկ էր, և ընկէց զինքն ի ծովն: Եւ այլ աշակերտքն նաւաւն իսկ գային, քանզի չէին հեռի ի ցամաքէն՝ այլ իբրև երկերիւր կանգնաւ, քարշէին զգործին հանդերձ ձկամբն: Իբրև ելին ի ցամաք՝ տեսանեն կրակետղ կայծականց, և ձուկն մի ի վերայ և հաց: Ասէ ցնոսա Յն. բերէք ի ձկանց այտի՝ զոր դուքդ կալարուք այժմիկ: Եմուտ Սիմովն Պետրոս, և ձգէր զգործին ի ցամաք՝ լի մեծամեծ ձկամբք հարիւր և յիսուն և երիւք. և այնչափ ինչ կայր, և ոչ պատառեցաւ գործին: Ասէ ցնս Յն. եկայք ճաշեցէք: Եւ ոչ ոք յաշակերտացն իշխէր հարցանել՝ թէ դու ո՞վ ես. զի գիտէին թէ Տէրն է: Գայ Յն՝ և առնու զհացն և տայ

նց, նոյնպէս և զձուկնն: Զայս երիցս անգամ երևեցաւ Յն աշակերտացն՝ յարուցեալ ի մեռելոց: 14:

Կիւրակամուտի փոխ Գալստեան:

Բարեբանեալ որ եկիր և գալոց ես ի յերկնէ՝ աստուածային քո փառօք. շնորհեա ամենեցուն զյարութիւն քո, ով մարդասէր: Լոյս զուարթ:

Մեսեդի Գալստեան: Օրհնեալ որ գաս: 96:

Համբարձի ԱՁ:

Որ վերօրհնիս յաթոռս քերովբէից. ի վերայ նըստել յաւանակի հաճեցար. * բարեբանեալ որ եկիրդ ի կեցուցանել: Ուստի և մեք զյաղթական օրհնութեցն ըզձայն. մատուցանեմք քեզ թագաւոր օրհնաբանելով. բարեբան: Ովփառաց ընդ տղայոն օրհնաբանելով. բարեբան: Ովսաննա ի բարձունս ալէլուիա. բարեբանեալ եկեալ անուամբ Տեառն ալէլուիա. և օրհնութիւն որ գալոց ես անուամբ Տեառն ալէլուիա:

Այսօր զանըսկիզբըն Բանն որ յաթոռ փառաց ընդ Հօր յերկրի երևեալ տեսաք. քրովբէական ձայնիւ օրհնեսցուք. * օրհնեալ եկեալ անուամբ Տռն: Փառք Հօր: Այսօր յաւանակ քերովբէ և տղայք Եբրայեցւոց բարեբանեն. օրհնութիւն որդւոյ Դաւթի. օրհնեալ: Այժմ և: Այսօր զուարճացան տիեզերք գալստեամբ Աճոյ դւոյն յԵրուսաղէմ. և գոչէին հընչմամբ երգով. օրհնեալ:

Արշալուսեան Սաղմոս Ձ:

Ցնծացէք առ Աճ օգնական է մեր. աղաղակեցէք առ Աճ Յակովբայ:

Առէք սաղմոս և տուք օրհնութիւն. սաղմոս ասացէք նմա ի ձայն քաղցրութեան:

Փող հարէք ի գլուխս ամսոց, յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց:

Հրաման է այս Իսրայէլի, և իրաւունք Ա՟յ Յակովբայ:

Վկայութիւն Յովսեփու զոր եդ ընդ նմա, որպէս ելանէր նա յերկրէն Եգիպտացւոց. զլեզու զոր ոչ գիտէր լուաւ:

Ի բաց արա ի բեռանց զթիկունս նո՟ր, և զձեռն նո՟ր յորթ և ի թի ծառայելոյ:

Ի նեղութեան կարդացեր առ իս՝ և փրկեցի զքեզ. լուայ քեզ ի գաղտնութե՟ մրրկին, և փորձեցի զքեզ ի վերայ ջուրցն հակառակութեան:

Լո՛ւր ժողովուրդ իմ և վկայեմ քեզ. և Իսրայէլ, թէ լուիցես ինձ:

Մի՛ եւս եղիցին քեզ աստուածք առժամայնք. և մի՛ երկիր պագանիցես դու աստուծոյ օտարի:

Ես եմ Տէր Ա՟ծ քո, որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց. բաց զբերան քո և լցից զդա:

Ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում. և Իսրայէլ յիս ինչ ոչ նայեցաւ:

Բարձի թողի զնո՟ երթալ զհետ կամաց սրտից իւրեանց. զի գնասցին նոքա ըստ կամս անձանց իւրեանց:

Զի թէ ժողովրդեան իմոյ լուեալ էր ինձ, կամ Իսրայէլի զճանապարհս իմ գնացեալ էր:

Որպէս զոչինչ խոնարհ արարեալ էր իմ զթշնամիս նոցա և ի վե՟ր նեղչաց նոցա արկեալ էր զձեռն իմ:

Թշնամիք Տեառն ստեցին նմա. եղիցին ժամանակք նոցա յաշխարհի:

Կերակրեաց զնո՟ ի պարարտութե՟ ցորենոյ. և ի վիմէ մեղր յագեցոյց նոցա:

Աւետարան ըստ Յովհաննու: ԻԱ. 15:

Յետ յարութեան Տեառն մերոյ Յ՟սի Ք՟սի:

Եւ իբրեւ ճաշեցին, ասէ ցՍիմովն Պետրոս՝ Յ՟ս. Սիմովն Յովնանու սիրես զիս առաւել քան զդոսա: Ասէ ցնա. այո՛ Տէր, և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ: Ասէ

ցնա՝ արածեա՛ զգառինս իմ: Դարձեալ ասէ ցնա. Սիմովն Յովնանու սիրես զիս: Ասէ ցնա. այո՛ Տէր, և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ: Ասէ ցնա. արածեա՛ զոչխարս իմ: Ասէ ցնա երիցս անգամ. Սիմովն Յովնանու սիրես զիս: Տրտմեցաւ Պետրոս, զի ասացն ցնա երիցս՝ թէ սիրես զիս. և ասէ ցնա. Տէ՛ր, դու զա՟մ գիտես. և դու իսկ զա՟մ ճանաչես, և եթէ սիրեմ զքեզ: Ասէ ցնա Յ՟ս. արածեա՛ զոչխարս իմ: Ամէն ամէն ասեմ քեզ. զի մինչ մանուկն էիր՝ անձամբ անձին գօտի ածէիր, և երթայիր յո՛ և կամէիր. և յորժամ ծերասցիս՝ ձեռս ի վեր կալցես, և այլք ածցեն քեզ գօտի, և տարցին՝ ուր ոչն կամիցիս: Զայս ասաց՝ նշանակեալ թէ որո՛վ մահու փառաւոր առնիցէ զԱ՟ծ: Եւ զայս իբրեւ ասաց՝ ասէ ցնա. եկ զկնի իմ: Դարձաւ Պետրոս՝ և տեսանէ զաշակերտն՝ զոր սիրէր Յ՟ս, զի երթայր զկնի, որ և անկաւ զլանջօքն նո՟ր՝ և ասէ, Տէ՛ր ո՞վ է՝ որ մատնելոցն է զքեզ: Զնա տեսեալ Պետրոսի, ասէ ցՅ՟ս. Տէ՛ր, իսկ սա զի՞: Ասէ ցնա Յ՟ս. եթէ կամիմ, զի կացցէ դա՝ մինչեւ ես գամ. քեզ զի՞ փոյթ է, դու ե՛կ զկնի իմ: Եւ ել բանս այս յեղբարս՝ և համարեցան թէ աշակերտն այն ոչ մեռանիցի. և ոչ ասաց նմա Յ՟ս եթէ ոչ մեռանիցի, այլ՝ թէ կամիմ ես թէ կացցէ դա՝ մինչեւ ես գամ: Այս աշակերտ է՝ որ վկայէ վասն այսորիկ. որ և գրեացն իսկ զայսոսիկ. և գիտեմք, եթէ ճշմարիտ է վկայութի՟ նո՟ր: Բայց է և այլ ինչ բազում զոր արար Յ՟ս, զոր եթէ գրեալ էր մի ըստ միոջէ՝ կարծեմ թէ և ոչ աշխարհս բաւական էր տանել զգիրսն՝ որ թէ գրեալ էին: 25:

Քրզ. Խնդրեսցուք: Կեցո: Աղ. Թագաւոր խաղաղ:

Եւ արձակին ի խաղաղութիւն:

ՍԱՂՄՈՍՔ

Երես

Սղ. ՂԹ. Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր . . 296
ՃԼԹ. Ապրեցո զիս Տէր ի մարդոյ. . . . 93, 186
ԻԷ. Առ քեզ Տէր կարդացի Աստուած . . . 266
ԻԴ. Առ քեզ Տէր համբարձի զանձն իմ 232, 262
ՃԻԲ. Առ քեզ Տէր համբարձի զաչս իմ . . . 104
ԼԸ. Ասացի թէ պահեցից զճանապարհս իմ. . 275
ՃԹ. Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ 367
ԻԹ. Աստուած Աստուած իմ նայեաց առ . 394, 428
ԾԹ. Աստուած մերժեցեր եւ աւերեցեր զմեզ . 353
ՀԸ. Աստուած մտին հեթանոսք ի 359
ԾԳ. Աստուած յանուան քում կեցո զիս 23, 104
ԿԶ. Աստուած ողորմեա մեզ եւ օրհնեա 23, 541
ՂԳ. Աստուած վրէժխնդիր, Տէր 259
ՃԸ. Աստուած օրհնութեան իմոյ մի . . 365, 381
Ե. Բանից իմոց ունկն դիր Տէր 505
ՃԽԴ. Բարձր առնեմ զքեզ Աստուած իմ . . 87
ԻԹ. Բարձր առնեմ զքեզ Տէր . . 22, 154, 267
ԽԴ. Բղխեաց սիրտ իմ բան բարի եւ. . . . 221
ՃԽԷ. Գովեա Երուսաղէմ զՏէր . . . 491, 514
ԽԲ. Դատ արա ինձ Աստուած եւ իրաւ . 279, 347
ԻԵ. Դատ արա ինձ Տէր, զի ես 264
ԼԴ. Դատեա Տէր զայնոսիկ, որ դատին. . . 387
ՃԺԸ. Եկեսցէ ի վերայ իմ ողորմութիւն քո . . 101
Խ. Երանի որ խորհի զաղքատն 244, 277, 345, 392
ՁԸ. Զողորմութիւնս քո Տէր յաւիտեան . . 535
Բ. Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք եւ . . . 333
ՃԻԹ. Ի խորոց կարդացի առ քեզ . . . 172, 483
Դ. Ի կարդալ իմում լուաւ ինձ 108, 183, 335, 480
Լ. Ի քեզ Տէր յուսացայ մի ամաչեցից 268, 398
Կ. Լուր Աստուած աղօթից իմոց 354
ՁԵ. Խոնարհեցո Տէր զունկն քո 91, 185
ՃԺԷ. Խոստովան եղերուք Տեառն 190, 295, 370, 444
ՃԺ. Խոստովան եղէց քեզ Տէր 367
ԿԸ. Կեցո զիս Աստուած զի հասին ջուրք . . 405
ՁԴ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո 23
ՃԻ. Համբարձի զաչս իմ ի լերինս 98
ԼԹ. Համբերելով համբերի Տեառն, ... 276
ՃԺԵ. Հաւատացի զոր եւ խօսեցայ եւ ես. . . 82
ՃԽԱ. Ձայնիւ իմով ես առ Տէր . . . 94, 188
ԻԸ. Մատուցէք Տեառն որդիք Այ . . 266, 317
ՃԺԸ. Մերձեսցին խնդրուածք իմ 25
ԼԶ. Մի նախանձիր ընդ չարս եւ մի ընդ. . . 271

Երես

Ծ. Ողորմեա ինձ Աստուած . . 48, 67, 284, 313
Ղ. Որ բնակեալդ է յօգնութիւն 76, 103
ՀԹ. Որ հովուեսդ Իսրայէլի նայեաց 360
ԽԱ. Որպէս փափաքէ եղջերու . . . 278, 287, 346
ԾԴ. Ունկն դիր Աստուած աղօթից իմոց . . . 308
ԺԵ. Պահեա զիս Աստուած զի ես ի քեզ . . 431
ՃԺԴ. Սիրեցի զի լուիցէ Տէր զձայն 82
ՁԷ. Տէր Աստուած փրկութեան . . 4, 413, 441
Գ. Տէր զի բազում եղեն նեղիչք իմ . . 3, 334
ՂԸ. Տէր թագաւորեաց բարկացան 520
ՂԲ. Տէր թագաւորեաց վայելչութիւն . . . 530
Ի. Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի . 508
ԻԶ. Տէր լոյս իմ եւ կեանք իմ 264
ՃԱ. Տէր լուր աղօթից իմոց եւ աղաղակ . 24, 420
ՃԽԲ. Տէր լուր աղօթից իմոց ունկն դիր . 6, 25
ՃԽ. Տէր կարդացի առ քեզ 94, 187
ԻԲ. Տէր հովուեսցէ զիս եւ ինձ ինչ . . 71, 310
Զ. Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմ . . 21
ԼԷ. Տէր մի սրտմտութեամբ: Զի նետք . 273, 390
ԺԴ. Տէր ո՞վ կացցէ ի խորանի քում . . . 522
Չ. Ցնծացէք առ Աստուած օգնական . 361, 543
ԾԲ. Փրկեա զիս ի թշնամեաց իմոց 352
ԿԴ. Քեզ վայելէ օրհնութիւն 214, 474, 484, 498
ՃԲ. Օրհնեա անձն իմ զՏէր եւ ամենայն . . 5
ՃԳ. Օրհնեա անձն իմ զՏէր, Տէր Աստուած . 201
ՃԺԶ. Օրհնեցէք զՏէր ամենայն ազինք . . . 82
ՃԽԸ. Օրհնեցէք զՏէր յերկինս, օրհնեցէք . . 50
ՂԷ. Օրհնեցէք զՏէր յօրհնութ . . 168, 174, 527
ՃԽԹ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր, օրհն. 51
ՃԾ. Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան . 51, 105
ՃԺԲ. Օրհնեցէք մանկունք զՏէր եւ օրհն. . . 443

Ցուց. Բ. Ի նեղութեան իմում ես առ Տէր . . . 279
Ղուկ. Ա. Մեծացուսցէ անձն իմ զՏէր . . . 42, 106
Տէր ամենակալ Աստուած Աբրահամու . 281
Դան. Գ. Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց . 38
Ղուկ. Ա. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի . . . 42

ՇԱՐԱԿԱՆՔ

Երես

բձ. Ալէլուիա: Այսօր ընդ զօրս երկնից 201
գձ. Աճաւոր ես թագաւոր քրովբէական 221
դձ. Աղբիւր անմահութեան բխեալ ի Բեթանիա . . 154
գձ. Աղբիւր լուսոյ եւ ճառագայթ 254
դկ. Ամենակալ քաւեա զմեղս իմ, զի Աստուած . . 282
բկ. Ամենայն երկիր տուք փառս այնմ 218
դկ. Այսօր անճառ լուսոյն ծագումն 335
գձ. Այսօր աստուածութիւնն զուարճանայ 444
գձ. Այսօր Գաբրիէլ ցնծութեամբ երգեաց . . . 241
աձ. Այսօր գոլով ի Բեթանիա 149, 118, 163
գձ. Այսօր եկեալ կամաւ փրկիչն 244
բկ. Այսօր երկնայինքն ուրախացան ընդ 511
աձ. Այսօր զանսկիզբն բանն որ յաթոռ . . . 160, 162
աձ. Այսօր զատիկ մեր զենմամբ Քրիստոսի . . 469, 487
դձ. Այսօր զոր երկնային լուսեղինացն 333
բձ. Այսօր զուարճացան տիեզերք ամենայն 501
բկ. Այսօր ընդ հրակերպեան դասուցն . . . 173, 189
դձ. Այսօր ի կատարումն աստուածային 332
բձ. Այսօր խնդրի պատուական փայտ . . . 125, 152
ակ. Այսօր կարգեցաւ օրինակ . . . 120, 259, 310, 315
դկ. Այսօր հրեշտակք ի յերկինս 473
աձ. Այսօր յարեաւ ի մեռելոց 469, 473
գձ. Այսօր յարութիւն Քրիստոսի տօնեցէք . . . 516
դկ. Այսօր նշան յաղթող երեւեալ 172, 482
գձ. Այսօր ուրախացեալ ցնծան 256
գձ. Այսօր ցնծան դասք հրեշտակաց 242
բձ. Անեղն ի Հօրէ ծնեալ Որդի 196
աձ. Անճառելի Հօր էակից ի խաչ ելեր . . . 118, 513
աձ. Անսկիզբն բանդ անբաժանելի 526
բձ. Ապաւինեցաք ի խաչ քո 378, 503
բձ. Առ ամենեսեան գթած Քրիստոս 200
բկ. Առաւօտեան սուրբ կանայքն 510
ակ. Առաքեցար ի Հօրէ բանդ Աստուած 447, 493, 500
գկ. Առեալ եւ մեր զօրհնութիւնս 523
գձ. Աստուածածին երկնային դուռն 243, 439
գկ. Աստուածածին խորան լուսոյ 134, 524
դկ. Աստուածածին մայր եւ կոյս, ծագող 139
բձ. Աստուածային գոչմամբ ձայն արկեալ 153
դկ. Աստուած անեղ անժամանակ, հայր 140
ակ. Արարիչ Աստուած եւ ստեղծիչ 83
դձ. Արարիչ եւ մարդասէր, անոխակալ 145
դձ. Արարչական բանին հրաման 61

	Երես
գձ. Արեգակն արդարութեան Քրիստոս	241, 517
բձ. Արծաթսիրութեամբն մոլեալ	376, 436
գձ. Արկողդ զլոյս որպէս զօթոց	258, 130, 240
բձ. Բանալի արքայութեան տուաւ	199
բձ. Բանն առաքեալ ի Հօրէ, որ վասն	151
դկ. Բանն որ ընդ Հօր յէութեան	138
բկ. Գալոց է միածինն փողով	218
գձ. Գասք անմարմնականք երկնաւոր	131
բկ. Դատաւոր արդարութեան հաստատեցեր	217
բձ. Դարձո զցասումն քո ի մէնջ	123
դկ. Դու ծաղիկ անթառամ տոհմի	172, 482
դձ. Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք	430
բձ. Եկայք որդիք մարդկան այսօր	196, 150
գձ. Եկեալ ի փրկութիւն ազգի մարդկան	380, 240
բձ. Եկին ի գերեզման առաւօտեան	501
դձ. Ես ասացի ի վերանալ յինէն	146
ակ. Երգեսցուք քեզ ընդ հրեշտակս	494
ակ. Զանճառելի զլոյս աստուածութեան	495
գկ. Զանսկզբնաբար բղխումն ի Հօրէ	134, 524
գկ. Զաստուածային զգերեզմանաւն բոլորեալ	523
դկ. Զարհուրեալ դողացաւ ամենամեղ	280
գձ. Զգալուստ քո Քրիստոս այսօր	162, 136, 182
գձ. Զերծո զիս յորոգայթէ որսողին	130
բձ. Զկուսութիւնդ քո Աստուածածին	153, 220
աձ. Զհոգիս ծառայից քո Քրիստոս	117
դձ. Զյարութիւն աստուածորդւոյն	136
բկ. Զյարութիւն Քրիստոսի ամենեքեան	511
դկ. Զողորմութեան քո զդուռն բաց մեզ	194
բկ. Զտիեզերական խնդութեանցն աւետիքս	511
աձ. Զփառաւորեալն յամենայն արարածոց	163
բկ. Զքեզ Աստուածածին որ վերօրհնիս ի	218
աձ. Զքեզ երեւեալ դուռն առ Եզեկիէլի	526
բձ. Զքեզ կոյս եւ մայր եւ բնակարան	198, 378, 503
բձ. Զքեզ Հայր յառաջ քան	200, 258, 437
գձ. Զքեզ օրհնեմք թագաւոր յաւիտ	439
բձ. Զքեզ օրհնեմք որ բաշխողդ ես	200, 377
գձ. Զքէն խորհեցան ի չարութիւն	243
գկ. Զքո յարութիւնդ օրհնեմք մարդասէր	523
բկ. Զքրիստոս թագաւորն որ էն ի յաթոռ	167
դձ. Զօրութիւն սուրբ խաչի քո Քրիստոս	137
աձ. Ընդ երիս մանկունսն օրհնաբանս	519
բձ. Ընդ թաղումն քո յերկրի	438
աձ. Ընդ լուսանալ միաշաբաթին	469, 476, 491
աձ. Ընդ կանայսն իւղաբերսն առ քեզ	470, 514
բձ. Ըստ աւետեաց մարգարէին, որ առ	123
բձ. Թագաւոր անմահ արարիչ յաւիտենից	123, 377
դձ. Թագաւոր գոլով քո յաշխարհս	161, 178
բկ. Թագաւոր խաղաղութեան որ	126, 511

	Երես
բձ. Թագաւոր փառաց քեզ սպասեսցուք	220, 193, 196
բձ. Ի գերեզման քո կանխեցին	478, 501, 508
բկ. Ի գիշերաց կանխեալ սաղմոսիւք	126
բձ. Ի գիշերին յորում մատնէր փրկիչն	376
գձ. Ի խաչանիշ փայտէն դղրդեցան	516
աձ. Ի խորանի քում սրբութեան	165
գձ. Ի ձայն ահեղ յարութեան քո Տէր	517
գձ. Ի ձայն մեծի զուարթնոյն եւ ի	129, 241, 518
բձ. Ի ձայն փողոյ գալստեան քո	122, 151, 437
դկ. Ի համբառնալ բանին յերկինս	139
դձ. Ի հանդիստ քո Տէր ուր ամենայն	135
բկ. Իմաստուն կուսանքն պատրաստեալ	216, 127, 192
դձ. Ի յարութեան յաւուր գալստեան	162, 183
գձ. Իջեր յերկնից անսկիզբն որդի	379
ակ. Իջեր յերկնից որդի Աստուծոյ եւ մարմնացար	121
բձ. Իջեր յերկնից որդի Աստուծոյ ազատեցեր	124
բկ. Իջեր Տէր ողորմութեամբ քո	128, 218
բկ. Ի վերայ վիմի հաւատոյ շինեցեր	218
գձ. Իւղաբեր եւ սուրբ կանայքն	516
բձ. Լոյսդ ի հայրական ծոցոյ ծագեալ	257
գկ. Լոյս ի լուսոյ զմեզ լուսաւորեա	132
գձ. Լոյս լուսոյ մայր եւ կենարար բանին	380, 518
աձ. Լոյսդ որ ի հրեղէն յաթոռ	525
գձ. Լուսաւորեա Երուսաղէմ զի հասեալ	454
բկ. Խաչի քո Քրիստոս երկիր պագանեմք	385
դկ. Խաչի քո Քրիստոս երկրպագեն արարածք	139
բկ. Խաչն կենարար որ եղեւ մեզ	386, 512
դկ. Խնդրեմք ի քէն թագաւոր փառաց	138
բկ. Խոնարհեցար ի բարձանց եւ	125
դձ. Ծագումն հրաշալի որ անյայտ էր ի մէնջ	137
ակ. Ծով կենցաղոյս հանապազ զիս	120
բձ. Կանխելով սուրբ կանանցն ըստ	502
բկ. Կանխեցին կանայքն ընդ առաւօտն	510
ակ. Կանխեցին կանայքն իւղաբերք	494
գձ. Կենդանարար Աստուած մարդասէր	136
բձ. Կենդանին յաւիտենից Քրիստոս	435
աձ. Կենդանութեանց բաշխող Քրիստոս	149, 163
բձ. Կուսածին մարմնով Քրիստոս այսօր	436
դձ. Համբառնամ առ քեզ Տէր զաչս	136
ակ. Հայր անոխակալ եւ բարեգութ	119
դկ. Հայր անսկիզբն բարեխնամ մարդասէր	137
աձ. Հայր բազումողորմ խոստովանիմ	118
գձ. Հայր բարեգութ որ գթացար	84
ակ. Հրաշալի զյարութիւն Աստուածորդւոյն	493
գձ. Հրաշալի յարութիւնն զպահապանսն	517
աձ. Հրաշակերտ եւ զօրեղ փայտ	119
գձ. Հրաշափառ տեսութիւն ի կաթուղիկէ	518
բձ. Հրեշտակային ձայնիւ օրհնեսցուք	122, 198, 503

Երես

աձ. Ձայն արկեալ կենարարին աստուածային . 117, 164
բձ. Ձայն աւետաւոր հրեշտակին . 501
ակ. Ձեռք քո արարին եւ ստեղծին զիս ի . 119
բկ. Ճառագայթ փառաց Հօր Որդիդ . 128, 217
աձ. Մարմնացեալդ ի Կուսէն Նախայաւիտեան . 164
աձ. Մեծացուցանեմք զքեզ որ ի Հօրէ . 513
բկ. Մեղք իմ բազում են յոյժ, ծանր . 193
գձ. Յամենայնի բազումողորմ Աստուած . 130
բկ. Յամենայն ժամ աղաչանք իմ այս են . 127
գկ. Յանճառ փառաց խոնարհեցար . 524
գկ. Յանսկզբնական ծոցոյ Հօր խոնարհեալ . 85
բձ. Յաստուածային ձայնէ գոչմանն . 149, 124
գկ. Յարեաւ Տէրն ի գերեզմանէն . 523
ակ. Յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն . 493
աձ. Յարուցելոյն ի մեռելոց . 496
դկ. Յիսուս միածին անմահութեանց 154, 138, 172, 482
բկ. Յոյս իմ քո դու Տէր քաւիչ . 192
գձ. Յովսէփ ճշմարիտ եւ արդար . 440
դկ. Յովսէփ քեզ հաւատացեալ . 440
դկ. Յորժամ եկին ի գերեզման իւղաբեր . 139
դձ. Յորժամ եկն Յիսուս յԵրուսաղէմ . 161, 171
դձ. Յորժամ հարկանի փող գալստեան . 85
ակ. Յորժամ յերկնից գոչէ փողն . 120, 494
բկ. Յորժամ յերկնից փառօք գաս . 216
գձ. Յորմէ սարսեալ սերովբէքն ոչ իշխէին . 255
բձ. Նահապետին Աբրահամու հայցմամբ . 81
բձ. Նոյն եւ նման Հօր եւ Որդւոյ . 197, 437, 502
Նորաստեղծեալ բանն յանէից . 58
դկ. Նորոգող տիեզերաց որ զգեցուցեր . 401
գձ. Նոր սքանչելիք այսօր տեսանեմք . 244, 252
բձ. Շնորհեա մեզ Տէր արթնութիւն ընդ . 191, 197
գկ. Շնորհեա մեզ Տէր ընդ աղքատացն . 133
բկ. Ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա . 127
աձ. Ողորմեա ինձ Աստուած: Լսելի արա ինձ . 505
աձ. Ողորմեա ինձ Աստուած: Որ զառաջինն . 117
ակ. Ով գերահրաշ ծաղիկ բուրեալ . 121
գկ. Ով պահապան որ ծագեցար յԵդեմայ . 134
գձ. Ով սքանչելի եւ տեսիլ ահաւոր . 380
գկ. Ով քառաթեւ լուսածին գերապանծ . 525
գկ. Որ անբաւ քո մարդասիրութեամբդ . 132
աձ. Որ անճառ էութեամբ Հօր ես փառակից . 470, 519
աձ. Որ անճառ տնօրէնութեամբ ի փրկութիւն . 489
գձ. Որ յանսկիզբն յէութեանդ ես . 259, 240
ակ. Որ առաքեցար ի հայրական ծոցոյ . 120
ակ. Որ առաքեցար ի Հօրէ Հոգիդ անեղ . 121
գձ. Որ արարեր զօրութեամբ զիմանալեաց . 129
դկ. Որ արարիչդ ես արարածոց . 138
դկ. Որ արարիչդ ես հրեղինաց եւ հողեղինաց . 132

Երես

բձ. Որ արարիչդ ես յաւիտենից . 199
գձ. Որ բաշխողդ ես բարութեանց . 439
գձ. Որ եսդ ի յերկինս եւ ի վերայ երկրի . 254
գձ. Որ երկայնամիտդ ես քաղցր . 129, 256
աձ. Որ զաւետիս Հոգւոյն ի հրեղէն . 119, 505
բձ. Որ զխորհուրդ քո գալստեանդ . 150
աձ. Որ զհրեշտակին զձայնն լուեալ . 519
դձ. Որ զօրէնս սրբութեան պահոց . 135
բձ. Որ թագաւորդ ես թագաւորաց Քրիստոս . 381, 436
դկ. Որ թագաւորդ ես յաւիտենից Քրիստոս . 86
աձ. Որ ի լերինն այլակերպեալ ցուցեր . 163
դձ. Որ ի չորեքկերպեան կենդանեաց . 153
ակ. Որ ի սկզբանէ իմաստութեամբ . 495
բձ. Որ ի վերդ ես քան զամենայն զմիտս . 197
բձ. Որ ի վերդ ես քան զմիտս եւ զխորհուրդս . 150
դկ. Որ ի քրովբէական աթոռ ընդ Հօր . 165
աձ. Որ ի քրովբէական կառսդ հանգչիս . 164, 470
աձ. Որ խոնարհեցար ի յերկնից եւ իջեր . 519
գձ. Որ խոնարհեցար յերկնից բանդ . 129
գձ. Որ խորհրդեամբ ընդ Հօր եւ Հոգւոյն . 239
գձ. Որ խորհրդոց ես Տէր Աստուած անմահ . 243
բձ. Որ կոչեցեր առ քեզ Տէր . 83
գձ. Որ համագոյդ ես Հօր եւ Որդւոյ . 130, 255
գձ. Որ յաթոռ փառաց բազմեալ ընդ Հօր . 239
աձ. Որ յամենայնի ես Աստուածութիւն, եւ . 118
բձ. Որ յանէից գոյացուցեր զքո . 213
ակ. Որ յերկնային զօրս անմարմնոցն . 494
գձ. Որ յէութեանդ ես ընդ Հօր եւ . 256
բձ. Որ նստիս ի քրովբէս Աստուած . 220, 196, 376, 436
բկ. Որ ողորմեցար ի մեզս ծնեալ . 128
բկ. Որ որդիդ ես եւ բանդ Աստուած . 84
բկ. Որ պատուիրան ճշմարտութեան . 126
աձ. Որ ստեղծմամբ ըստ պատկերի քո . 83, 497
բձ. Որ սքանչելիդ ես ի բարձունս Տէր . 219
աձ. Որ վերօրհնիս յաթոռս քերովբէ . 160, 162, 167, 177
գձ. Որ վասն մեր յերկրի երեւեալ . 255
գկ. Որ տրտմահաղորդ քո չարչարանօք . 133
բկ. Ուրախ լեր եկեղեցի սուրբ ի . 166, 217
աձ. Ուրախ լեր յոյժ դուստր Սիոնի . 166
աձ. Պայծառացիր եկեղեցի հեթանոսաց . 504
բձ. Պարգեւատուն ամենեցուն այսօր . 435
բձ. Սարսափելի հողմոյ նման . 124, 151, 377
ակ. Սեղան քո Տէր զօրութեանց հաւատով . 122
բկ. Սիւն լուսոյ եւ ամպ հովանի . 512
աձ. Սոսկալի տեսիլ հրեշտակին . 526
աձ. Սուրբ խաչն օգնական հաւատացելոց . 490
բձ. Սքանչելի կանայքն աներկիւղ եկին . 502
ակ. Սքանչելի հրեշտակն Տեառն . 493

Երես

գձ. Վերաձգողն երկնից մշտնջենաւոր . . . 254, 240
գկ. Տեսիլ փայլակնաձեւ զուարթնոյն 523
աձ. Փայլակնաձեւ հրեշտակն իջեալ 527
գձ. Փառաւորեալ է քո յարութիւնդ 516
գկ. Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր . . . 52
աձ. Փառք յարութեան քո Տէր: Պատրանօք . 470, 505
գկ. Փառք քեզ Աստուած փառաւորեալ 524
գձ. Փառք քեզ Հայր որ կենարարդ 135
ակ. Փառք սուրբ խաչիդ 386
գձ. Քանզի զքեզ օրհնեն իշխանութիւնք 135
բկ. Քեզ վայելէ Աստուած օրհնութիւն որ յանմ . 125
աձ. Քեզ վայելէ Աստուած օրհնութիւն . . 117, 497
գձ. Քեզ Քրիստոսի կաթուղիկէ եկեղեցւոյ . . . 131
բկ. Քո յարութեանդ փառք վայելէ . . 479, 510, 515
գկ. Քրիստոս Աստուած Աստուծոյ 133
գկ. Քրիստոս Աստուած յոյս ապաշխարողաց . . . 138
գձ. Քրիստոս Աստուած որ վասն մեր խոնարհեցար . 254
բկ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Ընդ արշա . 483. 510
աձ. Օրհնեալ ես դու Քրիստոս որ յարեարդ . . . 496
աձ. Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն 513
գկ. Օրհնեմք զքեզ անսկիզբն Հայր 132
գկ. Օրհնեմք զքեզ Հայր անսկիզբն 68

ՀՀ Ազգային գրադարան
NL0345676